208.1
L-76





2004

226
Է-13

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ

ՏԵԱՌՆ ՄԵՐՈՑ

ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ.

ՀԱՅԿԱԿԱՆ ԳԻՒՂ

ՏԲՈՒՔՍ ԵՒ ՀԱՅՈՑ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՒԱՏՈՒԹԻՒՆ

208.1
Հ-76
1741-ԱԿ

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ

ՏԵԱՌՆ ՄԵՐՈՑ

ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ

ԸՍՏ ՀԱՐԱՒՕՏԱՏ ԵՒ ԱՆԿԵՂՇ ԳԱՂԱՓԱՐԱՑ ՀԱՅԿԱԿԱՆԱՆ ՆԱԽՆԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ·

Հանդերձ առընթերզրուածեամբ հաւատարիմ նկարագիր բացայայտութեան· ըստ մարթելոյ յերիւրեալ ՚ի մէջ հասարակաց անխառն բարբառ· ՚ի շահ օգտի հոգեսիրաց :

Յաշխատասիրութենէ Տ՚ն Յովհաննու Վարդապետի Օշրապեան Կոստանդնուպոլսեցւոյ·

Երկրորդ տպագրութիւն ուղղագործեալ ՚ի նմին հնդենակէ :

1828·—Ի·ՄՀԷ·

՚Ի ՄԱՅՐԱՔԱՂԱՔՆ ՓԱՐԻԶ·

՚Ի Գործարանի Տ՚ոնական Տիպրչէ·

225

PARISIIS, TYPIS DONDEY-DUPRÉ.

ՑՈՒՑԱԿ

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ

ԸՍՏ ԳԼԽՈՑ ԵՒ ԹՂԹԱՀԱՄԱՐՈՑ·

ա· **Ա**ՒԵՏԱՐԱՆ ըստ Մատթէոսի· իբ 1

բ· Ըստ Մարկոսի· ԺԳ 109

գ· Ըստ Ղուկասու· իգ 177

դ· Ըստ Յովհաննու· լա 292

ե· Գործք Աւետելոց· իբ 378

զ· Թուղթ Պաւղոսի Ա. Հռովմայեցիս· ԺԶ 488

է· Ա. Կորնթացիս առաջին· ԺԶ 533

ը· Ա. Կորնթացիս երկրորդ· ԺԳ 578

թ· Ա. Գաղատացիս· Զ 608

ժ· Ա. Եփեսացիս· Զ 623

ժա· Ա. Փիլիպեցիս· դ 638

ժբ· Ա. Կողոսացիս· դ 649

ժգ· Ա. Թեսաղոնիկեցիս առաջին· ե 660

ժդ· Ա. Թեսաղոնիկեցիս երկրորդ· գ 669

ժե· Ա. Եբրայեցիս· ԺԶ 675

ժզ· Ա. Տիմոթէոս առաջին· գ 710

ժէ· Ա. Տիմոթէոս երկրորդ· դ 722

ժը· Ա. Տիտոս· գ 731

ժթ· Ա. Փիլիմոն· ա 736

ի· Թուղթ Յակոբայ· կաթուղիկէ· ե 739

ԻԸ. Թուղթ Պետրոսի առաջին . Ե 751
ԻԲ. Պետրոսի երկրորդ . Ը 763
ԻԳ. Յովհաննու առաջին . Ե 771
ԻԴ. Յովհաննու երկրորդ . Ա 783
ԻԵ. Յովհաննու երրորդ . Ա 784
ԻԶ. Յուդայի . կաթող . Ա 786
ԻԷ. Յայտնութիւն սրբոյն Յովհաննու առաք : ԻԲ 790

ՍԱԻԵՏԱՐԱՆ
ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ.

ԳԼ. Ա.

ԳԻՐՔ ծննդեան յի՛ս քո՛ւ՝ որդւոյ դաւթի որդւոյ աբրահամու :

2 Աբրահամ ծնաւ զիսա֊
հա՛կ : Իսահակ ծնաւ զյակովբ : Յակովբ ծնաւ զյուդա, և զեղ֊
բարս նորա :

3 Յուդա ծնաւ զփարէս և զզարա ՚ի թամարայ : Փարէս ծնաւ զեզրոմ : Եզրոմ ծնաւ զարա՛մ :

4 Արամ ծնաւ զամինադաբ : Ամինադաբ ծնաւ զնաասոն : Նաասոն ծնաւ զսաղմաղ :

5 Սաղմաղ ծնաւ զբոոս ՚ի հռաքաբայ : Բոոս ծնաւ զովբէդ ՚ի հռուբէլ : Ովբէդ ծնաւ զյեսսէ : Յեսսէ ծնաւ զդաւի՛թ արքայ :

6 Դաւի՛թ ծնաւ զսողոմոն ՚ի կնոջէն ուրիայ :

7 Սողոմոն ծնաւ զռոբո֊
ա՛մ : Ռոբոամ ծնաւ զաբիա : Աբիա ծնաւ զասափ :

8 Ասափ ծնաւ զյովսափատ :

ՅԻՍՈՒՍԻ քո՛ւ ասպա֊
բանութեան զիբքը , (ան՝ որ) դաւթի որդւոյն (էր , որ անուա՛ն) աբրահամի որդւոյն :

2 Աբրահա՛մ՝ իսահակը ծնաւ : իսահա՛կ՝ յակոբը ծնաւ : յակոբ՝ յուդան , ու անոր եղբայրները ծնաւ :

3 Յուդան՝ փարէսն ու զարան ծնաւ՝ թամարէն : փարէս՝ եզրոնը ծնաւ : եզրոն՝ արամը ծնաւ :

4 Արամ՝ ամինադաբը ծնաւ : ամինադաբ՝ նաասոնը ծնաւ : նաասո՛ն՝ սաղմոնը ծնաւ :

5 Սաղմո՛ն՝ բոոսը ծնաւ՝ հռաքէբայէն : բոոս՝ ովբէդը ծնաւ՝ հռուբէլէն : ովբէդ՝ յեսսէն ծնաւ : յեսսէն՝ դաւի՛թ թագաւորը ծնաւ :

6 Դաւի՛թ՝ սողոմոնը ծնաւ՝ ու֊
րիայի կնոջմէնը :

7 Սողոմո՛ն՝ բոբոամը ծնաւ : բոբոամ՝ աբիան ծնաւ : աբիա՝ ասափը ծնաւ :

8 Ասափ՝ յովսափատը ծնաւ :

3 Եւ իբրեւ լուաւ արքայ Հերովդէս՝ խռովեցաւ, և ամենայն երուսաղէմ ընդ նմա :

4 Եւ ժողովեալ զամենայն դպրապետս ազգին և զգիրս Ժողովրդեանն, հարցանէր՝ ուր ծնանիցի քրիստոս :

5 Եւ նոքա ասեն ցնա, ի բեթղահեմ հրէաստանի : զի այսպէս գրեալ է ի ձեռն մարգարէին .

6 Դու բեթղահեմ երկիր յուդայ՝ ոչինչ կրասես ես յիշխանս յուդայ . ի քէն ելցէ ինձ իշխան, որ հովուեսցէ զժողովուրդ իմ զիսրայէլ :

7 Յայնժամ Հերովդէս գաղտ կոչեաց զմոգսն, և ստուգեաց ի նոցանէ զժամանակն ուստեղն երեւելոյ :

8 Եւ առաքեալ զնոսա ի բեթղահեմ, ասէ. գնացէք ստուգեցէք վասն մանկանն, և յորժամ գտանիցէք՝ ազդ արասջիք ինձ , զի և ես եկեալ երկիր պագից նմա :

9 Եւ նոքա իբրեւ լուան ի թագաւորէն՝ գնացին . և ահա աստղն զոր տեսին յարեւելս՝ առաջնորդեաց նոցա , մինչև եկեալ եկաց ի վերայ՝ ուր էր մանուկն :

10 Իբրեւ տեսին զաստղն, խընդացին յոյժ ուրախութիւն մեծ:

11 Եւ իբրեւ մտին ի տունն, տեսին զմանուկն հանդերձ մաքրեամբ մարըւն իւրով , և անկեալ երկիր պագանէին նմա . և բացեալ զգանձս իւրեանց՝

3 Ու (աս) որ լսեց հերովդէս թագաւորը՝ տակնուվրա եղաւ՝ ինքը , ու իր հետը բոլոր երուսաղէմն ալ :

4 Ու բոլոր քահանայապետները ու ժողովրդին կարդացողները ժողվեց , անոնցմէ կուզէր իմանալ թէ՝ ան քրիստոս ո՞ւր տեղ ծընած կըլլար :

5 Անոնք ալ իրեն ըսին որ՝ բեթլէհեմ հրէաստանը . պատճառն որ՝ մարգարէին ձեռքով ասանկ գրված է .

6 Դուն բեթլէհեմ՝ որ յուդայի երկիրն ես, յուդային իշխաններուն մէջ պզտիկմը չես . քեզմէ մէկ իշխանմը ինծի պիտի առաջ գա , որ ան՝ իմ իսրայէլ ժողովուրդս կառավարէ :

7 Անատանը հերովդէս՝ աս մոգերը գաղտուկմը (քովը) կանչեց. ու իրենցմէ հաստատ տեղեկութիւն առաւ՝ ան երեւցած աստղին ժամանակին վրայովը :

8 Ու իրենք զինքը բեթլէհեմ ղրկելով՝ ըսաց . գացէք տեղն իմացէք ան երեխային վրա. ու ան գտնալու որ ըլլաք՝ ինծի ալ իմաց տըրէք , որ ես ալ գամ անոր երկրպագութիւն ընեմ :

9 Երբոր անոնք թագաւորին (աս) լսեցին՝ ալ գացին . ու ան աստղն որ արեւելքը տեսած էին՝ մէյմալ նորէն իրենց համար ցըցուց , ինչվան որ եկաւ կանգ առաւ ան տեղին վրա ուր որ երեխան կըլլար :

10 Երբոր ան աստղը տեսան՝ շատ մեծ խնդութիւն եղաւ իրենց :

11 Ու ալ տունն որ մտան՝ տեսան երեխան իր մարեամ մօրը հետ . ու առջեւը ինկած անոր երկրպագութիւն կընէին : ու գանձերնին բացին իրեն ընծա տըրին՝

մատուցին նմա պատարագս՝ ոսկի, և կնդրուկ, և զմուռս :

12 Եւ հրաման առեալ ՚ի տեսլեան, չդառնալ անդրէն առ Հերովդէս, ընդ այլ ճանապարհ գնացին յաշխարհն իւրեանց :

13 Եւ իբրև գնացին նոքա անտի, ահա հրեշտակ տեառն երևեաւ ՚ի տեսլեան յովսեփու, և ասէ. արի առ զմանուկդ՝ և զմայրն իւր՝ և փախիր յեգիպտոս. և անդ լինիջիր՝ ցարժամ ասացից քեզ. քանզի ՚ի խնդրել է հերովդէս կորուսանել զմանուկդ :

14 Եւ նա յարուցեալ առ զմանուկն և զմայրն իւր գիշերի՝ և գնաց յեգիպտոս. և անդ էր մինչև ցվախճան հերովդի :

15 Օ՛ի լցցի ասացեալն ՚ի տնէ ՚ի ձեռն մարգարէին՝ որ ասէ. յեգիպտոսէ կոչեցից զորդի իմ :

16 Յայնժամ իբրև տեսս հերովդէս թէ խաբեցաւ ՚ի մոգուց անտի, բարկացաւ յոյժ. և առաքեաց կոտորեաց զամենայն մանկունս որ էին ՚ի բեթղահէմ և յամենայն սահմանս նորա՝ յերկեամենից և ՚ի խնաբէ, ըստ ժամանակին զոր ստուգեաց ՚ի մոգուցն :

17 Յայնժամ կատարեցաւ ասացեալն ՚ի ձեռն երեմիայ մարգարէի՝ որ ասէ.

18 Ձայն գուժեաց ՚ի հաւայ, ողբումն և լալումն և աշխարումն յոյժ. հաւքէլ լայր զորդիս իւր, և ոչ կամէր մխիթարել՝ զի ոչ էին :

19 Եւ ՚ի վախճանելն հերովդի, ահա հրեշտակ տեառն ՚ի տեսլեան յովսեփու, ասէ. արի առ զմանուկդ՝ և զմայրն իւր՝ և երթ յերկիրն Իսրայէլի. մեռան որ փնտրէին զհոգի մանկանն :

20 Եւ նա յարուցեալ առ զմանուկն և զմայրն իւր՝ և եկն յերկիրն Իսրայէլի :

21 Եւ նա յարուցեալ առ զմանուկն և զմայրն իւր՝ և եկն յերկիրն Իսրայէլի :

22 Եւ լուեալ թէ Արքեղայոս թագաւորէ ՚ի հրէաստան փոխանակ հօրն իւրոյ հերովդի, երկեաւ անդր երթալ. և առեալ հրամանս յերազի՝ գնաց յանդիման կողմանց գալիլեացւոց :

23 Եւ եկեալ բնակեցաւ ՚ի քաղաքի որ կոչի նազովրէթ, զի լցցի ասացեալն ՚ի ձեռն մարգարէիցն՝ թէ նազովրեցի կոչեսցի :

Գ

1 Յաւուրսն յայնոսիկ եկն յովհաննէս մկրտիչ, քարոզէր յանապատի հրէաստանի, և ասէր.

2 Ապաշխարեցէք, զի մերձեցաւ արքայութիւն երկնից :

3 Զի սա է որ ասացեալ է ՚ի ձեռն եսայեայ մարգարէի՝ որ ասէ. ձայն աղաղակողի յանապատի. պատրաստեցէք զճանապարհ տեառն, ուղիս արարէք զկոխս նորա :

4 Եւ ինքն յովհաննէս էր զգեստ նորա ՚ի մազոյ ուղտոյ, և գօտի կաշի ՚ի մէջքս իւրում. և կերակուր նորա մարախ և մեղր վայրի :

5 Յայնժամ ելանէր առ նա երուսաղէմ և ամենայն հրէաստան և ամենայն գաւառ յորդանանու :

6 Եւ մկրտէին ՚ի նմանէ ՚ի յորդանան գետի՝ խոստովանեալ զմեղս իւրեանց :

7 Եւ տեսեալ զբազումս ՚ի փարիսեցւոց և ՚ի սադուկեցւոց գալ առ մկրտութիւնն իւր, ասէ ցնոսա. ազգ իժից, ո՞վ ցուցին ձեզ փախչել ՚ի բարկութենէ գալոցդ :

8 Արասջիք պտուղս արժանի ապաշխարութեան :

9 Եւ մի կարծիցէք ասել ՚ի մտի ձերում. հայր ունիմք զաբրահամ. զի ասեմ ձեզ, թէ կարող է աստուած յարուցանել զաբրահամու որդիս յայսոսիկ քարանց :

10 Եւ արդ ահա և կացուցանի կացին ՚ի հանդերձ ՚ի վերայ արմատոյ ծառոցն. ամենայն ծառ որ ոչ արասցէ պտուղ բարի՝ հատանի և ՚ի հուր արկանի :

11 Ես մկրտեմ զձեզ ՚ի ջուր ՚ի ապաշխարութիւն, բայց որ զհետ իմ գայ՝ զօրաւոր է քան զիս, որոյ ես ոչ եմ արժան կօշիկս տանել. նա մկրտեսցէ զձեզ ՚ի հոգւոյ սրբոյ և ՚ի հրոյ :

12 Որոյ հողմն ՚ի ձեռին իւրում՝ և սրբեսցէ զհանդարտ իւր, և ժողովեսցէ զցորեանն ՚ի շտեմարան իւր, զմանդարն ՚ի հուր անշէջ այրեսցէ :

13 Յայնժամ գայ յիսուս ՚ի գալիլեացւոց յորդանան առ յովհաննէս, մկրտել ՚ի նմանէ :

14 Եւ յովհաննէս արգելուր նմա՝ ասելով. ես պիտոյ եմ ՚ի քէն մկրտել, և դու գաս առ իս :

15 Եւ յիսուս պատասխանի ասէ ցնա. թող արդ, զի այսպէս պարտ է մեզ լնուլ զամենայն արդարութիւն : Յայնժամ թողոյ նմա :

16 Եւ մկրտեալ յիսուս՝ ելանէ անդրէն յջուրց. և ահա երկինք բացան նմա, և ետես զհոգին աստուծոյ իջանել որպէս զաղաւնի, և գալ ՚ի վերայ նորա :

17 Եւ ահա ձայն յերկնից ասէր. սա է որդի իմ սիրելի, որում հաճեցայ :

Դ

1 Յայնժամ յիսուս վարեցաւ յանապատ ՚ի հոգւոյն, փորձիլ ՚ի սատանայէ :

2 Եւ պահեցեալ զքառասուն աւուրս և զքառասուն գիշերս՝ ապա ետ քաղցր լինել :

3 Եւ մատեաւ փորձիչն և ասէ ցնա. եթէ որդի ես աստուծոյ, ասա զի հացք լիցին քարունքս սոքա :

4 Եւ նա պատասխանի ետ և ասէ. գրեալ է. ոչ միայն հացիւ կեցցէ մարդ, այլ ամենայն բանիւ որ ելանէ ՚ի բերանոյ աստուծոյ :

5 Յայնժամ առեալ զնա սատանայ ՚ի սուրբ քաղաքն, և կացոյց զնա ՚ի վերայ տաճարին երուսաղէմի,

6 և ասէ ցնա. եթէ որդի ես աստուծոյ, արկ զանձն քո ՚ի վայր. զի գրեալ է. զի հրամայեսցէ հրեշտակաց իւրոց վասն քո, և ՚ի ձեռս առցեն զքեզ, զի մի՛ իցէ ինչ ընդդէմ ոտից քոց քարն :

7 Ասէ ցնա յիսուս. դարձեալ գրեալ է. մի՛ փորձեսցես զտէր աստուած քո :

8 Դարձեալ առեալ զնա սատանայ ՚ի լեառն մեծ յոյժ, և ցուցանէ նմա զամենայն թագաւորութիւնս աշխարհի և զփառս նոցա,

9 և ասէ ցնա. զայս ամենայն քեզ տացեմ, եթէ անկեալ երկիր պագանիցես ինձ :

10 Յայնժամ ասէ ցնա յիսուս. երթ յետս իմ սատանայ, գրեալ է. զտէր աստուած քո երկիր պագցես, և նմա միայնում պաշտեսցես :

11 Յայնժամ թողոյ նմա սատանայ, և ահա հրեշտակք մատեան և պաշտէին նմա :

12 Եւ երանելին յիսուս (իբրև) հրամայվեցաւ, որ ՚ի բանտ հերովդէսի քոլը չդառնան : որ ալ ուրիշ ճամբով իբրև երկիրը գացին :

13 Եւ ասոնք՝ երբոր ալ անկից գնացին, ՚ի յովսեփ հրեշտակ տեառն երածին ՚ի քուն յաւետիւն երևցաւ, ու ըսաց. ելիր երեխադ իր մօրը հետ առ՝ ու եգիպտոս փախիր, ու հոն կեցիր՝ մինչև որ (ես) քեզի ըսեմ. պատճառն որ՝ հերովդէսը եռևէ է՝ որ սա երեխադ փընաց ջընէ :

14 Ինքնալ ելաւ՝ երեխան ու անոր մօրը գիշերանց առաւ՝ ու եգիպտոս գնաց. ու հոն վայ հերովդէսին մահը հոն կեցաւ :

15 Որ կատարվի տրէն բսածը մարգարէին ձեռքով՝ որ կըսէ. եգիպտոսէն իմ որդիս պիտի կանչեմ :

16 Այնատենը հերովդէս երբոր տեսաւ՝ որ ան մոգերէն խաբվեցաւ, ալ սաստիկ սրըդոզած՝ խրբեկեց ջարդեց բովանդակ բեթլհեհէմի ու անոր բոլոր քովերը գտնըված մանտրը տղաքը՝ երկու տարվընէ խալար. ինչպէս որ ան ատենին վրայոլը՝ ան մոգերէն հասկըցեր էր :

17 Այն ժամանակը կատարվեցաւ երեմիա մարգարէին ձեռքով բսածը՝ որ կըսէ.

18 Հառամայի մէջը գուժի ձան եղաւ, կոծ ու լացը՝ ու սաստիկ զոռում զոչում. հառաքելը իր զաւկրներուը կուլար, ու չեր ուզեր որ մխիթարվի, ինչու որ՝ (անոնք) մեռացածմը չկար :

19 Ու ալ հերովդէսն որ մեռաւ, նորէն հրեշտակ տեառն եգիպ-

տեսլեան երևէը յովսեփայ յե-
զիպտոս ,

20 Եւ ասէր . արի՛ առ դմա-
նուկդ և դմայր իւր, և գնա՛ յեր-
կիրն իսրայէլի . դի մեռան որ
խնդրէին զանձն մանկանդ :

21 Եւ նա յարուցեալ առ
դմանուկն և դմայր նորա , և
եկն յերկիրն իսրայէլի :

22 Եւ իբրև լուաւ եթէ ար-
քեղաոս թագաւորեաց հրէաս-
տանի՝ փոխանակ հերովդէ հօրն
իւրոյ, երկեաւ երթալ անդր .
և հրաման առեալ՝ի տեսլեան,
գնաց՝ի կողմանս գալիլեացւոց:

23 Եւ եկեալ բնակեցաւ՝ի
քաղաքին՝ որ կոչէր նազարեթ.
դի լցցի բան մարգարէիցն, թէ
նազովրեցի կոչեսցի :

տաս՝ երածին մէջը յուսկիլն ե-
լեւցաւ ,

20 Ու ըսաց . ելլէ՛ երեխադ իր
մօրը հետ առ՝ ու իսրայէլ գացող
երկիրը գնա . ինչու որ՝ ալ մե-
ռան (անոնք՝) որ երեխայիդ կեան-
քը առնել կուգէին :

21 Ան՛նալ ելաւ՝ երեխան ու ա-
նոր մօրը առաւ , ու իսրայէլացոց
երկիրը եկաւ :

22 Ու երբոր լսեց՝ որ արքե-
ղայոսը հրէաստանին վրա թա-
գաւորութիւն կընէ՝ իրեն հերովդէս
հօրը տեղը , վախցաւ հոն երթա-
լու . ու երազին մէջը հրաման
առած՝ գալիլեայի կողմերը գնաց:

23 Ու եկաւ նազարէթ ըսած
քաղաքը բնակեցաւ . որ մարգա-
րէներուն խօսքը կատարվի՝ թէ
նազորեցի պիտի ըսվի :

ԳԼ. Գ.

1 Յաւուրսն յայնոսիկ գայ
յովհաննէս մկրտիչ՝քարո-
զել յանապատին հրէաստանի ,

2 Եւ ասել . ապաշխարեցէ՛ք՝
դի մերձեալ է արքայութիւն
երկնից :

3 Ո՛ր սա է՝ վասն որոյ ասա-
ցաւ՝ի ձեռն եսայեայ մարգա-
րէին, որ ասէ . ձայն բարբառոյ
յանապատի , պատրաստա արա-
րէք զճանապարհ տն, և ուղիղ
արարէք զշաւիղս նորա :

4 Եւ ինքն յովհաննէս ունէր
հանդերձ՝ի սաւոյ ուղտու , և
գօտի մաշկեղէն ընդ մէջ իւր. և
կերակուր նորա էր մարախ՝ և
մեղր վայրենի :

5 Յայնժամ ելանէին առ նա
ամենայն երուսաղէմացիք՝ և

1 Ան օրերը յովհաննէս մկրտիչը
կուգա՝ հրէաստանի անա-
պատին մէջը քարոզելու .

2 Ու կըսէ. ապաշխարեցէ՛ք, որ
ալ մօտեցեր երկնային թագաւո-
րութիւնը :

3 Պատճառն որ՝ ասիկա ան է՝
որ իրեն համար եսայի մարգա-
րէին ձեռքով ըսված է, որ կըսէ.
ձան ու խօսք անապատին մէջը ,
(թէ՝) պատրաստեցէ՛ք այ՛ճամբան,
ու դուբեցէ՛ք անոր քալելու կե-
տինը :

4 Ու յովհաննէսին հագուստը՝
ղտու բրդէ էր (շինած) , ու իր
մէջքը կաշէ գօտիմը . ու իրեն
ուտելիքը՝ մարախ էր , ու լեռան
մեղրը :

5 Անտեղը երուսաղէմէն ու
բոլոր հրէաստանի ու յորդանանի

ամենայն հրէաստան՝ և ամենայն կողմն յորդանանու,

6 Մկրտէին ՚ի նմանէ ՚ի յորդանան գետ, և խոստովան լինէին զմեղս իւրեանց :

7 Եւ տեսեալ զբազումս ՚ի սադուկեցւոցն և ՚ի փարիսեցւոց եկեալս ՚ի մկրտութիւն նորա, ասէ ցնոսա . Ծնունդք իժից՝ ո՞ ցոյց ձեզ փախչել ՚ի բարկութենէն որ գալոցն է :

8 Արարէք այսուհետև պտուղ արժանի ապաշխարութեան :

9 Եւ մի՛ համարիցէք ասել յանձինս՝ Հայր ունիմք մեք զհայր զԱբրահամ . ասեմ՛ ձեզ, զի կարող է ած ՚ի քարանցս յայսցանէ յարուցանել որդիս աբրահամու :

10 Ահա ի սաւառիկ տապար՝ առ արմատն ծառոց դնի . ամենայն ծառ՝ որ ոչ առնիցէ զպտուղ բարի , հատանի և ՚ի հուր արկանի :

11 Ես մկրտեմ զձեզ ջրով յապաշխարութիւն . բայց որ զկնի իմ գայ՝ հզօրագոյն է քան զիս, և ես չեմ բաւական բառնալ զկօշկիս նորա . նա մկրտ ձեզ ՚ի հոգին սուրբ՝ և ՚ի հուր :

12 Որոյ հեծանոցն ՚ի ձեռին իւրում, և սրբեսցէ զկալ իւր, և ժողովեսցէ զցորեանն ՚ի շտեմարանս իւր, և զպարսն այրեսցէ անշէջ հրով :

13 Յայնժամ գայ յն ՚ի գալիլեէ ՚ի յորդանան առ յովհաննէս՝ մկրտել ՚ի նմանէ :

14 Եւ յովհաննէս արգելու զնա՝ և ասէ . ինձ պիտոյ է ՚ի քէն մկրտել՝ և դու՝ առ ինս գաս :

կողմերէն՝ շատ մարդիք իր քովը կերթային .

6 Իրմէ կմկրտվէին յորդանան գետին մէջը, ու իրենց մեղքերնին կըպատմէին :

7 Ու (ինքը) տեսնելով սադուկեցիներէն ու փարիսեցիներէն շատերը եկած՝ որ իրմէ մկրտվին. անոնց ըսաց . իժի զաւակներ՝ ո՞վ ձեզի սորվեցուց, որ (դուք) ան ձեր վրա գալու պատուհասէն փախչիք :

8 Այ եասկ եաւ՝ նայեցէք որ չմարիտ ապաշխարութենի պտուղ բերէք :

9 Ու ինքիրենիդէն պարծենաք ըսէք՝ որ մեզ աբրահամ ունինք (մեր) հայրը . (աս) ձեզի կըսեմ, որ ած կարող է աս քարերէս աբրահամի որդիք դուրս բերելու :

10 Հիմա ալ կացինը ծառերուն արմատին քով կեցեր է . ամէն ինչ ծառ որ բարի պտուղ չի բերեր՝ ան կըկտրըվի ու կրակը կըձգվի :

11 Ես ձեզ ջրով կմկրտեմ ապաշխարութենին համար . բայց իմ ետևէս եկողը իմէն շատ ուժեղ է . ու ես արժանի չեմ անոր կոշիկներնալ վերցնելու, անիկա ձեզ հոգին սրբով ու կրակով պիտի մկրտէ :

12 Որ հեծանը իր ձեռքն առած՝ ալ պիտի իրեն կալը մաքրէ, ու ցորենը իր համբարը պիտոր ժողվէ, ու արդը՝ անանկ կրակով երի՝ որ մարելիք չունի :

13 Այն ատենը յն գալիլեայէն յորդանան եկաւ յոհաննէսին քովի՝ որ անկէ մկրտվի :

14 Ու յոհաննէս անոր դէմ կեցաւ ու ըսաց . պէտք է որ ես քեզմէ մկրտվիմ, ու դուն ինծի՞ մի կուգաս :

15 Պատասխանի ետ յի՝ և ասէ ցնա. Թոյլ տուր այժմ, զի այսպէս վայել է մեզ լնուլ զամենայն արդարութիւնս: և ապա թոյլ ետ նմա:

16 Եւ երբեմն մկրտեցաւ յի, ել վազվազակի ի ջրոյ անտի. և ահա բացան նմա երկինք. և եահս գՀոգին աւ՝ զի իջանէր երբեմն գաղաւնի և գայր ի վերայ նորա:

17 Եւ ահա ձայն յերկնից՝ որ ասէր. դա է որդի իմ սիրելի, ընդ որ հաճեցայ:

15 Յի պատասխան տրվաւ ու իրեն ըսաւ. Հիմակու հիմա թող տուր. մեզի սանկ կրվայլէ՝ որ բոլոր արդար բաները կատարենք: ետքը (անոր) իրեն թող տրվաւ:

16 Ու երբոր յի մկրտվեցաւ՝ շուտիվ ջրէն դուրս ելաւ. ու ան կէտը երկինքը իրեն բացվեցաւ. ու տեսաւ որ՝ այ Հոգին աղվնիկ պէս կինջաը ու իր վրան կուգար:

17 Ու միյմալ երկընքէն ձան միը՝ որ կըսէր. սա իմ սիրական որդիս է, որ իրեն հաւնեցեմ:

ԳԼ. Դ.

1 Յայնժամ վարեցաւ յի յանապատ ի Հոգւոյն՝ փորձել ի սատանայէ:

2 Եւ պահեալ զքառասուն տիւ և զքառասուն գիշեր՝ ապա քաղցեաւ:

3 Եւ մատուցեալ փորձիչն՝ ասէ ցնա. եթէ որդի ես այ՝ ասա զի քարինքս այսոքիկ Հայ լինիցին:

4 Նա պատասխանի ետ՝ և ասէ. գրեալ է՝ թէ ոչ Հայիւ միայն կեցցէ մարդ, այլ ամենայն բանիւ որ ելանէ ի բերան այ:

5 Յայնժամ առեալ սատանայ զնա ի քաղաքն սուրբ, և կացուցանէ զնա ի վերայ աշտարակի տաճարին,

6 Եւ ասէ ցնա. եթէ որդի ես այ՝ արկ զքեզ ատի ի վայր. զի գրեալ է՝ թէ հրեշտակաց իւրոց պատուիրեսցէ վասն քո՝ և ի վերայ ձեռաց բարձցեն զքեզ, զի մի երբէք Հարցես զքարի զոտն քո:

7 Ասէ ցնա դարձեալ յի. Գրեալ է՝ թէ մի փորձեսցես զտէր աստուած քո:

1 Ան ատենը յի՝ Հոգիէն անապատ տեղը տարվեցաւ, որ սատանայէն փորձվի:

2 Ու քառասուն ցորեկ ու քառասուն գիշեր ծոմ պահելէն ետև՝ անօթեցաւ:

3 Ու փորձիչը եկաւ իրեն ըսաւ. Թէ որ (դուն) այ որդին ես նէ՝ ըսէ որ սա քարերը Հաց ըլլան:

4 Անոր պատասխան տրվաւ ու ըսաւ. գրված է որ՝ չէ թէ մարդը Հացով միայն կապրի, հապա՝ ան բոլոր խօսքերով որ այ բերնէն կելլա:

5 Ան ատենը սատանան ինքը առաւ սուրբ քաղաքը տարաւ, ու տաճարին գմբեթին վրան կեցուց,

6 Ու իրեն ըսաւ. Թէ որ (դուն) այ որդին ես նէ, քեզ ասկից վար ձգէ. ինչու որ՝ գրված է թէ՝ իր հրեշտակներուն քեզի համար ա պըսպրված է, ու քեզ ձեռքի վրա պիտի վերցնեն, որ խնկի քոռոքդ քարին չ զարնես:

7 Յիսուս անոր ըսաւ.

գրեալ է՝ թէ ոչ փորձեսցես զոր ՚ի քո :

8 Դարձեալ առնու ածէ զնա սատանայ ՚ի լեառն մի բարձր յոյժ, և ցուցանէ նմա զամենայն թագաւորութիւնս աշխարհի, և զփառս նոցա :

9 Եւ ասէ ցնա· զայս ամենայն քեզ տաց՝ եթէ անկեալ երկիր պագանիցես ինձ :

10 Յայնժամ ասէ ցնա յի· երթ յետս իմ սատանայ. զի գրեալ է, տէր քո երկիր պագցես, և զնա միայն պաշտեսցես :

11 Այսպա եթող զնա սատանայ· և ահա՝ հրեշտակք մատեան՝ և պաշտէին զնա :

12 Եւ երբէք լուաւ յի՝ եթէ յովհաննէս մատնեցաւ, մեկնեցաւ զնոց ՚ի գալիլեա :

13 Եւ թողեալ զնազարեթ, եկն բնակեցաւ ՚ի կափառնաում՝ ՚ի ծովեզերքն, ՚ի սահմանս զաբուղոնի և նեփթաղիմայ :

14 .Որ ՚ի լցոյլ բանն՝ որ ասացաւ ՚ի ձեռն եսայեայ մարգարէի .

15 Երկիր զաբուղոնի և երկիր նեփթաղիմայ՝ ճանապարհ ծովու՝ յայնկոյս յորդանանու, գալիլեա հեթանոսաց .

16 Ժողովուրդ որ նստէր ՚ի խաւարի՝ եաես լոյս մեծ . և որոց նստէին յաշխարհին և ՚ի ստուերս մահու՝ լոյս ծագեաց նոցա :

17 Յայնմ հետէ սկսաւ քարոզել յի՝ և ասել . ապաշխարեցէք զոր վաճ (ալ) է որ, չէլլա թէ գուցէ ձեր փորձես :

8 Սատանան անկէ՛ցալ նորէն ինքը առաւ՝ մէկ խիստ բարձրը լեռանմը վրա տարաւ . ու անոր ցուց տրվաւ բոլոր աշխրքի թագաւորութիւնները, ու իրենց փառաւորութիւնները :

9 Ու իրեն ըսաց· աս ամէնը բաները քեզի կուտամ, թէ որ (դուն) առջևը ինկած ինձի երկրպագութիւն ընես :

10 Անատեր յի անոր ըսաց· քովէս զնա կորիր սատանա. գրվաճ է որ՝ քու տէր աստուծուդ երկրպագութիւն ընես, ու անիկա միան պաշտես :

11 Այ անկէ ետև սատանան ինքը թողուց. ու շուտմը հրեշտակներ եկան՝ ու իրեն ծառայութիւն կընէին :

12 Ու երբոր լսեց յի՝ որ յոհանէսը մատնվված (բանտված) է, ինքն ալ՝ մկրվի քաշվեցաւ գալիլեա գնաց :

13 Ու նազարէթը թողուց, եկաւ կափառնայումը կրկինար՝ ծովեզերքին քով, զաբուղոնի ու նեփթաղիմի երկիրները :

14 Որ կատարվի եսայի մարգարէին ձեռքով ըսված բանը. (թէ,)

15. Զաբուղոնի երկիրը ու նեփթաղիմի երկիրը, ծովու ճամբով յորդանանի մկակալ կողմը, հեթանոսաց գալիլեան. (ուր ան)

16 Ժողովուրդը՝ որ մութը նըստեր՝ պայծառ լոյս տեսաւ . ու լոյս ցաթեց անոնց վրա՝ որ ան երկիրը՝ ու մահու շուքերու մէջ նստած (կեցեր) էին :

17 Այ անկէ ետքը՝ յի ըսկսաւ քարոզել՝ ու ըսել . ապաշխա-

բեցէք՝ դի մերձեալ է արքայու-
թիւն երկնից :

18 Մինչ դեռ գինայր յն ընդ
եզս ծովուն գալիլեացւոց, եաես
երկուս եղբարս՝ զսիմովն կո-
չեցեալն պետրոս, և զանդրէաս
եղբայր նորա՝ արկեալ ուսկան
՚ի ծով . քանզի ձկնորք էին :

19 Եւ ասէ ցնոսա . եկայք
զկնի իմ, և արարից զձեզ որ-
սորդս մարդկան :

20 Եւ նոցա թողեալ վաղ-
վաղակի զորթին՝ գնացին
զկնի նորա :

21 Եւ մատուցեալ անտի
յառաջ՝ եաես այլ երկուս եղ-
բարս , զյակովբոս զերեդեայ և
զյովհաննէս զեղբայր նորա ՚ի
նաւի՝ զերեդեաւ հանդերձ հար-
բրն իւրեանց , մինչդեռ կար-
միր զուսկանս իւրեանց . և
կոչեաց զնոսա :

22 Նոցա թողեալ վաղվա-
ղակի զնաւն և զհայր իւրեանց,
գնացին զկնի նորա :

23 Եւ շրջէր յն ընդ ամենայն
կողմն գալիլեացւոց . ուսուցա-
նէր ՚ի ժողովուրդս նոցա , և
քարոզէր զաւետարանն ար-
քայութեան , և բժշկէր զամե-
նայն հիւանդութիւնս՝ և զամե-
նայն ախտս ՚ի ժողովրդեանն :

24 Եւ ել լուր նորա ընդ
ամենայն երկիրն ասորւոց , և
մատուցին առ նա զամենայն
հիւանդս՝ որ նեղեալ էին ՚ի
սէոսպէս ցաւս և ՚ի տանջանս,
և զդիւահարս և զլուսնոտս և
զանդամալոյծս . և բժշկեաց
զնոսա :

25 Եւ երթային զկնի նորա
ժողովուրդք բազումք ՚ի գա-
լիլեէ, և ՚ի դեկապօլեայ, և

բեցէք՝ որ ալ երկնային թագաւո-
րութիւնը մօտիկցեր է :

18 Յն գալիլեացւոց ծովին քո-
վերն որ ժուռ կուգար, տեսաւ եր-
կու եղբայր՝ սիմոն պետրոս ըս-
ւածը , ու անդրէաս անոր եղ-
բայրը , որ ծովը ուսկան ձգերէին.
ինչու որ՝ իրենք ձուկ բռնող էին:

19 Ան անոնց ըսաւ . իմ հետս
եկէք, որ ձեզ մարդկերներու որ-
սորդ ընեմ :

20 Անոնք ալ շուտիւ գործէք-
նին թողուցին՝ անոր հետը գա-
յին :

21 Ու անկէց՝ ալ առաջ որ
անցաւ՝ ուրիշ երկու եղբայր, զե-
բեդեան յակոբոսը ու անոր յո-
հաննէս եղբայրը՝ տեսաւ, երբոր
ասնք նաւին մէջը իրենց զերե-
զէոս բաւած հօրերնուն հետ ուս-
կանները կըպատրաստէին, ու ա-
նոնք ալ կանչեց :

22 Իրենքալ շուտիւ նաւը
ու հարերնին թողած՝ եկան անոր
հետը գացին :

23 Ու յն բոլոր գալիլեացոց
կողմերը կըպտրտէր . անոնց ժո-
ղովարաններուն մէջը կրսորվը-
ցունէր, ու աւրքայութեան աւե-
տարանը կրքարոզէր, ու ժողո-
վըրդին մէջ եղած բոլոր հիվան-
տութիւնները ու բոլոր ցաւերը
կրբժշկէր :

24 Ու իր անունը բոլոր ասո-
րիներուն երկիրը ձանձրնվեցաւ .
որ ալ բոլոր հիվանտները՝ որ
կերպ կերպ ցաւերով ու չարչրը-
կուքներով կրտանջվէին՝ ան
իրեն կրբերէին , ու դիւահարները
ու լուսնոտները ու անդամալու-
ծները . ու անոնք բժշկեց :

25 Ու շատ ժողովուրդ իրեն
եաևէն կերթային՝ գալիլեայեն ու
դեկապօլեսէն ու երուսաղեմէն ու

յերուսաղեմ, և 'ի հրեաստա-
նէ, և յայնկոյս յորդանանու. և
բժշկեաց զնոսա :

հրեաստանէն , ու յորդանանին
միկալ դիացին . ու անոնք բը-
ժըշկեց :

Գ Լ. Ե ·

1 Եւ տեսեալ զժողովուրդս՝
ել 'ի լեառն· և իբրև
նստաւ անդ՝ մատեան առ նա
աշակերտքն նորա :

2 Եւ բացեալ զբերան իւր՝
ուսուցանէր զնոսա, և ասէր :

3 Երանի աղքատացդ հոգւով ,
զի նոցա է արքայութիւն երկ-
նից :

4 Երանի սգաւորաց , զի նո-
քա մխիթարեսցին :

5 Երանի հեզոց , զի նոքա
ժառանգեսցեն զերկիր :

6 Երանի որ քաղցեալ և ծա-
րաւի լինին արդարութեան, զի
նոքա յագեսցին :

7 Երանի ողորմածաց , զի
նոքա ողորմութիւն գտցեն :

8 Երանի այնոցիկ՝ որ սուրբ
են սրտիւք, զի նոքա զԱծ տես-
ցեն :

9 Երանի խաղաղարարաց ,
զի նոքա որդիք այ կոչեսցին :

10 Երանի որ հալածեալ
լինին վասն արդարութեան , զի
նոցա է արքայութիւն երկնից :

11 Երանի է ձեզ՝ յորժամ
նախատիցեն զձեզ և հալածես-
ցեն , և ասիցեն զամենայն բան
չար զձեզնջ սուտ՝ վասն իմ :

12 Ցնծացէք և ուրախ լե-
րուք, զի վարձք ձեր բազում
են յերկինս. զի այսպէս հալածե-
ցին զմարգարէսն՝ որ յառաջ
քան զձեզ եկին :

13 Դուք էք աղ երկրի· ապա-
թէ աղն անհամի՝ ի՞ւ յաղիցի· ոչ

1 Ու տեսնելով ան ժողովուրդ-
ները՝ (ինքը) լեռը ելաւ .
ու հոն որ նստելու եղաւ իր աշա-
կերտները քովը գացին :

2 Ու իր բերանը բացաւ՝ ա-
նոնք կրսորվըցուներ, ու կրսէր .

3 Երնեկ հոգով ախքըրաներուն ,
որ երկնային արքայութիւնը ա-
նոնցն է :

4 Երնեկ սըգաւորներուն՝ որ
անոնք պիտի մխիթարվին :

5 Երնեկ հեզասիրտներուն՝ որ
անոնք պիտի աշխարքը վայլեն :

6 Երնեկ անոնց՝ որ անօթի ու
ծարաւած են արդարութիւնի , որ
անոնք պիտի կշտանան :

7 Երնեկ ողորմածներուն՝ որ
անոնք ողորմութիւն պիտի գտնան:

8 Երնեկ անոնց՝ որ մաքուր
սիրտ ունին, որ իրենք Աստ պիտի
տեսնեն :

9 Երնեկ խաղաղարարներուն ,
որ անոնք այ որդիք պիտի րսվին :

10 Երնեկ անոնց որ կրհալած-
վին արդարութիւնի համար , որ
երկնային արքայութիւնը իրենցն է:

11 Երնեկ է ձեզի՝ որատեն ձեզ
քամահրեն ու հալածեն, ու իմ
պատճառովը սուտ տեղը շատ
բան չար բաներ ըսեն վրանիդ :

12 (Ա.) խընտացէք՝ ու ուրախ
եղէք , որ (անով) ձեր վարձքը
երկինքը կըշատնա . որ ձեզմէ ա-
ռաջ եղած մարգարէներնալ աս
կերպովը հալածեցին :

13 Դուք երկրին աղն էք . հա-
պա թէ որ աղը (իր) համը կոր-

իմիք ազդիցէ այնու չհաւ, բայց եթէ ընկենուլ արտաքս՝ և կոխան լինել ՚ի մարդկանէ :

14 Դուք էք լոյս աշխարհի· ոչ կարէ քաղաք թաքչել՝ որ ՚ի վերայ լերին կայցէ :

15 Եւ ոչ լուցանեն ճրագ՝ և դնեն ընդ գրուանաւ, այլ ՚ի վերայ աշտանակի· և լոյս տայ ամենեցուն՝ որ ՚ի տանն իցեն :

16 Այնպէս լուսաւորեսցէ լոյս ձեր առաջի մարդկան, որպէս զի տեսցեն զգործս ձեր բարիս, և փառաւորեսցեն զՀայր ձեր որ յերկինս է :

17 Մի՛ համարիք եթէ եկի լուծանել զօրէնս կամ զմարգարէսն· ոչ եկի լուծանել՝ այլ լնուլ :

18 Ամէն ասեմ ձեզ, մինչև անցցեն երկինք և երկիր, յոտ մի՝ որ նշանախեզ մի է, ոչ անցցէ յօրինացն և ՚ի մարգարէից՝ մինչև ամենայն եղիցի :

19 Որ ոք լուծցէ մի ինչ ՚ի պատուիրանացս յայսցանէ ՚ի փոքունց, և ուսուսցէ այնպէս զմարդիկ, փոքր կոչեսցի յարքայութեան երկնից : իսկ որ արասցէ՝ և ուսուսցէ, նա՝ մեծ կոչեսցի յարքայութեան երկնից :

20 Քայց ասեմ ձեզ· զի եթէ ոչ առաւելացէ արդարութիւն ձեր առելի քան զդպրաց և զփարիսեցւոց, ոչ մտանիցէք յարքայութիւն երկնից :

21 Լուարուք զի ասացաւ առաջնոցն, թէ մի սպանանէր. զի որ սպանանիցէ՝ պարտական լինիցի դատաստանի :

22 Եւ ես ասեմ ձեզ, զի ամենայն որ բարկանայ ընդ եղբարս իւր առանց պատճառի՝ պարտական լինիցի դատաստանի. և որ ասիցէ եղբարն իւրում՝ ապիկար, պարտական լինիցի ատեանի. և որ ասիցէ՝ յիմար, պարտական լինիցի հրոյ գեհենի :

23 Արդ եթէ մատուցանես զպատարագ քո առ սեղանոյ, և անդ յիշեսցես զի եղբայր քո ունի ինչ ընդ քեզ,

24 թող անդէն առաջի սեղանոյն զպատարագ քո, և երթ նախ հաշտեաց եղբարն քում, և ապա եկեալ մատո զպատարագ քո :

25 Հաշտեաց զհակառակորդ քո վաղվաղակի, մինչ դեռ ընդ ճանապարհի ես նմա հետ, գուցէ մատնիցէ զքեզ հակառակորդդ դատաւորի, և դատաւորն մատնիցէ զքեզ սպասաւորի, և ի բանտ արկցես :

26 Ամէն ասեմ քեզ, մինչև հատուսցես զկատարածն՝ ոչ ելանիցես անտի :

27 Լուարուք զի ասացաւ հնոցն, թէ մի՛ շնանայցես :

28 Եւ ես ասեմ ձեզ, զի ամենայն որ նայեցի ՚ի կին ինչ ՚ի տենչանս նորա՝ արդէն շնացաւ ընդ նմա ՚ի սրտի իւրում :

29 Եւ եթէ աչք քո աջ գայթագղեցուցանէ զքեզ՝ հան զնա և արկ ՚ի քէն քեզ. զի շահաւոր է քեզ զի կորիցէ մի ՚ի մարմնոց քոց, և մի՛ ամենայն մարմին քո արկանիցի ՚ի գեհեն հրոյ :

30 Եւ եթէ ձախ քո գայթագղեցուցանէ զքեզ՝ կտրեա զնա և արկ ՚ի քէն քեզ. զի շահաւոր է քեզ զի կորիցէ մի ՚ի մարմնոց քոց, և մի՛ ամենայն մարմին քո երթիցէ ՚ի գեհեն :

31 Ասացաւ եւս թէ, որ արձակեսցէ զկին իւր՝ տացէ նմա գիր բաժանման :

32 Եւ ես ասեմ ձեզ, զի ամենայն որ արձակեսցէ զկին իւր՝ բաց ՚ի բանի պոռնկութեան՝ տայ զնա շնանալ. և որ զարձակեալն առնուցուն՝ շնանայ :

33 Դարձեալ լուարուք զի ասացաւ հնոցն, թէ մի՛ երդնուր սուտ, այլ հատուսցես Տեառն զերդունս քո :

34 Եւ ես ասեմ ձեզ, մի՛ երդնուիք ամենևին, եթէ յերկինս՝ զի գահ է Աստուծոյ,

35 եթէ յերկիր՝ զի սաստիկ է ոտից նորա, եթէ յԵրուսաղէմ՝ զի քաղաք է մեծի թագաւորին,

36 եթէ գլխովդ երդնուիս՝ զի ոչ կարես մի մազ սպիտակ կամ սեւ առնել :

37 Այլ եղիցի խօսք ձեր՝ այո այո, ոչ ոչ. զի որ աւելի քան զայս՝ ՚ի չարէ է :

38 Լուարուք զի ասացաւ, թէ աչք փոխանակ աչաց, և ատամն փոխանակ ատամանց :

39 Եւ ես ասեմ ձեզ, մի՛ դիմադրէք չարի. այլ որ զաջ ծնօտդ հարանիցէ քեզ՝ դարձո նմա և զայլ :

40 Եւ որ կամիցի ընդ քեզ դատել և զպատմուճանդ առնուլ՝ թող նմա և զթիկնոցդ :

41 Եւ որ զքեզ հարկանիցէ մղոն մի՝ երթ ընդ նա երկու :

42 Որ խնդրէ ՚ի քէն՝ տուր նմա, և որ կամի ՚ի քէն փոխառնուլ՝ մի՛ դարձուցաներ զերեսս քո :

43 Լուարուք զի ասացաւ, թէ սիրեսցես զընկեր քո և ատեսցես զթշնամի քո :

44 Եւ ես ասեմ ձեզ, սիրեցէք զթշնամիս ձեր, օրհնեցէք զանիծանողս ձեր, բարի արարէք ընդ ատելիս ձեր, և աղաչեցէք ՚ի վերայ հալածողաց և նախատողաց ձերոց :

45 Զի որպէս զի լինիցիք որդիք Հաւր ձերոյ որ յերկինս է, որ զարեգակն իւր ծագեցուցանէ ՚ի վերայ չարաց և ՚ի վերայ բարեաց, և տեղայ տայ ՚ի վերայ արդարոց և անիրաւաց :

46 Զի եթէ սիրեսցէք զսիրողս ձեր՝ զի՞նչ վարձս ունիցիք. ոչ զայն ինչ և մաքսաւորքն առնեն :

47 Եւ եթէ բարեւ տայցէք միայն եղբարց ձերոց՝ զի՞նչ առաւել արարէք. ոչ զայն ինչ և հեթանոսքն առնեն :

48 Արդ կատարեալ լերուք դուք որպէս և Հայր ձեր երկնաւոր կատարեալ է :

6 Զգուշ լերուք մի՛ զարդարութիւն ձեր առնիցէք առաջի մարդկան՝ տեսանելոյ նոցա, զի ապա վարձս ոչ ունիցիք առ Հաւր ձերում որ յերկինս է :

2 Արդ՝ մի՛ ողորմութիւն առնիցես առաջի քո՝ փող հարանելով, որպէս առնեն կեղծաւորքն ՚ի ժողովարանս և ՚ի հրապարակս, զի փառաւորեսցին ՚ի մարդկանէ. ամէն ասեմ ձեզ, ընդունին զվարձս իւրեանց :

3 Եւ դու՝ յորժամ առնես ողորմութիւն, մի՛ գիտասցէ ձախ քո զինչ առնէ աջ քո,

4 զի ողորմութիւն քո ՚ի ծածուկ լիցի, և Հայր քո որ տեսանէ ՚ի ծածուկ՝ հատուսցէ քեզ յայտնապէս :

5 Եւ յորժամ աղօթիցէք՝ մի՛ լիցիք որպէս կեղծաւորքն, զի սիրեն ՚ի ժողովարանս և ՚ի հրապարակս կանգնեալ աղօթել, զի երեւեսցին մարդկան. ամէն ասեմ ձեզ, ընդունին զվարձս իւրեանց :

6 Դու՝ յորժամ աղօթիցես՝ մտիր ՚ի սենեակ քո, և դուռն գոցեալ աղօթեա առ Հայր քո ՚ի ծածուկ, և Հայր քո որ տեսանէ ՚ի ծածուկ՝ հատուսցէ քեզ յայտնապէս :

7 Եւ յորժամ աղօթէք՝ մի՛ բազմաբանեսջիք որպէս հեթանոսքն, զի կարծեն թէ ՚ի բազմաբանութեան իւրեանց լսելի լինիցին :

8 Մի՛ նմանիք նոցա. զի գիտէ Հայր ձեր զինչ պիտոյ իցէ ձեզ, յառաջ քան զխնդրել ձեզ ՚ի նմանէ :

9 Արդ՝ այսպէս աղօթեցէք դուք. Հայր մեր որ յերկինս ես, սուրբ լիցի անուն քո :

10 Եկեսցէ արքայութիւն քո, եղիցի կամք քո որպէս յերկինս և ՚ի երկրի :

11 Զհացն մերոյ հանապազորդ տուր մեզ այսօր :

12 Եւ թող մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք պարտապանաց մերոց :

13 Եւ մի՛ տանիցես զմեզ ՚ի փորձութիւն, այլ փրկեա ՚ի չարէ. զի քո է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս. ամէն :

14 Եթէ թողուցանէք մարդկան զյանցանս նոցա՝ թողցէ և Հայր ձեր երկնաւոր ձեզ զյանցանս ձեր :

15 Եթէ ոչ թողուցանէք մարդկան զյանցանս նոցա՝ և Հայր ձեր ոչ թողցէ ձեզ զյանցանս ձեր :

16 Եւ յորժամ պահեսջիք՝ մի՛ լիցիք որպէս կեղծաւորքն տրտում, զի կերպարանս իւրեանց աղտեղանան, զի երեւեսցին մարդկան պահեցողք. ամէն ասեմ ձեզ, ընդունին զվարձս իւրեանց :

17 Դու՝ յորժամ պահեսջիս՝ օծ զգլուխ քո և զերեսս քո լուա,

18 զի մի՛ երեւեսցիս մարդկան պահեցող, այլ Հաւր քում որ ՚ի ծածուկ է. և Հայր քո որ տեսանէ ՚ի ծածուկ՝ հատուսցէ քեզ յայտնապէս :

19 Մի՛ գանձս դիզէք ձեզ ՚ի վերայ երկրի, ուր ցիր և ցան ապականէ, և ուր գողք ականջ դնեն և գողանան :

20 Այլ գանձս դիզէք ձեզ յերկինս, ուր ոչ ցիր և ոչ ցան ապականէ, և ուր գողք ոչ ականջ դնեն և ոչ գողանան :

21 Զի ուր է գանձ քո՝ անդ և սիրտ քո լինիցի :

22 Ճրագ մարմնոյ է աչք. եթէ աչք քո պարզ իցէ՝ ամենայն մարմին քո լուսաւոր լինիցի :

23 Եթէ աչք քո չար իցէ՝ ամենայն մարմին քո խաւարային լինիցի. եթէ ուրեմն լոյս որ ՚ի քեզ է խաւար է՝ խաւարն որչափ ևս եղիցի :

24 Ոչ ոք կարէ երկոցունց տերանց ծառայել. զի կամ զայն ատիցէ և զայս սիրիցէ, կամ զայնմով հաւանեսցի և զայսմանէ անհոգ լիցի. ոչ կարէք Աստուծոյ ծառայել և մամոնայի :

25 Վասն այսորիկ ասեմ ձեզ, մի՛ հոգայք անձին ձերում զինչ կերիցէք և զինչ արբիցէք, և ոչ մարմնոյ ձերում զինչ հագուսջիք. ոչ անձն աւելի է քան զկերակուր, և մարմին քան զհանդերձ :

26 Նայեցարուք ՚ի թռչունս երկնից, զի ոչ սերմանեն և ոչ հնձեն և ոչ ժողովեն ՚ի շտեմարանս, և Հայր ձեր երկնաւոր կերակրէ զնոսա. ոչ դուք աւելի քան զնոսա՞ էք :

27 Եւ ո՞ ՚ի ձէնջ հոգալով կարէ մի կանգուն յաւելուլ ՚ի հասակ իւր :

28 Եւ վասն հանդերձի զիա՞րդ հոգայք. նայեցարուք ՚ի հասկս արտոյտի, զիա՞րդ աճին. ոչ վաստակին և ոչ մանեն,

29 բայց ասեմ ձեզ, զի ոչ և Սողոմոն ամենայն փառաւք իւրովք զգեցաւ որպէս զմի ՚ի սոսկանց սոցա :

30 Եթէ զխոտ արտի որ այսօր է և վաղիւ ՚ի հնոց արկանի Աստուած այսպէս զարդարէ, ո՞չ աւելի զձեզ, սակաւահաւատք :

31 Մի՛ հոգայք ուրեմն և մի՛ ասիցէք թէ զի՞նչ կերիցուք կամ զի՞նչ արբիցուք կամ զի՞նչ հագուսջիք :

32 Զայս ամենայն հեթանոսքն խնդրեն. զի գիտէ Հայր ձեր երկնաւոր թէ պիտոյ իցէ ձեզ զայս ամենայն :

33 Այլ խնդրեցէք նախ զարքայութիւն Աստուծոյ և զարդարութիւն նորա, և զայս ամենայն յաւելցին ձեզ :

34 Մի՛ հոգայք ուրեմն վասն վաղուան, զի վաղն հոգասցի վասն անձին իւրոյ. բաւական է աւուր զչարն իւր :

7 Մի՛ դատիցէք զոք, զի մի՛ դատիցիք :

2 Զի որով դատաստանաւ դատիցէք՝ դատիցիք, և որով չափով չափիցէք՝ չափեսցի ձեզ :

3 Եւ զիա՞րդ տեսանես զգերանդի որ ՚ի աչս եղբաւր քո, և զգերանդին որ ՚ի քում աչս ոչ զգաս :

4 Կամ զիա՞րդ ասես եղբաւր քում, թող հանից զգերանդի ՚ի աչաց քոց, և ահա գերանդի ՚ի քում աչս :

5 Կեղծաւոր, հան նախ զգերանդին ՚ի քում աչս, և ապա տեսցես հանել զգերանդի ՚ի աչաց եղբաւր քո :

6 Մի՛ տայք զսուրբ շանց, և մի՛ արկանէք զմարգարիտս ձեր առաջի խոզից, գուցէ կոխեսցեն զոտիւք իւրեանց, և դարձեալ պատառեսցեն զձեզ :

7 Խնդրեցէք և տացի ձեզ, որոնեցէք և գտանիցէք, դարձուածեցէք և բացցի ձեզ :

8 Զի ամենայն որ խնդրէ՝ առնու, և որ որոնէ՝ գտանէ, և դարձուածողին բացցի :

9 Կամ ո՞ է ՚ի ձէնջ մարդ որ եթէ հացի խնդրէ որդի իւր՝ քար տացէ նմա,

10 կամ եթէ ձուկն խնդրէ՝ օձ տացէ նմա :

11 Արդ եթէ դուք չարք գիտէք պարգեւս բարիս տալ որդւոց ձերոց, որչափ ևս Հայր ձեր որ յերկինս է տացէ բարիս խնդրողաց իւրոց :

12 Ամենայն ինչ զոր կամիցիք զի արասցեն ձեզ մարդիկ՝ նոյնպէս և դուք արարէք նոցա. զի այս է օրէնք և մարգարէք :

13 Մտանէք ՚ի դրունս նեղս, զի լայն է դուռն և ընդարձակ է ճանապարհ որ տանի ՚ի կորուստ, և բազումք են որ մտանեն ՚ի նա :

14 Զի նեղ է դուռն և անձուկ է ճանապարհ որ տանի ՚ի կեանս, և սակաւք են որ գտանեն զնա :

15 Զգուշ լերուք ՚ի ստախօս մարգարէից, որ գան առ ձեզ ՚ի հանդերձս ոչխարաց, և ներքինապէս են գայլք յափշտակիչք :

16 Յպտղոց նոցա ճանաչիցէք զնոսա. միթէ ժողովեն ՚ի փշոյ զխաղող, կամ ՚ի տատասկանէ զթուզ :

17 Նոյնպէս ամենայն ծառ բարի պտուղս բարիս առնէ, և ծառ չար պտուղս չարիս առնէ :

18 Ոչ կարէ ծառ բարի պտուղս չարիս առնել, և ոչ ծառ չար պտուղս բարիս առնել :

19 Ամենայն ծառ որ ոչ առնէ պտուղ բարի՝ կտրի և ՚ի հուր արկանի :

20 Ապա ուրեմն յպտղոց նոցա ճանաչիցէք զնոսա :

21 Ոչ ամենայն որ ասիցէ ինձ, Տէր Տէր, մտանիցէ ՚ի արքայութիւն երկնից, այլ որ առնիցէ զկամս Հաւր իմոյ որ յերկինս է :

22 Բազումք ասիցեն ինձ յայնմ աւուր, Տէր Տէր, ո՞չ անուամբ քով մարգարէացաք, և անուամբ քով դեւս հանեաք, և անուամբ քով զօրութիւնս բազումս արարաք :

23 Եւ յայնժամ խոստովանեցայց նոցա, թէ ոչ երբեք ծանեայ զձեզ. հեռացարուք յինէն դուք որ գործէք զանօրէնութիւն :

24 Ամենայն ոք որ լսիցէ զբանս իմ զայս և առնիցէ զսոսա՝ նմանեցուցից զնա մարդոյ իմաստնոյ որ շինեաց զտունն իւր ՚ի վերայ վիմի :

25 Եւ իջին անձրեւք, և եկին գետք, և փչեցին հողմք, և հարին ՚ի տունն այն, և ոչ անկաւ, զի հաստատեալ էր ՚ի վերայ վիմի :

26 Եւ ամենայն որ լսիցէ զբանս իմ զայս և ոչ առնիցէ զսոսա՝ նմանեցուցից զնա մարդոյ տգիտի որ շինեաց զտունն իւր ՚ի վերայ աւազի :

27 Եւ իջին անձրեւք, և եկին գետք, և փչեցին հողմք, և հարին ՚ի տունն այն, և անկաւ, և եղեւ անկումն նորա մեծ :

28 Եւ եղեւ յորժամ կատարեաց Յիսուս զբանս զայս, զարհուրեցան ամբոխքն ՚ի վարդապետութենէ նորա :

29 Զի էր ուսուցանէր նոցա իբրեւ զիշխանութիւն ունելով, և ոչ իբրեւ զդպիրս նոցա և զփարիսեցիս :

8 Եւ իջեալ նորա ՚ի լերինն՝ բազում ամբոխք գնացին ընդ նմա :

2 Եւ ահա մարդ մի բորոտ եկեալ երկրպագանէր նմա՝ ասելով, Տէր, եթէ կամիս՝ կարես զիս սրբել :

3 Եւ երկարեալ Յիսուս զձեռն՝ դպաւ նմա՝ ասելով, կամիմ, սրբեցիր. և անդէն բորոտութիւն նորա սրբեցաւ :

4 Եւ ասէ ցնա Յիսուս, տես մի՛ ումեք ասիցես, այլ երթ ցոյց զանձն քահանայապետին, և մատո զպատարագ զոր պատուիրեաց Մովսէս, ՚ի վկայութիւն նոցա :

5 Եւ մտեալ Յիսուսի ՚ի Կափառնայում՝ մատեան առ նա հարիւրապետ մի՝ աղաչելով զնա,

6 և ասելով, Տէր, մանուկ իմ պառկի ՚ի տան անդամալոյծ, զարհուրելի տանջանաւք :

7 Եւ ասէ ցնա Յիսուս, ես եկեալ բժշկեցից զնա :

8 Եւ պատասխանի ետ հարիւրապետն և ասէ, Տէր, ոչ եմ արժան զի ՚ի տանիս իմ մտցես, այլ միայն ասա բանիւ, և բժշկեսցի մանուկ իմ :

9 Զի և ես մարդ եմ հնազանդ իշխանաց, ունիմ ՚ի ներքոյ իմում զօրս, և ասեմ ցայսմ, գնա՝ և գնայ, և ցայլ, եկ՝ և գայ, և ծառայի իմում, արա զայս՝ և առնէ :

10 Եւ լուեալ Յիսուսի՝ զարմացաւ, և ասէ ցհետեւեալսն, ամէն ասեմ ձեզ, զի ոչ գտի նոյնչափ հաւատս յԻսրայէլի :

11 Եւ ասեմ ձեզ, զի բազումք յարեւելից և յարեւմտից եկեսցեն, և հանգիցին ընդ Աբրահամու և ընդ Իսահակայ և ընդ Յակոբայ ՚ի թագաւորութեան երկնից :

12 Եւ որդիքն արքայութեան արտաքս հանցին ՚ի խաւարն արտաքին. անդ եղիցի լալ և կրճտել ատամանց :

13 Եւ ասէ Յիսուս հարիւրապետին, երթ, և որպէս հաւատացեր՝ եղիցի քեզ. և բժշկեցաւ մանուկն յժամուն յայնմիկ :

14 Եւ եկեալ Յիսուս ՚ի տուն Պետրոսի՝ ետես զաներ նորա պառկեալ և տենդոտ :

15 Եւ մերձեցաւ և բռնեաց զձեռն նորա, և թողաց զնա տենդն, և յարեաւ և սպասաւորէր նմա :

16 Եւ յորժամ եղեւ երեկո՝ մատուցին առ նա դիւահարս բազումս, և հանէր զհոգիսն բանիւ, և զամենայն հիւանդս բժշկէր :

17 Զի կատարեսցի որ ասացաւ ՚ի մարգարէէն Եսայեայ՝ ասելով, զանձինս մեր առ և զհիւանդութիւնս մեր բժշկեաց :

18 Եւ տեսեալ Յիսուսի զբազում ամբոխս ՚ի շուրջ իւր՝ հրամայեաց երթալ ՚ի կողմն այլ կողմանէ :

19 Եւ մատեան առ նա դպիր մի և ասէ, Վարդապետ, երթիցեմ զհետ քո ուր և գնասցես :

20 Եւ ասէ ցնա Յիսուս, աղուէսք ունին զբներս, և թռչունք երկնից զբունս, իսկ Որդի մարդոյ ոչ ունի ուր զգլուխ իւր դիցէ :

21 Եւ ասէ ցնա այլ ոմն ՚ի աշակերտաց նորա, Տէր, ներեա ինձ նախ երթալ և թաղել զհայր իմ :

22 Եւ Յիսուս ասէ ցնա, հետեւեա ինձ, և թող մեռեալքն թաղեսցեն զմեռեալս իւրեանց :

23 Եւ մտեալ նորա ՚ի նաւ՝ հետեւեցան նմա աշակերտք նորա :

24 Եւ ահա շարժումն մեծ եղեւ ՚ի ծովուն, մինչեւ ծածկեցաւ նաւն ՚ի ալեաց. և նա քնացեալ էր :

25 Եւ մատեան առ նա աշակերտք նորա, և յարուցին զնա՝ ասելով, Տէր, փրկեա զմեզ, կորնչիմք :

26 Եւ ասէ ցնոսա Յիսուս, ընդէ՞ր երկնչիք դուք, սակաւահաւատք. յարեաւ և սաստ ետ հողմոց և ծովուն, և եղեւ խաղաղութիւն մեծ :

27 Եւ զարհուրեցան մարդիկն՝ ասելով, ո՞ է այս զի և հողմք և ծովն հնազանդին նմա :

28 Եւ եկեալ նորա յայն կողմն յերկիրն Գադարացւոց՝ ընդ առաջ եղեն նմա երկու դիւահարք ելեալք ՚ի գերեզմանաց, չարագոյնք յոյժ, մինչեւ ոչ ոք կարէր անցանել ճանապարհաւ անտի :

29 Եւ ահա գոչեցին ասելով, զի՞նչ է մեզ և քեզ, Յիսուս Որդի Աստուծոյ, եկիր յառաջ քան զժամանակ տանջել զմեզ :

30 Եւ հեռի ՚ի նոցանէ հոտ խոզից բազմաց արածէր :

31 Եւ դեւքն աղաչեցին զնա՝ ասելով, եթէ հանես զմեզ՝ արձակեա զմեզ յոհմն խոզից :

32 Եւ ասէ ցնոսա, երթայք. և նոքա ելեալ գնացին յոհմն խոզից, և ահա ամենայն հոտ խոզից ընթացաւ ՚ի վիմաձորէն ՚ի ծով, և մեռան ՚ի ջուրս :

33 Եւ հովիւքն փախեան, և գնացեալ ՚ի քաղաքն՝ պատմեցին զամենայն և զդիւահարացն :

34 Եւ ահա ամենայն քաղաքն ելին ընդ առաջ Յիսուսի, և տեսեալ զնա՝ աղաչեցին զի անցցէ ՚ի սահմանաց նոցա :

9 Եւ նաւեալ Յիսուս անցին, և եկն ՚ի քաղաքն իւր :

2 Եւ ահա մատուցին առ նա անդամալոյծ մի պառկեալ ՚ի մահիճի. և տեսեալ Յիսուսի զհաւատս նոցա՝ ասէ անդամալոյծին, քաջ լեր որդեակ, մեղքդ քո թողին քեզ :

3 Եւ ահա ոմանք ՚ի գրագէտսն ասացին ՚ի մտի իւրեանց, թէ այս հայհոյէ :

4 Եւ Յիսուս տեսեալ զխորհուրդս նոցա՝ ասէ, ընդէ՞ր խորհիք չարիս ՚ի սրտի ձերում :

5 Զի՞նչ է դիւրագոյն, ասել թէ թողին քեզ մեղքդ քո, կամ ասել թէ յարիր և գնա՞ :

6 Բայց զի գիտասջիք թէ իշխանութիւն ունի Որդի մարդոյ ՚ի վերայ երկրի թողուլ մեղս, յայնժամ ասէ անդամալոյծին, յարիր, առ զմահիճ քո և գնա ՚ի տուն քո :

7 Եւ յարեաւ և գնաց ՚ի տուն իւր :

8 Եւ տեսեալ ամբոխացն՝ զարհուրեցան և փառաւորեցին զԱստուած որ տուեալ էր իշխանութիւն այսպիսի մարդկան :

9 Եւ անցեալ Յիսուս անտի՝ ետես մարդ մի նստեալ ՚ի մաքսատան, որում անուն Մատթէոս, և ասէ ցնա, հետեւեա ինձ. և յարեաւ և հետեւեցաւ նմա :

10 Եւ եղեւ նորա նստելոյ ՚ի տան՝ և ահա բազումք մաքսաւորք և մեղաւորք եկեալ նստեան ընդ Յիսուսի և ընդ աշակերտս նորա :

11 Եւ տեսեալ փարիսեցւոցն՝ ասէին աշակերտաց նորա, ընդէ՞ր ընդ մաքսաւորս և մեղաւորս ուտէ վարդապետ ձեր :

12 Եւ լուեալ Յիսուսի՝ ասէ, ոչ պիտոյ են հիւանդք բժշկի, այլ չարաց :

13 Եւ գնացեալ ուսարուք զի ասացաւ, թէ ողորմութիւն կամիմ և ոչ պատարագ. զի ոչ եկի կոչել զարդարս, այլ զմեղաւորս ՚ի ապաշխարութիւն :

14 Յայնժամ մատեան առ նա աշակերտք Յովհաննու՝ ասելով, ընդէ՞ր մեք և փարիսեցիք բազում պահեմք, և աշակերտք քո ոչ պահեն :

15 Եւ ասէ ցնոսա Յիսուս, միթէ կարեն որդիք հարսանեացն սգալ՝ մինչդեռ փեսայն ընդ նոսա է. այլ եկեսցեն աւուրք յորում հարկանիցի ՚ի նոցանէ փեսայն, և յայնժամ պահեսցեն :

16 Եւ ոչ ոք կարկատան ՚ի նոր ձորձ ՚ի հին հանդերձ արկանէ, զի ոչ առնու լրումն նորա ՚ի հնոյն, և չարագոյն պատռուածք եղիցի :

17 Եւ ոչ արկանեն զգինի նոր ՚ի հնամանս հինս, զի ապա պատառեսցին հնամանքն, և գինին հեղցի, և հնամանքն կորիցեն. այլ արկանեն զգինի նոր ՚ի հնամանս նորս, և երկոքին միանգամ պահեսցին :

18 Մինչդեռ նա զայս խօսէր ցնոսա՝ և ահա իշխան մի եկեալ երկրպագանէր նմա՝ ասելով, զի դուստր իմ նոր մեռաւ, այլ եկեալ եդ զձեռն քո ՚ի վերայ նորա՝ և կեցցէ :

19 Եւ յարեաւ Յիսուս և գնաց զհետ նորա, և աշակերտք նորա :

20 Եւ ահա կին մի որ տասն և երկու ամ էր ՚ի հոսանս արեան, մերձեցաւ ՚ի թիկունս նորա և մատեաւ ՚ի վերայ ծայրի հանդերձից նորա :

21 Զի ասէր ՚ի մտի իւրում, եթէ միայն մատիցեմ ՚ի հանդերձս նորա՝ կեցից :

22 Եւ Յիսուս դարձեալ և տեսեալ զնա՝ ասէ, քաջ լեր դուստր, հաւատք քո կեցուցին զքեզ. և կինն կեցաւ յժամուն յայնմիկ :

23 Եւ եկեալ Յիսուս ՚ի տուն իշխանին՝ և տեսեալ զաղմկաւորսն և զհարս ողբալիս՝

24 ասէ, տեղի տուք, զի ոչ մեռաւ աղջիկն այլ քնացեալ է. և ծիծաղէին նմա :

25 Եւ յորժամ հանեալ էր զամբոխն՝ մտեալ կալաւ զձեռն նորա, և յարեաւ աղջիկն :

26 Եւ ելանէ համբաւ այս յայնմ երկրի ամենայն :

27 Եւ անցեալ Յիսուս անտի՝ երկու կոյրք զհետ գային նմա՝ աղաղակելով և ասելով, ողորմեա մեզ Որդի Դաւթի :

28 Եւ եկեալ ՚ի տուն՝ մատեան առ նա կոյրքն, և ասէ ցնոսա Յիսուս, հաւատայք դուք զի կարեմ զայս առնել ձեզ. ասեն ցնա, այո Տէր :

29 Յայնժամ մերձեցոյց զաչս նոցա՝ ասելով, ըստ հաւատոց ձերոց եղիցի ձեզ :

30 Եւ բացան աչք նոցա. և պատուիրեաց նոցա Յիսուս՝ ասելով, տեսէք մի՛ ոք գիտասցէ :

31 Եւ նոքա ելեալ տարածեցին զնա յամենայն երկրին այնմիկ :

32 Եւ նոցա ելանելոց՝ ահա մատուցին առ նա մարդ մի համր դիւահար :

33 Եւ հանեալ դեւն՝ խօսեցաւ համրն. և զարհուրեցան ամբոխքն՝ ասելով, զի ոչ երեւեցաւ այսպէս յԻսրայէլի :

34 Եւ փարիսեցիքն ասէին, թէ իշխանաւ դիւաց հանէ զդեւսն :

35 Եւ շրջէր Յիսուս զամենայն քաղաքս և զգեղս՝ ուսուցանելով ՚ի ժողովարանս նոցա, և քարոզելով զաւետարան արքայութեան, և բժշկելով զամենայն հիւանդութիւն և զամենայն ախտ ՚ի ժողովրդենէ :

36 Եւ տեսեալ զամբոխսն՝ գթացաւ ՚ի վերայ նոցա, զի էին տարակուսեալք և ցրուեալք իբրեւ զոչխարս որ չունին հովիւ :

37 Յայնժամ ասէ աշակերտաց իւրոց, հունձքն բազում են, և բանուորքն սակաւ :

38 Աղաչեցէք զտէր հունձիցն՝ զի հանիցէ բանուորս ՚ի հունձս իւր :

10 Եւ կոչեալ զտասն և զերկու աշակերտս իւր՝ ետ նոցա զիշխանութիւն ՚ի վերայ հոգւոց պղծոց՝ զի հանիցեն զնոսա, և բժշկեսցեն զամենայն հիւանդութիւն և զամենայն ախտ :

2 Եւ անուանք տասն և երկուց առաքելոցն են սոքա. նախ Սիմոն որ կոչի Պետրոս, և Անդրէաս եղբայր նորա, Յակոբոս որդի Զեբեդեայ, և Յովհաննէս եղբայր նորա,

3 Փիլիպպոս և Բարթողիմէոս, Թովմաս և Մատթէոս մաքսաւոր, Յակոբոս որդի Ալփէոսի, և Թադէոս,

4 Սիմոն Կանանացի, և Յուդաս Իսկարիովտացի որ և մատնեաց զնա :

5 Զսոսա տասն և երկուս առաքեաց Յիսուս, և պատուիրեաց նոցա՝ ասելով, զհեթանոսաց ճանապարհ մի՛ երթայք, և յամարիացւոց քաղաք մի՛ մտանէք,

6 այլ երթայք առ ոչխարս կորուսեալս տանն Իսրայէլի :

7 Եւ գնացեալ քարոզեցէք՝ ասելով, եթէ մերձեցաւ արքայութիւն երկնից :

8 Հիւանդս բժշկեցէք, մեռեալս յարուցէք, բորոտս սրբեցէք, դեւս հանէք. անհատոյց առէք, անհատոյց տուք :

9 Մի՛ պատրաստեսջիք ոսկի կամ արծաթ կամ պղինձ ՚ի գոտիս ձեր,

10 ոչ տոպրակ ՚ի ճանապարհ, ոչ երկու պատմուճան, ոչ կոշիկ, ոչ գաւազան. արժան է բանուորի կերակուր իւր :

11 Եւ յորում քաղաք կամ գեղ մտանիցէք՝ հարցէք ՚ի նմա զարժանաւորն, և անդ մնասջիք մինչեւ ելանիցէք անտի :

12 Եւ մտանելով ՚ի տունն՝ ողջունեցէք զնա ՚ի խաղաղութիւն :

13 Եւ եթէ իցէ տունն արժան՝ եկեսցէ խաղաղութիւն ձեր ՚ի վերայ նորա. և եթէ ոչ իցէ արժան՝ խաղաղութիւն ձեր ՚ի ձեզ դարձցի :

14 Եւ որ ոչ ընկալցի զձեզ և ոչ լուիցէ զբանս ձեր՝ ելանելով յայնմանէ տանէ և յայնմանէ քաղաքէ՝ թօթափեցէք զփոշի ոտից ձերոց :

15 Ամէն ասեմ ձեզ, հանդուրժելի եղիցի երկրին Սոդոմացւոց և Գոմորացւոց յաւուր դատաստանի, քան քաղաքին յայնմիկ :

16 Ահա ես առաքեմ զձեզ իբրեւ զոչխարս ՚ի մէջ գայլոց. լերուք ուրեմն իմաստունք իբրեւ զօձս և պարզամիտք իբրեւ զաղաւնիս :

17 Զգուշ լերուք ՚ի մարդկանէ. զի մատնեսցեն զձեզ ՚ի ժողովարանս և ՚ի տանջարանս իւրեանց հարկանիցեն զձեզ,

18 և առաջի իշխանաց և թագաւորաց տարցին վասն իմ, ՚ի վկայութիւն նոցա և հեթանոսաց :

19 Եւ յորժամ մատնեսցեն զձեզ՝ մի՛ հոգայք զինչ կամ զիա՞րդ խօսիցիք. զի տացի ձեզ յժամուն յայնմիկ զինչ խօսիցիք :

20 Զի ոչ դուք էք որ խօսիք, այլ Հոգի Հաւր ձերոյ որ խօսի ՚ի ձեզ :

21 Եւ մատնեսցէ եղբայր զեղբայր ՚ի մահ, և հայր զորդի, և յարիցեն որդիք ՚ի վերայ ծնողաց և սպանցեն զնոսա :

22 Եւ լինիցիք ատելի ամենայնի ազգի վասն անուան իմոյ. և որ համբերեսցէ մինչեւ ՚ի կատարած՝ նա կեցցէ :

23 Եւ յորժամ հալածեսցեն զձեզ ՚ի քաղաքէ ՚ի քաղաք՝ փախարուք ՚ի յայլ. ամէն ասեմ ձեզ, մի՛ կատարեսջիք զքաղաքս Իսրայէլի մինչեւ եկեսցէ Որդի մարդոյ :

24 Ոչ է աշակերտ վարդապետէ մեծ, և ոչ ծառայ տեառն իւրոյ :

25 Բաւական է աշակերտի զի եղիցի իբրեւ վարդապետ իւր, և ծառայի իբրեւ տէր իւր. եթէ զտանուտէրն Բեեղզեբուղ կոչեցին, որչափ ևս զտնեցիսն իւր :

26 Մի՛ երկնչիք ուրեմն ՚ի նոցանէ. զի չիք ծածուկ որ ոչ յայտնեսցի, և ոչ գաղտնի որ ոչ գիտասցի :

27 Զոր ասեմ ձեզ ՚ի խաւարի՝ ասասջիք ՚ի լուսոյ, և զոր ՚ի ականջս լսիցէք՝ քարոզեցէք ՚ի տանիցս :

28 Եւ մի՛ երկնչիք ՚ի սպանանելոցն զմարմին, և զանձն ոչ կարեն սպանանել. այլ զերկնչելին երկնչեցարուք որ կարէ զանձն և զմարմին կորուսանել ՚ի գեհենի :

29 Ոչ երկու զատկանի ասարակաց ծախին, և ոչ մի ՚ի նոցանէ անկանի ՚ի գետին առանց Հաւր ձերոյ :

30 Եւ ձեր գլխոյ ամենայն մազք համարեալ են :

31 Մի՛ երկնչիք ուրեմն, դուք աւելի էք քան զբազում զատկանի :

32 Ամենայն ոք որ խոստովանեսցի զիս առաջի մարդկան՝ խոստովանեցայց և ես զնա առաջի Հաւր իմոյ որ յերկինս է :

33 Եւ որ ուրասցէ զիս առաջի մարդկան՝ ուրասցից և ես զնա առաջ

կան լեցի դատաստանի :

22 Այլ ես ասեմ ձեզ · եթէ ամենայն որ բարկանայ եղբօր իւրում՝ տարապարտուց, պարտաւոր լիցի դատաստանի : և որ ասիցէ ցեղբայր իւր յիմար, պարտաւոր լիցի ատենի : և որ ասիցէ ցեղբայր իւր մոռս, պարտաւոր լիցի ի գեհեն հրոյն :

23 Եթէ մատուցանիցես ըզպատարագ քո ի վերայսեղանոյ· և անդ յիշեացես՝ եթէ եղբայր քո ունիցի ինչ խեթ զքէն,

24 Թող զպատարագն քո առաջի սեղանոյն · և երթ նախ հաշտեաց ընդ եղբօր քում, և ապա եկեալ մատուսջիր զպատարագն քո :

25 Լեր իրաւախոհ ընդ ոսոխի քում վաղագոյն, մինչդեռ իցես ընդ նմա ի ճանապարհի. զուցէ մատնիցէ զքեզ ոսոխն դատաւորի, և դատաւորն դահճի · և արկանիցիս ի բանտ :

26 Ամէն ասեմ քեզ · ոչ ելանիցես անտի, մինչև հատուցանիցես զդետին նաբարակիան :

27 Լուարուք զի ասացաւ՝ մի շնար :

28 Իսայց ես՝ ասեմ ձեզ, թէ ամենայն որ չայի ի կին մարդ՝ առ ի ցանկանալոյ նմա, անդէն շնացաւ ընդ նմա ի սրտի իւրում :

29 Եթէ ակն քո աջ գայթագղեցուցանէ զքեզ, խլեա զնա՝ և ընկեա ի քէն · զի լաւ է քեզ եթէ մի յանդամոց քոց կորիցէ, և մի ամենայն մարմինդ քո անկանիցի ի գեհեն :

ընէ՝ դատաստանի ղիմաց պարտաւոր ըլլա :

22 Իսայց ես ձեզի կըսեմ· որ՝ ամէն ով որ իր եղբօրը դէմ պարապատեղը կըսրդոզի՝ (անիկա) դատաստանին ղիմաց պարտական ըլլա : ու ան որ իր եղբօրը խենթ կըսէ՝ պարտական ըլլա առենի առջև· ու ան որ իր եղբօրը մորու կըսէ, պարտական ըլլա գեհենի կրակին :

23 Թէ որ սեղանին վրա քու պատարագդ որ կըմատուցանես, ու հոն միտքդ իյնալու ըլլա՝ որ եղբօրդ քու հետ ատերութիւնմը ունի,

24 Քու պատարագդ հոն սեղանին առջևը թող տուր· դնա առաջ եղբօրդ հետը հաշտուէ, ու հետպա թէ՝ եկոր քու պատարագդ մատուս :

25 Քու սոսկ ներհակիդ հետը շուտով բանդ արդարապէս լըմընցուր՝ քանի որ անոր հետ միտեղ համբառն վրան ես· որ չըլլա թէ ոսոխդ քեզ դատաւորին ձեռքը տա, ու դատաւորնալ՝ դահճին (ձեռք), ու բանտը ձգուիս :

26 Ճշմարիտ քեզի կըսեմ.(դուն) անկէց չես ելլեր՝ ինչվան որ եօքի մանար ըստանկնալ չի վճարես :

27 Լսերիք որ ըսված է՝ (թէ) շնութիւն մի ըներ :

28 Իսայց ես ձեզի կըսեմ, թէ՝ ամէն ով որ ցանկութիւնով կըներկի մարդու կընայի, ան՝ իր սըրտին միջը անոր հետը արդէն շնացած կըլլա :

29 Թէ որ քու աջ (կողմի) աչկըդ քեզի գայթաղկութիւն կուտա, ան փրցուր ու քեզմէ դուրս ձգէ· ինչու որ՝ քեզի ալ աղէկ է՝ որ մէկ անդամըդ կորսըվի, ու որ քու բոլոր մարմինըդ գեհենը չիյնա :

30 Եւ եթէ աչ ձեռն քո գայ_ թաղդեցուցանէ զքեզ , հատ գնա՝ և ընկեր ՚ի քէն . զի լաւ է քեզ եթէ մի յանդամոց քոց կորիցէ, և մի ամենայն մար_ միդ քո արկանիցի ՚ի դժոխ :

31 Պաքէն ասացաւ , թէ որ արձակիցէ զկին իւր՝ տացէ նմա զարձակմանն :

32 Բայց ես ասեմ ձեզ , եթէ ամենայն որ արձակէ զկին իւր՝ առանց բանի պոռնկութեան , նա տայ նմա շնալ . և որ զար_ ձակեալն առնէ՝ շնայ :

33 Դարձեալ լուարուք զի ասացաւ առաջնոցն . մի երդ_ նուցուս սուտ, բայց հատուս_ ցես տն զերդմանս քո :

34 Պղ ես ասեմ ձեզ՝ ամե_ նևին մի երդնուլ . մի յերկինս՝ զի աթոռ է այ :

35 Եւ մի յերկիր՝ զի պատու_ անդան է ոտից նորա . և մի յերուսաղէմ՝ զի քաղաք է մե_ ծի արքայի :

36 Եւ մի ՚ի գլուխ քո երդ_ նուցուս, զի ոչ կարես մազ մի սպիտակ առնել՝ կամ թուխ :

37 Պղ եղիցի ձեր բան , այոն՝ այո , և ոչն՝ ոչ . զի աւե_ լին քան զայն ՚ի չարէն է :

38 Լուարուք զի ասացաւ . ակն ընդ ական , և ատամն ընդ ատաման :

39 Պղ ես ասեմ ձեզ , մի կալ հակառակ չարին : այլ եթէ ոք ածիցէ ապտակ յաջ ծնօտ քո՝ դարձո նմա և զա_ միւսն :

40 Եւ որ կամիցի ոք դատել և առնուլ զշապիկս քո, թող

30 Ու թէ որ քու աջ ձեռքըդ քեզի գայթագղութիւն կուտայ , անիկա կըտրէ ու քեզմէ դուրս ձգէ . ին_ չու որ՝ քեզի ալ աղէկ է որ քու անդամներդ մէկը կորսըվի, ու բո_ լոր մարմինըդ դժոխքը չինջվի :

31 Ըս ալ ըսվեցաւ՝ թէ ով որ իր կնիկը արձրկելու կըլլա , թող արձրկվելուն (թուխտը գրէ) անոր տա :

32 Բայց ես ձեզի կըսեմ , որ՝ ով որ իր կրնիկը կարձրկէ առանց պոռնկութեան պատճառի , ա_ նոր շնութիւնի պատճառը ինքը կըլլա . ու ով որ ան արձրկվածը առնէնէ՝ շնութիւն կրգործէ :

33 Միւսմանէ լսերէք որ առ_ ջիններուն ըսված է (թէ՝) սուտ երդում մի ըներ. հապա՝ ինը ը_ րած քու երդումդը վճարէ :

34 Բայց ես ձեզի կըսեմ, որ ի_ նչի երդում չընէք . ոչ երկինքով՝ որ այ աթոռն է :

35 Ու ոչ երկիրովըլա, որ անոր ոտացը դնելու տեղն է . ու ոչ երուսաղէմով , որ մենծ թագաւո_ րի քաղաք է :

36 Ու ոչ քու գլխուդ վրայովը երդում ընես, որ չես կրնար մէկ մազդ ձերմկցրնես կամ սևցրնես:

37 Հապա ձեր խօսքը ըլլա . հան՝ հա, ու չէն՝ չէ. ու անկէ եվէ_ լի (ըսվածը՝) ալ չարութենէ ա_ ռաջ կուգա :

38 Լսերէք որ ըսված է (թէ՝) աչք՝ աչքի տեղ , ու ակռա՝ ակ_ ռայի տեղ :

39 Բայց ես ձեզի կըսեմ , որ դէն հասցրնողին դիմչի կեցվի : հապա թէ որ մէկը աջտակիդ զարնէ աջ երեսիդ, (դուն) միւսկողնալ դարձուր անոր (առաջ) :

40 Ու մէկն որ կուզէ չեարդ վի_ ճադարձիլ՝ որ քու շապիքըդ առ_

՚ի նա և զբաձկան քո :

41 Եւ որ տաբաագարչակ վա-
րիցէ զքեզ մղոն մի, երթ ընդ
նմա և երկուս :

42 Որում խնդրէ ՚ի քէն՝
տուր· և որ կամի փոխ առնուլ
՚ի քէն՝ մի դարձուցաներ զե-
րեսս :

43 Լուարուք ասացաւ. սիրեսցես զընկեր քո,
և ատեսցես զթշնամին քո :

44 Այլ ես ասեմ ձեզ· սի-
րեցէք զթշնամիս ձեր· օրհնե-
ցէք զանիծիչս ձեր· բարի արա-
րէք առելեաց ձերոց, և աղօթս
՚ի վերայ այնոցիկ՝ որ լլկենն
զձեզ և հալածեն :

45 Օ՚ի եղիջիք որդիք հօր
ձերոյ որ յերկինսն է· զի զարե-
գակն իւր ծագէ ՚ի վերայ չա-
րաց և բարեաց, և ածէ անձրեւ
՚ի վերայ արդարոց և մեղաւո-
րաց :

46 Օ՚ի եթէ սիրիցէք զայ-
նոսիկ որ սիրենն զձեզ՝ զինչ
վարձք իցեն, ոչ ապաքէն և
մաքսաւորք զնոյն գործեն :

47 Եւ եթէ տայցէք միայն ողջ
ջոյն բարեկամաց ձերոց՝ զինչ
աւելի առնէք· ոչ ապաքէն
մաքսաւորք և մեղաւորք զնոյն
գործեն :

48 Այրդ՝ եղերուք դուք կա-
տարեալք, որպէս և Հայրն ձեր
երկնաւոր կատարեալ է :

նէ, վասն հաղուստաղալ իրեն
Թող տուր :

41 Ու ան՝ որ անպէտ տեղ քեզ
բանած՝ մղոնմը (Համբա) կը-
քըշէ, (դուն) անոր հետը ալ եր-
կուք գրնա :

42 Մեկն որ քեզմէ (բան) ուզէ՝
իրեն տուր· ու ոմեր քեզմէ փոխ
առնել կուզէ, (անկէ) երեսդ մի
դարձուներ :

43 Աս ալ լսերէք որ բսված է,
(Թէ) քու ընկերըդ սիրէ, ու քու
Թշնամիդ ատէ :

44 Հայդ ես ձեզի կըսեմ. սի-
րեցէք ձեր Թշնամիները· օրՀ-
նեցէք ձեզ անիծողները· բարիք
ըրէք անոնց որ ձեզ կատեն· ու
աղօթք ըրէք անոնց վրա, որ
ձեզ կըշարըրկեն ու կըՀալածեն :

45 Որ (ասով) որդիք ըլլաք
ձեր Հօրը որ երկինքն է : որ իր
արևը կըցայթեցընէ չարերուն ու
բարիներուն վրա, ու անձրև կը-
բերէ արդարներուն ու մեղաւոր-
ներուն վրա :

46 Որպա Թէ դուք՝ անոնք
(միան) սիրելու ըլլաք՝ որ ձեզ
կըսիրեն, ալ ինչ վարձք ունիք·
մաքսաւորներնալ ան (բանը)
չընե մի ըներ :

47 Ու Թէ որ միան ձեր բարե-
կամներուն բարև տաք, ինչ է-
վելի բան կընէք· մաքսաւորներն
ու մեղաւորներնալ՝ ան չընե մի
ըներ :

48 Ուրեմն դուքալ կատարեալ
եղէք, ինչպես որ ձեր երկնաւոր
Հայրը կատարեալ է :

Գ Լ · Օ ·

1 Օ՚զգուշ լերուք ողորմու-
Թեան ձերում՝ մի առ-
նել առաջի մարդկան, որպէս

1 Ը զգուշ եղէք՝ որ ձեր ողորմու-
Թիւնը մարդոց առջեը չը-
նէք, իբր Թէ անոնց դիմաց բանիը

թէ ՚ի ցայգ ինչ նոցա · զուցէ և վարձս ոչ ընդունիցիք ՚ի Հօրէն ձերմէ՝ որ յերկինսն է :

2 Այլ յորժամ առնիցես ողորմութիւն, մի՛ հարկաներ փող առաջի քո, որպէս կեղծաւորքն առնեն ՚ի ժողովուրդս և ՚ի հրապարակս · որպէս զի փառաւորեսցին ՚ի մարդկանէ : ամէն ասեմ ձեզ՝ այն իսկ են վարձք նոցա :

3 Այլ դու յորժամ ողորմութիւն առնիցես, մի՛ գիտասցէ ձախ քո զինչ գործէ աջ քո:

4 Որպէս զի եղիցի ողորմութիւնդ քո ՚ի ծածուկ · և Հայրն քո որ տեսանէ ՚ի ծածուկ՝ հատուսցէ քեզ յայտնապէս :

5 Եւ յորժամ յաղօթս կայցես, մի՛ լինիցիս որպէս կեղծաւորքն · զի սիրեն ՚ի ժողովուրդս՝ և յանկիւնս հրապարակաց կալ յաղօթս, որպէս զի երեւեսցին մարդկան : ամէն ասեմ ձեզ՝ այն իսկ են վարձք նոցա :

6 Այլ դու յորժամ կայցես յաղօթս, մո՛ւտ ՚ի սենեակ քո՝ և փակեա զդուրս քո, և կաց յաղօթս առ Հայր քո ՚ի ծածուկ · և Հայրն քո որ տեսանէ ՚ի ծածուկ, հատուսցէ քեզ յայտնապէս :

7 Եւ յորժամ կայցէք յաղօթս, մի՛ շատախօսք լինիք երբեմն պէս պէս՝ ինանօսոն · զի համարին թէ ՚ի բազում խօսից լսելի լինիցին :

8 Այր՝ մի՛ նմանիցէք նոցա · զի գիտէ Հայրն ձեր զինչ պիտոյ է ձեզ , մինչեւ ձեր խնդրեսիլ ինչ լցէ ՚ի նմանէ :

9 Եւ արդ՝ այսպէս կացէք դուք յաղօթս · Հայր մեր որ երկնքեր երեւցրնելով · որ չըլլա թէ (ասանկով) վարձք չառնէք ձեր Հօրմէն որ երկինքն է :

2 Ուսոի երբոր ողորմութիւն ընես՝ առջեւդ փող մի՛ չալեր, ինչորոր կեղծաւորները ժողովարանները ու փողոց տեղ վանքը կընեն · որ մարդոցմէ փառաւորվին : Ճշմարիտ կըսեմ ձեզի, որ միան ան է իրենց վարձքը :

2 Եւ պայծառացաւ առաջի նոցա , և փայլեցաւ երեսք նորա իբրև զարեգակն , և հանդերձք նորա եղեն սպիտակք իբրև զլոյս :

3 Եւ ահա երևեցան նոցա մովսէս և եղիա , խօսակցեալ ընդ նմա :

4 Պետրոս պատասխանի ետ և ասէ ցյն . տէր , բարւոք է մեզ ի սմա լինել , եթէ կամիս՝ արասցուք անդ երիս խորանս , քեզ մի՝ և մովսիսի մի՝ և եղիայի մի :

5 Եւ դեռ նա խօսէր , և ահա ամպ լուսաւոր ստուերեաց նոցա , և ահա ձայն ի ամպոյն ասէ . սա է որդի իմ սիրելի , յորում հաճեցայ , զնորա լուարուք :

6 Եւ լուեալ աշակերտացն՝ անկան ի վերայ երեսաց իւրեանց , և երկեան յոյժ :

7 Եւ մատեալ յն՝ հարկանէ զնոսա , և ասէ . արուարուք , և մի՛ երկնչիք :

8 Եւ համարձակեալ աչս իւրեանց՝ ոչ ոք տեսին , բայց զյն միայն :

9 Եւ իջանելոցն նոցա ի լերինն՝ պատուիրեաց նոցա յն և ասէ . մի՛ ումեք պատմեսջիք զտեսիլն , մինչև որդի մարդոյ յերկելոց յարիցէ :

10 Եւ հարցանէին զնա աշակերտքն նորա և ասէին . զիա՞րդ ասեն դպիրքն զի նախ գալոց է եղիա :

11 Նա պատասխանի ետ և ասէ . եղիա նախ գայ և դարձուսցէ զամենայն ինչ :

12 Եւ ասեմ ձեզ , զի եղիա եկն , և ոչ ճանաչեցին զնա , այլ արարին ընդ նմա որչափ կամեցան . նոյնպէս և որդի մարդոյ նեղեսցի ի նոցանէ :

13 Յայնժամ իմացան աշակերտքն , զի զյովհաննէս մկրտչէ ասաց նոցա :

14 Եւ մատեալ առ ամբոխն՝ մերձեցաւ առ նա մարդ մի , և անկեալ ի գիրկս նորա՝ ասէ .

15 տէր , ողորմեա որդւոյ իմում , զի ունի զդիւ , և նեղի յոյժ , զի յաճախ անկանի յերկիր և յերեսս ջրոյ :

16 Եւ մատուցի զնա աշակերտացդ քոց , և ոչ կարացին բժշկել զնա :

17 Պատասխանի ետ յն և ասէ . ով ազգ անհաւատ և ծուռ , մինչև ե՞րբ ընդ ձեզ եղէց , մինչև ե՞րբ համբերեցից ձեզ . մատուցէք զնա առ իս հոս :

18 Եւ սաստեաց նմա յն , և ել ի նմանէ դիւն , և բժշկեցաւ մանուկն յժամուն :

19 Յայնժամ մատեալ աշակերտքն առ յն՝ ասեն ցնա ի գաղտ . զիա՞րդ մեք ոչ կարացաք հանել զդիւն :

20 Ասէ ցնոսա յն . վասն անհաւատութեան ձերոյ . ամէն ասեմ ձեզ , եթէ ունիցիք հաւատս իբրև զհատ մանանխոյ , ասիցէք լերինդ այդմիկ . տեղի՛ անցիր անտի անդր , և անցցէ , և ոչ ինչ անկարելի լիցի ձեզ :

21 Եւ այս ազգ ոչ ելանէ , բայց ընդ աղօթս և ընդ պահս :

22 Եւ դարձեալ նոցա յն ի գալիլեա՝ ասէ ցնոսա . մատնեալ լինելոց է որդի մարդոյ ի ձեռս մարդկան :

23 Եւ սպանցեն զնա , և յերրորդում աւուր յարիցէ : և տրտմեցան յոյժ :

24 Եւ մտեալ նոցա ի կափառնայում՝ մատուցին առաքեալքն առ պետրոս , և ասեն . ոչ տուրս տայ վարդապետ ձեր դրամ :

25 Ասէ . այո՛ տայ : և մտեալ ի տուն՝ նախ քան զնա ասէ . զի՞ կարծես դու սիմոն , թագաւորք երկրի ի կոչից և ի հարկաց ումանից առնուն զմաքս , յորդւոցն իւրեանց , կամ յայլ ազգաց :

26 Ասէ նմա պետրոս . յայլ ազգաց : ասէ նմա յն . ապա ուրեմն որդիքն ազատ են :

27 Բայց զի մի՛ գայթակղեցուսցուք զնոսա , գնա՛ ի ծով , և զանկեայ ընկեց , և զառաջին ձուկն որ ելցէ՝ ա՛ռ , և բացեալ զբերան նորա՝ գտցես դրամ մի , զայն առեալ տուր նոցա վասն իմ և քո :

18 Յայնմ ժամու մատեան աշակերտքն առ յն՝ ասեն . ո՞վ արդեօք մեծ է յարքայութեան երկնից :

2 Եւ յն կոչեալ զմանուկ մի՝ կացոյց զնա առաջի նոցա :

3 Եւ ասէ . ամէն ասեմ ձեզ , եթէ ոչ դարձայք և եղիջիք իբրև զմանկունս , ոչ մտանիցէք յարքայութիւն երկնից :

4 Եւ որ խոնարհեցուցանիցէ զանձն իւր իբրև զմանուկս զայս , նա է մեծ յարքայութեան երկնից :

5 Եւ որ ընկալցի զմանուկ մի զայսպիսի յանուն իմ՝ զիս ընկալցի :

6 Եւ որ գայթակղեցուցանիցէ զմի ոք ի փոքունցդ հաւատացելոցս յիս՝ լաւ է նմա եթէ կապեսցի ջրաղացաքար ի պարանոց նորա , և խորասուզեսցի ի խորս ծովուն :

7 Վայ աշխարհի գայթակղութեանց համար . զի պարտ է եկեալ գայթակղութեանց , բայց վայ այնմ մարդոյ որով գայթակղութիւն գայ :

8 Եւ եթէ ձեռն քո կամ ոտն քո գայթակղեցուցանիցէ զքեզ՝ կտրեա՛ զնոսա , և արկ ի քէն . լաւ է քեզ մտանել ի կեանս անդամալոյծ կամ կաղ , քան զերկուս ձեռս կամ զերկուս ոտս ունելով արկանել յկրակն յաւիտենական :

9 Եւ եթէ աչք քո գայթակղեցուցանիցեն զքեզ՝ հանի՛ր զնոսա , և արկ ի քէն . լաւ է քեզ մտանել ի կեանս մի-ակնեայ , քան զերկուս աչս ունելով արկանել ի գեհենի հրոյ :

10 Տեսէք զի մի՛ արհամարհիցէք զմի ոք ի փոքունցդ այսոցիկ . զի ասեմ ձեզ , զի հրեշտակք նոցա յերկինս միշտ տեսանեն զերեսս հաւր իմոյ որ յերկինս է :

11 Զի եկն որդի մարդոյ կեցուցանել զկորուսեալսն :

12 Զիարդ ձեզ թուի , եթէ իցէ մարդոյ մի ոք ունելով հարիւր ոչխար , և մոլորեսցի ի նոցանէ մի ոչխար , ոչ թողցէ զիննսուն և զինն ի լերինս , և երթիցէ խնդրել զմոլորեալն :

13 Եւ եթէ գտցէ զնա , ամէն ասեմ ձեզ , զի ուրախ լինի նմա քան զիննսուն և զինն որ ոչ մոլորեցան :

14 Նոյնպէս ոչ է կամք առաջի հաւր ձերոյ որ յերկինս է , զի կորիցէ մի ոք ի փոքունցդ այսոցիկ :

15 Եւ եթէ մեղանչեսցէ ընդ քեզ եղբայր քո՝ երթ՝ և յանդիմանեա զնա միայնակ ընդ նմա . եթէ լուիցէ քեզ՝ շահեցար զեղբայր քո :

16 Եւ եթէ ոչ լուիցէ քեզ՝ ա՛ռ ընդ քեզ մի կամ երկուս , զի ի բերան երկուց կամ երից վկայից կացցէ ամենայն բան :

17 Եւ եթէ ոչ լուիցէ նոցա՝ ասա՛ եկեղեցւոյ . եթէ եկեղեցւոյ ոչ լուիցէ՝ եղիցի քեզ իբրև զհեթանոս և զմաքսաւոր :

18 Ամէն ասեմ ձեզ , զոր կապեսջիք ի վերայ երկրի՝ կապեալ լիցի յերկինս , և զոր արձակեսջիք ի վերայ երկրի՝ արձակեալ լիցի յերկինս :

19 Դարձեալ ասեմ ձեզ , եթէ երկու ոք ի ձէնջ համաձայնեսցին ի վերայ երկրի վասն ամենայն իրի զոր խնդրիցեն՝ եղիցի նոցա յհաւրէ իմմէ որ յերկինս է :

20 Զի ուր իցեն երկու կամ երիք ժողովեալք յանուն իմ՝ անդ եմ ես ի մէջ նոցա :

21 Յայնժամ մատեալ առ նա պետրոս՝ ասէ . տէր , քանի՞ անգամ մեղանչեսցէ ընդ իս եղբայր իմ՝ և ես ներեցից նմա , մինչև եօթն անգամ :

22 Ասէ ցնա յն . ոչ ասեմ քեզ մինչև եօթն անգամ , այլ մինչև եօթանասուն անգամ եօթն :

23 Վասն այսորիկ նմանեցաւ արքայութիւն երկնից մարդոյ թագաւորի որ կամեցաւ հաշիւ առնել ընդ ծառայս իւր :

24 Եւ սկսեալ հաշուել՝ մատուցին առ նա մի որ պարտական էր նմա տասն հազարաց տաղանդոց :

25 Եւ զի չունէր նա հատուցանել՝ հրամայեաց տէր նորա զնա վաճառել , և զկին նորա և զորդիս և զամենայն զոր ինչ ունէր , և հատուցանել :

26 Անկեալ ծառայն՝ երկիր պագանէր նմա՝ և ասէր . տէր , համբերեա ինձ , և ամենայն հատուցից քեզ :

27 Եւ գթացեալ տէր ծառային՝ արձակեաց զնա , և զպարտն թողոյց նմա :

28 Ելեալ ծառայն՝ գտանէ զմի ոք ի ծառայից ընկերաց իւրոց որ պարտական էր նմա հարիւր դահեկանաց , և բռնեալ զնա՝ խեղդէր զնա և ասէր . հատո՛ւ զոր ինչ պարտիս :

29 Անկեալ ընկեր նորա՝ աղաչէր զնա և ասէր . համբերեա ինձ , և ամենայն հատուցից քեզ :

30 Եւ նա ոչ կամեցաւ , այլ գնացեալ՝ արկ զնա ի բանտ , մինչև հատուսցէ զպարտն :

31 Եւ տեսեալ ընկերացն նորա զեղեալսն՝ տրտմեցան յոյժ , և եկեալ պատմեցին տեառն իւրեանց զամենայն զոր եղեալ էր :

32 Յայնժամ կոչեալ տէր նորա զնա՝ ասէ ցնա . ով չար ծառայ , զամենայն պարտն թողի քեզ , զի աղաչեցեր զիս :

33 Ոչ պարտ էր և քեզ ողորմել ընկերի քում , որպէս և ես քեզ ողորմեցայ :

34 Եւ բարկացեալ տէր նորա՝ մատնեաց զնա տանջողացն , մինչև հատուսցէ զամենայն զոր ինչ պարտական էր նմա :

35 Նոյնպէս և հաւր իմ երկնաւոր արասցէ ձեզ , եթէ ոչ ներիցէք ամենեքին ի սրտից ձերոց եղբարց ձերոց զյանցանս նոցա :

19 Եւ եղեալ յորժամ կատարեաց յն զբանս զայս՝ շարժեցաւ ի գալիլեայէ , և եկն ի սահմանս հրէաստանի յայն կողմն յորդանանու :

2 Եւ հետևեցան նմա բազումք , և բժշկեաց զնոսա անդ :

3 Եւ մատեան առ նա փարիսեցիքն՝ փորձելով զնա , և ասէին . արդեօք արժան է մարդոյ արձակել զկին իւր ամենայն պատճառաւ :

4 Նա պատասխանի ետ և ասէ . ոչ ընթերցարուք եթէ որ արար յսկզբանէ՝ արու և էգ արար զնոսա :

5 Եւ ասէ . վասն այսորիկ թողցէ մարդ զհայր և զմայր , և կցորդեսցի կնոջ իւրում , և եղիցին երկոքին մարմին մի :

6 Ապա ուրեմն ոչ են երկու , այլ մարմին մի . զոր ուրեմն հաստատեաց աստուած՝ մարդ մի մի ոք զայն մի՛ զատուսցէ :

7 Ասեն ցնա . զիա՞րդ ուրեմն մովսէս պատուիրեաց տալ գիր բաժանման և արձակել զնա :

8 Ասէ ցնոսա յն . մովսէս վասն կարծրութեան սրտից ձերոց ետ ձեզ արձակել զկանայս ձեր , բայց յսկզբանէ ոչ եղև այդպէս :

9 Եւ ասեմ ձեզ , զի որ արձակեսցէ զկին իւր՝ բաց ի պոռնկութենէ , և առցէ այլ՝ շնանայ , և որ զարձակեալն առցէ՝ շնանայ :

10 Ասեն ցնա աշակերտքն նորա . եթէ այսպէս է գործ մարդոյ ընդ կնոջ , ոչ ձեռնտու է ամուսնանալ :

11 Նա ասէ ցնոսա . ոչ ամենեքեան զբանդ զայդ առնուն , այլ որոց տացի :

12 Զի կան ներքինիք որ ի փորոյ մաւրն իւրեանց ծնան այնպէս , և կան ներքինիք որ ներքինացան յմարդկանէ , և կան ներքինիք որ ներքինացուցին զանձինս իւրեանց վասն արքայութեան երկնից . որ կարէ առնուլ՝ առցէ :

13 Յայնժամ մատուցին առ նա մանկունս՝ զի զձեռս եդցէ նոցա և աղօթեսցէ . և աշակերտքն նորա նզովէին զնոսա :

14 Եւ յն ասէ . թողէք զմանկունսն , և մի՛ արգելուք նոցա գալ առ իս , զի նոցա է արքայութիւն երկնից :

15 Եւ եդեալ զձեռս նոցա՝ գնաց անտի :

16 Եւ ահա մի ոք մատեալ առ նա՝ ասէ . վարդապետ բարի , զի՞նչ բարի արարից զի ունիցիմ զկեանս յաւիտենական :

17 Նա ասէ ցնա . զի՞ ասես զիս բարի , ոչ ոք է բարի բայց միայն մի աստուած : եթէ կամիս մտանել ի կեանս՝ պահեա զպատուիրանսն :

18 Ասէ ցնա . զո՞ր : յն ասէ . զի մի՛ սպանցես , մի՛ շնասցես , մի՛ գողասցես , մի՛ սուտ վկայեսցես ,

19 պատուեա զհայր և զմայր , և սիրեսցես զընկերդ քո իբրև զանձն քո :

20 Ասէ ցնա երիտասարդն . զայդ ամենայն պահեցի յսկզբանէ . զի՞ դեռ պակասեմ :

21 Ասէ ցնա յն . եթէ կամիս կատարեալ լինել՝ երթ՝ և ծախեա զոր ինչ ունիս , և տուր աղքատաց , և ունիցիս գանձ յերկինս , և եկ՝ հետևեա ինձ :

22 Եւ լուեալ երիտասարդին զբանդ զայդ՝ գնաց տրտում , զի էր նա ունելով կալուածս բազումս :

23 Եւ յն ասէ ցաշակերտսն իւր . ամէն ասեմ ձեզ , զի դժուարաւ մտանիցէ մեծատուն յարքայութիւն երկնից :

24 Եւ դարձեալ ասեմ ձեզ , զի դիւրին է ուղտի անցանել ընդ ծակ ասեղան , քան մեծատան մտանել յարքայութիւն երկնից :

25 Լուեալ աշակերտացն՝ զարմացան յոյժ՝ և ասէին . ո՞վ կարէ ապրել :

26 Եւ նայեցեալ յն՝ ասէ ցնոսա . մարդկան անկարելի է , բայց ոչ աստուծոյ , զի ամենայն ինչ կարելի է աստուծոյ :

27 Յայնժամ պատասխանի ետ պետրոս և ասէ ցյն . ահա մեք ամենայն ինչ թողաք և զհետ քո եկաք , զո՞ ուրեմն լիցի մեզ :

28 Յն ասէ ցնոսա . ամէն ասեմ ձեզ , զի դուք որ զհետ իմ եկաք , յաշխարհին նորոգութեան՝ յորժամ նստցի որդի մարդոյ յաթոռ փառաց իւրոց , նստիջիք և դուք ի տասն և երկուս աթոռս՝ դատել զտասն և զերկուս ազգս իսրայելի :

29 Եւ ամենայն որ թողցէ զտուն կամ զեղբարս կամ զքոյրս կամ զհայր կամ զմայր կամ զկին կամ զորդիս կամ զագարակս վասն անուան իմոյ՝ հարիւրապատիկ առցէ , և զկեանս յաւիտենական ժառանգեսցէ :

30 Բայց բազումք որ են առաջինք՝ յետինք լինիցին , և յետինքն՝ առաջինք :

20 Զի նման է արքայութիւն երկնից մարդոյ տանուտեառն որ ել առաւաւտ վաղ՝ վարձել բանուորս ի խաղողս իւր :

2 Եւ համաձայնեալ ընդ բանուորսն՝ ի դահեկանի մի յաւր՝ առաքեաց զնոսա ի խաղողս իւր :

3 Եւ ել ժամ երրորդ՝ և ետես այլս կայս ի հրապարակի պարապս :

4 Եւ ասէ ցնոսա . երթայք և դուք ի խաղողս իմ , և զոր ինչ արդար իցէ տացեմ ձեզ :

5 Եւ նոքա գնացին : դարձեալ ել ժամ վեցերորդ և իններորդ՝ և արար նոյնպէս :

6 Եւ ժամ մնացորդ ել՝ և ետես այլս կայս պարապս , և ասէ ցնոսա . զի՞ կայք այսչափ աւուր պարապս :

7 Ասեն ցնա . զի մեզ ոչ ոք վարձեաց : ասէ ցնոսա . երթայք և դուք ի խաղողս իմ , և զոր ինչ արդար իցէ՝ առցէք :

8 Երեկոյ եղեալ՝ ասէ տէր խաղողոյն ցգործակալ իւր . կոչեա զբանուորսն , և հատո՛ւ նոցա զվարձս , սկսեալ յետինսն մինչև յառաջինսն :

9 Եւ եկեալ ժամ մնացորդ՝ առին զդահեկանի մի յաւր :

10 Եւ եկեալ առաջինքն՝ կարծեցին թէ աւելի առնուցուն , և առին նոքա զդահեկանի մի յաւր :

11 Եւ առեալ՝ տրտնջէին ընդ տանուտեառն ասելով .

12 զի յետինքս այսոքիկ մի ժամ արարին , և հաւասար արարեր զնոսա մեզ որ տարաք զբեռն աւուրն և զերկունս :

13 Նա պատասխանի ետ ասաց ցմի ոք ի նոցանէ . ով բարեկամ , ոչ ինչ ապիրատեցի քեզ . ոչ ի դահեկանի մի յաւր համաձայնեցար ընդ իս :

14 Ա՛ռ զոր ինչ քո է՝ և գնա՛ . կամիմ զայս յետինս տալ քեզ նման :

15 Եթէ ոչ իշխեմ զոր կամիմ առնել ինձ ընդ իմս՝ զի չարաչար է աչք քո զի ես բարի եմ :

16 Նոյնպէս եղիցին յետինքն՝ առաջինք , և առաջինքն՝ յետինք . զի կոչեցեալք բազումք են , բայց ընտրեալք սակաւք :

17 Եւ յն ելանէր յերուսաղէմ , և առ զտասն և զերկուս աշակերտսն առանձինս ի ճանապարհին՝ և ասէ ցնոսա .

18 ահա ելանեմք յերուսաղէմ , և որդի մարդոյ մատնեալ լինելոց է ի ձեռս քահանայապետաց և դպրաց , և դատապարտեսցեն զնա մահու ,

19 և մատնեսցեն զնա հեթանոսաց ի ծաղր և ի հարուած և ի խաչել , և յերրորդում աւուր յարիցէ :

20 Յայնժամ մատեալ առ նա մաւր որդւոցն զեբեդեայ՝ և որդիքն իւրեանց , երկիր պագանէր նմա՝ և խնդրէր ի նմանէ զինչ :

21 Նա ասէ ցնա . զի՞ կամիս : ասէ ցնա . ասա՛ զի նստցին երկու որդիք իմ սոքա , մի յաջմէ քումմէ և մի ձախմէ , ի թագաւորութեան քում :

22 Պատասխանի ետ յն և ասէ . ոչ գիտէք զինչ խնդրէք . կարէ՞ք արբուցանել զբաժակն զոր ես արբուցանեմ , և զմկրտութիւնն զոր ես մկրտիմ՝ մկրտիլ : ասեն ցնա . կարեմք :

23 Ասէ ցնոսա . զբաժակն իմ արբուցանիցէք , և զմկրտութիւնն զոր ես մկրտիմ՝ մկրտիցիք , բայց նստիլ յաջմէ իմմէ և յձախմէ ոչ իմ է տալ , այլ որոց պատրաստեցաւ յհաւրէ իմմէ :

24 Եւ լուեալ տասանցն՝ տրտմեցան վասն երկուցն եղբարցն :

25 Յն կոչեալ զնոսա՝ ասէ . գիտէք զի իշխանք հեթանոսաց տիրեն նոցա , և մեծամեծք զօրութիւն առնեն նոցա :

26 Այլ ոչ այդպէս իցէ ի ձէնջ , այլ որ կամիցի ի ձէնջ մեծ լինել՝ եղիցի ձեզ սպասաւոր :

27 Եւ որ կամիցի ի ձէնջ առաջին լինել՝ եղիցի ձեզ ծառայ :

28 Որպէս և որդի մարդոյ ոչ եկն որ ծառայեսցի նմա , այլ ծառայեսցէ , և տացէ զանձն իւր փրկանս վասն բազմաց :

29 Եւ ելանելոցն նոցա յերիքովն՝ հետևեցան նմա բազումք :

30 Եւ ահա երկու կուրք նստեալք առ ճանապարհաւ , լուեալ զի յն անցանէ՝ աղաղակեցին և ասեն . ողորմեա մեզ տէր որդի դաւթի :

31 Եւ ամբոխն նզովէին զնոսա զի լռեսցեն : նոքա առաւել աղաղակէին և ասէին . ողորմեա մեզ տէր որդի դաւթի :

32 Եւ կացեալ յն՝ կոչեաց զնոսա և ասէ . զի՞նչ կամիք ինձ առնել :

33 Ասեն ցնա . տէր , զի բացցին աչք մեր :

34 Եւ գթացեալ յն՝ մատեաւ և հարկանէ զաչս նոցա , և անդէն տեսին աչք նոցա , և հետևեցան նմա :

21 Եւ յորժամ մերձեցան յերուսաղէմ՝ և եկին ի բեթփագէ առ լերինն ձիթենեաց , յն առաքէ զերկուս աշակերտս իւր՝ և ասէ ցնոսա .

2 երթայք ի գեղն որ առաջի ձեր է , և անդէն գտանիցէք էշ կապեալ , և զհամր ընդ նմա . արձակեցէք և բերէք առ իս :

3 Եւ եթէ ոք ինչ ասիցէ ձեզ՝ ասասջիք , զի տէր պիտոյ է նոցա , և անդէն արձակեսցէ զնոսա :

4 Եւ այս ամենայն եղև զի լցցի զոր ասացաւ մարգարէին ասելով .

5 ասացէք դստերն սիովնի . ահա թագաւոր քո գայ քեզ հեզ , նստեալ ի վերայ էշոյ և ի վերայ համրոյ որդւոյ լծելոյ :

6 Եւ գնացեալ աշակերտքն՝ արարին որպէս հրամայեաց նոցա յն :

7 Եւ բերին զէշն և զհամրն , և եդին զհանդերձս իւրեանց ի վերայ նոցա , և նստոյց զնա ի վերայ :

8 Եւ բազում ամբոխ տարածեցին զհանդերձս իւրեանց ի ճանապարհի , և այլք կտրէին զոստս ծառոց և տարածանէին ի ճանապարհի :

9 Եւ ամբոխքն որ առաջի էին և որ զհետ գային՝ աղաղակէին և ասէին . օրհնեալ որդի դաւթի , օրհնեալ որ գայ յանուն տեառն , ովսաննա ի բարձունս :

10 Եւ մտեալ նորա յերուսաղէմ՝ սարսափեցաւ ամենայն քաղաք՝ և ասէին . ո՞վ է սա :

11 Եւ ամբոխքն ասէին . սա է յն մարգարէ ի նազովրէթ գալիլեացւոց :

12 Եւ մտեալ յն ի տաճարն աստուծոյ՝ հանէր զամենեսեան որ վաճառէին և գնէին ի տաճարին , և զսեղանս դրամակերտացն և զաթոռս վաճառականացն կործանեաց :

13 Եւ ասէ ցնոսա . գրեալ է . տունն իմ տունն աղօթից կոչեսցի , և դուք արարէք զնա քարայր աւազակաց :

14 Եւ մատեան առ նա կոյրք և համրաներս ի տաճարին՝ և բժշկեաց զնոսա :

15 Եւ տեսեալ քահանայապետացն և դպրացն զհրաշս զոր արար՝ և զմանկունսն որ աղաղակէին ի տաճարին և ասէին . ովսաննա որդի դաւթի , զայրացան յոյժ :

16 Եւ ասեն ցնա . լսես զինչ սոքա ասեն : յն ասէ ցնոսա . այո՛ , ոչ ընթերցարուք եթէ յբերանոց մանկանց և ծծկերաց կատարեցեր զգովութիւն :

17 Եւ թողեալ զնոսա՝ ել արտաքս ի քաղաքէն յԲեթանիա , և անդ հանգոյց զգիշերն :

18 Եւ առաւաւտ վաղ դառնալ նորա յքաղաքն՝ ապա և սաստեաց նմա , և ել ի նմանէ դիւն , և բժշկեցաւ :

19 Եւ ետես զթուզն ի ճանապարհի՝ և մատեալ առ նա՝ ոչ գտանէ ինչ ի նմա բայց միայն տերև , և ասէ ցնա . ոչ ևս յաւիտեան ծնանիցի պտուղ յքէն : և անդէն չորացաւ թուզն :

20 Եւ տեսեալ աշակերտացն՝ զարմացան՝ և ասէին . զիա՞րդ անդէն չորացաւ թուզն :

21 Պատասխանի ետ յն և ասէ ցնոսա . ամէն ասեմ ձեզ , եթէ ունիցիք հաւատս և ոչ տարակուսիցիք , ոչ միայն զթզենոյ արասջիք զայս , այլ և եթէ ասիցէք լերինդ այդմիկ . վերացի՛ր և արկանի՛ր ի ծով , եղիցի :

22 Եւ զամենայն զոր խնդրիցէք յաղօթս հաւատով՝ առնուցուք :

23 Եւ եղեալ յորժամ եկն ի տաճարն՝ մատեան առ նա ի տաճարին քահանայապետքն և ծերք ժողովրդեանն՝ և ասեն . ընդ որո՞ իշխանութեամբ առնես զայս , և ո՞վ է որ տացէ քեզ զիշխանութիւնս զայս :

24 Պատասխանի ետ յն և ասէ ցնոսա . և ես հարցից ձեզ մի բան , զոր եթէ ասիցէք ինձ՝ և ես ասիցեմ ձեզ ընդ որո՞ իշխանութեամբ առնեմ զայս :

25 Մկրտութիւնն յովհաննու յո՞ր էր , յերկնից թէ յմարդկանէ : և նոքա խորհէին ընդ միմեանս՝ և ասէին . եթէ ասիցեմք յերկնից՝ ասիցէ ցմեզ . զի՞ ուրեմն ոչ հաւատացարուք նմա :

26 Եթէ ասիցեմք յմարդկանէ՝ երկնչիմք ի ժողովրդենէ , զի ամենեքեան զյովհաննէս իբրև զմարգարէ ունին :

27 Եւ պատասխանի ետուն յն և ասեն . ոչ գիտեմք : նա ասէ ցնոսա . և ես ոչ ասեմ ձեզ ընդ որո՞ իշխանութեամբ առնեմ զայս :

28 Զիարդ ձեզ թուի . մարդոյ մի ոք ունէր երկու որդիս , և մատեալ առ առաջինն՝ ասէ . որդեա՛կ , երթ՝ և այսաւր գործեա՛ յայգւոջ իմում :

29 Նա պատասխանի ետ և ասէ . ոչ կամիմ : ապա յետ ապաշխարեալ՝ գնաց :

30 Եւ մատեալ առ երկրորդն՝ ասէ նմա նոյնպէս : նա պատասխանի ետ և ասէ . գնամ , տէր : և ոչ գնաց :

31 Ո՞ր յերկոցունց արար զկամս հաւր : ասեն ցնա . առաջինն : ասէ ցն

վուրդք բազումք, որ ունէին ընդ իւրեանս՝ կապս, կոյրս, համբոյս, միակազմանիս, և այլս բազումս. և ընկեցին զնոսա առ ոտս նորա՝ և բժշկեաց զնոսա :

31 Մինչև զարմանալ ժողովրդոցն, որ տեսանէին՝ զի համբերքն խօսէին, կապք պնդացեալն, միակազմանիք բժշկէին, կոյրք տեսանէին. և փառաւորեաց աստէն զԱծ իսրայէլ :

32 Եւ կոչեցեալ առ ինքն յիւր զաշակերտան՝ ասէ. զիա՞րդ ի ժողովուրդդ, զի արդ՝ երիք աւուրք են՝ զի կան առ իս, և ոչ ունին զինչ ուտիցեն. և արձակել զդոսա նոքին՝ չիա՛ մի՛, գուցէ նքթիցեն ճանապարհին :

33 Ասէն ցնա աշակերտքն. իսկ արդ՝ մեզ յանապատի աստ՝ ուստի՞ իցէ այնչափ հաց՝ մինչ յագեցուցանել զոյնչափ ժողովուրդ :

34 Եւ ասէ ցնոսա յա՛. քանի՞ նկանակ ունիք : և նոքա ասեն. եւթն, և սակաւ ձկունս :

35 Եւ հրամայեաց ժողովրդեանն բազմիլ ի վերայ գետնոյ :

36 Եւ առեալ զեւթն նկա նակն և զձկունսն՝ գոհացաւ և եբեկ, և ետ ցաշակերտան. և նոքա ժողովրդեանն :

37 Կերան ամենեքեան և յա գեցան. և բարձին զնշխարս կտորոցն՝ եւթն զամբիւղ լի :

38 Եւ որք կերանն՝ էին իբրև արք չորք հազարք. թող զկա նայս և զմանկտի :

39 Իբրև արձակեաց զժողո քսվը եկան. որ չետերին ունէին կաղեր, կուրեր, մունջեր, ու ՚ի կ դիւնիներ. ու ուրիշ ալ (ասանկ) շատ. որ ասոնք իր ոտքը ձգեցին, ու անոնք բժշկեց :

31 Այնանկ որ՝ ալ արմրնցած կրնային ժողովուրդը. տեսնելով՝ որ մունջերը կրխօսէին, կաղերը կրքալէին, ՚ի կդիւնիները կրունանային, կուրերը կրտեսնէին : ու իսրայէլի Ած կրփառաւորէին :

32 Ու յա աշակերտները իրեն կանչեց՝ ըսաց. խեղճը կուգա ատ ժողովրդիդ վրա, որ՝ ալ իրենք օր կրլլա որ քովս են, ու բանմը չունին ուտելու. ու չեմ ուզեր ա տոնք անօթի արձկելը, որ չերթան ճամբան հովնած լինան :

33 Աշակերտներնալ իրեն ըսին. մենք աս անապատի տեղոս ուտիլ պիտոր անչափ հաց ունենանք՝ որ ատքան ժողովուրդը կշտացրնենք :

34 Յա՛ ալ անոնց ըսաւ. քանի՞ նկան հաց ունիք : անոնքալ ըսին, ոխտը, ու քիչմալ ձուկ :

35 Ու ժողովրդին հրամեց որ՝ գետինին վրայովը փռվին նստին:

36 Ու ան ոխտը նկանը ու ձկ նները առաւ, գոհութիւն մատուց՝ ու կրտրըտեց, ու աշակերտներուն տրվաւ. անոնքալ ժողո վրդին :

37 Ամենքը կերան ու կրշտա ցան, ու հվիցած կտրվանքնե րընալ լեցուն ոխտը զամպիլ վերուցին :

38 Ու ան կերողները չորս հա զարի չափ մարդիք էին, կնիկներ ու մանտրը տղոցմէն իզատ :

39 Ալ որ ժողովուրդն որ ար

վերջոյն՝ եւ ՚ի նաւ՝ եւ եկն ՚ի սահմանս Մագդաղեայ :

ձրկեց՝ (ինքը) նաւմբ մտաւ՝ ու մագդաղէի կողմերը եկաւ :

Գ Լ · Ժ.Օ.

1 Եւ մատուցեալ փարիսեցիքն ու սադուկեցիք՝ փորձելով խնդրէին ՚ի նմանէ՝ նշան յերկնից ցուցանել նոցա :

2 Նա պատասխանի ետ՝ եւ ասէ ցնոսա ·

4 Ազգ չար եւ շնացող՝ նշան խնդրէ, եւ նշան մի տացի նմա, բայց նշանն յոնանայ մարգարէի : եւ եթող զնոսա եւ գնաց :

5 Գնացին եւ աշակերտքն յայնկոյս, եւ մոռացան առնուլ հաց :

6 Ասէ ցնոսա յի · տեսէք եւ զգոյշ լերուք ՚ի խմորոյ սադուկեցւոցն եւ փարիսեցւոց :

7 Նոքա խորհէին ընդ միմեանս եւ ասէին՝ թէ հաց ոչ բարձաք :

8 Գիտաց յի՝ եւ ասէ· զի՞ խորհիք ՚ի միտս ձեր թերահաւատք՝ եթէ հաց ոչ ունիք :

9 Տակաւին չիմանայք՝ եւ ոչ յիշէք զհինգ նկանակն ՚ի հինգ հազարսն, եւ քանի սակաւ բարձէք :

10 Եւ ոչ զեւթն նկանակն ՚ի չորս հազարսն, եւ քանի զամբիւղս բարձէք :

11 Արդ՝ զիարդ ոչ իմանայք՝ եթէ ոչ վասն հացի ասացի ձեզ՝ զգոյշ լինել ՚ի խմորոյ փարիսեցւոցն եւ սադուկեցւոց :

12 Յայնժամ ՚ի միտ առին, եթէ ոչ ասաց զգուշանալ ՚ի խմորոյ, այլ յաղանդոյ փարիսեցւոցն եւ սադուկեցւոց :

1 Եւ փարիսեցիներն ու սադուկեցիները գալով եկան, փորձելով իրմէն կուզէին որ՝ երկընքէն իրենց նշանմբ ցրցունէ :

2 Ան ալ պատասխան տրվաւ՝ ու անոնց ըսաց ·

4 Չար ու շնացող ազգը նշան կուզէ, ու անոր ալ ուրիշ նշան պիտի չտրըվի, որ միայն՝ յունան մարգարէին նշանը : ու անոնք թողուց ու գնաց :

5 Աշակերտներնալ (անանկ՝ ծովէն) միկալ գին գացին (անցան), ու մոռցան հաց առնելու :

6 Յա՝ անոնց ըսաց. նայեցէք ու զգուշ եղէք սադուկեցոց ու փարիսեցոց խմորէն :

7 Անոնքալ միջերնին կրմրտմտային ու կըսէին՝ որ (հետերնիս) հաց չենք բերեր :

8 Յա (աս) իմացաւ՝ ու ըսաց. ով թերեհաւատներ՝ ինչու կրմրտմտաք հոգ կրնէք որ հաց չունիք :

9 Դեռ չէք իմանար՝ ու չէք յիշեր, ան հինկ նկան հացը հինկ հազարին, ու քանի սակաւ (անկէց) վերցուիք :

10 Ու ոչ ալ ան ոխտը նկանը չորս հազարին, ու քանի զամպիլ վերուցիք :

11 Ասաւ ինչպէս չէք հասկըցար՝ որ ձեզի հացի համար չըսի՝ որ զգուշ կենաք փարիսեցոց ու սադուկեցոց խմորէն :

12 Ան առենը ալ հասկըցան որ՝ չէ թէ խմորէն զգուշ կենալ ըսաց, հապա՝ փարիսեցոց ու սադուկեցոց աղանդէն :

13 Եւ եղեալ յո՛ի կոմանս փիլիպպեայ կեսարեացւոյն, հարցանէր ցաշակերտան՝ և ասէր. զի՞ ոք ասեն զինէն մարդիկն՝ թէ իցէ որդի մարդոյ :

14 Եւ նոքա ասեն. ոմի՝ զյովհաննէս մկրտիչ, և այլք՝ զեղիա, և կէսք զերեմիա, կամ զմի ոք ի մարգարէիցն :

15 Ասէ ցնոսա յո՛. իսկ դուք զի՞ ոք ասէք զինէն թէ իցեմ :

16 Պատասխանի եւ նմա սիմոն պետրոս՝ և ասէ. դու ես քրիստոս որդի կենդանւոյ :

17 Պատասխանի եւ յո՛ և ասէ ցնա. երանի քեզ սիմոն որդի յովնանու, զի մարմին և արիւն ոչ յայտնեաց քեզ՝ այլ հայրն իմ որ յերկինս է :

18 Եւ ես՝ քեզ ասեմ. դու դուն ես վէմ, և ի վերայ այդր վիմի շինեցից զեկեղեցի իմ. և դրունք դժոխոց զնա մի յաղթա- հարեսցեն :

19 Եւ տա՛ց քեզ զպահանս արքայութեան երկնից. և զոր միանգամ կապեսցես յերկրի, եղիցի կապեալ յերկինս. և զոր արձակեսցես յերկրի, եղիցի արձակեալ յերկինս :

20 Յայնժամ սաստեաց ա- շակերտացն, զի մի ումեք ա- սասցեն՝ թէ նա է քրիստոս :

21 Ցայնմ՝ հետէ սկսաւ յո՛ ցուցանել աշակերտացն, թէ պարտ է նմա երթալ յերուսաղէմ, և բազում չարչարանս չարչարել՝ և անարգել՝ ի քա- հանայապետից և՝ ի գրոց և՝ ի ծերոց ժողովրդեանն, և սպանանել, և յերրորդ աւուր յառնել :

22 Եւ առեալ զնա մեկուսի՝

13 Ու յո՛ փիլիպպէի կողմերն որ կեսրիա, աշակերտներուն կը հարցունէր ու կըսէր, թէ մարդիկը ինծի համար ո՞վ է կըսեն, ան որ՝ որդին մարդոյ ըլլա:

14 Անոնք ալ ըսին. Մկրը՝ (թէ) յովհաննէս մկրտիչն (է,) ուրիշ- ներնալ՝ (թէ) եղիան, ու էսայիասլ՝ (թէ) երեմիան, կամ՝ (թէ՝) մար- գարէներէն մէկը :

15 Յո՛ անոնց ըսաց. Հապա դուք ո՞վ կըսէք ինծի համար՝ որ ըլլամ:

16 Սիմոն պետրոսը իրեն պա- տասխան տըվաւ ու ըսաց. դուն քրիստոսն ես՝ կենդանի այ որդին :

17 Յո՛ ալ պատասխան տըվաւ ու անոր ըսաւ. երանի՛ կ քեզի սի- մոն յունանի որդի. որ (ան՝) միսը ու արունը քեզի չի յայտնեց, հա- պա իմ հայրս որ երկինքն է :

18 Ու եսալ քեզի կըսեմ. որ դուն քար ես. ու ատ քարին վրա իմ եկեղեցիս պիտի շինեմ. ու դր- ժոխքին դրները անոնց չի պի- տի հասնին :

19 Ու երկնային արքայութիւնը բալլիքներուը քեզի պիտի տամ. որ երկրի վրա ամէն կապելու ըլլաս՝ (ինքը) երկինքնալ կապուած ըլլա- ս, ու երկրի վրա ամէն արձկնես,(ան՝) երկինքնալ արձկուած ըլլա :

20 Աշակերտները աստիկ պրպիլեց՝ որ մէկուն չը- սեն՝ թէ ինքը քրիստոն է :

30 Ա՛ւ անկէ հետ յո՛ ըսկսաւ բանը աշակերտներուն յայտնել, թէ՝ պէտք է որ ինքը երուսաղէմ երթա, ու քահանայապետներէն ու կարդացողներէն ու ժողովը- դէն ծերերէն շատ չարչարանք քաշէ, ու բսպանուի, ու երեք օրէն յարութիւն առնէ :

22 Պետրոս ալ ինքը մէկդի ա-

պետրոսի, սկսաւ կազմել ընդ նմա՝ և ասել. քա՛ւլ լիցի քեզ ա՛ր, մի՛ եղիցի քեզ այդ :

23 Եւ նա դարձեալ՝ ի պետրոս՝ ասէ. երթ յետս իմ սատանայ, գայթագղութիւն իմ ես. զի ոչ խորհիս զու զայն, այլ զմարդկան :

24 Յայնժամ յի՛ս ասէ ցաշակերտան իւր. եթէ ոք կամիցի զկնի իմ գալ՝ ուրասցի զանձն, և առցէ զխաչ իւր՝ և եկեսցէ զկնի իմ՝:

25 .Օ՛ որ կամիցի զանձն իւր կեցուցանել՝ կորուսցէ զնա. և որ կորուսցէ զանձն իւր վասն իմ՝ գտցէ զնա :

26 .Օ՞ ինչ օգտիցի մարդ՝ եթէ զաշխարհս ամենայն շահեսցի, և զանձն իւր տուժեսցի : կամ ինչ տացէ մարդ փրկանս ընդ անձին իւրում՝ :

27 .Օ՛ գալոց է որդի մարդոյ փառաւք հօր իւրոյ՝ հանդերձ հրեշտակօք իւրովք, և յայնժամ հատուսցէ իւրաքանչիւր ըստ գործոց իւր :

28 Ա՛մէն ասե՛մ ձեզ. զի ի՛ցն ոմանք՝ ի սոցանէ՝ որ աստ կան. որք ո՛չ համակեսցեն զմա՝ մինչև տեսանիցեն զորդի մարդոյ եկեալ արքայութեամբ իւրով :

ռաւ՝ հետը ըսկսաւ վէ՛ճ ընել ու բսել. ո՛ր՝ քա՛ւլ լեցի քեզի, (որ) աս բանը քեզի չըլլա՝ :

23 Ա՛նոր պետրոսին դարձաւ՝ ըսաց. քովէս մէկդի՛ն գնա սատանա՛, ինծի գայթաղկութիւն կըլլաս կոր. որ՝ դուն այ բանները չես մըտմտար, հապա մարդկայի՛ն բաները :

24 Ա՛նատեր յի՛ս իր աշակերտներուն ըսաց. թէ որ մէկը կուգի որ իմ ետևէս գա, (ան իր) անձը պիտոր ուրանա, ու իր խա՛չը առնի՛ ու (անանկ) իմ ետևէս գա՝ :

25 Պատա՛ռը, ան որ իր անձը ապրեցընել կուգի՝ (կ՛ընբը) ան պի՛տի կորսընցունի. ու ան որ ինծի՛ համար իր անձը կըկորսընցունի՝ (անիկա) ան կըգտանա՝ :

26 Ի՞նչ շա՛հ է ան մարդուն՝ որ բոլոր աշխարքս վաստկի, ու իր անձը անոր տեղը տա՝. կամ թէ մարդը իր անձին տեղը ի՞նչ պիտի տա՝ :

27 Ինչու որ՝ որդին մարդոյ իր հօրը փառքովը իրեն հրեշտակները կու գա՝ ու անոնք հատուցում ընի՛ ամէն մէկին իրեն գործերուն դէմ՝ :

28 Ա՛մէն կըսե՛մ ձեզի. որ հոս ասոնցմէ քանիմը հոգի կան՝ որ մեռնելուն համը պիտի չառնեն, մինչև որ որդին մարդոյ չհասնի՛ն իր թագաւորութիւնովը եկած՝ :

Գ Լ. Ժ Է.

1 Եւ յետ վեց աւուր՝ առնու ընդ իւր յի՛ս զպետրոս և զյակովբոս և զյովհաննէս զեղբայր նորա, և հանէ զնոսա՛ ի լեառն մի բարձր առանձինն :

2 Եւ այլակերպեցաւ առաջի նոցա. և լուսաւորեցան

1 Ու վեց օրէն ետև՝ յի՛ս իր հետը առաւ պետրոսը, ու յակոբոսը, ու անոր յոհաննէս եղբայրը, ու անոնք առանձին մէկ բարձր լեռը՛ն հանեց :

2 Ու անոնց առջևը իր կերպարանքը փոխեց. ու իրեն երեսը ա-

երեսք նորա իբրև պարեգաին, և հանդերձք նորա եղեն սպիտակ իբրև զլոյս :

3 Եւ ահա՝ երևեցան նոցա Մովսէս և եղիա՝ որ խօսէին ընդ նմա :

4 Պատասխանի ետ պետրոս և ասէ ցյի՛ս . Տէր՝ բարւոք է մեզ աստ լինել , և թէ կամիս՝ արասցուք երիս տաղաւարս . մի՝ քեզ , և մի՝ Մովսիսի , և մի՝ Եղիայի :

5 Եւ մինչ դեռ նա խօսէր, ահա ամպ լուսաւոր՝ հովանի եղե՛ի վերայ նոցա : Ձայն եղե յամպոյն՝ և ասէ . դա է որդի իմ սիրելի՝ ընդ որ հաճեցայ, դմա լուարուք :

6 Իբրև լուան աշակերտքն, անկան՛ի վերայ երեսաց իւրեանց՝ և երկեան յոյժ :

7 Եւ մատուցեալ յի՛ս բռնեաց հար զնոցանի՝ և ասէ . յո՛ան կացէք՝ և մի՛ երկնչիք :

8 Ա՛յրբարձին զաչս իւրեանց, և ո՛չ զոք տեսին՝ բայց միայն ղյի՛ս :

9 Եւ մինչդեռ իջանէին՛ի լեառնէ անտի, պատուիրեաց նոցա յի՛ս և ասէ . մի՛ ումեք ասիցէք զտեսիլդ զայդ, մինչև որդի մարդոյ՛ի մեռելոց յարիցէ :

10 Հարցին ցնա աշակերտքն և ասեն . զիա՞րդ զպիրքն ասեն, եթէ եղիայի՛ նախ պարտ է գալ :

11 Պատասխանի ետ յի՛ս և ասէ ցնոսա . եղիա գա՛յ, և հաստատեսցէ զամենայն :

12 Ա՛յլ ասե՛մ ձեզ՝ զի և եղիա եկեալ իսկ է . և ո՛չ ծանեան զնա , այլ արարին ընդ նա՝ զոր ինչ կամեցան . նոյն՛ պէս և որդի մարդոյ՛ի մեռելոց յարիցէ, ու իւ վրայի լսեցին ասէ՛ մբկրգան :

3 Ու մէյմալ՝ մովսէսն ու եղիան իրենց երևցաւ, որ անոր հետ կը խօսէին :

4 Պետրոսալ խօսք բացաւ՝ ու յի՛սի ըսաց . տէ՛ր՝ աղէկ կըլլայ որ մենք հոս կենայինք , ու թէ որ կուզեսէ՝ իրեք տըներ կըշինենք, մէկը քեզի համար , մէկը մովսէսին , ու մէկնալ եղիային :

5 Ու ինքնոր սա կը խօսէր՝ մէյմալ՝ լուսաւոր ամպը վրանին պատեց . ան ամպէն ձանըն եղաւ ու ըսաց . սա իմ սիրական որդիս է՝ որ իրեն հաւնեցայ, սորա (ըսածին) անկաւ դրէք :

6 Աշակերտները երբոր (աս) լսեցին , երեսնին վրա ինկան՝ ու սաստիկ վախցան :

7 Յի՛սալ գնաց անոնք (վեր) բառնեց՝ ու ըսաւ . ոտք եղէք կեցէ՛ք՝ ու մի՛ վախնաք :

8 (Իրենքալ) աչվընին որ վեր վերուցին , ալ (չոն) ուրիշ մարդ մը չի տեսան՝ որ միայն յի՛ս :

9 Ու երբոր ալ ան լեռնէն վար կիջնէին՝ յի՛ս անոնց ապըսպրեց ու ըսաց . սա տեսիլը մէկու մը չըսէք՝ ինչվան որ որդին մարդոյ մեռելներէն յարութիւն առնէ :

10 Աշակերտները իրեն հարցուցին ու ըսին . (Տապա) ան ինչ է որ կարգացողները կըսեն թէ պէտք է որ առաջ եղիան գա :

11 Յի՛ս պատասխան տուաւ՝ ու անոնց ըսաց . (իրաւ) եղիան կուգա, ու ամէն բան պիտի հաստատէ :

12 Բայց ձեզի (աս) կըսեմ՝ որ եղիան արդէն եկեր է . ու ինքը չիճանչցան, հապա՝ ինչ որ ուզեցինք անոր ըրին . անանկալ

պէս և որդի մարդոյ չարչարել-
լոց է ՚ի նոցանէ :
13 Յայնժամ ՚ի միտ առին
աշակերտքն , թէ վասն յովհան-
նու մկրտչի՝ ասաց ցնոսա :
14 Եւ երբեմն եկին ՚ի ժողո-
վուրդն , մատեան այր մի՝ ՚ի
ծունր իջանէր .
15 Եւ ասէր . Տէր՝ ողորմեաց
որդւոյ իմում , զի լուսնոտի և
չարաչար չիւանդանայ . բա-
զում անգամ անկանի ՚ի հուր ,
և երբեմն ՚ի ջուր :
16 Եւ մատուցի զնա աշա-
կերտացն քոց , և ոչ կարացին
բժշկել :
17 Պատասխանի ետ յի՝ և
ասէ . ով ազգ՝ անհաւատ և
թիւր , մինչև ցերբ իցեմ ընդ
ձեզ , մինչև յերբ անսայցեմ
ձեզ . ածէ զնա առ իս :
18 Եւ սաստեաց ՚ի նա յի՝
և ել ՚ի նմանէ դեւն , և բժշկե-
ցաւ մանուկն ՚ի ժամէն յայն-
մանէ :
19 Յայնժամ մատեան աշա-
կերտքն առանձինն՝ և ասեն
ցյի . մեք՝ ընդէր ոչ կարացաք
հանել զնա :
20 Եւ նա՝ ասէ ցնոսա . վասն թերահաւատութեան ձե-
րոյ : ամէն ասեմ ձեզ , եթէ
ունիցիք հաւատս քան զհատ
մանանխոյ , ասասջիք լերինս
այսմիկ՝ փոխեցաց աստի անդր ,
և փոխեսցի . և ոչինչ անչնա-
րին լինիցի ձեզ :
21 Բայց այս ազգ՝ ոչ լուիք
ելանել , եթէ ոչ աղօթիւք և
պաշտօք :
22 Եւ մինչդեռ շրջէին նո-
քա ՚ի գալիլեա , ասէ ցնոսա
յի . մանելոց է որդի մարդոյ
՚ի ձեռս մարդկան ,
որդին մարդոյ անանցամ սիրտը
չարչարանք քաշէ :
13 Անատենը աշակերտանները
բանը հասկըցան , որ ան՝ յօհան-
նէս մկրտիչին համար էրենց ըսաց :
14 Երբոր ալ ժողովը դրին քո-
վը գալս եղան , մէկ մարդը դէմը
ելլալ , (որ) ծունկ կըշաքէր .
15 Ու կըսէր . տէր՝ իմ որդուս
ողորմէ , որ՝ կըլուսնոտի , ու սաս-
տիկ կըչիվըճնանա , շատ անգամ ,
կըրտկ ըլլա՝ ու ջուր ըլլա՝ (կեր-
թայ) անոր մէջը կիյնա :
16 Ու անոնիկա քու աշակերտ-
ներուդ դիմացը բերի , ու չկրցան
բժշկեր :
17 Յի պատասխան տըվաւ՝ ու
ըսաց . ով անհաւատ ու ծուռ-
ղեղ ազգ , ինչվան երբ չհանդիպիմ
ձեզի , ինչվան երբ ձեզի
պիտոյ մըլլամ . անիկա ինծի բեր :
18 Ու յի անոր չեմքը տըվաւ՝
ու դեւը անկէց ելաւ , ու աղա տղան՝
ան պահէն բժշկըվեցաւ :
19 Անատենը աշակերտանները
առանձին քովը գացին՝ ու յի՛
ըսին . մենք ինչու ան չի կրցանք
հանել :
20 Անոնք էրենց ըսաւ . ձեր
թերահաւատութեանը համար :
Ճշմարիտ ձեզի կըսեմ . թէ որ
(դուք) մանանեխի հատին չափ հա-
ւատք ունենաք , ասս լեռանըս ը-
սէք (որ) ասկէ անդին փոխվէ , ալ
ան կըփոխըվի . ու ձեր դիմացը
բանմը անկարելի չի մրնար :
21 Միան թէ՝ աս ցեղ (դևը՛)
ուրիշ բանով չելլար , թէ չէ՝
աղօթքով ու պաքով :
22 Ու երբոր էրենք գալիլեան
կըպտրտէին՝ յի անանց ըսաւ՝ (որ)
որդին մարդոյ պիտոյ մարդոյ
ձեռքը մատնըվի .

23 Եւ սպանցեն զնա, և յերիր աւուր յարիցէ: և տըրտմեցան յոյժ:

24 Իբրև եկին նոքա ՚ի կափառնաում, մաքեան՝ որք գերկդրամեանն պահանջէին՝ առ պետրոս, և ասեն. վարդապետն ձեր ոչ տայ գերկդրամեանն. և նա ասէ՝ այո:

25 Եւ իբրև եմուտ ՚ի տունն՝ յառաջեաց քան զնա յս և ասէ. զինչ կարծի թուի քեզ սիմոն. թագաւորքն զոյից՝ յումեքէ առնուն գհարկս կամ գչափս, յորդւոցն իւրեանց՝ թէ յօտարաց:

26 Եւ իբրև ասաց թէ յօտարաց, ասէ ցնա յս՝ ապա ուրեմն ազատ են որդիքն:

27 Խայց զի մի գայթագղեցուսցուք զնոսա, երթ ՚ի ծով՝ և ընկեա կարթ, և զառաջին ձուկնն որ ելանէ՝ առ, և բաց զբերան նորա, և գտանիցես սաթեր. և զայն առեալ՝ տացես նոցա ընդ իմ և ընդ քո:

23 Ու պիտի ինքը ըսպաննեն, ու իրեք օրէն յարութիւն կառնէ: (անոնքաւ) սաստիկ տրտմեցան:

24 Երբոր իրենք կափառնայում եկան, անոնք որ երկդրամեան (տուրքը) կուգէին՝ պետրոսին գիմը ելան՝ ու ըսին. ձեր վարդապետը երկդրամեանը չէ տար մի: անաւ՝ կա՝ ըսաց (կուտա):

25 Ու տունն որ մտաւ՝ յիսուս անկէ առաջ ժրմնեց ու ըսաց: սիմոն՝ քեզի ինտոր կերևա. ասկըրտն թագաւորները գլխահարկը կամ տուրքը ուսկից կառնեն, իրենց տղոցմէ՞ն մի՞ թէ օտարներէն:

26 Ան ալ երբոր ըսաւ թէ՝ օտարներէն, յիսուս անոր ըսաց. ա՛նանկ է նէ՝ տղաքը ազատ են:

27 Խայց չըլլա որ անոնք գայթակղեցընենք. (դուն) ծովը գնա՝ ու կարթ ձգէ, ու առջի ձուկն որ կելլա՝ առ ու անոր բերանը բաց, ու (մէջը) սատերմը կըգտնաս. ու անիկա առ՝ անոնց տուր՝ ինձի ու քեզի համար:

ԳԼ. ԺԸ.

1 Յայնմ աւուր մատեան աշակերտքն առ յի՝ և ասեն. ով իցէ ՚ի մէնջ մեծ յարքայութեան երկնից:

2 Եւ կոչեաց առ ինքն յի մանուկ մի, կացոյց զնա ՚ի մէջ նոցա,

3 Եւ ասէ. ամէն ասեմ ձեզ, եթէ ոչ դարձչիք, և լինիջիք իբրև զմանկիսի, ոչ մտանիցէք յարքայութիւն երկնից:

4 Այրդ՝ որ խոնարհեցուցցէ նէ զանձն իբրև զմանուկս գայս, նա է մեծ յարքայութեան երկնից:

5 Եւ որ որ ընկալցի մանուկ

1 Այն օրը աշակերտները յիսուսին եկան՝ ու ըսին. երկնային արքայութեանը մէջը՝ մեզմէ ով (է ան՝ որ) մեծը պիտոր ըլլա:

2 Յիսուս ալ մէկ տղեկիմը իր քովը կանչեց, անիկա անոնց մէջերնին կեցուց,

3 Ու ըսաց. ճշմարիտ կըսեմ ձեզի. թէ որ (դուք) չդիմխովիք ու տղեկիմըզկս չըլլաք՝ երկնային արքայութիւնը չէք մտներ:

4 Ասոր համար որ իր անձը այս տղեկիսպէս կըցածցունէ՝ երկնային արքայութեան մէջը մեծը անիկա է:

5 Ու ասոր տեսակ տղեկիմը իմ

մի ձյսպիսի՝ յանուն իմ, զնա ընդունի :

6 Եւ որ ոք զայնպզղեցուս զնէ զմի ՚ի փոքրկանցս յայսցանէ յնս հաւատացելոց, լաւ է նմա՝ եթէ կախեցի երկան իշոյ ընդ պարանոց նորա՝ և ընկղմեցի ՚ի խորս ծովու :

7 Վայ աշխարհի ՚ի գայթագղութենից · հարկ է գալ գայթագղութեանց · բայց վայ մարդոյն այնմիկ՝ յոր ձեռն գայ գայթագղութիւն :

8 Եթէ ձեռն քո կամ ոտն գայթագղեցուցանէ զքեզ, հատ զնա՝ և ընկեա ՚ի քէն · լաւ իցէ քեզ՝ միամեռանի կամ կաղ մտանել ՚ի կեանս, քան թէ երկուս ձեռս և երկուս ոտս ունիցիս, և անկանել ՚ի հուրն յաւիտենից :

9 Եւ եթէ աչն քո գայթագղեցուցանէ զքեզ, խլեա զնա և ընկեա ՚ի քէն · լաւ իցէ քեզ միականի մտանել ՚ի կեանս, քան երկուս աչս ունել՝ և անկանել ՚ի գեհեն հրոյն :

10 Զգոյշ լերուք՝ մի արհամարհիցէք զմի ՚ի փոքրկանցս յայսցանէ · ասեմ ձեզ, զի հրեշտակք նոցա յերկինս՝ հանապազ տեսանեն զերեսս հօր իմոյ՝ որ յերկինս է :

11 Որի եկն որդի մարդոյ՝ կեցուցանել զկորուսեալն :

12 Ո՞ւր թաղդ թուի ձեզ, եթէ լինիցի մարդոյ հարիւր ոչխար, և մոլորիցի մի ՚ի նոցանէ, ոչ թողուցու զինիսանսուն և զինն ոչխարն ՚ի լերինս, և երթայցէ խնդրիցէ զմոլորեալն :

անուշովքս կենդանի, ան՝ ես կենդանի :

6 Եւ ովքոր գայթակղեցրեն սա պզտիկներէն մէկը՝ որ հաւատացեալ են, անոր աղէկ է որ իշու աղացքի քարմը իր վիզն կախվի՝ ու ծովին տակը երթայ խնա :

7 Վայ է աշխարքիս՝ գայթակղութիւններուն պատճառով · գայթակղութիւնները հարկաւոր է որ ըլլան . միան թէ վայ է այն մարդուն՝ որ իր ձեռքովը գայթակղութիւնը կբլլա :

8 Թէ որ քու ձեռքդ կամ ոտքդ քեզի գայթագղութիւն կուտա անիկա կտրէ ու քեզմէ մէկդի ձգէ· քեզի աղ լաւ է որ միաչեանի, կամ կաղ (ոտքով) կեանքը մտնես, քան որ երկու ձեռք ու երկու ոտք ունենաս, ու յաւիտենական կրակը խնաս :

9 Ու թէ որ քու աչկրդ քեզի գայթագղութիւն կուտա : ան փրցուցէ ու քեզմէ ձգէ · քեզի աղ լաւ է որ միաչեանի՝ ան կեանքը մտնես, քան որ երկու աչի ունենաս՝ ու գեհեանին կրակը խնաս :

10 Ը գոյշ եղէք՝ որ չըլլա թէ սա պզտիկներէս մէկը քամահրէք, (աս) ձեզի կըսեմ. որ երկինքը անոնց հրեշտակները միշտ իմ հօրըս երեսը կըտեսնեն՝ որ (ինքը) երկինք է :

11 Պատճառն որ՝ որդին մարդոյ եկաւ՝ որ կորսըվածները ապրեցունէ :

12 Ձեզի ինտոր կերևա. թէ որ մէկ մարդմը հարիւր ոչխար ունենա, ու անոնց մէկը (երթա) մոլըրի, անիկա իննըսունըվիցը ոչխարը լեռներուն վրա չիմի թողուր, ու երթար անի մոլըրածը փընտռեր :

13 Եւ եթէ լինիցի գառանել զնա · ամէն ասեմ ձեզ՝ զի ուրախ լինի ի վերայ նորա, քան ի վերայ իննսունն և ինուանցն որ չեկեն մոլորեալ :

14 Այսպէս՝ ոչ են կամք առաջի հօր իմոյ որ յերկինս է, եթէ կորիցի՛ մի ի փոքրկանցս յայսցանէ :

15 Եթէ մեղիցէ քեզ եղբայր քո, երթ յանդիմանեա զնա՝ յորժամ դու և նա միայն իցէք · եթէ լուիցէ քեզ, շահեցար զեղբայրն քո :

16 Այլ եթէ ոչ լուիցէ քեզ, առ ընդ քեզ մի եւ՝ կամ երկուս · զի ի բերանոյ երկուց և յերից վկայից յաստատեսցի ամենայն բան :

17 Իսկ և թէ նոցա ոչ լուիցէ, ասասջիր յեկեղեցւոջ : այլ թէ և եկեղեցւոյն ոչ լուիցէ, եղիցի քեզ իբրև զհեթանոս և զմաքսաւորն :

18 Ամէն ասեմ ձեզ · զի զոր կապիցէք յերկրի՝ եղիցի կապեալ յերկինս · և զոր արձակիցէք յերկրի՝ եղիցի արձակեալ յերկինս :

19 Դարձեալ ասեմ ձեզ · եթէ երկու ի ձենջ միաբանիցեն յերկրի վասն ամենայն իրաց, զոր ինչ և խնդրեսցեն՝ եղիցի նոցա ի հօրէ իմմէ որ յերկինսն է :

20 Զի ուր իցեն երկու կամ երեք ժողովեալ յանուն իմ, անդ եմ ես ի մէջ նոցա :

21 Յայնժամ մատեաւ առ նա պետրոս և ասէ · Տէր՝ քանի՞ նիցս անգամ թէ մեղիցէ ինձ

13 Ու թէ որ ան գտնէ ըլլա՝ ճշմարիտ կըսեմ ձեզի՝ որ անոր վրա էվէլը խնամա՛ կրնէ՝ քան թէ ան իննըսունըվիններուն վրա՝ որ չըլլան մոլորած :

14 Այսպէս՝ իմ հարըս որ երկինքն է՝ ան չի կամենար որ ա ալըտիներէս մէկը կորսըվի :

15 Թէ որ քու եղբայրըդ քեզի դէմ վատը գործէ ըլլա, գնա իրեն երեսը վար տուր՝ երբոր դուն ու ան միասա՛ր կը : Թէ որ (ան) քեզի մըտիկ ընէ, ալ քու եղբայրըդ վաստրկեցար :

16 Հապա որ քեզի մտիկ չընէ, հետը մէկ ուրիշը, կամ թէ երկու՛քալ առ · ինչու որ՝ ամէն բան՝ երկու ու երեք վկայի բերնով կըհաստատուի :

17 Հապա թէ անոնցմէ մտիկ չընէ, (գնա) եկեղեցիին մէջ ըսէ. թէ որ եկեղեցիին՛ալ չմտըա՛ծ, ալ դուն անիկա հեթանոսի ու մաքսաւորի տեղ սեպէ :

18 Ճշմարիտ ձեզի կըսեմ, որ երկրի վրա ոտը կապելը ըլլաք, անիկա երկինքնալ կապված ըլա. ու երկրի վրա ոտը արձրկէք, ան՝ երկինքնալ արձրկված ըլլա :

19 Այս ալ ձեզի կըսեմ. որ թէ ձեզմէ երկու հոգի երկրիս վրա միաբանին՝ ամէն ինչ բան (ու գնալու) համար, ինչ ալ որ խնդրին, անանց կըլլա՝ իմ հօրմէս որ երկինք է :

20 Որովհետև, ուր տեղ որ երկու կամ երեք հոգի իմ անունովը ժողվված ըլլան, ես հոն անոնց մէջն իմ :

21 Այնժամ պետրոս՝ իրեն եկաւ՝ ու ըսաւ · տէր՝ թէ որ իմ եղբայրըս ինծի դէմ բան ընէ, ինչ

եղբայրը իմ, և խոշեց նմա · մինչև ցեւթն անգամ :

22 Ասէ ցնա յի · ոչ ասեմ քեզ՝ մինչև եւթն անգամ, այլ՝ մինչև յեւթանասնեւկին եւթն :

23 Վասն այսորիկ նմանեցաւ արքայութիւն երկնից առն թագաւորի, որ կամեցաւ տալ մաս առնել ՚ի մէջ ծառայից իւրոց :

24 Եւ երբեւ սկսաւ առնուլ, մատուցաւ առ նա պարտապան մի բեւր քանքարոյ :

25 Իբրեւ ոչ ունէր հատուցանել, հրամայեաց՝ զնա վաճառել՝ տէրն նորա, և զկինն նորա, և զորդիս, և զամենայն որ ինչ և ունիցի՝ և հատուցանել :

26 Եւ անկեալ ծառայն երկիր պագանէր նմա՝ և ասէր . երկայնամիտ լեր առ իս, և զամենայն հատուցից քեզ :

27 Գթացեալ տէր ծառային այնորիկ՝ արձակեաց զնա, և զիսին եթող նմա :

28 Եւ ելեալ ծառայն այն՝ եգիտ զմի ՚ի ծառայակցաց իւրոց, որ պարտէր նմա հարեւր դահեկան· և կալեալ զնա՝ խեղդէր և ասէր , հատո ինձ զոր պարտիս :

29 Արդ՝ անկեալ ծառայակցին՝ առ ոտս նորա, աղաչէր զնա՝ և ասէր . երկայնամիտ լեր առ իս՝ և հատուցից քեզ :

30 Եւ նա ոչ կամէր · այլ երթեալ արկ զնա ՚ի բանտ՝ մինչև հատուսցէ զպարտսն :

31 Իբրեւ տեսին ծառայքն կիցքն նորա որ ինչ եղեւն՝ վան քանիւ հեղձ անօր թագաւորին ելիտի առաւ, ինչվան ոխաթ հեղմի :

22 Յիս անօր ըսաց · քեզի չեմ ըսեր որ ինչվան ոխաթ հեղ · հապա՝ ինչվան ոխաւանասուն հեղ ոխանակ :

23 Աս բանիս համար · երկնայնին արքայութիւնը մէկ թագաւորիմը կըլմանցըվի, որ իր ծառաներէն (հլուժուտի) համբանքը տեսնել ուզի :

24 Ու երբոր ըսկսաւ ան ընել, իր դիմացը բերվեցաւ մէկը (իրեն) պարտըկան տասը հազար քանքարի :

25 Երբոր (անիկայ) վճարելիք չունէր, իր տէրը հրամմեց՝ որ ինքը՝ ու իրեն կնիկը՝ ու ան բոլոր ինչ որ ունինի ծախեն, ու (պարըտքը) վճարէ :

26 Ծառան ալ՝ անոր առջեւն ինկած երկրպագութիւն կընէր՝ ու կըսէր · երկայնամիտ եղիր ինձի՝ ու բոլորը քեզի կըվճարեմ :

27 Ան ծառային տէրնալ վրան խրդճաց, ինքը արձակեց, ու (րըտած) պարտքնալ իրեն թողուց :

28 Ու աս ծառա որ դուրս ելաւ իր ընկեր ծառաներէն մէկը գտաւ, որ իրեն հարուր դահեկան պարտըկան էր . ու (ինքը) անիկա բըռնեց՝ կըխըխաէր ու կըսէր՝ ինձի ունեցած պարտքըդ վճարէ :

29 Ան ընկեր ծառանալ իր ոտքը ինկած իրեն կաղաչէր՝ ու կըսէր · երկայնամիտ եղիր ինձի՝ որ քեզի կըվճարեմ :

30 Ու ինքը չէր ուզեր (մարիկ ընել) · հապա գնաց անիկա բանտը ձըգեց , (հոն՝) ինչվան որ պարտքը վճարէ :

31 Իրեն (մէկալ) ընկեր ծառաներն որ աս բանիս տեսան՝ շատ ղէ-

որամեցան յոյժ, և եկեալ ցու-
ցին տեառն իւրեանց զամե-
նայն որ ինչ եղեն :

32 Յայնժամ կոչեաց զնա տէրն իւր՝ և ասէ . Ծառայ չար, զամենայն զպարտսն թո-
ղի քեզ՝ վասն զի աղաչեցեր զիս .

33 Իսկարդ՝ ոչ էր պարտ և քեզ՝ ողորմել ծառայակցին քումմ, որպէս և ես քեզ ողոր-
մեցայ :

34 Եւ բարկացեալ տէրն նորա մատնեաց զնա դահճաց, մինչև հատուսցէ զամենայն զպարտսն :

35 Նոյնպէս և Հայր իմ որ յերկինս է՝ արասցէ ձեզ, եթէ ոչ թողուցուք իւրաքանչիւր եղբօր իւրում ՚ի սրտից ձերոց զյանցանս նոցա :

Գ Լ· Ժ Թ·

1 Եւ եղև իբրև կատարեաց յն զբանս զայսոսիկ, փո-
խեցաւ ՚ի գալիլեէ՝ և եկն ՚ի սահմանս հրեաստանի յայնկոյս յորդանանու :

2 Եւ զնացին զհետ նորա ժողովուրդք բազումք , և բըժշկեաց զնոսա անդ :

3 Եւ մատուցեալ առ նա փարիսեցիքն , փորձէին զնա՝ և ասէին . եթէ արժան իցէ ումեք արձակել զկին իւր , ըստ ամենայն վնասու :

4 Պատասխանի ետ նոցա և ասէ . չեղէ՞ ընթերցեալ ձեր՝ թէ որ հաստատեացն խոկզբա-
նէ՝ արու և էգ արար զնոսա՝ և ասէ .

5 Վասն այսորիկ թողցէ այր՝ զհայր և զմայր՝ և երթիցէ

1 Ոս յն երբոր աս խօսքերը խալըսելու եղաւ, (ալ) գալիլեայէն եկաւ , ու հրէաստանի կողմերը եկաւ՝ յորդանանին մէկալ դին :

2 Ու շատ ժողովուրդներալ իր ետեւէն գացին , ու հոն անոնց բժշկութիւններ ըրաւ :

3 Փարիսեցիներնալ իրեն եկան , ինքը կրկորձէին՝ ու կըսէին , թէ՝ կ՚իյնա մի որ՝ մէկը իր կնիկը արձրկէ, ան՝ ինչ պակսու-
թիւնի համար ալ որ ըլլա :

4 Անոնց պատասխան տըւաւ ու ըսաց . դուք չէք մի կարդացեր՝ որ ըսկիսբը՝ ան որ (մարդը) ըս-
տեղծից, անոնք էրիկ մարդմը ու կնիկմարդմը ըրաւ, ու ըսաց·

5 Անոր համար՝ մարդը թող (իր) հարն ու մարը թողու, ու իր

գՀետ կնոջ իւրոյ, և եղեցին երկոքեան ՚ի մարմին մի :

6 Ապա ուրեմն ոչ են երկուք այլ մի՛ մարմին : արդ՝ զոր ած զուգեաց, մարդ՝ մի՛ մեկնեսցէ:

7 Ասեն ցնա . իսկ Մովսէս ընդէր պատուիրեաց մեզ տալ թուղթ մեկնելոյ, և արձակել :

8 Ասէ ցնոսա . Մովսէս՝ վասն խստասրտութեան ձերոյ չրաժարեաց ձեզ արձակել զգ-կանայս ձեր . այլ իսկզբանէ՝ ոչ եղե այնպէս :

9 Բայց ասեմ ձեզ , զի ամենայն որ արձակէ զկին իւր՝ և ոչ վասն պոռնկութեան , և առնիցէ այլ՝ շնայ , և որ զարձակեալն առնէ՝ շնայ :

10 Ասեն ցնա աշակերտքն իւր . եթէ այդպէս է գործ մարդոյ ընդ այր և ընդ կին , լաւ է չամուսնանալ :

11 Եւ նա՝ ասէ ցնոսա . ոչ ամենեքեան բաւական են այդ բանի , այլ որոց տուեալ է :

12 .Օ ի են ներքինիք՝ որ յորովայնէ մօր իւրեանց ծնան այնպէս . և են ներքինիք՝ որ ՚ի մարդկանէ եղեն ներքինիք . և են ներքինիք՝ որ զանձինս իւրեանց արարին ներքինիս վասն արքայութեան երկնից : որ կարող է տանել տարցի :

13 Յայնժամ մատուցան առ նա մանկտի , զի ձեռն դիցէ ՚ի վերայ նոցա՝ և աղօթս արասցէ : և աշակերտքն նզրա՝ սաստէին նոցա :

14 Ասէ յի՛ թոյլ տուք մանկտւոյդ՝ և մի՛ արգելուք զգոսա կենկանը չետ երթալ (կենա) , ու երկուքը մէկ մարմին ըլլան :

6 Նանկ է նէ՝ ալ երկուք չեն , հապա մէկ մարմին են : ուրեմն ան որ Աստուած կցեց , մարդը (անիկա) պիտի չ զատէ :

7 Իրեն ըսին . Հապա ինչու Մովսէս մեզի պատուիրեց որ՝ թուխտ ու կիր տանք զատվելու . ու (անանկ՝ ան) արձրկելու :

8 Անոնց ըսաց . Մովսէսը ձեր քարասրտութեանը չամար ձեզի չրաման տրված որ կնիկնիդ արձրկէք . բայց ըսկիսպը (բանը) անանկ չեղաւ :

9 Միան թէ ձեզի (աս) կըսեմ . որ ամէն ովոր իր կնիկը կարձրկէ՝ ու (ան՝) չէ թէ պոռնկութենի չամար , ու ուրիշը կառնէ՝ շնութին կընէ . ու անոր որ ան արձրկվածը կառնէ՝ շնութին կընէ :

10 Իր աշակերտներնոյ իրեն ըսին . թէ որ առանկ գործառութիւնները կո՝ երկան ու կնկան միջ՝ ալ աղէկ է չնկարգվելը :

11 Անոյ անոնց ըսաւ . ամէնքը կարող չեն առ բանդ բռնելու . հապա՝ անոնք (միան) որ իրենց տրված է :

12 Ինչու որ՝ ներքինիներ կան՝ որ իրենց մօրը փորէն անանկ ծներ են . կան ալ ներքինիներ՝ որ մարդոցմէ ներքինի են եղեր . ու ներքինիներ ալ կան՝ որ իրենց անձերնին ներքինի ըրին՝ երկնային արքայութեանը չամար . ան որ (աս) կրընա տանիր՝ թող տանի :

13 Անատենը իր առնէը մանտրը տղաք բերին որ անոնց վրա ձեռք դնէ , ու աղօթք ընէ : իրեն աշակերտներնոյ անոնք (գովչեն) կըշտկեին :

14 Յի ըսաց . աս տղոցը թող տրվէք՝ ու առնիք մի՛ արգելէք որ

գալ առ իս, զի այդպիսեացդ է արքայութիւն երկնից :

15 Եւ եղեալ ձեռս ՚ի վե-
րայ նոցա՝ գնաց անտի :

16 Եւ ահա, մատուցեալ
ոմն առ նա՝ ասէ. վարդապետ
բարի՝ զի՞նչ բարի գործեցից՝
զի ընդունիցիմ զկեանսն յաւի-
տենականս :

17 Եւ նա՝ ասէ ցնա. զի՞
հարցանես զիս զբարւոյ, մի՛ է
բարի. եթէ կամիս ՚ի կեանսն
յաւիտենականս մտանել, պահ-
եա զպատուիրանսն :

18 Ասէ ցնա, զո՞րս : ասէ
ցնա յի. զմի սպանանելն, և
մի շնալ, և մի գողանալ, և
մի սուտ վկայել :

19 Պատուեա զհայր քո և
զմայր. և սիրեսցես զընկեր քո
իբրև զանձն քո :

20 Ասէ ցնա պատանին.
զայդ ամենայն պահեցի ՚ի ման-
կութենէ իմմէ. որդ՝ ես իւիք
պակաս իցեմ :

21 Ասէ ցնա յի. եթէ կա-
միս կատարեալ լինել, երթ՝
վաճառեա զինչս քո՝ և տուր
աղքատաց, և ունիցիս գանձս
յերկինս, և եկ զկնի իմ :

22 Իբրև լուաւ պատանին
զբանն, գնաց տրտմեալ, զի
ունէր ստացուածս բազումս :

23 Ասէ յի ցաշակերտսն.
ամէն ասեմ ձեզ. զի դժուա-
րին մտցէ մեծատունն յար-
քայութիւն երկնից :

24 Դարձեալ ասեմ ձեզ.
դիւրին է մալեայ մտանել ընդ
ծակ ասղան, քան մեծատան
յարքայութիւն այ մտանել :

25 Իբրև լուան աշակերտքն՝
զարմացան յոյժ, և ասեն. ևսկ՝
իմ քովը գան, ինչու որ՝ երկնային
արքայութիւնը սատանկներուն է :

15 Ու ձեռքը անոնց վրա դրաւ,
(ալ) անկից գնաց :

16 Ու ահաւասիկ՝ մէկը իրեն եկաւ
ըսաց. բարի վարդապետ՝ (ես)
ի՞նչ բարիք ընեմ՝ որ յաւիտենա-
կան կեանքը ձեռք ձգեմ :

17 Անոր ան ըսաւ. ինչո՞ւ
ինծի՝ բարի կը հարցնես, բա-
րին միայն է. եթէ որ կուզես
յաւիտենական կեանքը մտնալ՝
պատուիրանքները պահէ :

18 Իրեն ըսաւ. որը՞ որը : Յի-
սուս ան ըսաւ. մի՛ սպանաներ,
ու մի՛ շնար, ու մի՛ գողնար,
ու մի՛ սուտ վկայեր.

19 Պատիւ տուր քու հօրդ ու
մօրըտ. ու քու անձիդպէս սիրէ
քու ընկերդդ :

20 Ան կորիճնալ իրեն ըսաւ.
ատ բոլորը (ես) իմ՛ տղակութենէս
ետէ պահեր եմ. հապա ալ ինչ
բանով ես կրպակեմ :

21 Յի՛ ալ անոր ըսաց. եթէ որ
կուզես կատարեալ ըլլալ, գնա
ունեցած բաներդդ ծախէ՝ ու ան-
կրանեներուն տուր, ու գանձ դիզէ
կինքն ըլլա. ու եմ եաւէս ետքը :

22 Երբոր կորիճը ան բանը
լսեց՝ անանկ տրտսում ելաւ գը-
նաց. պատճառն որ՝ ինքը շատ
ունեւոր էր :

23 Յի՛ (ալ) աշակերտներուն
ըսաց. ճշմարիտ ձեզի կըսեմ՝ որ
հարուստը (շատ) դժուար երկնայ-
ին արքայութիւնը կըմտնա :

24 Ա՛սալ ձեզի կըսեմ. (որ) մա-
լխը ասէլին ծակէն ալ հեշտ
անցնելու կըլայ, քան թէ հարուս-
տը յի արքայութիւնը մտնա :

25 Աշակերտներն որ ան լսեցին՝
սաստիկ արմըցան, ու ըսին. ա-

ո կարիցէ ապրել :

26 Չայեցաւ ի նոսա յն՝ և ասէ . առ ի մարզկանէ այդ անկար է, այլ առ յոյ ամենայն ինչ զօրաւոր :

27 Յայնժամ պատասխանի ետ պետրոս և ասէ ցնա . առա՛ սիկ մեք՝ թողաք զամենայն, և եկաք զկնի քո· արդ՝ զինչ լի՛նիցի մեզ :

28 Ասէ ցնոսա յն· ամէն ասեմ ձեզ· զի դուք որ եկիք զկնի իմ, ի միւսանգամ գալստեան՝ յորժամ նստցի որդի մարդոյ յաթոռ փառաց իւրոյ . նաջիք և դուք յերկոտասան աթոռ՝ դատել զերկոտասան ազգ իսրայէլի :

29 Եւ ամենայն՝ որ ոք եթող զտուն, կամ զեղբարս, կամ զքոյր, կամ զհայր, կամ զմայր, կամ զկին, կամ զորդիս, կամ զագարակ՝ վասն անուան իմոյ, չարիւ բազմապիկ առցէ՝ և զկեանսն յաւիտենական ժառանգեսցէ :

30 Բազումք եղիցին՝ առաջինք յետինք, և յետինք առաջինք :

նանկ է նէ՝ ով կրնայ ապրիլ :

26 Յիսուս նայեցաւ՝ ու ըսաց . առիկա մարդու կողմանէ անկարելի է· բայց աստուծմէ համին ըան զօրեղ է :

27 Պետրոս պատասխանեաց տուաւ՝ ու ըրեն ըսաց· ին նա մենք ամէն ըան թողուցինք, ու քու ետեւդ եկանք· ուստի մեզի ինչ պիտոյ ըլլայ :

28 Յիսուս ըսաց· Ճշմարիտ կըսեմ ձեզի· որ՝ դուք որ իմ ետեւէս եկաք· ի յաջորդ նորէն գալուստ աութեր՝ երբոր որդին մարդոյ իր փառաց աթոռը նստի, դուք ալ անանկ տասներկու աթոռ պիտի նստիք, որ տասներկու իսրայէլի ցեղը դատէք :

29 Ու ամէն ով որ թողուց (իրեն) տունը, կամ եղբայրները կամ քրոջմանքը, կամ հայրը, կամ մայրը· կամ կնիկը, կամ որդիքը, կամ (իր) արտերը, իմ անուանիս համար. անիկա՝ հարիւր տակուըն պիտի առնէ, ու յաւիտենական կեանքնալ ժառանգէ :

30 Շատը (անոնցմէ) որ առաջին են՝ հոն պիտի ըլլան, ու հոն կիները՝ առաջին :

ԳԼ· Ի·

Քանզի նման է արքայութիւն երկնից առն տանուտեառն, որ ել ընդ առաւօտս ի վարձու ունել մշակս յայգի իւր :

2 Եւ արկ վարձս ընդ մշակացն առաւօտն դահեկան, և առաքեաց զնոսա յայգի իւր :

3 Եւ ելեալ վերըորդ ժամու՝ եահս այլս զի կային զաւուրկիր ի հրապարակս :

4 Ասէ և ցնոսա . երթայք

1 Պատճառն որ՝ երկնային արքայութիւնը մէկ տանտիրոջմը կրնմանի· որ ինքը առաւօտան դէմ ելաւ իր էգին բանուորներ բանեցնելու

2 Ու անոնց բանուորներուն՝ օրը (մէկ) դահեկանմը (տալու) խօսք կապեց· ու անոնք իր էգին խրկեց :

3 Ու օրվան իրիք ժամին առնը՝ ելաւ ուրիշներալ տեսաւ՝ որ վաղցնկերը պարապ կեցեր էին :

4 Անոնց ալ ըսաց · դուքալ

և զուք յայդի իմ, և որ ինչ արժան իցէ տայ ձեզ :

5 Գնացին և նոքա : և զարձեալ եկեալ զվէց ժամու, և զինն ժամու՝ արար նոյնպէս :

6 Եւ զմետասաներորդ ժամու եկեալ, եգիտ այլս՝ զի կայ ին զատարկք, ասէ ցնոսա . ընդէ՞ր կայք ատ զօրս ցերեկ զատարկք :

7 Ասեն ցնա . զի ոչ ոք կալաւ զմեզ՝ ի վարձու : ասէ ցնոսա . երթայք և դուք յայդին, և որ ինչ արժան է՝ առնուցուք :

8 Եւ իբրև երեկոյ եղև՝ ասէ տէր այգւոյն ցգաւառապետ իւր . կոչեա զմշակսն՝ և տուր նոցա վարձս, սկսեալ՝ ի յետնոյն մինչև ցառաջինսն :

9 Իբրև եկին որք զմետասաներորդ ժամուն, և առին մէն մի դահեկան .

10 Եկեալ և առաջինքն՝ համարեցին թէ աւելի առնուցուն . և առին մէն մի դահեկան և նոքա :

11 Իբրև առին՝ տրտնջէին պատուառապետն՝ և ասէին .

12 Թէ զոքա՝ յետինքդ՝ մի ժամ գործեցին, և հաւասարս կոչդս մեզ արարեր զդուսա, որ զձանրութիւն աւուրն բարձաք և զտօթ :

13 Եւ պատասխանի եառ միում՝ ի նոցանէ՝ և ասէ . ընկեր՝ չզսկեմ զքեզ, ո՞չ դահեկանի միով սակ արկեր ընդ իս .

14 Առ զքոյդ՝ և երթ . եթէ կամիմ յետնոցս տալ որպէս և քեզ,

15 Եթէ չեղէ՞ ինձ իշխանութիւն յիմոս առնել զինչ և իմ էգիս գայէք՝ աւ ինչը կինս նէ՝ ձեզի կուտամ՝ :

5 Ա՝նոնքալ գացին : ու նորին վեց ժամինալ՝ ինը ժամինալ և լաւ՝ անանկ ըրաւ :

6 Ու տասնըմէկ ժամինալ և լաւ՝ ուրիշներալ գըտաւ որ պարապ կեցըրէին . անոնց ըսաց . ին չու հոս ցորեկս իբուն պարապ կեցըէք :

7 Իրեն ըսին . անոր համար՝ որ մէկը մեզ բանի չի բռնեց : իրենց ըսաց . դուքալ երթին գացէք, ու ինչ որ կիյնանէ կառնէք :

8 Երբոր ալ իրիկուն եղաւ, էրին տէրը իր տան վերակեցուին ըսաց . բանվորները կանչէ՝ ու ի րենց վարձքը տուր՝ ետկիններէն ըսկըսած մինչև առջինները :

9 Երբոր անոնք եկան որ տասնըմէկ ժամինն էին՝ ու մէկմէկ դահեկան առին .

10 Ա՝ռջիններնալ եկան՝ կըսկսէին որ էվէլը առնեն, ու իրենքալ մէկմէկ դահեկան առին :

11 (Ա՝նանկ) որ առին, ալ տանը տիրոջը դէմ կըրթռթռալին՝ ու կըսէին .

12 Թէատ ետկինները՝ մէկ ժամմը բանեցան, ու անոնք մեզի հետ հաւասար սեպեցիր. որ (մենք՝ բոլորը) օրվան ծանրութինն ու տաքը քաշեցինք :

13 Ա՝նալ անոնց մէկուն պատասխան տրվաւ՝ ու ըսաւ . սիր ընկեր՝ քեզի զըկուամ չեմ ըներ (դուն) հետրս մէկ դահեկանիմէ խօսք չի կապեցիր մի .

14 Ա՝ռ ան քուկինըդ՝ ու գնա : Թէ որ կուզեմ ետկիններուն՝ անանկ տալ՝ ինչպէս որ քեզի,

15 Ես տէրութին չունիմ մի իմ բանիս վրա՝ որ ինտոր ուզեմնէ ը

կամիմ. կամ թէ ակն քո չար է, զի ես առատ եմ:

16 Այսպէս եղիցին յետինք առաջինք, և առաջինք՝ յետինք: զի բազումք են կոչեցեալք՝ և սակաւք են ընտրեալք:

17 Իբրև ելանէր յն յերուսաղէմ, առ զերկոտասանսն առանձինն, և ՚ի ճանապարհին՝ ասէ ցնոսա.

18 Այն՝ տեսանիկ ելանեմք յերուսաղէմ, և որդի մարդոյ մատնեսցի քահանայապետիցն՝ և դպրաց. և դատապարտեսցեն զնա ՚ի մահ:

19 Եւ մատնեսցեն զնա հեթանոսաց՝ այպանել, և խարկանել, և ՚ի խաչ հանել. և յերրորդ աւուր յարիցէ:

20 Յայնժամ մատեաւ առ նա մայր որդւոցն զեբեդեայ՝ որդւովք իւրովք երկրպագանել, երկիր պագանէր՝ և խնդրէր ինչ ՚ի նմանէ:

21 Եւ նա՝ ասէ ցնա. զի՞նչ կամիս: ասէ ցնա. ասա՝ զի նստցին սոքա երկու որդիքս իմ, մի ընդ աջմէ քումմէ՝ և մի ընդ ահեկէ՝ յարքայութեան քումմ:

22 Պատասխանի՝ ետ յն՝ և ասէ. ոչ գիտէք զինչ խնդրէք. կարէք ըմպել զբաժակն՝ զոր ես ըմպելոցն եմ, կամ զմկրտութիւնն զոր ես մկրտելոցն եմ մկրտել: ասեն ցնա, կարծ եմք:

23 Այ՛ ցնոսա յն. զբաժակն իմ ըմպիցէք, և զմկրտութիւնն զոր ես մկրտիմ՝ մկրտիցէք. բայց նստուցանել ընդ աջմէ և ընդ ահեկէ իմմէ՝ ոչ է իմ տալ, նեմ. կամ թէ դուն անոր կրնաս խանձիլ՝ որ ես առատաձեռն եմ:

16 Այսպէս՝ եւկինները պիտի առջի ըլլան, ու առջինները եւկի: պատճառը՝ որ կանչուածները շատ են, ու հնտրուածները՝ քիչ:

17 Երբոր յն դէպի երուսաղէմ ելլելու էր, տասներկուքը առանձին (իր հետը) առաւ, ու ճամբան՝ անոնց ըսաւ.

18 Ահա՝ երուսաղէմ կելլենք, ու որդին մարդոյ պիտի քահանայապետներուն ու գրագէտներուն ձեռքը մատնուի. ու անոնք մահ դատապարտեն:

19 Ու ինքը հեթանոսներուն ձեռքը պիտի տան, որ (անոնք) խայտառակեն, ու ծեծեն, ու խաչ հանեն. ու (ինքը) երեք օրէն պիտի յարութիւն առնէ:

20 Այն՝ նատեներ իրեն դիմացն եկաւ զեբեդեայի որդոց մօրը՝ իր տղոցը հետ, (որ) երկրպագութիւն կընէր՝ ու իրմէ բանմը կուզէր:

21 Այն՝ անոր ըսաց. ինչ կ՚ուզածդ: իրեն ըսաւ. հրամմէ որ՝ ասոնք իմ երկու որդիքս՝ մէկը աջ կիզէդ ու մէկալ ձախ կիզէդ նստին՝ քու թագաւորութիւնդ տանը:

22 Յն՝ ալ պատասխան տուաւ ու ըսաց. չէք գիտեր ինչ որ կուզէք. (դուք) կրնա՞ք մի ան բաժակը խմել՝ որ ես պիտի խմեմ, կամ ան մկրտութիւնով մկրտուիլ՝ որ ես պիտի մկրտուիմ: իրեն ըսին. կրնանք:

23 Յն՝ ալ անոնց ըսաւ. ըլլա թէ (դուք) իմ բաժակս խմէք, ու իմ մկրտուելու մկրտութիւնովս մկրտուիք. միան թէ՝ իմ աջս կամ ձախս նստեցընել տալը՝ իմս

այլ որոց տուեալ է ՚ի Հօրէ իմմէ :

24 Եւ լուեալ տասանցն , բարկացան ՚ի վերայ երկուցն եղբարց :

25 Յիս կոչեաց զնոսա առ ինքն , և ասէ . գիտէք՝ զի իշխանք ազգաց տիրեն նոցա , և մեծամեծքն իշխեն նոցա :

26 Ո՛չ այնպէս լիցի և ՚ի ձերում միջի . այլ որ կամիցի ՚ի ձէնջ մեծ լինել՝ եղիցի ձեր պաշտօնեայ :

27 Եւ որ կամիցի ՚ի ձէնջ առաջին լինել՝ եղիցի ձեր ծառայ :

28 Որպէս որդի մարդոյ ոչ եկն պաշտօն առնուլ , այլ պաշտել . և տալ զանձն իւր փրկանս փոխանակ բազմաց :

29 Եւ յելանելն նոցա յԵրիքովէ , գնացին զհետ նորա ժողովուրդք բազումք :

30 Եւ աչս կոյրք երկու նստեալք առ Ճանապարհաւն : իբրև լուան թէ յս անցանէ՝ աղաղակեցին և ասեն . ողոր՛ մեաց մեզ յս որդի դաւթի :

31 Եւ ամբարիշտ տասեաց նոցա՝ զի լռեցուն : և նոքա ևս առաւել աղաղակէին և ասէին. տէր՝ ողորմեաց մեզ որդի դաւթի :

32 .Oտեղի առ յս , կոչեաց գնոսա և ասէ . զի՞նչ կամիք՝ զի արարից ձեզ :

33 Ասեն ցնա, տէր՝ զի բացցին աչք մեր :

34 Եւ գթացեալ յս մերձեցաւ յաչս նոցա , և վաղվաղակի տեսին՝ և գնացին զհետ նորա :

25 Եւ ասէ . զիտէք՝ զի իշխանք ազգաց տիրապետեն նոցա , և մեծամեծքն իշխեն նոցա :

26 Ոչ այնպէս լիցի ձեզ . այլ որ կամիցի ՚ի ձէնջ մեծ լինել՝ եղիցի ձեր պաշտօնեայ :

27 Եւ որ կամիցի ՚ի ձէնջ առաջին լինել՝ եղիցի ձեր ծառայ :

34 Իրեն գինի տըվին լեզվի
հետ խառնած՝ որ խըմի: ու երբոր
(անոր) համը առաւ՝ չէր ուզեր
խըմել:

35 Եւ զինքը խաչ որ հանեցին՝
իրեն լաթերը վըճակով բայրա-
ժին ըրին· որ կատարվի ան՝ մար-
գարէին ըսած բանը, (թէ՝) իմ
լաթերըս ինձերնին բաժնեցին,
ու իմ կապայիս վրա վըճակ կը-
ձըգեին:

36 Եւ նստեր՝ զինքը կըպահէին:

37 Եւ իր գլխուն վրա իրեն
յանցաքը գրված՝ դրին, (թէ՝) ա-
սիկա է յն հրեից թագաւորը:

38 Անոր հետ իր հետ երկու
աւազակներ խաչ հանեցին,
մէկը իրեն աջ գին, ու մէկալը՝
ձախ գին:

39 Եւ անոնք որ անկէ կանցնէ-
ին՝ զինքը կըհայհոյէին· գլուխ-
նին կըշարժըէին,

40 Եւ կըսէին· վախ՝ որ (դուն)
տաճարը կըքակէիր, ու ան՝ երեք
օրը կըշինէիր· (դուն) քեզ խա-
լըսէ, թէ որ այ որդին ես նէ՝ ատ
խաչէդ վար ինջէր:

41 Անանկ ալ՝ քահանայապետ-
ներըը զինքը ծաղրը կընէին՝ կար-
գացողներուն ու ծերերուն հետ
միասին, ու կըսէին·

42 Ուրիշներըը խալըսեց, զինքը
զինքը չի կրնար խալըսել: թէ
որ իսրայէլի թագաւորն էնէ՝ հի-
մա թող ատ խաչէն ինջնա՝ ու ի-
րեն հաւատանք:

43 Թէ որ այ յուսացեր նէ, ան՝
հիմա ինքը կազատէ՝ թէ որ ատ
իրեն ուզածն էնէ· որ ըսաւ թէ՝
(ես) այ որդին եմ:

44 .Օ նայն և աւազակքն՝ որ խաչեալ էին ընդ նմա, նախատէին զնա :

45 Եւ ՚ի վեց ժամէ աւուրն՝ խաւար եղև ՚ի վերայ ամենայն երկրի մինչև ցինն ժամ :

46 Եւ զինն ժամուն գոչեաց յիսուս ՚ի ձայն մեծ՝ և ասէ . Էլի՛ Էլի, ղ՚ամա սաբաքթանի· այս ինքն է. ած իմ ած իմ, ընդէր թողեր զիս :

47 Ոմանք յայնցանէ որ անդն կային, իբրև լուան՝ ասէին · զեղիա կարդայ զա :

48 Եւ վազվազակի ընթացաւ մի ոմն ՚ի նոցանէ, առ սպունգ լի քացախով, հարեալ յեղեգան՝ եա ըմպել նմա :

49 Եւ կէսքն ասէին . թող տեսցուք՝ եթէ գայ եղիա փրկել զդա :

50 Եւ յիսուս դարձեալ աղաղակեաց ՚ի ձայն մեծ, և արձակեաց զոգին :

51 Եւ ահա՝ վարագոյր տաճարին ցելաւ յերկուս, ՚ի վերուստ մինչև ՚ի վայր : և երկիր շարժեցաւ, և վէմք պատառեցան :

52 Եւ գերեզմանք բացան, և բազում մարմինք ննջեցելոց սրբոց յարեան .

53 Եւ ելեալ ՚ի գերեզմանոց նոցա յետ յարութեանն նորա, մտին ՚ի քաղաքն սուրբ, և երեւեցան բազմաց :

54 Իսկ հարիւրապետն՝ և որ ընդ նմա պահէին զյիսուս, իբրև տեսին զշարժումնն և զեղեալսն, երկեան յոյժ՝ և ասեն . արդարև՝ այ որդի էր սա :

55 Էին անդ կանայք բա-

44 Այն կերպով՝ աւազակներնալ որ իր հետ խաչ ելած էին՝ ինքը կը բամահարէին :

45 Ու օրվանը վեց ժամէն՝ մինչ-ևան ինը ժամը՝ բոլոր երկիրը վրա խաւար եղաւ :

46 Ու ինը ժամին դէմ՝ յիսուս մեկ ձանով կանչեց՝ ու ըսաւ . Էլի Էլի՛ լամա սաբաքթանի, որ ըսել է, իմ աստված իմ աստված՝ ինչու ես թողուցիր :

47 Անոնցմէ ոմանք որ հոն կեցեր էին, երբոր (աս) լսեցին, կըսէին որ՝ առիկա եղիան իրեն կը-կանչէ կոր :

48 Ու շուտմը անոնցմէ մեկը վազեց՝ ըսպունգմը առաւ քացախով լեցուց, եղեգիմը վրա անցուց՝ իրեն տրվաւ որ խըմէ :

49 Ու կէսմընալ կըսէին, թող տեսնանք՝ որ եղիան կուգա մի ինքը խալըսելու :

50 Ու յիսուս մէյմալ՝ սաստիկ ձայնովմը կանչվրտեց, ու հոգին արձրկեց :

51 Ու հանա տաճարին վարագուրը վերէն ինչվան ի վար երկուք չբակրվեցաւ . ու երկիրը շարժեցաւ, ու քարեր պատռտեցան :

52 Ու գերեզմաններ բացվեցան. ու շատ սուրբ նընջեցեաններու մարմիններ յարութին առին .

53 Ու գերեզմաններէն ելած՝ անոր յարութենէն ետև սուրբ քաղաքը մտան՝ ու շատ մարդոց երեւցան :

54 Իսյոց հարուրապետը՝ ու անոնք որ իր հետ յիսը կըպահէին, երբոր տեսան ան երկրաշարժը՝ ու միկալ եղած բաներըը, շատ վախ քաշեցին, ու ըսին· իրաւ ցընկ որ ասիկա այ որդի էր :

55 Ան տեղը շատ կնքարիքալ

զսմէք, կայէն ՚ի հեռաստանէ՝ և հայէին, որք եկէն զնովք յո՛ր ՚ի գալոլէ պաշտել զնա :

56 Յորս էր Մարիամ Մագդաղենացի, և Մարիամ յակովբայ և յովսեայ մայր, և մայր որդւոցն զեբեդեայ :

57 Եւ իբրև երեկոյ եղև, եկն այր մի մեծատուն յարիմաթեայ, որում անուն էր՝ յովսէփ · որ աշակերտեցաւ իսկ յի՛ն :

58 Սա մատուցեալ առ պիղատոս՝ խնդրեաց զմարմինն յի՛ն : յայնժամ պիղատոս հրամայեաց տալ զմարմինն :

59 Եւ առեալ զմարմինն յովսէփ՝ պատեաց սուրբ կտաւովք ·

60 Եւ եդ ՚ի նո՛ր գերեզմանի՝ զոր փորեաց ՚ի վէմի · և թաւալեցուցեալ կափարիչ որբան գերեզմանին վէմ մի մեծ՝ գնաց :

61 Սո՛նդ էր Մարիամ Մագդաղենացի, և մեւս Մարիամն, նստէին հանդէպ գերեզմանին :

62 Եւ ՚ի վաղիւ անդր՝ որ է յետ ուրբաթուն, ժողովեցան քահանայապետքն և փարիսեցիքն առ պիղատոս,

63 Եւ ասեն · տէր՝ յիշեցաք զի մոլորեցուցիչն այն՝ ասէր մինչ կենդանին էր, թէ յետ երից աւուրց յառնեմ :

64 Արդ՝ հրամայեա զգուշանալ գերեզմանին մինչև ցերիս աւուրս, գուցէ եկեալ աշակերտքն գիշերի՝ գողանայցեն զնա, և ասիցեն ժողովրդեանն, թէ յարեա՛ ՚ի մեռելոց · և լինիցի յետին մոլորութիւնն չար քան զառաջինն :

կայէն, (որ) հեռվանց կեցեր էին՝ ու կընայէին · անոնք որ գալէին յի՛ն եւէն եկան՝ իրեն ծառայութիւն ընելու :

56 Սոսնց մէջն էր Մարեամ Մագտաղենացին, ու Մարեամը՝ յակոբին ու յովսէին մարը, ու զեբեդեայի որդոց մայրնալ :

57 Ու ալ իրիկուն որ եղաւ՝ արիմաթեայէն՝ մէկ ունևոր մարդ եկաւ, որ իր անունը յոսէփ էր· որ ինքնալ յի՛ն աշակերտ եղեր էր :

58 Այիկա պիղատոսի առջեւ գնաց, յի՛ն Մարմինը ուզեց : ան ատենը պիղատոս ալ հրամմեց որ Մարմինը տան :

59 Ու յոսէփ՝ Մարմինը առաւ՝ մաքուր կըտաւներով փաթթուց ·

60 Ու մէկ նոր գերեզմանը որ բաւ՝ որ ան ժառ քարէ փորեր էր· ու մէկ մեծ քարմը գերեզմանը խըմելու դռանը դիմացը թաւալըտրկեց, (ու) գնաց :

61 Հոն էր Մարեամ Մագտաղենացին, ու մէկալ Մարեամնալ՝ (որ) գերեզմանին դէմը նստեր էին :

62 Ու անոր վաղվան օրը՝ որ ուրբաթին եւս է, քահանայապետներն ու փարիսեցիները պիղատոսի քով ժողվեցան,

63 Ու ըսին · տէր՝ մտիքնիս եկաւ որ՝ ան մոլորցընողը ոնց որ էրնէ՝ կըսէր թէ իրիք օրէն եւս յարութին կառնեմ :

64 Ուսոի հրաման տուր՝ որ մինչ ևան իրիք օր գերեզմանին ըզգուշութին ընեն, որ չըլլա թէ աշակերտները գիշերանց գան՝ ան գողնան · ու ժողովրդին ըսեն որ՝ մեռելներէն յարութին առաւ · ու (անանկ) եւկի մոլորութինը առջինէն ալ քէշ ըլլա :

65 Ասէ ցնոսա պիղատոս · ունիք զզօրականն , երթայք զզուշացարուք զոպէս և գիտէք :

66 Եւ նոքա երթեալ՝ զգուշացան գերեզմանին , և կնքեցին զվէմն հանդերձ զօրականաւքն :

65 Պիղատոսեալ անոնց ըսաց · (դուք) պահապան զինուորներ ունիք , գացէք զգուշութիւնը ըրէք՝ ինչպէս որ գիտէք :

66 Անոնքալ գացին գերեզմանին ըզգուշութիւն ըրին · ու պահապան զինուորներէն իզատ՝ քարէն վրա կնիքալ զարկին :

ԳԼ· ԻԸ·

1 Եւ յերեկոյի շաբաթուն՝ յորում լուսանայր միաշաբաթին , եկն Մարիամ Մագդալենացի , և միւս Մարիամն՝ տեսանել զգերեզմանին :

2 Եւ ահա շարժումն մեծ եղեւ · զի հրեշտակ տն իջեալ յերկնից , մատուցեալ ՚ի բաց թաւալեցոյց զվէմն ՚ի դրաց անտի՝ և նստէր ՚ի վերայ նորա :

3 Եւ էր տեսիլ նորա իբրև զփայլակն , և հանդերձ նորա սպիտակ իբրև զձիւն :

4 Եւ յահէ անտի նորա խռովեցան պահապանքն , և եղեն իբրև զմեռեալ :

5 Պատասխանի ետ հրեշտակն՝ և ասէ ցկանայսն · մի երկնչիք դուք , գիտեմ զի զյն զխաչեալսն խնդրէք .

6 Չէ աստ , քանզի յարեաւ՝ որպէս ասացն . եկայք տեսէք զտեղին ուր կայր :

7 Եւ վաղվաղակի երթայք ասացէք աշակերտացն նորա՝ թէ յարեաւ · և ահա՝ յառաջանայ քան զձեզ ՚ի գալիլեա · անդ տեսանիցէք զնա · ահա ասացի ձեզ :

8 Եւ ելեալ վաղվաղակի ՚ի գերեզմանէ անտի աչիւ և

1 Ու շաբաթ իրիկուն՝ որ ալ միշաբաթին կը լուսանար , մարեամ Մագտալենացին եկաւ , ու միկալ Մարեամնալ՝ որ գերեզմանը տեսնան :

2 Ու մէյմալ (անկարծ) մեծ շարժմունք մը եղաւ · ինչու որ՝ հրեշտակ մը երկինքէն ինջաւ՝ գնաց դրռանը գիմացին ան քարը միկ ալ թաղրլարկեց , ու անոր վրա նրստաբերը :

3 Ու իրեն կերպարանքը փայլակի պէս էր , ու իր հագուստը ձունի պէս ճերմակ :

4 Ու անոր վախէն պահապանները սոսկմրուկեցան , ու մեռելի պէս եղան :

5 Հրեշտակնալ խօսեցաւ՝ ուան կընբաւոցը ըսաց . դուք մի վախնաք · գիտեմ որ՝ յս՝ խաչ եղած կրկնատեսկոր :

6 Ան հոս չէ · պատճառն որ՝ (ինքը) յարութիւն առաւ , ինչպէս որ ըսերէր · եկէք (իր) տեղը նայեցէք ուր որ կեցած էր :

7 Ու շուտմը գացէք անոր աշակերտներուն ըսէք որ՝ (ան) յարութիւն առաւ · ու բուն ինքնալ ձեզմէ առաջ գալիլեան կրժրնէ . անիկա հոն կրտեսնաք . հանա (ես) ձեզի ըսի :

8 Ու ալ շուտմը գերեզմանէն եղած՝ վախով ու ճվիճըք ուրախ-

խնդութեամբ բազմաւ՝ ընթացնային պատմել աշակերտացն :

9 Եւ ահա՝ պատահեաց նոցա յս՝ և ասէ. ողջ էք : և նոքա մատուցեալ կալան զոտս նորա, և երկիր պագին նմա :

10 Յայնժամ ասէ ցնոսա յս. մի երկնչէք, երթայք ասացէք եղբարցն իմոց՝ զի երթիցեն ի գալիլեա՝ և անդ տեսցեն զիս :

11 Իբրև նոքա գնացին, ահա՝ ոմանք ի զօրականացն եկին ի քաղաքն, և պատմեցին քահանայապետիցն զամենայն որ լինէ եղեն :

12 Եւ նոքա ժողովեալ հանդերձ ծերովքն, խորհուրդ առեալ՝ արծաթի յոյժ եւտուն զօրականացն,

13 Եւ ասեն. ասասջիք՝ եթէ աշակերտքն նորա եկեալ գիշերի գողացան զնա՝ մինչ մեք ի քուն էաք :

14 Եւ եթէ լսեր լեցի այդ՝ առ դատաւորն, մեք հաշեց ցուք զնա, և զձեզ անհոգս առնեցուք :

15 Եւ նոցա առեալ զարծաթսն, արարին որպէս ուսանեն. և եղ համբաւս այս ի հրէից՝ մինչև ցայսօր :

16 Իսկ մետասան աշակերտքն՝ գնացին ի գալիլեա ի լեառնն՝ ուր ժամադիր եղև նոցա յս :

17 Իբրև տեսին զնա՝ երկիր պագին նմա. և ոմանք յեր կուածան :

18 Եւ մատուցեալ յս խօսեցաւ ընդ նոսա՝ և ասէ. առաւ ինձ ամենայն իշխանութիւն յերկինս և յերկրի. որպէս ուղարկեաց զիս հայր՝ և ես առաքեմ զձեզ :

19 Ուրեմն երթայք՝ աշակերտ արարէք զամենայն հեթանոսս, մկրտեցուցանելով զնոսա յանուն հաւր և որդւոյ և հոգւոյն սրբոյ :

20 Ուսուցանելով նոցա պահել զամենայն զոր պատուիրեցի ձեզ : և ահա ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս մինչև ցկատարած աշխարհի : ամէն :

ՄԱՐԿՈՍԻ

1 Սկիզբն աւետարանին Յիսուսի Քրիստոսի որդւոյ Աստուծոյ :

2 Որպէս գրեալ է ի մարգարէսն. ահա ես առաքեմ զհրեշտակ իմ առաջի երեսաց քոց, որ պատրաստեսցէ զճանապարհ քո առաջի քո :

3 Ձայն աղաղակողի յանապատի՝ պատրաստեցէք զճանապարհ տեառն, ուղիս արարէք զարահետս նորա :

4 Եղև Յովհաննէս մկրտեալ յանապատի, և քարոզեալ զմկրտութիւն ապաշխարութեան ի թողութիւն մեղաց :

5 Եւ ելանէր առ նա ամենայն աշխարհ հրէից և երուսաղէմացիք ամենեքին, և մկրտէին ի նմանէ ի գետն Յորդանան՝ խոստովանելով զմեղս իւրեանց :

6 Եւ էր Յովհաննէս զգեցեալ ի մազեղէն հանդերձ ուղտոյ, և գօտի կաշեայ ընդ մէջս իւր, և ուտէր զմարախ և զմեղր վայրի :

7 Եւ քարոզէր՝ և ասէր. գայ զօրաւորագոյն քան զիս յետ իմոյ, որոյ ոչ եմ արժան խոնարհեալ լուծանել զկօշիկս ոտից նորա :

8 Ես մկրտեցի զձեզ ջրով, նա մկրտեսցէ զձեզ հոգւով սրբով :

9 Եւ եղև յաւուրսն յայնմիկ եկն Յիսուս ի Նազարէթէ Գալիլեացւոց, և մկրտեցաւ ի Յովհաննէսէ ի Յորդանան :

10 Եւ յանդիման ելանելոյ նորա յջուրց՝ ետես զերկինս բացեալ, և զհոգին իբրև զաղաւնի իջանել ի վերայ նորա :

11 Եւ ձայն եղև յերկնից. դու ես որդի իմ սիրելի, որով հաճեցայ :

12 Եւ անդէն հոգին հանեալ զնա ի յանապատ,

13 Եւ էր անդ յանապատին քառասուն աւուրս, և փորձէր զնա սատանայ. և էր ընդ գազանս, և հրեշտակք սպասաւորէին նմա :

14 Եւ յետ մատնելոյ զՅովհաննէս՝ եկն Յիսուս ի Գալիլեա, քարոզելով զաւետարան արքայութեան աստուծոյ,

15 Եւ ասէր. կատարեցաւ ժամանակ, և մերձեցաւ արքայութիւն աստուծոյ. ապաշխարեցէք և հաւատայք աւետարանի :

16 Եւ անցանելով առ ծովեզերս Գալիլեացւոց՝ ետես զՍիմոն և զԱնդրէաս եղբայր նորա, որ ձգէին զուռկանս ի ծովն, էին բանուորք :

17 Եւ ասէ ցնոսա Յիսուս. եկայք զիս ետես, և արասցեմ զձեզ ձկնորսս մարդկան :

18 Եւ անդէն թողեալ զուռկանսն՝ հետևեցան նմա :

19 Եւ անդր անցեալ փոքր ինչ՝ ետես զՅակոբոս զորդի Զեբեդեայ, և զՅովհաննէս զեղբայր նորա, և նոքա ի նաւի կարկտէին զուռկանսն :

20 Եւ անդէն կոչեաց զնոսա. և թողեալ զհայր իւրեանց զԶեբեդէոս ի նաւի ընդ վարձկանսն՝ գնացին հետևեալ նմա :

21 Եւ մտանեն ի Կափառնայում. և անդէն ի շաբաթուն մտեալ ի ժողովարանն՝ ուսուցանէր :

22 Եւ զարհուրէին ի վարդապետութենէ նորա. զի էր ուսուցանէր զնոսա իբրև զիշխանութիւն ունի, և ոչ իբրև զդպիրս :

23 Եւ էր ի ժողովարանին նոցա մարդ մի ունելով հոգի պղծոտ, և գոչեաց,

24 Եւ ասէ. զի՞ մեզ և քեզ, Յիսուս Նազովրեցի. եկիր կորուսանել զմեզ. գիտեմ զքեզ զո՞վ իցես, սուրբ աստուծոյ :

25 Եւ սաստեաց նմա Յիսուս՝ և ասէ. լռեա՛ և ել ի նմանէ :

26 Եւ խարխափեալ զնա հոգին պղծոտ՝ և գոչեալ ձայնիւ մեծաւ՝ ել ի նմանէ :

27 Եւ զարհուրեցան ամենեքին, մինչև հարցանել ընդ միմեանս՝ և ասել. զի՞նչ է այս, ուսուցանել նոր իշխանութեամբ. և հրամայէ ոգւոց պղծոտաց, և հնազանդին նմա :

28 Եւ ելանէր լուր նորա անդէն յամենայն կողմանս գաւառին Գալիլեացւոց :

29 Եւ անդէն ի ժողովարանէն ելեալ՝ եկին ի տուն Սիմոնի և Անդրէասի՝ հանդերձ Յակոբոսիւ և Յովհաննիսիւ :

30 Եւ էր տատ կին Սիմոնի տենդոտ, և անդէն ասեն ցնա զնոսայն :

31 Եւ մատեալ՝ յարոյց զնա՝ կալեալ զձեռն նորա, և թողոյց զնա տենդն, և սկսաւ սպասաւորել նոցա :

32 Եւ երեկոյին՝ յորժամ մտանէր արեգակն՝ բերէին առ նա զամենայն հիւանդս և զդիւահարս :

33 Եւ էր ամենայն քաղաքն ժողովեալ առ դրունսն :

34 Եւ բժշկեաց բազումս հիւանդաց ախտից զանազանաց, և դեւս բազումս հանէր, և ոչ թողոյր զդեւսն խօսել, զի գիտէին զնա :

35 Եւ առաւաւտուն կանխեալ յոյժ՝ յարուցեալ ել և գնաց յանապատ տեղի, և անդ աղաւթէր :

36 Եւ հետևեցան նմա Սիմոն և որ ընդ նմա էին :

37 Եւ գտին զնա, և ասեն ցնա. զի ամենեքին քեզ որոնեն :

38 Եւ ասէ ցնոսա. երթիցուք յայլ տեղիս ի մերձակայ գիւղս, զի և անդ քարոզեցից, զի յայդ պատրաստեցայ :

39 Եւ գնայր քարոզելով ի ժողովարանս նոցա յամենայն Գալիլեա, և զդեւսն հանէր :

40 Եւ եկն առ նա մի ոմն բորոտ՝ աղաչելով զնա, և ծունր կրկնելով ասէ ցնա. եթէ կամիս՝ կարող ես զիս սրբել :

41 Եւ Յիսուս գթացեալ՝ երկարեաց զձեռն իւր, և հպեալ նմա՝ ասէ ցնա. կամիմ, սրբեցիր :

42 Եւ որպէս ասաց՝ անդէն բորոտութիւնն գնաց ի նմանէ, և սրբեցաւ :

43 Եւ սաստեալ նմա՝ անդէն հանեալ զնա,

44 Եւ ասէ ցնա. տես մի ումեք ասիցես զբան, այլ երթ՝ ցուցո զանձն քահանայապետին, և մատո զպատարագ վասն սրբութեան քոյ, որպէս հրամայեաց Մովսէս, ի վկայութիւն նոցա :

45 Եւ նա ելեալ՝ սկսաւ քարոզել բազում և հրատարակել զբանն, մինչև ոչ կարել նմա յայլ քաղաք մտանել յայտնի, այլ արտաքոյ անապատ տեղեաց կայր. և գային առ նա յամենայն կողմանց :

2 Եւ մտեալ կրկին ի Կափառնայում՝ լուաւ եթէ ի տան է :

2 Եւ ժողովեցան բազումք՝ մինչև ոչ եւս տեղի առնուլ զդրունսն, և խօսէր նոցա զբանն :

3 Եւ գային առ նա՝ բերելով զանդամալոյծ մի, որ կրէին չորք :

4 Եւ ոչ կարէին մատանել առ նա ի բազմութենէն, ապականեցին զտանիքն ուր էր, և ծակեալ՝ իջուցանէին զմահիճն, յորում անդամալոյծն պառկէր :

5 Եւ տեսեալ Յիսուսի զհաւատս նոցա՝ ասէ ցանդամալոյծն. որդեակ, քաւեալ են քեզ մեղքդ քո :

6 Եւ էին անդ ոմանք ի դպրացն՝ նստեալ և խորհեալ ի սրտիս իւրեանց.

7 Զի՞նչ խաւսի այս զհայհոյութիւն. ո՞ կարէ քաւել մեղս, եթէ ոչ միայն աստուած :

8 Եւ անդէն գիտացեալ Յիսուսի ոգւով իւրով՝ զի այսպէս խորհին ի սրտիս իւրեանց՝ ասէ ցնոսա. զի՞նչ խորհիք զայդ ի սրտիս ձերում :

9 Զի՞նչ է դիւրագոյն ասել ցանդամալոյծն. քաւեալ են քեզ մեղքդ քո, կամ ասել. ա՛ռ զմահիճդ քո և գնա՛ :

10 Եւ զի գիտասջիք եթէ իշխանութիւն ունի որդի մարդոյ ի վերայ երկրի քաւել մեղս, ասէ ցանդամալոյծն.

11 Քեզ ասեմ, ա՛ռ զմահիճդ քո և գնա՛ ի տուն քո :

12 Եւ յարուցեալ՝ անդէն առեալ զմահիճն՝ գնաց առաջի ամենեցուն, մինչև զարհուրել ամենեցուն և փառաւորել զաստուած՝ և ասել. զի ոչ երբէք այսպէս տեսաք :

13 Եւ ել անդր առ ծովեզերս, և ամենայն ժողովուրդ գային առ նա, և ուսուցանէր նոցա :

14 Եւ անցանելով ետես զԼեւի զորդի Ղաղեայ նստեալ ի մաքսատան, և ասէ ցնա. հետևեա՛ ինձ : և նա յարուցեալ՝ հետևեցաւ նմա :

15 Եւ եղև նստել նորա ի տան նորա, և բազումք մաքսաւորք և մեղաւորք նստեալ էին ընդ Յիսուսիւ և աշակերտաւքն նորա. զի բազումք էին և հետևեալ էին նմա :

16 Եւ դպիրք և փարիսեցիք՝ տեսեալ զի ուտէ ընդ մաքսաւորսն և մեղաւորսն՝ ասեն աշակերտաց նորա. զի՞նչ է զի ընդ մաքսաւորսն և մեղաւորսն ուտէ և ըմպէ :

17 Եւ լուեալ Յիսուսի՝ ասէ ցնոսա. ոչ պիտոյ են հիւանդք բժշկի, այլ չարաց. ոչ եկի կոչել զարդարս, այլ զմեղաւորս ի ապաշխարութիւն :

18 Եւ էին աշակերտք Յովհաննու և փարիսեցիք պահօղք. և գային և ասեն ցնա. զի՞նչ է զի աշակերտք Յովհաննու և փարիսեցւոց պահեն, և աշակերտք քո ոչ պահեն :

19 Եւ ասէ ցնոսա Յիսուս. միթէ կարեն որդիք հարսանեացն պահել, մինչդեռ փեսայն ընդ նոսա է. զի որչափ ընդ նոսա է փեսայն՝ չեն կարեն պահել :

20 Եւ եկեսցեն աւուրք յորում վասն առնուցի ի նոցանէ փեսայն, և յայնժամ պահեսցեն յաւուրսն յայնոսիկ :

21 Եւ ոչ ոք կարկատան ի նոր ձորձ ի հին հանդերձ ածէ. զի առնուցու զլրումն նորն ի հնոյն, և չարագոյն պատառ լինի :

22 Եւ ոչ ոք նոր գինի ի հին կապս արկանէ. զի պատառեսցէ նոր գինին զկապսն, և գինին հեղցի, և կապքն կորիցեն. այլ նոր գինի ի նոր կապս արկանել պարտ է :

23 Եւ եղև անցանել նորա ի շաբաթուն ընդ ցորենիս, և սկսան աշակերտք նորա ճանապարհ առնել՝ հնձել զհասկս :

24 Եւ փարիսեցիք ասեն ցնա. ահա զի՞նչ առնեն աշակերտք քո ի շաբաթուն զոր ոչ պարտ է :

25 Եւ նա ասէ ցնոսա. ոչ երբէք ընթերցարուք զոր արար Դաւիթ, յորժամ պիտոյ եղև նմա և քաղցեալ էր՝ նա և որ ընդ նմա էին,

26 Զի՞նչպէս մտեալ ի տուն աստուծոյ ի հարկս Աբիաթարայ քահանայապետի, և զհացս երեսաց կերեալ, զոր ոչ իշխան է ուտել, այլ միայն քահանայիցն, և ետ նաև ընկերաց իւրոց :

27 Եւ ասէ ցնոսա. շաբաթուն վասն մարդոյ եղև, և ոչ մարդ շաբաթուն :

28 Ուրեմն տէր է որդի մարդոյ և շաբաթուն :

3 Եւ մտեալ կրկին ի ժողովարանն՝ էր անդ մարդ մի ունելով զձեռն իւր ցամաքեալ :

2 Եւ հսկէին նմա եթէ զշաբաթուն բժշկեսցէ զնա, զի մեղադրեսցեն զնա :

3 Եւ ասէ ցմարդն ցամաքեալ ձեռամբ. յառ՛ ի մէջ :

4 Եւ ասէ ցնոսա. զի՞նչ է օրէն շաբաթուն բարի առնել կամ չար, զհոգի կեցուցանել կամ սպանանել : և նոքա լռէին :

5 Եւ նայեցաւ նոցա զայրագին՝ տրտմեալ ի վերայ կարծրութեան սրտից նոցա, և ասէ ցմարդն. երկարեա՛ զձեռն քո : և նա երկարեաց, և ապաքինեցաւ ձեռն նորա :

6 Եւ ելեալ փարիսեցիքն՝ անդէն խորհուրդ արարին ընդ հերովդիանոսս ի վերայ նորա, զի զկնի նորա կորուսցեն զնա :

7 Եւ Յիսուս աշակերտաւքն իւրովք անդր առ ծովեզերս, և բազում ամբոխ ի Գալիլեայ և ի Հրէաստանէ հետևեցան նմա,

8 Եւ ի Երուսաղէմէ և ի Եդովմայ և յայնկոյս Յորդանանայ, և որ ի շուրջ զՏիւրոսաւ և զՍիդովնաւ, բազում ամբոխ, լուեալ զամենայն զոր գործէր՝ եկին առ նա :

9 Եւ ասաց աշակերտացն իւրոց՝ զի նաւակ մի կացցէ նմա վասն ամբոխին, զի մի նեղեսցեն զնա :

10 Զի բազումս բժշկեաց, մինչև անկանել նոցա ի վերայ նորա զի մերձեցին նմա՝ որ ունէին չարաչար ախտս :

11 Եւ հոգիք պղծոտք՝ յորժամ տեսանէին զնա՝ անկանէին առաջի նորա, և գոչէին՝ և ասէին. դու ես որդի աստուծոյ :

12 Եւ նա սաստիկ սպառնայր նոցա՝ զի մի յայտնի արասցեն զնա :

13 Եւ ելեալ ի լեառն՝ կոչեաց առ ինքն զորս կամէր նա, և գնացին առ նա :

14 Եւ արար տասն և երկուս, զի իցեն ընդ նմա, և զի առաքեսցէ զնոսա քարոզել,

15 Եւ իշխանութիւն ունել բժշկել զհիւանդս և հանել զդեւս :

16 Եւ եդ անուն Սիմոնի Պետրոս,

17 Եւ զՅակոբոս զորդի Զեբեդեայ, և զՅովհաննէս զեղբայր Յակոբայ, և եդ նոցա անուն Բոանեգէս, որ է որդիք որոտման,

18 Եւ զԱնդրէաս, և զՓիլիպպոս, և զԲարթողիմէոս, և զՄատթէոս, և զԹովմաս, և զՅակոբոս զորդի Ղաղեայ, և զԹադէոս, և զՍիմոն զԿանանացի,

19 Եւ զՅուդա զԻսկարիովտացի, որ և մատնեաց զնա :

20 Եւ գային ի տուն, և ժողովեցաւ կրկին ամբոխ, մինչև ոչ կարել նոցա և հաց ուտել :

21 Եւ լուեալ ազգականացն՝ ելին կալան զնա. զի ասէին եթէ խելագարեցաւ :

22 Եւ դպիրքն որ ի Երուսաղէմէ իջեալ էին՝ ասէին եթէ Բելզեբուղ ունի, և եթէ իշխանաւն դիւաց հանէ զդեւսն :

23 Եւ կոչեալ զնոսա՝ առակս ասէր նոցա. զիա՞րդ կարէ սատանայ զսատանայ հանել :

24 Եւ եթէ տունն ընդ ինքեան բաժանեալ լինի՝ չկարէ տունն այն կալ :

25 Եւ եթէ թագաւորութիւն ընդ ինքեան բաժանեալ լինի՝ չկարէ թագաւորութիւնն այն կալ :

26 Եւ եթէ սատանայ զանձն իւր ընդդէմ կացուցանէ՝ և բաժանեալ լինի՝ չկարէ կալ, այլ վախճան ունի :

27 Եւ ոչ ոք կարէ զկարասիս զօրաւորի մտեալ յափշտակել, եթէ ոչ նախ կապեսցէ զզօրաւորն, և ապա զտունն նորա յափշտակեսցէ :

28 Ամէն ասեմ ձեզ, թողցին ամենայն մեղք որդւոց մարդկան, և հայհոյութիւնք զոր հայհոյեսցեն :

29 Եւ որ հայհոյեսցէ ընդ հոգւոյ սրբոյ՝ չունի թողութիւն յաւիտեան, այլ մեղաւոր է յաւիտենական դատաստանի :

30 Զի ասէին եթէ ոգի պղծոտ ունի :

31 Եւ գային մայր նորա և եղբարք նորա, և կայեալ արտաքոյ՝ առաքեցին առ նա՝ կոչել զնա :

32 Եւ նստէր ամբոխ շուրջ զնովաւ, և ասեն ցնա. ահա մայր քո և եղբարք քո արտաքոյ կան՝ և զքեզ որոնեն :

33 Եւ պատասխանի ետ նոցա՝ և ասէ. ո՞ է մայր իմ և եղբարք իմ :

34 Եւ նայեցաւ շրջապատ զնոսայն որ նստէին շուրջ զնովաւ, և ասէ. ահա մայր իմ և եղբարք իմ :

35 Զի որ արասցէ զկամս աստուծոյ՝ նա է եղբայր իմ և քոյր և մայր :

4 Եւ կրկին սկսաւ ուսուցանել առ ծովեզերս, և ժողովեցաւ առ նա ամբոխ բազում, մինչև մտեալ նմա ի նաւ՝ նստել ի ծովուն, և ամենայն ամբոխ առ ծովեզերս ի ցամաքի էին :

2 Եւ ուսուցանէր նոցա առակաւք բազմաւք, և ասէր ցնոսա ի ուսուցման իւրում.

3 Լուարուք. ահա ելանէր սերմանիչ մի սերմանել :

4 Եւ եղև սերմանելն՝ անկաւ մի ինչ առ ճանապարհաւ, և եկին թռչունք երկնից և կերան զնա :

5 Եւ մի ինչ անկաւ ի տեղի քարուտ, ուր ոչ էր հող բազում, և անդէն ծլեցաւ, զի ոչ էր խորութիւն հողոյ :

6 Եւ յորժամ ծագեաց արեգակն՝ խանձեցաւ, և զի ոչ էր արմատ՝ չորացաւ :

7 Եւ մի ինչ անկաւ ի տատասկս, և բարձրացան տատասկքն և խեղդեցին զնա, և պտուղ ոչ ետ :

8 Եւ մի ինչ անկաւ ի հող բարի, և ետ պտուղ՝ որ բարձրանայր և աճէր, և բերէր մինն երեսուն, և մինն վաթսուն, և մինն հարիւր :

9 Եւ ասէ. որ ունի ականջս լսելոյ՝ լուիցէ :

10 Եւ յորժամ մնացին միայնակ՝ հարցանէին նմա որ ընդ նմա էին տասն և երկուքն զառակսն :

11 Եւ ասէ ցնոսա. ձեզ տուեալ է գիտել զխորհուրդ արքայութեան աստուծոյ, իսկ արտաքինացն ամենայնքն առակաւք լինին,

12 Զի տեսանելով տեսցեն և ոչ իմասցին, և լսելով լուիցեն և ոչ հասցին, գուցէ դարձեալ դարձցին և թողցի նոցա :

13 Եւ ասէ ցնոսա. ոչ գիտէք զառակս զայս, և զիա՞րդ զամենայն առակս գիտասջիք :

14 Սերմանիչն զբանն սերմանէ :

15 Եւ սոքա են որ առ ճանապարհաւ, ուր սերմանի բանն, և յորժամ լսիցեն՝ անդէն գայ սատանայ և առնու զբանն որ սերմանեալ է ի սրտիս նոցա :

16 Եւ նոյնպէս են որ ի տեղի քարուտ սերմանին, որ յորժամ լսիցեն զբանն՝ անդէն ընդունին զնա ուրախութեամբ,

17 Եւ ոչ ունին արմատ ի ներքս, այլ ժամանակաւոր են. ապա յորժամ եղիցի նեղութիւն կամ հալածանք վասն բանին՝ անդէն գայթակղին :

18 Եւ սոքա են որ ի տատասկս սերմանին, որ լսեն զբանն,

19 Եւ հոգս աշխարհի և խաբէութիւն հարստութեան և ցանկութիւնք զայլ ամենայն ինչս մտեալ՝ խեղդեն զբանն, և պտուղ ոչ լինի :

20 Եւ սոքա են որ ի հող բարի սերմանին, որ լսեն զբանն և ընդունին, և բերեն պտուղ՝ մինն երեսուն, և մինն վաթսուն, և մինն հարիւր :

21 Եւ ասէ ցնոսա. միթէ լուսաւորութիւն գայ որ ի տակ սրուակի դիցի կամ ի տակ մահճի, եթէ ոչ որ ի վերայ աթոռոյ դնիցի :

22 Զի ոչ է ինչ ծածուկ՝ որ յայտնի ոչ լիցի, և ոչ ինչ ծածկեալ՝ որ ի յայտ ոչ եկեսցէ :

23 Եթէ ոք ունի ականջս լսելոյ՝ լուիցէ :

24 Եւ ասէ ցնոսա. տեսէք զինչ լսէք. որով չափով չափիցէք՝ նովաւ չափեսցի ձեզ, և յաւելցի ձեզ որ լսէք :

25 Զի որ ունի՝ տացի նմա, և որ ոչ ունի՝ և զոր ունի առնուցի ի նմանէ :

26 Եւ ասէր. այսպէս է արքայութիւն աստուծոյ, որպէս եթէ մարդ մի սերմանիցէ զսերմն ի հողի,

27 Եւ քնացեալ զկնի՝ յարիցէ գիշեր և ցերեկ, և սերմն ծլեսցի և բազմասցի, մինչդեռ ինքն ոչ գիտէ :

28 Զի երկիր ինքնին պտղաբերէ, նախ զդալար, ապա զհասկ, ապա զլցեալ ցորեն ի հասկի :

29 Եւ յորժամ մատուցանիցէ պտուղն՝ անդէն առաքէ զմանգաղն, զի հասեալ է հունձն :

30 Եւ ասէր. զիա՞րդ նմանեսցուք զարքայութիւն աստուծոյ, կամ ո՞ առակաւ նմանեսցուք զնա :

31 Որպէս հատ մանանեխի, որ յորժամ սերմանիցի ի հողի՝ փոքրագոյն է քան զամենայն սերմունս որ ի հողի,

32 Եւ յորժամ սերմանեալ իցէ՝ ելանէ և լինի մեծագոյն քան զամենայն ընդեղէնս, և ածանէ ճիւղս մեծամեծս, մինչև կարել ի ստուերի նորա բնակել թռչնոց երկնից :

33 Եւ առակաւք բազմաւք այսպիսեաւք խաւսէր նոցա զբանն, որպէս կարէին լսել :

34 Եւ առանց առակի ոչ խաւսէր ընդ նոսա. և զամենայն աշակերտացն իւրոց յանձինս առանձինն ասէր :

35 Եւ ասէ ցնոսա յաւուր յայնմիկ՝ իրիկնացեալ, թէ անցանեսցուք յայնկոյս :

36 Եւ թողեալ զամբոխն՝ առնուն զնա որպէս էր ի նաւի, և այլ նաւք էին ընդ նմա :

37 Եւ լինի մրրիկ մեծ հողմոյ, և ալեաց զարկանէին ի նաւն, մինչև լցուցանել զնաւն :

38 Եւ նա էր ի նաւուն ի վերնում ի բարձի ննջեալ. և զարթուցանեն զնա՝ և ասեն ցնա. վարդապետ, ոչ հոգաս զի կորնչիմք :

39 Եւ յարուցեալ՝ սաստեաց հողմոյն, և ասէ ցծովն. լռեա՛, դադարեա՛ : և դադարեաց հողմն, և եղև խաղաղութիւն մեծ :

40 Եւ ասէ ցնոսա. զի՞ երկնչիք այդպէս, ո՞չ ունիք հաւատս :

41 Եւ երկեան երկիւղ մեծ, և ասէին ընդ միմեանս. ո՞ է այս, զի և հողմն և ծովն հնազանդին նմա :

5 Եւ անցին յայնկոյս ծովուն ի գաւառն Գադարացւոց :

2 Եւ ելեալ նորա յնաւէ՝ անդէն ընդառաջեաց նմա մարդ մի ի գերեզմանացն, ունելով հոգի պղծոտ,

3 Որ զբնակութիւն ունէր ի գերեզմանսն, և ոչ ոք կարէր կապանաւք կապել զնա,

4 Զի յաճախ կապանաւք և շղթայիւք կապեալ էր, և խզեալ էր շղթայքն ի նմանէ, և կապանքն ջարդեալ էին, և ոչ ոք կարէր զնա հնազանդեցուցանել,

5 Եւ միշտ գիշեր և ցերեկ ի գերեզմանսն և ի լերինս էր՝ գոչելով և քարկոծելով զանձն իւր :

6 Եւ տեսեալ զՅիսուս հեռուստից՝ վազեաց և երկիր պագին նմա,

7 Եւ գոչեալ ձայնիւ մեծաւ՝ ասէ. զի՞նչ է ինձ և քեզ, Յիսուս որդի աստուծոյ բարձրելոյ. երդուցանեմ զքեզ զաստուած, մի տանջեսցես զիս :

8 Զի ասէր ցնա. ել հոգի պղծոտ ի մարդոյդ :

9 Եւ հարցանէր զնա. զի՞նչ է անուն քո : և ասէ ցնա. զանուն իմ լեգէովն է, զի բազումք եմք :

10 Եւ աղաչէր զնա բազում, մինչև ոչ զարտաքս աշխարհին հանել զնոսա :

11 Եւ էր անդ առ լերինն հօտ խոզից մեծ արածեալ :

12 Եւ աղաչեցին զնա ամենայն դեւքն՝ և ասեն. առաքեա՛ զմեզ յանդ խոզսն, զի մտցուք ի նոսա :

13 Եւ ետ նոցա Յիսուս : և ելեալ դեւքն պղծոտք՝ մտին ի խոզսն, և ընկեցաւ հօտն ի վիմաձորէ ի ծով, իբրև երկուք հազարք, և խեղդեցան ի ծովուն :

14 Եւ արածողքն փախեան, և պատմեցին ի քաղաքի և ի գիւղս. և եկին տեսանել զորչափ եղև :

15 Եւ գային առ Յիսուս՝ և տեսանեն զդիւահարն նստեալ և հագեալ և խելամուտ, զլեգէովնն ունելով, և զարհուրեցան :

16 Եւ պատմեցին նոցա որ տեսին, զիա՞րդ եղև դիւահարին, և զխոզսն :

17 Եւ սկսան աղաչել զնա զի անցցէ ի սահմանաց նոցա :

18 Եւ նա մտեալ ի նաւ՝ աղաչէր զնա դիւահարն զի ընդ նմա լիցի :

19 Եւ ոչ ետ նմա Յիսուս, այլ ասէ ցնա. երթ՝ ի տուն քո առ ազգս քո, և պատմեա նոցա զորչափ քեզ արար տէր, և ողորմեցաւ քեզ :

20 Եւ գնաց՝ և սկսաւ քարոզել ի Դեկապոլիս զորչափ արար նմա Յիսուս, և ամենեքին զարհուրեցան :

21 Եւ անցեալ Յիսուսի յնաւէ յայնկոյս՝ ժողովեցաւ առ նա ամբոխ բազում, և նա էր առ ծովեզերս :

22 Եւ ահա գայ մի ոմն ի պետացն ժողովարանին, որում անուն Յայիրոս, և տեսեալ զնա՝ անկանի առ ոտս նորա,

23 Եւ աղաչէ զնա բազում՝ և ասէ. զի դուստր իմ մեռանի, եկ՝ եդ ձեռն ի վերայ նորա, զի կեցցէ և կեցցէ :

24 Եւ գնայր ընդ նմա, և ամբոխ բազում հետևեալ էին նմա և սեղմէին զնա :

25 Եւ կին մի որ էր ունելով հոսանս արեան տասն և երկու ամ,

26 Եւ բազում չարչարեալ ի բազմաց բժշկաց, և ծախեալ զամենայն զոր ունէր, և ոչ ինչ օգտեալ, այլ առաւել զկնի եկեալ,

27 Եւ լուեալ զՅիսուսէ՝ եկեալ ի բազմութենէն՝ ի ետևէ մերձեցաւ զգեստոյ նորա,

28 Զի ասէր. եթէ զգեստոյ նորա միայն մերձեցայց՝ կեցից :

29 Եւ անդէն ցամաքեցաւ աղբիւր արեան նորա, և ծանեաւ մարմնով իւրով զի բժշկեցաւ ի չարչարանացն :

30 Եւ Յիսուս անդէն գիտացեալ ի նմա զզօրութիւն որ ելեալ էր ի նմանէ՝ դարձեալ ի բազմութենէն՝ ասէ. զի՞ մատաւ ի զգեստս իմ :

31 Եւ ասեն աշակերտք նորա. զի՞ տեսանես զամբոխ զայս սեղմեալ զքեզ, և ասես. զի՞ մատաւ ինձ :

32 Եւ նա նայէր զայրագին տեսանել զայն որ արարեալ էր զայդ :

33 Եւ կինն զարհուրեալ և դողացեալ, գիտացեալ զոր եղև նմա՝ եկեալ անկաւ առաջի նորա, և ասաց նմա զամենայն ճշմարտութիւն :

34 Եւ նա ասէ ցնա. դուստր, հաւատք քո կեցուցին զքեզ, գնա՛ ի խաղաղութիւն, և եղիր առողջ ի չարչարանաց քոց :

35 Եւ դեռ նորա խաւսելոյ՝ գան ի տանէ պետին ժողովարանին՝ և ասեն. զի դուստր քո մեռաւ, զի՞ տրտմեցուցանես զվարդապետ :

36 Եւ Յիսուս լուեալ զբանին՝ ասէ ցպետն ժողովարանին. մի՛ երկնչիր, միայն հաւատա՛ :

37 Եւ ոչ եթող զոք ընդ նմա երթալ, բայց զՊետրոս և զՅակոբոս և զՅովհաննէս զեղբայր Յակոբայ :

38 Եւ գան ի տուն պետին ժողովարանին, և տեսանէ զխռովութիւն, և լալ և ողբալ բազում :

39 Եւ մտեալ՝ ասէ ցնոսա. զի՞ խռովիք և լայք. մանուկն ոչ մեռաւ, այլ քնացեալ է :

40 Եւ ծաղր առնէին նմա : և նա հանեալ զամենեսեան՝ առնու զհայր մանկանն և զմայր նորա, և որ ընդ նմա էին, և մտանէ ուր էր մանուկն պառկեալ,

41 Եւ կալեալ զձեռն մանկանն՝ ասէ ցնա. թալիթա կում, որ է մեկնեալ. մանուկ, քեզ ասեմ, յարի՛ :

42 Եւ անդէն յարոյց մանուկն՝ և սկսաւ երթալ, զի տասն և երկու ամ էր մանուկն : և զարհուրեցան զարհուրմամբ մեծաւ :

43 Եւ պատուիրեաց նոցա բազում՝ զի մի ոք գիտասցէ զայդ, և ասաց տալ ուտել մանկանն :

6 Եւ ելեալ անտի՝ եկն ի գաւառն իւր, և գային զկնի նորա աշակերտք նորա :

2 Եւ եղև ի շաբաթուն՝ սկսաւ ուսուցանել ի ժողովարանին, և բազումք լուեալ զարհուրէին ի վարդապետութենէ նորա, և ասէին. զի՞նչ է այս, և զիա՞րդ տուեալ է այսմ զիմաստութիւնս այս, և զհրաշս որ ձեռաց նորա այսպիսիք լինին :

3 Ո՞չ է սա հնձան որդի, եղբայր Յակոբայ և Յովսեայ և Յուդայ և Սիմոնի, և ո՞չ են քոյր նորա ընդ մեզ : և նեղէին ի նմանէ :

4 Եւ ասէ ցնոսա Յիսուս. ոչ է մարգարէ անպատիւ, բայց ի գաւառի իւրում և ի հարս իւրում և ի տան իւրում :

5 Եւ ոչ կարաց անդ մի ինչ հրաշս առնել, բայց զանդամալոյծս մի ինչ ձեռնադրեալ բժշկեաց :

6 Եւ զարհուրէր ի հաւատոց նոցա : և շրջէր զգեղս ամենայն ուսուցանելով :

7 Եւ կոչեալ զտասն և երկուս՝ սկսաւ առաքել զնոսա երկուս երկուս, և ետ նոցա իշխանութիւն ի վերայ հոգւոց պղծոտաց,

8 Եւ պատուիրեաց նոցա զի մի ինչ առնուցուն ի ճանապարհ, բայց միայն գաւազան, ոչ պարկ, ոչ հաց, ոչ ի գոտի դրամ,

9 Այլ կոշիկս հագեալ, և մի հանդերձ հագանիցին :

10 Եւ ասէ ցնոսա. յորում տեղի մտանիցէք ի տուն, անդ կացէք մինչև ելանիցէք անտի :

11 Եւ որ ոչ ընդունիցի զձեզ և ոչ լուիցէ ձերոյ բանի, ելեալ անտի՝ թօթափեցէք զփոշին որ ի ներքոյ ոտից ձերոց ի վկայութիւն նոցա : ամէն ասեմ ձեզ, հանդուրժելի եղիցի Սոդոմացւոց և Գոմորացւոց յաւուր դատաստանի, քան քաղաքին այնմիկ :

12 Եւ ելեալ՝ քարոզէին զի ապաշխարեսցեն :

13 Եւ դեւս բազումս հանէին, և բազումս իւղաւ օծանէին զանդամալոյծսն, և բժշկէին :

14 Եւ լուաւ Հերովդէս թագաւոր, զի յայտնի եղև անուն նորա, և ասէին. զի Յովհաննէս մկրտիչ յերկունս եղև, և վասն այնորիկ զօրութիւնք գործին ի նմա :

15 Եւ այլք ասէին. զի Եղիա է : և այլք ասէին. զի մարգարէ է, իբրև զմի ոմն ի մարգարէիցն :

16 Եւ լուեալ Հերովդէսի՝ ասէ. զի Յովհաննէս զոր ես հատի զգլուխ, նա յարուցեալ է ի մեռելոց :

17 Զի նա Հերովդէս առաքեալ էր և կալեալ զՅովհաննէս, և կապեալ էր զնա ի բանտի վասն Հերովդիադայ կնոջ Փիլիպպոսի եղբաւր իւրոյ, զի նմա առեալ էր զկին :

18 Զի ասէր Յովհաննէս Հերովդէսի. ոչ իշխես առնել զկին եղբաւր քո :

19 Եւ Հերովդիաս ունէր զնա, և կամէր սպանանել զնա, և ոչ կարէր :

20 Զի Հերովդէս երկնչէր ի Յովհաննէսէ, գիտացեալ զի մարդ արդար է և սուրբ, և պահէր զնա, և լուեալ նորա բազում ինչ առնէ

առաքեաց զնա հայր, և ես ա-
ռաքեմ զձեզ :
19 Գնացէք այսուհետև՝ ա-
շակերտեցէք զամենայն հեթա-
նոսս. մկրտեցէք զնոսա յանուն
Հօր՝ և Որդւոյ՝ և Հոգւոյ սրբոյ :
20 Ուսուցէք նոցա պահել
զամենայն՝ որ ինչ պատուիրե-
ցի ձեզ : և ահաւասիկ ես ընդ
ձեզ եմ զամենայն աւուրս՝
մինչև ի կատարած աշխարհի :

ինչպէս որ հայրը իս խըրկեց,
(անանկ) ես ալ ձեզ կրխրրկեմ՝:
19 Այ ասկէետև գայէք՝ բո-
լոր հեթանոսները աշակերտեցէք.
անունք մկրտեցէք՝ Հօր ու Որդոյ
ու Հոգուն սրբու՝ անունովը :
20 Իրենց սորվըցուցէք որ պա-
հեն ան ամմէն բաները որ(ես) ձեզի
ապըսպրըեցի : ու տեսա ես ալ
ձեր հետն եմ (անպակաս) ամմէն
օր՝ ինչվան աշխրըքին վերջը :

ՍԿԻԶԲԱՆ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ :

ՍԿԻԶԲԱՆ
ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ.

ԳԼ. Ա.

1 Սկիզբն աւետարանի
յիսուսէ քրիստոսի որդւոյ աստուծոյ :
2 Որպէս և գրեալ է ի մարգարէս. ահաւասիկ ես առաքեմ զհրեշտակ իմ առաջի քոյ, որ յանդիման քեզ զճանապարհ քո առաջի քոյ :
3 Ձայն բարբառոյ յանապատի, պատրաստ արարէք զճանապարհ տեառն, և ուղիղս արարէք զշաւիղս նորա :
4 Եղև՝ զի յովհաննէս մկրտիչ յանապատի, և քարոզէր մկրտութիւն ապաշխարութեան ի թողութիւն մեղաց :
5 Եւ երթայր առ նա ամենայն աշխարհն հրէաստանի, և երուսաղեմացիք ամենեքեան. և մկրտէին ի նմանէ

1 Յիսուսի քրիստոսի աստուծոյ որդւոյն աւետարանին ըսկիսալը :
2 Ինչպէս որ մարգարէից մէջ նալ գրված է. (թէ) ահա ես իմ հրեշտակս քու առջևէդ կրխսաւրեմ՝, որ քու ճամբադ քու առջևըդ պատրաստէ :
3 Կանչելու ձանմը անապատին մէջը (կրլսվի՝ թէ) պատրաստեցէք տնը Տէառն, ու շըտկեցէք ա-նոր քալելու գետինը :
4 Ու եղաւ որ՝ յովհաննէս անապատը մկրտութիւն կընէր, ու ապաշխարանաց մկրտութիւն կրքարոզէր՝ մեղաց թողութիւն համար :
5 Ու բոլոր հրէաստանի աշխարքը, ու բոլոր երուսաղէմցիքը անոր կերթային, ու յոր-դանան գետը իրմէն կըմկրտը-

’ի յորդանան գետ՝ խոստովա-
նեալ զմեղս իւրեանց :

6 Եւ էր յովհաննէս զե-
ցեալ սամ՛ ուղտու , և գօտի
մաշկեղէն ընդ մէջ իւր . և կե-
բակուր նորա մարախ՝ և մեղր
վայրենի :

7 Քարոզէր և ասէր . գայ
զօրագոյնն քան զիս զկնի իմ ,
որում՝ չեմ բաւական խոնար-
հել՝ լուծանել զկօշայս նորա :

8 Ես՝ մկրտեցի զձեզ ջրո՛վ ,
և նա մկրտեսցէ զձեզ հոգւո՛վ
սրբով :

9 Եւ եղև յաւուրսն յայնո-
սիկ եկն յս ’ի նազարեթէ գա-
լիլեացւոց , և մկրտեցաւ ’ի
յովհաննէ ’ի յորդանան :

10 Եւ նոյնժամայն ընդ վե-
րանալ ’ի ջրոյն , եահս ցելեալ
զերկինս, և զհոգին այ իբրև
գաղաւնի՝ զի իջանէր ’ի վերայ
նորա :

11 Ձայն եղև յերկնից՝ և ա-
սէ . դու ես որդի իմ սիրելի ,
ընդ քեզ հաճեցայ :

12 Եւ նոյն ժամայն՝ հոգին
հանի զնա յանապատ :

13 Եւ էր նա անդ զաւուրս
քառասուն փորձեա՛լ ’ի սա-
տանայէ . և էր ընդ գազանս ,
և հրեշտակք պաշտէին զնա :

14 Եւ յետ մատնելոյն յով-
հաննու , եկն յս ’ի գալիլեա .
քարոզէր զաւետարանն այ՝ և
ասէր .

15 Թէ կատարեա՛լ է ժամա-
նակ , և հասեա՛լ է արքայու-
թիւնն այ . ապաշխարեցէ՛ք՝ և
հաւատացէ՛ք յաւետարանն :

16 Իբրև անցանէր առ ծով-
եզերբն գալիլեացւոց , եահս
զսիմովն և զանդրէաս եղբայր

վէրն , իբրենց մեղքերին բացէ
բաց պատմելով :

6 Ու յոհաննէսին հագաւտը
ըղտու մազէ էր , ու իրեն մէջը
կաշիէ գօտիմը . ու իրեն կերա-
կուրը՝ մարախ, ու լեռանի մեղրը:

7 Կըքարոզէր ու կըսէր . ին-
ձէն էվէլը զօրաւորը իմ ետևէս
կուգա , (որ ես) արժանի ալ չեմ
ծռեելով իր կօշկիներուն կա-
պերը արձկելու :

8 Ես՝ ձեզ ջրով մկրտեցի, ու
ան ձեզ հոգին սրբով պիտի մը-
կրըտէ :

9 Ու եղաւ որ՝ ան օրերը յս գա-
լիլեացւոց նազարեթէն եկաւ, ու
յորդանանը՝ յոհաննէսէն մկրտը-
վեցաւ :

10 Ու շուտմը՝ ջրէն վեր ելլա-
լունպէս՝ (ան) տեսաւ որ երկինքը
Ճրխկրվեցաւ, ու այ հոգին աղվը-
նիվպէս՝ որ անոր վրա կիջնար .

11 Երկընքէնալ ձանմը եղաւ՝
որ կըսէր . դուն իմ սիրական որ-
դիս ես , քեզմէ հաւնեցայ :

12 Ու շուտմը հոգին՝ ինքը
անապատը հանեց :

13 Ու քառասուն օր ինքը ան
տեղն էր՝ սատանայէն կըփորձը-
վէր . ու գազաններու հետ էր , ու
հրեշտակներ իրեն կըծառայէին :

14 Ու յոհաննէսը մատնըված
բռնըվելէն ետև՝ յս գալիլեա ե-
կաւ . այ աւետարանը կըքարո-
զէր՝ ու կըսէր .

15 Թէ՝ ալ ատենը լըմընցած
է , ու այ արքայութիւնը հասեր է:
ապաշխարեցէ՛ք՝ ու աւետարանին
հաւատացէ՛ք :

16 Երբոր (ինքը) գալիլեացւոց
ծովեզերքէն կանցնէր . տեսաւ սի-
մոնը՝ ու սիմոնին եղբայրը՝ անդ-

ոխմոխի, զի արկեալ էր նո_ ցա ուռկանս ի ծով. քանզի ձկնորք էին :

17 Եւ ասէ ցնոսա յի՟. և_ կայք զկնի իմ, և արարից զձեզ լինել որսորդս մարդկան :

18 Եւ վաղվաղակի թողեալ զուռկանսն, գնացին զհետ նո_ ցա :

19 Եւ մատուցեալ անտի՝ սակաւիկ մի յառաջ, եահս զյա_ կովբոս զեբեդեայ և զյովհան_ նէս եղբայր նորա, և զնոսա ի նաւին՝ մինչ կազմէին զուռ_ կանս, և կոչեաց զնոսա :

20 Եւ վաղվաղակի թողեալ զհայրն իւրեանց զեբեդէոս ի նաւին՝ վարձականսքն հանդերձ, գնացին զհետ նորա :

21 Եւ մտանէին ի կափառ_ նաւմ. և իսկ և իսկ ի շաբա_ թուն մտեալ ի ժողովուրդն, ուսուցանէր զնոսա :

22 Եւ զարմանային ընդ վարդապետութիւն նորա, զի ուսուցանէր զնոսա իբրև իշխա_ նութեամբ՝ և ոչ որպէս գպիր_ քըն :

23 Եւ էր ի ժողովրդեանն նոցա այր մի, յորում այս պիղծ ոգի ի նմա. որ աղաղակեաց՝ և ասէ .

24 Թո՛յլ տուր, զի՞ կայ՝ մեր և քո՝ յի՟ Նազովրեցի, եկիր կո_ րուսանել զմեզ. գիտեմ զքեզ՝ ով ես, սուրբն ա՛յ :

25 Այտուեաց ի նա յի՟ և ասէ. կարկեաց՝ և ել ի նմա_ նէ :

26 Եւ զարկոյց զնա այն պիղծ. և աղաղակեաց ի ձայն մեծ, և ել ի նմանէ :

27 Եւ զարմացան ամենե_ քեան, մինչև հցծել ընդ մի_ րիասբ, որ անոնք ծովը ուռկան ձգերէին. ինչու որ՝ (իրենք) ձկնորս էին :

17 Ու յի՟ անոնց ըսաց. իմ ե_ տևէս եկէք, ու ձեզ ընեմ որ մարդոց որսորդ ըլլաք :

18 Ու շուտմը ուռկաններն թո_ ղուցին՝ իր հետը գացին :

19 Անկէցալ քիչկմը առաջ որ գնաց՝ տեսաւ յակոբոս զեբե_ դեանը, ու անոր յոհաննէս եղբա_ րը : ու իրենք որ նաւին մէջը ուռկաններն շտկըռտելու հետ էին, անոնք ալ կանչեց :

20 Ու շուտմը (անոնք) իրենց զեբեդիոս հարը վարձկաններուն հետ նաւին մէջը թողած՝ իր հե_ տը գացին .

21 Ու կափառնայում մտան, ու ալ շուտմը ան շաբաթ օրը ժողովարանը մտած՝ անոնք կը_ սորվեցուներ :

22 Ու կարմբեննային իրեն վար_ դապետութեանը վրա, որ ինքը իշխանական կերպովմը իրենք կը_ սորվեցուներ, ու չէ թէ ան կար_ գացողներուներէս :

23 Ու անոնց ժողովարանը մէկ մարդմը կար, որ իր մէջը պիղծ դեմը ունէր. որ ան կանչըռտեց ու ըսաւ .

24 Թո՛ղ տուր՝ դուն մեր հետը ինչ բան ունիս՝ յի՟ Նազորեցի, (որ) եկար մեզ կորսընցընելու. քեզ գիտենք ով ես՝ այ սո՛ւրբը :

25 Յի՟ չեմեց ինքը՝ ու ըսաց . պապրծձէ՝ ու ատկէց ելիր :

26 Պիղծ դևնալ անիկա դեպի_ նը զարկաւ. ու սաստիկ ձանով կանչըռտեց, ու անկէց եյաւ :

27 Ու ամէնքը արմբնցած մնացին, անանկ որ՝ մէյմէկու հետ

մանս՝ և ասել . զինչ է այս նոր վարդապետութիւնս , զի իշխանութեամբ և այսոց պըղծոց սաստէ, և հնազանդին սմա:

28 Եւ էլ լուր նորա ընդ ամենայն կողմն գալիլեացւոց :

29 Եւ վաղվաղակի ելեալ ի ժողովրդենէն , եկն ի տունն սիմոնիւ և անդրեասւ՝ յակովբայ և յովհաննու հանդերձ :

30 Եւ զաքանչ սիմոնիւի զնէր ջերմացեալ . և վաղվաղակի ասեն ցնա վասն նորա :

31 Եւ մատուցեալ յարոյց զնա՝ կալեալ զձեռանէ նորա . և եթող զնա տենդն , և պաշտէր զնոսա :

32 Եւ երբև երեկոյ եղև՝ ի մտանել արեգականն , բերին առ նա զամենայն հիւանդս և զդիւահարս :

33 Եւ էր ամենայն քաղաքն ժողովեալ առ դուրսն :

34 Եւ բժշկեաց բազում հիւանդս ի պէսպէս ախտից . և զդևս բազումս եհան , և ոչ տայր խօսել դիւացն , զի գիտէին զնա՝ թէ քրն է :

35 Եւ ընդ այգ ընդ առաւօտն՝ յարուցեալ՝ ել և գնաց յանապատ տեղի , և անդ կայր յաղօթս :

36 Եւ զնաց զհետ նորա սիմոնի՝ և որ ընդ նմայն էին :

37 Եւ երբև գտին զնա՝ ասեն ցնա , թէ ամենեքին խնդրեն զքեզ :

38 Եւ ասէ ցնոսա . եկայք երթիցուք և յայլ մատուռս գիւղաքաղաքսն , զի և անդ քարոզեցից . զի յայս իսկ եկեալ եմ:

39 Եւ քարոզէր ի ժողովուրդս նոցա ընդ ամենայն գալիլեացիս , և զդևս հանէր :

կըփըսփըսային ու կըսէին. աս ինչ նոր (կերպ) վարդապետութիւն է . որ իշխանաբար պիղծ դևերնալ կը չեխչ, ու իրեն կըհնազանդին:

28 Ու իր անունը բոլոր գալիլեացոց կողմերը ելաւ :

29 Ու շուտմը ան ժողովարանէն դուրս որ ելաւ՝ սիմոնին ու անդրիասին տունը գնաց՝ յակոբին ու յոհաննէսին հետը :

30 Սիմոնին զանքանչնալ տնտուղ պառկած էր . ու շուտմը անոր համար իրեն ըսին :

31 Ու գնաց անոր ձեռքէն բռնեց ինքը վեր վերուց . ու տենդը ան թողուց , որ ալ իրենց ծառայութիւն կընէր :

32 Երբոր ալ իրիկուն եղաւ՝ արևն որ մտաւ , բոլոր հիվընդներն ու դիվահարները իրեն բերին :

33 Բոլոր քաղաքն ալ (տանը) դրռանը աւելի ժողվերէին :

34 Ու շատ հիվընտներ կերպ կերպ ցաւերէ բռժշկեց . ու շատ դևեր հանեց . ու դևերուն թող չէր իտար որ խօսին , որ ան գիտնան թէ քրն է :

35 Ու առտուվանց լուացածին պէս վեր կեցաւ՝ ելաւ ու (առանձին) անապատ տեղմը գնաց . ու հոն աղօթքի հետ էր :

36 Սիմոննալ իր եաւէն գնաց, ու անոնք ալ՝ որ անոր հետն էին :

37 Ու երբոր ինքը գտան՝ իրեն ըսին որ՝ ամմէնքը քեզ կըփընտռենկոր :

38 Ու անոնց ըսաց . եկէք ուրիշ մօտ մանրը քաղբըները երթանք՝ որ հոնալ քարոզեմ . ինչու որ (ես) ասոր համար եկերեմ:

39 Ու բոլոր գալիլեացոց երկիրը իրենց ժողովարանները մէջը կըքարոզէր, ու դևեր կըհանէր :

40 Գայ առ նա բորոտ մի, աղաչէր՝ ՚ի ծունր իջանէր՝ և ասէր, տէր՝ եթէ կամիս, կարող ես զիս սրբել :

41 Ի՚սկ յն զթացեալ՝ ձգեաց ձեռն, մերձեցաւ ՚ի նա՝ և ասէ ցնա · կամիմ՝ սրբեաց :

42 Եւ իբրև ասացն ցնա, վաղվաղակի գնաց ՚ի նմանէ բորոտութիւնն, և սրբեցաւ :

43 Եւ սաստեալ նմա՝ եհան գնա արտաքս վաղվաղակի, և ասէ ցնա .

44 .Օ.գոյշ լեր, մի ումեք ինչ ասիցես . այլ երթ ցոյց դեզ քահանային, և մատո վասն սրբութեան քոյ պատարագ՝ զոր հրամայեաց Մովսէս, ՚ի վկայութիւն նոցա :

45 Եւ նա ելեալ սկսաւ քարոզել յոյժ, և հռչակ տարածանել զբանն, մինչ ոչ ևս կարող լինել նմա յայտնապէս ՚ի քաղաք մտանել, այլ արտաքոյ յանապատ տեղիս էր . և գային առ նա յամենայն կողմանց :

40 Իր քովը բորոտմը եկաւ, կաղաչէր՝ ծունկ կը՚ոքէր՝ ու կըսէր· տէր՝ թէ որ ուզանէ՝ իս կրնաս մաքրել :

41 Յանկած խեղճը եկաւ՝ ձեռքը երկնցուց իրեն մօտեցաւ՝ ու անոր ըսաց· կուզեմ՝ որ մաքրըվիս:

42 Ու (աս) որ ըսաց անոր, շուտմը բորը վըսյին գնաց՝ ու մաքրըվեցաւ :

43 Ու անիկա սրստեցրնելով շուտմը քովէն զուրս հանեց, ու իրեն ըսաց ·

44 Ըզգաշ կեցիր՝ մէկումը բանմը չըսես · հապա՝ գնա քեզ քահանային ցրցուր, ու քու սրբըվելուդ համար ընծան տուր՝ ան որ Մովսէսը հրամմերէ, (աս՚) իրենց վկայութիւնի համար :

45 Այնպէս ելաւ էվելըը լսկրսաւ քարոզել, ու բանը սաստիկ ձանձրնեց · անանկ որ՝ ալ ինքը կարող չէր յայտնի քաղաքը մրտնալ, հապա՝ դուրս անմարդի տեղվանք կըկենար · ու ամմէն կողմերէն իր քովը կուգային :

ԳԼ · Բ ·

1 Եւ մտեալ դարձեալ ՚ի կափառնաում, լսեա աւուրց

2 Լ՚ուեալ եղեւ եթէ ՚ի տան է · և ժողովեցան բազումք՝ մինչև տեղի ևս ոչ լինել՝ և ոչ առ դրանն . և խօսէր նոցա զբանն :

3 Եւ գային առ նա՝ բերելին անդամալոյծ մի՝ բարձեալ ՚ի չորից :

4 Եւ իբրև ոչ կարէին մերձենալ առ նա՝ յամբոխն անտի, քակեցին զտարկն ուր էր յն, և բացեալ զառաստաղն՝

1 Ու նորէն կափառնայում որ մտաւ, քանիմը օրէն եան

2 Լ՚ավեցաւ որ (ինքը) առունն է · ու շատվոր (վըսյն) ժողվեցան, անանկ որ՝ ալ տեղ չեկար, ու ոչալ դրսանն առջեր : ու անոնց (այ) բանը կըխօսէր :

3 Ու եկան իրեն մէկ անդամլումմը բերին՝ ան չորս հոգի բռնած վերցուցած :

4 Ու անշաւի դիզված մարդէն՝ որ չէին կրնար իրեն մօտիկնար, ալ ան (տանը) ծածկը քակեցին՝ ուր որ յն էր, ու վըսյի առէքը

լչուցին զմահիճսն՝ յորում կայր անդամալոյծն :

5 Եւ տեսեալ յի՛սի վճաւաոս նոցա, ասէ ցանդամալոյծն. որդեակ՝ թողեալ լեցին քեզ մեղք քո :

6 Եւ էին ոմանք ի զպրաց անտի՝ որ անդ նստէին. և խորհէին ի սիրտս իւրեանց,

7 .Ո՛՞րպէս է այս՝ որ խօսի սա զհայհոյութիւնս. ո՞վ կարէ թողուլ մեղս, եթէ ո՛չ միւն աստ :

8 Եւ գիտաց յի՛սի յոգի իւր՝ թէ այնպէս խորհին ի սիրտս իւրեանց, և ասէ. զի՞ խորհիք զայդ ի սիրտս ձեր :

9 .Ո՛րն՞ գիւրին է, ասել ցանդամալոյծն՝ թողեալ լեցին քեզ մեղք քո, եթէ ասել՝ ա՛ռ զմահիճս քո և երթ ի տուն քո :

10 Այլ զի գիտասջիք եթէ իշխանութիւն ունի որդի մարդոյ ի վերայ երկրի՝ թողու՛լ մեղս. ասէ ցանդամալոյծն.

11 Քեզ ասեմ, արի՛ առ զմահիճս քո՝ և երթ ի տուն քո :

12 Եւ յարեաւ. և վաղվաղակի առեալ զմահիճսն, ել առաջի ամենեցուն. մինչև զարմանալ ամենեցուն՝ և փառաւորս առնել զԱստ և ասել, թէ այսպիսի՛ն՞ երբեք՝ ոչ տեսաք :

13 Եւ ել զաբդեալ ի ծովեղերն, և ամենայն ժողովուրդն գայր առ նա. և ուսուցանէր զնոսա :

14 Եւ մինչ գնա անցանէր, տեաս զգնի ալփեայ՝ զն նստէր ի մաքսաւորութեան. և ասէ

ցացած՝ մահիճը անդալուձնալ մնչը անանկ վար ինչեցուցին :

5 Ու յի՛սի անոնց հաւատքը տեսնելով՝ անդամալուձին ըսաց. որդեակ՝ թող քու մեղքերըդ քեզի թողվին :

6 Կարդացողներէն ալ մին քանի մը կային՝ որ հոն նստեր էին. ու իրենց սրտին մէջը կըմտմտային, (թէ),

7 Այն ի՞նչ է՝ որ ասիկա հայհոյութիւնք կըխօսի. ո՞վ կրնա մեղք թողուլ, թէ չէ միայն Աստ (միան) :

8 Յի՛սու ալ իր հոգուն մէջը խմացաւ՝ որ իրենց սրտերնուն մէջ անանկ կըմտմտանկոր՝ ու ըսաց. (դուք) ձեր սրտին մէջը ատ ինչ կըմտմտաք կոր :

9 Ո՞րը ալ չէշտ է, անդամալուձին ըսե՞լը մի՝ քու մեղքերըդ քեզի թողվին, թէ (աս) ըսելը՝ ելլէր քու մահիճըդ առ, ու քու տունըդ գնա՛ :

10 Ուսաի աս գիտնաք որ՝ որդին մարդոյ երկրի վրա իշխանութիւն ունի մեղաց թողութիւն տալու. (ատանկ՝) անդամալուձին ըսաց.

11 Քեզի կըսեմ. ելլէր քու մահիճըդ առ՝ ու քու տունըդ գնա՛ :

12 Անոնք կայնեցան, ու շուտ մը մահիճը առած՝ ամէնուն առջև (դուրս) ելաւ. որ ալ ամէնքը արմըծցան՝ ու Աստ կըփառաւորէին, ու կըսէին. թէ՝ եսկի ասանկ բան չենք տեսած :

13 Ու նորէն դէպի ծովեզերքը ելաւ, ու բոլոր ժողովուրդը իրեն կուգար. ու անոնք կըսորվեցուներ :

14 Ու անցնիլ երթալնին՝ տեսաւ զԼեւի ալփեանը՝ որ նստէր մաքսաւորութեան կընէր. ու իրեն

ցնա, եկ զկնի իմ: և յարու-
ցեալ՝ գնաց զկնի նորա:

15 Եւ եղև՝ ի բազմել նո-
ցա ի տան նորա, և բազում
մաքսաւորք և մեղաւորք բազ-
մեալ էին ընդ յի՛ն և ընդ ա-
շակերտան նորա. քանզի էին
բազումք՝ որ երթային զհետ
նորա:

16 Եւ դպիրքն և փարիսե-
ցիք իբրև տեսին՝ թէ ուտէ
ընդ մաքսաւորս և ընդ մեղա-
ւորս, ասեն ցաշակերտան նորա.
զի է՝ զի ընդ մեղաւորս և ընդ
մաքսաւորս ուտէք և ըմպէք:

17 Իբրև լուաւ յի՛ն՝ ասէ
ցնոսա. ոչ ինչ է պիտոյ բժիշկ
ողջոց, այլ հիւանդաց: և ոչ
եկի կոչել զարդարս՝ այլ զմե-
ղաւորս:

18 Եւ էին աշակերտքն յով-
հաննու և փարիսեցիքն ի պա-
հըս, գան և ասեն ցնա. ընդ-
է՞ր աշակերտքն յովհաննու՝ և
փարիսեցիքն պահեն, և քո ա-
շակերտքդ ոչ պահեն:

19 Եւ ասէ ցնոսա յի՛. մի
եթէ մա՞րթ ինչ լցէ որդւոց ա-
ռագաստի՝ մինչ ընդ նոսա ի-
ջէ փեսայն՝ պահել. ցորքան
ընդ իւրեանս ունիցին զփեսայն,
ոչ է մարթ պահել:

20 Այլ եկեսցեն աւուրք՝
յորժամ՝ վերասցի ի նոցանէ
փեսայն, և ապա պահեսցեն
յաւուրն յայնմիկ:

21 Ո՛չ ոք կապերտ նոր ան-
թափ՝ արկանէ ի վերայ հնա-
ցեալ ձորձոյ. ապա թէ ոչ՝
առնու լրումն իւրոյ
նորն ի հնոյ անտի, և չար ևս
պատառումն լինի:

22 Եւ ոչ ոք արկանէ զկնի
բասց. իմ եաւէս եկոր: անաւ
եւաւ՝ անօր եաւէն գնաց:

15 Ու եղաւ՝ որ ինքը անօր
տունը հացի նստեր էր, ու շատ
մաքսաւորներ ու մեղաւորներ՝ յի՛
ու իր աշակերտներուն հետ (հան)
սեղան նստեր էին. պատճառն որ
շատ մարդիք իր հետը կերթային:

16 Բայց կարգացողներն ու փա-
րիսեցիները երբոր տեսան՝ որ
մաքսաւորներուն ու մեղաւորնե-
րուն հետը կուտէ, իրեն աշակեր-
տացը ըսին. ատ ինչ է որ՝ մաք-
սաւորներուն ու մեղաւորներուն
հետը կուտէք ու կրնըմպէք:

17 Յիսո երբոր (ատ) լսեց՝ անոնց
բսաւ. ոխտերուն բժիշկ պէտքը
չէ, հապա՝ հիվընդներուն: ու
(ես) չեկա արդարները կանչելու,
հապա՝ մեղաւորները:

18 Ու յոհաննէսի աշակերտնե-
րը ու փարիսեցիները պաքի մէջ
էին, եկան ու իրեն ըսին. ինչու
յոհաննէսի աշակերտները ու փա-
րիսեցիները պաք կըպահեն, ու
քու աշակերտներդ չեն պահեր:

19 Յիսո ալ անոնց բսաւ. ան
ըլլալու բան է որ հարսնիքի մար-
դիքը պաք պահեն՝ քանի որ փե-
սան հետերնին է. (հապա՝) քանի
որ փեսան հետերնին ունին՝ չի
վայերը որ պաք պահեն.

20 Բայց ան օրերը պիտի գան՝
որ փեսան իրենցմէ վերցրվի, ու
հապա թէ՝ ալ ան օրը պաք պա-
հեն:

21 Ձըլլաը որ՝ մէկը նոր չիմա-
շած (լաթի) կտորը հին հագրստի
վրա կարկըտան ձգէ. թէ չէ՝ ան
նորը՝ իր ուժովը հինը կըքաշէ,
ու պատռըմածը ալ վատ կըլլա:

22 Ու ձըլլաը՝ որ մէկը նոր գինին

նոր՝ ՚ի տիկս հինս. ապա թէ ոչ՝ պայթուցանէ զինին զտիկսն, զինին հեղու՝ և տիկքն կորնչին. այլ զինի նոր՝ ՚ի տիկս նորս արկանելի է:

23 Եւ եղև նմա ՚ի շաբաթու անցանել ընդ արտորայս. և աշակերտքն ՚ի գնալն իւրեանց սկսան հասկ կորզել և ուտել:

24 Եւ փարիսեցիքն՝ ասեն ցնա. տես՝ զինչ գործեն աշակերտքն քո ՚ի շաբաթուս՝ զոր չէ արժան:

25 Եւ ասէ ցնոսա յս. ոչ երբէք իցէ ընթերցեալ ձեր՝ զոր արարն դաւիթ, յորժամ պիտոյն եղև, և քաղցեաւ՝ նա և որ ընդ նմայն էին:

26 Ո՞ւ քահանդ եմուտ ՚ի տունն այ առ աբիաթարայ քահանայապետիւ, և զհացսն զաւանդաւորութեան ևկեր՝ և ետ և այնոցիկ որ ընդ նմայն էին: զոր ոչ էր օրէն ուտել, բայց միայն քահանայիցն:

27 Եւ ասէ ցնոսա. շաբաթ՝ վասն մարդոյ եղև, և ոչ երկ մարդ վասն շաբաթու:

28 Այսպա ուրեմն՝ տէր է որդի մարդոյ՝ և շաբաթու:

հին տրկերու մէջ լեցնէ. չապա թէ չէ՝ ան զինին տրկերը կրձթեցնէ. զինին կերթայ, ու տրկերը կկորչանան. հապա՝ նոր զինին՝ նոր տրկերու մէջ լեցնելու է:

23 Ու եղաւ որ շաբաթի օրը ինքը արտերու միջէն անցաւ. ու աշակերտները երթալէնին ընկան (ցորեան) հասկ փրցունել, ու ուտել:

24 Փարիսեցիներնայ իրեն ըսին. նայէ որ քու աշակերտներդ շաբաթ օրը ինչ գործք կընեն, որ ան չընար ընել:

25 Յիսուս ալ անոնց ըսաւ. դուք իսկի չէք ի կարդացեր ան որ դաւիթ ըրաւ՝ երբոր պէտք եղաւ. ու ինքը ու անոնք որ իր հետն էին՝ անօթենալու որ եղան.

26 Ան ինչպէս այ տունը մտաւ՝ աբիաթար քահանայապետին օրը, ու առաջաւորութեան հացերը կերաւ, ու անոնցալ տուաւ որ իր հետն էին: որ ան ուտելը՝ ուրիշին չէր կրնար՝ որ միայն քահանաներուն:

27 Ու իրենց ըսաց. շաբաթը մարդու համար եղաւ, ու չէ թէ մարդը շաբաթի համար:

28 Այսանկ որ՝ որդին մարդոյ՝ շաբաթինալ տէրն է:

ԳԼ. Գ.

1 Եւ եմուտ միւսանգամ ՚ի ժողովուրդն. և էր անդ այր մի՝ որոյ ձեռն իւր զօսացեալ էր:

2 Եւ սպասէին նմա՝ եթէ բժշկեսցէ զնա ՚ի շաբաթուն. զի չարախօսեսցեն զնմանէ:

3 Եւ ասէ ցայրն՝ որոյ ձեռնն

1 Մէյմալ նորէն ժողովարանը մտաւ. ու հոն մէկ մարդմը կար՝ որ անոր ձեռքը չորցած էր:

2 Ու իրեն կըսպասէին որ շաբաթօրը անիկա բժշկի՝ որ իր վրան քէշ գըտնեն:

3 Ու ան մարդուն որ իր ձեռ-

գօսացեալ էր · արի ասոց ՚ի
մէջ :
4 Եւ ասէ ցնոսա · զինչ
արժան է ՚ի շաբաթու , բարի՞
ինչ գործել՝ եւթէ չար առնել ,
զի մի ապրեցուցանել՝ եւթէ
կորուսանել : և նոքա լռեցին :
5 Եւ հայեցեալ յի՛ն զնո-
քօք լի՛ ցասմամբ , տրտմեալ
վասն կուրութեանը սրտից նո-
ցա , ասէ ցայրն · ձգեա՛ զձեռն
քո · և նա ձգեաց , և ողջացաւ
ձեռն նորա :
6 Եւ ելեալ արտաքս վայ-
վաղակի փարիսեցիքն հերով-
դիանոսաքն հանդերձ , խորհուրդ
առնէին վասն նորա՝ թէ զիարդ
կորուսցեն զնա :
7 Իսկ յի՛ աշակերտաքն իւ-
րովք զնաց ՚ի ծովեզրն · և բա-
զում ժողովուրդ ՚ի գալիլեացա-
ւոց եւթայեն զետ նորա . և
՚ի հրեաստանէ ,
8 Եւ յերուսաղեմէ , և յայն-
կայս յորդանանու , և որք ՚ի
տիւրոսէ և ՚ի սիդոնիէ· բա-
զում ժողովուրդ իբրև լսէին
որչափ ինչ առնէր՝ գային ա-
նա :
9 Եւ ասէ ցաշակերտան իւր,
զի նաւակ մի պատրաստական
կացէ նմա վասն ամբոխին՝ զի
մի նեղեսցեն զնա :
10 Քանզի զբազումս բժշկ-
եաց · մինչ գալ խնդել զնո-
վա՝ զի մերձենացին առ նա ,
որք ունէին ախտս ինչ :
11 Եւ այսք պիղծք յորժամ
տեսանէին զնա , անկանէին ա-
ռաջի նորա , աղաղակէին և
ասէին ,
12 Թէ զո՛ւ ես որդի այ · և
քրը չորցած էր՝ ըսաց · ելիր (չաս)
մէջ տեղը կեցիր :
4 Ու անոնց ըսաւ · շաբաթի օրը
ինչ կրվայլէ (ընել) · բարիք մը
գործել , թէ չարիք ընել · մէկ
հոգիմը ապրեցընել , թէ կորսըն-
ցունել : անոնք լալ մնացին :
5 Յի՛ւ ալ սաստիկ սրդոզած՝ ա-
նոնց վրայովնին նայեցաւ՝ իրենց
սրտերնուն կուրութեանը համար
ցաւելով . ան մարդուն ըսաց , ձեռ-
քըդ երկրնցուր · ան ալ երկրն-
ցուց , ու անոր ձեռքը սխՀնցաւ :
6 Ու փարիսեցիները շուտմը
դուրս ելան հերովդէսեաններուն
հետ միասին՝ իր վրա խորհուրդ կը-
նէին՝ որ ի՛նտոր ինքը փըճացու-
նեն :
7 Յի՛ւ ալ իր աշակերտներովը
ծովեզերքը գնաց · ու գալիլեա-
ցիներէն շատ ժողովուրդ ալ իր ե-
տևէն կերթային , ու հրեաստա-
նէն ,
8 Ու երուսաղեմէն , ու յորդա-
նանի մէկալ գնացէն , ու տիւ-
րոսէն ու սիդոնէնալ (եկած) · շատ
ժողովուրդ որ բոլոր իր ըրած բա-
ներն որ կըլսէին՝ իրեն կուգային :
9 Ու ալ իր աշակերտներուն
ըսաց , որ իրեն մէկ նաւիկմը
պատրաստ կենա ան ժողովրդնե-
րուն պատՀառովը՝ որ ինքը նե-
ղը չձգեն :
10 Ինչու որ՝ շատերուն բժշկ-
կութիւն ըրաւ , անանկ որ՝ ալ ե-
կան վրան թաւիլեցան որ իրեն
դպչին՝ անոնք որ մէկ ցաւումը
տէր էին :
11 Ու պիղծ դևերը որ տեսն
ինքը կրտեսնէինէ՝ իրեն առջևը
կիյնային՝ կըգոչվըտային ու կը-
սէին ,
12 Որ դուն այ որդին ես : ան-

նա՝ յոյժ սաստէր նոցա, զի մի յայտնի առնիցեն զնա :

13 Եւ անկ ՚ի լեառն՝ և կո_չէ առ ինքն զորս ինքն կամէ_ցաւ . և եղեն առ նա :

14 Եւ արար երկոտասանս՝ զի իցեն զնովաւ, և զի առա_քեսցէ զնոսա քարոզել .

15 Եւ ունել իշխանութիւն բժշկելոյ զցաւս՝ և հանելոյ զդեւս :

16 Եւ եդ անուն սիմոնի՝ պետրոս .

17 Եւ յակովբոս զեբեդեայ՝ և յովհաննու եղբօրն յակով_բայ՝ եդ նոցա անուանս՝ բա_նեռեդէս, որ է՝ որդիք որոտ_ման :

18 Եւ զանդրէաս, և զփի_լիպպոս , և զբարթողոմէոս , և զմատթէոս զմաքսաւորն, և զթովմաս, և զյակոբոս ալ_փեայ, և զթադէոս, և զսիմոն կանանացի .

19 Եւ զյուդա սկարիովտա_ցի , որ և մատնեացն զնա :

20 Գան ՚ի տուն , և զայ միւսանգամ ընդ նոսա ժողո_վուրդն . մինչ զի և չկաց ևս՝ ոչ ժամանել ուտել նոցա :

21 Եւ իբրև լուան՝ որ ի՛ր_քունն էին՝ ելին ունել զնա , զի համարէին թէ մոլեգնեալ է :

22 Եւ գրիբքն՝ որ յերու_սաղեմ իջեալ էին, ասէին թէ բէեղզեբուղ դոյ ՚ի գմա , և իշխանաւ դիւացն հանէ դա զդեւս :

23 Եւ կոչեցեալ զնոսա առ ինքն , առակօք խօսէր ընդ նո_սա . զի՞րդ կարէ սատանայ զսատանայ հանել :

24 Եւ արդ՝ եթէ թագա_ւ սատիկ կրնեխեր անոնք՝ որ ինքը յայտնի չընեն :

13 (Ինքը) մէկ լեռը կելլէ, ու իրեն կըկանչէ անոնք որ ինքը կամենայ . ու իր քովը գացին :

14 Ու տասներկու հոգի կրչա_տատէ որ իր հետն ըլլան , ու որ՝ զանոնք քարոզելու խրկէ .

15 Ու իշխանութիւն ունենա_լու՝ որ ցաւերը բժշկեն՝ ու դևեր հանեն :

16 Ու սիմոնին անունը՝ պետ_րոս դրաւ .

17 Ու զեբեդեան յակոբին , ու յակոբին յոհաննէս եղբօրը՝ ա_նոնց անունը՝ բանեռեդէս դրաւ . որ որոտումի որդիք ըսել է :

18 Ու անդրիասը . ու փիլիպո_սը . ու բարթողոմէոսը . ու մա_թէոս մաքսաւորը . ու թոմասը . ու յակոբոս ալփեանը . ու թա_դէոսը , ու սիմոն կանանացին .

19 Ու յուդա իսկարիոտացին, ան որ ինքը մատնեց :

20 Եւ տուն եկան , ու նորէն ժողովուրդներնալ անոնց չհոը եկան . անանկ որ՝ առեն ալ չե_ղաւ որ իրենք հացերնին ուտեն:

21 Ու երբոր իր մարդիքը (ան) լսեցին , ելան որ ինքը բռնեն . որ անանկ կըսեպէին թէ խելքէն ելաւ :

22 Ու ան կարգացուցիչներն որ երուսաղէմէն ինջերկին՝ կըսէին որ առորներոը բէեղզեբուղ կա, ու դևերուն իշխանին ձեռքով ա_տիկա դևեր կըհանէ :

23 Եւ անոնք իր քովը կան_չեց , առակներով անոնց հետը խօսելաւ, (թէ) ի՞նտոր կրնա սատանան՝ սատանան հաներ :

24 Ինչպէս՝ թէ որ մէկ թագաւո_

լորութիւն յանձն իւր բաժա-
նեսցի, ոչ կարէ կալ թագա-
լորութիւնն այն :

25 Եւ եթէ տուն յանձն իւր
բաժանեսցի, ոչ կարէ կալ
տունն :

26 Եւ եթէ սատանայ ՚ի
վերայ անձին իւրոյ յարեաւ՝
և բաժանեալ իցէ, ոչ կարէ
կալ· այլ վախճանեալ է :

27 Այլ ոչ ոք կարէ զկա-
բասի տղբրի՝ մտեալ ՚ի տուն
նորա աւար հարկանել, եթէ
ոչ նախ զկզօրն կապիցէ, և
ապա զտունն նորա աւար հա-
րկանիցէ :

28 Ամէն ասեմ ձեզ, զի ա-
մենայն թողցի որդւոց մարդ-
կան մեղք և հայհոյութիւնք՝
որչափ և հայհոյեսցեն :

29 Բայց որ հայհոյեսցէ ըզ-
հոգին սուրբ, ոչ ունիցի թո-
ղութիւն յաւիտեան, այլ
պարտապան լինի յաւիտենից
մեղաց :

30 .Օ՚ի ասէին՝ թէ ոգի
պիղծ ունի ՚ի նմա :

31 Գան եղբարքն և մայր
նորա, և արտաքոյ կացեալ՝
յղեցին և կոչէին զնա :

32 Եւ անդ ժողովուրդն
շուրջ զնովաւ նստէր· և ասացին
ցնա, ահաւասիկ մայր քո և եղբարք քո՝ կան
արտաքոյ, և խնդրեն զքեզ,

33 Պատասխանի եւս նոցա
և ասէ· ո՞վ է իմ մայր՝ կամ
եղբարք :

34 Հայեցաւ շուրջ զնովաւ
յաշակերտսն զի նստէին, և ա-
սէ· ահաւասիկ մայր իմ, և
եղբարք իմ :

35 .Օ՚ի որ առնէ զկամս Այ,
րութիւնմը՝ ինք իրեն միջը բաժ-
նըվելու ըլլա, ան թագաւորու-
թիւնը չի կրնար (հաստատ) կենար :

25 Ու թէ որ միկ տունմը ինք
իրեն միջը բաժնըվի՝ ան տունը
չի կրնար կենար :

26 Ու թէ որ սատանան ալ ինք
իր անձին դէմ ելեր է, ու բաժան-
մունք ունի՝ ան չի կրնար կե-
նար, հապա ալ վերջացած է :

27 Ասաւ որ՝ միկը չի կրնար
ուժեղ (մարդումը) տունը մտած՝
անոր բաները թալանել· թէ որ
առաջ ան ուժեղը չի կապե, ու
հապա թէ անոր տունը թալանէ :

28 Ճշմարիտ ձեզի կըսեմ· որ՝
մարդոց որդոցը բոլոր մեղքերն ու
հայհոյրանքը՝ որքան ալ հայ-
հոյեն՝ կրթողվի :

29 Բայց ան որ հոգին սուրբը
կրհայհոյրէ, յաւիտեան թողու-
թիւն չունենար, հապա՝ յաւիտեան
(դատապարտըվելու) մեղաց պար-
տական կըլլա :

30 Ա՛ն՝ անոր համար, որ կըսէին
թէ ատոր ներսը պիղծ ոգի կա :

31 Եւ եղբայրները ու իր մայրը
եկան, ու դուրսը կեցած՝ խըր-
կեցին ու ինքը կրկանչէին :

32 Ու հոն ժողովուրդը քովը
բոլըրված նըստեր էր : ու երբոր
իրեն ըսին՝ Ահա քու մայրըդ ու
քու եղբայրները դուրսը կեցեր-
են՝ ու քեզ կուզեն,

33 Անոնց պատասխան տըվաւ
ու ըսաց· իմ մայրը՝ կամ եղ-
բայրները ո՞վ է :

34 Իրեն բոլորտիքը աշակերտ-
ներուն նայեցաւ որ նստերէին,
ու ըսաց· Ահա իմ մայրը՝ ու իմ
1 Եւ եղև ՚ի մտանելն նորա ՚ի տուն ուրումն իշխա_նացն փարիսեցւոց ՚ի շաբաթու՝

1 Ու եղաւ որ ինքը շաբաթ օր_մը փարիսեցւոց պետերուն հա_րուն մէկուն տունը մտաւ հաց ու_

ատել հայց . և նոքա սպասէին նմա :

2 Եւ ահա՝ այր ոմն էր անդ ջղփղեալ՝ առաջի նորա :

3 Պատասխանի եւ յի՞ և ասէ ցօրինաւորսն և ցփարիսեցիս, եթէ արժա՞ն իցէ ՚ի շաբաթու բժշկել :

4 Եւ նոքա լռեւ եղեն : և բռնեն հարեալ զնմանէ՝ բժշկեաց զնա , և արձակեաց :

5 Եւ ասէ ցնոսա . այր ո՞ր ոք ՚ի ձէնջ էշ կամ եզն անկանիցի ՚ի ջրհոր , և ոչ վաղվաղակի հանիցէ զնա յաւուր շաբաթու :

6 Եւ ոչ կարացին տալ նմա պատասխանի՝ առ այն :

7 Այսաց և առ կոչնականսն՝ առակ ինչ , հայեցեալ թէ զնստարդ բարձրնոցիբ լերնէին : ասէ ցնոսա .

8 Յորժամ կոչիցէ ոք զքեզ ՚ի հարսանիս՝ կամ ՚ի կոչունս , մի բազմիցիս յառաջին բարձս ձէն . գուցէ պատուականագոյն ևս քան զքեզ իցէ կոչեցեալն ՚ի նմանէ .

9 Եւ եկեալ՝ որ զքեզն և զնա կոչեաց , ասիցէ ցքեզ , տուր սմա տեղի . և ապա ըստ կրանիցիս ամօթով զյետին տեղին ունել :

10 Այլ յորժամ կոչիցիս , երթիցէր՝ բազմիցէր ՚ի յետին տեղւոջ . զի յորժամ գայցէ որ կոչեացն զքեզ , ասիցէ ցքեզ . բարեկամ՚ ՚ի վե՛ր մատիր . յայնժամ եղիցին քեզ փառք առաջի բարձակացեացն քոց :

11 Ո՞ ի ամենայն որ բարձրացուցանէ զանձն , խոնարհեսցի . և որ խոնարհեցուցանէ զանձն , բարձրասցի :

տելու : որ անմնքալ իբրեն կըսպասէինկոր :

2 Ու հ՚ին (տեսաւ որ) իր զիմացը մէկ ջղզղած մարդմ՚ կար :

3 Յի՞ալ խօսիլ բացաւ՝ ու ան օրինաւէանեըուն ու փարիսեցիներուն ըսաց թէ՝ շաբաթի օրը կրնա՞մ մի բժշկութիւն ընել :

4 Անմնքալ մունճ կեցան : ու ձեռքը առնը ղըպցուց , անիկա բժժըշկեց՝ ու ձամ՚բեց :

5 Ու անոնց բսաւ . ձեզմէ մէկուն՝ իր էշը կամ եզը որ հորը իյնալու ըլլա , ինքը անիկա շուտմ՚ չէ՞ մի հանիր շաբաթնօրը :

6 Ու սա բանիս՝ չէ կրցան իրեն պատասխան տալ :

7 Ան ձեռնած մարդոցը վրայովնալ մէկ առակ մը բսաւ , տեսնալով՝ որ ինսորը (մէկ քանի մէկ) վեր անցնիլ կուզէին : անոնց բսաց .

8 Որ տուն քեզ մէկը հարսնիքի կամ հարկիքի կանչելու ըլլա , (դուն) մի (երթար վեր) առջի բարձին վրա նստիր . չըլլա թէ քեզմէ ալ էվէլի հարկիւորը մէկը՝ ինքը ձեռնած ըլլա .

9 Ու անիկա՝ որ քեզ ու ան ձեռներէ՝ զա քեզի բսէ . սաւր տեղ տուր . ու անանկ՝ ալ ամօթը քեզ առած՝ (վարի) եղին տեղը ունենաս :

10 Հապա որ տուն որ կանչըվիս՝ գնա եղին տեղը նստէ . որ երբոր ան՝ որ քեզ կանչեց՝ ինքը զա քեզի բսէ . բարեկամ վե՛ր հրամմէ . որ ալ ան տուներ հեռուն ընտովնեըուն ղմմացը քեզի պատիվ ըլլա :

11 Պատճառը՝ ամմէն ով որ իր անձը կրբարձրցուներ՝ ան կրցածնա , ու ան որ անձը կրցածցուներ . անիկա կրբարձրըլնա :

12 Ամէն և ցկոչնաւաէրն . յորժամ առնիցես ճաշ կամ ընթրիս , մի կոչեր զբարեկամս քո , և մի զեղբարս քո , և մի զազգականս քո , և մի զդրացիս քո , և մի զմեծամեծս . զի մի և նոքա փոխարէն կոչեսցեն զքեզ , և լինիցի քեզ հատուցումն :

13 Այլ յորժամ առնիցես ընդունելութիւն , կոչեա զաղքատս , և զխեղս , զկաղս և զկոյրս :

14 Եւ երանելի լինիցես . զի ոչ ունին փոխարէն հատուցանելոյ քեզ . և հատուսցի քեզ փոխարէն ի յարութեան արդարոց :

15 Իբրև լուաւ զայս ոմն ի բազմականացն՝ ասէ ցնա . ե՞րանի որ կերիցէ ճաշ յարքայութեան այ :

16 Եւ նա ասէ . այր ոմն զործեաց ընթրիս , և հրաւիրեաց զբազումս :

17 Եւ առաքեաց զծառայ իւր ի ժամու ընթրեացն կոչել զհրաւիրեալսն՝ թէ եկայք , զի ահաւասիկ պատրաստ է ամենայն ինչ :

18 Եւ սկսան ամենեքեան հրաժարել : առաջինն ասէ . ագարակ գնեցի , և հարկ է ելանել տեսանել գնա, աղաչեմ զքեզ՝ կալ ինձ հրաժարեալ :

19 Եւ միւսն ասէ . լուծս հինգ եզանց գնեցի , և երթամ փորձել գնոսա , աղաչեմ զքեզ՝ կալ ինձ հրաժարեալ :

20 Եւ միւսն ասէ . կին ածի, և վասն այնորիկ ոչ կարեմ գալ :

21 Եւ եկեալ ծառայն՝ պատ-

12 Ու հարկեալ երոջնալ բազ. որատեն ճաշ կամ ընթրիք ընել լալ բլլաս , մի կանչեր քու բարեկամներըդ , ու ոչ քու եղբայրներդ , ու ոչ քու ազգականներդ ու ոչ քու դրացիներդ , ու ոչալ մեծամարդիք . որ չըլլա թէ անոք տեղը անանքալ քեզ կանչեն , ու ան քեզի վճարք բլլա :

13 Հապա՝ որ առեն հարկիք պիտի ընես , (ուրն) աղկրանները կանչէ , ու պակասաւորները , ու կաղերը , ու կուրերը :

14 Ու անանկ՝ երանելի կըլլաս . որ (առանք՝) տեղը քեզի վճարելիք չունին . ու արդարոնց յարութիւնին առած առնոր՝ անոր տեղը քեզի կըվճարվի :

15 Այն (սեղան) նստողներէն մէկ աս որ լսեց՝ իրեն բսաւ . երանի է անոր՝ որ այ արքայութեանը մէջ կերակուր ուտէ :

16 Ինքնալ բսաց . մէկ մարդ մը ընթրիք ընելու եղաւ , ու շատ մարդիք հրեսց :

17 Ու ալ ընթրիքին առեն որ եկաւ՝ իր ծառան խաւրեց ան հրեռածներըը կանչելու , (բսելու) թէ՝ ալ եկէք , որ հանա ամէն բան պատրաստ է :

18 Ու ամէնքնալ մէկիկ մէկիկ բսկըսան ետ քաշվիլ : առջինը բսաւ , (ես) ագրակ գնեցի , ու պէտք է որ՝ ան ելլեմ տեսնեմ . քեզի կաղաչեմ որ ես ինձ տաս :

19 Ու միկալը բսաց , (ես) հինգ զուգ եզ գնեցի , ու կերթամ որ անոնք փորձեմ . քեզի կաղաչեմ որ ես ինձ տաս :

20 Ու միկալնալ բսաց . կընիկ առի , անոր համար՝ ալ չեմ կըրնար գալ :

21 Ծառանալ եկաւ , ատ՝ իր

ամաց զայն տեառն իւրում : յայնժամ բարկացեալ տանուտէրն, ասէ ցծառայն իւր . ել վաղվաղակի ՚ի հրապարակս և ՚ի փողոցս քաղաքիդ, և զաղքատս, և զկոյրս, և զկաղս, և զկոյսս՝ մոյծ այսր :

22 Եւ ասէ ծառայն . տէր՝ եղե՛ զոր հրամայեցեր, և կայ և տեղ :

23 Եւ ասէ տէրն ցծառայն, ել ՚ի ճանապարհս և ՚ի ցանգս, և արա այսր մտանել . զի լցցի տունս իմ :

24 Ասե՛մ ձեզ , զի ո՛չ ոք յայնց կոչեցելոց ճաշակեսցէ յընթրեաց իմոց :

25 Եւ երթային ընդ նմա ժողովուրդք բազումք , դարձաւ՝ և ասէ ցնոսա .

26 Եթէ ոք՝ գայ առ իս , և ո՛չ ատեայ զհայր իւր և զմայր, և զկին և զորդիս , և զեղբարս և զքոյր, նա՝ և զանձն ևս իւր, ո՛չ կարէ իմ աշակերտ լինել .

27 Օ՛ր որ ո՛չ բառնայ զխա՛չ իւր՝ և գայ զկնի իմ, ո՛չ կարէ իմ աշակերտ լինել :

28 Ո՞վ ոք ՚ի ձէնջ կամիցի շինել աշտարակ , և ո՛չ նախ նստեալ չհամարիցի զծախան՝ եթէ ունիցի բաւական ՚ի կատարումն :

29 Օ՛ր գուցէ երբէք արկանիցէ հիմն՝ և ո՛չ կարիցէ կատարել , ամենեքին որ տեսանիցեն՝ սկսանիցին ծաղր առնել զնա՝

30 Եւ ասել . թէ այս այր սկսաւ շինել՝ և ո՛չ կարաց կատարել :

31 Կամ ո՞ր թագաւոր՝ երթեալ տայցէ պատերազմ ընդ միրոջէ պատմեց : անատեղը տանէրտերը սրբդոցած , իր ծառային ըսաց . շուտով ելլէր քաղքիս հրապարակներն ու փողոցները գնա, ու (անկէ) ախկլատները, ու պակասաւորները , ու կաղերը, ու կուրերը (բէր) հոս խօթէ :

22 (Իտկը) ծառանալ ըսաց . տէր՝ ինչ որ հրամայեցիրնէ եղաւ , ու դե՛ռ ալ տեղ կա :

23 Ու տէրը՝ ծառային ըսաւ . գնա ճամբաներն ու ըրնգերը . ու (գտածդ բէր) հոս խօթ մըտնան, անանկ որ՝ իմ տունըս լեցվի:

24 Չեգէ ըսեմ, որ ան ձենած ներէն մէկնալ պիտի չըլլա՝ որ իմ ընթրկէքս համը առնէ :

25 Ու իր հետը շատ ժողովուրդներ որ կերթային կոր, դարձաւ՝ ու անոնց ըսաց .

26 Թէ որ մէկը ինծի կուգա , ու չի ատեր իր հայրը ու մայրը , ու կնիկը ու որդիքը , ու եղբարնըրը ու քրվըստանքը , ու բուն իր անձնալ . ան՝ իմ աշակերտըս չի կրնար ըլլալ :

27 Ինչու . ան որ իր խաչը չի վերցրներ ու իմ ետևէս գար՝ ան իմ աշակերտըս չի կրնար ըլլալ :

28 Չեր մէջէն ան ո՞վ է, որ ուզի մէկ աշտարակմը շինել , ու նըքը՝ առաջ չի մը նստիր՝ վրան ընելու ծախքը համրեր, որ՝ անկա լըմընցնելու չերկը բան ունի մի :

29 Որ չըլլա թէ՝ անոր հիմն որ ձգի՝ ու չի կրնա լըմընցրներ , բոլոր ան տեսնողները սկսին իր վրան ծըծաղել ,

30 Ու ըսել . թէ աս մարդս ձեռք գարկաւ շինելու , ու չի կրցաւ լըմընցրնել :

31 Կամ թէ՝ որ թագաւորը կերթա ուրիշ թագաւորի հետ

այլեւս թագաւորի . և ոչ նատեալ նախ խորհիցի . եթէ կարո՞ղ իցէ տասն հազարաւ զդէմ ունել զայնորիկ՝ որ գայցէ ՚ի վերայ նորա քսան հազարաւ :

32 Ապա թէ ոչ՝ մինչ դեռ հեռագոյն իցէ , հրեշտակու_ թիւն առաքեալ՝ աղաչեսցէ ՚ի խաղաղութիւն :

33 Այդ՝ այսպէս ամենայն որ ՚ի ձէնջ , որ ոչ հրաժարեսցէ յամենայն ընչից իւրոց , ոչ կարէ իմ աշակերտ լինել :

34 Հարւածք է աղ . ապա թէ աղն անհամեսցի , ի՞ւմ համեսցի :

35 Ո՛չ յերկիր՝ և ոչ յաղբէ պիտանացու , այլ ընկենուլ զնա արտաքս : որ ունիցի ա_ կանջս լսելոյ՝ լուիցէ :

ՁԵԾ կընէ . ու առաջ չի նայիր մարտաւ , որ ինքը տասը հազարով կըընա՞ մի անոր դէմը առնել, թէ որ ան՝ քսան հազարով վրան գալու ըլլա :

32 Թէ չէ նէ՝ քանի որ ան դեռ հեռուն է , դեսպան կրկսրկէ՝ կաղաչէ հաշտութիւն ընելու :

33 Ասանկալ ձեզմէ ամէն մէկը՝ որ իր բոլոր ունեցած բաներէն ետ չի քաշվիներ՝ ան իմ աշակերտս չի կրնար ըլլար :

34 Աղը՝ աղէկ բան է . հապա թէ որ աղը անհամնա , ալ ինչով (ան) պիտի համովցուին .

35 Որ ալ ոչ հողուն ու ոչ թրքի տեղ պէտք կըլլա , հապա՝ որ ան դուրս ձգովին : Ով որ լսելու անկամ ունինի՝ թող լսէ :

Գ Լ . Ա Ե .

1 Եւ էին մերձ առ նա ամենայն մաքսաւորք և մեղաւորք՝ լսել ՚ի նմանէ :

2 Տրտնջէին փարիսեցիքն և դպիրք՝ և ասէին . ընդ՞ որ՝ զմեղաւորս ընդունի՝ և ուտէ ընդ նոսա :

3 Այսոյ առ նոսա զառակս դայս :

4 Ո՞վ ոք իցէ ՚ի ձէնջ մարդ՝ որոյ իցէ հարեւր ոչխար , և կո_ րուսանիցէ մի ՚ի նոցանէ . ոչ թողուցու զվեննասնեն և զվեն յանապատի , և երթիցէ զհետ կորուսելոյն՝ մինչև զտանիցէ զնա :

5 Եւ իբրև զտանէ՝ դնէ զնա ՚ի վերայ ուսոց իւրոց ինդա_ լով ,

6 Եւ երթայ ՚ի տուն . կոչէ

1 Ու բոլոր մաքսաւորները ու մեղաւորները իրեն քովը կուգային , որ իրմէն բան լսեն :

2 Փարիսեցիներն ու կարդացողներնալ կրմրնաւային , ու կըսէին . ասիկա ինչու մեղաւոր մարդիկը կընդունի , ու անոնց հետ չաց կուտէ :

3 Անոնց (գործաւ՚) ասա առակը բսաւ .

4 Ձեզմէ ով է ան մարդը , որ հարիւր ոչխար ունենա , ու անոնցմէ մէկն որ կորսրնցուներ , ան՝ իննըսունը վիներ՝ բաց անապատը չի մի թողուր , ու ան կորսրվածին հետևէն երթար՝ մինչ ան որ անիկա գտնէ :

5 Ու երբոր կրգտնէ՝ ալ իրը_ ուսմով անիկա (կառնէ) իր ուսին վրա կրընէ ,

6 Ու տուն կերթա . բարեկամ_

զբաբելիայեմ և զդրացիս՝ և ասէ ցնոսա. ուրախ եղերուք ընդ իս, զի գտի զոչխարս իմ զկո-
րուսեալ :

7 Այսմ ձեզ. զի այսպէս է ուրախութիւն յերկինս վասն միոյ մեղաւորի որ ապաշխարի-
ցէ, քան վասն հարիւն և հինգ արդարոյ՝ որոց չունի պիտոյ ա-
պաշխարութիւն :

8 Կամ որ իցէ կին, որոյ իցեն դրամք տասն. և եթէ կո-
րուսանիցէ դրամ մի, ոչ լու-
ցանիցէ հրոյ, և ածիցէ աւել
ի տան, և խնդրիցէ ստէպ՝ մինչև գտանիցէ :

9 Եւ երբեմն գտանէ, կոչէ զբարեկամս և զդրացիս՝ և ա-
սէ. ուրախ լերուք ընդ իս, զի գտի զդրամն իմ զոր կորուսի :

10 Այնպէս՝ ասեմ ձեզ, ու-
րախութիւն եղիցի առաջի հր-
եշտակաց այ՝ ի վերայ միոյ մեղաւորի որ ապաշխարիցէ :

11 Եւ ասէ. առն միոջ էին երկու որդիք.

12 Այս կրտսերն ի նոցանէ ցհայրն. հայր՝ տուր ինձ բա-
ժին որ անկանի յընչիցդ : և նա բաժանեաց նոցա զկեանսն:

13 Եւ յետ ոչ բազում ա-
ւուրց՝ ժողովեալ զամենայն կրտերոյն գնաց յաշխարհ հե-
ռի. և անդ վատնեաց զինչս
իւր, զի կեայր անառակութիւ :

14 Եւ երբեմն սպառեաց զա-
մենայն, եղև սով սաստիկ յաշ-
խարհին յայնմիկ, և սկսաւ
ինքն չբաւորել :

15 Եւ գնացեալ յարեցաւ
ի միոմն քաղաքացւոց աշ-
խարհին այնորիկ. և յղեաց զնա
յագարակ իւր՝ արածել խոզս :

նէրն ու զրացիները կրկանչէ. ու անոնց կըսէ. (զուք ալ) իմ հե-
տըս ուրախ եղէք, որ իմ կորսը-
ված ոչխարը գտայ :

7 Ձեզի կսեմ, որ երկինքնալ
աւանկ՝ հիւլէ ուրախութիւն կը-
լայ մէկ մեղաւորիմը համար՝ որ
ապաշխարէ, քան թէ իննըսունը
վեց արդարներուն համար, որ ի-
րենց ապաշխարութիւն պէտք չէ :

8 Կամ՝ ան որ կընիկ է. որ ին-
ը տասը դրամ ունենա, ու թէ
որ մէկ դրամը կորսընցունէ, ա-
նիկա ճրագ չի վառեր՝ ու տա-
նը մէջ աւել գարնէր, ու ագռիմը
փընտռտեր ինչվան որ ան դրտնա:

9 Ու գտնալու որ կըլայ, իւր
բարեկամներն ու դրացիներըկը-
կանչէ, ու կըսէ. դուքալ իմ հե-
տըս ուրախ եղէք, որ ան իմ
կորսընցուցած դրամն գտայ :

10 Ձեզի կսեմ, այ
հրեշտակներուն դիմացը ուրա-
խութիւն կըլայ մէկ մեղաւորիմը
համար որ կապաշխարէ :

11 Ու ըսաց. մէկ մարդմը եր-
կու որդի ունէր .

12 Անոնցմէն պզտիկը՝ հօրը
ըսաւ. հայր՝ քու ունեցածէդ ինծի
հնկած բաժինը տուր : ան ալ ու-
նեցած ապրանքը անոնց բաժնեց:

13 Ու շատ օր չանցաւ՝ որ
պզտի որդին բոլոր բաները ժող-
վըտեց հետաւ երկիրմը գնաց . ու
հոն իր ունեցածը մըսխեց, պտճառն
որ՝ անառակ ցոփ կեանք կըվարէր:

14 Ու բոլոր ունեցածնոր չատ
ցաւց, ան երկրինալ սաստիկ սով-
մը եղաւ , ու չբաւորութիննալ
ինքը առաւ :

15 Ու գնաց ան երկրին քաղ-
քըցոց մէկուն քովը մտաւ (ձա-
ւայելու): անալ ինքը իր ագրա-
կը խաւրեց՝ որ խոզերը արծէ :

16 Եւ ցանկայր լնուլ զո-
րովայն իւր յեղջերէն զոր խո-
քէն ուտէին , և ոչոք տայր
նմա :

17 Եւ եկեալ ՚ի միտս իւր՝
ասէ . քանի՞ վարձկանք իմոյ
՚ի տան հօր իմոյ հացալիք, և
ես աստ՝ սովամահ կործնիմ :

18 Յարուցեալ գնացից առ
հայր իմ, և ասացից ցնա .
հայր՝ մեղայ յերկինս՝ և առա-
ջի քոյ .

19 Եւ ոչ ևս եմ արժանի
կոչել որդի քո . արա զիս իբ-
րև զմի ՚ի վարձկանաց քոց :

20 Եւ յարուցեալ եկն առ
հայր իւր : և մինչ դեռ հեռա-
գոյն էր, եւեթ զնա հայրն՝ և
գթացաւ . յարեաւ և ընթա-
ցաւ ընդառաջ , անկաւ զպա-
րանոցսն նորա , և համբու-
բեաց զնա :

21 Եւ ասէ ցնա որդին .
հայր՝ մեղայ յերկինս՝ և առաջի
քոյ, և ոչ ևս եմ արժանի կո-
չել որդի քո :

22 Ասէ հայրն ցծառայսն
իւր· վաղվաղակի հանէք զզ-
գեստուհանն առաջինն, և ա-
գուցէք նմա, և տուք զմատա-
նին ՚ի ձեռն նորա, և կօշիկս
յոտս նորա :

23 Եւ ածէք զեզն պարա-
րակ, զնէք՝ կերցուք և ու-
րախ լինցուք :

24 Զի այս որդի իմ մե-
ռեալ էր՝ և եկեաց , կորու-
սեալ էր՝ և գտաւ : և սկսան
ուրախ լինել :

25 Եւ էր երէց որդի նորա
յագարակի . և մինչ դեռ գայր՝
և մերձ եղև ՚ի տունն , լուաւ
դձայն երգոյ և զպարուց :

16 Ու անանկ (եղաւ որ) կարօտ
կրքաշէր՝ ան խոզերուն կերած
եխնուրէն իր փորը լեցընելու, ու
(անոր) իրեն տրվող չկար :

17 Մէկ՚յոլ իր խելքը վրան
եկաւ՝ ըսաց . իմ՝ հօրըս տունը
քանի՛ քանի վարձվորներ կըլլան
հացով լըցված, ու ես հոս սովին
մեռած կրկոսրվիլիմ կոր :

18 Ելլե՛մ իմ՝ հօրըս քով եր-
թամ, ու իրեն ըսեմ . հայր՝ (ես)
երկընքին՝ ու քեզի դէմ մեղա .

19 Ա՛լ ասկէ ետև արժանի
չե՛մ քու որդիդ ըսվելու . իս քու
վարձվորներուդ մէկունպէս ըրէ :

20 Ու ելաւ իր հօրը գալու : ու
դեռ որ ինքը հեռուն էր՝ հօրը
ան տեսաւ, ու խեղճը եկաւ վրան,
ելաւ ու դէմը վազեց՝ անոր վիզը
սըլլըվեցաւ՝ ու ինքը պագաւ :

21 Որդինալ անոր ըսաց. հայր՝
ես երկընքին ու քեզի դէմ մեղա .
ալ ասկէ ետև արժանի չե՛մ
քու որդիդ ըսվելու :

22 Հայրը (դարձաւ) իր ծառա-
ներուն ըսաց . շուտով (իր) առջի
կապան հանեցէ՛ք՝ ու ան իրեն վրա
հագցուցէ՛ք , ու մատնինալ իր
ձեռքը ղրկէ՛ք , ու կօշկներնալ իր
ոտքը :

23 Ու ան գէր եզը բերէ՛ք մոր-
թեցէ՛ք . (որ) ուտենք ու ուրա-
խանանք .

24 Ինչու որ՝ ասիկա իմ որդիս մե-
ռած էր՝ ու ողջընցաւ, կորսը-
ված էր՝ ու գտնըվցաւ : ու ա-
նանկ՝ ըսկսան ուրախութիւն ընել :

25 Ու անոր մեծ որդին որ
ագրաւին էր, ու երբոր (անկէ) կու-
գար, ու տանն որ մօտեցաւ՝ տա-
ղերուն ու պարերուն ձանը լսեց :

26 Եւ կոչեցեալ առ ինքն զմի ի ծառայիցն՝ հարցանէր թէ զինչ իցէ այն :

27 Եւ նա՝ ասէ ցնա . զի եղբայր քո եկեալ է, և եզին հայր քո զկնի պարարակ, զի ողջամբ ընկալաւ զնա :

28 Նարկացաւ՝ և ոչ կամէր մտանել : և հայրն ելեալ արտաքս՝ աղաչէր զնա :

29 Պատասխանի ետ՝ և ասէ ցհայրն . այս քանիք ամք են՝ զի ծառայեմ քեզ, և երբէք զպատուիրանաւ քով ոչ անցի . ուլ մի երբէք ոչ ետուր ինձ՝ զի ուրախ եղէց ընդ բարեկամս իմ:

30 Յորժամ եկն որդիդ քո այդ, որ եկեր զկեանս քո ընդ պոռնիկս , զնորա զդմա զկնի պարարակ :

31 Եւ ասէ ցնա . որդեակ, դու հանապազ ընդ իս ես . և ամենայն որ ինչ իմ է՝ քո է :

32 Այլ ուրախ լինել և խնդալ պարտ էր, զի եղբայրդ քո այս՝ մեռեալ էր, և եկեաց, կորուսեալ՝ և գտաւ :

26 Ու ծառաներէն մէկը իրեն կանչեց՝ կրկրցունէը թէ ան ինչ բան է :

27 Անոր իրեն ըսաւ. աս՝ անոր համար որ՝ քու եղբայրդ եկերէ, ու քու հարտալ ան զեր եզը մոր- թեց, որ՝ ինքը սիրով ընդունեց:

28 (Անոր) սրբդողեցաւ՝ ու (ներս) չէր ուզեր մտնել : Հարնաւ դուրս ելաւ անոր կաղաչէր :

29 (Ան) պատասխան տրւաւ ու հօրը ըսաց . աս քանիք տարի է որ՝ քեզի կրծառայեմ կոր, ու քու խօսակէդ մէկ դուրս չեմ ելած . (դուն) ինձի մէկ ուլիկմընաւ չես տրւեր, որ իմ բարեկամներուս հետ ուրախութիւնմը ընէի :

30 Որ աուն աս քու որդիդ եկաւ, որ ինքը քու ապրուստդ բոզերու հետ կերաւ, (դուն) ան զեր եզը աուոր մորթեցիր :

31 Ու անոր ըսաց . որդդի դուն ամէն իժէր իմ հետս ես , ու բոլոր ինչ որ իմս է՝ ան քուկդ է :

32 Հապա՝ ուրախութիւն ու խընաւմ ընել ալ պէտկ էր , ա- նոր համար որ՝ աս քու եղբայրդ մեռած էր՝ ու ողջընցաւ , կորսըւած էր՝ ու գըտնըւեցաւ :

Գ.Ղ· Ժ.Ը·

1 Եւ ասէ առ աշակերտան . այր մի էր մեծատուն , ո- րոյ էր՝ տնտես . և եղև զնմանէ ամբաստանութիւն , որպէս թէ վատնիցէ զինչս նորա :

2 կոչեաց՝ և ասէ ցնա. զինչ է այս զոր լսեմս զքէն , տուր զհամար տնտեսութեան քոյ , զի ոչ ևս կարես լինել տնտես :

1 Ու (դարձաւ) աշակերտներուն ըսաց . մէկ հարուստ մարդմը կար՝ որ տան (վրայ) տրե- տեսմը ունէր . ու որ վրան (ի- րեն) ամբաստանութիւն ըրին , ա- նանկ թէ՝ անիկա իր ըստակը կը- մրսխէ կոր :

2 Կանչեց՝ ու անոր ըսաց . աս ինչ է որ ես քու վրադ կրլսեմ- կոր , քու տրնտեսութիւնդդ հա- մարը տուր. որ՝ ալ (իմ) բաներուս վրա) տրնտես չես կրնար ըլլար :

3 Ասէ ընդ միտս իւր տրտմեսցի զննէ գործեցից, զի տէր իմ չանիցէ զնտանեսութիւնս զործել՝ ոչ կարեմ, մուրանալ՝ ամաչեմ:

4 Գիտեմ զինչ արարից զի յորժամ ի բաց լինիցիմ ի տնտեսութենէս, ընկալցին զիս ի տունս իւրեանց:

5 Եւ կոչեցեալ առ ինքն զի ըստ միոջէ՝ի պարտապանացն տեառն իւրոյ ասէ ցառաջինն. քանի՞ ինչ պարտիս տեառն իմում:

6 Եւ նա ասէ. չարեւր մար ձիթոյ: ասէ ցնա. կա զդիր քո, և նիստ զրեա վաղվաղակի յիսուն:

7 Դարձեալ՝ ասէ ցմեւն. դու՝ քանի՞ ինչ պարտիս: և նա ասէ. չարեւր քոռ ցորենոյ. և ասէ ցնա. կա զդիր քո՝ և նիստ զրեա ութսուն:

8 Եւ գովեաց տէրն զտրտնեւմեան անիրաւութեան, զի իմաստութեամբ արար: զի որդիք աշխարհիս այսորիկ իմաստնագոյնք են քան զորդիս լուսոյ յազգս իւրեանց:

9 Եւ ես ձեզ ասեմ. արարէք ձեզ բարեկամս ի մամոնայէ անիրաւութեան. զի յորժամ պակասիցէ այն, ընկալցին զձեզ ի յաւրէնս յաւիտենական:

10 Որ ի փոքուն հաւատարիմ է, և ի բազմին հաւատարիմ է, և որ ի փոքուն անիրաւ, և ի բազմին անիրաւ է:

11 Եթէ արդ՝ ի մամոնային չեղէք հաւատարիմք, զձշմարիտն ձեզ՝ ո՞ հաւատասցէ:

3 Տնտեսեսնալ ինքիրեն մտածաց՝ ասաւ. ինչ ընեմ, որ իմ տէրըս իմմէն տնտեսութինըս կրնանկոր. (ես) չեմ կրնար բան բանիր, (երթալ) մուրանալն ալ կամրնամ:

4 Ալ գիտեմ ինչ կրնեմ. որ աս տնտեսութինէս երբոր ելլեմ, (մարդիք) իս իրենց տունը ընդունին:

5 Ու իրեն տիրոջը պարտականները մէկիկ մէկիկ քովը կանչեց, առջինին ըսաւ. իմ տիրոջս որքան բան պարտական ես:

6 Անալ ըսաց. չարուր չափ ձէթ: անոր ըսաւ. քու հաշվեգիրդ առ, ու նստէ շուտմը ան յիսսուն գրէ:

7 Անանկ մէկալինալ ըսաւ. դուն որչափ պարտական ես: ան՝ալ ըսաց. չարուր մոթ ցորեն: անոր ալ ըսաւ. քու հաշվեգիրդ առ, ու նստէ ութսուն գրէ:

8 Ու տէրը՝ ան անիրաւ տրտնեսը գովեց, ինչու որ՝ (բանը) խելքով ըրաւ: որ (աստնկ) աս աշխարքիս որդիքը՝ լուսոյ որդիքներէն ալ էվելի աչքըբաց են իրենց կացքին մէջ:

9 Ու ես ալ ձեզի կըսեմ (որ) անիրաւ չարտուքինէն ձեզի բարեկամներ վաստըկեցէք. որ երբոր ան պակսի, (իրենք) ձեզ յաւիտենական բնակարաններուն մէջը ընդունին:

10 Ան որ պզտիկ բանի մէջ հաւատարիմ է՝ (անկա) շատին մէջ նալ հաւատարիմ է, ու ան որ պզտիկին մէջ անիրաւ է՝ (ան) շատին մէջնալ անիրաւ է:

11 Ուստի՝ թէ որ անիրաւ չարտուքինին մէջը որ հաւատարիմ չեղաք, չատա ալ ճշմարիտը՝ ով ձեր ձեռքը կրհաւատա:

12 Եւ եթէ յօտարին չեղէք
չաւատարիմք, զձերն՝ ո՞տայ-
ցէ ձեզ:
13 Ո՛չեք կարէ երկուց տե-
րանց ծառայել· զի եթէ զմին
սիրէ, զմեւսն սիրէ· կամ
զմին՝ մեծարիցէ, և զմեւսն
արհամարհիցէ: ոչ կարէք ա՛յ
ծառայել և մամոնայի:
14 Իբրև լսէին զայս ամե-
նայն՝ փարիսեցիքն՝ քանզի ար-
ծաթասէրք էին, անկոսնէին
զնա:
15 Եւ ասէ ցնոսա· դուք՝
որ արդարացուցանէք զանձինս
առաջի մարդկան, սակայն ած
գիտէ զսիրտս ձեր· զի որ ա-
ռաջի մարդկան բարձր է, պիղծ
է առաջի ա՛յ:
16 Օրէնքն և մարգարէք
մինչև ցյովհաննէս· յայնմ հե-
տէ արքայութիւնն ա՛յ աւետա-
րանի, և ամենայն ոք զնա բըռ-
նաբարէ:
17 Դիւրին իցէ երկնից և
երկրի անցանել, քան յօրի-
նացն միոյ նշանախեցի անկա-
նել:
18 Այնոյն որ արձակէ ըզ-
կինն իւր, և առնէ այլ՝ շնայ· և
որ զարձակեալն առնէ՝ շնայ:

19 Այր ոմն էր մեծատուն,
և ապանէր բեհեզս և ծիրանիս,
և ուրախ լինէր չանապազ ա-
ւուրապէս:
20 Եւ աղքատ ոմն անուն
ղազարոս, անկեալ զնէր առ
դրան նորա վիրաւորեալ:
21 Եւ ցանկայր լնուլ զո-
րովայն իւր ի փշրանացն՝ որ
անկանէին ի սեղանոյ մեծա-
տանն: այլ և շունք եւս՝ գային
և լիզուին զվէրս նորա:

12 Ու թէ որ ուրիշի բանին
հաւատարիմ չեղաք, ալ ան որ
ձերն է՝ ո՞վ ձեզի կուտայ:
13 Մէկը չկրնար որ՝ կարող ըլլայ
երկու տիրոջ ծառայել· որ թէ
մէկը ատէ՝ մէկալը կը սիրէ, կամ
թէ մէկը մեծարէ՝ ալ մէկալը կը
քամահրէ: (դուքա.) չէք կրնար
այ ծառայեր՝ ու մամոնայինալ:
14 Այս բոլորը բաներըս փարի-
սեցիները երբոր կլսէին, իրենք
որ արծաթասէր էին՝ ալ ինքը
վար կրզարնէին:
15 Ու անոնց ըսաւ· դուք մար-
դոց դիմացը ձեզ արդար կերեւցու-
նէք, բայց ած ձեր սիրտը գիտէ:
պատճառը, անիկա որ մարդոց
դիմաց (մեծ ու) բարձր է՝ ան
պիղծ է այ առջեը:
16 Օրէնքն ու մարգարէքը՝
Ինչման յոհաննէսը (դիմացան),
ալ անկէ ետև այ արքայութիւնը
աւետիս կըտրվի, ու ամէն մարդ
անիկա իր ուժովը ձեւք կրձդէ:
17 Երկինքն ու երկիրը ալ
դիւր կանցնին (կոչընչանան), քան
թէ օրէնքէն մէկ պզտի նշանագիրը
մը դուրս իյնա (չեկատարվի):
18 Ամէն ովոր իր կնիկը կըթո-
ղու՝ ու ուրիշը կառնէ, շնու-
թիւն կընէ· ու ան ալ՝ որ ան թող-
ւածը կառնէ՝ շնութիւն կընէ:
19 Մէկ հարուստ մարդմը
կար, որ ինքը՝ բեհեզներ ու ծի-
րանի լաթեր կըհագնէր, ու ամէն
իժիր կեվելոք ուրախութիւն մէջ էր:
20 Մէկ աղքատմընալ անու-
նը Խապարոս, որ խոցերը վրան՝
անոր դռանը քով ինկած դրած էր:
21 Անոնկոր՝ կարօտ կըքաշէր
որ իր փորը կեցընէ ան հարուստին
սեղանէն ինկած փըշրանքներէն:
ու շներնալ կուգային ու իր խո-
ցերը կըլզվէին:

22 Եղև մեռանել աղքատին, և տանել հրեշտակացն զնա ՚ի գոգ աբրահամու : մեռաւ և մեծատունն՝ և թաղեցաւ :

23 Եւ ՚ի դժոխսն՝ ամբարձ զաչս իւր մինչ ՚ի տանջանսն էր · եւ տես զաբրահամ ՚ի հեռաստանէ, և զղազարոս ՚ի գոգ նորա հանգուցեալ :

24 Եւ նա՝ աղաղակեաց և ասէ · հայր աբրահամ՝ ողորմեա ինձ, և առաքեա զղազարոս · զի թաւցէ զծագ մատի՛ ըստոյ ՚ի ջուր, և զովացուսցէ զլեզու իմ, զի պապակիմ ՚ի տապոյ սմա :

25 Եւ ասէ ցնա աբրահամ. որդեակ՝ յիշեա զի ընկալար անդէն զբարիս քո ՚ի կեանսն քում, և ղազարոս նոյնպէս զչարչարանս · արդ՝ սա սմա մխիթարի, և դու տյզր՝ պապակիս :

26 Եւ ՚ի վերայ այսր ամենայնի՝ վիշ մեծ է ընդ մեզ և ընդ ձեզ · եթէ կամիցին աստի՝ առ ձեզ անցանել, ո՛չ կարեն · և ոչ այսի որ՝ առ մեզ անցանել :

27 Եւ ասէ · արդ աղաչեմ զքեզ հայր, զի արձակեցես զդա ՚ի տուն հօր իմոյ :

28 Քանզի իմ անդ եղբարք կինդ, որպէս զի տայցէ նոցա վկայութիւն · զի մի և նոքա գայցեն յայս տեղի տանջանաց :

29 Եւ ասէ աբրահամ · ունին զմովսէս և զմարգարէսն, նոցա լուիցեն :

30 Եւ նա ասէ · ոչ՝ հայր աբրահամ, բայց թէ ՚ի մեռելոց ոք երթիցէ առ նոսա, և ապաշխարիցեն :

22 Եղաւ որ աս ախկատոս մեռաւ, ու հրեշտակները անիկա աբրահամին գոգը տարին : ան հարուստնալ մեռաւ՝ ու թաղվեցաւ :

23 Ու (ինքը՝) դժոխքը երբոր տանջանքներու մէջ էր՝ աչկը վեր վերուց՝ հեռվանց աբրահամը տեսաւ, ու խաղարոսնալ անոր գոգը հանգիստ նստած :

24 Ու ալ ինքը՝ ձանը վերուց՝ ու ըսաց · հայր աբրահամ, ողորմի՛ ինծի, ու խաղարոսը խաւրէ՝ որ (գա՝) մատին ծարը ջուրը թրջէ՝ ու իմ լեզուս պաղեցնէ. ցընէ, ինչու որ՝ աս սաստիկ տապէս կըպապակիմ կոր :

25 Աբրահամնալ իրեն ըսաց. որդի՛ միտքդ բեր որ քու բոլքդ անդէն քու կենացդ մէջը առիր, անանկ ալ խաղարոսը՝ (ան իր) չարչարանքները : ուսոի ալ ասկից հոս կըմխիթարվի, ու դուն հոս տեղը կըպապակիս :

26 Ու ասկէ ՚ի զատ՝ ան ալ որ՝ մեր մէջէն ու ձեր մէջ տեղը մեկ մեծ խոր անդունդմը կա, որ թէ ուզէն ասկէ ձեղի անցնիլ՝ չեն կրնար, ու ո՛չ ալ ասկէց մեկը (կրնա) մեզի անցնիր :

27 Անալ ըսաւ. անանկ էնի՝ հայր՝ քեզի կաղաչեմ որ անիկա իմ հօրըս տունը խաւրես :

28 Ես հոն կինկ եղպար ունիմ, որ (երթա ան բանիս) վկա ըլլա անոնց · որ չըլլան իրենք ալ ան տանջանքներուս տեղը գան :

29 Աբրահամալ ըսաց · (անոնք մովսէս՝ ու մարգարէներ ունին, թող անոնց մնկ գընան :

30 Անալ ըսաւ. չէ, հայր աբրահամ, հապա թէ որ մեռելներէն մեկը իրենց երթա՝ ալ (անոնք) կապաշխարեն :

31 Եւ ասէ ցնա · եթէ մովսէսի եւ մարգարէիցն ոչ լսեն, եւ ոչ թէ ՚ի մեռելոց ոք յառնիցէ՝ հաւանեսցին :

31 Ու իրեն ըսաց · թէ որ Մովսէսին ու մարգարէներուն չեն մըռեր, մեռելներէն ալ որ մէկը սխրընա՝ պիտի մովընին չի պառակին:

ԳԼ· ԺԷ·

1 Ասաց և առ աշակերտան իւր · ոչ է մարթի չգալ գայթագղութեան . բայց վայ այնմիկ ՚ի յոյր ձեռն գայցէ :

1 Իր աշակերտներուն ալ ըսաւ. ան՝ կարելի բան չէ որ գայթաղկութիւն չըլլա. միանգի՝ վայ է ան մարդուն՝ որ (ան) իր ձեռքովը կըլլա :

2 Լաւ էր նմա՝ թէ վէմ եր կանաքար կախէր զպարանոցն նորա, և անկանէր ՚ի ծով, քան թէ գայթագղեցուցանիցէ զմի ոք ՚ի փոքրկանցս յայսցանէ:

2 Անոր ալ աղեկ էր՝ որ իր վըզէն աղցն քարմը կախվէր, ու անանկ ծովը իյնար, քան թէ աս պըղտիկներէն մէկը գայթաղկեցընէ :

3 Զգոյշ կացէք անձանց : եթէ մեղիցէ եղբայր քո, սաստեա նմա . և եթէ ապաշխարիցէ, թող նմա :

3 Զեզ ըզգուշ բռնեցէք (ասոր.) որ թէ քու եղբայրդ (քեզի) մեղքմը ընէ, իրեն չեմ տուր՛. ու թէ որ զղխէա՝ իրեն թող տուր :

4 Եւ եթէ եւթն անգամ մեղիցէ քեզ, և եւթն անգամ դարձցի ՚ի քեզ և ասիցէ՝ ապաշխարեմ, թողցես նմա :

4 Ու թէ որ օխտը չեղ քեզի դէմ մեղք ընէ, ու օխտը չեղալ քեզի դառնա, ու ըսէ որ՝ կըզղխէամ, իրեն թողուրէին տուր :

5 Եւ ասեն առաքեալքն տեր · յաւել մեզ հաւատս :

5 Ու առաքեալները տընը ըսին· մեր հաւատքը էվելցուր :

6 Եւ ասէ տէր . եթէ ունիցէք հաւատս քան զհատ մանանխոյ, և ասիցէք թրթենւոյս այսմիկ . խլեաց և անկեաց ՚ի ծովս, և հնազանդեսցի ձեզ :

6 Տրնաղ ըսաց · թէ որ մանանեխին (պզտրտիկ) հատին չափ հաւատք ունենաք, ու աս թութի ծառս ըսէք, (ատ տեղէդ) փրթիր՝ ու դնա ծովին մէջը տընկրվէ · ալ (ան) ձեզի կըհնազանդի :

7 Իսկ ով ոք ՚ի ձէնջ՝ որ ունիցի ծառայ հողագործ կամ հովիւ, որ իբրև մտանիցէ յագարակ՝ ասիցէ ցնա վաղվաղակի, թէ անց բազմեաց .

7 Ա՛լ ձեզմէն ով է ան մարդը որ ինքը մէկ երկրագործ կամ հովիւ ծառայմը ունենա, որ անիկա ագրակէն որ (դա՝ տուն) մտնա, (տէրը) շուտմը իրեն ըսէ որ ելիր սեղան նստէ .

8 Այլ ոչ ասիցէ ցնա, թէ պատրաստեա զինչ ընթրեալցեմ, և զօտի ածեալ պաշտեա զիս՝ մինչև կերայց և արբից, և յետոյ կերիցես դու և արբիցես :

8 Հապա՝ անոր չըսէ թէ՝ պատրաստէ ինչ որ պիտի իրիկունս ուտեմ, ու գօտիդ կապած ինծի ծառայէ՝ ինչվան որ (ես) ուտեմ ու

բիդ, և ապա կերթիցես և արբ-
ցես դու :

9 Արիթէ չնորհ ունիցի ծա-
ռային այնմիկ, զի արար զա-
մենայն հրամանն :

10 Ընդունէս և դուք՝ յոր-
ժամ առնիցէք զամենայն հրա-
մայեալսն ձեզ, ասասջիք՝ թէ
ծառայք անպիտանք եմք, զոր
պարտեաքն առնել՝ արարաք :

11 Եւ եղև մինչև երթայր
նա յերուսաղէմ, և ինքն ան-
ցանէր ընդ մէջ սամարեայ և
գալիլեացւոց :

12 Եւ մինչ զնա մտանէր ՚ի
գեղ ուրեմն, պատահեցան նմա
տասն այր բորոտ, որք կացին
՚ի հեռաստանէ,

13 Եւ արձին զձայնս՝ և ա-
սեն. յի վարդապետ՝ ողորմեաց
մեզ :

14 Եւ երբէք տեաս զնոսա,
ասէ ցնոսա. երթայք ցուցէք
զանձինս քահանայիցն. և ե-
ղև երբեմն գնացին, առաժամայն
սրբեցան :

15 Արի ոմն ՚ի նոցանէ իբ-
րև տեաս՝ թէ բժշկեցաւ, դար-
ձաւ անդրէն՝ ՚ի ձայն մեծ փա-
ռաւոր առնէր զԱծ.

16 Անկաւ ՚ի վերայ երե-
սաց իւրոց առ ոտս նորա՝ և
գոհանայր զնմանէ. և ինքն էր
սամարացի :

17 Պատասխանի ետ յի՝ և
ասէ. ոչ տասն սրբեցան, իսկ արդ՝ ննոյնքան ուր
են.

18 .Օ՞ի ոչ գտան դառնալ
տալ փառս այ, բայց միայն
այլազգիս այս :

19 Եւ ասէ ցնա. արի գնա,
զի հաւատք քո կեցուցին զքեզ :

խրմեմ, ու եւս դառնալ կէր ու
խրմէ :

9 Այլ ինքը ան ծառային շնոր-
հակալ մի կըլլար, որ իր բոլոր
հրամայածները կատարեց :

10 Անանկալ դուք, երբոր բո-
լոր ձեզի հրամայված բաներն որ
ընէք, ըսէք որ՝ (մենք) անշահ
ծառաներ ենք, ան որ պարտ-
կան էինք ընելու՝ ըրինք :

11 Ու եղաւ որ ինքը երուսա-
ղէմ որ կերթար, ու սամարեայի
ու գալիլեացոց մէջէն որ կանց-
նէր :

12 Հան որ մէկ գեղմը մտնե-
լու վրայ էր, տասը բորոտ մար-
դիք իրեն հանդիպեցան, որ հե-
ռուէն կեցած,

13 Ձաներնին վերուցին՝ ու ը-
սին. յի վարդապետ՝ մեզի ողորմի:

14 Զի՞ ալ երբոր անոնք տե-
սաւ՝ իրենց ըսաց. գացէք անձեր
նիդ քահանաներուն ցուց տրվէք:
ու երթալու որ եղան՝ շուտով
(բորէն) սրբըվեցան :

15 Անոնցմէ մէկը երբոր տե-
սաւ որ բժշկըվեցաւ, ետ դարձաւ
ամբոխ ձանով՝ զի փառք կուտար.

16 Ու երեսն իվար անոր ոտքը
ինկաւ, ու իրեն կըզոհանար. ու
ասիկա մէկ սամարացի մըն էր:

17 Զի՞ պատասխան տըվաւ՝ ու
ըսաց. տասնք տասը (հոգի) չէին
մի՞ որ սրբըվեցան, չապա ան
(մէկալ) ինը ուր են.

18 Որ (իրենք հոս) չէին գտնը-
վիր՝ դառնալու զի փառք տալու,
որ միւս աս այլազգը :

19 Ու անոր ըսաց. ալ ելլէր
գնա, որ քու հաւատքդ քեզ ա-
ղընցուց :

20 Իբրև չարցաւ ՚ի փարիսեցւոցն՝ թէ երբ գայցէ արքայութիւնն այ. պատասխանի եւ նոցա՝ և ասէ. ոչ գայ արքայութիւն այ խտրանօք :

21 եւ չասիցեն թէ ահա՛ աստ է՝ կամ անդ, զի ահա արքայութիւն այ ՚ի ներքս ՚ի ձեզ է :

22 Ասաց և առ աշակերտսն. եկեսցեն աւուրք ցանկանալոյ ձեզ՝ մի յաւուրցն որդւոյ մարդոյ տեսանել, և ոչ տեսանիցէք :

23 եւ եթէ ասիցեն ձեզ՝ եթէ ահաւասիկ է՝ կամ անդ, մի երթայցէք գՆետ :

24 .Օ ի որպէս փայլակն փայլատակեալ ՚ի ներքոյ երկնից՝ ընդ երկինիւք ծագիցէ, նմանպէս և որդի մարդոյ յաւուրն իւրում :

25 Բայց նախ պարտ է նմա բազումս չարչարել՝ և խոտել յազգէս յայսմանէ :

26 եւ որպէս եղև յաւուրսն նոյ, նոյնպէս եղիցի և յաւուրս որդւոյ մարդոյ :

27 Ուտէին՝ ըմպէին՝ կանայս առնէին՝ և արանց լինէին, մինչև յօրն յորում եմուտ նոյ ՚ի տապանն, և եկն ջրհեղեղն՝ և կորոյս զամենեսին :

28 Նոյնպէս՝ և որպէս յաւուրսն ղովտայ եղև, ուտէին ըմպէին, գնէին, վաճառէին, անկէին՝ շինէին :

29 եւ յորում աւուր ել ղովտ ՚ի սոդովմայ, տեղացաւ հուր և ծծումբ յերկնից՝ և կորոյս զամենեսին :

30 Ըստ նմին օրինակի եղի-

20 Երբոր փարիսեցիները (իրեն) չարցուցին, որ այ արքայութիւնը երբ պիտոր գա : անոնց պատասխան տրվաւ՝ ու բսաց. այ արքայութիւնը՝ զրսըվանց երևացած բաներով չէ գար :

21 Ու չըսեն որ՝ հանա ան հոս կամ հոն է. ինչու որ՝ այ արքայութիւնը (հիմա) բուն ձեր մէջն է :

22 Աշակերտներուն ալ բսաց. օրեր պիտի գան՝ որ դուք բաժաք՝ որդոյ մարդոյ մէկ օրնալ տեսնելու, ու պիտոր չիտեսնէք :

23 Ու թէ որ ձեզի բսեն՝ որ հանա հոս է՝ կամ հոն, (դուք ա-նոր) եաւէն մի երթաք :

24 Պատճառը, ինչպէս որ փայլակը՝ երկընքին նեռքև (մէկ դին) որ կրկածկրլտա՝ ան երկընքին տակովը ինչման (մէկալ դին) լուսը կրցոթէ, անանկալ որդին մարդոյ իր օրը (պիտի երևնա) :

25 Միանթէ՝ պէտկ է որ ինքը առաջ շատ չարչարանք քաշէ, ու քամահրըվի աս ազգէս :

26 Ու ինտոր նոյա օրերը պատահեց, որդոյ մարդոյ օրերնալ անանկ պիտի ըլլա :

27 Որ կուտէին, կրխըմէին, կինիկ կառնէին՝ ու երիկ կառնէին, ինչման ան օրն որ նոյը տապանը մտաւ. ու ջրհեղեղն եկաւ, ու ան ամմէնքը կորսընցուց :

28 Անանկալ, ինտոր ղովտի օրերը եղաւ. (որ) կուտէին կրխըմէին, կրգընէին՝ կրծախէին, կրտրնկէին՝ կրշինէին :

29 Ու ան օրն որ ղովտը սոդոմէն ելաւ՝ երկընքէն կրակ ու ծրծումբ թափեցաւ, ու ան ամմէնքը կորսընցուց :

30 Ան կերպոիեալ պիտի ըլլա

յն և յաւուրն՝ յորում որդի մարդոյ յայտնելոց է :

31 Յայնմ աւուր որ կայցէ ի տանիս՝ և կարասի իւր ի տան, մի իջցէ առնուլ զայն. և որ յանդի իցէ, նոյնպէս մի դարձցի յետս :

32 Յիշեցէք զկինն ղովտայ :

33 Որ խնդրիցէ զանձն իւր ապրեցուցանել, կորուսցէ զնա. և որ կորուսցէ, ապրեցուսցէ զնա :

34 Ասեմ ձեզ. յայնմ գիշերի՝ թէ եղիցին երկու ի մի մահիճս, մին՝ առցի, և միւսն թողցի :

35 Եւ եթէ եղիցին երկու՝ աղալ ի միասին, մին՝ առցի, և միւսն թողցի. և եթէ իցեն երկու յանդի, մին՝ առցի, և միւսն թողցի :

36 Պատասխանի ետուն՝ և ասեն ցնա. յո՞ տր :

37 Եւ նա՝ ասէ ցնոսա. ուր մարմին է, անդր և արծուիք ժողովեսցին :

ան օրն որ՝ որդին մարդոյ կը յայտնըվի :

31 Ան օրը՝ թէ որ մէկը երդիքի վրա գանըվի՝ ու իր բաները տանը մէջ, պիտի չէնջնա անիկա առնելու. ու ան՝ որ արտն ըլլա, անանկ՝ ետ պիտի չդառնա :

32 Մտովիդ բերէք ղովտին կնիկը :

33 Ան որ իր անձը ապրեցընել կուզի՝ պիտի անիկա կորսընցունէ, ու ան որ կրկորսընցունէ, (ինքը) ան կապրեցընէ :

34 Ձեզի ըսեմ. ան գիշերը թէ որ երկու հոգի մէկ մահիճի մէջ գանըվին, (անոնց) մէկը կառնըվի՝ ու մէկալը (չառն) կըթողվի :

35 Ու թէ որ երկու հոգի միասեղ (ջաղացք) աղալու կետ ըլլան, մէկը կառնըվի՝ ու մէկալը կըթողվի : ու թէ որ մէկ արտիմը մէջ երկու հոգի ըլլան, մէկը կառնըվի՝ ու մէկալը կըթողվի :

36 Դարձան՝ ու իրեն ըսին՝ (ասոնք) ո՞ւր (կերթան) :

37 Անալ անոնց ըսաւ. ուրտեղ որ (մեռած) մարմինմը ըլլա՝ արծիվներնալ չոն կըժողվին :

Գ Լ. Ժ Ը.

1 Ասաց և առակ մի նոցա, սա այն՝ թէ պարտ է յամենայն ժամ կալ նոցա յաղօթս՝ և մի ձանձրանալ :

2 Ասէ. դատաւոր մի էր ի քաղաքի ուրեմն, յայ ոչ երկնչէր՝ և ի մարդկանէ ոչ ամաչէր :

3 Եւ այրի մի էր ի նմին քաղաքի, գայր առ նա և ասէր. դատ արա ինձ յոսոխէ իմմէ :

4 Եւ ոչ կամէր ի բազում

1 Անոնց մէկ առակմընալ ըսաւ, անոր վրայովը թէ պէտք է որ ամէն ատեն իրենք աղօթք ընեն, ու չի ձանձրընան :

2 Ըսաց, մէկ դատաւորմը կար մէկ քաղաքմը, որ աստուածմէ չէր վախնար, ու մարդուն ալ ամօթ չէներ :

3 Մէկ որբևայրիմընալ կար ան քաղաքը, (որ միշտ) անոր կուգար ու կըսէր, իմ դատաստանըս կըտրէ՝ իմ ներչակիս ձեռացը :

4 Ու անանկ՝ շատ ատենէն ի-

ժամանակս : յետ այնորիկ ասէ ի մոխ իւրում, թէ և յայ սէ երկնէիմ, և ի մարդկանէ սէ ամաչեմ,

5 Գանէ՝ վասն աշխատ առնել այր զիս այրոյն՝ արարիչ նմա զատ, զի մի՛ ի սպառ եկեալ թխանձիցէ զիս :

6 Եւ ասէ ցո. լուարուք զինէ զատաւորն անիրաւութեան ասէր :

7 Իսկ ած՝ ոչ առնիցէ վրէժխնդրութիւն ծառայից իւրոց, որ աղաղակեն առ նա ի տուէ և ի գիշերի, և երկայնամիտ միայն լինիցի առ նոսա :

8 Այո՛ ասեմ ձեզ. զի առցէ վրէժխնդրութիւն նոցա վաղվաղակի : իսկ որդի մարդոյ եկեալ, գտանիցէ՞ արդեաք հաւատս յերկրի :

9 Ասաց և առ ոմանս զանծագեալս յանձինս թէ արդարք իցեն՝ և խոտիցեն զառակս, զառակս զայս .

10 Մարք երկու ելին ի տաճարն կալ յաղօթս, մին փարիսեցի՝ և մեւսն մաքսաւոր :

11 փարիսեցին կայր մեկուսի, և զայս առանձին աղօթս մատուցանէր . ա՛ծ իմ՝ գոհանամ զքէն . զի ոչ եմ իբրև զայս ի մարդկանէ, գայիրշ տալոյս՝ և զանիրաւս՝ և զշնիս, կամ իբրև զայս մաքսաւոր :

12 Ամէ պահեմ երկիցս ի շաբաթու, և տամ տասանորդս յամենայն ստացուածոց իմոց :

13 Եւ մաքսաւորն կայր մեկուսի, և ոչ կամէր՝ և ոչ դասչ ընդ երկինս ամբառնալ . այլ կոծէր զկուրծս իւր՝ և ասէր . ա՛ծ՝ քաւեա զիս զմեղաւորս :

վէր՝ (անիկա) չէր ուզեր: անկէ եղաւ որ իր մըտքին մէջը ըսաւ. իբրեւ՝ ես աստուածմէն չեմ վախնար, ու մարդոցմէ ալ չեմ ամչնար .

5 Այլ՝ այս սրբևարիս ձեռքէն խալսելու համար՝ իր դատաստանը ընեմ, որ ան՝ ամէնէն իժիր չէ գա գլխոս ուտէ :

6 Ու տէր ըսաւ. լսեցէք մի՝ ան անիրաւ դատաւորը ինչ կըսէր :

7 Հապա ած իր ծառաներուն ոխը պիտի չեհանէ՞ մի, որ ցորեկ ու գիշեր իրեն լնկեր կըլլանչեն . ու միան՝ անոնք (չարչարուներուն) երկայնամիտ մի պիտոր ըլլա :

8 Ը դուրդ կըսեմ ձեզի, չեուշանար անոնց ոխը առնելու : բայց որդին մարդոյ երբոր գա, հաւատք պիտոր գտնէ՞ մի երկրի վրա:

9 Անոնց դէմա՝ ան առակըս ըսաց, որ ինքիրենին կրպարծենան՝ որ իրենք արդար ըլլան, ու ուրիշ շատոր վար կըշարչնեն .

10 Երկու հոգի տաճարը ելան աղօթք ընելու, մէկը՝ փարիսեցիմը, ու մէկալը՝ մաքսաւորմը :

11 փարիսեցին զատ կեցեր էր, ու մինաւոր աս աղօթքս կընէր . իմ ածը՝ քեզի գոհութիւն կուտամ, որ (ես) ուրիշ մարդոցպէս չեմ, որ յափշտակող են, ու անիրաւ, ու շնացող, կամ թէ՝ ան մաքսաւորիս պէս :

12 Հապա՝ շաբաթը երկու հեղ պաք կրպահեմ, ու բոլոր ունեցածներէս տասանորդ կուտամ:

13 Մաքսաւորնալ զատ կեցեր էր, ու սիրտ չէր ընէր աչքնալ դէպի երկինքը վերցընելու. հապա իր կուրծքը կրպարնէր ու կըսէր . ած՝ մեղաւորիս մեղքերը սրբէ :

14 Ասեմ ձեզ. Էջ սա արդարացեալ՝ ի տուն իւր՝ քան զնա: զի ամենայն որ բարձրացուցանէ զանձն իւր, խոնարհ չեսցի. և որ խոնարհչացուցանէ զանձն, բարձրասցի:

15 Մատուցանէին առ նա և մանկտիս՝ զի մերձենայցէ ի նոսա. իբրև տեսին աշակերտքն՝ սաստէին նոցա:

16 Իսկ յն կոչեցեալ զնոսա առ ինքն՝ ասէ. Թոյլ տուք մանկտւոյդ գալ առ իս, և մի արգելուք զոսա. զի այդպիսեացդ է արքայութիւն այ:

17 Ասէն ասեմ ձեզ. որ ոչ ընդունիցի զարքայութիւն այ իբրև զմանուկ, ոչ մտցէ ի նա:

18 Եւ եհարց զնա ոմն իշխան՝ և ասէ. վարդապետ բարի՝ զի՞նչ գործեցից, զի ըզկեանսն յաւիտենական ժառանգեցից:

19 Ասէ ցնա յն. զի՞ ասես զիս բարի. չէք ոք բարի, բայց մի ած:

20 Զպատուիրանսն գիտես. մի շնար, մի սպանաներ, մի գողանար, մի սուտ վկայեր, պատուեա զհայր քո և զմայր:

21 Եւ նա՝ ասէ. զայդ ամենայն պահեցի ի մանկութենէ իմմէ:

22 Իբրև լուաւ զայն յն, ասէ ցնա. մեւս ևս պակաս է քեզ. զամենայն ինչ զոր ունիս՝ վաճառեա՛ և տուր աղքատաց, և ունիցիս գանձս յերկինս. և եկ զկնի իմ:

23 Նա՝ իբրև լուաւ զայս, տրտմեցաւ. քանզի էր մեծատուն յոյժ:

24 Իբրև տեսս զնա յն տըրտ-

14 Զկզի ըսեմ՝, (որ) ասիկա՝ ան մէկալէն աւ կրկնի արդար եղած իր տունը կ՚ենայ: որ՝ ամէն ովոր իր անձը կըբարձրցնէ՝ ան կըցածնա. ու ան որ անձը կըցածցունէ՝ կըբարձրընա:

15 Մանտրը մըղաքներ աւ իրէն առնելը կըհանէին, որ անոնց դըպչի. աշակերտներն որ ան տեսան՝ անոնք ետ կըբըշտէին:

16 Յն աւ անոնք իր քովը կանչեց, ըսաց. աս տղոցը թոյլ տուէք որ քովը գան, ու առնոնք մի արգիլէք. որ այ արքայութիւնը առանկներունն է:

17 Ակամաբիտ ձեզի կըսեմ. ան որ այ արքայութիւնը մէկ տղեկիմը պէս չի ընդունիներ, անիկա հոն չի մտներ:

18 Ու մէկ իշխանաւոր մարդ իրեն հարցուց՝ ու ըսաց. բարի վարդապետ՝ (ես) ինչ ընեմ՝ որ յաւիտենական կեանքը ժառանգեմ:

19 Յն անոր ըսաց. ինծի ինչու բարի կըսես. ուրիշ բարիմը չկա, որ (միան) մէկ Աած.

20 Պատուիրանքները գիտես. մի շնար, մի ըսպանաներ, մի գողանար, մի սուտ վկայեր, քու հօրըդ ու մօրըտ պատիվ տուր:

21 Անոնալ ըսաց. աս բոլորնալ (ես) իմ աղկուցմէս չեմ պահեր եմ:

22 Յն երբոր աս լսեց՝ իրեն ըսաւ. մէկ ուրիշ բանմ՚ընալ քեզի կըպակսի. բոլոր ինչ որ ունիս ծախէ՝ ու ախկըմաներուն տուր, որ քու գանձդ երկինքը ունենաս. ու եկը իմ ետևէս եկող:

23 Ան երբոր աս լսեց՝ տրտմած կեցաւ. պատճառն որ՝ ինքը շատ չարուստ էր:

24 Յն երբոր անիկա անանկ

մեալ, ասէ· ՚ի բաղձս ղժուարաւ
որ ինչս ունիցին՝ մտանիցեն
յարքայութիւն այ :
25 Դիւրագոյն է կեղ մալլոյ
ընդ ծակ ասղան անցանել,
քան մեծատան յարքայութիւն
այ մտանել :
26 Եւ որ լուանն՝ ասէին
ցնա· և ո՞ կարիցէ ապրել :
27 Եւ նա ասէ· անհնարինք
առ ի մարդկանէ, հնարաւոր են յայ :
28 Եւ ասէ պետրոս· ահա
մեք թողաք զամենայն
ինչ զմեր, և եկաք զքէն քո :
29 Եւ նա՝ ասէ ցնոսա· ա-
մէն ասեմ ձեզ· եթէ ոչոք է՝ որ
թող զտուն, կամ զծնողս,
կամ զեղբարս, կամ զկին,
կամ զորդիս՝ վասն արքայու-
թեան այ·
30 եթէ ոչ առնուցու բազ-
մապատիկ ՚ի ժամանակի յայս-
միկ· և յաշխարհին որ գալոցն
է՝ զկեանն յաւիտենական
ժառանգեսցէ :
31 Եւ առեալ զերկոտա-
սանսն առանձինն՝ ասէ ցնո-
սա· ահաւասիկ ելանեմք յե-
րուսաղէմ, և կատարեսցին ա-
մենայն զրեալքն մարգարէիւք
վասն որդւոյ մարդոյ :
32 .Ո ՚ի մատնեսցի հեթա-
նոսաց, և կատակեսցի·

33 Եւ հարկանիցեն, և
սպանանիցեն զնա· և յերիր
աւուր յարիցէ :
34 Եւ նոքա՝ ոչինչ իմա-
ցան յայնցանէ, այլ էր բանն
ծածկեալ ՚ի նոցանէ, և ոչ
գիտէին զասացեալն :
35 Եւ եղև ՚ի մօտեցն նորա
յերիքով, կոյր ոմն նստէր առ
տրտուր առեալ, բաց· անունք որ
ըստ երկրի տէր են՝ ինձ որ զրժար այ
արքայութիւնը պիտի մըտանեն :
25 Այլ հեշտ կըլլա որ մալու-
խր ասեղին ծակէն անցնի, քան
թէ հարուստը այ արքայութիւնը
մըտնա :
26 Ու անոնք որ լսեցին՝ կը-
սէին· ալ ով կրնա ապրիլ :
27 Անոնց ըսաց· մարդոց դի-
մաց անկարելի բաներըն՝ աստուծ-
մէ կարելի են :
28 Պետրոս սկսաւ ըսել· Տէ՛ր
մենք մեր բոլոր բաներնիս թո-
ղուցինք՝ ու քու ետեւդ եկանք :
29 Ինքնալ անոնց ըսաց· Ճըշ-
մարիտ ձեզի կըսեմ· չըլլար որ
մէկը (իր) տուները, կամ ծնողքը,
կամ եղբայրները, կամ կնիկը,
կամ որդիքը՝ այ արքայութեանը
համար թողու·
30 Որ (ինքը ան բաները) է-
ւելքը չառնէ հիմակու ատենիս
մէջը· ու գալու աշխարքնալ՝
յաւիտենական կեանքը ժա-
ռանգէ :
31 Ու ան տասներկուքը ա-
ռանձին առաւ՝ իրենց ըսաց· ալ
հիմա (մենք) երուսաղէմ կելլանք,
ու մարգարէից ձեռքով՝ բոլոր
գրուածները որդոյ մարդոյ համար՝
պիտի կատարվին :
32 Որ ան՝ հեթանոսներուն
ձեռքը պիտոր մատնըվի, ու ծաղր-
ուծիծաղ ըլլա :
33 Ու ինքը ծեծեն՝ ու սպան-
նեն· ու (ան ալ) իրեք օրէն յա-
րութիւն առնէ :
34 Անոնք ալ ասոնցմէ իրք-
մը չհմացան, որ՝ բանը իրենցմէ
գոց պահած էր, որ ալ (անոր)
ըսածը չէին հասկընար :
35 Ու ինքը՝ ալ երիքովին որ
կըմօտենար կոր, (հոն) մէկ կուր

Հանապարհաւն՝ մուրացիկ :

36 Իբրև լուաւ զանգանել ժողովրդեանն, հարցանէր՝ թէ զի՞նչ իցէ այն :
37 Եւ պատմեցին նմա՝ թէ յիսուս Նազովրեցի անցանէ :
38 Աղաղակեաց և ասէ . յիսուս որդի դաւիթ՝ ողորմեա՛ ինձ :

39 Եւ որ առաջին երթային՝ սաստէին նմա զի լռեսցէ . և նա՝ աւս առաւել աղաղակէր , որդի դաւիթ՝ ողորմեա՛ ինձ :

40 Օտեղի առ յիսուս, և հրամայեաց ածել զնա առ իւր : և երբեմն մերձ եղև առ նա, եհարց զնա և ասէ .
41 Ո՛ինչ կամիս զուն՝ զի արարից քեզ : և նա ասէ . տէր զի բացցին աչք իմ՝ և տեսից :
42 Եւ յիսուս՝ ասէ ցնա . հայեաց՝ հաւատք քո կեցուցին զքեզ :
43 Եւ առ ժամայն եռես , և երթայր դնա նորա՝ և փառաւորէր առնէր զԱստուած : և ամենայն ժողովրդեանն տեսեալ , տայր օրհնութիւն Աստուծոյ :

մարդմէ ձամբուն վրան նըստեր՝ կրմուրար :
36 (Ասիկա) երբոր ժողովըրդին անցնելուն ձանը լսեց, կը հարցընէր որ ան ի՞նչ է :
37 Ու իրեն ըսին որ՝ յիսուս Նազովրեցին կանցնի կոր :
38 (Ինքնալ) ձանը վերուց ու ըսաց . յիսուս որդի դաւիթ՝ ինծի ողորմէ՛ :
39 Ու անոնք որ առջևէն կերթային՝ անիկա կըշնխէին որ ձնըր քաշէ . ու ինքըալ էվելի կըկանչվըռտէր . որդի դաւիթ՝ ինծի ողորմէ՛ :
40 Յիսուս կանգ առաւ, ու հրամայեց որ ան իր քովը բերեն : ու իրեն քովին որ մօտեցաւ , անոր հարցուց ու ըսաց .
41 Ի՞նչ կուզես որ քեզի ընեմ : անալ ըսաւ . տէր՝ որ աչվըներըս բացվին , ու տեսնամ :
42 Յիսուս ալ անոր ըսաց . նայէ, քու հաւատքդ քեզ ողջընցուց :
43 Ու շուտմը տեսաւ, ու ինքնալ անոր հետը կերթար՝ ու ոյ փառք կուտար : ու բոլոր ժողովրդին որ ան տեսան՝ ոյ օրհնելնիք կըկարդային :

ԳԼ. ԺԹ.

1 Եւ մտեալ շրջէր ընդ երիքով :
2 Եւ ահա՝ այր մի անուն կոչեցեալ զաքէոս . և նա էր մաքսապետ , և ինքն մեծատուն :
3 Եւ խնդրէր տեսանել՝ թէ ո՞վ իցէ յիսուս , և ոչ կարէր ՚ի բազմութենէն , զի կարճ էր հասակաւ :
4 Եւ ընթացեալ յառաջա՝ ել ՚ի ժանտաթզենին զի տե-

1 Ու ալ երիքովը մտաւ՝ (հոն) կըսպասրատը :
2 Ու հանա մէկ մարդմը անունը զաքէոս ըսած . որ անիկա մաքսապետ մըն էր , ու ինքնալ հարուստ :
3 Ու կուզը տեսնել թէ՝ ո՛վ է ան յիսու . ու շատվոր մարդոցմէն չէր կրնար . ինչու որ (ինքը) հասակովը կարճուկ մըն էր :
4 Ու ալ առջևէն վազեց գնաց ժանտ (ըսած) թուզին ծառը ելաւ

անիցէ զնա· քանզի ընդ այն
խակ անցանելոց էր :
5 Իբրև եկն ՚ի տեղին՝ հայե-
ցաւ ՚ի վեր յս և ասէ ցնա ·
զակքէ՝ փութա՝ էջ այտի , զի
այսօր ՚ի տան քումմ արժան է
ինձ ագանել :
6 փութացաւ և էջ և ըն-
կալաւ զնա ուրախութեամբ :

7 Իբրև տեսին ամենեքին ,
տրտնչին և ասէին՝ թէ առ
առն մեղաւորի եմուտ լուծա-
նել :
8 Եկն եկաց զակքէոս՝ և
ասէ ցտէր . տէր՝ ահա զկէս ըն-
չից իմոց տաց աղքատաց . և
եթէ զոք զրկեցի , չատուցից
չորեքկին :

9 Եւ ասէ ցնա յս· այսօր և-
ւ փրկութիւն տանս այսիկ ·
քանզի և սա որդի աբրահա-
մու էր ·
10 .Օ ի եկն որդի մարդոյ
խնդրել՝ և կեցուցանել զկո-
րուսեալն :
11 Եւ մինչ դեռ նորա զայն
լսէին, յաւել առաք մի՝ և ա-
սէ, վասն մերձենալոյ նորա
յերուսաղէմ, և համարելոյ նո-
ցա՝ թէ առաժամայն յայտնելոյ
է արքայութիւն աւ :

12 Ասէ · այր ոմն՝ ազնուա-
կան գնաց յաշխարհ հեռի՝ առ-
նել իւր թագաւորութիւն , և
դառնալ :
13 Եւ կոչեցեալ զծառայս
իւր՝ ետ նոցա տասն մնաս , և
ասէ ցնոսա · յարգեցէք զայդ՝
մինչև եկից :
14 Եւ քաղաքացիքն նորա
ատէին զնա , առաքեցին հրեշ-
տակս զնա ասելով՝ թէ ոչ կա-
միմք զայս թագաւորել ի վերայ
մեր :
15 Եւ եղև դարձեալ նորա
առեալ զթագաւորութիւնն , և
ասաց զկոչել զծառայսն զայնո-
սիկ՝ որոց ետ զարծաթն , զի
գիտասցէ զինչ ինչ առեալ էր
ամենայն վաճառականացն :
16 Եկն առաջին՝ և ասէ ·
տէր՝ մնասդ քո տասն մնաս
արար :
17 Եւ ասէ ցնա · բարի ծա-
ռայ՝ վասն զի յոյժ հաւատարիմ
եղեր՝ լեր դու իշխան տասնից
քաղաքաց :
18 Եկն երկրորդ՝ և ասէ ·
տէր՝ մնասդ քո հինգ մնաս
արար :
19 Ասէ և սմա · դու լեր իշ-
խան հնգից քաղաքաց :
20 Եկն միւս՝ և ասէ · տէր՝
ահա մնասդ քո զոր ունէի ես
ի թաղի պահեալ :
21 Զի երկնչէի ես ՚ի քէն՝
զի մարդ դաժան ես՝ առնուս
զոր ոչ եդիր , և հնձես զոր ոչ
սերմանեցեր :
22 Ասէ ցնա · յբերանոյ քումմէ
դատիցեմ զքեզ , չարագործ ծա-
ռայ . գիտէիր զի մարդ դաժան
եմ ես՝ առնում զոր ոչ եդի , և
հնձեմ զոր ոչ սերմանեցի :
23 Եւ ընդէ՞ր ոչ ետուր զար-
ծաթն իմ ի սեղանաւորս , և
ես եկեալ՝ տոկոսիւք պահանջէի
զնա :
24 Եւ ասէ ցկայսն որ կային
առաջի նորա · առէք ՚ի նմանէ
զմնասն , և տուք ցայնմ որ ունի
տասն մնաս :
25 Եւ ասեն ցնա · տէր՝ ունի
տասն մնաս :
26 Ասէ · ասեմ ձեզ՝ թէ ամե-
նայնի որ ունի՝ տացի նմա , և
նա առատասցի . և որ ոչ ունի՝
և զոր ունի նմանէ առցի :
27 Բայց զթշնամիսն իմ զայնո-
սիկ՝ որ ոչ կամեցան զիս թա-
գաւոր լինել ի վերայ իւրեանց՝
բերէք ՚ի գալ առաջի իմում՝
և սպանէք զնոսա առաջի իմ :

28 Եւ զայս ասացեալ՝ գնա-
ցեալ էր առաջի նոցա՝ ելանել
յերուսաղէմ :
29 Եւ եղև մերձենալ նորա
առ Բեթփագէ և ՚ի Բեթանիա՝
առ լեառնն որ կոչի Ձիթենեաց ,
առաքեաց երկուս յաշակերտաց
իւրոց ,
30 Եւ ասէ · երթայք ՚ի գեղ-
ջն որ առաջի ձեր է , յորում
մտեալ՝ գտանիցէք զերինջ մի
կապեալ , յոր ոչ ոք երբէք ի
մարդկանէ նստաւ . արձակեցէք
զնա և բերէք ցիս :
31 Եւ եթէ ոք հարցանիցէ
զձեզ՝ ընդէ՞ր արձակէք զնա՝
ասասջիք ցնա · զի տէրն պէտ
է նմա :
32 Գնացեալ առաքեալքն՝ գտին
որպէս ասացն ցնոսա :
33 Եւ արձակեցին զերինջն՝
և ասեն տէրունք նորա ցնոսա ·
ընդէ՞ր արձակէք զերինջն :
34 Եւ նոքա ասեն · զի տէրն
պէտ է նմա :
35 Եւ բերին զնա ցՅիսուս ,
և արկեալ զհանդերձս իւրեանց
ՙի վերայ երինջին՝ նստուցին
զՅիսուս :
36 Եւ գնացեալ նորա՝ տա-
րածանէին զհանդերձս իւրեանց
ՙի ճանապարհի :
37 Եւ մերձենալ նորա ՚ի
սկիզբն իջման լերինն Ձիթե-
նեաց՝ սկսան ամենայն բազմու-
թիւն աշակերտացն ուրախա-
նալ և օրհնել զԱստուած ՚ի
ձայն մեծ վասն ամենայն զո-
րութեանց զոր տեսին ,
38 Եւ ասէին · օրհնեալ է
թագաւորն որ գայ յանուն տե-
ռն . խաղաղութիւն յերկինս ,
և փառք ՚ի բարձունս :
39 Եւ ոմանք ՚ի փարիսե-
ցւոցն ՚ի բազմութենէն ասեն
ցնա · վարդապետ , հանգիր զաշա-
կերտս քո :
40 Եւ նա պատասխանի ետ
և ասէ ցնոսա · ասեմ ձեզ՝ թէ
եթէ սոքա լռեսցեն՝ քարինքն
պոռասցեն :
41 Եւ մերձենալ նորա՝ տես-
ցէ զքաղաքն՝ և լայ ՚ի վերայ
նորա ,
42 Եւ ասէ · եթէ գիտասցե-
ր և դու՝ և ՚ի քում աւուրդ
զխաղաղութիւնդ քո , բայց
արդ ծածկեցան ՚ի քէն աչաց
քոց .
43 Զի եկեսցեն աւուրք ՚ի
քեզ՝ և պատնեշեսցեն զքեզ
թշնամիք քո , և պաշարեսցեն
զքեզ , և նեղեսցեն զքեզ ամե-
նայնիւ կողմանէ ,
44 Եւ հարցեն զքեզ ընդ
երկիր , և զորդիս քո որ ՚ի
քեզ , և ոչ թողուցուն ՚ի քեզ
քար ՚ի վերայ քարի , վասն զի
ոչ գիտացեր զժամ այցելու-
թեան քոյ :
45 Եւ մտեալ ՚ի տաճարն՝
սկսաւ հանել զվաճառականսն
ՙի նմանէ ,
46 Եւ ասէ ցնոսա · գրեալ է
թէ տունն իմ տունն աղօթից
է , և դուք արարէք զայն ՚ի
քարշ աւազակաց :
47 Եւ էր ուսուցանէր զամե-
նայն աւուրս ՚ի տաճարին .
իսկ քահանայապետքն և դպիր-
քն և երեսփոխանքն ժողովրդեան
կային զնա սպանանել ,
48 Եւ ոչ գտանէին զինչ ինչ
արասցեն նմա , զի ամենայն ժո-
ղովուրդ կախեալ էին ՚ի նմա
լսելով զնա :

20 Եւ եղև յաւուրցն յոր-
մէ ուսուցանէր զամենայն ժո-
ղովուրդ ՚ի տաճարին և աւե-
տարանէր , եհաս քահանայապետ-
քն և դպիրքն ընդ երեսփոխա-
նաւքն ,
2 Եւ ասեն ցնա · ասա մեզ
ընդ որո՞ իշխանութեամբ այս
առնես , կամ ո՞ է որ տուեալ է
քեզ զիշխանութիւնս զայս :
3 Եւ նա պատասխանի ետ և
ասէ ցնոսա · հարցից և ես զձեզ
բան մի , և ասասջիք ինձ .
4 Մկրտութի՞ւնն Յովհաննու
յերկնից էր , թէ յմարդկանէ :
5 Եւ նոքա խորհեցան ընդ
միմեանս՝ և ասեն · եթէ ասիցեմք
թէ յերկնից՝ ասիցէ մեզ · ընդէ՞ր
ոչ հաւատացէք նմա :
6 Եւ եթէ ասիցեմք թէ յմար-
դկանէ՝ ամենայն ժողովուրդ
քարկոծեսցեն զմեզ , զի համո-
զեալ են թէ Յովհաննէս մար-
գարէ է :
7 Եւ պատասխանի ետուն թէ
ոչ գիտեմք զորմէ :
8 Եւ Յիսուս ասէ ցնոսա ·
եւ ես ոչ ասեմ ձեզ՝ ընդ որո՞
իշխանութեամբ այս առնեմ :
9 Եւ սկսաւ առակս ասել
ցժողովուրդն զայս · այր ոմն
տնկեաց այգի մի , և տուեալ
զնա ՚ի ձեռն գործաւորաց՝ գնա-
ցեալ էր ՚ի գաւառ մի ՚ի բազում
ժամանակս :
10 Եւ յաւուրն ՚ի ժամանա-
կի առաքեաց առ գործաւորսն
զծառայ մի՝ զի ՚ի պտղոյ այգւոյն
տացեն նմա . և գործաւորքն
հարեալ զնա՝ ետուն զնա դա-
տարկ :
11 Եւ յաւել առաքել ծառայ
մի այլ . և նոքա հարեալ և
պատուհասեալ զնա՝ ետուն զնա
դատարկ :
12 Եւ յաւել երրորդ առա-
քել զմի այլ . և նոքա զայն
վիրաւորեալ՝ հանին արտաքս :
13 Եւ ասէ տէր այգւոյն ·
զի՞ արասցեմ . առաքեցից զորդի
իմ զսիրելի , գուցէ զայն երբ
տեսցեն՝ ամաչեսցեն :
14 Եւ երբ տեսին զնա գոր-
ծաւորքն՝ խորհեցան ընդ մի-
մեանս՝ և ասեն · սա է ժառան-
գաւորն , եկայք սպանցուք զնա ,
զի մեր եղիցի ժառանգութիւնն :
15 Եւ հանեալ զնա արտաքս
յայգւոյն՝ սպանին . զի՞ արասցէ
նոցա տէր այգւոյն :
16 Եկեսցէ և կորուսցէ զգոր-
ծաւորսն , և տացէ զայգին այլ-
ոց . և լուեալ՝ ասեն · մի եղիցի :
17 Եւ նա նայեցեալ ՚ի վեր
ասէ · զի՞ է ուրեմն զոր գրեալ
է թէ քարն զոր անարգեցին
շինողքն , նա եղև ՚ի գլուխ
անկեան :
18 Ամենայն որ անկցի ՚ի
քարն այն՝ խորտակեսցի , և
յորոյ վերայ անկցի՝ հարցէ զնա
և մանրեսցէ :
19 Եւ խորհեցան քահանայա-
պետքն և դպիրքն ՚ի նմին ժա-
մու ձեռն արկանել ՚ի նա , և
երկեան ՚ի ժողովրդենէն . զի
գիտացին թէ զնոսա ասաց զա-
ռակսն զայս :
20 Եւ հսկեալ՝ առաքեցին
հետախոսս՝ որ ինքեանք ձևա-
նային արդարոց , զի բռնեսցեն
զնա ՚ի խօսից , և մատնեսցեն
զնա իշխանութեան և հրամա-
նատարութեան տեառն :
21 Եւ հարցին զնա՝ և ասեն ·
վարդապետ , գիտեմք զի ուղիղ
խօսիս և ուսուցանես , և ոչ
առնուս զերեսս մարդկան , այլ
զճանապարհ Աստուծոյ ճշմա-
րիտ ուսուցանես :
22 Արդ հարկ է մեզ տալ
հարկս կայսեր , թէ ոչ :
23 Եւ նա ընկալեալ զխորհուրդ
նոցա՝ ասէ ցնոսա · զի՞ փորձէք
զիս :
24 Ցուցէք ինձ զդահեկան .
ո՞ է պատկեր և գիր նորա :
Եւ նոքա պատասխանի ետուն
և ասեն · կայսերն է :
25 Եւ նա ասէ ցնոսա · տուք
զկայսերն կայսեր , և զԱստուծոյ
Աստուծոյ :
26 Եւ ոչ կարացին զբան նո-
րա բռնել առաջի ժողովրդեան ,
և զարմացեալ ՚ի պատասխանի
նորա՝ լռեցին :
27 Եւ մերձեցեալ ոմանք ՚ի
սադուկեցւոցն՝ որ ասեն զան-
յարութիւն չիք ,
28 Հարցանէին զնա և ասէին ·
վարդապետ , Մովսէս գրեաց
մեզ եթէ եղբայր ոմանց եթէ
մեռանիցի և կին ունիցի , և
անորդի իցէ՝ առցէ եղբայրն
զկինն նորա , և յարուսցէ սերունդ
եղբաւր իւրոյ :
29 Եւ եղեն եղբարք եօթն .
և առեալ առն՝ մեռաւ անորդի :
30 Եւ առ երկրորդն և մեռաւ
անորդի :
31 Եւ առ երրորդն , և նոյն-
պէս եօթնեքին , և ոչ թողին
որդի , և մեռան :
32 Եւ յետ ամենեցուն մե-
ռաւ և կինն :
33 Արդ յարութեան ո՞ կին
լինիցի նոցա , զի եօթնեքին
ունէին զնա կին :
34 Եւ Յիսուս ասէ ցնոսա ·
որդիք աշխարհիս այսորիկ ա-
ռնուն կանայս և տան ամուսին ,
35 Իսկ որ արժան արարեալ
իցեն հասանել աշխարհին յայ-
մմիկ և յարութեանն ՚ի մեռելոց՝
ոչ առնուն կանայս և ոչ տան
ամուսին ,
36 Եւ ոչ կարեն ևս մեռանել .
զի հրեշտակաց նմանք են , և
որդիք Աստուծոյ են՝ որդիք
յարութեան :
37 Եւ զի մեռեալքն յարիցեն՝
և Մովսէս ցուցանէ ՚ի հրեղէն
մորենին , որպէս ասէ տէր զԱս-
տուած Աբրահամու և զԱստուած
Իսահակայ և զԱստուած Յակո-
բայ :
38 Ոչ է Աստուած մեռելոց
այլ կենդանեաց . զի նմա ամե-
նեքին կենդանի են :
39 Պատասխանի ետուն ոմանք
ՙի դպրացն և ասեն · վարդա-
պետ , բարւոք ասացեր :
40 Եւ ոչ ևս համարձակեցան
հարցանել նմա զինչ ինչ :
41 Եւ նա ասէ ցնոսա · զի՞
ասեն զՔրիստոս լինել որդի
Դաւթի :
42 Եւ ինքն Դաւիթ ասէ ՚ի
գիրս սաղմոսի · ասաց տէր տե-
առն իմում · նստիր ՚ի ձախ-
միոյ իմմէ ,
43 Մինչև եդից զթշնամիս
քո սաստիկ ոտից քոց :
44 Արդ Դաւիթ տէր կոչէ
զնա , և որդի նորա ո՞րպէս
լինի :
45 Եւ լուեալ ամենայն ժո-
ղովրդեան՝ ասէ ցաշակերտսն ·
46 Զգուշացարուք ՚ի դպրաց
որ կամին երթալ շրջիլ յերկա-
րաւոր հանդերձս , և սիրեն
ողջոյնս ՚ի հրապարակս , և
գլխաւորս ՚ի ժողովս , և առա-
ջին տեղիս ՚ի հանդէսս ,
47 Որ ուտեն զտունս այրե-
ացն ՚ի պատրուակ երկայն աղ-
օթից . նոքա առնուն գատաս-
տանի առաւել :

21 Եւ հայեցեալ՝ տեսանէր
զհարուստսն որ արկանէին զպա-
տարագս իւրեանց ՚ի գանձա-
նակն ,
2 Եւ տեսանէր և զաղքատ
այրին մի որ արկանէր անդ
երկու դրամ ,
3 Եւ ասէ · ճշմարիտ ասեմ
ձեզ՝ թէ այրին աղքատ զայս
ամենեցուն առաւել արկ ,
4 Զի ամենեքին ՚ի պարտու-
ցէ իւրեանց արկին պատարագ
Աստուծոյ , և նա ՚ի պակասու-
թենէ իւրմէ զամենայն կեանս
զոր ունէր արկ :
5 Եւ ոմանց ասելոց զտաճա-
րին զի քարամբ գեղեցկաց և
ընծայիւք զարդարեալ էր ,
6 Ասէ · զայսոսիկ զոր տես-
անէք՝ եկեսցեն աւուրք յորս
մի մնասցէ քար ՚ի վերայ քա-
րի որ ոչ քակտեսցի :
7 Հարցանէին զնա և ասէին ·
վարդապետ , երբ՞ եղիցին այս-
ոքիկ , և զի՞ նշան իցէ յորժամ
սկսցին այսոքիկ լինել :
8 Եւ նա ասէ · զգուշացարուք
մի մոլորեցուսցեն զձեզ , զի
բազումք եկեսցեն յանուն իմ՝
ասելով թէ ես եմ , և ժամ մե-
ծացաւ . մի երթայք զհետ նոցա :
9 Եւ յորժամ լուիցէք զպա-
տերազմս և զխռովութիւնս՝ մի
երկնչիք . զի պարտ է զայսոսիկ
նախ լինել , այլ ոչ անդէն է
վախճան :
10 Յարուցցէ ազգ ՚ի վերայ
ազգի և թագաւորութիւն ՚ի վե-
րայ թագաւորութեան ,
11 Եւ երկրաշարժք մեծամեծք
եղիցին ՚ի տեղիս և սովք և
մահք , և տեսիլք սոսկալիք և
նշանք մեծամեծք յերկնից եղի-
ցին :
12 Այլ առաջի այսոցիկ ամե-
նայնցուն ձեռն արկցեն ՚ի ձեզ
և հալածեսցեն զձեզ , մատնե-
լով ՚ի ժողովարանս և ՚ի բան-
տարկութիւն , տարեալ առաջի
թագաւորաց և իշխանաց վասն
անուան իմոյ ,
13 Եւ եղիցի ձեզ ՚ի վկայու-
թիւն :
14 Դիցէք ՚ի սիրտս ձեր մի
նախապատրաստել զպատաս-
խանի ձեր ,
15 Զի ես տաց ձեզ բերան և
իմաստութիւն , զոր ոչ կարասցեն
հակառակել և ոչ ընդդիմանալ
ամենեքին հակառակորդք ձեր :
16 Մատնեսցեն զձեզ և ծնող-
քն և եղբարքն և ազգականքն
և բարեկամքն , և զոմանս ՚ի
ձենջանէ սպանցեն ,
17 Եւ եղիջիք ատելիք ամե-
նայն մարդկան վասն անուան
իմոյ ,
18 Եւ մազ մի ՚ի գլխոյ ձե-
րոյ ոչ կորիցէ :
19 ՚ի համբերութեան ձերում
շահեսջիք զանձինս ձեր :
20 Եւ յորժամ տեսանիցէք
զերուսաղէմ պաշարեալ զօրօք՝
յայնժամ գիտասջիք թէ մերձե-
ցաւ աւերումն նորա :
21 Յայնժամ որ ՚ի Հրէաս-
տան իցեն՝ փախիցեն ՚ի լեառն ,
և որ ՚ի մէջ նորա՝ ելցեն , և
որ ՚ի դաշտս՝ մի մտցեն ՚ի նա :
22 Զի աւուրք վրիժուց են
սոքա՝ լցանել զամենայն որ գրեալ
է :
23 Վա՛յ յաղուաց և ՚ի ծծե-
ցուցանողս յաւուրսն յայնոսիկ .
զի լինելոց է նեղութիւն մեծ
յերկրի և բարկութիւն ՚ի ժո-
ղովրդեանս այսմիկ :
24 Եւ անկցին ՚ի բերան սու-
սեր , և գերեալ տարցին յամե-
նայն ազգս , և երուսաղէմ կոխ-
եսցի յազգաց մինչև լցցին ժա-
մանակք ազգաց :
25 Եւ լինիցին նշանք յարե-
գական և ՚ի լուսնի և ՚ի աստ-
ղս , և ՚ի վերայ երկրի նեղու-
թիւն ազգաց ՚ի շփոթմանէ ծո-
վուն և ալեաց նորա ,
26 Եւ հոգիք մարդկան տկա-
րասցին ՚ի սարսափէ և ՚ի սպա-
սումն որ գայցեն ՚ի վերայ
տիեզերաց . զի զօրութիւնք
երկնից շարժեսցին :
27 Եւ յայնժամ տեսցեն զՈր-
դի մարդոյ եկեալ ՚ի ամպու
հանդերձ զօրութեամբ և փա-
ռաւք բազմաւք :
28 Եւ յորժամ սկսցին այս-
ոքիկ լինել՝ յուսացարուք և
վերացուարուք զգլուխս ձեր ,
զի մերձեցաւ ազատութիւն ձեր :
29 Եւ ասաց նոցա առակս ·
տեսէք զթզենին և զամենայն
ծառս ,
30 Յորժամ ծաղկեսցին՝ տես-
անէք և գիտասջիք ՚ի ձենջա-
նէ թէ մերձ է ամառն :
31 Նոյնպէս և դուք յորժամ
տեսանիցէք զայսոսիկ լինել՝
գիտասջիք թէ մերձ է արքայու-
թիւն Աստուծոյ :
32 Ամէն ասեմ ձեզ՝ թէ մի
անցցէ ազգս այս մինչև զայս-
ոսիկ ամենայն լինիցին :
33 Երկինք և երկիր անցա-
նիցեն , և բանք իմ ոչ անցա-
նիցեն :
34 Զգուշացարուք ՚ի ձեզ
մի ծանրասցին սիրտք ձեր ՚ի
գինարբուսից և ՚ի հարբեցու-
թենէ և ՚ի մտաց կենցաղոց ,
և յանկարծ հասցէ ՚ի ձեզ աւուր
յայնմիկ :
35 Զի որպէս որոգայթ հասա-
նիցէ ՚ի վերայ ամենայն երե-
սաց երկրի :
36 Արդ արթնացարուք ՚ի
ամենայն ժամ աղաչելով զի
արժան արարեալ լինիցիք փա-
խուցանել զամենայն զայս որ
լինելոց է , և կալ առաջի որդ-
ւոյն մարդոյ :
37 Եւ էր զցերեկ ուսուցա-
նէր ՚ի տաճարին , և զիրիկուն
ելեալ՝ հանգչէր ՚ի լերինն որ
կոչի Ձիթենեաց :
38 Եւ ամենայն ժողովուրդ
կանուխ ելանէին առ նա ՚ի տա-
ճարն՝ լսել զնա :

22 Եւ մերձենայր տօնն
անխմորոց որ կոչի զատկին ,
2 Եւ խորհէին քահանայապետքն
և դպիրքն զիարդ սպանցեն զնա ,
և երկեան ՚ի ժողովրդենէն :
3 Եւ մտեալ սատանայ ՚ի Յու-
դա որ կոչի Իսկարիովտացի ,
որ էր ՚ի թուոյ տասնեցն ,
4 Եւ գնացեալ խօսեցաւ ընդ
քահանայապետսն և ընդ զօրա-
վարսն՝ զիարդ մատնեսցէ զնա
նոցա :
5 Եւ ուրախացեալ՝ ուխտեցին
տալ նմա արծաթ :
6 Եւ նա խոստացաւ , և էր
խնդրէր զժամ յարմար մատն-
ելոյ զնա նոցա առանց ժողով-
րդեան :
7 Եհաս աւուրն անխմորոց ՚ի
որում պարտ էր մատաղ զատ-
կին ,
8 Եւ առաքեաց զՊետրոս և
զՅովհաննէս՝ և ասէ · գնացէք
պատրաստեցէք մեզ զզատիկն
զի կերիցուք :
9 Եւ նոքա ասեն ցնա · ո՞ւր
կամիս զի պատրաստեսցուք :
10 Եւ նա ասէ ցնոսա · ահա
մտանելոյ ձերոյ ՚ի քաղաքն՝
պատահեսցէ ձեզ մարդ մի ջուր
բարձեալ , զնա ՚ի տուն յոր
մտանիցէ ,
11 Եւ ասասջիք տանուտերին
տանն · ասէ քեզ վարդապետն ·
ո՞ է տեղի հանգստեան իմոյ ,
ուր զզատիկն ընդ աշակերտս
իմ կերիցեմ :
12 Եւ նա ցուցցէ ձեզ տուն
մեծ յարկեալ , անդ պատրաս-
տեսջիք :
13 Եւ գնացեալ նոքա՝ գտին
որպէս ասացն ցնոսա , և պատ-
րաստեցին զզատիկն :
14 Եւ յորժամ եհաս ժամն՝
նստաւ և տասն առաքեալքն ընդ
նմա :
15 Եւ ասէ ցնոսա · ցանկու-
թեամբ ցանկացայ զզատիկս
զայս ընդ ձեզ կերակրել մինչ-
դեռ չարչարիմ ,
16 Զի ասեմ ձեզ՝ թէ ոչ կերի-
ցից ևս զնա մինչև լցցի նա
յարքայութեան Աստուծոյ :
17 Եւ առեալ զբաժակ՝ շնոր-
հակալ եղև և ասէ · առէք զայս
և բաժանեցէք ՚ի միմեանս ,
18 Զի ասեմ ձեզ՝ թէ ոչ ևս
արբից յայգւոյ զատկէ մինչև
արքայութիւն Աստուծոյ գայցէ :
19 Եւ առեալ զհաց՝ շնորհակալ
եղև և բեկ և ետ նոցա և ասէ ·
զայս է մարմին իմ որ ՚ի ձեր
համար տրի , զայս արարէք ՚ի
յիշատակ իմ :
20 Նոյնպէս և զբաժակն ետ
նոցա յետ ընթրելոյ և ասէ ·
զբաժակս զայս նոր ուխտ է յա-
րեան իմում որ ՚ի ձեր համար
թափի :
21 Բայց ահա ձեռն մատնի-
չին իմոյ ընդ իս է ՚ի սեղանի :
22 Եւ զի՞ որդի մարդոյ երթ-
այ որպէս որոշեալ է , բայց
վա՛յ այնմ մարդոյ որով մատն-
եսցի :
23 Եւ նոքա սկսան հարցա-
նել ընդ միմեանս՝ թէ ո՞ իցէ
արդեօք ՚ի նոցանէ որ զայս
արասցէ :
24 Եղև և հակառակութիւն
ՙի նոսա՝ թէ ո՞ իցէ նոցանէ
մեծ :
25 Եւ նա ասէ ցնոսա · թա-
գաւորքն հեթանոսաց տիրեն
նոցա , և որ զօրութիւն ունին
ՙի նոսա՝ բարերարք կոչին :
26 Դուք ոչ այդպէս , այլ որ
մեծ է ՚ի ձենջանէ՝ եղիցի որ-
պէս կրտսեր , և որ առաջնորդ
է՝ որպէս ծառայ :
27 Զի ո՞ մեծ է՝ որ նստի
կամ որ սպասաւորէ . ոչ որ
նստի՝ այլ ես ՚ի մէջ ձեր եմ
որպէս ծառայ :
28 Եւ դուք էք որ կացէք ընդ
իս ՚ի փորձութիւնս իմ ,
29 Եւ ես ձեզ կտակեմ որպէս
կտակեաց ինձ հայրն իմ զար-
քայութիւն ,
30 Զի կերիջիք և արբջիք ՚ի
սեղանի իմում յարքայութեան
իմում , և նստջիք յաթոռս և
դատիջիք զերկոտասան ցեղսն
Իսրայէլի :
31 Եւ ասէ տէր · Սիմոն Սի-
մոն , ահա սատանայ խնդրեաց
զձեզ զի մաղեսցէ զձեզ իբրև
զցորեան ,
32 Եւ ես աղաչեցի զքեզ զի
մի պակասեսցի հաւատք քո .
և դու երբեմն դարձեալ՝ հաս-
տատեա զեղբարս քո :
33 Եւ նա ասէ ցնա · տէր ,
ընդ քեզ պատրաստ եմ և ՚ի
բանտ և ՚ի մահ երթալ :
34 Եւ նա ասէ · ասեմ քեզ
Պետրոս՝ մի կանչեսցէ այսօր
աքաղաղ մինչև երիցս ուրասցես
զիս թէ ոչ ծանիցես զիս :
35 Եւ ասէ ցնոսա · յորժամ
առաքեցի զձեզ առանց քսակի
և պարկի և կօշկաց՝ զի՞ պակաս
ինչ ունէիք , և նոքա ասեն ·
ոչ :
36 Եւ նա ասէ ցնոսա · այլ
արդ որ ունի քսակ՝ առցէ , և
նոյնպէս և պարկ , և որ ոչ ունի
սուր՝ ծախեսցէ զհանդերձ իւր
և գնեսցէ :
37 Զի ասեմ ձեզ՝ թէ զայս
որ գրեալ է՝ լցցի ՚ի վերայ իմ ,
թէ ընդ անօրինացն համարեցաւ .
զի և զայն որ ՚ի վերայ իմ է
՚ի կատար ածցի :
38 Եւ նոքա ասեն · տէր , ահա
երկու սուր ՚ի սմա ասէ · բա-
ւական է :
39 Եւ ելեալ գնաց ըստ սո-
վորութեան իւրոյ ՚ի լեառն
Ձիթենեաց , և աշակերտքն նո-
ցա գնացին զհետ նորա :
40 Եւ մերձեցեալ ՚ի տեղին՝
ասէ ցնոսա · աղաչեցէք զի մի
մտանիցէք ՚ի փորձութիւն :
41 Եւ ինքն հեռացաւ ՚ի նո-
ցանէ իբրև քարի մի նետ , և
դրեալ զծունկս՝ աղաչէր ,
42 Եւ ասէր · հայր , եթէ կա-
միս՝ հեռացո զբաժակս զայս
յինէն , բայց ոչ կամք իմ այլ
քո թող լիցին :
43 Եւ երևեցաւ նմա հրեշտակ
յերկնից՝ զօրացուցանէ զնա :
44 Եւ եղև յանձնառութեան
մեծի՝ և ՚ի տագնապի էր , և
աղաչէր յերկայն , և եղև քրտինք
նորա իբրև զկաթիլս արեան
հոսեալ ՚ի վերայ երկրի :
45 Եւ յարուցեալ յաղօթից՝
եկն առ աշակերտսն և գտանէ
զնոսա ՚ի քնոյ ՚ի տրտմութենէ ,
46 Եւ ասէ ցնոսա · զի՞ քնով
էք . յարուցեալ աղաչեցէք զի
մի մտանիցէք ՚ի փորձութիւն :
47 Եւ դեռ նորա խօսեցեալ՝
ահա բազմութիւն , և որ կոչի
Յուդա մի ՚ի թուոյ տասնեցն
առաջի նոցա էր , և մերձեցաւ
Յիսուսի համբուրել զնա :
48 Եւ Յիսուս ասէ ցնա · Յու-
դա , համբոյրո՞վ զորդի մարդոյ
մատնես :
49 Եւ տեսեալ որ ընդ նմա
էին զոր եղեալ էր՝ ասեն ցնա ·
տէր , եթէ հարցուք զնոսա սրով :
50 Եւ հարին մի ոմն ՚ի նոցա
զծառայն քահանայապետին՝ և
կտրեցին զականջն աջ :
51 Եւ Յիսուս պատասխանի
ետ և ասէ · ետուք մինչև զայս
ՙի սմա , և մերձեցեալ՝ շօշա-
փեաց զականջն և բժշկեաց զնա :
52 Եւ ասէ Յիսուս ցքահանա-
յապետսն և ցզօրավարսն տա-
ճարին և ցծերսն որ եկեալ էին
առ նա · իբրև ՚ի գող ելեալ էք
սրով և գաւազանաւ հարկանել
զիս :
53 Զի յաւուր ամենայն էի
ընդ ձեզ ՚ի տաճարին , և ոչ
ձգեցէք զձեռս ՚ի վերայ իմ .
այլ ձեր է ժամ և իշխանութիւն
խաւարի :
54 Եւ բռնեալ զնա՝ տարան
և տարածին ՚ի տուն քահանա-
յապետին . և Պետրոս հետևէր
հեռի :
55 Եւ վառեալ հուր ՚ի մէջ
սրահին՝ և նստեալ ամենեցուն
միասին՝ նստէր Պետրոս ՚ի մէջ
նոցա :
56 Եւ տեսեալ զնա աղախին
մի նստեալ ՚ի լուսոյն՝ և հայե-
ցեալ ՚ի նա՝ ասէ · և սա ընդ
նմա էր :
57 Եւ նա ուրացաւ զնա՝ և
ասէ · կին , չգիտեմ զնա :
58 Եւ յետ սակաւ մի տեսեալ
զնա այլ մի՝ ասէ · և դու ՚ի
նոցանէ ես . և Պետրոս ասէ ·
մարդ , չեմ :
59 Եւ ՚ի մերձենալ ժամու
մի՝ այլ ոմն հաստատեալ ասէր ·
ճշմարիտ և սա ընդ նմա էր ,
զի և գաղիլեացի է :
60 Եւ Պետրոս ասէ · մարդ ,
չգիտեմ զոր ասես դու . և ՚ի
նմին ժամու դեռ նորա խօսե-
ցեալ՝ ձայն արար աքաղաղ ,
61 Եւ դարձեալ տէրն՝ նայե-
ցաւ ՚ի Պետրոս . և յիշեաց Պետ-
րոս զբանն տեառն որպէս ասաց
ցնա · մինչև չկանչեսցէ աքա-
ղաղ՝ երիցս ուրասցես զիս :
62 Եւ ելեալ Պետրոս արտա-
քս՝ լայր դառնապէս :
63 Եւ մարդիկ որ ունէին զՅի-
սուս՝ ծաղր առնէին զնա և
հարկանէին ,
64 Եւ ծածկեալ զնա՝ հարկա-
նէին զերեսս նորա և հարցա-
նէին զնա և ասէին · մարգարէա-
ցո , ո՞վ է որ զքեզ հարկանէ :
65 Եւ զայլ բազումս հայհո-
յութիւնս ասէին ՚ի նա :
66 Եւ իբրև եղև ցերեկ՝ ժո-
ղովեցան երեսփոխանքն ժողով-
րդեան , քահանայապետքն և
դպիրքն , և տարեալ զնա ՚ի
ժողովարանս իւրեանց՝ ասեն ·
67 Եթէ դու ես Քրիստոս՝ ասա
մեզ . և ասէ ցնոսա · եթէ ասիցեմ
ձեզ՝ ոչ հաւատասջիք ,
68 Եւ եթէ հարցից՝ ոչ պա-
տասխանի տայք ինձ և ոչ ար-
ձակէք զիս :
69 Այլ յայսմհետէ որդի մար-
դոյ նստիցի ՚ի ձախմէ զօրու-
թեան Աստուծոյ :
70 Եւ ասեն ամենեքին · դու
ես որդի Աստուծոյ . և նա ասէ
ցնոսա · դուք ասէք զի ես եմ :
71 Եւ նոքա ասեն · ընդէ՞ր
այլ ևս վկայութեան կարիք
ունիմք , զի մեք ինքեանք լա-
մեցաք ՚ի բերանոյ նորա :

23 Եւ յարուցեալ ամենայն
ժողովն նոցա՝ տարան զնա ՚ի
Պիղատոս ,
2 Եւ սկսան մատնել զնա և
ասել · զայս գտաք խոտորեցու-
ցանող ազգի մերոյ , և արգելու
հարկս տալ կայսեր , և ասէ
զանձինս Քրիստոս թագաւոր
լինել :
3 Եւ Պիղատոս հարցանէ զնա
և ասէ · դու ես թագաւոր հրէից .
և նա պատասխանի ետ և ասէ ·
դու ասես :
4 Եւ Պիղատոս ասէ ցքահա-
նայապետսն և ցբազումս · ոչ
գտանեմ ՚ի նմա զինչ ինչ մեղ-
աց :
5 Եւ նոքա զօրանային և ասեն ·
ուսուցանէ զամենայն ժողովուրդ
ՙի հրէաստան՝ սկսեալ ՚ի գալի-
լեայ մինչև ՚ի սա տեղիս :
6 Եւ Պիղատոս լուեալ զգալի-
լեա՝ հարցանէ եթէ մարդ գալի-
լեացի է :
7 Եւ գիտացեալ թէ ՚ի զօրու-
թենէ Հերովդեայ է՝ առաքեաց
զնա առ Հերովդէս , որ և ինքն
էր Երուսաղէմ յաւուրսն յայնոսիկ :
8 Եւ Հերովդէս տեսեալ զՅի-
սուս՝ ուրախ եղև յոյժ . զի էր
յամենայն ժամանակի կամեցեալ
տեսանել զնա , վասն զի լուեալ
էր զնմանէ , և յուսայր զի նշան
ինչ արասցէ նմա տեսանել :
9 Եւ հարցանէր զնա բանիւք
բազմաւք , և նա ոչ պատասխա-
նի ետ նմա :
10 Եւ կային քահանայապետքն
և դպիրքն՝ և ամբաստանէին զնա
յոյժ :
11 Եւ արհամարհեալ զնա Հե-
րովդէս ընդ զօրսն իւր՝ և ծա-
ղր արարեալ զնա՝ զգեցոյց զնա
զգեստ պայծառ , և առաքեաց
զնա առ Պիղատոս :
12 Եւ եղեն բարեկամք

տակս զկնի նորա՝ և ասեն, թէ ոչ կամիմք թագաւորել դմա ի վերայ մեր :

15 Եւ եղև դառնալ նմա՝ առեալ զթագաւորութիւնն. և կոչեալ զծառայսն՝ որոց տուեալ էր զարծաթն, զի գիտասցէ թէ ո զինչ շահեցաւ :

16 Եկն առաջինն և ասէ. տէր, մնասն քո՝ տասն մնաս արար :

17 Եւ ասէ ցնա. ապրիս ծառայ և բարի, զի ի փոքուդ հաւատարիմ եղեր, լիջիր իշխանութիւն ունել ի վերայ տասն քաղաքի :

18 Եկն երկրորդն՝ և ասէ. մնասն քո՝ արար հինգ մնաս :

19 Ասէ ցնա. և դու լիջիր ի վերայ հինգ քաղաքաց :

20 Եկն մեւսն՝ և ասէ. տէր՝ ահա մնասն քո զոր ունէի, ծրարեալ ի վարշամակի :

21 Երկնչէի ի քէն, զի այր ստամբակ ես, բառնաս՝ զոր ոչ եդիր, և հնձես՝ զոր ոչ սերմանեցեր :

22 Եւ ասէ ցնա, ի բերա-նոյ քումմէ դատեցայց զքեզ ծառայ անխատատ. գիտէիր թէ ես այր մի ստամբակ եմ, բառնամ զոր ոչ եդի, և հնձեմ՝ ուր ոչ սերմանեցի :

23 Եւ ընդէր ոչ եառուր զարծաթն իմ ի սեղանաւորս, և եկեալ ես տոկոսօք պահանջէի :

24 Եւ ասէ ցպատասաւորան. առէք ի դմանէ զմնասն, և տարայք տուք այնմ՝ որ ունիցի զտասն մնասն :

25 Եւ ասեն ցնա. տէր՝ ունի տասն մնաս :

պանները խըղկեցին, ու ըսին որ՝ չենք ուզեր որ սոխիկա մեր վրա թագաւորութիւն ընէ :

15 Ու եղաւ որ անիկա թագաւորութիւնը առաւ՝ դարձաւ. ու ան ծառաներն որ իրենց ըստակը տըվեր էր՝ դիմացը կանչեց որ գիտնա՝ թէ ով ինչ շահ ըրաւ :

16 Առջինը եկաւ ու ըսաց. տէր՝ քու մնասըդ տասը մնասալ (վրան շահ) ըրաւ :

17 Ու անոր ըսաց. պիտի ա-նիկ ու բարի ծառա, որ՝ սա քիչ բանիդ մէջն որ հաւատարիմ դտնըվեցար, (դուն) տասը քաղքի վրա իշխան եղիր :

18 Երկրորդը եկաւ՝ ու ըսաց. քու մնասըդ՝ հինկ մնաս ըրաւ :

19 Անոր ալ ըսաց. դո՛ւնալ հինկ քաղքի վրա ըլլաս :

20 Մեկալնալ եկաւ՝ ու ըսաւ. տէր՝ հա՛նա քու մնասըդ որ թաշ կենի մէջ ան ծրարեր կըպահէի :

21 Ֆիեդմ կըվախնայի, անոր համար որ՝ դուն մէկ դաժան մարդմըն ես. չես դրած բանըդ՝ կառնես կըվերցընես, ու չես ցանածդ՝ կըհնձես :

22 Անալ ըրեն ըսաց. քու բերնովըդ քեզ կըդատապարտեմ՝ ով անխատատ ծառա. (դուն) գիտէիր որ ես մէկ դաժան մարդմընեմ, որ իմ չեղածըս կըվերցընեմ, ու ուր որ չեմ ցաներ՝ կըհնձես :

23 Ա՛լ (դուն) ինչու իմ ըստակըս վաճառականներու չես տըվիր, որ ես գալուատենըս՝ անիկա շահովը ետ ուզեի :

24 Ու ըսպասաւորներուն ըսաց. ան մնասը առէք ան տարէք անոր տըվէք որ ան տասը մնասը ունի :

25 Ու իրեն ըսին. տէր՝ (հապա անիկա) տասը մնաս ունի նէ :

26 Ասեմ ձեզ, եթէ ամէնայն որ ունիցի՝ տացի. և յաճմանէ որ չն ունիցի, և զոր ունիցին՝ բարձցի՝ ի նմանէ:

27 Բայց զթշնամիսն իմ դայնոսիկ, որ չն կամէին զիս թագաւորել՝ ի վերայ նոցա, ածէք այր, և սպանէք առաջի իմ:

28 Եւ երբեւ զայս ասաց, գնաց յառաջ՝ երանել յերուսաղէմ:

29 Եւ եղեւ երբեմն մերձենալ՝ ի բեթփագէ և՝ ի բեթանիա մօտ ի լեառնն՝ որ կոչի ձիթենեաց, առաքեաց երկուս յաշակերտացն իւրոց՝ և ասէ.

30 Երթայք գուք՝ ի գեղն՝ որ հանդէպ մեր կայ. յոր երբեմն մտանէք՝ գտանիցէք յաւանակ կապեալ, յորում՝ չք՝ ի մարդկանէ երբէք ոչ նստաւ. լուծէք գնա և ածէք:

31 Եւ եթէ ոք հարցանիցէ զձեզ՝ եթէ ընդէր լուծանէք, այսպէս ասասջիք գնա, թէ տեառն իւրում՝ պիտոյ է:

32 Իբրեւ չուան որ առաքեացանն, գտին որպէս ասացն ցնոսա, կայր յաւանակն:

33 Եւ մինչ զեռ լուծանէին զյաւանակն, ասեն տեարքն նորա՝ ցնոսա. զի՞ լուծանէք զյաւանակդ:

34 Եւ նոքա ասեն. տեառն իւրում՝ պիտոյ է:

35 Եւ ածին գնա առ յս. և արկին գնովաւ զհանդերձս, և հեծուցին զյս:

36 Եւ մինչ զեռ երթայր, զհանդերձս իւրեանց տարածանէին զճանապարհսն:

37 Եւ իբրեւ այն ինչ մերձ եղեւ՝ ի զառ՝ ի վայր լերինն ձիթ-

26 Զեզի կրեմ, որ՝ ան ամմէնուն որ ունինիք՝ պիտի տրըվի. ու ան որ չունինիք՝ անկէց ան ու-նեցածնալ պիտոր վերդրվի:

27 Ու ալ՝ ան իմ թշնամիներըս, որ իս չէին ուզեր որ իրենց վրա թագաւոր ըլլամ, հոս բերէք, ու իմ առջեւս մեռցուցէք:

28 Ու ասս խօսկէն ետկը՝ ինքը առջեւնին ելնալու երուսաղէմ եր ելլու երթալու:

29 Ու եղաւ որ երբ բեթփագի ու բեթանիայի մօտիկցաւ՝ ձիթենեաց լսլած լեռանը մօտ, իր աշակերտաներէն երկուքը խրկեց, ու ըսաց.

30 Գուք ատ գեղը գացէք՝ որ մեր դիմացն է. հոն մտնալու որ կըլլաք՝ մէկ կապած աւանակմը կըգտնէք, որ անոր վրա գեռ էսկի մարդմը նստած չէ. անիկա արձկեցէք ու բերէք:

31 Ու թէ որ մէկը ձեզի հարցունէ՝ որ ինչու կարձկէք կոր, անոր ասանկ ըսէք, որ իր տիրոջը պէտք է:

32 Երբոր գացին՝ անոնք որ խրկըվեցան, անանկ գտան՝ ինչ-տոր որ իրենց ըսաց, որ ան աւանակը (հոն) կեցեր էր:

33 Ու երբոր ալ աւանակը կարձկէին կոր, անոր տիրվըտանքը իրենց ըսին. ինչու (գուք) ատ աւանակը կարձկէք կոր:

34 Անոնք ալ ըսին. (որ ան՝) իր տիրոջը պէտք է:

35 Ու անիկա յսի բերին. ու անոր վրայով լսիերնին ձգեցին, ու յսը հեծցուցին:

36 Ու ալ երթալու առեն՝ (մարդիք) իրենց հագուստանին ճամբուն վրա կըտռէին:

37 Ու երբոր ալ ձիթենեաց լեռնէն դէպի վար ինջնալու

թենեաց, սկսաւ ամենայն բազմութիւն աշակերտացն ուրախութեամբ օրհնել զած ի ձայն մեծ՝ վասն ամենայն եղելոց զօրութեանցն զոր տեսին,

38 Եւ ասէին. օրհնեալ որ գայ թագաւորդ յանուն տն, խաղաղութիւն յերկինս, և փառք ի բարձունս:

39 Եւ ոմանք ի փարիսեցւոցն յամբոխէ անտի՝ ասեն ցնա. վարդապետ սաստեա աշակերտացդ քոց:

40 Պատասխանի ետ և ասէ. ասեմ ձեզ՝ զի եթէ դոքա լռեսցեն՝ քարինքդ աղաղակեսցեն:

41 Եւ երբեմն մերձեցաւ, տեսեալ զքաղաքն ելոց ի վերայ նորա, և ասէ.

42 Եթէ գիտէիր դու զնոյն յաւուրս յայսմիկ զխաղաղութիւնն քո. բայց այժմ ծածկեցաւ յերեսաց քոց:

43 Զի եկեսցեն աւուրք ի վերայ քո, և պատեսցեն զքեզ թշնամիք քո պատնէշ. և պաշարեսցեն զքեզ, և նեղեսցեն զքեզ յամենայն կողմանց.

44 Եւ յատակեսցեն զքեզ, և զորդիս քո ի քեզ. և ոչ թողցուն քար ի քարի վերայ յամենայնի ի քեզ. փոխանակ զի ոչ ծանեար զժամանակ այցելութեան քոյ:

45 Եւ մտեալ ի տաճարն՝ սկսաւ հանել զաղաւնեվաճառսն, և զգնդս. և զսեղանս հատուցողացն ցրուեաց:

46 Եւ ասէ ցնոսա. գրեալ է՝ և եղիցի տունն իմ տուն աղ-

վքայ էր՝ բոլոր աշակերտաց բազմութիւնքն խնամութիւն ձաներին վերուցած ըսկսան այ օրհնել կարգալ, ան բոլոր եղած հրաշագործութիւններուն համար՝ որ իրենք տեսեր էին,

38 Ու կըսէին. օրհնեալ է ան թագաւորը՝ որ Տնը անունովը կուգակոր. խաղաղութիւն երկինքը, ու փառք իբարձունս:

39 Ու փարիսեցիներէն ոմանք որ ան ժողովրդներուն միջն էին՝ ըսին. վարդապետ՝ սրստեցուր աշակերտներդ:

40 Պատասխան տրվաւ՝ ու ըսաց. ձեզի (աս) կըսեմ. որ թէ ատնք լռեն կենան՝ ալ ատ քարերը կրկանչվըտեն:

41 Ու երբոր քաղքին մօտիկցաւ՝ ան տեսաւ, անոր վրան լացաւ, ու ըսաց.

42 Գինէ աս օրըս ըլլա՝ որ դուն հանդիսայիր քու խաղաղութիւնդ, որ ան՝ հիմա քու աչքդ պիտի ծածկըված է:

43 Ու՝ (հար) օրեր պիտի վրադան, որ քու թշնամիներդ քովը բրդի գոցին բռնեն, ու քեզ միջ առնեն. ու ամէն դիտցին քեզ նեղը ձգեն:

44 Ու քեզ հիմնայատակ ընեն՝ քու որդիքդ ալ որ քու միջդ են. ու խկի քարըդ քարի վրա չեն թողուն բոլոր քու միջըդ. աս անոր համար որ՝ չի հանդցար (այ) քեզի տես գալուն ժամանակը:

45 Ու տաճարը մտաւ՝ ըսկսաւ (անկէ դուրս) հանել ապվէնի ծախողները ու գնողները. ու ըստակ փոխողներուն (առջևի) տախտակներն ուր ու ցան բրաւ:

46 Ու իրենց ըսաց. գրված է, որ՝ իմ տունըս աղօթքի տուն

զթէից, և զուբ արարէք զձա
յրս աւազակաց :
47 Եւ ուսուցանէր զնոսա
հանապազ ՚ի տաճարին : իսկ
քահանայապետքն և գպիրք՝ և
պատուիք ժողովրդեանն խնդ_
րէին զնա կորուսանել ·

48 Եւ ոչ գտանէին թէ զինչ
արասցեն · զի ժողովուրդն ա_
մենայն կախեալ կայր զնմանէ
՚ի լսել :

ըլլա՛ , ու զուբ ատիկա աւազակի
բառն ըրիք :
47 Ու ամէն իւիր տաճարին
մէջը անոնք կըսորվեցընէր : ու
քահանայապետներըն ու կա_
զացողներըն՝ ու ժողովրդին գլխա_
ւորներն՝ եաւէ կ՚ին որ ինքը փը_
նտացընեն ·
48 Ու (բանմը) չէին գտնար ան_
որ գէմ ընելու · որ՝ բոլոր ժողո_
վուրդնալ իրեն կապվըռէին (որ
ըսածները) լսեն :

ԳԼ· Ի·

1 Եւ եղև ՚ի միում աւուրցն
յայնցանէ, մինչ դէս ու_
սուցանէր զժողովուրդն ՚ի տա_
ճարի անդ՝ և աւետարանէր,
հասին ՚ի վերայ քահանայա_
պետքն և գպիրք՝ ծերովքն
հանդերձ,
2 Եւ ասեն ցնա . առ մեզ՝
որով իշխանութեամբ գործես
զս զայդ, կամ ո՞վ է որ եա
քեզ զայդ իշխանութիւն :
3 Պատասխանի եա՝ և ասէ
ցնոսա · հարցից և ես ցձեզ
բան մի, և ասացէք ինձ :
4 Մկրտութիւնն յովհան_
նու՝ յերկնից էր՝ եթէ ՚ի մարդ_
կանէ :
5 Եւ նոքա խորհեցան ՚ի
միոս իւրեանց՝ և ասեն .
6 Եթէ ասեմք յերկնից , ա_
սէ՝ ևս ընդ՛ր ոչ հաւատացէք
նմա . և եթէ ասեմք ՚ի մարդ_
կանէ , ամենայն ժողովուրդն
քարկոծ առնեն զմեզ · զի հաս
տատեալ է ՚ի միոս զյովհաննէ
թէ մարգարէ է :
7 Եւ պատասխանի եաուն՝
չգիտել թէ ուստի էցէ :
8 Եւ յի՛ ասէ ցնոսա . և ոչ

1 Ու ան օրերուն մէկը՝ եղաւ
որ՝ երբոր տաճարին մէջը
ժողովուրդը կըսորվեցունէր ու
աւետիս կըբարոզէր , քահանայա_
պետներն ու կարգացողները՝ ծե_
րերնալ մէտեղ՝ վրան հասան ,
2 Ու ըրեն ըսին . մեզի ըսէ՝
դուն ո՞ր իշխանութիւնով զատ բա_
ները կընես կոր , կամ՝ ան ո՛վ է որ
զատ իշխանութիւնը քեզի տըվաւ :
3 Պատասխան տըվաւ՝ ու ա_
նոնց ըսաց . ես ալ ձեզի բանմը
հարցընեմ , ու ինծի ըսէք .
4 Յովհաննէսին մկրտութիւնը
երկինքէ՞ն էր մի , թէ մարդոցմէ :
5 Անոնք ալ ինքիրենին մէջ_
մտածին՝ ու ըսին .
6 Թէ որ ըսինք , երկինքէն , (ան)
կըսէ որ՝ հապա ինձի անոր չէ
հաւատացիք . ու թէ որ ըսինք , մարդ_
կոցմէ՝ բոլոր ժողովուրդը մեզ կը_
քարկոծեն . որ մտիքնին հաս_
տատ դրեր են յովհաննէսին վըսյա_
ւ թէ ան մարգարէմըն է :
7 Ու պատասխան տըվին չի_
գիտնալու՝ որ (ան) ուսկի՛ ըլլա :
8 Յի՛ ալ անոնց ըսաց . եսալ

ես ասեմ ձեզ, որով իշխանու-
թեամբ առնեմ զայս :

9 Ա կասե ասել առ ժողո-
վուրդն՝ զառակս զայս . այր
ոմն անկեաց այգի , և եհա զնա
մշակաց . և ինքն գնաց հանա-
պարհ ժամանակս բազումս :

10 Եւ ՚ի ժամու՝ առաքեաց
առ մշակսն ծառայ , զի ՚ի պտղոյ այգւոյն տացեն նմա :
և մշակքն զան հարին զնա՝ և
սրձակեցին ունայն :

11 Եւ յաւել միւս եւս ծա-
ռայ յղել . նոքա՝ և զնա եւս
զան հարին , անարգեցին , և
առաքեցին ունայն :

12 Եւ յաւել՝ զերրորդն ա-
ռաքել . նոքա՝ և զնա վիրաւո-
րեցին , և հանին արտաքս :

13 Ասէ տէր այգւոյն . զի՞նչ
արարից , առաքեցից զորդի իմ
սիրելի , թերևս ՚ի սմանէ պատ-
կառեացեն :

14 Իբրև տեսին զնա մշակքն,
խորհեցան ընդ միմեանս՝ և ա-
սեն . սա է ժառանգն , սպան-
ցո՛ւք զսա , զի մեր լինիցի ժա-
ռանգութիւնն :

15 Եւ հանին զնա արտաքս
քան զայգին՝ և սպանին : արդ՝
զի՞նչ արասցէ ընդ նոսա տէր
այգւոյն .

16 Ո՛չ սպաքէն զայգէ և
կորուսանիցէ զմշակսն զայս-
սիկ, և տայցէ զայգին այլոց : Իբրև լուան՝ ասեն . քա՛՝ մի՛
լիցի :

17 Եւ նա հայեցեալ ընդ
նոսա՝ ասէ . իսկ զի՞նչ իցէ այն
որ գրեալն է՝ Եթէ վէմն զոր ա-
նարգեցին շինողքն , նա եղև
գլուխ անկեան :

18 Ա՛մենայն՝ որ ընդվիրցի
ընդ վէմս ընդ այս , խորտա-
ձեզի չե՛մ ըսեր՝ որ ինչ խշխանու-
թենով աս կընեմ :

9 Ա՛ր ըսկսաւ ժողովրդին աս
առակըս ըսել . մէկ մարդմը է.
գի տնկեց , ու ան՝ բանվորներուն
տրվաւ , ու ինքը Համբա ելաւ
գնաց շատ առենով :

10 Ու ժամանակին որ հասաւ՝
ան բանվորներուն՝ մէկ ծառաը
խաւրեց , որ էդիեն պտուղէն իրեն
տան : բանվորներնալ ան ծեծ-
ցին , ու պարապ Համբեցին :

11 Ու անոր վրա ուրիշ ծառա.
մը խաւրեց : անոնք անիկայալ
ծեծեցին, թաւքաւմուր տրվին, ու
պարապ (ետ) խրկեցին :

12 Ու վրան երրորդ՝ընալ խաւ.
րեց: անոնք անիկայալ զարկինխո.
ցեցին , ու դուրս վռընտեցին :

13 Ի՞գիեն տէրը ըսաւ . (ալ ես
ինչ ընեմ , իմ սիրական որդիս
խաւրեմ , ըլլա՛ որ ամէկը խըզ-
նեն՝ քաշվին :

14 Բանվորներըը երբոր ան տե.
սան՝ մէյմէկու չետ խորուրդ ըրին՝
ու ըսին . ասիկա ժառանգն է, ա
կըսպաննենք՝ որ ժառանգութի-
նը մերը ըլլա :

15 Ու անիկա էգիեն դուրս քա-
շեցին՝ ու բասաննեցին : ուսոի
էգիեն տէրը՝ ալ անոնց ինչ պի-
տի ընէ .

16 Չի՞ մի գար ու ան բանվոր-
ներըը կորսընցընէր , ու էգիեն
ուրիշներու տար : (աս) որ լսեցին
ըսին . քա՛ւ լեցի՝ (ատ բանը չըէ
լա) :

17 Ու ինքնալ անոնց նայե-
ցաւ՝ ըսաց . չհասա ան ինչ է՝ որ
գրված է՝ թէ ան քարն որ շինող-
ները քամահրեցին՝ անիկա ան-
կիւնեին գլխի (քարը) եղաւ :

18 Ա՛մէն ով որ ատ քարիս գըլ-
նըվի՝ ինքը կատը փըլթատ կըլ-

կեսդ, և յորմ վերայ անկցի՝ չասեցջ զնա .

19 Եւ խնդրէին զպիրքն և քահանայապետք՝ արկանել ՚ի նա ձեռս ՚ի նմին ժամու, և երկեան ՚ի ժողովրդենէն . զի գիտէին՝ թէ առ նոսա ասաց զառակն զայն :

20 Եւ ապա սպասեցին , և առաքեցին դաւաճանս կեղծաւորեալս՝ գանձինս առ արդարս ունել . զի ըմբռնեսցին զնա բանիւք, առ ՚ի մատնել զնա պետութեան և իշխանութեան դատաւորին :

21 Հարցին զնա՝ և ասեն . վարդապետ՝ գիտեմք եթէ ուղիղ խօսիս և ուսուցանես , և ոչ առնուս ակն . այլ Ճշմարտութեամբ զՀանապարհն այ ուսուցանես .

22 Արժան է մեզ՝ կայսեր հարկս տալ թէ ոչ :

23 Եւ նայեցեալ ընդ խորամանկութիւն նոցա՝ ասէ զնոսա .

24 Ցուցէք ինձ դահեկանն : և նոքա ցուցին : և ասէ . զո՞յր պատկեր և գրիչ ունի : պատասխանի եւուն՝ և ասեն , կայսեր :

25 Եւ նա՝ ասէ զնոսա . արդ՝ երթայք տուք գկայսերն՝ կայսեր, և զայն՝ այ :

26 Եւ ոչ կարացին զնա ըմբռնել բանիւք առաջի ժողովրդեանն . և զարմացեալ ընդ պատասխանին նր՝ լռեցին:

27 Մատուցեալ ոմանք ՚ի սադուկեցւոցն , որք հակառակին չինել յարութեան, հարցին զնա՝

28 Եւ ասեն . վարդապետ՝ մովսէս գրեաց մեզ . եթէ ու-

ու ան որու՞ վրա որ կինա՝ պիտի անիկա փրսորէ :

19 Ու կարգայողներն ու քահանայապետները՝ ալ ան պահը կուգիին որ իրեն ձեռք զարնեն՝ (բռնեն), ու ժողովրդին վախցան. պատճառը , հասկըցան որ ան առակը իրենց վրայովը ըսաց :

20 Ու ասոր որ եսեպ էին , ալ խաբեբա մարդիք խրկեցին՝ կեղծաւորութիւնով իրենք զիրենք արդար երևցուցած . որ (իր) խօսքովը ան բռնեն , ու ինքը տէրութեան ու դատաւորին իշխանութեան ձեռքը մատնեն :

21 Իրեն հարցուցին՝ ու ըսին . վարդապետ՝ գիտենք որ (դուն) շիտակ կըխօսիս՝ ու կըսորվեցուցես , ու երեսպաշտութիւն չես ըներ . հապա՝ շիտակ շիտակ այ ճամբան կըսորվեցընես .

22 (Ը սէ որ,) մեզի կիյնա՞ մի՝ որ կայսերին տուրք տանք , թէ չէ:

23 Ինքնալ անոնց սատանութիւնը տեսնելով՝ իրենց ըսաց .

24 Ան դահեկանը ինծի ցուցէք : անոնք ալ ցուցուցին : ու ըսաց . ասոր վրայի պատկերը ու գիրը որունին : պատասխան տուին՝ ու ըսին (թէ՝) կայսերինը :

25 Անալ անոնց ըսաց . ա՛նանկ էնէ՝ գացէք կայսերին (բանը) կայսերին տուէք , ու աստուածունը՝ աստուածու :

26 Անանկ՝ չի կրցան ինքը խօսկով բռնել ժողովրդին ըմաց. ու անոր պատասխանին վրա պող մնացած՝ ձանրերին քաշեցին :

27 Սադուկեցիներէն մէկ քանին. որ ասոնք յարութիւն առնելուն դէմ կըդնէին , եկան իրեն հարցուցին՝

28 Ու ըսին . վարդապետ՝ մովսէսը մեզի գիրով թողուց որ՝ թէ

բուք եղբայր մեռանիցի՝ որոյ իցէ կին, և նա անորդի իցէ, զի առնուցու եղբայր նորա զկինն, և յարուսցէ զաւակ եղբօր իւրոյ՝ :

29 Այր՝ եւ էին եղբարք էին. և առաջնոյն առեալ կին, մեռաւ անորդի :

30 Այ՛ւ զնա և երկրորդն, մեռաւ և նա անորդի :

31 Այ՛ւ զնա և երրորդն : Նոյնպէս և իւթանեքին, և ո՛չ թողին որդիս :

32 Մեռաւ և կինն :

33 Այրդ՝ ՚ի յարութեանն ո՛ւմ՛ ՚ի նոցանէ լինիցի կին. զի իւթանեքին կալան զնա կին :

34 Պատասխանի ետ Նոցա յի՝ և ասէ. որդիք աշխարհիս այսորիկ կանայս առնեն՝ և ա_ րանց լինին :

35 Իսկ որ արժանի լինիցին անդ՛ աշխարհն հասանել, և յարութեանն որ ՚ի մեռելոց՝ ո՛չ կանայս առնեն, և ո՛չ ա_ րանց լինին :

36 Զի ոչ և ո՛չ մեռանել ևս կարեն, զի հաւասար հրեշ_ տակաց են. և որդիք են, քան_ զի յարութեան որդիք են :

37 Այլ կն յառնեն մեռեալք, և Մովսէս գուշակեաց ՚ի մորեն_ ւոջն, որպէս ասէ զտէրն՝ յի աբ_ րահամու, և զյի սահակայ, և զյի յակովբայ :

38 Ոչ ե՜ծ՝ չէ մեռելոց, այլ կենդանեաց. զի ամենեքին նմա կենդանի են :

39 Պատասխանի եառն նմա մ՚կուն ևիսպարը մեռնի՝ որ ան կնիկ ունենա, ու ինքը զաւակ չունենա. որ՝ անոր եխպարը ի՛ն_ ան կնիկը առնէ, ու իր եխպորը զաւակ տանէ :

29 Եւ՝ եօթ՝ ախպար եխպար կայ_ էին. ու (անոնց) առջինը կնիկ մը առաւ՝ (ու) առանց զաւկի մեռաւ:

30 Ան (կնիկը՝) երկրորդնալ առաւ, ու ինքնալ առանց զաւկի մեռաւ :

31 Ան՝ երրորդնալ առաւ : ա_ սանկ՝ (բոլորը) ան ախանալ (մե_ ռան), ու զաւակ չի՛ թողուցին :

32 (Նաև) ան կնիկնալ մեռաւ:

33 Անանկ էնէ՝ յարութեան ատենը՝ ան կնիկը անոնց որ մի_ կուսը՝ պիտի ըլլա. որ ախանալ անիկա (իրենց) կնիկ ուներէին :

34 Յի անոնց պատասխան ը_ ալ՝ ու բսաց. աս աշխարքիս որ_ դիքը կնիկ կառնեն, ու էրիկ կառնեն :

35 Բայց անոնք որ արժանի բլլան ան (մկալ) աշխարքին մասնակցութի՛ւն ունենալու, ու մե_ ռելներէն յարութի՛ւն առնելու, (անոնք) ո՛չ կնիկ կառնեն՝ ու ո՛չ էրիկ կառնեն :

36 Պատճառն որ՝ իրենք՝ ալ չեն կրնար մեռնիլ. որ նրեշտակ_ ներուն նման հաւասար են. ու այ որդիք, անոր համար որ՝ յարու_ թեան որդիք են :

37 Բայց անոր վրա՝ որ մեռե_ նները կը յառնեն՝ մովսէսնալ իմա_ ցուց, ան մորենիին (պատմա_ թեան) մէջ, ինտոր որ տէր՝ Աս_ ված կըսի՝ աբրահամի ած, ու իսահակա ած, ու յակոբի ած :

38 Ու ած՝ մեռելներուն (ածը) չէ՛. հապա՝ ողջերունը. ինչու որ՝ ամէնքը իրեն զիմացը ողջ են:

39 Կարգացողներէն եղան որ ի_

ամանք ՚ի գպրացն՝ և ասեն · վարդապետ՝ բարւոք ասացեր :
40 Եւ ոչ ևս ոք իշխէր չարչարանել ցնա՝ և ոչինչ :

41 Ասէ և առ նոսա . զիա՞րդ ասեն զքո՝ թէ որդի է դաւթի .

42 .Ա՛ի ինքն դաւիթ ասէ ՚ի գիրս սաղմոսաց · ասաց տէր տեառն իմ՝ նիստ ընդ աջմէ իմմէ,
43 Մինչև եղից զթշնամիս քո պատուանդան ոտից քոց :
44 Ի՞սկ արդ՝ եթէ դաւիթ զնա տէր կոչէ, զիա՞րդ որդի նո_ ա իցէ :
45 Եւ լո՛ւ ՚ի լսե ամենայն ժողովրդեանն , ասէ ցաշա_ կերտս :
46 .Զգո՛յշ լերուք ՚ի գրաց_ ողաց, որ կամին պատմուճա_ նօք շրջել , և սիրեն ողջոյնս ի հրապարակս , և գնախաթոռս ՚ի ժողովուրդս , և գբարձե_ րչս յընթրիս,

47 Որ ուտեն զտունս այ_ րեաց , և պատճառանձգ յեր_ կարեն զաղօթս . նոքա՛ ընկալ ցին աւելի դատաստանս :

րեն պատասխան տալին ու ըսին . վարդապետ՝ աղէկ գրուցիցիր :
40 Ու այ անկէ եառ՝ ձկը սիրա չէր ըներ խնկի իրեն բան_ մընալ՝ չարչարմունք ընելու :
41 Ու անոնցմէ աս ըսաց . ին_ չոր քրի համար կըսեն՝ որ ան՝ դաւիթի որդին (պիտոր) ըլլա .
42 Որ ինքը դաւիթը՝ սաղմոս գրքին մէջը կըսէ . տէրը իմ տիրո_ ջըս ըսաւ , որ իմ աջ դիս նստէ ,
43 Մինչև որ քու թըշնամի_ ներըդ քու ոտացըդ կոխելիք դնեմ:
44 Հապա որ դաւիթը անոր տէր կըկանչէ՝ ինչպէս անոր որդին կըլլա :
45 Ու բոլոր ժողովրդին դի_ մացին որ ան կըլսէին՝ աշակերտ_ ներուն ըսաց .
46 Ան կարգացողներէն , ըղ_ դուշ եղիք· որ լան կապաներ կա_ զած՝ անանկ կուգեն պըտըտիլ , ու կըսիրեն բաց տեղվանքը բարև առնել , ու ժողովարաններու մէջ՝ առջի աթոռները , ու ընթրիքնե_ րու մէջ՝ վեր տեղվանքը :
47 Որ որբևայրներուն տուն ու տեղը կուտեն , ու (ան՝ ասով) կրկարկըտեն որ՝ շատ աղօթք կը_ նեն : որ անոնք էվէլը դատապար_ տութիւն պիտի վըստահին առնեն :

Գ Լ. ԻՍ.

1 Եւ հայեցեալ՝ եառնս զմի_ ամաւունն որ արկանէին զոսկիս իւրեց ՚ի գանձանակին :
2 Եառնս և զկին միմն այրի աղքատ , որ արկ անդր երկուս լեպտս :
3 Եւ ասէ . արդարև ասե՛մ ձեզ , զի այրին այն աղքատ՝ ա_ ւելի արկ քան զամենեսին :
4 Ամենեքին նոքա՝ ՚ի մեծ_

1 Ու նայեցաւ՝ տեսաւ (որ ին_ որ) հարուստները իրենց տուրքը գանձանակը կրձգէինկոր:
2 Մէկ որբևայրի աղկատ կնիկ_ մըն ալ տեսաւ՝ որ (եկաւ) հոն երկու լմայնիկ ձգեց :
3 (Ինքնալ) ըսաց . ըղծրդը կըսեմ ձեզի , որ ան աղկատ որբ_ևայրին՝ ամէնէն էվէլը ձգեց :
4 (Որ) անոնք ամէնքը իրենց

բից իւրեանց արիւն յընծայն այ, բայց նա ի կատարումին իւրմէ զամենայն վկեանս իւր՝ զոր ունէր արկ :

5 Եւ յասել ոմանց զտա-
ճարէն, թէ զեղեցիկ վիմօք և աշտարակօք զարդարեալ է, ասէ ·

6 .Օ այդ ամենայն զոր տե-
սանէք, եկեսցեն աւուրք՝ յորս ոչ թողցի այդր քար ի քարի վերայ, որ ոչ քակտեսցի :

7 Հարցին ցնա և ասեն . վարդապետ՝ երբ լինիցի այդ, և զի՞նչ նշան իցէ՝ յորժամ այդ լինելոց իցէ :

8 Եւ նա ասէ · զգոյշ կա-
ցէք . մի խաբիցիք · զի բա-
զումք գայցեն յանուն իմ, և ասիցեն թէ ես եմ, և մերձե-
ցաւ ժամանակ · մի երթայցէք զկնի նոցա :

9 Եւ յորժամ լսիցէք պա-
տերազմունս և խռովութիւնս՝ մի զարհուրիցիք, զի պարտ է նախ՝ այնմ լինել, այլ ոչ առ-
ժամայնն կատարած :

10 Յայնժամ ասէ ցնոսա · յարիցէ ազգ յազգի վերայ, և թագաւորութիւն ի թագաւո-
րութեան վերայ :

11 Եւ շարժմունք մեծա-
մեծք, և ի տեղիս տեղիս սովք և սրածութիւնք · եղիցին սա-
հարիւրք և նշանք մեծամեծք յերկնից :

12 Բայց յառաջ քան զայս ամենայն, մխեսցեն զձեռս իւ-
րեանց ի ձեզ՝ և հալածեսցեն. մատնեսցեն ի ժողովրդս և ի բանտս, և առանիցին առա-
ջի դատաւորաց և թագաւորաց վասն անուան իմոյ :

դիպածներէն այ ընծա ձգելին, բայց անիկա՝ իր կատարումին մէջ ինչ որ ունէրնէ բոլոր կեան-
ցը ապրելիքը (չոն) ձգեց :

5 Ու տաճարին չամաք, որ ո-
մանք (իրեն) ըսին թէ՝ ան յօրի-
նած քարերով ու զըմբեղնեղով զարդարուած բան է, ըսաց ·

6 Այս բոլոր բաներն որ կըտես-
նէք կոր, օրեր պիտի գան՝ որ ան-
ատեն ատոր քարը քարին վրա պիտի չէ մընա՝ որ քայքայվի :

7 Իրեն հարցուցին ու ըսին, վարդապետ՝ ատ երբ պիտոր ըլլա, ու ատոր ըլլալուն ատենին նշանը ո՞րն է :

8 Անոնալ ըսաւ . ըզգուշ կե-
ցէք՝ որ չըլլ խաբվիք · ենչու որ՝ շատ մարդիք իմ անունըս վրա-
նին առած պիտի գան, ու ըսին, թէ ես (ան) եմ, ու ատենոնալ մո-
տեցաւ . անոնց ետևէն չերթաք :

9 Ու երբոր ձեներու՝ ու իրար անցուձիներու ձեն որ լսէք՝ (զոք) չը սարսափիկիք, ենչու որ՝ առաջ պէտք է որ ան ըլլա · բայց վեր-
ջն չուտով (բանին) վերջը չ՝ :

10 Անատենը անոնց (ասալ) ըսաց · ազգ՝ ազգի վրա պիտի ել-
լէ, ու թագաւորութիւն՝ թագաւո-
րութիւնի վրա :

11 Ու մեծ մեծ երկրաժա-
ժեր, ու ատոհս անդին՝ սովեր ու մահտարաժամեր . երկընքէնալ սոսկալի բաներ ու խոշոր խոշոր նշաններ պիտի երևնան :

12 Միան թէ՝ աս ամմէն բա-
ներէն առաջ՝ պիտոր ձեզի ձեռք գարնեն ու ձեզ հալածեն, ժողո-
վարաններու ու բանտերու մատ-
նեն, ու դատաւորներու ու թա-
գաւորներու առջև տանին՝ իմ անունիս պատճառով :

13 Եւ լինիցի ձեզ այն՝ ի վկայութիւն :

14 Արդ՝ դիք ի սիրտս ձեր, մի յառաջագոյն կրթել տալոյ պատասխանի :

15 Զի ես տայց ձեզ բերան և իմաստութիւն, որում՝ ոչ կարիցեն կալ հակառակ՝ կամ տալ պատասխանի ամենայն հակառակորդքն ձեր :

16 Մատնեսջիք և ի ծնողաց, և յեղբարց, և յազգականաց և ի բարեկամաց, և սպանանիցեն ի ձէնջ :

17 Եւ եղիջիք ատելեաւք յամենեցունց՝ վասն անուան իմոյ:

18 Եւ մազ մի ի դլխոյ ձերմէ՝ ոչ կորիցէ :

19 Ի համբերութեամբ ձեր՝ տասջիք զոգիս ձեր :

20 Այլ յորժամ տեսանիցէք զերջ շուրջ պատեալ զօրօք զբուսաղէմ, յայնժամ գիտասջիք թէ մերձ է աւեր նորա :

21 Յայնժամ որ ի հրէաստանի իցեն՝ փախիցեն ի լերինս, և որ ի միջի նորա իցեն՝ խուսեսցեն, և որ ի գաւառն իցեն՝ մի մտցեն ի նա :

22 Զի աւուրք վրէժխնդրութեան են այնոքիկ, առ ի կատարելոյ ամենայն գրելոց :

23 Իսպ վայ եղէ յղեաց և սնուցանց յաւուրսն յայնոսիկ: զի եղիցի տագնապ մեծ ի վերայերկրի, և բարկութիւն՝ ժողովրդեանն այնմիկ :

24 Եւ անկցին ի սուր սուսերի, և գերեսցին յամենայն հեթանոսաց · և երուսաղէմ եզիցի կոխան յազգաց, մինչև

13 Ու ան կըլլա՝ որ դուք վկա ըլլաք (ինծի համար) :

14 Ուստի՝ սա ձեր սրտին մէջը դրէք, որ առաջուց չեմ ոխանձակիք ինչ պատասխան տալու :

15 Ինչու որ՝ ես ձեզի անանկ բերանմը ու իմաստութիւնմը պիտի տամ · որ ան բոլոր ձեզի ներհակները չեն կրնար անոր դէմ դնել՝ կամ պատասխանմը տար :

16 Պիտի մատնըվիք (ձեր) ծնողացը ձեռքէնալ , ու (ձեր) եղբարներէն ու ազգականներէն , ու բարեկամներէն · ու ձգմէն պիտոր ըսպաննեն ալ :

17 Ու ամէնուն ատելի պիտի ըլլաք՝ իմ անունիս պատճառով :

18 Ու ձեր գլխէն մէկ մազմը նալ պիտի չի կորսըվի :

19 Ու ձեր համբերութենովը ձեր հոգին պիտի վաստըկիք :

20 Իսպ երբոր տեսնէք ըլլաք երուսաղէմը շրջս գիտցէն զօրքեր՝ պաշարված , ալ գիտցիք որ անոր կործանմունքը մօտ է :

21 Ան ատեներ անոնք որ հրէաստանն են՝ լեռները պիտի փախչին , ու անոնք որ անոր միջն են՝ ելլեն քաշվին , ու անոնք որ իր քովի երկիրներն են՝ անոր միջը չի մտնան :

22 Ինչու որ, ան՝ (իրմէն) ոխը չանելու օրերն են, որ բոլոր (իր վրա) գրվածները կատարվին :

23 Ու ալ ան օրերը ծոցվորներուն ու ծծմայրներուն վայ է վրանին . որ սաստիկ նեղութին պիտի ըլլա (ան) երկրին, ու (այ) բարկութինը ան ժողովրդին դէմ:

24 Ու թրբի բերան պիտոր իյնան · ու բոլոր հեթանոսներուն երկիրը գերի պիտի ըլլան · ու երուսաղէմը (դրըսի) ազգերուն

կատարեսցին ժամանակք չե-
թանոսաց :

25 Եւ եղիցին նշանք յարե-
գակն և ՚ի լուսին և յաստեղս. և
յերկրի՝ տագնապ հեթանոսաց՝
՚ի յայտել բարբառոյ իբրև ծո-
վու և խռովութեան,

26 Յելանելոյ ոգւոց մարդ-
կան յերկիւղ՝ և ՚ի կարծեաց
հիւսելոց ՚ի վերայ տիեզերաց.
զի զօրութիւնք երկնից շար-
ժեսցին :

27 Եւ յայնժամ տեսցեն
զորդի մարդոյ եկեալ՝ամպովք,
զօրութեամբ՝ և փառաւք բազ-
մօք :

28 Եւ յորժամ սկսանիցի
այս լինել, ամբարձջիք և
բարձրացուսջիք զգլուխս ձեր.
զի մերձ է փրկութիւն ձեր :

29 Եւ ասաց առակ ի նո-
ցա. տեսանիցէք զթզենիդ, և
զամենայն ծառ.

30 Յորժամ ցուցանիցեն
զպտուղ իւրեանց, տեսանէք՝
և ՚ի ՚նոցանէ ձանաչէք եթէ
մերձ է ամառն :

31 Նոյնպէս և դուք՝ յոր-
ժամ տեսանիցէք զայս ամե-
նայն եղեալ, գիտասջիք թէ
մերձ է արքայութիւն այ :

32 Ամէն ասեմ ձեզ. թէ ոչ
անցցէ ազգս այս, մինչև այս
ամենայն լինիցի :

33 Երկինք և երկիր անց-
ցեն, և բանք իմ ոչ անցանի-
ցեն :

34 .Ո զգոյշ լերուք անձանց,
զուցէ ծանրանայցեն սիրտք ձեր
շռայլութեամբ և արբեցու-
մով կսխան ըլլա, ինչպէս որ
ան հեթանոսներուն առնին
չափնալ գա չանսի :

25 Ու արեւին ու լուսնկային
ու աստղերուն վրան՝նշաններ պի-
տի ըլլան, ու երկրի վրայալ հե-
թանոսներուն սրտագողը՝ ան ա-
ւելի ձանները՝ն՝ ու իրար անդամնե-
րէն՝ ալեկոծութեան մէջ եղած լինի,

26 Մարդոցը սրտով սխուա-
խէն՝ ան աշխարհն համար, ու բո-
վանդակ աշխարքի վրա գալու
բաներուն կարծիքներէն. ինչ-
որ՝ երկինքի զօրութիւնները պիտի շարժին :

27 Ու ան ատենը որպէս մար-
դոյ պիտոր տեսնան՝ ամպերու
վրա՝ զօրութիւնով ու ելլէզ
փառաւորութիւնով եկած :

28 Ու երբոր ասանկը կըս-
կսի ըլլալ, դուք գլխընիդ վեր
վերուցէք ու բարձրցուցէք, որ՝
ալ ձեր փրկութիւնը մօտ է :

29 Ու անոնց մէկ առակմըն ալ
բսաւ. Նայեցէք թուզին ծառը,
ու բոլոր (ուրիշ) ծառերնալ.

30 Ո՞ր երբ իրենց պտուղը կը-
կըսին երևցընել՝ դուք ան կըտես-
նաք՝ ու անով կըձանչնաք որ ա-
մառը մօտ է :

31 Այսպէս դուք՝ որ ատեն
ասանկալ դուք՝ որ ասոնց
բոլորը բաներըս եղած տես-
նաք, գիտնաք որ ալ այ արքայ-
ութիւնը մօտերդ է :

32 Ձմարիտ ձեզի կըսեմ. որ
ասոր սերունդը պիտի չանցնի՝ ինչ-
ւան որ ասոնց բոլորը բաները չըլ-
լան :

33 Երկինքը ու երկիրը կանց-
նին, ու իմ խօսկերըս (պարապ)
չեն անցնիր :

34 Ը զգուշ եղէք անձերնուդ.
որ չըլլա՝ թէ սրտերնիդ ծանրըց-
նա կերուխումով ու գինովութի-

թեամբ՝ և չոգովք աշխարք չհամեօք, և յանկարծակի հասանիցէ ի վերայ ձեր օրն այն :

35 Ո՛ի իբրև զորոգայթ հասանիցէ ի վերայ ամենեցուն՝ որ բնակեալ են ընդ ամենայն երեսս երկրի :

36 Արթնուն կացէք այսու չեռև, յամենայն ժամ աղօթս արարէք, զի արժանի լինիջիք ազատանել յայնմ յամենայնէ որ լինելոց է, և կալ առաջի որդւոյ մարդոյ :

37 Եւ ի տուէ ի տաճարին ուսուցանէր, և գիշերս ելեալ ապանէր ի լերինն՝ որ կոչէր Ձիթենեաց :

38 Եւ ամենայն ժողովուրդն կանխէր ընդ առաւօտս առ նա ի տաճարն՝ լսել ի նմանէ :

նով, ու աշխարհային բոլոր մունքներով· ու ան օրը անկարծ ձեր վրան չհասնի :

35 Որ՝ ան՝ մէկ ակնառիմը պէս (անկարծ) պիտոր վրա չհասնի՝ ան ամէնուն որ բոլոր երկրի երեսը բնակած են :

36 Ուստի ալ արթնուն կեցէք, ամէն առեն աղօթք ըլէք, որ արժանի ըլլաք ազատ ձեալու ան ամէն (փորձանքներէն) որ պիտոր ըլլա, ու որդոյ մարդոյ դիմացը կանգնիլ :

37 Ու ցորեկը տաճարին մէջը կը սորվեցընէր, ու գիշերները կելլէր ան լեռը կը քաշվէր կը կենար՝ որ ձիթենեաց (լեռ) կըսվի :

38 Ու բոլոր ժողովուրդը առ վըտանց կանուխ տաճարը անոր կերթային՝ իմէն բան լսելու :

Ի. Լ· Ի Բ·

1 Մերձեցաւ տօն բաղարջակերացն՝ որ կոչէր պասք:

2 Եւ խնդրէին քահանայապետքն և դպիրք՝ իմ սրպէս սպանանիցեն զնա . բայց երկնչէին ի ժողովրդենէ անտի :

3 Ապա եմուտ սատանայ՝ ի յուդա ի կոչեցեալն իսկարիովթացի, որ էր ի թուոյ երկոտասանիցն :

4 Չոգաւ եղ բանս ընդ քահանայապետսն՝ և ընդ պետիրս՝ և ընդ իշխանս ժողովրդեանն, զի մատնեսցէ զնա նոցա :

5 Եւ խնդացին, և խոստացան տալ նմա արծաթ :

6 Եւ յանձն առ՝ և խնդրէր պարապ մատնել զնա նոցա՝ ի կուսի յամբոխէն :

1 Բաղարջակերքին տօնը մօտեցաւ՝ որ ան՝ պասքա կըսվէր:

2 Ու քահանայապետներն ու կարգադրիները եռեւ էին որ ինքը ինսոր բսպանեն . միան թէ՝ ժողովրդներէն վախ ունէին :

3 Եւ սատանան յուդա իսկարիովթացի բսած՝ մէջը մտաւ, որ ան՝ տասներկու (առաքելոց) համրանքէն էր :

4 (Ու ինքը) գնաց քննյապետներուն ու կարգադրներուն, ու ժողովրդին իշխաններուն հետ խօսկ կապեց, որ անոր անոնց ձեռքը մատնէ :

5 Անոնք ալ ուրախացան՝ ու խօսկ տըվին որ իրեն բսած տան:

6 Խնքնալ վրան առաւ, ու ալ պատեհութիւնը կըփընտռէր՝ որ անոր ժողովրդներէն զատ մինակ տեղ գտած՝ իրենց ձեռքը մատնէ:

7 Եւ՚ի օր բաղարջակերացն, յորում՝ օրէն էր զենուլ զպասեքն :

8 Եւ առաքեաց զպետրոս, և զյովհաննէս՝ և ասէ . երթայք պատրաստեցէք մեզ զպասեքն զի կերիցուք :

9 Եւ նոքա ասեն . ո՞ւր կամիս զի պատրաստեսցուք :

10 Եւ ասէ ցնոսա . ահա՝ իբրև մտանիցէք ՚ի քաղաքն, պատահեսցէ ձեզ այր մի բար֊ձեալ սափոր ջրոյ. երթիջիք ըզ֊հետ նը ՚ի տունն յոր մտանիցէ.

11 Եւ ասասջիք ցտանուտէրն տանն . վարդապետ ասէ քեզ՝ ո՞ւր են վանքն իմ, յո֊րում զպասեքն ուտիցեմ աշա֊կերտօքս հանդերձ :

12 Եւ նա ցուցցէ ձեզ վեր֊նատուն մի մեծ զարդարեալ , և անդ պատրաստեսջիք :

13 Եւ գնացեալ գտին որ֊պէս և ասացն նոցա . և պատ֊բաստեցին զպասեքն :

14 Եւ իբրև ժամ եղեւ՝ բաղ֊մեցաւ, և երկոտասան առա֊քեալքն ընդ նմա :

15 Եւ ասէ ցնոսա . ցանկա֊լով ցանկացայ զայս պասեք ուտել ընդ ձեզ՝ մինչեւ չար֊չարեալ իցեմ:

16 Ասեմ ձեզ , թէ ոչ և ևս կերայց ՚ի սմանէ, մինչև լցցի յաթքայութեան այ :

17 Եւ ընկալեալ բաժակ՝ գոհացաւ և ասէ . առէք զայդ՝ և բաժանեցէք ՚ի ձեզ :

18 Ասեմ ձեզ, թէ յայսմ հետէ՝ ոչ արբից ՚ի բերոյ որ֊թոյ, մինչև եկեսցէ արքայու֊թիւն այ :

19 Եւ առեալ հաց, գոհա֊

7 Հաղարձկերքին օրը եկաւ, որ անտանը օրէնք կար՝ պասեքի (գառը) մորթելու :

8 Եւ պետրոսն ու յոհաննէսը խաւրեց՝ ու ըսաց . գացէք մեզի պասեքը պատրաստեցէք որ ու֊տենք :

9 Անոնք ալ ըսին . ո՞ւր կու֊զես որ պատրաստենք :

10 Եւ իրենց ըսաց. երբոր քա֊ղաքը կըմտնաք, մէկմալ ձեզի մէկ մարդմը կըհանտրսկի՝ ջրի կուժմը բարձած, անոր հետը գացէք ան տունն որ (ինքը) կըմտնա :

11 Եւ անոր տանը տիրոջը ը֊սէք . վարդապետը (խրիկը) քեզի ըսելու որ՝ ո՞ւր է իմ տեղը, որ (ես) հոն աշակերտներուս հետ պասեքը ուտեմ :

12 Անոնալ ձեզի մէկ մեծ վեր֊նատունմը կըցուցնէ՝ ադիկ սա֊պած , ու հոն պատրաստեցէք :

13 (Անոնքալ) գացին անոնք գտան՝ ինչպէս որ իրենց ըսաւ . ու ալ պասեքը պատրաստեցին :

14 Եւ առենն որ եղաւ՝ սեղան նստաւ , ան տասներկու առաք֊եալներնալ իր հետը :

15 Եւ անոնց ըսաց . (ես) սաս֊տիկ կրսիրեցէի որ աս պասե֊քըս ձեզի հետ ուտեմ՝ իմ չար֊չարվելէս առաջ .

16 Որհանթէ՝ ձեզի (աս՝) կը սեմ՝ որ ալ ասկէ եւս պիտի չու֊տեմ, ինչվան որ ան կատարվի այ արքայութեանը մէջ :

17 Եւ բաժակը (ձեռքը) ա֊ռաւ՝ գոհացաւ՝ ու ըսաց . առի֊կա առէք՝ ու ձեր մէջը բաժնեցէք:

18 Ձեզի կըսեմ, որ ալ ասկէ եւս որթին բերքէն պիտի չխը֊մեմ՝ ինչվան որ այ արքայութինը չի գա հասնի :

19 Եւ հացը առաւ , գոհացաւ՝

ցաւ, եբեկ և ետ նոցա՝ և ա-
սէ· այս է մարմին իմ, որ վասն
բազմաց տուեալ· զայս արաս-
ջիք առ իմոյ յիշատակի :
20 Նոյնպէս և զբաժակն յետ
ընթրեացն առ՝ և ասէ· այս
բաժակ է նոր ուխտ՝ իմովք ար-
եամբ վասն ձեր հեղեալ :

21 Բայց ահաւասիկ՝ ձեռն մատ-
նչի իմոյ ընդ իս ՚ի սեղանս :
22 Եւ որդի մարդոյ ըստ
սահմանելոյն երթայ, բայց՝
վայ մարդոյն այնմիկ՝ որով
մատնիցի :

23 Եւ նոքա՝ սկսան խրն-
դրել ընդ միմեանս, թէ ո՞վ է
՚ի նոցանէ՝ որ զայն գործելոց
իցէ :

24 Եղև՝ և հակառակու-
թիւն ՚ի մէջ նոցա, թէ ո՞վ ՚ի
նոցանէ համարիցի մեծ :
25 Եւ նա՝ ասէ ցնոսա ·
թագաւորք ազգաց տիրեն նո-
ցա, և որ իշխենն նոցա՝ բա-
րերարք կոչին :

26 Ա՛յլ դուք՝ ո՛չ այնպէս :
այլ որ մեծն է ՚ի ձեզ՝ եղիցի
իբրև զկրտսերն, և առաջնորդն
իբրև զսպասաւորն :

27 Ո՞վ է մեծ, բազմեաւն՝
եթէ սպասաւորն · ո՞չ սպա-
քէն՝ բազմեալն· բայց ես եմ
՚ի միջի ձերում իբրև զսպա-
սաւոր :

28 Եւ դուք էք՝ որ ցանդ
կայիք ընդ իս ՚ի փորձութիւնս
իմ :

29 Եւ ես ուխտեմ ձեզ՝ որ-
պէս և Հայր իմ ուխտեաց ինձ՝
զարքայութիւն :

կրտրեայ ու անունդ տրվաւ, ու ը-
սաց · այս իմ մարմինս է, որ ան՝
շատվորի համար կրտրվի· ասի-
կա իս յիշելու համար ըրէք :

20 Նմանկալ՝ բաժակը ընթրի-
քէն ետև առաւ՝ ու ըսաց · աս
բաժակս նոր ուխտուդաշինք է՝ իմ
արունովըս (եղած), որ ձեզի հա-
մար կրթափվի :

21 Որ չանա՝ ան իս մատնողին
ձեռքը՝ ինծի հետ աս սեղանս է :
22 Ու որդին մարդոյ՝ ինտոր
որ ան վճռվաճ է՝ ալ կերթա ·
միան թէ՝ վայ է ան մարդուն վրա՝
որ իրեն ձեռքովը պիտոր մատ-
նվի :

23 Նմանքալ ըսկսան միջեր-
նին հարցմըրցկել, թէ իրենցմէ
ո՞վ ըլլա որ ան բանը պիտի ընէ :

24 Ու անոնք միմիկու հետ աս
վէճս ալ կընկնին, որ իրենց մէջ
ո՞վ մենծ պիտոր սեպվի :
25 Նմանքնալ անոնց ըսաց· (դրսէ)
ասգերուն՝ թագաւորներն (են՝ որ)
անոնց վրան կրտիրապետեն · ու
անոնք որ իրենց վրա կիշխեն՝
բարերար կրսվին :
26 Բայց ձերը՝ անանկ չէ· հա-
պա՝ ան որ ձեր մէջը մենծն է՝
պզտիկիմը պէս պիտի ըլլա, ու
դլխաւորը՝ ըսպասաւորիպէս :
27 Ո՞վ է (էվէկի) մենծը · (ո-
դան) նըստողը մի՞ թէ ըսպասաւո-
րը · (սեղան) նըստողը չէ մի ·
անանկ ես՝ ձեր մէջը միկ ըսպա-
սաւորիմըպէս եմ :
28 Ու դուք ան էք՝ որ իմ փոր-
ձութիւններուս մէջ՝ ամէն իմիր
իմ հետս (հաստատ) կեցաք :
29 Ու ես ալ ձեզի՝ ձիգ խօսկ
կուտամ, ինչպէս որ իմ Հայրըսալ
ինծի անանկ խօսկ տրվաւ՝ ար-
քայութիւնը (տալու) :

30 .Օ ի ուսիցդ եւ ըմպի-
ցէք ՚ի սեղան իմ յարքայու-
թեանն իմում. եւ նստիցիք յոր-
կոտասան աթոռս՝ դատել զեր-
կոտասան ազգ իսրայէլի :

31 Եւ ասէ տէր. սիմոնի սի-
մոնի, ահա՝ սատանայ խընդ-
րեաց զքեզ խաբբալել իբրև
զցորեան :

32 Ես ապաչեցի վասն
քո՝ զի մի պակասեսցին հա-
ւատք քո: եւ դու երբեմն դարձ-
ցիս՝ եւ հաստատեսցես զեղբարս
քո :

33 Եւ նա՝ ասէ ցնա. տէր՝
ընդ քեզ պատրաստ եմ եւ ՚ի
բանտ եւ ՚ի մահ երթալ :

34 Եւ նա ասէ ցնա. ասեմ
քեզ պետրէ՝ չկեղէ այսօր հաւս
խօսեալ, մինչեւ երիցս ուրաս-
ցիս զիս ինձ ճանաչել :

35 Եւ ասէ ցնոսա. յորժամ
առաքեցի զձեզ առանց քսակի
եւ մախաղի եւ կօշկաց, միթէ՝
կարօտացայք իմիք :

36 Եւ նոքա ասեն. եւ ո՛չ
իմիք : ապա՝ ասէ. այլ այժմ
որ ունէ քսակ՝ բարձցէ, նոյն-
պէս եւ մախաղ. եւ որ ոչն ու-
նիցի, վաճառեսցէ զհանդերձ իւր՝
եւ գնեսցէ իւր սուսեր :

37 Ասեմ ձեզ. զի այս
եւս որ գրեալ է՝ պարտ է՝ զի
կատարեսցի յիս, թէ ընդ ա-
նօրէնս համարեցաւ. զի որ
վասն իմ ինչ է՝ վճարեալ է :

38 Եւ նոքա ասեն. տէր՝ ա-
հաւասիկ են աստ երկու սուրք:
եւ նա ասէ ցնոսա. բաւական
են :

39 Եւ ելեալ գնաց ըստ սո-
վորութեանն ՚ի լեառն ձիթե-

30 զի՝ գիք իմ սեղանս ուտիք
ու խըմիք իմ արքայութեանս մի-
ջը, ու տասվերկու աթոռ նստիք՝
տասվերկու իսրայելացոց ազգին
դատաստանը ընելու :

31 Ու տերը (աստ.) ըսաց. սի-
մոն սիմոն՝ ահա սատանան
ուզեց որ՝ քեզ ցորենի պես մաղ-

32 բայց ես քեզի համար աղա-
չեցի՝ որ քու հաւատքդ չի պակ-
սի: ու դուն՝ առենով պիտի դարձ-
դաս՝ ու քու եղբարդ հաս-
տատես :

33 Ինքնալ անոր ըսաց. տէր՝
ես պատրաստ եմ քեզի հետ բան-
տալ երթալու՝ ու մեռնելու յայլ :

34 Ինքնալ անոր ըսաւ. քեզի
կըսեմ պետրէ, որ ասօր հեռ ապ-
ըսըը չի խօսած՝ դուն իրիք չեղ-
իս պիտի ուրանաս՝ (ըսես) որ՝ իս
չես գիտեր :

35 Ու իրենց ըսաց. երբոր(ես)
ձեզ խըրկեցի առանց քսակի՝ ու
մախաղի՝ ու կօշկներու՝ (զոք)
բանիմը կարօտութի՞ քաշեցիք մի:

36 Ինքնալ ըսին թէ՝ ոչ
բանիմընալ : եւսև ըսաց. բայց
հիմա՝ ով քսակ ունինէ՝ թող
վրան առնէ, ասանկայ մախաղը-
ու ով որ թուր չունինէ՝ թող իր
լաթերը ծախէ՝ ու ան իրեն գնէ:

37 Որեան թէ՝ ձեզի կըսեմ, որ
ան գրուած բաննալ պէտք է որ
վրաս կատարվի, թէ անօրէնին
բուն հետը մէկ սեպվեցաւ. ուսա-
ինչ որ իմ վրայովս (գրված) էնէ՝
ալ ան կըլլա կոր.

38 Ու անոնք ալ ըսին՝ տէր
հիմա հոս երկու դանակ կա, ան-
ալ անանց ըսաց. (առատ) է-
րիք են :

39 Ու ել եւաւ՝ իր սովորու-
թենիպես ձիթենեաց լեռը եր-

նեաց · զնացին զհետ նորա և աշակերտքն :

40 Իբրև եկաւ ՚ի տեղին՝ ասէ ցնոսա · յաղօթս կացէք մի՛ մտանել ՚ի փորձութիւն :

41 Եւ ինքն մեկնեցաւ ՚ի նոցանէ իբրև քարընկէց մի , եղ ծունր՝ կայր յաղօթս ,

42 եւ ասէր · Հայր՝ եթէ կամիս՝ անցո՛ զբաժակս զայս յինէն . բայց ո՛չ իմ կամք՝ այլ քո՛ղ լիցին :

43 Եւ երևեցաւ նմա հրեշտակ յերկնից՝ և զօրացուցանէր զնա . և էր ՚ի տագնապի , և մաղիւրութեամբ ևս կայր յաղօթս :

44 Եւ հոսկին ՚ի նմանէ քրտունք իբրև դկայլակս ա_ րեան՝ սլանն սլանն հեղեալ ՚ի յերկիր :

45 Եւ յարուցեալ յաղօթից_ ցըն , եկն առ աշակերտսն՝ և գիտ զնոսա ՚ի քուն ՚ի տրտմու_ թենէն :

46 Եւ ասէ ցնոսա · զի՞ նըն_ ջէք , արի՛ք կացէք յաղօթս՝ զի մի՛ մտանիցէք ՚ի փորձութիւն :

47 Եւ մինչ դեռ խօսէր , ա_ հաւասիկ ամբոխ , և որ կո_ չէին յուդա՝ մի յերկոտասանիցն առաջնորդէր նոցա : իբրև մեր_ ձեցաւ առ յի՝ համբուրեաց զնա · քանզի զայն նշան տու_ եալ էր նոցա , թէ ընդ որում՛ ես համբուրեցից՝ նա է , զնա ունիցէք :

48 Ասէ ցնա յի՝ · յուդա՝ համբուրելո՞վ մատնես զորդի մարդոյ :

49 Իբրև տեսին որ զնովաւն էին՝ որ ինչ եղեւն , ասէն ցնա . տո՛ր հարցո՛ւք զնոսա սրով :

50 Եւ եհար մի ոմն ՚ի նո_ թեալ , աշակերտներնոյ (մ՚յտեզ) իր ճեաը դացին :

40 Երբոր ան տեղը հասաւ՝ ա_ նանց ըսաց · աղօթք ըրէք որ փոր_ ձութեան մէջ չ՚ի մտնաք :

41 Ու ինքը քարմը նետելու չափ տեղ անոնցմէ զատվեցաւ , ծընկան վրա եկած՝ աղօթք կընէր ,

42 Ու կըսէր · Հայր՝ թէ որ կը_ կամիսնէ՝ աս բաժակը իսմէն ան_ ցո՛ր · միան թէ՝ ան իմ կամքըս չըլլա · հապա՝ քոդ քուկդ ըլլա:

43 Ու երկընքէն հրեշտակմը իրեն երևցաւ , ու անոր ուժ կու_ տար · որ ինքն սաստիկ կսկըծու մէջէր , ու սրտանց կըսէր աղօթք կընէր :

44 Ու իրմէ քրտինքը որ կը_ վազէր՝ արունի պուտերու պէս՝ կէր կէր գետինը կթափէր :

45 Ու աղօթքէն ելաւ աշա_ կերտներուն քովը եկաւ , անոնք քուն գտաւ՝ (իրենքալ) տրտմու_ թենէ բըռնըված :

46 Ու անոնց ըսաւ . ինչ կը_ քնանաք կոր· ելէք աղօթքի կեցէք, որ փորձութեան մէջ չ՚ի մտնաք :

47 Ու երբոր (աս) կըզրուցէր · մէյմալ ամբոխ մ՚ըզմէրդ , ու յուդա բսածնալ՝ ան տասներկու_ քէն մէկը՝ անոնց առաջնորդու_ թէն կերթար · որ երբ՝ յի քովը մօտեցաւ՝ ինքը պագաւ· ինչու որ՝ անոնց աս նշանը տըվեր, (ըսերէր) թէ՝ որուն չեռնոր ես պագըվիմ՝ անիկա է , ան բռնեցէք :

48 Յի ալ անոր ըսաց . յուդա՝ (դուն) պաղնելով մի որդին մար_ դոյ կըմատնես :

49 Յիին չհաը եղածները եր_ բոր ան բաները տեսան, իրեն ը_ սին · տո՛ր անոնք դանիով պարնինք :

50 Ու անոնցմէ մէկը քահա_

ցանէ գքահանայապետին ծա-
ւայ, և ՚ի բաց եհան զաջոյ
ունկն նորա :

51 Պատասխանի ետ յի՝ և
ասէ . Թո՛ղ տուք մինչև ցայդ
վայր . և մատուցեալ յունկն՝
բժշկեաց զնա :

52 Եւ ասէ ցեկեալսն ՚ի վե-
րայ նորա՝ գքահանայապետն,
և ցիշխանս տաճարին՝ և ցե-
ծերսն . Իբրև ՚ի վերայ աւա-
զակի՞ ելիք սուսերօք և բրօք :

53 Հանապազ ընդ ձե՛զ էի
՚ի տաճարին , և ո՛չ ձգեցիք
ձեռս յիս . այլ այս է ձեր ժամ՝
և իշխանութիւն խաւարի :

54 Եւ կալեալ զնա՝ ածին
և մուծին ՚ի տունն քահանայա-
պետին : և պետրոս երթայր
զկնի նորա հեռագոյն :

55 Իբրև լուցին կրակ ՚ի
մէջ դաւթին՝ և նստան շուրջ ,
նստաւ և պետրոս ՚ի մէջ նոցա :

56 Եւ տես զնա աղախին ոմն՝
զի նստէր առ լոյսն , չայեցաւ
ընդ նա՝ և ասէ . և սա ընդ նո-
սա էր որ ընդ նմայն էին :

57 Իսկ պետրոս ուրացաւ և
ասէ . ո՛չ գիտեմ զնա կին դու :

58 Եւ յետ սակաւ միոյ՝ այլ
ոմն ետես զնա՝ և ասէ . և դու
՚ի նոցանէ ես : և պետրոս ա-
սէ . այր դու՝ չեմ ՚ի նոցանէ :

59 Եւ իբրև ժամ մի անց ՚ի
վերայ , այլ ոմն վիճէր և ա-
սէր . ստոյգ և սա ընդ նմա էր ,
քանզի գալիլեացի է :

60 Այս պետրոս , այր դու՝
չգիտեմ զինչ խօսիս : և առ-
նայապետին ծառային զարկաւ
ու անոր աջ ղիւի անկաւ՝ մկրի
ձգեց :

51 Յա՛ պատասխան տրվաւ՝ ու
ըսաց . Թո՛ղ տրվիք ինչվան սա
տեղը : ու զընաց՝ անկաւը բը-
ժըշկեց :

52 Ու ան իր վրան եկողներուն՝
քահանայապետներուն՝ ու տա-
ճարին իշխաններուն՝ ու ծեր-
բուն՝ ըսաց . (դուք) թրերով ու
բրբերով՝ իբր թէ մէկ աւազակի
մը վրա՝ անանկ ելեր էք :

53 Այմէն իմիր տաճարը ես
ձեր հետն էի , ու ինծի ձեռք չե-
զարկիք . բայց աս է ձեր ատենը ,
ու խաւարին իշխանութիւնը :

54 Ու ալ ինքը բռնեցին՝ տա-
րին ու (մէնծ) քահանայապետին
տունը խօթեցին : պետրոսնալ
հեռվանց անոր հետևէն կերթար :

55 Երբոր մէջը կրակ
վառեցին՝ ու բոլորտիքը նստան ,
պետրոսնալ մէջերնին նստաւ :

56 Մէկ աղջիկ ծառամը ա-
նիկա որ տեսաւ՝ բոցուն դիմացը
նստած , իրեն նայեցաւ՝ ու ը-
սաց . աս ալ ան մարդոց հետն էր՝
որ անոր հետ էին :

57 Պետրոսնալ ուրացաւ , ու
ըսաց . կընի՛կ՝ ես անիկա չեմ գի-
տեր :

58 Ու մէկ պահեկէն ուրիշը
նալ ինքը տեսաւ , ու ըսաց . դուն
ալ անոնցմէն ես . պետրոս ալ ը-
սաւ . մարդ՝ ես անոնցմէն չեմ :

59 Ու երբոր մէկ ժամմը ետեն
վրա անցաւ , մէկ ուրիշ մընալ
խօսկին վրա կեցեր՝ ու կրսէր . ը-
տուզ ասիկայալ անոր հետն էր ,
որ՝ (ինքը) գալիլեացի ալ է :

60 Պետրոսնալ ըսաց . մարդ
ես չեմ գիտեր դուն ինչ կըզուս-

ժամայն միտնդեա նա զայն ա_
սէր, խօսեցաւ Տէւ :
61 Դարձաւ ասր՝ և Տայեցուս
՝ի պետրոս. և յիշեաց պետրոս
զբանն ՚ն՝ զոր ասաց ցնա .
մինչև՛ Տաւս խօսեալ լցէ, և_
բիցս ուրասցիս՝ չգիտել զնս :

62 Եւ ելեալ արտաքս՝ և_
լաց դառնապէս :
63 Եւ արքն՝ որ պահէին
զնա . այսն առնէին զնովաս,
և Տարկանէին .
64 Ծածկէին զերեսս նորա՝
և ասնչէին , և Տարցանէին
ցնա՝ և ասէին . մարգարեաց՝
ով է որ եՀարն զքեզ :

65 Եւ այլ բազում ինչ
Տայհոյութեամբ խօսէին ՚ի նա:
66 Եւ իբրև այգ եղև, ժո_
ղովեցաս ծերակոյա ժողովրդ_
զնանն՝ քաՀանայապետքն և
գպիրք, և Տանին ածին զնա
յտեսանն իւրեանց՝ և ասեն,
ևթէ զու ես քն, ասա մեզ :

67 Ա՚ս ցնոսա . ևթէ ասա_
ցից ձեզ, սակայն ո՛չ Տաւա_
ատայք .
68 Եւ ևթէ Տարցից ինչ
զնէզ՝ չտայք ինձ պատասխա_
նի՝ կամ արձակիցէք :
69 Բայց՝ յայսմ Տետէ նստցի
որդի մարդոյ ընդ աջմէ զօրու_
թեանն այ :
70 Եւ ասեն ամենեքեան .
ուրեմն զո՛ւ ես որդին այ : և
նա՝ ասէ ցնոսա . զո՛ք ասէք
ևթէ ես եմ :
71 Եւ նոքա ասեն, զի՞նչ
և՚ս պիտոյ է մեզ վկայութիւն,
զի մեքեն իսկ լուաք ՚ի բերա_
նոյ զորա :

ցես ու : ան կէսան որ ինքը աս կը_
սէր՝ աղլորնալ խօսեցաս :
61 Տրը զարձաւ՝ ու դէսի պետ_
րոսին նայեցաս . պետրոսին ալ
միտքը եկաւ ան ոնը խօսկը որ
իրին ըսաւ, (ևթէ) աղլորը դեռ չի
խօսած՝ (դուն) իրիք չեղ պիտի
ուրանաս՝ որ իս չես գիտեր :
62 Ու (ալ անկէ) դուրս ելաւ՝
դառնարցունք կուլար :
63 Ու ան մարդիկն որ ինքը
կրպահէին, իր վրայով ծաղրու_
ծիծաղ կընէին՝ ու կրզարնէին .
64 Երեսը կըծածկէին՝ ու (ին_
քը) կըչարչըրկէին , ու իրեն կը_
Տարցրնէին ու կրսէին . մարգա_
րեացիր՝ ան ով է որ քեզի զար_
կաւ :
65 Ու ուրիշ շատ Տայհոյրանքի
բաներալ իր դէմ կրզրսուցին :
66 Երբոր ալ առաւտն եղաւ՝
ժողովըրդին ծերակուտը՝ քահա_
նայապետները ու կարդացողնե_
րը միասեղ ժողվեցան՝ ու ինքը
Տանեցին իրենց դատաստանա_
տեղը բերին, ու իրեն ըսին . դուն
քրիստոսն ես մի՝ ան մեզի ըսէ :
67 Ա՚նոնց ըսաց . ևթէ որ (ան
ես) ձեզի ըսեմ, անանկալ (դուք)
չէք Տաւատար .
68 Ու ևթէ որ (ես ալ) ձեզի բան_
մը Տարցնեմ, ինծի պատասխան
պիտի չտաք, կամ (ես) արձրկէք:
69 Ա՚նան ևթէ՝ ալ ասկէ ետև
որդին մարդոյ՝ այ զօրութեանը
աջ գին պիտի նստի :
70 Ու ալ ամմինքը ըսին . ա_
նանկ է՚նէ՝ դուն այ որդին ես: ինք_
նալ անոնց ըսաց . դուք կըսէք_
կոր որ ես (ան) եմ:
71 Ա՚նոնքալ ըսին . ալ մեզի
ինչ վկայութին պէտք է, որ ան՝
բուն մենք մեզմով առոր բերնէն
լսեցինք :

ԳԼ. ԻԳ:

1 Եւ յարուցեալ ամենայն բազմութիւնն նոցա, առին զնա առ Պիղատոս:

2 Եւ սկսան չարախօսս լինել զնմանէ՝ և ասել. զտաք զսա զդեր թիւրիցը զազգս մեր, և արգելոյր ի տալոյ հարկս կայսեր, և ասէր զանձնէ՝ թէ քրիստոս թագաւոր:

3 Իսկ պիղատոս եհարց զնա՝ և ասէ. դո՞ւ ես թագաւորն հրէից: Նա՝ պատասխանի ետ նմա՝ և ասէ. դո՛ւ ասացեր:

4 Ասէ պիղատոս ցքահանայապետսն և ցժողովուրդն. չգտանե՛մ ինչ յնմա յայսմիկ:

5 Եւ նոքա աւնդէին, և ասէին, թէ խառնէ զժողովուրդս, ուսուցանէ ընդ ամենայն հրէաստան՝ սկսեալ ի գալիլեէ մինչև ցայսր:

6 Իսկ պիղատոս իբրև լուաւ զգալիլեէ, եհարց եթէ գալիլեացի է այրն:

7 Եւ իբրև գիտաց թէ յհրոդեսէ կանուխ թինէ հերոդէ է, եհ տանել զնա առ հերոդէս. քանզի և նա յերուսաղէմ էր յաւուրսն յայնոսիկ:

8 Եւ հերոդէս իբրև եահս զյն, ուրախ եղև յոյժ. զի ցանկայր ի բազում ժամանակաց տեսանել զնա. քանզի լսէր բազում անգամ զնմանէ, և ակն ունէր նշան ինչ լեեալ տեսանել ի նմանէ:

9 Հարցանէր զնա բանիւք

1 Ա ւ բոլոր ան իրենց ժողովը ոտք ելան (առին) ինքը պիղատոսին դիմացը տարին:

2 Ու սկսան անոր վրա չարիքներ բարդել՝ ու ըսել (քէ մինը) ասիկա գրտանք՝ որ մեր ազգը ծուռ համբա կրնէր, ու կարգիլէր կայսերին տուրք տալու, ու ինքն իրեն համար կըսէր որ՝ քրիստոս թագաւորն է:

3 Պիղատոսալ իրեն հարցուց, ու ըսաց. դուն հրեաներուն թագաւորն ես մի: Ինքնալ անոր պատասխան տըվաւ՝ ու ըսաց. ան դուն ըսիր:

4 Պիղատոս (դարձաւ) քահանայապետներուն՝ ու ժողովրդին ըսաց. աս մարդուս վրա (ես) գիտնալ բանմը չեմ գըտներ կոր:

5 Ու անոնք՝ ալ ոտք կըսկսէին՝ ու կըսէին, որ (ինքը) ժողովրդը տակնուվրա կընէ, բոլոր հրէաստանը սորվըցնելով՝ հետ է՝ գալիլեայէն սկսած մինչ ասոր տեղը:

6 Պիղատոսալ երբոր գալիլեայէն համբ լսեց, հարցուց որ աս մարդը գալիլեացի է մի:

7 Անանկ՝ երբոր իմացաւ՝ որ հերովդէսի տէրութենէն է, տըվաւ որ ինքը հերովդէսին տանէին. ինչու որ՝ անալ ան օրերը երուսաղէմ կրգտնըվէր:

8 Հերովդէսնալ յոր որ տեսաւ՝ էվէլըը ուրախացաւ. որ շատոնցմէն կրբախծար ինքը տեսնալու, ինչու որ՝ շատ չէղ անոր վըրայովը բաներ կըլսէր, ու անանկ կըյուսար որ անոր բրածմէկ հրաշքը տեսնէ:

9 Շատ խօսկերով իրեն կըհարց-

բազմաց, և նա ոչինչ ետ նմա պատասխանի :

10 Եւ կային քահանայապետքն և գիրք՝ և պղծուցին չարաբասել նմանէ :

11 Եւ յհամարձակ գնա և հերովդէս հանդերձ իւրովք զօրականօքն. և այսպէս արարեալ՝ արկ զնովաւ հանդերձս սպիտակս, և ետ տանել անդրէն առ պիղատոս :

12 Եւ եղեն բարեկամք պիղատոս և հերովդէս յաւուր յայնմիկ· քանզի յառաջ թշնամիք էին միմեանց :

13 Կոչեաց պիղատոս զքահանայապետսն՝ և զիշխանս՝ և զժողովուրդն,

14 Եւ ասէ ցնոսա· մարդ բերիք իմ առ իս զայս զոյս իբրև զխոտորեցուցիչ ժողովրդեան. և ահաւասիկ առաջի ձեր զատեցայ, և ոչինչ գտի յայսմ մարդոյ զորոց զուք չարախօսեցէք զդմանէ :

15 Այլ և ոչ հերովդէս, քանզի եաւ տանել զնա առ նա : և արդ՝ ոչինչ մահու արժանի է գործեալ դորա·

16 Խրատեցից զդա, և արձակեցից :

17 .Օ.ի հարկ էր՝ մի մի՝ ըստ ամէն արձակել նոցա :

18 Եւ նոքա՝ աղաղակէին ամենայն բազմութեամբն՝ և ասէին. բարձ զդա, և արձա՛ կեա մեզ զբարաբբաս :

19 Որ էր վասն խռովութեան իրիք եղելոյ ի քաղաքին, և սպանութեան՝ մտեալ՝ի բանտ:

20 Դարձեալ պիղատոս ըմբըդկէր : ու անալ ինկի անոր պատասխանմը չի տրլաւ :

10 Քահանայապետներն ու կարգաղներնալ հոն կեցեր, անոր վրան չարաչար իրեն կանդնէին :

11 Հերովդէս ալ իր զօրապետաց հետ մկ եղած՝ երեսը իր մէն դարձուց · ու ինքը ծաղրածիծաղի բերելով՝ վրան ճերմակ հագուստմը ձգած, նորէն պիղատոսին խրկել տրլաւ :

12 Ու անօր օրը՝ պիղատոսն ու հերովդէսը ուլ մէյտեղ բարեկամութիւն ըրին, որ անկէ առաջ մէյմէկու թշնամի կէին :

13 Պիղատոս՝ քովը կանչեց քահանայապետներըը, ու իշխաններըը, ու ժողովուրդը ·

14 Ու անոնց ըսաւ · աս մարդը բերիք իմ առջեւս հանեցիք՝ ժողովուրդը ծուռ համրա գնողմը պէս · ու հանա ձեր դիմացը (անոր) դատը տեսա · ու (ես) աս մարդուս վրա խնկի գնողի բանմը չի գտա՝ ան որ դուք ատը վրա կամբաստանէք կոր :

15 Ու ոչ հերովդէսնալ, որ՝ ինքը անորալ տանիլ տրլի: ուա՛ ոի՝ալ ատիկա մեռնելու արժանի բանմը չէ ըրեր ·

16 Անոր պատիժմը տամ՝ ու արձկեմ՝ :

17 Պատճառն որ՝ տմմէն մէկ տօնի առեն՝ պէտք էր որ մէյմէկ (բռնած մարդ) իրենց արձկէր :

18 Անոնք ալ բոլոր զիրար մէյտեղ կըկանչըռտէին՝ ու կըսէին · առիկա վերցուր, ու մեզի բարաբբան արձկէ :

19 Որ անիկա՝ քաղքին մէջ եղած ադմրկի մը՝ ու մարդասպանութիւնի պատճառով՝ բանտն էր մտեր :

20 Պիղատոս նորէն բսկսաւ

կըսաւ խօսել, քանզի կամէր արձակել զյն :

21 Եւ նոքա՝ անդրէն ապա-
զակէին և ասէին . 'ի խաչ հան՝
զյա :

22 Եւ նա՝ երիցս ասէ ցնո-
սա . զի՞նչ չար արար սա . ոչ
ինչ գիւտս մահու գտի 'ի սմա .
խրատեցից զսա, և արձակե-
ցից :

23 Եւ նոքա սոխակէին մե-
ծաձայն՝ և խնդրէին զնա 'ի
խաչ հանել : և զօրանային
բարբառքն նոցա՝ և քահա-
նայապետիցն :

24 Եւ պիղատոս հաւանե-
ցաւ՝ առնել զհայցուածս նո-
ցա :

25 Արձակեաց նոցա զբա-
բբաս՝ զոր վասն խռովու-
թեան և սպանութեան արկեալ
էր 'ի բանտ, զոր և խնդրէին
իսկ . և զյն մատնեաց կամացն
նոցա :

26 Իբրև առին զնացին զը-
նա, բմբռնեցին զմի սիմոնի
կիւրենացի՝ որ գայր յանդէ, և
դին 'ի վերայ նորա զխաչն՝
բերել զնովի յետ :

27 Եւ երթայր զհետ նորա
բազմութիւն ժողովրդեանն, և
կանանց՝ որ կոծէին և աշխա-
բէին զնա :

28 Դարձաւ յն՝ և ասէ ցնո-
սա . դուստրք երուսաղէմի՝ մի՛
լայք 'ի վերայ իմ, այլ լայէք
'ի վերայ անձանց և 'ի վերայ
որդւոց ձերոց :

29 .Օ,ի եկեսցին աւուրք՝
յորս ասիցեն, թէ երանի ամ-
լոց և արսվայնից՝ որ ոչ ծնան,
և ստեանց՝ որ ոչ դիեցուցին :

30 Յայնժամ սկսանիցին ա-
խօսք անցուանել . լինել որ՝ յլ
կուգիք արձկել :

31 Ու անոնք եռւհ կրկանչ
վրայ տէին՝ ու կըսէին . տիկա
խաչ հանէ :

22 Ա,նալ իրիք հեղուն անոնց
ըսաց . ասիկա ինչ չարիք գործեց.
(ես) ասոր վրա մեռնելու արժանի
բանմը չի գտա, ինքը պատժի,
ու արձկեմ :

23 Ա,նոնք ալ ձանրերին վը-
րուցած ոտք կոխերէին՝ ու կու-
գէին՝ որ ան խաչ հանէ : անանկ
ալ իրենց՝ ու քահանայապետնե-
բուն գոռում գոչումը կէվէլնար:

24 Ու ալ պիղատոսին միտը
պակսեցաւ՝ որ անոնց խընդիրքը
կատարէ :

25 Խարաբբան իրենց արձ-
կեց, որ ինքը՝ անիկա ապստամբ ու
մարդասպանութիւնի պատճառով
բանտը գրեր էր, որ անոնք ան
1 Իսկ յն գնաց ՚ի լեառն ձի-
թենեաց :

2 Եւ ընդ առաւօտն դարձեալ
եկն ՚ի տաճարն, և զայր առ
նա ամենայն ժողովուրդն, և
ուսուցանէր զնոսա :

3 Ածին քահանայապետքն
և փարիսեցիք՝ կին մի բռնուա-
նեալ ՚ի շնութենէ. և կացու-
ցեալ զնա առաջի,

4 Ասեն. կինս այս բռնուա-
նեալ՝ ինքն յայտնապէս շնա-
ցեալ է :

5 Եւ յօրէնսն՝ մովսէս մեզ
պատուիրեաց զայսպիսիս քար-
կոծել. արդ դու՝ զի՞նչ ասես
վասն դորա :

6 Այս ասէին՝ փորձելով
զնա, զի ունիցին ամբաստա-
նութիւն զնմանէ : Իսկ յն ՚ի
խոնարհ հայեցեալ զրէր մա-
տամբն յերկիր :

7 Իսկ երբեմն տիպեցին հար-
ցանելով զնա, հայեցեալ ՚ի
վեր՝ ասէ. անմեղն ՚ի ձէնջ,
նախ՝ նա ընկեցցէ քար ՚ի վե-
րայ դորա :

8 Եւ դարձեալ ՚ի խոնարհ
նայեալ՝ զրէր յերկիր :

9 Եւ լուեալ՝ ելանէին մի
ըստ միոջէ՝ սկսեալ յառաջնոցն
մինչև ՚ի վերջինսն, և մնաց
միայն յն, և կինն՝ կայր առա-
ջի նորա :

10 Պատասխանեաւ ետ յն՝ և
ասէ զնա. կին դու՝ ո՞ւր են,
ո՞չք զքեզ դատապարտեաց :

1 Յն ալ ձէթենեաց լեռը զը-
նաց :

2 Ու առտուընդ նորէն տաճա-
րը եկաւ, ու բոլոր ժողովուրդը
իրեն կուգար, ինքնալ նստէր ա-
նոնք կըսորվըցնէր :

3 Գրագիրներն ու փա-
րիսեցիները մէկ կնիկը բերին՝
շնութիւնով բռնըբռնված, ու ա-
նիկա առջևը կեցուցին,

4 Ըսին. աս կընիկըս՝ ինքը
բուն շնութիւնին գործքովը բռ-
նըված է :

5 Ու օրէնքով մեզի մովսէս մեզի
պատուիրեց որ՝ ասանկները քա-
րկոծվին. հիմա՝ դուն ատոր չա-
մար ի՞նչ կըսես :

6 Ասոնք ինքը փորձելու
համար կըսէին, որ իր վրա ամ-
բաստանութիւն ընեն : Յն ալ
վար նայելով մատովը գետնին
վրա կըգրէր :

7 Ու երբոր ալ շատ կըպտին՝
ան իրեն հարցընելու, (անոնց) վեր
նայեցաւ ըսաց. ձեր մէջէն ան որ
անմեղ է՝ անիկա պիտի առաջ
քոշ տատը վրա քար ձրգէ :

8 Ու նորէն վար նայելով գե-
տինը կըգրէր :

9 Ան (ան) որ լսեցին՝ մէյմէկու
ետևէն (դուրս) կելլային՝ առջին-
ներէն սկըսած՝ ինչվան ետկին-
ները. ու (Հն) յն միան մնաց,
ու կնիկնալ իր առջևը կեցած :

10 Յն խօսկը անոր դարձուց՝ ու
ըսաց. կընիկ՝ (անոնք) ո՞ւր են,
որ մէկը քեզ չի դատապարտեց :

11 Եւ ասէ, ո՛չ ՝ուր : Եւ ասէ յի՛. Եւ ո՛չ ես դատապարտեմ զքեզ, երթ յայսմ հետէ մի՛ մեղանչեր :

11 Ինքն ըսաւ. Չէ տէր : յի՛սուս ալ ըսաւ . Ես ալ քեզ չեմ դատապարտեր . գնա՝ հասկէ ետեւ մեղք մի՛ գործեր :

12 Դարձեալ խօսեցաւ ընդ նոսա յի՛ս՝ եւ ասէ . Ես եմ լոյս աշխարհի . որ զիս ընդ ետեւ իմ՝ ընդ խաւար մի՛ գնասցէ , այլ ընկալցի զլոյսն կենաց :

13 Ասէն ցնա փարիսեցիքն. դու վասն անձին քոյ վկայես , և վկայութիւն քո չէ ՝ճշմարիտ :

14 Պատասխանի եհ յի՛ս՝ և ասէ ցնոսա . Թէպէտ և ես վկայեմ վասն անձին իմոյ՝ վկայութիւն իմ ՝ճշմարիտ է . զի գիտեմ ուստի եկի՝ և յո՛ երթամ . բայց դուք ո՛չ գիտէք ուստի գամ՝ կամ յո՛ երթամ :

15 Դուք ըստ մարմնոյ դատիք . ես ո՛չ դատիմ և ո՛չ ոք :

16 Թէպէտ և դատիմ ես զոք՝ դատաստանն իմ ՝ճշմարիտ է . զի չեմ միայն , այլ ես՝ և որ առաքեացն զիս Հայր :

17 Եւ յօրէնսն իսկ ձեր գրեալ է , թէ երկուց մարդոց վկայութիւն ՝ճշմարիտ է :

18 Ես եմ որ վկայեմ վասն իմ՝ և վկայէ վասն իմ՝ որ առաքեացն զիս Հայր :

19 Ասէին ցնա . ո՞ւր է Հայր քո : պատասխանի եհ յի՛ս՝ և ասէ ցնոսա. ո՛չ զիս գիտէք՝ և ո՛չ զՀայրն իմ . եթէ զիս գիտէիք՝ և զՀայրն իմ թերեւս գիտէիք :

20 Զայս բանս խօսեցաւ յի՛ս ընդ նոսա ՝ի տան գանձին , յոր-

11 Անոնք ըսաւ. Չէ տէր : յի՛սուս ալ ըսաւ . Ես ալ քեզ չեմ դատապարտեր . գնա՝ հասկէ ետեւ մեղք մի՛ գործեր :

12 Յի՛սուս անոնց հետը խօսեցաւ՝ ու ըսաւ . Ես աշխարհքին լոյս եմ . ան որ իմ ետեւէս կուգա, (ինքը) մութին մէջ չի քայեր, հապա ան կենաց լոյսը կունենայ :

13 Փարիսեցիները իրեն ըսին . դուն քու անձիդ համար կվկայես , ու քու վկայութիւնդ ճշմա՛ չէ :

14 Յի՛սուս պատասխան տուաւ՝ ու անոնց ըսաւ. Ես իմ անձիս համար ալ վկայելու ըլլամ, իմ վկայութիւնս ճշմարիտ է . ինչու որ՝ (ես) գիտեմ ուսկից եկա՝ ու ո՛ւր կերթամ. բայց դուք չէք գիտեր որ ես ուսկից կուգամ՝ կամ ո՛ւր կերթամ :

15 Դուք մարմինին նայելով դատաստանը կընէք . ես չեմ դատեր՝ ո՛չ մէկնալ :

16 Ու թէ որ մէկնալ դատելու ըլլամ, իմ դատաստանս ճշմարիտ է. որ մինակ չեմ, հապա ես՝ ու (իմ հետս) Հայրնալ՝ որ իս խրկեց :

17 Ու ան՝ ձեր օրէնքին մէջնալ գրված է , որ երկու մարդու վկայութիւնը ճշմարիտ է :

18 Ես եմ որ ինձի համար կվկայեմ, ու ինձի համար Հայրնալ կվկայէ՝ որ իս խրկեց :

19 Իրեն կըսէին . ո՞ւր է քու Հայրդդ : յի՛սուս պատասխան տուաւ՝ ու անոնց ըսաւ . իս չէք գիտեր՝ ու ո՛չ ալ իմ Հայրս. թէ որ իս գիտնայիք՝ ըլլա թէ իմ Հայրսալ կըգիտնայիք :

20 Յի՛սուս այս բանս անոնց հետ գանձատանը մէջը խօսեցաւ՝ երբ-

ժամ ուսուցանէը ՚ի տաճարի
անդ . և ոչըք կալաւ զնա , զի
չէ՚ւս հասեալ էր ժամ նորա :

21 Ասէ զարձեալ ցնոսա յա-
ս երթամ , և խնդրիցէք զիս .
և ՚ի մեղս ձեր վեռանիջիք . զի
ուր ես երթամ , դուք ոչ կա-
րէք գալ :

22 Ասէին հրէայքն . միթէ
զև-րովին երթայցէ , զի ասէ՝ թէ
ուր ես երթամ՝ դուք ոչ կա-
րէք գալ :

23 Եւ ասէ ցնոսա . դուք՝ ՚ի
ներքինւստ աստի էք , և ես՝ ՚ի
վերնւստ անտի եմ . դուք յաշ-
խարհէ աստի էք , ես չեմ յայ-
սմ աշխարհէ :

24 Էայց ասացի ձեզ՝ թէ ՚ի
մեղս ձեր վեռանիցիք . զի թէ
ոչ հաւատայցէք թէ ես եմ ,
վեռանիցիք ՚ի մեղս ձեր :

25 Ասէն ցնա . դու ո՞վ ես :
ասէ ցնոսա յի . նախ՝ զի և
խօսիմս իսկ ընդ ձեզ :

26 Բազում ինչ ունիմ վասն
ձեր խօսել և դատել . այլ որ
առաքեացն զիս՝ ճշմարիտ է :
և ես զոր լուայն ՚ի նմանէ՝
զայն խօսիմ յաշխարհի :

27 Եւ ոչ գիտացին՝ թէ
զՀօրէ ասէր ցնոսա :

28 Ասէ ցնոսա յի . յոր-
ժամ բարձրացուցանիցէք զոր-
դի մարդոյ , յայնժամ գիտաս-
ջիք՝ թէ ես եմ . և յանձնէ իմ-
մէ ինչ ոչ առնեմ , այլ որպէս ու-
սոյց զիս Հայրն իմ , զայն խօսիմ :

29 Եւ որ առաքեացն զիս՝
ընդ իս է , ոչ եթող զիս միայն .
զի ես զՀաճոյս նորա առնեմ
հանապազ :

30 Երբեմն զայս խօսեցաւ ,

որ տաճարըը կրսորվեցըներ կոր .
ու չեզաւ որ ՄԿը ինքը բռնէ ,
պատճառն որ՝ գիս իր ատենը
չէր հասած :

21 Կորէն ՄԿյմալ յի անոնց ը-
սաց . ես կերթամ , ու (դուք) իս
պիտոր փընտռէք , ու ձեր մեղաց
ՄԷջը պիտի մեռնիք . պատճառ՝
ուր որ ես կերթամ , դուք (հոն)
չէք կրընար գար :

22 Հրեաներնալ կրսէին . (ա-
տիկա) իրմով մի պիտի երթա , որ
կրսէ թէ՝ ուր որ ես կերթամ դուք
չէք կրընար գար :

23 Ու անոնց ըսաց . դուք աս-
կէց վարէն էք , ու ես անկէց վե-
րէն եմ . դուք աս աշխարքէս էք ,
ես աս աշխարքէս չեմ :

24 Ան որ ձեզի ըսի թէ ձեր մե-
ղացը ՄԷջ կրմեռնիք . որ թէ չի
հաւատաք անոր (ինչ որ) ես եմ ,
ձեր մեղացը ՄԷջ կրմեռնիք :

25 Իրեն ըսին . դուն ո՞վ ես : յի
անոնց ըսաց . ան առՋինը որ ալ
ձեզի հետ կրխօսիմ կոր :

26 Շատ բաներ ունիմ ձեր վրա
խօսելու՝ ու դատելու . բայց ան
որ իս խրբկեց՝ ճշմարիտ է . ու
ես ան որ իրմէն լսեցի՝ աշխարքի
ՄԷջ անիկա կրխօսեմ :

27 Ու չիմացան՝ որ Հօրը վրայ-
ով անոնց կրսէր :

28 Յի անոնց ըսաց . երբոր
որդին մարդոյ (դուք) բարձրցու-
նէք , անատինը կրգիտնաք ան որ
ես եմ . ու ինքիրէս բանմը չեմ
ըներ , հապա՝ իմ Հարըս ինծի ին-
տոր որ սորվեցուց՝ ան կրխօսիմ :

29 Ու ան որ իս խրբկեց՝ իմ
հետս է , իս մինակ չի թողուց .
ինչու որ՝ ես միշտ անոր Հաճոյ
եղած բանը կրնեմ :

30 Ա՛ս որ խօսեցաւ՝ ալ շատ

բազմամբ հաւատացին ՚ի նա :
31 Եւ ասէր յն առ հրեայսն հաւատացեալս. եթէ դուք կայք ՚ի բանի իմում, ճշմարիտ աշակերտք իմ էք ·
32 եւ ծանիջիք զճշմարտութիւնն, և ճշմարտութիւնն ազատեսցէ զձեզ :
33 Պատասխանի ետուն նմա՝ և ասեն . զաւակ աբրահամու եմք, և ոչ ումեք երբեք ծառայեցաք. զիարդ ասես եթէ ազատք լինիջիք :
34 Պատասխանի ետ նոցա յն, ամէն ամէն ասեմ ձեզ , թէ ամենայն որ առնէ զմեղս՝ ծառայ է մեղաց :
35 Եւ ծառայն՝ ոչ յաւիտեան կայ ՚ի տան , իսկ որդին ՚ի յաւիտեան կայ :
36 Իսկ արդ՝ եթէ որդին զձեզ ազատեցուսցէ, ճշմարիտ ազատք լինիջիք :
37 Գիտեմ զի զաւակ աբրահամու էք· այլ կնդրէք սպանանել զիս, զի բանին իմոյ չէք տեղի ՚ի ձեզ :
38 Եւ՝ զոր տեսի առ հօր իմում՝ խօսիմ. և դուք զոր լուարուք ՚ի հօրէն ձերմէ՝ առնէք:
39 Պատասխանի ետուն նմա՝ և ասեն. հայր մեր՝ աբրահամ է : ասէ ցնոսա յն . եթէ որդիք աբրահամու էիք՝ զործսն աբրահամու զործէիք :
40 Այլ այժմիկ կնդրէք սպանանել զիս , զայր մի՝ որ ձեզ զճշմարտութիւն խօսեցայ՝ զոր լուայ ՚ի հօրէ իմմէ · զայդ՝ աբրահամ ոչ արար :
41 Դուք առնէք զգործս հօրն ձերոյ : ասեն ցնա . մեք ՚ի պոռնկութենէ չեմք ծնեալ , մի է հայր մեր՝ աստ :

մարդիք իբրեն հաւատացին :
31 Ցն ալ հաւատացեալ հրեայսն ներսուն կըսէր , թէ որ դուք իմ խօսկիս մէջ հաստատ կենաք , իմ ճշմարիտ աշակերտս կըլլաք ·
32 Ու ալ ճշմարտութիւնը կը-ճանչնաք , ու ան ճշմարտութիւնը ձեզ ազատ կընէ :
33 Իրեն պատասխան տըվին՝ ու ըսին. մենք աբրահամի զաւակ ենք , ու իսկի մէկումը ծառա չեղանք . ալ դուն ինծոր կըսես՝ որ ազատ կըլլաք :
34 Ցն անոնց պատասխան տը-վաւ . ըղդրդ ճշմարիտ ձեզի կը-սեմ , որ ամէն ովոր մեղք կը-զործէ,(անիկա) մեղքին ծառան է:
35 Ու ծառան՝ տանը մէջ յա-ւիտեան չի կենար , բայց որդին յաւիտեան կըկենա :
36 Ուստի՝ թէ որ որդին ձեզի ազատութիւն տա , ալ ճշմարիտ ազատ կըլլաք :
37 Գիտեմ որ աբրահամի զա-ւակ էք· բայց ես ըսպաննել կու-զէք , ինչու որ՝ իմ խօսկս ձեր ներսերնիդ տեղ չունի :
38 Ես՝ ինչ որ իմ հօրըս քովը տեսա՝ ան կըխօսիմ, ու դուք՝ ան որ ձեր հօրմէն լսեցիք՝ կընէք :
39 Իրեն պատասխան տըվին՝ ու ըսին . մեր հարը աբրահամն է: յն ալ անոնց ըսաց · թէ որ դուք աբրահամի որդիքը ըլլայիքնէ՝ աբրահամին զործքը կընէիք :
40 Որ հիմա (դուք) ես ըսպան-նել կուգիք. մէկ մարդմը , որ ձէ-զի ճշմարտութիւն խօսեցա , ան՝ որ իմ հօրմէս լսեցի · աբրահամը առանկ բան չըբաւ :
41 Դուք ձեր հօրը զործքը կը-նէք : իրեն ըսին . մենք պոռնի-կութենէ ծընած (զաւակ) չենք . մեր հարը՝ (միան) մէկ աստ է :

42 Ասէ ցնոսա յի՝ · եթէ ոճ էր հայր ձեր, սիրէիք արդեւք զես, զի ես յայ ելի՝ և եկի . և ոչ եթէ յանձնէ ինչ եկի , այլ նա առաքեաց զիս :

43 Ընդէ՞ր զխօսս իմ ոչ գիտէք զի՝ ոչ կարէք լսել զբանն իմ :

44 Դուք ՚ի հօրէ ՚ի սատանայէ էք , և զցանկութիւնս հօրն ձերոյ կամիք առնել · զի նա մարդասպան էր իսկզբանէ, և ՚ի ճշմարտութեան ոչ եկաց· զի ոչ գոյ ճշմարտութիւն ՚ի նմա . յորժամ խօսիցի սուտ՝ յիւրմէ անտի խօսի . զի սուտ է և հայր նորա :

45 Իսկ ես՝ զի զճշմարտութիւն խօսիմ, ոչ հաւատայք ինձ:

46 Ո՞ ոք ՚ի ձէնջ յանդիմանեսցէ զիս վասն մեղաց · և եթէ զճշմարիտն ասեմ, ընդէ՞ր ոչ հաւատայք ինձ :

47 Որ էն յայ, զբանս այ լսէ · և դուք վասն այնորիկ ոչ լսէք , զի չէք յայ :

48 Պատասխանի եհան հրեայքն՝ և ասեն ցնա . ոչ բարւոք ասեմք մեք՝ եթէ սամարացի ես դու , և դեւ գոյ ՚ի քեզ :

49 Պատասխանի եհ յի՝ և ասէ · չիս զիւ ոչ գոյ · այլ պատուեմ զհայր իմ, և դուք՝ անարգէք զիս :

50 Եւ՝ ոչ խնդրեմ զփառս իմ, է որ խնդրէն՝ և դատի :

51 Ամէն ամէն ասեմ ձեզ , եթէ ոք զբանն իմ պահեսցէ , զմահ մի տեսցէ ՚ի յաւիտեան :

52 Ասեն ցնա հրեայքն · արդ՝ գիտացաք թէ դեւ գոյ ՚ի

42 Յի՝ ասէ ցնոսա· թէ ոչ ձեր հարը ոճ բլլար՝ ալ ես կը սիրէիք, որ՝ ես այ քովէն եկա ու եկա . ու չէ թէ ինքիբէս եկա, հապա՝ ան իս խրկեց :

43 Ինչո՞ւ դուք իմ խօսկը չէք հասկընար, անոր համար որ՝ իմ ըսածս չէք ուզեր լսել :

44 Դուք սատանա հօրմէն էք, ու ձեր հօրը բախճանքը ընել կուզէք . ու ան՝ ըսկիսկզբնէն մարդասպան էր , ու ճշմարտութիւնի մէջ չի կեցաւ . որ իր ներսիդինալ ճշմարտութիւն չկա . երբոր (մկնալ) սուտ կրխօսի՝ բուն իրենինէն ան կրխօսի· ինչու որ՝ իր կարնալ սուտպտիւց է :

45 Ու ալ՝ ես որ ճշմարտութիւն կրխօսիմ, ինձի չէք հաւատար :

46 Չկայ ով է ան որ (կրընա) իմ մեղքիս երեսս տալ . հապա ճշմարտութիւն որ ձեզի կրսեմ, ինչու ինծի չէք հաւատար :

47 Ան՝ որ ինքը աստուծմէ է, այ ըսած խօսկերուն մտիկ կրդնէ. ու դուք անոր համար մտիկ չէք դրներ , որ աստուծմէ չէք :

48 Հրեաները պատասխան տրվին՝ ու իրեն ըսին . մենք չենք մի աղէկ ըսեր՝ որ դուն սամարացի ես, ու քու ներսըդ դև կա :

49 Յի՝ պատասխան տրվաւ՝ ու ըսաւ . իմ ներսըս դև չկա · հապա՝ ես իմ հարըս կրպատուեմ, ու դուք իս կրնախատէք :

50 Եւ՝ չեմ իմ փառքըս փընտռեր, (ուրիշն) է ան որ կրփընտռէ՝ ու (ինքը) դատաստան կրընէ :

51 Ի դարդ ճշմարիտ ձեզի կրսեմ. թէ որ մկիը իմ խօսկս պահի, ան՝ յաւիտեան մահ չի տեսներ :

52 Հրեաները իրեն ըսին · ալ հասկրցանք որ քու ներսըդ դև

քեզ· աբրահամ մեռաւ՝ և մարգարէքն, և դու ասես՝ եթէ ոք զբանն իմ պահեսցէ, մի՛ համակեսցէ զմա՛հ ՚ի յաւիտեան:

53 Միթէ՝ դու մե՞ծ ինչ ոք իցես քան զհայրն մեր աբրահամ որ մեռաւ, և մարգարէքն մեռան· արդ՝ դու զո՞վ առնես զքեզ:

54 Պատասխանի ետ յի՛սուս· և թէ ես փառաւորեմ զանձն իմ, փառքն իմ՝ ոչինչ են· է՛ հայր որ փառաւորէ զիս, զորմէ դուք ասէք՝ թէ ձե՛ր մեր է,

55 և ոչ համարէք զնա· բայց ես գիտեմ զնա: և թէ ասեմ, թէ ոչ գիտեմ զնա, ձեզ նման սուտ լինիմ· այլ գիտեմ զնա, և զբան նորա պահեմ:

56 Աբրահամ հայր ձեր ցանկացաւ տեսանել զօր իմ, եւտես և ուրախ եղե:

57 Ասեն ցնա հրեայքն· յիսնամ մի՛ չունիս է՛ք ես, և զաբրահա՞մ տեսեր:

58 Ասէ ցնոսա յի՛սուս· ամէն ամէն ասեմ ձեզ, յառա՛ջ քան զլինիլն աբրահամու եմ ես:

59 Վէմս առին հրեայքն՝ զի արկցեն ՚ի վերայ նորա· և յի՛սուս խոյս ետ՝ և ել զնոցա ՚ի տաճարէ անտի:

կա· աբրահամ մեռաւ՝ ու մարգարէներնալ· ու դուն կըսես՝ թէ որ մէկը իմ խօսկըս պահէնէ՝ անիկա յաւիտեան մեռնելու համը չառներ:

53 Դուն՝ մեր հայր աբրահամէն՝ որ մեռաւ, ու մարգարէներէն՝ որ մեռան, անոնցմէ մէկ մընծամըներս մի· ալ դուն քեզ ո՞րուն տեղը կըդնես կոր:

54 Յի՛սուս պատասխան տըվաւ· թէ որ ես ինքըզինքըս փառաւորեմ՝ իմ փառքըս բանմը չէ· հայրն է՝ որ իս կըփառաւորէ, որ դուք անոր համար կըսէք թէ՝ մեր ածն է,

55 ու ինքը չէք ճանչնար· բայց ես ինքը գիտեմ: ու թէ որ ըսեմ՝ որ ինքը չեմ գիտեր, ձեզպէս սուտղուց կըլլամ· հապա՝ ինքը գիտեմ, ու անոր խօսկը կըպահեմ:

56 Աբրահամ ձեր հարը կաըօտ քաշեց իմ օրը տեսնելու, ան տեսաւ՝ ու ուրախացաւ:

57 Հրեաներնալ իրեն ըսին· դուն դեռ յիսուն տարեկան չեկաս՝ աբրահա՞մնալ մի՞ տեսար:

58 Յի՛սուս ան՛ոնց ըսաւ· ըղ՛ըղ ձըմարիտ ձեզի կըսեմ, ես աբրահամին ըլլալէն ալ առաջ եմ՛:

59 Հրեաները քարեր վերուցին՝ որ անոր վրա՛ ձգեն· յի՛սուս ալ մէկզի քաշվեցաւ, ու ելաւ տաճարէն զնաց:

ԳԼ· Ը·

1 Ու մէնչ դեռ անցանէր, ետես այր մի կոյր ՚ի ծնէ:

2 Եւ հարցին ցնա աշակերտքն նորա՝ և ասեն· ուսո՛ւցիչ՝ ո՞վ մեղաւ էր, սորա՝ թէ չօր և մօր իւրոյ՝ զի կոյր ծնաւ:

3 Պատասխանի ետ յի՛սուս· ոչ

1 Ու երբոր կանցնէր կոր՝ մէկ մարդ մը տեսաւ ծընէ կուր:

2 Իր աշակերտներնալ իրեն հարցուցին՝ ու ըսին· ո՛ւսուցիչ՝ մեղքը որո՞ւննէ՝ որ ան՝ կուր ծընի, իրենը մի՝ թէ իր չօրն ու մօրը:

3 Յի՛սուս պատասխան տըվաւ· մեղ-

գործ միաս է, և ոչ հօր և մօր իւրոյ. այլ զի յայտնի լիցին գործքն այ՝ի նմա :

4 Եւ ինձ՝ պարտ է գործել զգործս այնորիկ որ առաքեացն զիս՝ մինչ ասուր կայ. գայ գիշեր՝ յորժամ ոչոք կարէ գործել :

5 Մինչ դեռ յաշխարհի եմ, լոյս եմ աշխարհի :

6 Այս երբեւ ասաց, ե՛թուք՝ի գետին՝ և արար կաւ՝ի թքանն, և ծեփեաց զկաւն՝ի վերայ աչաց կուրին .

7 Եւ ասէ ցնա. երթ լուա յաւազանին սիլոամայ, որ թարգմանի՝ առաքեալ : Չոգաւ լուացաւ, եկն և տեսանէր :

8 Իսկ դրացիքն՝ և որոց տեսեալն էր զնա յառաջագոյն՝ թէ մուրացիկ էր, ասէին . ոչ սա էր որ նստէրն և մուրանայր: կէսքն ասէին . նա է :

9 Այլքն ասէին՝ ոչ, այլ նմանն է նմա . և ինքն ասէր՝ թէ ես եմ :

10 Ասեն ցնա . իսկ զնաւրդ բացան աչք քո :

11 Կ՚ա՝ եւս պատասխանի . այր մի որում յիսուս ասեն, կաւ արար՝ և ծեփեաց զաչս իմ, և ասէ ցիս . երթ՝ի սիլոամ՝ և լուա . չոգայ լուացայ՝ և տեսանեմ :

12 Ասեն ցնա . ո՞ւր է նա : ասէ ցնոսա . ոչ գիտեմ :

13 Ածին առ փարիսեցիսն զնա, որ երբեմն կոյր էր :

14 Եւ էր շաբաթ՝ յորժամ զկաւն արար յս, և եբաց զաչս կուրին :

15 Դարձեալ հարցանէին զնա և փարիսեցիքն, թէ զիարդ տեսանես : և նա՝ ասէ ցնոսա . քէ ոչ իրեւն է, ու ոչ ալ իր հօրն ու մօրը . հապա՝ որ այ զործքը առոր վրա յայտնի ըլլա :

4 Ու պէտք է որ՝ ես անոր (զրած) գործքը գործեմ՝ որ ին խրկեց, քանի որ ցորեկ է. գիշերն որ վրա գա, ան առեներ մը կը գործէ չի կրնար ընել :

5 Քանի որ (ես) աշխարհքի մէջ եմ՝ աշխարհքին լոյսն եմ :

6 Ա՛ս բսաց՝ ու գետինը թքաւ, ու թքքովը ցեխ շինեց, ու ան ցեխով կուրին աչքերը ծեփեց .

7 Ու անոր ըսաց . գնա վրդ սիլոամա աւազանը, որ առաքեալ ըսելէ : (ան ալ) գնաց վրդացվեցաւ՝ զարձաւ, ու ալ կրտեսնէր :

8 Դրացիներնալ՝ ու անոնք որ առաջուց ինքը տեսերէին՝ որ մէկ մուրացկան մրնէր, կրսէին որ՝ ասան չէը մի, որ կրնստէր ու կը մուրար : կէսմը՝ կրսէին որ ան է :

9 Ուրիշներնալ կրսէին թէ չէ հապա անոր կրլլանի . ու ինքնալ կրսէր թէ ես (ան) եմ :

10 Իրեն ըսին . հապա չու աչ վրդներդ ինտոր բացվեցաւ :

11 Ա՛ն ալ պատասխան տրվաւ. մէկ մարդմը որ յս կրսեն, ցեխ շինեց՝ ու անով իմ աչ վրդներս ծեփեց, ու ինծի ըսաւ . գնա սիլոամմը՝ ու վրդա . գացի վրդացվեցա, ու ալ կրտեսնեմ կոր :

12 Իրեն ըսին . անիկա ո՞ւրէ : անոնց ըսաց . չեմ գիտեր :

13 Փարիսեցիներուն զիմացը տարին՝ ան որ առենով կուր էր :

14 Ու շաբաթ օր էր՝ երբոր յս ան ցեխը շինեց, ու կուրին աչվրդները բացաւ :

15 Փարիսեցիներնալ նորէն անոր կրհարցրնէին, թէ ինտոր կրտեսնաս կոր : անալ անոնց բսաւ .

կաւ եղ ՚ի վերայ աչաց իմոց, և լուացայ՝ և տեսանեմ :

16 Ասեն ոմանք ՚ի փարիսեցւոցն· ոչ է այրն այն յԱյ, զի զշաբաթս ոչ պահէ : Ելաքն ասէին, իսկ զնո՞ր կարէ մարդ մեղաւոր՝ այսպիսի նշանս առնել : և էին հերձուածք ՚ի մէջ նոցա :

17 Ասեն գաբձեալ ցկոյրն· դու զի՞ ասես վասն նորա՝ զի բացաւ զաչս քո : և նա ասէ՝ թէ մարգարէ է :

18 Եւ ոչ հաւատային հրեայքն զնմանէ՝ թէ կոյր էր՝ և բացաւ, մինչև կոչեցին զծնողս բացելոյն·

19 Հարցին զնոսա և ասեն, սո՞ւն է որդին ձեր, զորմէ դուքն ասէիք եթէ կոյր ծնաւ· արդ՝ զիարդ տեսանէ :

20 Պատասխանի ետուն ծնողքն նորա՝ և ասեն· գիտեմք զի սա է որդին մեր, և զի կոյր ծնաւ·

21 Բայց զնարդ այժմ տեսանէ, ոչ գիտեմք· կամ թէ՞ ով եբաց զաչս դորա, մեք ոչ գիտեմք· ցդա իսկ հարցէք· ինքնին ՚ի չափ հասեալ է, ինքն իսկ խօսեսցի վասն իւր :

22 Այս ասացին ծնողքն նորա, զի երկնչէին ՚ի հրէից· քանզի նախ եղեալ էր հրէից, եթէ ոք խոստովանեսցի զնա քս՝ ՚ի բաց կացցէ ՚ի ժողովրդենէն :

23 Վասն այնորիկ ասացին ծնողքն՝ նը, թէ ինքնին ՚ի չափ հասեալ է՝ ցնա իսկ հարցէք :

24 Դարձեալ կրկին անգամ կոչեցին զայրն որ կոյրն էր, և ասեն ցնա· տուր փառս այ, աչվըներուս վրա ցեխ դրաւ, ու վրլացվեցա, ու ալ կրտեսնամ՝ :

16 Ան փարիսեցիներէն ոմանք ըսին· ան մարդը աստուծմէ չէ, որ շաբաթ օրերը չը պահեր : Ելմընալ կրսէին· հապա ինծոր կրընա մեղաւոր մարդ ասանկ հրաշքներ ընել : ու անանկ՝ մէջերնին երկպառակութիւն եղաւ :

17 Նորէն կուրին ըսին· դուն անոր համար ինչ կրսես՝ որ քու աչվընեերդ բացաւ : ան ալ ըսաւ որ՝ անիկա մարգարէմընէ :

18 Ու հրեաները չէին հաւատար, որ ինքը կուր էր, ու բացվեցաւ· անանկ որ՝ ալ ան (աչքը) բացվածին ծնողքը կանչեցին·

19 Անոնց հարցուցին՝ ու ըսին· ձեր որդին աս է մի, որ դուք անոր համար կրսէիք որ կուր ծընաւ, հիմա ինծոր կրտեսնա կոր :

20 Անոր ծնողքնալ պատասխան տրվին՝ ու ըսին· գիտենք որ աս մեր որդին է, ու որ՝ ինքը կուր ծնաւ·

21 Բայց հիմա ինծոր կրտեսնա կոր՝ (ան) չենք գիտեր, կամ թէ ասոր աչվըները ով բացաւ՝ մենք չենք գիտեր· բուն իրեն հարցուցէք, ինքը ալ չափահաս (մարդ) է, թող բուն ինքը իրեն համար զըրուցէ :

22 Անոր ծնողքը ասանկ ըսին, որ՝ հրեաներէն կրվախնային· պատճառն որ՝ հրեաները խօսք կապերէին որ՝ թէ մէկը անիկա՝ քս դաւանի ըսէ, ժողովարանէն դուրս ըլլա :

23 Ին ծնողքնալ անոր համար ըսին՝ որ ինքը չափահաս է՝ բուն իրեն հարցուցէք :

24 Չեմալ նորէն կանչեցին ան մարդն որ կուր էր, ու իրեն ըսին· ոյ փառք տուր· մենք գի-

մեք գիտեմք զի այրն այն մեղաւոր է :

25 Եւ նա՝ ասէ . Թէ մեղաւոր է՝ ոչ գիտեմ, բայց զայս գիտեմ, զի կոյր էի՝ և արդ տեսանեմ :

26 Դարձեալ՝ ասեն ցնա . զի՞նչ արար քեզ. զիա՞րդ եբաց զաչս քո :

27 Պատասխանի ետ նոցա . այժմ ասացի ձեզ՝ և ոչ լուաք, զի՞ կամիք միւսանգամ լսել. միթէ՝ և դուք կամիք աշակերտել նմա :

28 Նզբա հայհոյեին զնա՝ և ասէին , դու լինիր նորա աշակերտ . մեք Մովսիսի աշակերտք եմք :

29 Մեք գիտեմք՝ զի ընդ Մովսիսի խօսեցաւ Աստ . զսա՝ ոչ գիտեմք ուստի է :

30 Պատասխանի ետ այրն՝ և ասէ ցնոսա . այդ իսկ են սքանչելիք, զի դուք ոչ գիտէք ուստի իցէ, և զի՛ զաչս եբաց :

31 Գիտեմք զի Աստ՝ մեղաւորաց ոչ լսէ . բայց թէ աստուածապաշտ ոք իցէ, և զկամս նորա առնիցէ, նմա լսէ :

32 Ի յաւիտենից ոք ոչ լուաւ՝ եթէ եբաց ոք զաչս կուրի ի ծնէ կոյր ծնելոյ :

33 Եթէ ոչ յԱստ էր այրն այն , ոչ կարէր առնել ինչ :

34 Պատասխանի ետուն՝ և ասեն ցնա . ի մեղս իսկ ծնեալ ես ամենևին , և դու վարդապետ լինիս մեր : Եւ հանին զնա արտաքս :

35 Լուաւ յն եթէ հանին զնա արտաքս , և երբեմն եգիտ զնա՝ ասէ ցնա . դո՞ հաւատաս ի Որդի Աստ :

տինք որ ան՝ ոչ մեղաւոր մարդ մ'ընէ :

25 Ան՝ պատասխանեաց որ՝ անոր մեղաւոր ըլլալը ես չեմ գիտեր, միայն թէ աս գիտեմ, որ կուրի էի ու հիմա կը տեսնամ կոր :

26 Եւ ան՝ ըսաւ իրեն բացին, քեզի ի՞նչ ըրաւ , քու աչքերդ ի՞նտոր բացաւ :

27 Ան՝ նոցա պատասխան տուաւ. հիմա ձեզի ըսի՝ ու չեք լսեցիք ալ ի՞նչու նորէն լսել կուզէք . դուք ալ մի կուզէք անոր աշակերտ ըլլալ :

28 Ան՝ նեղացան անոր նախատինք կուտային , ու կ'ըսէին . դուն անոր աշակերտ եղիր, մենք Մովսէսին աշակերտն ենք :

29 Մենք գիտենք որ Աստ Մովսէսին հետը խօսեցաւ . ասիկա չենք գիտեր ուսկից է :

30 Ան՝ պատասխան տըւաւ՝ ու անոնց ըսաց . աս հիանալու բանմըն է, որ դուք չէք գիտնար կոր (անոր) ուսկից ըլլալը , ու ան իմ՝ աչքերըս բացաւ:

31 (Ան) գիտենք որ՝ Աստ մեղաւորներուն չի լսեր . հապա թէ որ մէկը Աստապաշտ է՝ ու իրեն կամքը կը կատարէ՝ անոր կը լսէ :

32 Ան՝ սկսէն ցմէկ հետէ մարդը լսուած չէ՝ որ մէկը կուր ծնած իր աչքերը բացած ըլլա :

33 Թէ որ ան մարդը աստուածմէ չըլլար՝ բանմը չէր կրնար ընել:

34 Պատասխան տուին ու իրեն ըսին . (դուն որ) բոլորովին մեղքի մէջ ծնած ես , ալ դուն մի մեզի բան սորվեցնող կ'ըլլաս : ու (անանկ) զինքը դուրս ըրին :

35 Յն լսեց որ ան դուրս ըրին, ու երբոր անոր պատահեց՝ իրեն ըսաւ. դուն կը հաւատաս մի որդուն Աստ :

36 Նա պատասխանի ետ՝ և ասէ. տէր՝ մի՛ է ղէ հաւատաղից՝ ի նա :
37 Ասէ ցնա յի՛ս. և տեսեր զնա, և որ խօսիդ ընդ քեզ՝ նա է :
38 Իւ նա ասէ. հաւատամ՝ տէր : և երկիր եպաղ նմա :
39 Իւ ասէ յի՛ս՝ ի դատաստանս եկի յաշխարհս յայս, զի որ ոչ տեսանեն՝ տեսցեն, և որք տեսանենն՝ կուրասցին :
40 Լուան ոմանք՝ ի փարիսեցւոցն՝ որք ընդ նմա էին, և ասեն ցնա. միթէ և մեք կոյրք իցեմք :
41 Ասէ ցնոսա յի՛ս. եթէ կոյրք էիք՝ ոչ էր ձեր մեղ. բայց արդ ասէք՝ թէ տեսանեմք, և մեղքն ձեր՝ ի ձեզ հաստատեալ են :

36 Ինքն պատասխան տվաւ՝ ու ըսաւ. տէր՝ (ան) ո՞վ է՝ որ (ես) հրեն հաւատամ՝ :
37 Յի՛սուս անոր ըսաց. անիկա տեսար ալ, ու ան որ քու հետդ կը խօսի կրնայ կոր, անիկա է :
38 Ինքն ալ ըսաց. կը հաւատամ՝ տէր. ու երեսը երկրպագեց :
39 Ու յի՛սուս ըսաց. (ես) աս աշխարհքս դատաստան ընելու եկա, որ՝ անոնք որ չեն տեսներ՝ տեսնեն, ու անոնք որ կը տեսնեն՝ կուրնան:
40 Փարիսեցիներէն ոմանք որ իր հետն էին՝ (աս) լսեցին, ու ըսին. անանկէնէ մենքալ կո՞ւր ենք մի :
41 Յի՛սուս անոնց ըսաց. թէ որ կուր ըլլայիք՝ մեղք չէիք ունենար. բայց ան՝ որ կ՚ըսէք թէ կը տեսնենք, ուստի ալ ձեր մեղքը ձեր ներսերնիդ հաստատուած է :

Ժ Լ · Ժ ·

1 Ամէն ամէն ասե՛մ ձեզ. որ ոչ մտանէ ընդ դուռն՝ ի գաւիթ ոչխարացն, այլ ընդ այլ ելանէ, նա՝ գող է և աւազակ :
2 Իսկ որ մտանէ ընդ դուռն, հովիւ է ոչխարաց :
3 Նմա դռնապանն բանայ, և ոչխարքն ձայնի նորա լսեն. և զիւր ոչխարսն կոչէ յանուանէ, և հանէ զնոսա :

4 Իւ յորժամ զիւրն զամենայն հանիցէ, առաջի նոցա երթայ, և ոչխարքն գՀետ նորա երթան. զի ճանաչեն ըզձայն նորա :
5 Օտարի գՀետ ոչ երթիցեն, այլ փախիցեն ի նմանէ

1 Ըզրդի՛ չհմարիա ձեզի կըսեմ. ան որ ոչխըրներուն բակը (երթալու՝) անոր դրունէն չի մտնար, հապա ուրիշ դիացէ (հոն) կելլա՝ անիկա գող ու աւազակ է:
2 Բայց ան՝ որ դրունէն կը մտնա, (ինքը) ոչխըրներուն հովիւնէ:
3 Անոր՝ դրնապանը (դուռը) կը բանա, ու ոչխըրները իր ձայնը կը լսեն. ու ալ իր ոչխըրները իրենց անունովը կը կանչէ՝ ու անոնք (դուրս) կը հանէ :
4 Ու երբոր բոլոր իրենները որ կը հանէ՝ անոնց առջևէն կերթա, ու ան ոչխըրներնալ իր ետևէն կերթան. ինչու որ անոր ձայնը կը ճանչնան:
5 Ուրիշ օտարի ետևէն չեն երթար, հապա՝ անկէց կը խոյանան.

նէ, զի ոչ հանապէն զձայն օ-
տարաց :

6 Օայս առակ ասաց Նո-
ցա յի, և նոքա ոչ գիտէին՝ թէ
զինչ էր որ խօսէրն ընդ նոսա :

7 Դարձեալ՝ ասէ ցնոսա
յի· ամէն ամէն ասեմ ձեզ, զի
ես եմ դուռն ոչխարաց :

8 Ամենեքեան որ յառաջ
քան զիս եկին, գողք էին և
աւազակք· այլ ոչ լուան նո-
ցա ոչխարքն :

9 Ես եմ դուռն· ընդ իս թէ
ոք մտանիցէ, կեցցէ· մտցէ՝
և ելցէ, և հարկ գտցէ :

10 Գող ոչ գայ՝ եթէ ոչ զի
գողասցէ և սպանցէ և կորուս-
ցէ· ես եկի զի կեանս ունի-
ցեն, և առաւել և ունիցեն :

11 Ես եմ հովիւն քաջ·
հովիւ քաջ զանձն իւր դնէ՚ի
վերայ ոչխարաց :

12 Իսկ վարձկանն որ ոչ է
հովիւ, որոյ ոչ իւր են ոչխար-
քըն, երբեմն տեսանէ զգայլն զի
գայ, թողու զոչխարան և փախ-
չէ· և գայլն յափշտակէ զնոսա
և ցրուէ :

13 Քանզի վարձկան է, և
չէ փոյթ նմա վասն ոչխարացն :

14 Ես եմ հովիւն քաջ· և
ճանաչեմ զիմն, և ճանաչեմ
յիմոցն :

15 Որպէս զիտէ զիս հայրն,
զիտեմ և ես զհայրն· և զանձն
իմ դնեմ՚ի վերայ ոչխարաց :

16 Եւ՝ և այլ ևս ոչխարք
են իմ, որ ոչ են յայսմ գաւթէ
և զայնս ևս պարտ է ինձ ա-
ծել այսր· և ձայնի իմում լու-
ցեն, և եղիցին մի հօտ՝ և մի
հովիւ :

ինչուսր՝ օտարներուն ձանը չեն
ճանչնար :

6 Յի աս առակը անոնց բսաւ.
ու իրենք չէին գիտեր՝ թէ ան ինչ
է որ իրենց կուզէր ըսել :

7 Նորէն յի անոնց բսաց· բղծրդ
ձշմարիտ ձեզի կըսեմ, որ ես ոչ
խըրներուն դուռն եմ,

8 Ինչ ամէնքը որ իսմէն առաջ
եկան՝ գող ու աւազակ էին· ու-
սի ոչխարները անոնց չը լսեցին:

9 Ես եմ ան դուռը· թէ որ
մէկը իսմէն ներս մտնալու ըլլա,
(անիկա) կապրի· կըմտնա ու կել
լա, ու արօտելուք կրգտնա :

10 Գողը չի գար, թէ չի՝ ոլ
գողնա՝ ու բսպաննէ՝ ու կորսը-
ցունէ. ես եկա որ (անոնք) կեանք
ունենանան, ու էվէլօք ունենան :

11 Ես (ան աղէկ) քաջ հովիվն
եմ. քաջ հովիվը իր անձը ոչ
խըրներուն համար կուտա :

12 Ինչ վարձվորը որ բուն
հովիվ չէ՝ որ ոչխըրները իրենը
չեն, երբոր գալը կըտեսնա որ
կուգակոր, ոչխըրները կըթողու
ու կըփախչի. ու գայլն անոնք
կըխըրչէ՝ ու ցիրուցան կընէ :

13 Պատճառն որ՝ ինքը վարձ-
կան է, ու ոչխըրներուն համար իր
հոգը չէ :

14 Ես քաջ հովիվ եմ. որ ի-
միններըս կրճանչնամ, ու իմ-
միններսալ իս կրճանչնան :

15 Ինչպէս որ հայրը իս գիտէ՝
(անանկ) ես ալ հայրը գիտեմ. ու իմ
անձս ոչխըրներուն վրեն կրգնեմ:

16 Ու գէս՝ ուրիշ ոչխըրներալ
ունիմ, որ աս բակէն չեն, ես ա-
նոնքալ հոս պիտոր բերեմ. ու իմ
ձանըս լսեն, ու (ամէնքը) մէկ
ջոկ՝ ու մէկ հովիվ ըլլան :

17 վասն այնորիկ սիրէ զիս հայրդ իմ, զի ես դնեմ զանձն իմ, զի միւսանգամ առից զնա :
18 Այլ ոչ ոք առնու զնա յինէն . այլ ես դնեմ զնա ինձաւրէն իմմէ . իշխանութիւն ունիմ զնել զնա, և իշխանութիւն ունիմ միւսանգամ առնուլ զնա : զայս պատուէր առի ՚ի հօրէ իմմէ :
19 Պարտեալ հերձուած լինէր ՚ի մէջ հրեից՝ վասն բանիցս այսոցիկ :
20 Եւ ասէին բազումք ՚ի նոցանէ. դեւ գոյ ՚ի նմա՝ և մոլեգնի, զի՞ բնաւ լսէք նմա :

21 Կէսքն ասէին , այսպիսի բանք ոչ դիւահարի են . միթէ՝ դեւ կարէ զաչս կուրի բանալ :
22 Եղեն յայնժամ նաւակատիք յերուսաղէմ, և ձմեռն էր :
23 Եւ շրջէր յիսուս ՚ի տաճարին՝ ՚ի սրահին սաղոմոնի :

24 Շուրջ եղեն զնովաւ հրեայքն՝ և ասեն . մինչև յերբ թափես զոգիս մեր, եթէ դու ես քրիստոս՝ ասա մեզ համարձակ :
25 Պատասխանի եւ նոցա յիսուս և ասէ . ասացի ձեզ՝ և ոչ հաւատայք ինձ . զգործսն զոր ես գործեմ յանուն հօր իմոյ՝ նոքին վկայեն վասն իմ :

26 Այլ դուք ոչ հաւատայք, զի չէք յոչխարաց անտի իմոց :
27 Ոչխարք իմ ձայնի իմում լսեն , և ես ճանաչեմ զնոսա, և գան զկնի իմ զան :
28 Եւ ես տամ նոցա կեանս յաւիտենականս . և մի

17 Իմ հարքս անօր համար իս կըսիրէ, որ ես իմ անձըս կուտամ, որ անկէ ետքը նորէն առնեմ :
18 Անիկա մէկը իսկէն չէ կրնար զանիկա հանել· հապա՝ ես ան ինքիրմովըս կուտամ : ես տէր եմ անիկա տալու , ու տէր եմ անիկա նորէն ետ առնելու : ասանկ իմ հայրս ինծի պատուիրեց :

19 Այս բանէրուն համար՝ նորէն հրկպաւակութիւն եղաւ հրեաներուն մէջը :
20 Ու անոնցմէ շատը կըսէին որ՝ իր մէջը դև կա, ու խելքը-ած է · ալ ինչու իրեն մտիկ կընէնք :
21 Կէսմընալ կըսէին· ասանկ խօսակերը դիւահարի բան չեն. դևը՝ կուրի աչվըներ կրընա՞ մի բանար:
22 Անատնը երուսաղէմ նաւակատիք տօն եղաւ , ու ձըմեռ ատեն էր :
23 Ու յիսուս տաճարը՝ ան սողոմոնի (ըսած) սրբատեղին մէջ՝ ժռռա կուգար կոր :
24 (Հրէ-ան) հրեաները իր քովը բոլըրվեցան՝ ու ըսին· աս քանի մէկ հոգինիս կրհանես կոր, թէ որ դուն քրիստոս եսէ՝ մեզի բաց ըսէ :
25 Յիսուս անոնց պատասխան տըվաւ՝ ու ըսաւ· ձեզի ըսի՝ ու ինծի չէք հաւատար· ան գործքերն որ ես իմ հօրըս անունովը կընեմ՝ (բուն) անոնք ինծի համար կրվըկայեն :
26 Բայց դուք չէք հաւատար, ինչու որ՝ (դուք) ան իմ ոչխարներըս չէք :
27 Իմ ոչխրընէրըս իմ ձանըս կրլսեն , ու ես անոնք կրձանչնամ, ու իմ ետևէս կուգան :
28 Անոնց յաւիտենական կեանքը կուտամ. ու յաւիտեան

կորիցեն ՚ի յաւիտեան , և մի՛ ոք յափշտակեսցէ ցնոսա ՚ի ձեռաց իմոց :

29 Հայրն իմ որ ետ ինձ զնոսա՝ մեծ է քան զամենայն՝ և ոչ ոք կարէ յափշտակել ՚ի ձեռաց հօր իմոյ :

30 Ես և հայր իմ մի եմք :

31 Վէմս առին հրեայքն՝ զի քարկոծ արասցեն զնա :

32 Պատասխանի ետ նոցա յի՛. բազում գործս բարիս ցուցի ձեզ ՚ի հօրէ իմմէ , վասն որո՞յ գործոյ ՚ի նոցանէ քարկոծ առնէք զիս :

33 Պատասխանի ետուն նմա հրեայքն . վասն բարւոյ գործոյ ոչ առնեմք զքեզ քարկոծ, այլ վասն հայհոյութեան. և զի դու մարդ ես , և զանձն քո՛ ած առնես :

34 Պատասխանի ետ նոցա յի՛. ո՞չ յօրէնսն ձեր գրեալ է. ես ասացի թէ աստուածք իք :

35 Եթէ զնոսա աստուածս ասէ , առ որս բանն այ եղև . և չէ մարթի եղծանել գրոյն :

36 Իսկ զոր հայր սրբեաց՝ և առաքեաց յաշխարհ, զուք ասէք՝ թէ հայհոյես , զի ասացի՝ թէ որդի այ եմ՛ :

37 Եթէ ոչ գործեմ զգործս հօր իմոյ, մի՛ հաւատայք ինձ.

38 Ապա թէ գործեմ, թէ և ինձ ոչ հաւատայք , սակայն գործոցն հաւատայցէք . զի գիտասջիք և ծանիցիք՝ եթէ հայր յիս , և ես ՚ի հայր :

39 Դարձեալ խնդրէին զնա առնել , և ել ՚ի ձեռաց նոցա .

40 Եւ գնաց միւսանգամ

չէն կորսըվիր, ու անոնք իմ ձեռքէս մէկը չէ պիտի քաշէ առնէ :

29 Իմ հայրըս որ անոնք ինծի տըվաւ՝ (ինքը) ամէնէն մեծ է. ու իմ հօրըս ձեռքէն ալ մէկը չի կրնար խըլեր :

30 Ես ու իմ հարըս մէկ ենք :

31 Հրեաներըը քարեր վերցուցին՝ որ ինքը քարկոծ ընեն :

32 Յիս ալ անոնց պատասխան տըվաւ . շատ բարի գործքեր իմ հօրմէս տըվածէն ձեր դիմացը ըրի , ան՝ որ մէկ գործքին համար իս կրքարկոծէք կոր :

33 Հրեաները իրեն պատասխան տըվին . բարի գործքի համար քեզ քարկոծ չենք ըներ, հապա՝ հայհոյութիւնը ընելուդ համար . ու ան՝ որ դուն մարդ ես, ու ինքդ զինքդ ած կընես :

34 Յիս անոնց պատասխան տըվաւ. ձեր օրէնքին մէջը գրված չէ մի՝ (թէ), ես ըսի՝ որ դուք աստվածներ էք :

35 Ա՛ր թէ որ աստվածներ են կըսէ՝ անոնք, որ այ խօսկը իրենց եղեր է . ու կարելի չէ որ (այ) զիրքը փուչը ըսէ :

36 Հապա անիկա որ հայրը սրբացուց՝ ու աշխարք խրկեց . դուք (անոր) կըսէք թէ կրհայհոյես , որ ըսի թէ՝ այ որդի եմ՝ :

37 Թէ որ (ես) իմ հօրըս գործքը չեմ գործեր՝ ինծի մի հաւատաք .

38 Հապա թէ որ կըգործեմ, ինծի՛ որ չի հաւատաք, գոնեա գործքերուն հաւատացէք. որ գիտնաք , ու ճանչնաք որ հայրը իմ մէջս (է), ու ես՛ հօրս մէջ :

39 Կ՚որձէն կուգէին որ ինքը բըռնեն , ու իրենց ձեռքէն ելաւ .

40 Ու հեռացաւ յորդանանի

յայն կոյս յորդանանու, ՚ի տե-
ղին ուր էր յովհաննէս մկրտ-
ելոյն՝ և մկրտէր : և անդ լինէր :

41 Եկին բազումք առ նա՝
և ասեն. զի յովհաննէս նշան
ինչ ոչ արար.

42 Եւայց զամենայն զոր ա-
սաց յովհաննէս վասն նորա՝
ճշմարիտ էր : և բազումք հա-
ւատացին ՚ի նա անդ :

մկկալղին զնաց, ուր տեղ որ ա-
ռաջուցմ յոհաննէսը կըկենար,
ու մկրտութին կընէր : ու (ինքն-
ալ) հոն կեցաւ :

41 Շատ մարդիք իր քովը ե-
կան, ու ըսին որ՝ յոհաննէսը մկ
նշաշքմը չի գործեց.

42 Եւայց ամէն բան ինչ որ յո-
հաննէսը անոր համար ըսաց՝ ճըշ-
մարիտ էր : ու ալ հոն՝ շատ մար-
դիք իրեն հաւատացին :

ԳԼ. ԺԱ.

1 Եւ էր ոմն հիւանդ ղազա-
րոս՝ ՚ի բեթանիայ, ՚ի գեղ
մարեմայ և մարթայի քեռ
նորա :

2 Այս այն մարիամ էր՝ որ
օծ զհօրն Իւղով, և ջնջեցաց
զոտս նորա հերով իւրով. որոյ
եղբայրն ղազարոս հիւանդ էր :

3 Առաքեցին առ նա քոյրքն
նորա՝ և ասեն. տէր՝ ահաւասիկ
զոր դուն սիրէիր՝ հիւանդա-
ցեալ է :

4 Իբրև լուաւ յն, ասէ. այն
հիւանդութիւն չէ ՚ի մահ, այլ
վասն փառացն Աստուծոյ. զի փառա-
ւոր լիցի որդի այ այնուհետև :

5 Եւ սիրէր յն՝ զմարիամ,
և զմարթա զքոյր նորա, և զղ-
ազար :

6 Իբրև լուաւ թէ հիւան-
դացեալ է, յտեղի կալաւ ան-
դէն ուր էրն՝ աւուրս երկուս :

7 Ապա յետ այնորհետև ասէ
ցնոսա. եկայք երթիցուք միւս-
անգամ ՚ի հրէաստան :

8 Ասեն ցնա աշակերտքն.
ռաբբի՝ այժմիւս խնդրէին զգ-
քեզ հրեայքն քարկոծ առնել,
և դարձեալ երթաս անդրէն :

9 Պատասխանի հաս յն. ոչ

1 Ու հիվանդ մարդմը կար (ա-
նունը) խազարոս՝ բեթանի-
այէն, մարեամին ու իր քրոջը
մարթային՝ գեղէն :

2 Աս ան մարեամն էր՝ որ հրը
եղով օծեց, ու իր մազերովը ա-
նոր ոտքերը սրբեց. որ իրեն
խազարոս եղբարը հիվանդ էր :

3 Անոր քրոջմանքնալ իրէն
(յսի) խըրկեցին՝ ու ըսին, տը չա-
նա անիկա որ դուն կըսիրէիր՝ հի-
վընացեր է :

4 Յս ալ երբոր լսեց՝ ըսաւ.
ան մեռնելու հիվընտութին չէ,
հապա՝ այ փառացը համար է. որ
որդին այ անով փառաւորվի :

5 Ու յս կըսիրէր մարեամը, ու
անոր քուրնալ մարթան, ու խա-
զարնալ :

6 Երբոր լսեց որ (ան) հիվընտ-
ցերէ, (ինքը) ուր որ էր նէ՝ երկու
օրալ հոն կեցաւ մընաց :

7 Ու անկէ ետկը (իր աշակերտ-
ներուն) բսաց. եկէք դեղմընալ
նորէն հրէաստան երթանք :

8 Աշակերտներնալ իրեն ըսին.
ռաբբի՝ դեռ հիմակուկ հրեա-
ները քեզ կուգին քարկոծելու.
ու նորէն հոն մի կերթաս :

9 Յս ալ պատասխան տրվաւ.

երկոտասան ժամ է յաւուր. ե՞թէ ոք գնայ ի տուընջեան՝ ոչ գայթագղէ, զի զլոյս աշխարհիս այսորիկ տեսանէ :

10 Ապա թէ ոք գնայ գիշերի՝ գայթագղէ, զի լոյս ոչ գոյ ընդ նմա :

11 Զայս իբրև ասաց, յետ այսորիկ ասէ ցնոսա . զաղարոս բարեկամ մեր ննջեաց, այլ երթամ զի զարթուցից զնա :

12 Ասեն ցնա աշակերտքն . տէր՝ եթէ ննջեաց՝ ապա ապրի:

13 Այլ յո՛ վասն մահուն նորա ասէր. նոցա այսպէս թուեցաւ՝ թէ վասն ննջելոյ քնոյ ասէր :

14 Յայնժամ ասէ ցնոսա յո՛ յայտնապէս . զաղարոս մեռաւ .

15 Եւ ես ուրախ եմ վասն ձեր, զի դուք հաւատասջիք ինձ, զի ես չէի անդ . բայց արդ եկայք երթիցուք առ նա :

16 Ասէ Թովմաս՝ անուանեալն երկուորեակ՝ ցաշակերտակիցսն . ասն եկայք և մեք՝ զի ընդ նմա մեռցուք :

17 Եկն յո՛ եգիտ զնա չորեք-օրեայ ի գերեզմանի :

18 Եւ էր բեթանիա մերձ յերուսաղէմ՝ իբրև տասարի-սօք հնգետասան .

19 Բազումք ի հրէից անտի եկեալ էին առ մարթա և մարիամ, զի մխիթարեսցեն զնոսա վասն եղբօրն :

20 Մարթա իբրև լուաւ՝ թէ յո՛ գայ, ընդ առաջ զնաց նա. բայց մարիամ նստէր անդ ի տան :

21 Ասէ մարթա զյո՛. ո՛ր՝ եթէ աստ լեեալ էիր, եղբայրն իմ չէր մեռեալ .

22 Եւ արդ գիտեմ՝ զի զոր ինչ խնդրեսցես յԱստուծոյ՝ տացէ քեզ Աստուած :

23 Ասէ ցնա յո՛ յարիցէ եղբայրն քո :

24 Ասէ ցնա մարթա . գիտեմ՝ զի յարիցէ յարութեան յաւուրն յետնում :

25 Ասէ ցնա յո՛ . ես եմ յարութիւն և կեանք . որ հաւատայ ինձ՝ եթէ մեռցի՝ կեցցէ :

26 Եւ ամենայն որ կեայ և հաւատայ ինձ՝ մի մեռանիցի յաւիտեան . հաւատա՞ս դու զայդ :

27 Ասէ ցնա . այո՛ տէր, ես հաւատացի՝ զի դու ես քրիստոս որդի Աստուծոյ կենդանւոյ՝ որ յաշխարհ եկեսցես :

28 Եւ զայս ասացեալ՝ գնաց կոչեաց զմարիամ զքոյր իւր ասելով ի ծածուկ . ուսուցիչ եկն և կոչէ զքեզ :

29 Նա իբրև լուաւ՝ յարոյց վաղվաղակի և գնաց առ նա :

30 Եւ յո՛ ոչ էր եկեալ ի գեղն՝ այլ էր անդ ուր ընդ առաջ եհան նմա մարթա :

31 Հրեայքն որ էին ընդ նմա ի տանն՝ և մխիթարէին զնա՝ տեսեալ զյո՛ զի յարոյց վաղվաղակի և ել՝ հետևեցան նմա՝ ասելով . զի երթայ ի գերեզման լալ անդ :

32 Եւ մարիամ իբրև եկն ուր էր յո՛ և տեսին զնա՝ անկան առ ոտս նորա՝ ասելով . տէր՝ եթէ ննջեաց՝ ապա ապրի :

33 Յո՛ իբրև տեսանէր զնա լալ՝ և զհրեայսն որ եկեալ էին ընդ նմա՝ լային՝ խռովեցաւ ի հոգի և ցնդեցաւ .

34 Եւ ասէ . ո՞ւր եդիք զնա : Ասեն ցնա . տէր՝ եկ տես :

35 Արտասուեցաւ յո՛ :

36 Ասեն հրեայքն . ահա որպէս սիրէր զնա :

37 Ոմանք ի նոցանէ ասեն . ոչ կարաց այս որ բացեալ զաչս կուրին՝ առնել զի մի՞ և այս մեռանիցի :

38 Յո՛ դարձեալ ցնդեցաւ ի հոգի . եկն ի գերեզման . և էր քարայր մի՝ և քար դրեալ ի վերայ նորա :

39 Ասէ յո՛ . վերուսկ զքարն : Ասէ ցնա մարթա՝ զքոյր նորին մեռելոյն . տէր՝ արդ հոտեսցի՝ զի չորեքօրեայ է :

40 Ասէ ցնա յո՛ . ոչ ասացի քեզ՝ եթէ հաւատասցես՝ տեսցես զփառս Աստուծոյ :

41 Վերուսկ զքարն : Եւ յո՛ վերացոյց զաչս իւր ի վեր՝ և ասէ . հա՛յր՝ գոհանամ զքեզ՝ զի լուար ինձ :

42 Եւ ես գիտէի՝ զի միշտ լսես ինձ . այլ վասն ժողովրդեանս որ կայ՝ ասացի՝ զի հաւատասցեն՝ եթէ դու զիս առաքեցեր :

43 Եւ զայս ասացեալ՝ յո՛ բարձրաձայն կոչեաց . ղազարոս՝ արի՛ արտաքս :

44 Եւ ել մեռեալն՝ կապեալ զոտս և զձեռս գերեզմանաւ՝ և դրամբ պատեալ զերեսս . ասէ ցնոսա յո՛ . արձակեցէ՛ք զնա՝ և թո՛ղուցէք երթալ :

45 Բազումք ի հրէից որ եկեալ էին առ մարիամ՝ և տեսին զոր արար յո՛՝ հաւատացին ի նա :

46 Եւ ոմանք ի նոցանէ գնացին առ փարիսեցիսն՝ և ասացին նոցա զոր արար յո՛ :

47 Ժողովեցին քահանայապետքն և փարիսեցիքն ատեան՝ և ասէին . զի՞նչ առնեմք՝ զի այս մարդ բազում նշանս առնէ :

48 Եթէ թողցուք զնա այսպէս՝ ամենեքին հաւատասցեն ի նա . և եկեսցեն հռովմայեցիքն՝ և առցեն զտեղի մեր և զազգ մեր :

49 Եւ մի ոք ի նոցանէ՝ կայիափա անուն՝ որ էր քահանայապետ տարւոյն յայնմիկ՝ ասէ ցնոսա . դուք ոչ գիտէք զինչ :

50 Եւ ոչ խորհիք՝ զի ձեռն ինչ է մեզ՝ զի մի ազգ մեր կորնչեսցի՝ և ամենայն ազգ մեր մի՛ կորնչեսցի :

51 Եւ զայս ոչ ասաց յանձնէ իւրմէ՝ այլ քահանայապետ տարւոյն յայնմիկ էր՝ և մարգարէացոյց՝ զի յո՛ պիտի էր մեռանել վասն ազգին :

52 Եւ ոչ վասն ազգին միայն՝ այլ զի և զորդիսն Աստուծոյ որ ցրուեալ էին՝ ժողովեսցէ ի միասին :

53 Եւ ի յաւուրցն յայնցմանէ՝ խորհեցան զի սպանցեն զնա :

54 Եւ յո՛ ոչ ևս ետես ի հրեայսն՝ այլ գնաց անտի ի գաւառն մերձ ի տեղի անապատի՝ ի քաղաքն որ կոչի եփրեմ . և անդ բնակեալ էր ընդ աշակերտսն իւր :

55 Եւ մերձեցաւ զատկն հրեայից . և ելին բազումք յերկրէն յերուսաղէմ առաջի զատկին՝ զի սրբեսցին :

56 Եւ խնդրէին զյո՛ . և կային ընդ միմեանս ի տաճարին՝ ասելով . զի՞նչ կարծիք ձեզ՝ զի ոչ եկեսցէ յո՛ ի տաւնին :

57 Եւ քահանայապետքն և փարիսեցիքն հրամայեցին՝ զի եթէ ոք գիտասցէ զտեղի նորա՝ յայտնեսցէ՝ զի բռնեսցեն զնա :

12 Եւ զատկին յո՛ գնաց յերուսաղէմ՝ և ի վեցերորդում աւուրն ի բեթանիա . ուր էր մարթա և մարիամ և ղազարոս՝ զոր յարոյց յո՛ ի մեռելոց :

2 Արարին նմա ընթրիս անդ . և մարթա սպասաւորէր . և ղազարոս ոմն էր ի նստողացն ընդ նմա :

3 Եւ մարիամ առեալ ծանր մի նարդոս մաքուր՝ և թանկագին՝ օծ զոտս յո՛ . և սրբեաց զոտս նորա մազիւք իւրովք . և տունն լցաւ ի հոտոյ նարդոսին :

4 Ասէ յուդա սիմոնի՝ աշակերտ նորա՝ որ էր մատնիչ նորա .

5 Ընդէ՞ր ոչ վաճառեցաւ այս իւղ՝ երեք հարիւր դահեկանաց՝ և տացի աղքատաց :

6 Ասէ ոչ վասն զի հոգայր նա աղքատաց . այլ զի գող էր՝ և քսակ ունէր՝ և զոր ինչ արկանէին՝ նա տանէր :

7 Ասէ յո՛ . թո՛ղ զնա . զի զաւուր թաղման իմոյ պահեսցէ զայս :

8 Զի զաղքատսն միշտ ունիք ընդ ձեզ . և զիս ոչ միշտ ունիք :

9 Գիտաց զայս բազում ամբոխ հրեայից՝ զի անդ է . և եկին ոչ վասն յո՛ միայն՝ այլ զի և զղազարոս տեսցեն զոր յարոյց ի մեռելոց :

10 Եւ խորհեցան քահանայապետքն զի սպանցեն և զղազարոս :

11 Զի բազումք ի հրեայից երթային և հաւատային ի յո՛ վասն նորա :

12 Եւ ի վաղիւն՝ բազում ամբոխ որ եկեալ էր յաւուր տաւնին՝ լուան զի գայ յո՛ յերուսաղէմ .

13 Առին զբունս արմաւենեաց՝ և ելին ընդ առաջ նորա՝ և աղաղակէին . օրհնեալ է որ գայ յանուն տեառն՝ թագաւոր իսրայէլի :

14 Եւ գտեալ յո՛ զէշ մի՝ նստաւ ի վերայ նորա՝ որպէս գրեալ է .

15 Մի՛ երկնչիր դստեր սիովնի . ահա թագաւորն քո գայ նստեալ ի վերայ էշոյ մերկասայ :

16 Եւ զայս ոչ գիտէին աշակերտունք նորա նախ . այլ յորժամ փառաւորեցաւ յո՛՝ յայնժամ յիշեցին՝ զի զայս գրեալ էր վասն նորա . և զայս արարին նմա :

17 Եւ ամբոխն որ էր ընդ նմա՝ վկայէր զի զղազարոս կոչեաց ի գերեզմանէ՝ և յարոյց ի մեռելոց :

18 Վասն որոյ և ընդառաջ եհան նմա ամբոխն՝ զի լուան զայս նշան արարեալ նմա :

19 Եւ փարիսեցիքն ասէին ընդ միմեանս . տեսանէ՞ք զի ոչ օգնի ձեզ ինչ . ահա աշխարհ զհետ նորա գնաց :

20 Եւ էին ոմանք հեթանոսք ի նոցանէ՝ որ եկեալ էին երկրպագանել յաւուր տաւնին :

21 Եւ մերձեցան առ փիլիպպոս՝ որ էր ի բեթսայիդա գաւառէ գալիլեացւոց՝ և խնդրէին ասելով . տէր՝ կամիմք զյո՛ տեսանել :

22 Եկն փիլիպպոս՝ և ասէ անդրէի . եկն անդրէաս՝ և փիլիպպոս՝ և ասացին յո՛ :

23 Եւ յո՛ պատասխանի ետ նոցա՝ և ասէ . եհաս ժամ՝ զի փառաւորեսցի որդի մարդոյ :

24 Ամէն ամէն ասեմ ձեզ . եթէ հատ ցորենի անկեալ ի գետին՝ ոչ մեռանի՝ միայնակ մնայ . և եթէ մեռանի՝ բազում պտուղ բերէ :

25 Որ սիրէ զանձն իւր՝ կորուսանէ զնա . և որ ատէ զանձն իւր ի սմին աշխարհի՝ ի յաւիտենական կեանս պահէ զնա :

26 Եթէ ոք ինձ ծառայէ՝ զիս հետևեսցի . և ուր եմ ես՝ անդ և ծառայ իմ լիցի . և եթէ ոք ինձ ծառայէ՝ պատուեսցէ զնա հայր իմ :

27 Արդ անձն իմ խռովեցաւ . և զի՞նչ ասիցեմ . հա՛յր՝ փրկեա՛ զիս յժամէս յայսմանէ . այլ վասն այսորիկ եհաս ժամս յայս :

28 Հա՛յր՝ փառաւորեա՛ զանուն քո : Եկն ձայն յերկնից . և փառաւորեցի՝ և կրկին փառաւորեցից :

29 Ամբոխն որ կայր՝ և լուաւ՝ ասէր թէ որոտ եղև . և այլք ասէին . հրեշտակ մի խօսեցաւ ընդ նմա :

30 Պատասխանի ետ յո՛ և ասէ . ոչ վասն իմ եղև ձայնս այս՝ այլ վասն ձեր :

31 Արդ դատաստան է աշխարհիս այսորիկ . արդ իշխանն աշխարհիս այսորիկ հանի արտաքս :

32 Եւ ես եթէ բարձրացայց ի երկրէ՝ զամենեսեան ձգեցից առ ինքն :

33 Եւ զայս ասէր՝ նշանակելով զինչ մահ մեռանել էր նմա :

34 Պատասխանի ետ նմա ամբոխն . մեք լուաք յօրինացն՝ զի քրիստոս յաւիտեան կայ . և զիա՞րդ դու ասես՝ զի պարտ է որդի մարդոյ բարձրանալ . ո՞վ է որդի մարդոյ այդ :

35 Ասէ ցնոսա յո՛ . դեռ սակաւ ինչ ժամանակ լոյս ընդ ձեզ է . գնացէ՛ք մինչ լոյս ընդ ձեզ է՝ զի մի խաւարն ընկալցի զձեզ . և որ գնայ ի խաւարի՝ ոչ գիտէ զուր երթայ :

36 Մինչ լոյս ընդ ձեզ է՝ հաւատացէ՛ք ի լոյսն՝ զի որդիք լուսոյ լիջիք . զայս խօսեցաւ յո՛ . և գնաց՝ և ծածկեցաւ ի նոցանէ :

37 Եւ թէպէտ զայսչափ նշանս առնէր նոցա առաջի՝ ոչ հաւատային ի նա .

38 Զի բանն եսայեայ մարգարէի լցցի՝ զոր ասաց . տէր՝ ո՞ հաւատաց լսելեաց մերոց . և բազուկ տեառն ո՞ւմ յայտնեցաւ :

39 Վասն որոյ ոչ կարէին հաւատալ . զի դարձեալ ասաց եսայի .

40 Կուրացոյց զաչս նոցա՝ և խստացոյց զսիրտ նոցա . զի մի՞ տեսցեն աչօքն՝ և իմասցին սրտիւ՝ և դարձցին՝ և բժշկեցից զնոսա :

41 Զայս ասաց եսայի՝ յորժամ տեսանէր զփառս նորա՝ և խօսեցաւ վասն նորա :

42 Բայց և ի նոցանէ ոմանք հաւատացին ի նա . այլ վասն փարիսեցւոցն ոչ խոստովանէին՝ զի մի՞ ի ժողովարանէ հալածեսցին :

43 Զի սիրեցին զփառս մարդկան՝ քան զփառս Աստուծոյ :

44 Եւ յո՛ աղաղակեաց և ասէ . որ հաւատայ ինձ՝ ոչ հաւատայ ինձ՝ այլ որ առաքեցն զիս :

45 Եւ որ տեսանէ զիս՝ տեսանէ զառաքեցեալն զիս :

46 Ես լոյս եկի յաշխարհ՝ զի ամենայն որ հաւատայ ինձ՝ ի խաւարի մի՛ մնասցէ :

47 Եւ եթէ ոք լուիցէ բանից իմոց՝ և ոչ հաւատասցէ՝ ես ոչ դատեմ զնա . զի ոչ եկի զի դատեցից զաշխարհ՝ այլ զի կեցուցից զաշխարհ :

48 Որ ինձ անարգէ՝ և ոչ ընդունի զբանս իմ՝ ունի որ դատեսցէ զնա . բանն զոր խօսեցայ՝ նա դատեսցէ զնա յաւուրն յետնում :

49 Զի ես ոչ յանձնէ իմմէ խօսեցայ . այլ հայրն որ առաքեաց զիս՝ նա ինձ պատուիրան ետ՝ զինչ ասիցեմ և զինչ խօսեցայց :

50 Եւ գիտեմ զի պատուիրան նորա կեանք յաւիտենականք են . զոր ինչ ես խօսիմ՝ որպէս ասաց հայրն ինձ՝ նոյնպէս խօսիմ :

13 Եւ առաջի տաւնին զատկին՝ գիտէր յո՛ զի եհաս ժամ նորա՝ զի անցցէ յաշխարհէս այսմանէ առ հայր . որպէս սիրեաց զիւրսն որ էին յաշխարհի՝ մինչև ի վախճան սիրեաց զնոսա :

2 Եւ ընթրեաց . և սատանայ արկեալ էր ի սիրտ յուդա սիմոնի՝ աշակերտ նորա՝ որ էր մատնիչ նորա՝ զի մատնեսցէ զնա :

3 Գիտաց յո՛ զի ամենայն ինչ ետ հայր ի ձեռս նորա՝ և զի յաստուծոյ ելեալ էր՝ և առ աստուած երթայր .

4 Յարոյց ի ընթրեացն՝ և եդ զհանդերձս իւր . և առեալ սաւան մի՝ ընկալաւ զանդրեղ իւր .

5 Ապա ածեալ ջուր ի լոգանի՝ սկսաւ լուանալ զոտս աշակերտացն՝ և սրբել սաւանաւն զոր անդրեղ էր նմա :

6 Եկն առ սիմոն պետրոս . և ասէ ցնա պետրոս . տէր՝ դո՞ւ լուանաս զոտս իմ :

7 Պատասխանի ետ յո՛ և ասէ ցնա . զոր ես առնեմ՝ դու ոչ գիտես զայժմ . այլ գիտասցես յետ այսորիկ :

8 Ասէ ցնա պետրոս . մի՛ լուանասցես զոտս իմ յաւիտեան : Պատասխանի ետ յո՛ և ասէ ցնա . եթէ ոչ լուանամ զքեզ՝ ոչ ունիս բաժին ընդ իս :

9 Ասէ ցնա սիմոն պետրոս . տէր՝ ոչ զոտս միայն՝ այլ և զձեռս և զգլուխ :

10 Ասէ ցնա յո՛ . որ լուացեալ է՝ պիտոյ չունի զի զոտս լուասցէ՝ այլ ամենայն մարմին նորա սուրբ է . և դուք սուրբ էք՝ բայց ոչ ամենեքին :

11 Զի գիտաց զմատնիչն իւր . վասն այնորիկ ասաց . ոչ ամենեքին սուրբ էք :

12 Եւ յորժամ լուաց զոտս նոցա՝ և առեալ զանդրեղ իւր՝ նստաւ՝ ասէ ցնոսա . գիտէ՞ք զոր արարի ձեզ :

13 Դուք կոչէք զիս ուսուցիչ և տէր . և լաւ ասէք . զի եմ :

14 Եթէ ես լուացի զոտս ձեր՝ տէր և ուսուցիչ՝ դուք պարտ էք զի միմեանց զոտս լուասջիք :

15 Զի օրինակ ետու ձեզ՝ զի որպէս ես արարի ձեզ՝ դուք նոյնպէս արասջիք :

16 Ամէն ամէն ասեմ ձեզ . ոչ է ծառայ մեծ քան զտէր իւր . և ոչ առաքեալ մեծ քան զառաքիչ իւր :

17 Եթէ զայս գիտէք՝ երանի՛ ձեզ՝ եթէ արասջիք զայս :

18 Ոչ ասեմ զամենեսեան ձեզ . ես գիտեմ զորս ընտրեցի . այլ զի գրոցն լցցի՝ թէ որ ուտէ հաց ընդ իս՝ վերացոյց զիս զգարշապարտ իւր :

19 Ասեմ ձեզ յայժմ՝ մինչև ոչ եղիցի . զի եղեալ հաւատասջիք՝ եթէ ես եմ :

20 Ամէն ամէն ասեմ ձեզ . որ ընդունի զոմն զոր ես առաքեցից՝ զիս ընդունի . և որ զիս ընդունի՝ ընդունի զառաքեալն զիս :

21 Զայս ասացեալ յո՛՝ խռովեցաւ ի հոգի . և վկայեաց և ասէ . ամէն ամէն ասեմ ձեզ . զի մի ոք ի ձէնջ մատնեսցէ զիս :

22 Նայէին աշակերտունքն ընդ միմեանս՝ զի զո՞ր ասէ :

23 Էր ոմն ի նստողացն ընդ յո՛ ի գրկի նորա՝ զոր սիրէր յո՛ :

24 Նշանակեաց սիմոն պետրոս նմա՝ և ասէ . ասա՛ զո՞ր ասէ :

25 Եւ նա ի գրկէ յո՛ անկեալ՝ ասէ ցնա . տէր՝ ո՞վ է :

26 Պատասխանի ետ յո՛ . նա է որում ես մատուցից զհացն՝ զոր թաթախեցից : Եւ թաթախեալ զհացն՝ ետ յուդա սիմոնի՝ աշակերտ նորա՝ որ էր մատնիչ նորա :

27 Եւ զհացն զոր ետ յուդա՝ յետ հացին մտաւ սատանայ ի նա . ասէ ցնա յո՛ . զոր ինչ առնես՝ առ զշուտ :

28 Եւ ոչ ոք ի նստողացն գիտաց զի զի՞նչ ասաց նմա :

29 Զի ոմանք կարծէին՝ զի քսակ ունէր յուդա՝ զի ասաց նմա յո՛ . գնեա՛ զոր ինչ պիտոյ է մեզ ի տաւնին . կամ զաղքատաց ինչ տացէ :

30 Առեալ յուդա զհացն՝ անդէն ելանէր . և էր գիշեր :

31 Եւ յորժամ ելանէր՝ ասէ յո՛ . արդ փառաւորեցաւ որդի մարդոյ՝ և աստուած փառաւորեցաւ ի նմա :

32 Եթէ աստուած փառաւորեցաւ ի նմա՝ և աստուած փառաւորեսցէ զնա ի սմա՝ և անդէն փառաւորեսցէ զնա :

33 Որդեակք՝ ի սակաւ ինչ ժամանակի ընդ ձեզ եմ . խնդրեսջիք զիս . և որպէս ասացի հրեայսն՝ թէ ուր գնամ ես՝ դուք ոչ կարէք գալ՝ նոյնպէս և ձեզ ասեմ յայժմ :

34 Պատուիրան նոր տամ ձեզ՝ զի սիրեսջիք միմեանս . որպէս սիրեցի ես զձեզ՝ զի և դուք սիրեսջիք միմեանս :

35 Ընդ այսմ ամենայնի գիտասցեն զձեզ՝ թէ աշակերտք իմ էք՝ եթէ սէր ունիցիք միմեանց :

36 Ասէ ցնա սիմոն պետրոս . տէր՝ ո՞ւր գնաս : Պատասխանի ետ յո՛ և ասէ . ուր գնամ ես՝ ոչ կարես զիս հետևել յայժմ . այլ հետևեսցես յետ այսորիկ :

37 Ասէ ցնա պետրոս . տէր՝ զի՞ ոչ կարեմ զքեզ հետևել յայժմ . զանձն իմ ի վերայ քո դնեմ :

38 Պատասխանի ետ յո՛ և ասէ . զանձն քո ի վերայ իմ դնես . ամէն ամէն ասեմ քեզ՝ ոչ հաւանեսցի աքաղաղ՝ մինչև ուրասցես զիս երիցս :

14 Մի՛ խռովեսցի սիրտ ձեր . հաւատայք ի յաստուած՝ և ի ես հաւատայք :

2 Ի տան հաւր իմոյ բնակութիւնք բազումք են . եթէ ոչ՝ ասացի՞ ձեզ . զի երթամ պատրաստեմ տեղի ձեզ :

3 Եւ եթէ երթիցեմ և պատրաստեցից տեղի ձեզ՝ դարձեալ գամ և առնում զձեզ առ ինքն . զի ուր եմ ես՝ և դուք անդ իցէք :

4 Եւ զուր տեղեակ էք՝ և զճանապարհն գիտէք :

5 Ասէ ցնա թովմաս . տէր՝ ոչ գիտեմք զուր երթաս՝ և զիա՞րդ կարեմք զճանապարհն գիտել :

6 Ասէ ցնա յո՛ . ես եմ ճանապարհ և ճշմարտութիւն և կեանք . ոչ ոք գայ առ հայր՝ բայց ընդ իս :

7 Եթէ զիս ճանաչէիք՝ և զհայր իմ ճանաչիցիք . և յայժմ գիտէք զնա՝ և տեսէք զնա :

8 Ասէ ցնա փիլիպպոս . տէր՝ ցո՛ մեզ զհայր՝ և բաւական է մեզ :

9 Ասէ ցնա յո՛ . այդչափ ժամանակ ընդ ձեզ եմ՝ և ոչ ճանաչեցեր զիս փիլիպպոս . որ տեսանէ զիս՝ տեսանէ զհայր . և զիա՞րդ դու ասես՝ ցո՛ մեզ զհայր :

10 Ոչ հաւատայ՞ դու՝ զի ես ի հաւր եմ՝ և հայր ի մէնջ է . զբանս զոր ես խօսիմ ընդ ձեզ՝ ոչ յանձնէ իմմէ խօսիմ . այլ հայրն որ ի մէնջ է՝ նա առնէ զգործս :

11 Հաւատայք ինձ՝ զի ես ի հաւր եմ՝ և հայր ի մէնջ է . եթէ ոչ՝ գործոցդ հաւատայք :

12 Ամէն ամէն ասեմ ձեզ . որ հաւատայ ինձ՝ զգործս զոր ես առնեմ՝ նա առնիցէ . և զմեծագոյնս քան զայս առնիցէ . զի ես առ հայր իմ երթամ :

13 Եւ զամենայն զոր ինչ խնդրիցէք յանուն իմ՝ զայն առնիցեմ . զի փառաւորեսցի հայր ի որդի :

14 Եթէ ինչ խնդրիցէք յանուն իմ՝ զայն առնիցեմ :

15 Եթէ սիրէք զիս՝ զպատուիրանս իմ պահեսջիք :

16 Եւ ես խնդրեցից զհայր՝ և զայլ մխիթարիչ տացէ ձեզ՝ զի ընդ ձեզ յաւիտեան կայցէ .

17 Զհոգին ճշմարտութեան՝ զոր աշխարհ ոչ կարէ ընդունել . զի ոչ տեսանէ զնա՝ և ոչ ճանաչէ զնա . դուք ճանաչէք զնա՝ զի ընդ ձեզ բնակեալ է՝ և ի ձեզ լինիցի :

18 Ոչ թողից զձեզ որբս . եկից առ ձեզ :

19 Մի՛ ևս և աշխարհ ոչ տեսանէ զիս . այլ դուք տեսանէք զիս . զի ես կենդանի եմ՝ և դուք կեցջիք :

20 Յայնմ աւուր գիտասջիք՝ զի ես ի հաւր իմում եմ՝ և դուք ի մէնջ՝ և ես ի ձեզ :

21 Որ ունի զպատուիրանս իմ՝ և պահէ զնոսա՝ նա է որ սիրէ զիս . և որ սիրէ զիս՝ սիրեսցի ի հաւր իմմէ . և ես սիրեցից զնա՝ և յայտնեցից նմա զանձն իմ :

22 Ասէ ցնա յուդա՝ ոչ իսկարովտացի . տէր՝ զի՞ յայտնելոց ես զանձն քո մեզ՝ և ոչ աշխարհի :

23 Պատասխանի ետ յո՛ և ասէ ցնա . եթէ ոք սիրէ զիս՝ զբանս իմ պահեսցէ . և հայր իմ սիրեսցէ զնա՝ և առ նա եկեսցուք՝ և բնակութիւն առնիցուք ընդ նմա :

24 Որ ոչ սիրէ զիս՝ զբանս իմ ոչ պահէ . և զբանն զոր լուայք՝ ոչ է իմ՝ այլ հաւր իմոյ որ առաքեաց զիս :

25 Զայս ասացի ձեզ՝ մինչ ընդ ձեզ եմ :

26 Եւ զհոգին սուրբ զոր առաքեսցէ հայր յանուն իմ՝ նա ուսուսցէ ձեզ զամենայն՝ և յիշեցուսցէ ձեզ զամենայն զոր ինչ ասացի ես ձեզ :

27 Խաղաղութիւն թողից ձեզ . զխաղաղութիւն իմ տամ ձեզ . ոչ որպէս աշխարհ տայ՝ ես տամ ձեզ . մի՛ խռովեսցի սիրտ ձեր՝ և մի՛ երկնչիցի :

28 Լուարուք զի ես ասացի ձեզ . երթամ և գամ առ ձեզ : Եթէ սիրէիք զիս՝ ուրախ լինիցիք զի ասացի՝ թէ երթամ առ հայր . զի հայր իմ մեծ է քան զիս :

29 Եւ արդ ասացի ձեզ յառաջագոյն՝ քան զգալն . զի յորժամ եղիցի՝ հաւատասջիք :

30 Ոչ բազում ինչ խօսեցայց ընդ ձեզ . զի գայ իշխան աշխարհիս այսորիկ՝ և ոչ ինչ գտանէ ի մէնջ :

31 Այլ զի գիտասցէ աշխարհ՝ զի սիրեմ զհայր . և որպէս պատուիրան ետ ինձ հայր՝ նոյնպէս առնեմ . արդ արի՛ք՝ երթիցուք ասեմ ձեզ :

15 Ես եմ որթատունկ ճշմարիտ . և հայր իմ է հողագործ :

2 Զամենայն ոստ ի ես որ ոչ բերէ պտուղ՝ կտրէ զնա . և զամենայն որ պտուղ բերէ՝ զնա մաքրէ՝ զի պտուղ բազում բերիցէ :

3 Դուք մաքուր էք արդ՝ վասն բանին զոր խօսեցայ ընդ ձեզ :

4 Հաստատեցարուք ի մէնջ՝ և ես ի ձեզ . որպէս ոստ ոչ կարէ պտուղ բերել յանձնէ իւրմէ՝ եթէ ոչ հաստատեսցի ի որթատունկն՝ նոյնպէս և դուք՝ եթէ ի մէնջ ոչ հաստատեսջիք :

5 Ես եմ որթատունկ՝ դուք ոստք . որ հաստատեալ է ի մէնջ՝ և ես ի նմա՝ նա բերէ պտուղ բազում . զի առանց ինձ ոչ կարէք առնել զինչ :

6 Եթէ ոք ոչ հաստատեսցի ի մէնջ՝ արտաքս հանի իբրև զոստ՝ և չորասցի . և ժողովեսցեն զնոսա՝ և ի հուր արկցեն՝ և այրեսցին :

7 Եթէ հաստատեալ իցէք ի մէնջ՝ և բանք իմ ի ձեզ հաստատեալ իցեն՝ զոր ինչ կամիցիք խնդրեսջիք՝ և եղիցի ձեզ :

8 Յայսմ փառաւորեցաւ հայր իմ՝ զի պտուղ բազում բերիցէք . և եղիջիք ինձ աշակերտք :

9 Որպէս սիրեաց զիս հայր՝ և ես սիրեցի զձեզ . հաստատեցարուք ի սիրոյ իմում :

10 Եթէ զպատուիրանս իմ պահեսջիք՝ հաստատեսջիք ի սիրոյ իմում . որպէս և ես զպատուիրանս հաւր իմոյ պահեցի՝ և հաստատեալ եմ ի սիրոյ նորա :

11 Զայս ասացի ձեզ՝ զի ուրախութիւն իմ ի ձեզ հաստատեալ իցէ՝ և ուրախութիւն ձեր լցցի :

12 Այս է պատուիրան իմ՝ զի սիրեսջիք միմեանս՝ որպէս սիրեցի ես զձեզ :

13 Ոչ ոք ունի սէր մեծ քան զայս՝ զի զանձն իւր դիցէ ոք վասն բարեկամաց իւրոց :

14 Դուք բարեկամք իմ էք՝ եթէ առնիցէք զոր ինչ պատուիրեմ ձեզ :

15 Ոչ ասեմ ձեզ յայժմ ծառայս . զի ծառայ ոչ գիտէ զինչ առնէ տէր նորա . այլ ասացի ձեզ բարեկամս . զի զամենայն զոր ինչ լուայ ի հաւր իմմէ՝ ծանուցի ձեզ :

16 Ոչ դուք զիս ընտրեցարուք՝ այլ ես ընտրեցի զձեզ . և կացուցի զձեզ զի դուք երթիցէք և պտուղ բերիցէք՝ և պտուղ ձեր կացցէ . զի զամենայն զոր ինչ խնդրիցէք յանուն իմ յհաւրէ՝ տացէ ձեզ :

17 Զայս պատուիրեմ ձեզ՝ զի սիրեսջիք միմեանս :

18 Եթէ աշխարհ ատիցէ զձեզ՝ գիտասջիք՝ զի զիս յառաջագոյն քան զձեզ ատեաց :

19 Եթէ աշխարհիս էիք՝ աշխարհ զիւրսն սիրէր . այլ զի ոչ էք աշխարհիս՝ այլ ես ընտրեցի զձեզ յաշխարհէ՝ վասն այնորիկ ատէ զձեզ աշխարհ :

20 Յիշեցէ՛ք զբանն զոր ասացի ես ձեզ . ոչ է ծառայ մեծ քան զտէր իւր . եթէ զիս հալածեցին՝ և զձեզ հալածեսցեն . եթէ զբանս իմ պահեցին՝ և զձերս պահեսցեն :

21 Այլ զայս ամենայն առնիցեն ձեզ վասն անուան իմոյ . զի ոչ ճանաչեն զառաքիչն զիս :

22 Եթէ ոչ եկի և խօսեցայ ընդ նոսա՝ մեղս ոչ ունէին . արդ ոչ ունին պատրուակ մեղացն իւրեանց :

23 Որ զիս ատէ՝ և զհայր իմ ատէ :

24 Եթէ գործս ոչ արարի ի նոսա զոր ոչ ոք այլ արար՝ մեղս ոչ ունէին . արդ և տեսին և ատեցին զիս և զհայր իմ :

25 Այլ զի լցցի բանն որ գրեալ է ի սաղմոսի նոցա . զի ատեցին զիս անպատճառ :

26 Եւ յորժամ եկեսցէ օգնական զոր ես առաքեցից ձեզ յհաւրէ՝ հոգի ճշմարտութեան՝ որ յհաւրէ ելանէ՝ նա վկայեսցէ վասն իմ :

27 Եւ դուք վկայեսջիք՝ զի յառաջագոյն ընդ իս էք :

16 Զայս ասացի ձեզ՝ զի մի՞ գայթագղեսջիք :

2 Զի զձեզ հալածեսցեն ի ժողովարանաց . այլ եկեսցէ ժամ՝ զի ամենայն որ սպանանիցէ զձեզ՝ կարծեսցէ զի պաշտօն մատուցանէ Աստուծոյ :

3 Եւ զայս առնիցեն ձեզ՝ զի ոչ ճանաչեցին զհայր՝ և ոչ զիս :

4 Այլ զայս ասացի ձեզ՝ զի յորժամ եկեսցէ ժամ նոցա՝ յիշեսջիք զի ասացի ձեզ . և զայս ոչ ասացի ձեզ յառաջագոյն՝ զի ընդ ձեզ էի :

5 Եւ արդ երթամ առ հայր իմ՝ և ոչ ոք ի ձէնջ հարցանէ զիս . զի՞ երթաս :

6 Այլ զի զայս ասացի ձեզ՝ լցաւ սիրտ ձեր ի տրտմութիւն :

7 Այլ ես զճշմարտութիւն ասեմ ձեզ . օգուտ է ձեզ զի երթիցեմ . զի եթէ ոչ երթիցեմ՝ օգնականն ոչ գայ առ ձեզ . և եթէ երթիցեմ՝ առաքեցից զնա առ ձեզ :

8 Եւ եկեալ նա՝ յանդիմանեսցէ զաշխարհ վասն մեղաց և վասն արդարութեան և վասն դատաստանի :

9 Վասն մեղաց՝ զի ոչ հաւատային ի նա :

10 Եւ վասն արդարութեան՝ զի առ հայր իմ երթամ՝ և ոչ տեսանիցէք զիս :

11 Եւ վասն դատաստանի՝ զի իշխան աշխարհիս այսորիկ դատապարտեալ է :

12 Ունիմ դեռ բազում ինչ ասել ձեզ՝ այլ ոչ կարէք տանել արդ :

13 Եւ յորժամ եկեսցէ նա՝ հոգի ճշմարտութեան՝ առաջնորդեսցէ ձեզ ի ճշմարտութիւն զամենայն . զի ոչ յանձնէ իմմէ խօսեսցի՝ այլ զոր ինչ լուիցէ՝ զայն խօսեսցի . և զգալոցսն ծանուսցէ ձեզ :

14 Նա զիս փառաւորեսցէ . զի յինէն առցէ՝ և ձեզ ծանուսցէ :

15 Զամենայն զոր ինչ ունի հայր՝ ինձ են . վասն այնորիկ ասացի՝ զի յինէն առցէ՝ և ձեզ ծանուսցէ :

16 Սակաւ ինչ ժամանակ՝ և ոչ տեսանիցէք զիս . և դարձեալ սակաւ ինչ ժամանակ՝ և տեսանիցէք զիս . զի ես առ հայր երթամ :

17 Ասեն ոմանք ի աշակերտացն նորա ընդ միմեանս . զի՞նչ է այս զոր ասէ ցմեզ . սակաւ ինչ ժամանակ՝ և ոչ տեսանիցէք զիս . և դարձեալ սակաւ ինչ ժամանակ՝ և տեսանիցէք զիս . և զի ես առ

22 Ասէ՛ և արդ պիտեմ, թէ զոր ինչ խնդրեսցես յԱստուծոյ՝ տացէ քեզ նա :
23 Ասէ նմա Յիսուս. յարիցէ եղբայրն քո :
24 Ասէ նմա Մարթա. գիտեմ զի յարիցէ՛ ի յարուցեանն՝ յաւուրն յետնում՛ :
25 Ասէ նմա Յիսուս. Ես իսկ եմ յարուցիչն և կեանք. որ հաւատայ ինձ, թէպէտ և մեռանի՝ կեցցէ :
26 Եւ ամենայն որ կենդանի և հաւատայ ինձ՝ և հաւատայ ինձ, մի մեռցի՛ ի յաւիտեան. հաւատա՞ս այսմիկ :
27 Ասէ նմա. այո՛ Տէր, Ես հաւատացի՛ եթէ դու ես քո՛ն որդի՛ Աստուծոյ, որ յաշխարհ գալոց էիր :
28 Եւ զայս իբրև ասաց, գնաց կոչեաց զմարիամ զքոյր իւր լռելեայն՝ և ասէ. վարդապետն եկեալ է՝ և կոչէ զքեզ :
29 Նա՝ իբրև լուաւ, յարեաւ վաղվաղակի, և եկն առ նա :
30 Չէ՛ և էր եկեալ յԱստուած՝ ի գեղն, այլ էր անդէն՝ ի տեղւոյն՝ ուր ընդառաջ եղև նմա Մարթա :
31 Իսկ հրեայքն որ էին ընդ նմա՝ ի տան անդ՝ և մխիթարէին զնա, իբրև տեսին զմարիամ՝ թէ յարեաւ վաղվաղակի և գնաց, գնացին և նոքա զհետ նը. համարէին թէ՝ ի դերեզմանն երթայ՝ զի լացցէ անդ :
32 Իսկ Մարիամ իբրև եկն ուր էրն Յիսուս և տեսս զնա, անկաւ առ ոտսն նորա՝ և ասէ. Տէր՝ եթէ աստ էիր զիտեալ՝ ոչ էր մեռեալ եղբայրն իմ :
33 Յիսուս իբրև տեսս զնա զի

22 Մարթէ՝ ասաց զիտեմ որ՝ հիմա՝ զուն աստուածէ ինչ որ խնդրես՝ ած քեզի կուտա :
23 Յիսուս ալ անոր ըսաց. քու եղբայրդ յարութիւն պիտի առնէ:
25 Այս բանըս նմանութիւններով ձեզի խօսեցա , ատեն պիտի գա՝ որ ալ նմանութիւններով ձեզի հետ պիտոր չի խօսիմ . հապա՝ յայտնի հօրըս վըրայովը ձեզի պիտի զըուցեմ :

26 Ան օրը (դուք) իմ անունովս խնդրեցիք . ու ալ ձեզի չեմ ըսեր , որ ես ձեզի համար հօրըս կըՀարցընեմ , (կաղաչեմ) :

27 Որ՝ բուն ինքը հայրը ձեզ կըսիրէ , անոր համար որ դուք իս սիրեցիք , ու հաւատացիք որ՝ ես աստուածմէ ելա (եկա) :

28 (Ես) հօրմէս ելա՝ ու աշխարհ եկա , նորէն աշխարհը կրթողում՝ ու հօրըս քովՀ կերթամ՝ :

29 Աշակերտները իրեն ըսին· հիմա ալ յայտնի կրխօսիս , ու մէկ նմանութիւնմալ չես ըսեր կոր :

30 Ալ հիմա գիտցանք որ դուն ամէնէն բանը գիտես եղեր . ու պէտք չէ որ մէկը քեզի Հարցընէ . ասով կրՀաւատանք՝ որ (դուն) աստուածմէ ելար :

31 Յիսու անոնց պատասխան տուա՝ ու ըսաց . հիմա մի կրՀաւատաք :

32 Հանա ատեն պիտոր գա , ու ան եկած ալ է , որ (դուք) ատեն անդին ցիրուցան ըլլաք , ու իս միեւնոյը թողուք . ու (ես) միեակ չեմ , ինչու որ՝ հայրը իմ հետս է :

33 ¶ Ո այս խօսեցայ ընդ ձեզ՝ զի ընդ իս խաղաղութիւն ունիցիք. յաշխարհի ասա՝ նեղութիւն ունիցիք, այլ քաջալերեցարուք՝ զի ես յաղթեցի աշխարհի :

33 Այս ձեզի խօսեցա, որ իմ հետս (ըլլալով) խաղաղութիւն ունենաք : Հոս աշխրըքի մէջ նեղութիւն պիտի ունենաք, բայց սրտերնիդ ամուր բռնեցէք, ինչու որ՝ ես աշխարքը եմեցի :

ԳԼ. ԺԷ.

1 ¶ Ո այս իբրև խօսեցաւ յի՛ս, ամբարձ զաչս իւր յերկինս՝ և ասէ. Հայր՝ հասեալ է ժամ, փառաւորեա զորդի քո, զի և որդի քո փառաւորեսցէ զքեզ :

2 Որպէս եառուր նմա իշխանութիւն ամենայն մարմնոյ, զի ամենայնի զոր եառուր նմա, տացէ զկեանսն յաւիտենական :

3 Այ՛ս են յաւիտենական կեանք, զի ծանիցեն զքեզ միայն ճշմարիտ Աստուած, և զոր առաքեցեր զյի՛սքրիստոս :

4 Ես զքեզ փառաւորեցի յերկրի. զործն կատարեցի՝ զոր եառուր ցիս զի արարից :

5 Եւ այժմ փառաւորեա զիս Հայր առ ի քէն փառօքն՝ զոր ունէի յառաջ քան զլինելն աշխարհի առ ի քէն :

6 Յայտնեցի զանունն քո մարդկան, զորս եառուր ինձ յաշխարհէ. քո էին, և ինձ եառուր զնոսա, և զբանն քո պահեցին :

7 Այրդ գիտացին՝ եթէ զամենայն ինչ զոր եառուր ինձ,

8 Ընտ՛ նոցա : և նոքա ընկալան, և ծանեան ճշմարտութեամբ՝ եթէ առ ի քէն ելի. և հաւատացին՝ եթէ դու առաքեցեր զիս :

9 Այրդ ես՝ վասն նոցա աղաչեմ. և ոչ վասն աշխարհի

33 Այս ձեզի խօսեցա, որ իմ հետս (ըլլալով) խաղաղութիւն ունենաք : Հոս աշխրըքի մէջ նեղութիւն պիտի ունենաք, բայց սրտերնիդ ամուր բռնեցէք, ինչու որ՝ ես աշխարքը եմեցի :

ԳԼ. ԺԷ.

1 Յիսուս բանները խօսելէն ետև՝ իր աչվերները դէպի երկինքը վերուց, ու ըսաց. Հայր՝ ատենը հասեր է, փառաւորէ քու որդիդ, որ քու որդիդ ալ քեզ փառաւորէ :

2 Ինչպէս որ անոր իշխանութիւն տուիր բոլոր մարմիններուն վրա. որ ան ամէնուն՝ որ իրեն տուիր, յաւիտենական կեանք տա :

3 Յաւիտենական կեանքը ասա է. որ քեզ միան Ճշմարիտ Աստուածը հանչնան, ու յի՛սքրիստոս՝ ան որ (դուն) խրկեցիր :

4 Ես երկրիս վրա քեզ փառաւորեցի. ան գործքը՝ որ ինծի տուիր ընելու, ան լմընցուցի :

5 Ու ալ հիմա Հայր՝ իս փառաւորէ ան քեզմէ (եղած) փառքովը՝ որ աշխրըքի ըլլալէն առաջ քեզմէն ունէի :

6 Քու անունըդ յայտնեցի ան մարդոցը՝ որ աշխրըքէ (գտած) ինծի տուիր. անոնք քուկդ էին՝ ու ինծի տուիր, ու քու խօսկըդ պահեցին :

7 Հիմա ալ գիտցան, որ ան ամէն բանն որ ինծի տուիր՝

8 (Ես) անոնց տուի : անոնքալ ընդունեցան, ու ազիկ Հասկըցան՝ որ (ես) քեզմէն եմ ելեր. ու հաւատացին որ՝ դուն իս խրկեցիր :

9 Ուսոի ես՝ անոնց համար կաղաչեմ. ու աշխրըքի համար չեմ

աղաչեմ. այլ վասն նոցա՝ զորս եառուր ինձ, զի քո են :
10 Եւ որ ինչ իմ է, ամե-
նայն քո է. և որ ինչ քո է, այն
իմ է. և փառաւորեալ եմ ՚ի
նոսա :
11 Եւ ես՝ ոչ ևս եմ յաշ-
խարհի, և նոքա յաշխարհի են,
և ես առ քեզ գամ : Հայր
սուրբ՝ պահեա զնոսա յանուն
քո, որով եառուր ինձ. զի ե-
ղիցին մի, որպէս և մեք մի
եմք :
12 Մինչ էի յաշխարհի ընդ
նոսա, ես պահէի զնոսա յա-
նուն քո՝ որով եառուր ինձ. և
պահեցի, և ոչոք ՚ի նոցանէ կո-
րեաւ, բայց որդին կորստեան,
զի գիրն լցցի :

13 Իսայց արդ առ քեզ գամ:
և զայս խօսիմ յաշխարհի, զի
ունիցին զուրախութիւնն իմ
լիով յանձինս իւրեանց :
14 Ես եառի նոցա զբանն
քո, և աշխարհս ատեաց զնո-
սա. զի չեն յաշխարհէ, որպէս
և ես չեմ յաշխարհէ :

15 Ո՛չ զայս աղաչեմ՝ զի
բարձցես զնոսա յաշխարհէ,
այլ զի պահեցես զնո՚ի չարէ :
16 Յաշխարհէ աստի չեն,
որպէս և ես՝ չեմ յաշխարհէ :
17 Սո՛ւրբ արա զնոսա ՃՇ-
մարտութեամբ քով. զի քո
բանդ ՃՇմարտութիւն է :
18 Որպէս զիս առաքեցեր
յաշխարհ, և ես առաքեցի
զնոսա յաշխարհ :
19 Եւ ՚ի վերայ նոցա ես
սո՛ւրբ առնեմ զանձն իմ, զի
եղիցին և նոքա սրբեալք ՃՇ-
մարտութեամբ :

աղաչեր. հապա՝ անոնց համար՝
որ ինծի տրվիր, որ քուկդ են :
10 Ու ինչ որ իմն է՝ ան բո-
լորը քուկդ է, ու ինչ որ քուկդ
է՝ ան իմն է. ու անոնցմով (ես)
փառաւորվեր եմ :
11 Ու ես՝ այ ասկէետև աշ-
խարքի մէջ չեմ, ու անոնք աշ-
խարքի մէջ են. ու ես քեզի կու-
գամ : Հայր սուրբ՝ քու անունո-
վդ պահէ անոնք, որ անով (զոն)
ինծի տրվիր. որ (իրենքալ) մէկ
ըլլան՝ ինչպէս որ մենք մէկ ենք :
12 Քանի որ աշխարքի մէջ ա-
նոնց հետն էի՝ ես իրենք կրպա-
հէի քու անունովդ՝ որ (զոն) ա-
նով ինծի տրվիր. ու պահեցի՝ որ
անոնցմէ մէկը չի կորսվեցաւ, ան
կորսրվելու զաւկէն ի զատ, որ
գրվածքը կատարվի :
13 Հիմա՝ այ քեզի կուգամ:
ու աշխարքի մէջ (ըլլալով) աս
կը խօսիմ, որ իմ ուրախութինս ի-
րենց անձին մէջը լրման ունենան:
14 Ես քու խօսկդ անոնց տը-
վի. ու աս աշխարքը անոնք ա-
տեց, պատճառն որ՝ իրենք աշ-
խարքէ չեն, ինչպէս որ ես այ աշ-
խարքէ չեմ :
15 Իմ աղաչանքս աս չէ՝ որ
անոնք աշխարքէ վերցնես, հա-
պա՝ որ իրենք չարէն պահես :
16 Ան աշխարքէն չեն՝ ինտոր
որ ես այ աշխարքէ չեմ :
17 Իրենք սրբացու քու ՃՇ-
մարտութինովդ. որ՝ քու խօս-
կդ բուն ՃՇմարտութին է :
18 Ինչպէս որ (զոն) իս աշ-
խարք խրկեցիր, ես այ անոնք
աշխարք խրկեցի :
19 Ու անոնց վրա՝ ես իմ ան-
ձրս կը սրբացընեմ, որ իրենքալ
ՃՇմարտութինով սրբացուցած ըլ-
լան :

20 Այլ ոչ վասն նոցա միայն աղաչեմ, այլ և վասն ամենայն հաւատացելոց բանին նոցա յիս :

21 Զի ամենեքին մի իցեն, որպէս դու հայր յիս՝ և ես ի քեզ, զի և նոքա ի մեզ իցեն : զի և աշխարհ հաւատասցէ եթէ դու առաքեցեր զիս :

22 Եւ ես զփառն զոր ետուր ինձ՝ ետու նոցա, զի իցեն մի՝ որպէս և մեք մի եմք :

23 Ես՝ ի նոսա, և դու՝ յիս, զի եղեցեն կատարեալք ի մի : և գիտասցէ աշխարհ՝ եթէ դու առաքեցեր զիս . և սիրեցեր զնոսա որպէս դու զիս սիրեցեր :

24 Հայր, զորս ետուրն ինձ՝ կամիմ՝ զի ուր ես եմ, և նոքա իցեն ընդ իս . զի տեսանիցեն զփառն զիմ, զոր ետուրն ցիս. զի սիրեցեր զիս յառաջ քան զվենել աշխարհի :

25 Հայր արդար՝ և աշխարհ զքեզ ոչ ծանեաւ, այլ ես ըզքեզ ծանեայ . և նոքա ծանեան՝ եթէ դու առաքեցեր զիս :

26 Եւ ծանուցի նոցա զանունն քո՝ և ծանուցից . զի սէրն զոր սիրեցեր զիս՝ ի նոսա իցէ, և ես ի նոսա :

20 Ու իմ աղաչանքս անոնց համար միայն չէ, հապա՝ բոլոր ինծի հաւատացողներուն համար՝ որ անոնց խօսքովը եղեր են :

21 Որ ամէնքը մէկ ըլլան , ինչպէս որ դուն հայր իմ մէջս ես, ու ես ալ քու մէջդ, որ անոնք ալ մեր մէջն ըլլան : որ աշխարքնալ հաւատա՝ որ դուն իս խրկեցիր :

22 Ու ան քու ինծի տրված փառքդ՝ ես անոնց տուի, որ մէկ ըլլան՝ ինչպէս որ մենք մէկ ենք :

23 Ես անոնց մէջը, ու դուն իմ մէջըս . որ մէկուվրկի մէջ կատարեալ ըլլան : ու աշխարքնալ գիտնա որ՝ դուն իս խրկեցիր . ու որ՝ ես անոնք սիրեցի՝ ինչպէս որ դուն իս սիրեցիր :

24 Հայր՝ անոնք որ դուն ինծի տուիր, կուզեմ որ՝ ուր որ ես եմ՝ իրենք ալ իմ հետս ըլլան . որ իմ փառքս տեսնան , ան որ (դուն) ինծի տուիր . որ՝ աշխարհքը ըլլալէն առաջ իս սիրեցիր :

25 Հայր արդար՝ աշխարհքնալ քեզ չի ճանչցաւ, բայց ես քեզ ճանչցայ . ու անոնք ալ ճանչցան որ՝ դուն իս խրկեցիր :

26 Ու քու անունըդ անոնց ճանչցուցի , ու կրճանչցնեմ. որ ան սէրն որ իս սիրեցիր՝ ան անոնց մէջն ըլլա, ու ես ալ իրենց մէջ:

Գ Ա Տ

1 Ոյս իրրեւ ասաց յն, ել աշակերտօքն հանդերձ յայն կոյս ձորոյն կեդրովնէ՝ ուր էր պարտէզ, յոր եմուտ ինքն՝ և աշակերտքն իւր :

2 Գիտէր և յուդա, որ զինայն մատնէլոց էր՝ զտեղին . զի բա-

1 Յիսուս այս բաներս խօսելէն ետև՝ աշակերտներուն հետը կեդրոն (բսած) ձորին մէկալ կողմը ելաւ, ուր որ մէկ պարտէզը կար. որ ինքը հոն մտաւ, ու իր աշակերտներնալ (մէյտեղ) :

2 Յուդան ալ՝ որ ինքը պիտոր մատնէր՝ ան տեղը գիտէր . որ յի

գում անգամ Ժողովեալ էր ան-
դրը յի աշակերտաց հանդերձ:
3 Եւ յուդայն առեալ ընդ
իւր գդունդն, և՝ ի քահանայա-
պետից և՝ ի փարիսեցւոց բա-
պաւաւորս, գայ անդր ջահիւք
և լապտերօք և զինուք:
4 Իսկ յի իբրև եաես զայն
ամենայն եկեալ՝ ի վերայ նորա,
ել և ասէ ցնոսա· զո՞ խնդրէք:
5 Պատասխանի ետուն նը-
մա. զյի նազովրեցի: ասէ ցնո-
սա յի. ես եմ: կայր ընդ նոսա
և յուդա՝ որ մատնէրն զնա:

6 Իբրև ասաց՝ թէ ես եմ,
յետս յետս չոգան՝ և զարկան
զգետնի:
7 Դարձեալ եհարց զնոսա,
զո՞ խնդրէք: և նոքա ասեն,
զյի նազովրեցի:
8 Պատասխանի ետ նոցա յի.
ասացի ձեզ թէ ես եմ, արդ՝
եթէ զիս խնդրէք՝ թո՛ղլ տուք
զոցա երթալ:
9 Զի լցցի բանն՝ զոր ա-
սաց, թէ զորս ետուրն ցիս,
ո՛չ կորուսից՝ ի նոցանէ և ո՛չ
զոք:
10 Իսկ սիմոն պետրոս քան-
զի ունէր սուր, ձգեաց զնա՝ և
եհար զքահանայապետին ծա-
ռայ, և՝ ի բաց առ զունկն նո-
րա պաջոյ· և էր անուն ծա-
ռային մաղքոս:
11 Ասէ յի ցպետրոս. արկ
զսուրդ անդրէն՝ ի պատեանս
իւր· զբաժակն զոր ետ ինձ
հայր՝ ո՞չ ըմպիցեմ զնա:
12 Իսկ գունդն և հազարա-
պետն՝ և սպասաւորքն հրէից
կալան զյի՝ և կապեցին:

13 Եւ առին նախ՝ առ
շատ անգամ աշակերտաներուն հետ
հոն կրճատքվեր կըլլար:
3 Ու յուդան՝ զինվորներուն
խումբը իր հետը առած, ու քա-
հանայապետներէն ու փարիսեցիներէն
սպասաւորներ՝ հոն եկաւ ջահերով
ու լապտեններով ու զէնքերով:
4 Յիսուս ալ երբոր ան բոլոր բա-
ները տեսաւ իր վրա եկած, ելաւ՝
ու անոնց ըսաց. ո՛վ կուզէք:
5 Իրեն պատասխան տըվին
(որ՝) յի նազովրեցին: յիսուս ը-
սաց. ես եմ: յուդան ալ անոնց
հետը կեցեր էր, որ անիկա կըմատ-
նէր կոր:
6 Երբոր ըսաց թէ՝ ես եմ. (ա-
նոնք) ետ ետ գացին՝ ու գետինը
գարնըվեցան:
7 Նորէն անոնց հարցուց (թէ՝)
ո՛վ կուզէք: անոնքալ ըսին՝ յի
նազովրեցին:
8 Յիսուս իրենց պատասխան տը-
վաւ. ձեզի ըսի որ ես եմ. ուստի
թէ որ իս կուզէք, ալատոնք թո՛ղլ
տըվէք որ երթան:
9 (Այս) անոր համար՝ որ կա-
տարվի ան բանը որ ըսաց, թէ՝ ա-
նոնք որ ինծի տըվիր՝ անոնցմէ
մէկնալ չէ պիտի կորսընցուցեմ:
10 Այն ատեն սիմոն պետրոսը՝
որ ինքը դանակ մը ունէր, ան
քաշեց՝ ու քահանայապետին ծա-
ռային զարկաւ, ու անոր աջի
անկաձը մկրդի ձրգեց. ու ան ծա-
ռային անունը մալքոս էր:
11 Յիսուս պետրոսին ըսաց. դա-
նակըդ զարձո՛ւր իր պատենքը
ձգէ. ան բաժակը որ հայր ինծի
տըվաւ՝ ան ես պիտի չըմպեմ մի:
12 Ու ալ զինվորներուն խումբ-
բը ու հազարապետը ու հրեաներ-
ուն ըսպասաւորները յիսը բռնե-
ցին՝ ու կապեցին:
13 Ու ինքը առաջ անոնցմէ

անա, որ էր աներ կայիափայի. որ քահանայապետն էր տարեւոյն այնորիկ :

14 Այս՝ այն կայիափա էր՝ որ խրատն ետ հրէից, թէ լաւ է մարդ միւս մեռանել՝ ի վերայ ժողովրդեանն :

15 Եւ երիթային գՀետ յի՝ սիմոնի պետրոս՝ և միւս աշակերտն : և աշակերտն այն քանզի ծանօթ էր քահանայապետին՝ եմուտ ընդ յի՝ ի գաւիթ քահանայապետին :

16 Եւ պետրոս կայր առ դրանն արտաքոյ : ել միւս աշակերտն՝ որ էր ծանօթ քահանայապետին, և ասաց դրդռնապանն՝ և եմոյծ՝ ի ներքս զպետրոս :

17 Այսմ աղջկին որ դռնապանն էր՝ ցպետրոս. միթէ՝ և դու յաշակերտաց առնն այնորիկ իցես : և նա ասէ՝ ոչ եմ :

18 Կային անդ ծառայքն և սպասաւորք, խարոյկ արկեալ՝ քանզի ցուրտ էր, և ջեռնուին . կայր ընդ նոսա և պետրոս՝ և ջեռնոյր :

19 Եւ քահանայապետն ետ հարց զյն վասն աշակերտացն՝ և վասն վարդապետութեան նորա :

20 Պատասխանի ետ նմա յի. ես՝ յայտնապէս խօսեցայ յաշխարհի. ես՝ յամենայն ժամ ուսուցի՝ ի ժողովրդեանն, և՝ ի տաճարի անդ՝ ուր ամենայն հրեայք ժողովեալ էին, և՝ ի ծածուկ ինչ ոչ խօսեցայ :

21 Զի հարցանես զիս . հարց զայնոսիկ՝ որ լուանն, թէ զինչ խօսեցայ ընդ նոսա . քովք տարին, որ կայիափային աներն էր . անիկա՝ որ ան տարվանը քահանայապետն էր :

14 Այլիկա ան կայիափան էր, որ հրեաներուն ան խորհուրդը տուած թէ՝ ալ աղէկ է որ ժողովրդին վրա մէկ մարդմը մեռնի :

15 Ու յինն եաւէն կերթային՝ սիմոն պետրոսը ու միւսկալ աշակերտնալ . ու ան աշակերտը որ քահանայապետին ճանչվուր էր՝ ինքնալ յինին հետ քահանայապետին (տունը) բակը մտաւ :

16 Ու պետրոսը դուրսը դռանը քովկեցեր էր : ան միւսկալ աշակերտնալ՝ որ քահանայապետին ճանչվուն էր՝ ելաւ ու դռնապանին ըսաց՝ որ պետրոսը ներս խօլեց :

17 Ան ախճիկը որ ինքը դռնապան էր՝ պետրոսի ըսաց . դուն ալ ան մարդուն աշակերտներէն ես մի : անալ ըսաց որ՝ ես չեմ :

18 Ան տեղը կեցեր էին ծառաներն ու ըսպասաւորները, կրակը վառած՝ որ ցուրտ էր, ու կրծաքնայինկոր. պետրոսալ անոնց հետ կեցած՝ ինքնալ կրտաքնար :

19 Ու քահանայապետը յինին հարցուց (իր) աշակերտներուն վրայովը . ու իրեն ըրած քարոզութեանը համար :

20 Յի ալ անոր պատասխան տըվաւ, (թէ՝) ես բաց յայտնի աշխրբքին մէջ խօսեցա . ես ամէն ատեն ժողովարանին մէջ սորվըցուցի, ու բուն տաճարին մէջ՝ ալ՝ ուր տեղ որ բոլոր հրեաները ժողված կեցեր էին, ու գաղտուկը բանմը խօսած չեմ :

21 Ինչու ինծի կհարցնես. անոնց հարցուր որ լսեր են, թէ (ես) հետերնին ի՞նչ եմ խօսեր :

ասաւածիկ նոքա զիտեն զինչ խօսեցայ :

22 Իբրև նա զմեզ ասաց , մի ոմն ՚ի սպասաւորացն որ անդ կայր՝ ած ապտակ յերե՝ և ասէ . այդպէս պատասխանի տաս քահանայապետիդ :

23 Եւ յո՞ւ ասէ ցնա . եթէ չար խօսեցայ , վկայեա վասն չարին , իսկ եթէ բարի , ընդէ՞ր հարկանես զիս :

24 Եւ առաքեաց զնա անաս կապեալ առ կայիափա քահանայապետն :

25 Եւ սիմովն պետրոս կայր անդ՝ և ջեռնայր . ասեն ցնա՝ միթէ և դու յաշակերտաց ան՚ոտի նորա իցես : նա՝ ուրացաւ և ասէ՝ թէ չեմ :

26 Եւ ասէ մի ոմն ՚ի ծառայից քահանայապետին՝ ազգական այնորիկ , զորոյ դունկն եհատ պետրոս . ո՞չ ես իսկ տեսի զքեզ ՚ի պարտիզն անդ ընդ նմա :

27 Դարձեալ ուրացաւ պետրոս , և վաղվաղակի հաւ խօսեցաւ :

28 Եւ ածեն զյի՞ ՚ի վանացն կայիափայ յասպարանս դատաւորին . և էր այգուց : և նոքա ո՛չ մտին յասպարանն , զի մի պղծիցին , այլ զի ուտիցեն զպատիկն :

29 Ել առ նոսա պիղատոս արտաքս՝ և ասէ . զի՞նչ չարախօսութիւն մատուցանէք զառնէն զայնմանէ :

30 Պատասխանի ետուն և ասեն ցնա . եթէ չէր չարագործ այդն այն , ապա ո՛չ մատնէաք զնա քեզ :

31 Այս ցնոսա պիղատոս . առէք զնա դուք , և ըստ ձե՚ անոնք աղէկ զիտեն ինչ որ (ես) խօսեցեմ՛:

22 Երբոր ինքը ասս ըսաց՝ ըսպասաւորներէն մէկը որ հոն կեցեր էր՝ յսի աբտակմը կրպուց ու ըսաւ . քահանայապետին (դուն) առտնկ մի պատասխան կուտաս :

23 Յո՞ւ ալ անոր ըսաց . թէ որ քէչ բանմը խօսեցա՝ ըսէ որ ան քէչ էր . հապա թէ որ ազէկ ըսի, ինչո՞ւ ինծի կըզարնես :

24 Ու աննան՝ անիկա անանկ կապած՝ կայիափա քահանայապետին խաւրեց :

25 Սիմոն պետրոսն ալ որ հոն կեցեր էր՝ ու կրտաքնար , իրեն ըսին . դուն ալ մի անոր աշակերտներէն ես : անիկայ ալ ուրացաւ՝ ու ըսաց՝ թէ չեմ՛:

26 Ու քահանայապետին ծառաներէն մէկնալ , անոր ազգականը՝ որ պետրոս իր անկաձը կրտրեբէը , ըսաց . բուն ես՝ քեզ չի տեսայ մի ան պարտէզին մէջը, որ անոր հետ էիր :

27 Պետրոսը նորէն հերմալ ուրացաւ . ու շուտմը աղլորը խօսեցաւ :

28 Ու յիը կայիափային տընէն դատաւորին պալատը տարին . ու ալ առտու էր : ու իրենք պալատը չի մտան՝ որ չըլլա թէ պղծըվին , որ անանկ պատիկնին ուտեն :

29 Պիղատոսը դուրս ելաւ անոնց , ու ըսաց . ան մարդուն վըրայովը ի՞նչ վատ գըրուց ունիք ըսելու :

30 Պատասխան տըվին՝ ու անոր ըսին . թէ որ ան մարդը չարագործմը չըլլար՝ ալ ինքը քեզի չէինք մատներ ձեռքդ տար :

31 Պիղատոս ալ իրենց ըսաց . ան դուք առէք՝ ու ձեր օրէնքին

բոց օրինացն դատեցարուք : ասեն ցնա հրեայքն . մեզ ոչ՛ արժան սպանանել զոք :

32 Որ ի լցոյլ բանն յի՛ր զոր ասաց , նշանակեալ թէ որով մահու մեռանելոց էր :

33 Եմուտ միւսանգամ յա_պարանն պիղատոս , կոչեաց զյի՛ս , և ասէ ցնա . դո՞ւ ես թա_գաւորն հրէից :

34 Պատասխանի ետ յի՛ս . ՚ի քէն ասես զայդ , եթէ այլք ա_սացին քեզ զնէն :

35 Պատասխանի ետ պիղա_տոս . միթէ և ես հրեա՞յ եղեմ . ազգն քո և քահանայապետք մատնեցին զքեզ ինձ , զի՞նչ գործ գործեալ է քո :

36 Պատասխանի ետ յի՛ս . իմ արքայութիւն չէ՛ յայսմ աշ_խարհէ . եթէ յաշխարհէ այսմէ էր արքայութիւնն իմ , սպա_սաւորքն իմ մարտնչէին ար_դեւք՝ զի մի՛ մատնեցայց հրէից . բայց արդ՝ թագաւորութիւն իմ չէ՛ աստի :

37 Ասէ ցնա պիղատոս . ա_պա թէ այդպէս եղէ , թագա_ւո՞ր ումն ես դու : պատասխանի ետ յի՛ս . դո՛ւ ասես՝ թէ թագա_ւոր եղեմ , բայց ես՝ յայդ իսկ ծնեալ եմ , և ՚ի դմա՛ իսկ ե_կեալ եմ յաշխարհ , զի վկայե_ցից ճշմարտութեանն . ամե_նայն որ ՚ի ճշմարտութենէ է , լսէ բարբառոյ իմոյ :

38 Ասէ ցնա պիղատոս . զի՞նչ է ճշմարտութիւն : զայս երբեմն ասաց , դարձեալ ել առ հրեայսն և ասէ ցնոսա . ես՝ և ոչ մի՛ ինչ պատճառս գտանեմ ՚ի նմա :

39 Իսկ է ձեր սովորութիւն՝ զի ես (իբր) զատաստանը ըզձեզ : հրե_եաներըդ իրեն ըսին . ան մեզի չե_նար որ մենք մարդ ըսպաննենք :

32 Որ ասսով յի՛ր խօսկը կա_տարվի ան որ ըսաց՝ ցրցուց թէ՝ ինչ մահով (ինքը) պիտի մեռնի :

33 Պիղատոս նորէն պալատը մտաւ , յի՛ր կանչեց՝ ու անոր ը_սաց . դուն հրեաներուն թագա_ւո՞րն ես մի :

34 Յի՛ս ալ պատասխան տրվաւ_ատ (բանը) դուն քեզմէ՞ մի կը_սես՝ թէ ուրիշներըմի՞ ինծի կա_մար քեզի ըսին :

35 Պիղատոս պատասխան տր_վաւ . եսա՞լ հրեա՞ եմ մի . ան՝ քու ազգդ ու քահանայապետ_ները քեզ իմ ձեռքս տըվին . (դուն) ինչ բան ըրերես :

36 Յի՛ս պատասխան տրվաւ . իմ թագաւորութիւնըս աս աշխարքըքէս չէ՛ . թէ որ աս աշխարքըքէս ըլլար իմ թագաւորութիւնըս , ալ իմ ըսպասաւորներըս ձեռով դէմ կըընէին՝ որ (ես) հրեաներուն ձեռքը չիյնամ . ուստի իմ թա_գաւորութիւնըս ասկէց չէ՛ :

37 Պիղատոս իրեն ըսաց . թէ որ ատանկ է նէ՝ դուն մէկ թագա_ւորմընես : յի՛ս պատասխան տրվաւ . ան դուն կըսեսկոր՝ որ ես թագա_ւոր եմ . բայց ես բուն ատոր մէ՛ծնած եմ , ու ատոր համար_ալ աշխարք եկերեմ , որ ճշմար_տութենին վըկայեմ . ամէն ովոր ճըշմարտութէն կուգենէ՝ ան իմ խօսկիս անկաՀ կըդրնէ :

38 Պիղատոս իրեն ըսաց . ճըշ_մարտութիւնը ինչ է : աս որ ը_սաց , նորէն մէյմալ հրեաներուն ելաւ , ու անոնց ըսաւ . ես մէկ (մեռնելու) պատճառմընալ ա_նոր վրա չեմ գըտներկոր :

39 Միան թէ՝ դուք սովորութէն

զի գիմ ոք արձակեցից ձեզ ՚ի գատիս, արդ՝ կամիք զի արձակեցից ձեզ զԹագաւորն հրէից :

40 Ացաղակեցին ամենեքեան՝ և ասէին . մի զդա, այլ զբարաբբա : և էր բարաբբայն այն աւազակ :

ունիք, որ զատիս ատենը մէկ (բանտարկեալը) ձեզի արձկեմ. ուստի կուզէք մի որ հրեաներուն Թագաւորը ձեզի արձկեմ :

40 Ացմէնքնալ կըկանչվրտէին՝ ու կըսէին . ատիկա չէ, հապա՝ բարաբբան : ու ան բարաբբան՝ մէկ աւազակմըն էր :

ԳԼ· ԻԹ·

1 Յայնժամ առ պիղատոս զյի՛ն, և զդն եհար :

2 Եւ զինուորացն արարեալ պսակ ՚ի փշոց՝ եդին ՚ի գլուխ նորա, և զգեցուցին նմա զդեստ ծիրանի :

3 Եւ գային առ նա՝ և ասէին, ողջ եր արքայ հրէից . և հանէին նմա ապտակս :

4 Եւ դարձեալ պիղատոս արտաքս՝ և ասէ ցնոսա . ա՛յա ածեմ զնա արտաքս առ ձեզ՝, զի գիտասջիք թէ ես՝ ՚ի նմա ոչ գտանեմ :

5 Եւ յն արտաքս, և ունէր պսակ ՚ի փշոց՝ և զդեստ ծիրանի : և ասէ ցնոսա . ա՛յա այրդ՝ ցձեզ :

6 Իբրև տեսին զնա քահանայապետքն և սպասաւորք, զաղաղակ բարձին՝ և ասեն . ՚ի խա՛չ հան՝ ՚ի խա՛չ հան զդա : ասէ ցնոսա պիղատոս . առէք զդա ՚ի ձեզ, և ձեզէն հանէք ՚ի խաչ, զի ես՝ ՚ի դմա գիտս ինչ ոչ գտանեմ :

7 Պատասխանի ետուն նըմա հրէայքն . մեք՝ օրէնս ունիմք, և ըստ օրինացդ մերոց պարտի մեռանել, զի զանձն իւր որդի այ արար :

1 Ան ատենը պիղատոս յաը առաւ՝ ու (իրեն) ծեծ քաշեց:

2 Ու զինվորները փշերէ Թագ մը շինած՝ անոր գլխը գրին, ու իրեն (կարմիր) ծիրանի լաֆմը հագցուցին :

3 Ու առջևը կելլային՝ ու կըսէին . ա՛խ կեցը հրէից Թագաւոր. ու իրեն ապտակներ կուտային :

4 Պիղատոս նորէն դուրս ելաւ՝ ու անոնց ըսաց . Հանա անիկա ձեզի դուրս կըբերեմ, որ գիտնաք որ՝ ես անոր վրա գէն բանմը չեմ գտներ կոր :

5 Ինանկ՝ յաը դուրս ելաւ, որ (գլուխը) փշէ Թագմը ունէր, ու ծիրանի հագուստը : ու (պիղատոս) անոնց ըսաց . Հանա աա մարդը ձեզի :

6 Քահանայապետներն ու (իրենց) մարդիքը երբոր անիկա տեսան՝ ձանէրնին վերուցին՝ ու կըսէին . ատիկա խա՛չ հանէ՝ խա՛չ հանէ : պիղատոս ալ անոնց ըսաւ. ատիկա (դուք) ձեզի առէք, ու բունն ձեզմէ խա՛չ հանեցէք, որ ես աաոր վրան գէնմը չեմ գտներ :

7 Հրեաներնալ իրեն պատասխան տըվին. մենք մէկ օրէնքմըմ ունինք, որ ան՝ մեր օրէնացը պէս պէտք է որ մեռնի . ինչու որ՝ ինքիր անձը այ որդի ըրաւ :

8 Իբրև լուաւ զբանս զայսոսիկ պիղատոս, առաւել ևս երկեաւ :

9 Եմուտ դարձեալ անդրէն յապարանսն, և ասէ ցյի. ուստի ես դու : և յի ոչ ետ նմա պատասխանի :

10 Ասէ ցնա պիղատոս. ընդ իս ոչ խօսիս, ոչ գիտես եթէ իշխանութիւն ունիմ հանել զքեզ ՚ի խաչ, և իշխանութիւն ունիմ արձակել զքեզ :

11 Պատասխանի ետ յի. ոչ ունիցիր դու իշխանութիւն ՚ի վերայ իմ՝ և ոչ մի, եթէ ոչ էր տուեալ քեզ ՚ի վերուստ. վասն այնորիկ՝ որ մատնեաց զիս քեզ, նորա մեծ մեղք են :

12 Եւ յայնմանէ պիղատոս խնդրէր արձակել զնա. և հրեայքն աղաղակէին՝ և ասէին. եթէ զդա արձակես, չես բարեկամ կայսեր. ամենայն ոք որ թագաւոր կոչէ զանձն իւր, հակառակ է կայսեր :

13 Իսկ պիղատոս իբրև լուաւ զբանս զայսոսիկ, ած զյի արտաքս՝ և նստոյց ՚ի վերայ բեմին ՚ի տեղւոջն որ կոչէր քարայատակ, և եբրայեցերէն՝ կապպաթա :

14 Էր ուրբաթին զատիկ, և էր ժամ իբրև վեցերորդ, և ասէ ցհրեայսն. ահա թագաւորդ ձեր՝ ցձեզ :

15 Եւ նոքա աղաղակէին. բարձ ՚ի մէնջ՝ բարձ ՚ի մէնջ՝ և հան զդա ՚ի խաչ : ասէ ցնոսա պիղատոս. եա՝ զթագաւորդ ձեր ՚ի խաչ հանիցեմ : պատասխանի ետուն քահանայապետքն. չէք մեր թագաւոր՝ բայ ՚ի կայսերէ :

8 Երբոր պիղատոս ասս բանեբրս լսեց՝ աւ էվէլոք վախաս մէջ ինկաւ :

9 Նորէն մէյտալ պալատը մրտաւ, ու յիսի ըսաւ. դուն ուսկի ես : յի աւ անոր պատասխան չի տրվաւ :

10 Պիղատոս իրեն ըսաց. իմ հետրս չէս մի խօսիր, չէս գիտեր որ (ես) իշխանութին ունիմ քեզ խաչ հանելու, ու իշխանութին ունիմ քեզ արձրկելու :

11 Յի պատասխան տրվաւ. դուն իմ վրաս ճակի իշխանութին չիմ րնաւ չէիր ունենար, թէ որ ան՝ վերէն քեզի տրըված չըլլար : անոր համար՝ ուղը իս քեզի մատնեց՝ անոր մեղքը աւ մեծ է :

12 Աւ անոր համար պիղատոսը կուգեր որ ինքը արձրկէ : ու հրեաներնաւ կըլանչըռտէին ու կըսէին. թէ որ ատիկա արձրկես նէ՝ (դուն) կայսերին բարեկամը չես. (որ) ամէն ով որ իր անձը թագաւոր կըհանչէ՝ անիկա կայսերին ղէմ կըդնէ :

13 Պիղատոս աւ երբոր ասս բաներըս լսեց, յիր դուրս հանեց, ու (ինքնաւ իր գաստանին) բեմին վրա նստաւ, ան տեղն որ՝ քարահատակ կըսվէր, ու եբրայերէնէն՝ կապպաթա :

14 .Օ.ատիկի (ամսին) ուրբաթ (օրն) էր, ու ժամեակ վեցին տաեւներին էր, ու հրեաներուն ըսաց. հանա ձեր թագաւորը ձեզի :

15 Անոնքաւ (կեղը) կըլանչըռտէին. մեզի վերցուր, մեզի վերցուր՝ ու ատիկա խաչ հանէ : պիղատոսը անոնց ըսաց. ես ձեր թագաւորը մի խաչ հանեմ : քահանայապետներնաւ պատասխան տըվին. կայսերէն ի զատ մենք (ուրիշ) թագաւոր չունինք :

16 Յայնժամ ետես ինա՛ ի ձեռս նոցա, զի՛ ի խաչ ելանիցէ :

17 Եւ նոքա առեալ տա-
նէին զնա· և բարձեալ էր ինք-
նին զխաչափայտն, և ելանէր
՚ի տեղին՝ որ անուանէր գագա-
թան, և կոչէր եբրայեցերէն՝
գողգոթա :

18 Ուր և՛ ի խաչն խակ հա-
նին զնա· և ընդ նմա երկուս
ևս այլս՝ աստի և անտի, և՛ ի
միջի՝ զյի՛ :

19 Գրեաց և տախտակ՝ պի-
լատոս, և եդ՚ի վերայ խաչին·
և էր գրեալ· յի՛ Նազովրեցի՝
թագաւոր հրէից :

20 .Օ այն տախտակ ընթեր-
ցան բազումք ՚ի հրէից, զի
մօտ էր ՚ի քաղաք անդր տեղին՝
ուր խաչեցաւն յի՛. և էր գրեալ
եբրայեցերէն՝ դաղմատարէն՝
և յունարէն :

21 Ասեն ցպիղատոս քա-
հանայապետքն հրէից· մի գր-
ես զի թագաւոր հրէից, այլ թէ
նա ասաց՝ թագաւոր եմ հրէից:

22 Պատասխանի ետ պիղա-
տոս· զոր ինչ գրեցին՝ գրեցի :

23 Իսկ զինուորքն իբրև խա-
նին ՚ի խաչ զյի՛, առին զհան-
դերձս նորա՝ և արարին չորս
մասունս, իւրաքանչիւր զինու-
որի մասն : իսկ զպատմուճանն
քանզի էր առանց կարանի ՚ի
վերուստ՝ փոր անկեալ ամե-
նեքին.

24 Ասեն ցմիմեանս· մի պա-
տառեսցուք զայդ, այլ արկ-
ցուք վիճակս ՚ի վերայ զորա՝
սմ և ելցէ : զի լցցի գիրն որ
ասէ· բաժանեցան զհանդերձս
իմ յիւրեանս, և՛ ի վե՛ պատ-

16 Ապա ան ատենը՝ անիկա ա-
նոնց ձեռքը տըվաւ՝ որ (երթա)
խաչ ելլէ :

17 Անոնք ալ առին ինքը
կըտանէին· ու ինքը իր վրա վե-
րցուցած էր խաչափայտը, ու ա-
նանկ ան տեղը կելլէր որ գագա-
թան կըսվէր, ու եբրայեցերէն-
ալ գողգոթա կըկանչըվէր :

18 Հոն՝ ալ ինքը խաչ հա-
նեցին, ու իր հետը ուրիշ երկուք-
ալ (իրեն) մէկ դիին ու մէկալ
դիին, ու յի՛ը մէջ տեղը :

19 Պիղատոս մէկ (վերնագիր)
տախտակմալ գրըեց՝ ու խաչին
վրան դրաւ· որ գրված էր՝ յի՛
Նազորեցի, Թագաւոր հրէից :

20 Ան տախտակը՝ հրեաներէն
շատ մարդիք կարդացին, ինչու
որ՝ ան յիի՛ն խաչված տեղը քաղ-
քին մօտ էր· ու ան՝ գրված էր՝
եբրայեցերէն՝ լատիներէն՝ ու
յուներէն :

21 Հրեաներուն քահանայա-
պետները պիղատոսին ըսին· մի՛
գրեր՝ Թագաւոր հրէից, հապա
(ասանկ՝) որ ինքը ըսաւ (թէ՝)
Թագաւոր եմ հրէից :

22 Պիղատոս ալ պատասխան
տըվաւ· ալ ինչ որ գրեցի՝ գրեցի :

23 Հայդ զինվորները երբոր
յի՛ը խաչ հանեցին, անոր լա-
թէ՝ տունի՝ ու չորս բաժին ը-
րին, ամէն մէկ զինվորին բաժին
մը: բայց վրայի կապան՝ որ ա-
ռանց կարի վերէն (ի վար՛) բո-
լորը մէկ հատվածքէ էր·

24 Ուստի ըսին· տուիկա չի
պատռենք, հապա աւոր վրան
վըճակ ձգինք, ան որուն որ ելլայ:
որ (ասով) ան գրվածքը կա-
տարվի, որ կըսէ (թէ՛) լաթերը
իրենց մէջ բաժնեցին, ու իմ կա-

մուճանի լմոյ վիճակ արկին : զնեռւորքն՝ գայս ինչ գործեցին:

25 Եւ կային առ խաչին յի՛ր մայրն նորա, և քոյր մօր նորա Մարիամ կղէոպասյ, և Մարիամ Մագդաղենացի :

26 Յի՛ւ իբրև տեսս զմայրն, և զաշակերտն զոր սիրէր՝ զի կայր մօտ. ասէ ցմայրն, կէն զուս՝ ահա որդի քո :

27 Ապա ասէ ցաշակերտն. ահա մայր քո : և յայնմ ժամանակի՝ ուս աշակերտն զնա առ իւր :

28 Յետ այսորիկ իբրև զիտաց յի՛ւ, եթէ ահա ամենայն ինչ կատարեալ է, զի կատարեսցի գիրն, ասէ՝ ծարաւի եմ:

29 Եւ անդ կայր աման լինի՝ լի քացախով. և նոցա բռնադ լցեալ քացախով ընդ լեղեայ՝ շուրջ եդեալ զմշակաւ զոզային, մատուցին ՚ի բերան նորա :

30 Իբրև ուս յի՛ւ զքացախն հանդերձ լեղւովն՝ ասէ. ամենայն ինչ կատարեալ է: և խոնարհեցուցեալ զգլուխ՝ աւանդեաց զոգին :

31 Իսկ հրէայքն՝ քանզի ուրբաթի էր, զի մի անդէն ՚ի խաչին ազանիցին մարմինքն մինչև շաբաթին, զի էր օր մեծ շաբաթուն այնորիկ. աղաչեցին զպղիտոսս՝ զի խորտակեսցեն զբարձս նոցա, և բարձցին:

32 Եկին զնեռւորքն, և զառաջինն խորտակեցին զբարձս, նոյնպէս և զմիւսին որ ընդ նմա ՚ի խաչն եւեալ էր :

33 Իսկ իբրև եկին առ յի՛ւ, և տեսին զի այն ինչ մեռեալ էր, ոչ խորտակեցին զբարձս նր:

պայիս վրա վճռակ ձգեցին : ասս բանըս զինվորներըր ըրին :

25 Ու յի՛ւ խաչին քով կեցեր էին՝ իր մաբը, ու իր մօրը քուրը մարեամը կղէոպասին (կինը), ու մարեամ մագտաղենացին :

26 Յի՛ւ երբոր տեսաւ (իր) մաբը, ու մօտը կեցած՝ ան աշակերտը որ ինըը կըսիրէր, մօրը ըսաց, կընիկ՝ չանա քուռ որդիդ:

27 Ետկը աշակերտինալ ըսաց. չանա քուռ մաբրա: ու ան առենէն ետև՝ աշակերտը անիկա իր քովը առաւ :

28 Այ ասկ ետկը երբոր գիտցաւ յի՛ւ որ ամէն բան կատարեալ է, ան գրուածքնալ կատարվելու համար՝ ըսաց. ծարաւ եմ:

29 Ու հոն քացախով լեցուն ամանմը կար. անոնք ալ մկ ըսպունկմը քացախը խրխմած՝ լեզի ալ չետը, անիկա զոզային մըշտիկի վրա փաթթած՝ դէպ իր բերանը երկրնցուցին :

30 Յի՛ւ ան լեղիով խառնած քացախը որ առաւ, ըսաց. ալ ամէն բան կատարեալ է. ու գլուխը ծռեց՝ հոգին աւանդեց :

31 Ու հրեաներըր՝ ան օրը ուրբաթի ըլլալով, որ չըլլա թէ ան մարմիներըր խաչին վրա մնան ինչվան շաբաթ-նօրը. ինչու որ՝ ան շաբաթը մեծ օր էր. պիղատոսի աղաչեցին որ անոնց ծրնկվընըերը ջարդեն՝ ու անկէ վերցրվին :

32 Ո՝ինվորները եկան՝ ու առջինին ծրնկվընըերը ջարդեցին, անանկալ մկալինը՝ որ անոր հետ խաչ եւած էր :

33 Մինան թէ երբոր յի՛ւ եկան, ու տեսան որ ինըը մեռած էր, անոր ծրնկվընըերը չի ջարդեցին .

34 Ասէ մի ոմն ՚ի զինուո-
րացն տիգաւ խոցեաց զկողս
նորա · և վաղվաղակի եել ա-
րիւն և ջուր :

35 Եւ որ եահան՝ վկայեաց,
և ճշմարիտ է վկայութիւն նո-
րա . և նա գիտէ՝ թէ ճշմարիտ
ասէ, զի և դուք հաւատասջիք :

36 Այս եղև , զի լցցի պիրն,
ելիէ՝ ոսկր նորա մի փշրեսցի :

37 Եւ դարձեալ մեւս պիր
ասէ, ելիէ հայեսցին ՚ի նա՝ յոր
խոցեցինն :

38 Յետ այսորիկ աղաչեաց
զպիղատոս յովսէփ՝ որ յարի-
մաթեայ էր, աշակերտ յի՛ ՚ի
ծածուկ՝ վասն ահին հրէից· զի
բարձցէ զմարմինն յի՛ : և հրա-
մայեաց պիղատոս · եկին և
բարձին զնա :

39 Եկն և Նիկոդեմոս որ է
կեալն էր առ յի՛ ՚ի գիշերի
զառաջինն , և եբեր զմուռս
խառն ընդ հալուէս՝ իբրև լե-
ռեաս հարեւր :

40 Առին զմարմինն յի՛ , և
պատեցին կտաւովք՝ խնկովքն
հանդերձ , որպէս օրէն էր հր-
էից պատել :

41 Եւ էր ՚ի տեղւոջն յո-
րում խաչեցաւ՝ պարտէզ . և
՚ի պարտիզի անդ գերեզման
նոր , յորում ոչըք երբեք էր
եղեալ :

42 Անդ՝ վասն ուրբաթուն
հրէից , զի մօտ էր գերեզմանն՝
եդին զյի՛ :

34 Հապա զինուորներէն մէկը՝
գեղարդով անոր կողը խոցեց .
ու շուտմը (անկէ՛) արուն ու ջուր
ելաւ :

35 Ու (ան բանը՛) ան որ տե-
սաւ՝ վկայեց · ու անոր վկայու-
թիւնը ճշմարիտ է , ու ինքնալ
գիտէ որ ճշմարիտ կըսէ , անոր
համար որ դուքալ հաւատաք :

36 Այս բանսալ եղաւ՝ որ ան
գրվածքը կատարվի , թէ՝ անոր
ոսկորը պիտոր չի փըսորի :

37 Ու միւմալ՝ որ մէկալ գրը-
վածքը կըսէ , թէ՝ իրեն պիտի
նային անոնք՝ որ ան խոցեցին :

38 Ասկէ ետև՝ յետսփը՝ որ
ինքը արիմաթեայէն էր , գրեա-
ներուն վախէն՝ գաղտուկ յի՛ ա-
շակերտ (եղած ,) պիղատոսին ա-
դաչեց՝ որ յիսին մարմինը վերցու-
նէ : պիղատոս ալ հրաման տըվաւ .
անանկ եկան ու անիկա վերցուցին :

39 Ան նիկոդիմոսնալ՝ ինքը որ
առաջուցմէ գիշեր առեն յի՛ քով
գացերէը · (ասիկայալ) եկաւ , ու
հարուր լիտրի չափ զմռնի հետ
հալվէ խառնած՝ բերաւ :

40 Անանկ՝ յիսին մարմինը առ-
ին , ու կտաւներով՝ ան խնկերովներ-
վը փաթեթեցին , հրեաներուն պա-
տանը րնելու սովորութիւնին պէս :

41 Ու ան տեղը ուր որ խաչ-
վեցաւ՝ մէկ պարտէզմը կար , ու
ան պարտէզին մէջը նոր գերեզ-
մանմը (շինած) . որ անոր մէջը
դեռ մէկը դրըված չէր :

42 Ան գերեզմանը մօտ ըլլա-
լով , հրեաներուն ուրբաթին
պատճառովը , յիսը հոն դրըին :

ԳԼ · Ի ·

1 Եւ ՚ի միաշաբաթուանէն՝ մա-
րիամ մագդաղենացի գայ

1 Ու միշաբթինօրը՝ մարիամ
մագդալենացին՝ առաւ-

առաւօտուն ընդ արշալուշն՝ ի դերեզման անդր, և տեսանէ զվէմն բարձեալ՝ ի դրաց դերեզմանին :

2 Ապա ընթանայ և գայ առ սիմոնիս պետրոս՝ և առ միւս աշակերտն զոր սիրէր յի՛ս, և ասէ ցնոսա . բարձին զտէր՝ ի դերեզմանէ անտի, և ո՛չ գիտեմք՝ ուր եդին զնա :

3 Ել՛ պետրոս և միւս աշակերտն, և գային՝ ի գերեզմանն :

4 Ընթանային երկոքեան՝ ի միասին. և միւս աշակերտն յառաջեաց ընթացաւ վաղագոյն քան զպետրոս՝ և եկն նախ՝ ի գերեզմանն :

5 Եւ խոնարհեալ տեսանէ՝ զի կային անդ կտաւքն, բայց՝ ի ներքս ո՛չ եմուտ :

6 Եկն և սիմոնիս պետրոս՝ որ գայրն զկնի նորա, և եմուտ՝ ի գերեզմանն . և տեսանէ զկտաւսն զի կային անդ :

7 Եւ վարշամակն որ էր՝ ի գլուխ նորա՝ ոչ ընդ այլ կըտաւսն կայր, այլ ուրոյն ծալեալ՝ ի մի կողմն :

8 Յայնժամ եմուտ և միւս աշակերտն, որ եկեալ էր յառաջագոյն՝ ի գերեզմանն, և տես՝ և հաւատաց :

9 Զի ՚ի չէին գիտէին զգիրս՝ թէ պարտ է նմա՝ ի մեռելոց յառնել :

10 Դարձեալ առ միւսն աշակերտքն :

11 Իսկ Մարիամ կայր արտաքոյ գերեզմանին՝ և լայր : և մինչդեռ լայր՝ խոնարհեցաւ՝ ի գերեզման,

12 Եւ տեսանէ երկուս հրեշտակս՝ ի սպիտակս, զի նստէին՝ տանդ կանոխ մուխն ի լուսուն՝ ան գերեզմանը կուգա, ու կըտեսնէ՝ որ քարը գերեզմանին դրռանը դնմացէն վերուցած էր :

2 Եւ կըվազէ ու սիմոն պետրոսին քով կուգա, ու միկալ աշակերտին ալ՝ որ յիւր ան կըսիրէր, ու անոնց կըսէ . տըր ան գերեզմընէն վերցուցերեն, ու չենք գիտեր որ ուր են (տարեր) զրեր :

3 Պետրոսնալ ելաւ, ու ան միկալ աշակերտնալ (էեաը), ու դէպի գերեզմանը կուգային :

4 Երկուքնալ միասեղ կըվազէին . ու միկալ աշակերտը առաջ վազեց պետրոսը անցաւ, ու շուտով ինքը առաջ գերեզմանը եկաւ :

5 Ու (դրսէն) կրծրսի կըտեսնէ որ՝ կըտաւները հոն կեցեր են, բայց (ինքը) ներս չի մտնար :

6 Սիմոն պետրոսնալ հասաւ, որ անոր ետևանցը կուգարկոր, ու գերեզմանը մտաւ . ու կտաւները տեսաւ որ հոն կեցեր էին :

7 Ու թաշկինն լաթը՝ որ անոր գլխին էր՝ ան միկալ կտաւներուն հետը չէր, հապա՝ ծալած զատ մէկդի զրած էր :

8 Անատեղը ան միկալ աշակերտնալ՝ որ ինքը առաջ գերեզմանը հասեր էր, (ինքնալ) ներս մըտաւ, ան տեսաւ՝ ու հաւատաց:

9 Ինչու որ՝ դեռ զրքերուն բոսածը չէին գիտեր, թէ՝ պէտք է որ ան՝ մեռելներէն յարութիւն առնէ:

10 Ան աշակերտները ելան նորէն միկալնանց քովը գացին :

11 Իսկ Մարեամը՝ (հոն) գերեզմընին դուրսի դին կեցեր էր՝ ու կուլար . ու լալու ատենը դէպի գերեզմանը ծռեցաւ (նայելու):

12 Ու (ան տեղը) երկու հրեշտակ տեսաւ՝ ճերմակ լաթեր հա-

մի՝ ի մնարէից, և մի՝ յանո-
տից՝ ուր կայր մարմինն յի-
սի :

13 Եւ նոքա՝ ասեն ցնա.
կին դու, զի լաս : ասէ ցնոսա.
զի բարձին զտէրն իմ՝ ի գե-
րեզմանէ ասի՝ և ոչ գիտեմ
ուր եդին զնա :

14 Այս իբրև ասաց, դար-
ձաւ ի թիկունս կոյս, և տե-
սանէ զնի՝ զի կայր. և ոչ գի-
տէր թէ յի՛ն իցէ :

15 Ասէ ցնա յի՛. կին դու՝
զի լաս, զո՞ խնդրես : նման՝
այսպէս թուեցաւ՝ թէ պարտիզ-
պանն իցէ : ասէ ցնա. տէր՝
եթէ դու բարձեր զնա՝ ասա ինձ
ուր եդիր զնա, զի ես առից
զնա :

16 Ասէ ցնա յի՛. մարիամ:
և նա՝ դարձաւ և ասէ ցնա եբ-
րայեցերէն . բաբբունի , որ
թարգմանի՝ վարդապետ :

17 Ասէ ցնա յի՛. մի մեր-
ձանար յիս , զի չէ՛ս եղեալ
եմ առ հայր իմ. այլ երթ դու
առ եղբարսն իմ , և ասա ցնո-
սա. ելանեմ ես առ հայրն իմ՝
և առ հայր ձեր , և ածն իմ՝ և
ած ձեր :

18 Գայ մարիամ մագդաղե-
նացի՝ և պատմէ աշակերտացն
եթէ տեսս նա զտէր, և զայս ինչ՝
ասաց ցնա :

19 Եւ էր երեկոյ ի միաշա-
բաթուջ աւուրն . և դրօք փա-
կեալք՝ ուր էին աշակերտքն
ժողովեալ վասն ահից հրէից,
եկն յի՛ս և եկաց ի միջի նոցա,
և ասէ ցնոսա. ողջո՛յն ընդ ձեզ :

20 Իբրև զայս ասաց, ե-
ցոյց նոցա զձեռս՝ և զկողն իւր :

զած. որ նըստեբէչն, ուր որ յի՛ն
մարմինը զրած էր, մեկը գլխուն
գիշէն՝ ու մեկալը ոտքին գիշէն :

13 Ու անոնք իրեն ըսին. կը-
նիկ՝ դուն ինչո՞ւ կուլաս կոր : ա-
նոնց ըսաց. անոր համար որ՝ իմ
տէրը աս գերեզմընեն վերուցեր-
են, ու չե՛մ գիտեր ուր են զրըեր :

14 Այս երբոր ըսաց՝ մչմալ
իր եաին զարձաւ, ու տեսաւ որ
յի՛ը կեցեբէր. ու (ինքը) չեգիտ-
ցաւ որ՝ ան յի՛ն է :

15 Յի՛ս ալ իրեն ըսաց. կընիկ՝
դուն ինչո՞ւ կուլաս՝ ո՛վ կըփընտ-
ռես կոր : իրեն ալ անանկ երև-
ցաւ՝ որ ան պարտեզպանը ըլլա.
(ու) անոր ըսաց. տէր՝ թէ որ ան
դուն վերցուցիր՝ ինծի ըսէ ուր
զրեբես . որ ես անիկա առնեմ :

16 Յի՛ս ալ անոր ըսաւ. մարե-
ամ : ու ինքնալ զարձաւ անոր
երբայեցներէն ըսաց՝ բաբբու-
նի՝ որ ըսել է՝ վարդապետ :

17 Յի՛ս իրեն ըսաւ. ինծի մի
դպչիր. ինչու որ՝ դեռ (ես) իմ
հօրըս քովը չե՛մ եկեր. միան թէ՝
դուն իմ եղպարներուս գնա, ու
անոնց ըսէ. (որ) ես՝ իմ հօրըս
քովը կերթեմ՝ ու ձեր հօրը քով,
ու իմ աստուծուս քո՛վ՝ ու ձեր
աստուծուն քո՛վ :

18 Մարեամ մագտալենացին-
ալ կուգա, ու աշակերտներուն
կըպատմէ, որ ինքը տրը տեսեբէ,
ու աս բաներս իրեն ըսեր է :

19 Ու մչկաբթինօրը իրիկվան
ատեն. ու դրռներնալ գոց, հո՛ն՝
ուր որ աշակերտները մչտեղ ժո-
ղված էին՝ հրեաներուն վախէն,
յի՛ը եկաւ՝ ու անոնց մէջը կեցաւ,
ու իրենց ըսաց. սխաո՛ւն ձեզի :

20 Այ՛ որ ըսաց, իրեն ձեռ-
վրներն ու կողը անոնց ցըցուց :

և խնդացին աշակերտքն իրեւ տեսին զայր :

21 Ասէ ցնոսա դարձեալ. ողջոյն ընդ ձեզ, որպէս առա-քեաց զիս հայր իմ, և ես ա-ռաքեմ զձեզ :

22 Եւ զայս իրեւ ասաց, փչեաց ՚ի նոսա՝ և ասէ. ա-ռէք հոգի սուրբ.

23 Եթէ ումեք թողուցուք գմեղս, թողեալ լիցի նոցա. եթէ զուրուք՝ ունիցիք, կա-լեալ լիցի :

24 Իսկ Թովմաս՝ մի յերկո-տասանիցն անուանեալն երիու-որեակ, ոչ էր ընդ նոսա յոր-ժամ եկն յի :

25 Ասէին ցնա այլ աշա-կերտքն, եթէ տեսաք զայր : և նա՝ ասէ ցնոսա. եթէ ոչ տե-սից ՚ի ձեռս նորա գնշան բևե-ռացն, և արկից զմատունս իմ ՚ի տեղիս բևեռացն, և վերկից զձեռս իմ ՚ի կողս նորա, ոչ հաւատամ :

26 Եւ յետ ութ աւուր՝ դար-ձեալ էին ՚ի ներքոյ աշակերտ-քըն, և Թովմաս ընդ նոսա. գայ յի ղրօքն փակելովք, և ե-կաց ՚ի միջ, և ասէ. ողջոյն ընդ ձեզ :

27 Ապա ասէ գԹովմաս. բեր զմատունս քո և արկ այսր, և տես զձեռս իմ, և բեր զձեռն քո, և վերկա ՚ի կողս իմ, և մի լինիր անհաւատ՝ այլ հաւատացեալ :

28 Պատասխանի Թովմաս՝ և ասէ ցնա. ՚ո՛ր իմ՝ և ած իմ :

29 Ասէ ցնա յի. այդ զի տեսերդ զիս՝ և հաւատացեր, երանի որոց ոչ իցէ տեսեալ՝ և հաւատացեն :

աշակերտներնալ երբոր ՚որը տես-ան՝ ուրախացան :

21 Դորէն անոնց ըսաւ. ող-ջունն ձեզի. ինչպէս որ որ իմ հայրը իս խրկեց՝ անանկ ես-ալ ձեզ կրնխրկեմ :

22 Ու սա որ ըսաց, զէպի ա-նոնց վրա փըչեց՝ ու ըսաւ. հոգին սուրբը առէք.

23 Թէ որ (դուք) մէկուն մեղքը Թողուք՝ ան իրենց Թողված ըլլա՝ Թէ որ մէկուներ ետ բըռնէք՝ ան բըռնըված ըլլա :

24 Տայց Թումասը՝ ան տաս-վերկուքէն մէկը՝ որ ինքը երկ-վորեակ կըսվէր, անոնց հետը չէը՝ երբոր յիսը (հոն) եկաւ :

25 (Ետև) մէկալ աշակերտնե-րը իրեն կըսէին որ՝ մենք տե-սանք : անալ անոնց ըսաց, Թէ որ (ես՝) անոր ձեռքը բևեռներուն նշանը չի տեսնեմ, ու իմ մատ-վընիերըս բևեռներուն տեղը չի-դնեմ, ու իմ ձեռքըս անոր կողը չի խօթեմ՝ չեմ հաւատար :

26 Անկէ ութը օրէն ետև՝ նո-րէն հիմալ աշակերտները որ հոն ներսն էին, ու Թումասնալ անոնց հետը՝ դրռնները գոց կե-ցած. յիսը եկաւ ու իրենց մէջերնին կայնեցաւ ու ըսաց. սխամն ձեզի:

27 Ետկը Թումասին ըսաւ. քու մատովընիերդ բեր ու հոս դպցուր՝ ու իմ ձեռվընիերս նայէ. ու քու ձեռքդ բեր՝ ու իմ կողըս խօթէ. ու ալ ան հաւատ մըլլար, հապա՝ հաւատացեալ (եղիր) :

28 Թումասնալ պատասխան տըվաւ՝ ու իրեն ըսաւ. իմ տէրըս, ու իմ ած իս :

29 Յիսու անոր ըսաց. մա որ (դուն) իս տեսար՝ ու հաւատա-ցիր. երնէկ անոնց՝ որ չէն տե-սած՝ ու պիտի հաւատան :

30 Բազում և այլ նշանս արար յս առաջի աշակերտացն իւրոց, որ ոչ է գրեալ ի գիրս յայսմիկ :

31 Այլ այս՝ այնչափ ինչ գրեցաւ, զի հաւատայցէք եթէ յս՝ քս է, որդի այ · և զի հաւատացեալք, և զկեանն յաւիտենականս ընդունիցիք յանունն:

30 Յիսուսիկ շատ հրաշքներ ըրաւ իր աշակերտներուն դիմացը, որ անոնց մէջը գրըված չէ :

31 Հապա ասոնք (հոս միայն) անքան գրվեցաւ, որ հաւատաք՝ թէ յիսը քս է՝ որդի այ . ու հաւատալով, յաւիտենական կեանք ընդունիք՝ իր անունովը :

ԳԼ · ԻՍ·

1 Յետ այսորիկ դարձեալ յայտնեաց դանձն իւր յս աշակերտացն իւրոց՝ առ ծովեզերբն տիբերեայ. և յայտնեաց այսպէս :

2 Եին ի միասին սիմովն պետրոս, և թովմաս՝ անուանեալն երկուորեակ, և նաթանայէլ որ ի կանայ գալիլեացւոց, և որդիքն զեբեդեայ, և այլք յաշակերտաց անտի երկու :

3 Ասէ ցնոսա սիմովն պետրոս՝ երթամ ձուկն որսալ : ասեն ցնա . գամք և մեք ընդ քեզ : գնացին և մտին ի նաւ՝ և յայնմ գիշերի կալան՝ և ոչ ինչ :

4 Իբրև այդ եղև՝ կայր յս յեզր ծովուն, բայց ոչ ծանեան աշակերտքն թէ յս էցէ :

5 Ասէ ցնոսա յս. մանկունք՝ միթէ ունիք ինչ ուտելոյ : պատասխանի ետուն և ասեն ցնա, ոչ :

6 Ասէ ցնոսա · արկէք յաջակողմն նաւին զուարանդ՝ և գտանիցէք : արկին՝ և ոչ կարէին ձգել ի բազմութենէ անտի ձկանցն :

7 Ասէ աշակերտն այն զոր

30 Յիսուսիկ շատ հրաշքներ ըրաւ իր աշակերտներուն դիմացը, որ անոնց հապա գրըված չէ :

31 Հապա ասոնք (հոս միայն) անքան գրվեցաւ, որ հաւատաք՝ թէ յիսը քս է՝ որդի այ . ու հաւատալով, յաւիտենական կեանք ընդունիք՝ իր անունովը :

1 Ասկէ ետև՝ յիսուսիկ դարձեալ ինքզինքը յայտնեց՝ տիբերեա ծովին եզերքը . ու ան՝ ասոնկ յայտնեց :

2 Սիմոն պետրոսը, ու թոմասը երկվորեակ բսլածը, ու նաթանայէլը՝ որ կանա գալիլեացիներէն էր, ու զեբեդեայինի որդիքը, ու ուրիշ երկուքալ ան աշակերտներէն, (ասոնք ամմնը) միասին էին :

3 Սիմոն պետրոսը անոնց ըսաւ · (ես) կերթամ որ ձուկ բռնեմ : անոր ըսին · մենքալ քու հետդ կուգանք: գացին ու նաւը մտան, ու ան գիշերը բանմը չկրնացին :

4 Երբոր առաւոտ եղաւ՝ յիսուսիկ եզերքը կեցեր էր · բայց աշակերտները անիկա չէին ճանչցան՝ որ յիսուս է :

5 Յիսուս անոնց ըսաւ · տըղաք՝ ուտելու բանմը ունիք մի : պատասխան տըվին ու իրեն ըսին թէ՝ չէ :

6 Անոնց ըսաւ · ուսկանկիպ նաւին աջ կողմը ձգեցէք՝ ու կգտնաք : (անանկ որ) ձգեցին, ալ չէին կրնար քաշէը ան ձկներուն շատութենէն :

7 Ան աշակերտը՝ որ յիսուսիկ

սիրէցն յն՝ ցպետրոս . ո՞ր է այն : սիմոնին պետրոս լրբև լուաւ թէ ո՞ր է, արկաւ զիւրև զսփածանելին՝ քանզի մերկ էր, և ընկէց զինքն ՚ի ծովն :

8 Եւ այլ աշակերտքն նաւուն իսկ գային, քանզի չէին հեռի ՚ի ցամաքէն, այլ իբրև երկերիւր կանգնաւ . քարշէին զցորթիան հանդերձ ձկամբն :

9 Իբրև ելին ՚ի ցամաք, տեսանեն կրակ՚ոտ կայծականց, և ձուկն մի ՚ի վերայ . և ցոյց :

10 Ասէ ցնոսա յն . բերէք ինձ ՚ի ձկանց այսմ՝ զոր դուք կալաքուք այժմիկ :

11 Ելաւ սիմոնին պետրոս, և ձգէր զցորթին ՚ի ցամաք՝ լի մեծամեծ ձկամբք, հարեւր և յիսուն և երիւք . և այնչափ ինչ կայր, և ոչ պատառեցաւ զորթին :

12 Ասէ ցնոսա յն . եկայք ճաշեցէք : և ոչ ոք յաշակերտացն իշխէր հարցանել թէ դու ո՛վ ես, զի գիտէին թէ տէրն է :

13 Գայ յն և առնու զհացն՝ և տայ նոցա, նոյնպէս և զձուկնն :

14 .Օայս երիցս անգամ երևեցաւ յն աշակերտացն՝ յարուցեալ ՚ի մեռելոց :

15 Եւ իբրև ճաշեցին, ասէ ցսիմոնին պետրոս յն . սիմոնին յովհաննու՝ սիրէս զիս առաւել քան զոսոսա : ասէ ցնա . այո տէր, և դու գիտես զի սիրեմ զքեզ : ասէ ցնա, արածեա զառաքինս իմ :

16 Դարձեալ ասէ ցնա, սիմոնին յովհաննու սիրէս զիս : ասէ կըսիրէք՝ պետրոսին ըսաց . անի կա տէրն է . սիմոն պետրոսնալ լսելունուէս որ տէրն է, լաթմէ առաւ փաթարվեցաւ՝ որ մերկիկ էր, ու ինքը ծովը նետեց :

8 Ու մկալ աշակերտներնալ նաւով եկան կուգային կոր, որ ցամաքէնալ հեռու չէին՝ հապա միայն երկու հարիւր կանկունի չափ, որ ուռկանը ան ձըկներովը (լիք) կըքաշէին :

9 Երբոր ալ ցամաքը ելան, (հոն) կըտեսնան կրակ վառած՝ ու (անոր) վրան ձուկմը . ու հաց :

10 Յն իրենց ըսաց .ատ ձկներէն ինձի բերէք՝ որ դուք հիմա բռնեցիք :

11 Սիմոն պետրոսնալ (նաւը) մտաւ՝ ու ուռկանը ցամաքը կըքաշէր՝ խոշոր խոշոր ձըկներով լիք, որ հարուր յիսուն վիրէք հատ էր . ու անքան բան որ կար՝ զորթիքնալ չէ պատռեցաւ :

12 Յն անոնց ըսաց . եկէք կերակուր կերէք : ու ան աշակերտներէն՝ մէկնալ երես չէղէ մացուց չարցունելու թէ՝ դուն ո՛վ ես . որ՝ ալ գիտէին թէ ան տէրն է :

13 Յն ալ եկաւ ու հացը առաւ՝ անոնց տրվաւ, անանկալ՝ ձուկը :

14 Ա՛յ՝ իրէք տեղը՝ որ յն աշակերտներուն երևցաւ՝ (ինքը) մեռելներէն յարութէն առած :

15 Ու երբոր ալ հացկերնին կերան՝ յն սիմոն պետրոսին ըսաւ . սիմոն յունանին (որդին), իս առանցմէ էվէլ կըսիրես մի : (անալ) իրեն ըսաց . անանկ է տէր, գիտնալ գիտես որ քեզ կըսիրեմ : անոր ըսաւ . իմ գառնուկներըս արածէ :

16 Դ՚որէնն անոր ըսաւ . սիմոն յունանին՝ իս կըսիրես մի : իրեն

սէ ցնա. այո՛ ՏԸ, և դու զի-
տես զի սիրեմ զքեզ: ասէ ցնա՝
արածեա զոչխարս իմ :

17 Ասէ ցնա երկրորդ անգամ.
սիմոնի յովհաննու սիրես զիս :
տրտմեցաւ պետրոս՝ զի ասաց
ցնա երկրորդ՝ թէ սիրես զիս, և
ասէ ցնա . ՏԸ՝ դու գամենայն
զիտես, և դու իսկ՝ գամենայն
Հանգերես, և եթէ սիրեմ զքեզ :
ասէ ցնա յի· արածեա զոչխարս
իմ :

18 Ամէն ամէն ասեմ քեզ·
զի մինչ մանուկն էիր՝ անձամբ
անձին զօտի ածէիր, և եր-
թայիր յո՛ և կամէիր· և յորժամ
ծերասցիս, ձեռս ի վեր կալ-
ցես՝ և այլք ածցեն քեզ զօտի,
և տարցեն ուր ոչ կամիցիս :

19 Օ այս ասաց՝ նշանա-
կեալ թէ որով մահու փառա-
ւոր առնիցէ զԱՀ : և զայս երբ
ըմ ասաց՝ ասէ ցնա . ես զկնի
իմ :

20 Դարձաւ պետրոս՝ և տե-
սանէ զաշակերտն զոր սիրէր
յի՝ զի երթայր զկնի : որ և
անկաւ գլանջսքն նորա՝ և ա-
սէ, ՏԸ ո՞վ է որ մատնելոցն է
զքեզ :

21 Օ նա՝ տեսեալ պետրոսի,
ասէ ցյի· ՏԸ՝ իսկ սա՝ զի՞ :

22 Ասէ ցնա յի· եթէ կա-
միմ զի կացցէ դա՝ մինչև ես
գամ, քեզ զի՞ փոյթ է. դու զկ
զկնի իմ :

23 Եւ ել բանս այս յեղ-
բարս, և համարեցան թէ ա-
շակերտն այն ոչ մեռանիցի· և
ոչ ասաց նմա յի, եթէ ոչ մե-
ռանիցի· այլ թէ կամիմ ես՝
թէ կացցէ դա մինչև ես գամ:

ըսաց. անանկէ ՏԸ, դուն զի-
տես որ քեզ կըսիրեմ : անոր ը-
սաւ, իմ ոչխըրըներըս արածէ :

17 Էկյամալ երկք հեղուն ը-
սաց· սիմոն յունանին՝ ես կըսի-
րես մի: պետրոսը ալ տըրտմ-
ցաւ՝ որ երկք հեղ երբեն ըսաց
թէ՝ ես կըսիրես մի. ու անոր ը-
սաւ· Տ՛ը դուն ամմէն բան գիտես,
ու ամմէն բանը կըհանգերես, ու
ան՝ որ (ես) քեզ կըսիրեմ: յի երբեն
ըսաց· իմ ոչխըրըներըս արածէ :

18 Ի դրդ հմարիա քեզի կը-
սեմ, որ երբոր (դուն) տղա էիր՝
ինքիրմէդ զօտիդ կըհագցիր, ու
ուր որ կուգիէիրնէ կերթայիր· ու
որ ատեն ծերանալու կըլլաս՝ ձեռ-
վըներդ վեր կը բանես՝ որ ու-
րիշները քեզի զօտի կապեն, ու
հոն տանին՝ ուր որ չես ուզեր :

19 Այս ըսաց, ան ցըցունելով
որ՝ (ինքը) ՏՆՋ մահով պիտոր ՅԱ
փառաւորէ : ու աս ըսելեն ետկը՝
երբեն ըսաւ, իմ ետևէս եկոր :

20 Պետրոսը (իր ետևը) դար-
ձաւ, ու տեսաւ որ ետևանցը կու-
գակոր ան աշակերտնալ՝ որ յի
ինքը կըսիրէր, ու որ անոր կուրծ-
քին ինկաւ ու ըսաց, Տ՛ը ան ովՀ
է որ քեզ պիտի մատնէ :

21 Պետրոսը՝ անիկա որ տեսաւ,
յիի ըսաց· տէր՝ հապա ասիկա
ՏՆՋ (պիտի ընէ) :

22 Յի երբեն ըսաւ· թէ որ (ես)
ուզեմ որ՝ ատիկա կենա՝ ինչվան որ
ես գամ, ան քու ՏՆՋ հոգդ է.
(դուն) իմ ետևէս եկոր :

23 Ու աս խօսակցս եխպարնե-
րուն մէջ կըզրուցվէր, ու անանկ
կըսեպէին որ՝ ան աշակերտը պի-
տի չ մեռնի. ու յի անոր չըսաց որ
չ մեռնի, հապա՝ թէ որ ես ուզեմ
որ ատիկա կենա ինչվան ես գամ:

24 Այս աշակերտ է՝ որ վկայէ վասն այսոցիկ, որ և գրեացն իսկ գայսոսիկ. և գիտեմք, եթէ ճշմարիտ է վկայու-թիւն նորա.

25 Բայց է և այլ ինչ բազում՝ զոր արար յս, զոր եթէ գրեալ էր մի ըստ միոջէ, կարծեմ թէ և ինքն աշխարհս բաւական էր տանել զգիրսն, որ թէ գրեալ էին:

24 Այս ան աշակերտն է՝ որ ասս բաներս համար կըվկայէ, ու ինքն է՝ որ ասս բաներս ալ գրեց. ու գիտենք որ՝ անոր (ըրած) վկայու-թիւնը ճշմարիտ է:

25 Մէան թէ՝ ուրիշ շատ բաներ կան որ յիր ըրաւ. որ թէ ա-նոնք միկիկ միկիկ գրված ըլլար, կարծեմ որ աշխարքս ալ չերիք չէր ան գրքերը միջը սըդմըվ-լու՝ թէ որ գրված ըլլային:

ՍԻՆՏԱՐՍՆ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆՈՒ:

ԳՈՐԾՔ ՍՈՒՏԿԵԼՈՑ

ԳԼՈՒԽԱՑ ՍԻՆՏԱՐՍՆՉԻ:

ԳԼ. Ա.

1 Զբանն առաջին զոր արարի ի Թէոփիլէ՛ զոր սկսաւ յի՝ առնել և ուսուցանել.

2 Մինչև յօրն պատուիրելոյ առաքելոցն՝ ի Հոգւոյն սրբոյ, զորս ընտրեացն. և վերացաւ:

3 Որոց յանդիման կացոյց զինքն կենդանի յետ չարչարանացն ի բազում՝ արուեստս, յաւուրս քառասուն երևել նոցա՝ և ասել վասն արքայութեանն այ:

4 Եւ՝ ի հաղորդել ընդ նոսա հայիւ, պատուէր տայր նոցա՝ յերուսաղէմ մի մեկնել, 1 Զբանն առաջին զոր ա-րարի ի Թէոփիլէ՛ (ես) ան ամէն բաներուն վրա ըրի, որ ըսկիսալէն հետէ յիր ըրաւ՝ ու սորվըցուց.

2 Մինչվան ան օրն որ (երկինքը) վերցաւ, հոգով սրբով՝ խրատներ տալով ան առաքեալներուն որ ինքը ընտրեր էր:

3 Որ՝ ան իր չարչարանքերէն ետև՝ զինքը ասիկա անոնց դիմացը կեցուց, ու շատ ցիանալի կերպե-րով՝ քառասուն օր իրենց երևցաւ, ու այ արքայութեան համար (հե-տերնին) խօսեցաւ:

4 Ու անոնց հետ (նստած) հաց ուտելու որ եղաւ, իրենց կապըս-պըրըր որ եղէմէն չի զատվին.

այլ սպասել աւետեացն Հօր՝ զոր լուարուք ի նմանէ :

5 Ո՛ի Յովհաննէս մկրտեաց ՝ի ջուր · այլ դուք մկրտեցիք ՝ի Հոգին սբ , ոչ յետ բազում ինչ աւուրցս այսոցիկ :

6 Եւ նոքա մատուցեալ հարցանէին զնա՝ և ասէին . Տէր՝ եթէ ՝ի ժամանակի սմա յայսմիկ Հատուցանես իսրայէլ զթագաւորութիւնն իսրայէլի :

7 Ա՛ոչ ցնոսա · ոչ է ձեզ գիտել զժամս և զժամանակս , զոր Հայր եդ ի բռնա՛ւ իշխանութեան :

8 Այլ առնիք զօրութիւն՝ ՝ի հասանել Հոգւոյն սրբ ՝ի վերայ ձեր. և եղիջիք ինձ վկայք յերուսաղէմ , և յամենայն հրէաստանի՝ և ՝ի սամարիայ , և մինչև ՝ի ծագս երկրի :

9 Եւ զայս իբրև ասաց՝ մինչ դեռ Հայէին նոքա՝ վերացաւ . և ամպն կալաւ զնա յաչս նոցա :

10 Եւ մինչ դեռ պշուցեալ Հայէին ընդ երկինս երթալոյ նորա, և ահաւասիկ արք երկու երևեցան նոցա ՝ի Հանդերձս սպիտակս ,

11 Որք և ասացին . արք գալիլեացիք՝ զի կայք Հայեցեալ ընդ երկինս · այս յի՝ որ վերացաւ ՝ի ձէնջ յերկինս , սոյնպէս եկեսցէ՝ զոր օրինակ տեսէք զնա երթեալ յերկինս :

12 Այսպա դարձան յերուսաղէմ՝ յանուանեալ լեռնէն ձիթենեաց , որ է մերձ յերուսաղէմ՝ բան շաբաթուն Հանապարհի :

13 Եւ իբրև մտին , ելին ՝ի վերնատունն ուր վանքն իսկ էին. պետրոս , և յակովբոս , և Հապա (Հն) բպասեն Հօրը աւետումին, որ ան իսմ ըսերէք(բսաւ):

5 Պատճառն որ՝ յոհաննէսը ջրով մկրտութին բրաւ · բայց դուք՝ ասկէց շատ օրեր չանցած՝ Հոգին սրբով պիտի մկրտվիք :

6 Անոնք ալ եկան՝ իրեն կըՀարցրնէին՝ ու կըսէին · Տէր՝ ալ բան ատ տե՞ն է որ՝ (դուն) իսրայէլի թագաւորութիւնը պիտի կայնեցնես :

7 Անոնց բսաց. (ան) ժամերն ու ժամանակները գիտնալը ձեր բանը չէ · որ անոր ատենը՝ Հայրը իր իշխանութեան մէջը կրպահէ :

8 Այլ Հոգին սբը ձեր վրա ինջած ատենը՝ (դուք) ուժմը պիտի առնէք , որ ինծի համար վկա ըլլաք եղեմա մէջ , ու բոլոր Հրէաստանը , ու սամարիան , ու ինչվան աշխրքին ծարերը :

9 Ու աս որ բսաց , դեռ անոնք որ (իրեն) կընայէին կոր՝ դպի վեր վերցաւ . ու ամպմրնալ (եկաւ) ինքը անոնց աչվընէրնէն բրաւնց :

10 Ու անանկ պըշած որ դէպի երկինքը անոր երթալուն կընայէին, ահմյալ եղաւ որ երկու Հոգի վրանին ձերմակ Հագված իրենց երևցան ,

11 Ու (անոնց) բսին · ով գալիլեացի մարդիք՝ ինչ կեցեր դէպի երկինքը կընայիք կոր · աս յիր որ ձեզմէն եղաւ երկինքը վերցաւ, անանկալ պիտոր դա՝ ինչպես որ իր երկինքը երթալը տեսաք :

12 Եկաւ ան ձիթենեաց բսած լեռէն երուսաղէմ դարձան · որ շաբաթի օրը Ճամբա բնելու չափ՝ ան տեղը երուսաղէմա մօտ է :

13 Ու երբոր եկան (Հն) մտան՝ (շինած) ան վերնատունն ելան՝ ուր որ իրենց բուն բնակարանն էր,

յովհաննէս, և անդրէասն. փի-
լիպպոս, և Թովմաս. բար-
թողիմէոս, և մատթէոս. յա-
կովբոս ալփեան, և շմաւոն նա-
նանձայոյզ, և յուդա յակով-
բեան:

14 Այսպէս ամենեքեան էին
հանապազորդեալ միաբան յա-
ղօթս հանդերձ կանանմբք, և
մարեմաւ մօրըն յի՛ս՝ և եղ-
բարբք նորա:

15 Եւ յաւուրսն յայնոսիկ
յարուցեալ պետրոս՝ ի միջ եղ-
բարցն՝ ասէ. և էր անդ բազ-
մութիւն անուանց իբրև հա-
րեւր և քսանից:

16 Այրք եղբարք՝ պարտ էր
կատարել զրոյն. զոր յառա-
ջագոյն ասաց հոգին սբ՝ ի բե-
րանոյ դաւթի, վասն յուդայի՝
որ եղև առաջնորդ ունելեացն
յի՛ս:

17 .Օ՛ի՝ ի թիւս մեր էր ընդ
մեզ, և հասեալ էր նմա վի-
ճակ պաշտամանս այսորիկ:

18 Այս՝ ստացաւ զեաւղ՝ ի
վարձուց անիրաւութեան, և
ուռուցեալ հերձաւ ընդ միջ՝
և հեղաւ ամենայն փոր նորա:

19 Եւ յայտնի եղև ամենե-
ցուն որ բնակեալ են յերուսա-
ղէմ. մինչև կոչել զեաւղն
այնմիկ՝ բարբառաւին իւրեանց՝
ակեղդամա. այսինքն է՝ զեաւղ
արեան:

20 .Օ՛ի գրեալ է՝ի գիրս
սաղմոսաց. եղիցի բնակու-
թիւն նորա աւերակ, և մի՛ ոք
լիցի որ բնակիցէ՝ի նմա. և
զկարգ նորա առցի այլ:

21 Այրդ՝ պարտ է յարանցս
յայսցանէ, եկելոցս ընդ մեզ
յամենայն ժամանակի՝ յորում
մուտ և ել առ մեզ տէր յի՛ս,

պետրոսը, ու յակոբոսը, ու յո-
հաննէսը, ու անդրէասը. փիլի-
պոսը, ու թուամասը, բարթողո-
մէոսը, ու մատթէոսը. յակոբոս
ալփեանը, ու շմաւոն նախան-
ձայուղը, ու յուդա յակոբեանը:

14 Սոսկը ամէնը միշտ անպա-
կաս (հոն մէյտեղ) աղօթքի հետ
էին. հետերնին կնքաթէքնալ, ու
յիսի մարը մարեամը, ու անոր
եղպարներուն:

15 Ու ան օրերը պետրոսը ան
եղպարներուն միջը ելաւ՝ բաց.
ու հինգ շատ հոգիք կային՝ որ
հարուր քսանի չափ կըլլային:

16 Մարդիք եղպարներ՝ պէտք
էր որ ան գրքուածքը կատարվի.
որ հոգին սբ առաջուցմէ դաւիթի
բերնովը ըսեր էր յուդային հա-
մար, որ յիսը բռնողներուն ա-
ռաջնորդը եղաւ:

17 Որ ինքնալ մեզի հետ՝ մեր համ-
րանքին մէջն էր, ու աս մեր պաշ-
տօնիս մէջ մասնուբաժին ունէր:

18 Այսիկա անիրաւ վարձկովը
զեղեմը տէր եղաւ. ու ուռեցվո-
բած՝ մէջտեղէն հրխկըվեցաւ, ու
բոլոր իր փորը դուրս թափեցաւ:

19 Ու ան անանկ յայտնի եղաւ
բոլոր երուսաղէմ բնակողներուն,
որ՝ ալ ան գեղին անունը՝ ի-
րենց լեզվովը ակեղդամա կանչե-
ցին, որ՝ արունի գեղ՝ ըսել է:

20 Ինչու որ՝ սաղմոս գրքին մէ-
ջը գրված է (թէ՝) իր բնակարանը
աւերակ պիտոր ըլլա, որ ալ ա-
նոր մէջը մէկը չի բնակի. ու ա-
նոր պաշտօնը ուրիշմը առնի:

21 Ուստի պէտք է որ՝ աս մար-
դիկներէս՝ որ մեր հետը եղան ան
բոլորատենն որ տէր յիսը մէջերնիս
վարվեցաւ,

22 Ակսեալ ՚ի Մկրտութենէ նէն յովհաննու մինչև յօրն՝ յոր բարձաւ ՚ի մէնջ · վկայ յարութեան նորա ընդ մեզ լինել միւմ ՚ի սոցանէ :

23 Եւ կացուցին երկուս . զյովսէփ՝ որում բարսաբայն կոչէին, որ անուանեցաւն յուստոս . և զմատաթիայ :

24 Եւ կացեալ յաղօթս՝ ասեն · դու տէր՝ սրտագէտ ամենայնի՝ յայտնեա զմի ոք զոր ընտրեցեր ՚ի սոցանէ յերկոցունց ,

25 Առնուլ զվիճակ պաշտաման այսորիկ՝ և զառաքելութեան, յորմէ անկաւ յուդաս, գնալ ՚ի տեղի իւր :

26 Եւ ետուն վիճակս նոցա , և ելանէր վիճակն մատաթիայ · և համարեցաւ ընդ մի տասան առաքեալսն :

22 Յոհաննէսէն մկրտութենէն ըսկսած՝ մինչեան այն օրն որ ինքը մեզմէ վերցաւ · որ ատենմէ մեկը (ընտրվի, որ) մեզի հետ անոր յարութեան առնելուն վկայ ըլլա:

23 Ու երկու հոգի դնմացնին հանեցին . յուսեփը՝ որ ան բարսաբաս կըկանչին, որ յուստոսալ ըսվեցաւ · ու մատաթեան :

24 Ու աղօթք ընելով՝ կսկին. ՚ըր՝ դուն որ ամմէնուն սիրտը գիտես , աս երկուքէս մեկը մեզի ցըցուր , ան որ դուն հընտրեցիս ·

25 Որ աս պաշտօնըս՝ ու առաքեալ ըլլալու վրէնակը ան առնէ , որ յուդան անկէց վար ինկաւ, որ (դուն) իր տեղը երթա :

26 Անոնկ՝ վրանին վրէնակ ձգեցին, ու վրէնակը մատաթեայնն ելաւ· ու ալ (անիկա՝) տասվերկու առաքելոց հետ սեպվեցաւ :

ԳԼ· Բ·

1 Եւ ՚ի կատարել աւուրցն պենտակոստէից , էին ամենեքեան միաբան ՚ի միասին :

2 Եւ եղև յանկարծակի հընչիւն յերկնից՝ եկեալ երբեմն սաստիկ հողմոյ· և ելից զամենայն տունն յորում նստէին :

3 Եւ երևեցան նոցա բաժանեալ լեզուք երբեմն ՚ի հրոյ, և նստաւ իւրաքանչիւր ՚ի վերայ նոցա :

4 Եւ լցան ամենեքեան հոգւով սրբով , և սկսան խօսել յայլ լեզուս՝ որպէս և հոգին տայր բարբառել նոցա :

5 Եւ էին յերուսաղէմ բնակեալ հրեայք արք երկիւղածք, յամենայն ազգաց որ ՚ի ներքոյ երկնից :

1 Ա ՚ր պենտէկոստէին օրերը լըմընալու առնը՝ ամմէնը միտեղ միաբան որ կեցերէին ,

2 Մէյմալ անկարծակի երկընքէն ըընտուիմը եգաւ՝ սաստիկ հովիմըպէս եկած , ու լեցուց բոլոր ան տունն որ նստերէին :

3 Ու կրակէ փրթածփոխս (բոցի) լեզուներ անոնց երևցաւ . որ (եկաւ) ան ամմէն մէկուն վրան նստաւ կեցաւ :

4 Ու ամմէնքնալ հոգով սրբով լեցվեցան , ու ըսկսան ուրիշ լեզուներով խօսիլ , ինչպէս որ հոգին անոնց զբուցընել կուտար :

5 Ու երուսաղէմը ամէնէն մարդիկ հրեաներ կըբընակէին՝ երկընքի ներքևն եղած ամմէն ազգերէն որ հոն եկեր էին :

6 Եւ իբրեւ եղեւ բարբառս այս, ելին միաբան բազմութիւնն և խառնեցաւ. զի լսէին յիւրաքանչիւր լեզուս խօսել նոցա:

7 Աքանչանային ամենեքեան, և զարմանային՝ և ասէին ընդ միմեանս. ոչ աւասիկ ամենեքեան սոքա որ խօսին՝ գալիլեացիք են.

8 Եւ զիարդ լսեմք մեք յիւրաքանչիւր բարբառս մեր՝ յորում ծնեալ եմք.

9 Պարթեւք, և մարք, և ելամացիք. և որ բնակեալ են ի միջագետս, ի հրէաստանի, և ի գամիրս, ի պոնտոս, և յասիա.

10 ի փռիւգիա՝ և ի պամփիւլիա, յեգիպտոս, և ի կողմանս լիբացւոց, որ ընդ կիւրենացիս, և որ ելք հռոմայեցիք:

11 Հրեայք, և ելք նոցուն, կրետացիք, և արաբացիք, լսեմք խօսիլ նոցա, ի մեր լեզուս զմեծամեծս այ:

12 Աքանչանային ամենեքեան զարմացեալք՝ և ասէին ցմիմեանս. զի՞նչ կամիցի այս լինել:

13 Եւ կիսոյն ընդ խաղ արկեալ՝ ասէին, եթէ քաղցուալից իցեն:

14 Յարուցեալ պետրոս հանդերձ տասանեքիւքն, ամբարձ զձայն իւր՝ և խօսեցաւ ընդ նոսա. արք հրեաստանեայք՝ և որ բնակեալ էք յերուսաղէմ ամենեքեան, այս ձեզ յայտնի լիցի՝ և ունկնդրեք բանից իմոց.

15 Ոչ որպէս դուք կարծէք

6 Ու ասս ձանս որ դուրս եկաւ, ալ շատվոր մը յտեղ եկան ու (հոն) դիպվեցան, որ կըլսէին իրենց՝ ամէն մէկուն լեզվովն որ անոնք կըխոսէին:

7 Ան ամենքնալ ափշած կ'եղեր՝ զարմանալով մէյմէկու կըսէին. ասոնք ամէնքը որ ասանկ կըխոսինկոր՝ իրենք գալիլեայի մարդիքը չէ՞ն մի.

8 Ա՛լ ինծոր ի՞նչ որ՝ մենք ան ամէն մէկուն բուած՝ բուն մեր լեզուներովը կըլսենք՝ որ անոր մէջը ծրներ ենք.

9 (Մենք՝) պարթեւներըս, ու մարերըս, ու ելամացիներըս, ու միջագետքը բնակողներըս, ու հրէաստան, ու գամիրքը, պոնտոս, ու ասիան.

10 փռիւգիան, ու պամփիլեան, եգիպտոսը, ու լիբացոց կողմերը. կիւրենացոց հետ, ու հռոմայեցոցմէ եկածները:

11 Հրեաները՝ ու անոնց դարձածները, կրետացիք ու արաբացիք. որ մեր լեզվովը կըլսենք ասոնց խօսած այ մեծ բաները:

12 Անանկ ամէնքնալ կափշէին կըզարմանային՝ ու իրարու կըսէին. ասս ինչ բան պիտոր ըլլա:

13 Եղանալ որ ծաղը բնելով կըսէին, որ (ասոնք) նոր անուշ գինիով հարբած են:

14 Պետրոս՝ ան տասներկուքին հետ՝ ելաւ ձայնը վերուց, ու անոնց խօսեցաւ. ով հրեայ մարդիք, ու դուք ամէնդ որ երուսաղէմ կըբնակիք, ասս աղէկ գիտցիք՝ ու իմ խօսքիս անկաճ դրէք.

15 Ասոնք հարբած չեն, ինչ-

ձէք՝ թէ սոքա արբեալ եցեն . դի դեռ երէք ժամք են աւուրս:
16 Այլ այս է՝ որ ասացաւ ՚ի ձեռն մարգարէին յովելեայ .
17 Եւ եղիցի յետ այսորիկ յաւուրս յետինս , ասէ Ած , չեղէց յոգւոյ իմմէ ՚ի վերայ ա_մենայն մարմնոյ . և մարգա_բեացին ուստերք ձեր և դուս_տերք ձեր, և երիտասարդք ձեր տեսիլս տեսցեն , և ծերք ձեր երազմամբ յերազեացեն :
18 Եւ ՚ի վերայ ծառայից իմոց՝ և ՚ի վերայ աղախնանց իմոց՝ յաւուրսն յայնոսիկ չե_ղէց յոգւոյ իմմէ, և մարգա_բեացին :
19 Եւ տայց նշանս յերկինս ՚ի վեր, և նշանս յերկիր ՚ի խոնարհ, արիւն՝ և հուր՝ և մրրիկ ծխոյ :
20 Արեգակն դարձցի ՚ի խաւար՝ և լուսին յարիւն , մինչչև եկեալ եցէ օր Ան մեծ և երևելի :
21 Եւ եղիցի՝ ամենայն որ կարդասցէ զանուն Ան՝ կեցցէ :
2 Ինչու որ՝ ան հոգւոյն կենաց օրէնքը՝ քո՛ով յի՛ով իս մեզքի ու մահու օրէնքէն խալըսեցին :

3 Պատճառ՝ ան որ անկարելի

բինացն՝ որով տկարանային մարմնով. ած զորդին իւր առաքեաց ՚ի նմանութիւն մարմնոյ մեղաց, և վասն մեղաց, և դատապարտեաց զմեղս ՚ի մարմնի անդ :

4 .Օ.ի արդարութիւն օրինացն կատարեսցի ՚ի մեզ, որք ոչ ըստ մարմնոյ գնայցեմք՝ այլ ըստ հոգւոյն :

5 .Օ.ի որք ըստ մարմնոյն են, զմարմնոյն խորհին, և որք ըստ հոգւոյն՝ զհոգւոյն :

6 .Օ.ի խորհուրդ մարմնոյ՝ մահ է. և խորհուրդ հոգւոյն՝ կեանք և խաղաղութիւն :

7 Քանզի խորհուրդ մարմնոյ թշնամութիւն է յած. զի օրինացն այ ոչ հնազանդի, նա՝ և կարէ իսկ ոչ :

8 .Օ.ի որ մարմնոյն են, այ հաճոյ լինել ոչ կարեն :

9 Իսկ դուք՝ ոչ էք մարմնով՝ այլ հոգւով, եթէ իցէ հոգին այ ՚ի ձեզ բնակեալ. ապա եթէ ոք զհոգի քրիստոսի ոչ ունի, սա՝ չէ նորա :

10 Իսկ եթէ քրիստոս ՚ի ձեզ է, ապա մարմին մեռեալ է վասն մեղաց. և հոգին կենդանի է վասն արդարութեան :

11 Եթէ հոգի այնորիկ որ յարոյցն զյս ՚ի մեռելոց բնակեալ է ՚ի ձեզ, ապա և որ յարոյցն զքրիստոս ՚ի մեռելոց՝ կենդանացուսցէ զմահկանացու մարմինս ձեր բնակեալ ոգւովն իւրով ՚ի ձեզ :

12 Այսուհետև եղբարք՝ պարտապան եմք, ոչ մարմնով ըստ մարմնոյ կեալ :

էր որ օրէնքըդ ընդ, ինչու որ՝ մարմնոս նայելով՝ ան տրկար էր, այ իր որդին խրկեց՝ մարմնով՝ մեղաւոր (մարդու) նման, ու մեղքի համար. ու ան մարմնուն մէջը՝ մեղքը դատապարտեց :

4 Որ օրէնքին արդարութինը մեր վրա կատարվի, որ մարմնուն (ուզածին) պէս չերթանք, հապա՝ հոգիներին պէս.

5 Ինչու որ՝ անոնք որ մարմնու պէս են՝ մարմնու բաներու խելք կուտան, ու անոնք որ հոգիներուն պէս՝ հոգու բաներու :

6 Պատճառն որ՝ մարմնուն խելք տալը՝ մահ է. ու հոգիին խելք տալը՝ կեանք ու խաղաղութիւն :

7 Ինչու որ՝ մարմնուն խելք տալը՝ այ (ղէմ) թշնամութիւն է. որ այ օրէնքին չի հնազանդիր, ու չի կրնար ալ (հնազանդիր) :

8 Անոր համար՝ անոնք որ մարմնուն պէս են՝ չեն կրնար այ հաճո ըլլար :

9 Իսկ դուք մարմնուն պէս չէք, հապա՝ հոգուն պէս, թէ որ այ հոգին ձեր մէջն է բնակված : Հապա թէ որ մէկը քրիստոսի հոգին չունինէ՝ անիկա անորը չէ :

10 Հապա թէ որ քրիստոս ձեր մէջն է, ալ մարմինը մեղքի համար մեռած է. ու հոգին՝ արդարութինի համար կենդանի է :

11 Թէ որ անոր հոգին՝ որ յիսուս մեռելներէն յարուց, ձեր մէջը բնակված է նէ, ալ անիկա որ քրիստոս մեռելներէն յարուց՝ ձեր մահկանացու մարմինը կրկենդանացնէ՝ իրեն հոգիովը՝ որ ձեր մէջը բնակված է :

12 Անանկ է նէ եղբայրներ՝ վրանիս պարտք չենք՝ որ մարմնաւիս մարմնուն (ուզածին պէս) ապրինք :

13 .Օ՛ի եթէ ըստ մարմնոյ կեցէք, մեռանելոց էք · իսկ ե՛թէ հոգւով զգործս մարմնոյ սպանանիցէք, կեցջիք :

14 .Օ՛ի որ հոգւոյմբ այ վարին, նոքա են որդիք այ :

15 .Օ՛ի ո՛չ առէք զհոգին ծառայութեան՝ միւսանգամ յերկիւղ, այլ առէք զհոգին որդեգրութեան · որով աղաղակեմք, աբբա, հայր :

16 Ինքն հոգին վկայէ հոգւոյս մերում, եթէ եմք որդիք այ :

17 Եւ եթէ որդիք, ապա և ժառանգք · ժառանգք այ՝ և ժառանգակիցք քրիստոսի : եթէ չարչարանացն կցորդ լինիմք, և փառացն հաղորդ լինելոց եմք :

18 Ինձ այսպէս թուի, եթէ ոչ են արժանի չարչարանք ժամանակիս հանդերձելոյն փառացն՝ որ յայտնելոց են ՚ի մեզ :

19 .Օ՛ի ակնկալութիւն արարածոյ՝ յայտնութեան որդւոցն այ սպասէ :

20 .Օ՛ի ընդունայնութեան՝ արարածքն հնազանդեցան, ո՛չ իւրեանց կամաւ, այլ վասն այնորիկ որ հնազանդեցուցին յոյսով :

21 .Օ՛ի և ինքեանք իսկ արարածքն ազատեսցին ՚ի ծառայութենէ ապականութե՛ան՝ յազատութիւն փառաց որդւոցն այ :

22 Գիտեմք զի ամենայն արարածք հեծեծեն և երկնեն մինչև ցայժմ :

23 Եւ ո՛չ այսչափ միայն .

13 Որ՝ եթէ մարմնաւնպէս ապրիլու լինիք՝ կմեռանիք · հապա եթէ որ հոգւով մարմնոյն գործքերը սպանանիք՝ ալ կապրիք :

14 Զի ամենայն որ այ հոգիէն զրդած կվարվին՝ իրենք այ որդիքն են :

15 Ինչու որ (դուք) ծառայութենի հոգին չէք առեր՝ որ միմիալ դեռ վախվըխելով երթաք, հապա՝ որդեգիրը ըլլալու հոգին առիք · որ անով՝ աբբա՝ (այսինքն՝) հայր՝ կըլսանչվըտանինք :

16 Ինքն ան հոգին է՝ որ մեր հոգուն համար կըվկայէ՝ որ (մենք) այ որդիքն ենք :

17 Ու եթէ որդիք (ենք՝) հապա ալ ժառանգներ (ենք) · այ ժառանգներ, ու քրիստոսի ընկերներ : (անանկ՝) եթէ որ (իր) չարչարանացը ընկեր ըլլանք՝ իր փառացն ալ հաղորդ կըլլանք :

18 Ինծի ասանկ կերեւա որ՝ աս ատենիս քաշած չարչարանքները հատասար չափի չեն եկար ան ըլալիք փառաւորութենին որ մեր ներսերնիս պիտի յայտնըվին :

19 Որ՝ (բոլոր) ըստեղծվածոց յոյսնալ այ որդուն յայտնըվելուն վրա գրած կըսպասէ :

20 Զի ամէնն որ՝ ըստեղծվածները փուճ բաներու տակ ինկան՝ չէ որ բուն իրենց կամքով , հապա՝ անոր համար՝ որ (անոնց) յոյս տալով տակ ձգեց :

21 Իրը թէ՝ իրենք ալ ըստեղծված ըլլալով ապականութենի ծառայութենէն ազատվին՝ այ որդուն փառաց ազատութենին պէս:

22 Աս ալ գիտենք որ՝ բոլոր ըստեղծվածները՝ ինչվան հիմա կըհառաչեն՝ ու տալաբերքի (նման) ցաւու մէջ են :

23 Ու չէ թէ միան անոնք, հա-

այլ և մեք իսկ՝ որ զպատուղ
հոգւոյն ունիմք, անձամբ յան-
ձինս մեր հեծեմք՝ որդեդրու-
թեանն ակն կալեալ՝ փրկու-
թեան մարմնոյ մերոյ :

24 .Օ.ի յուսով ապրեցաք.
այլ յոյս տեսանելի՝ չէ յոյս .
զի զոր տեսանէ ոք՝ զի՞ և յու-
սայ :

25 Ա.պա եթէ զոր ոչն տե-
սանեմք յուսամք, համբերու-
թեամբ ակն ունիմք :

26 Նոյնպէս և հոգին ՚ի թի-
կունս հասանէ տկարութեանս
մերում. զի զոր կամքն չաղօթս,
որպէս արժան իցէ՝ ոչ գիտեմք.
այլ ինքն հոգին բարեխօս լինի
՚ի հեծութիւնս անմռունչս :

27 Իսկ որ քննէն զսիրտս,
գիտէ զինչ խորհուրդ է հոգ-
ւոյն. զի ըստ այ բարեխօսէ
վասն սրբոց :

28 Իսկ գիտեմք՝ եթէ որոց
սիրեն զաւ, յամենայնի գոր-
ծակից լինի ՚ի բարիս՝ որք հը-
բաւիրանաւն կոչեցան :

29 .Օ.ի զորս յառաջն ճա-
նաչէր, յառաջագոյն և հրաւի-
րեաց կերպարանակից լինել
պատկերի որդւոյն իւրոյ. զի
եղիցի նա անդրանիկ ՚ի մէջ
եղբարց բազմաց :

30 Եւ զորս յառաջագոյնն հրա-
ւիրեաց՝ զնոսին և կոչեաց. և
զորս կոչեացն, զնոսին և արդա-
րացոյց. և զորս արդարացոյցն,
զնոսին և փառաւորս արար :

31 Իսկ արդ՝ զի՞նչ ասեմք
առ այս. եթէ աւ ՚ի մեր կոյս
է, ո՞վ լիցէ մեր հակառակ :

32 Որ յիւր որդին ոչ խը-
ւսպա՝ բուն մինաքաւ, որ հոգիին
երեխայրիքը ունինք՝ ինքիրենիս
մեր անձերնուս միջը կըհառա-
չինք՝ աչվըրնիս որդեգիր ըլլալու
զրաց՝ մեր մարմինէն ազատուելով:

24 Որ՝ մինք յոյսով փրկըվե-
ցանք. միան թէ՝ յուսացածն որ
կըտեսնըվի՝ ան յոյս չէ. պատ-
ճառը՝ բանմը որ մէկը կըտեսնա՝
ալ ի՞նտոր անոր կը յուսա :

25 Հապա թէ՝ (անոր) կը յու-
սանք, ան որ դեռ չենք տեսնար,
ալ համբերութիւնով կըսպասենք:

26 Ա.նանկ ալ հոգին օգնութիւն
կըհասնի մեր տկարութիւնին. ին-
չու որ, աղօթելու որ կըլլանք՝ ան
ինչպէս պէտկ է նէ չենք գիտեր ը-
նելը. հապա բուն ինքը հոգին բա-
րեխօս կըլլա (մեզի համար) անանկ
հառանչանքովմը որ չի զըուցվիր:
27 Իսկ ան՝ որ սըրտերը կըքնն-
նէ՝ ինքը հոգիին ալ միտքը ինչ
ըլլալը գիտէ. որ այ կամաց վայ-
լածը՝ սրբոց համար կըբարեխօսէ:

28 Մ.իան թէ՝ (աս ալ) գիտինք,
որ անոնք որ ած կըսիրեն, (ած)
իրենց ամէնն բանին մէջ հետը-
նին կըլլա բարիք գործելու, ա-
նոնք որ ձեռնվերով կանչըված են:

29 Պ.ատճառը՝ (ած) անոնք որ
առաջուցմէ կըձանչնար՝ իրենք
առաջուց ալ ձեռնեց՝ իր որդուն
պատկերքին նման ըլլալու. որ
ան(որդին՝) անդրանիկ ըլլա շատ-
վոր եղբարներուն մէջը :

30 Ո.ւ անոնք որ առաջուցմէ
ձեռնեց՝ իրենք կանչեցալ. ու ա-
նոնք որ կանչեց, իրենք արդա-
րացուցալ. ու անոնք որ արդա-
րացուց՝ իրենք փառաւորցուցալ:

31 Ո.ւսոմէ ալ ինչ ըսենք ա-
սոր. թէ որ ած մեր դիմացին է, ալ
ո՛վ մեզի դէմ պիտի կրնէ :

32 Ո.ն որ իր որդուն չի խնայեց,

նայեաց, այլ վասն մեր ամե-
նեցուն մատնեաց զնա· զիա՞րդ
ոչ նովաւ հանդերձ զամենայն
ընծայեցէ մեզ :

33 Ո՞վ լցէ որ մեզադիր լի-
նիցի ընտրելոց այ· ասէ՛ է որ
արդարացուցանէ ,

34 Իսկ արդ՝ ո՞վ է որ զա-
տապարտ առնիցէ : քո՛ յի՛ որ
մեռաւն , մանաւանդ թէ յա-
րուցեալ իսկ է , և է ընդ աջ-
մէ այ , որ և բարեխօս իսկ է
վասն մեր :

35 Այրդ՝ ո՞վ մեկնեսցէ զմեզ
՚ի սիրոյն քրի՛ստոսէ , նեղու-
թի՞ւն , թէ անձկութի՞ւն , թէ
հալածա՞նք , թէ սո՞վ , թէ մերկու-
թի՞ւն , թէ վտի՞րաք , թէ սո՞ւր :

36 Որպէս և գրեալ է , վասն
քո՛ մեռանիմք զօր հանապազ ,
համարեցաք իբրև զոչխար ՚ի
սպանդ :

37 Այլ յայսմ ամենայնի՝ առա-
ւե՛լ յաղթեմք նովաւ որ
սիրեացն զմեզ :

38 Քանզի հաստատեա՛լ եմ ,
եթէ ո՛չ մահ , և ո՛չ կեանք , և
ո՛չ հրեշտակք , և ո՛չ իշխա-
նութի՛ւնք , և ո՛չ որ կան , և
ո՛չ հանդերձեալքն , և ո՛չ զո-
րութի՛ւնք ,

39 Եւ ո՛չ բարձրութի՛ւն , և
ո՛չ խորութի՛ւն · և ո՛չ այլ ինչ
արարած՝ կարէ մեկնե՛լ զմեզ
՚ի սիրոյ անտի այ , որ ՚ի քո՛ յի՛
՚ի տէր մեր :

հապա՝ մեր ամենեսին համար ա-
նի՛կա մատնեց տրվա՛ւ · ալ ի՞նտոր
կըլլա՝ որ անոր հետը ամէն բան
մեզի չի՛ տա՛նէ տա՛ :

33 Ա՞ն ո՛վ է որ այ հրնտրած-
ներուն վրա՛ վատ գըտնէ . բուն
ինքը ա՛ծ է՝ որ ան կարդարացնէ ,

34 Ա՛ւ ան ո՛վ է որ պիտի ա-
նի՛կա դատապարտէ : յի՛ քրի՛ստո(ս)՝ ,
որ չէ՛թէ միայն մեռա՛ւ , հապա յա-
րութի՛նալ առա՛ւ , ու այ ալ աջ
կողն է , որ ինքը մեզի համար բա-
րեխօսութի՛ւն կընէ :

35 Ա՞նանկ է նէ՝ ալ մեզ ո՛վ
քրի՛ստոսէն պիտի բաժնէ . նե-
ղութի՛ւնը մի՛ , թէ սրտմաշուքը ,
թէ հալածա՛նքը , թէ սո՛վը , թէ
մերկութի՛նը , թէ վտի՛ռը , թէ թի՛ւրը :

36 Ինչպէս որ գրված ալ է ,
(թէ) քե՛զի համար ամէն օր կը-
մեռնինք , (որ՝) մորթըվելու ոչ-
խըրի՛պէս մեզ սեպեցին :

37 Միա՛ն թէ՝ աս ամէն բա-
ներուն (մենք) էվէլքըր կեխտնէք
անոր ուժո՛վը՝ որ մեզ սիրեց :

38 Ա՞նանկ որ՝ ալ հաստատ
պիտե՛մ՝ որ ո՛չ մա՛հը · ու ո՛չ կեան-
քը , ու ո՛չ հրեշտակները , ու ո՛չ
իշխանութի՛ւնները , ու ո՛չ հի՛մ-
կու բաները , ու ո՛չ գալի՛քները ,
ու ո՛չ զօրութի՛ւնները :

39 Ու ո՛չ բարձրութի՛ւններ ,
ու ո՛չ խորունկութի՛ւններ , ու ո՛չ
ալ մի՛կ ուրիշ ըստեղծված՝ կա-
րող է մեզ այ սիրուն բաժնել ,
ան մերոյ յի՛ քրի՛ստոսէ եղած :

ԳԼ · Թ ·

1 Ստուգութեա՛մբ ասեմ ՚ի
քո՛ և ո՛չ ստեմ · վկայեն
ինձ միա՛ք իմ ՚ի հոգի սո՛ր .

2 Օ՛ի տրտմութի՛ւն է ինձ

1 Ճշմարիտ կըսեմ քո՛ւով . ու
սուտ չե՛մ ըսեր · (որ ան՝)
իմ խղճմտանքս ալ ինծի կըվկայէ
հոգով սրբով .

2 Որ սաստիկ տրտմութի՛նը իս

յոյժ, և անպակաս ցաւք սրտի իմոյ :

3 Օ՜ի ուխտիւք խնդրէի՝ ես իսկ ինքնին նզովք լինել ՚ի քրիստոսէ, վասն եղբարց և ազգակցաց իմոց ըստ մարմնոյ ·

4 Որ են իսրայէլացիք. որոց որդեգրութիւնն, և փառքն, և կտակարանքն, և օրէնսդրութիւնն, և պաշտօնն, և աւետիքն :

5 Որոց հարքն, յորոց և քրիստոս ըստ մարմնոյն · որ է ՚ի վերայ ամենեցուն Աստուած օրհնեալ յաւիտեանս . ամէն :

6 Ո՛չինչ է մարթ՝ եթէ անկած լինիցի բանն Աստուծոյ. զի ոչ ամենեքեան որ յիսրայէլէ են, նոքա իսրայէլեանք իցեն .

7 Եւ ոչ որ զաւակն աբրահամու են, ամենեքեան որդիք իցեն · այլ իսահակու կոչեսցի քեզ զաւակ :

8 Այսինքն՝ թէ ոչ որ որդիք մարմնոյն են, են որդիք Աստուծոյ · այլ որդիք աւետեացն համարեսցին ՚ի զաւակ :

9 Քանզի աւետեաց խոսք է բանս այս, թէ ՚ի ժամանակի յայսմիկ եկից, և եղեցի որդի սառային :

10 Եւ ոչ այնչափ միայն, այլ և ՚ի Հռեբեկայ՝ ՚ի միոջէ անկողնոյ սահակայ հօր մերոյ :

11 Օ՜ի մինչ չէ՛ ծնեալ էին, և մինչ չէ՛ բարի ինչ՝ կամ չար գործեալ էր : զի ըստ ընտրութեանն յաստուածդրութիւնն Աստուծոյ .

12 Ո՛չ ՚ի գործոց, այլ յկոչմանէ որ կոչեացն . ասացաւ նմա,

աւագն է, ու սիրաբար անդադար ցաւու մէջ է :

3 Ինանկ որ՝ ալ փափաքելով կրնդրէի՝ որ բուն ես՝ քենէն նզոված ըլլալս՝ իմ մարմնաւոր եղբայրներուս ու ազգականներուս պատճառովը .

4 Որ անոնք՝ իսրայելացիներն են . որ իրենցն է (այ) որդեգիրը ըլլալը, ու փառաւորութիւնները, ու ուխտադաշինքները, ու օրինադրութիւնը, ու պաշտամունքնեըը, ու խոստմունքը :

5 Իրենցն (են) նահապետները · իրենցմէն՝ քրիստոս ալ մարմնու դիացէ, ան որ ամմէնուն վրա Աստ է, օրհնեալ յաւիտեանս . ամմէն :

6 Իսկի կարելի չէ՝ որ այ խօսկը դեռեն իյնա : ալ անոր համար՝ չէ թէ ան ամմէնքն որ իսրայելէն ինջած են՝ անոնք իսրայելացի են:

7 Ու չէ թէ անոնք որ աբրահամի ցեղն են, ան ամմէնքը որդիք են . հապա (կըսէ՝) իսահակով քեզի ցեղ պիտոր բսվի ·

8 Այսինքն՝ թէ չէ որ անոնք որ մարմնու (կողմանէ) որդի են, իրենք՝ այ ալ որդի են · հապա աւետմունքի որդիքը ցեղ կսեպվին:

9 Որ բուն աս է աւետմունքի խօսկը, թէ՝ աս տարեկը (նորէն) պիտի գամ, ու սառան որդի պիտի ունենա :

10 Ու չէ թէ միան աս, հապա հռեբեկան ալ մեր իսահակ հօրը մէկ պառկրվածքէն (յղի եղած) :

11 Որ (ան տղաքը) դեռ չէ ծնած, ու դեռ մէկ բարիմը կամ չարմը չէ գործած · որ այ վէհը հաստատ մնա իրեն ըրած ընտրութեանը վրա .

12 Չէ թէ ըրած գործքերուն համար, հապա անոր կամացը համար որկանչեց· իրեն ըսվեցաւ,

13 Թէ երէցն կրսերոյն ծա-
ռայեսցէ · որպէս և զրեալ է ,
թէ զյակոբ սիրեցի , և զեսաւ
ատեցի :

14 Իսկ արդ՝ զինչ ասեմք ·
միթէ անիրաւութիւն իցէ յայ-
քսւ լիցի :

15 Ո՛չ մովսիսէ ասէ · ո-
ղորմեցայց՝ որում ողորմե-
ցայցն , և զթացայց՝ յոր զթա-
ցայցն :

16 Ա՛պա ոչ ըստ այնմ ինչ
է՝ որ կամիցին , և ոչ ըստ
այնմ՝ որ ընթանայցէ · այլ
ըստ այ՝ որ ողորմի :

17 Գրանգի ասէ գիր ցփա-
րաւոյն · թէ վասն այսորիկ
զրգռեցի զքեզ , զի ՚ի քեզ
ցուցից զզօրութիւն իմ, և պատ-
մեսցի անուն իմ յամ ամ երկիր :

18 Ա՛պա ուրեմն՝ ում կամի
ողորմի, և ում կամի՝ խստա-
նայ :

19 Իսկ արդ՝ ասիցես , թէ
մեղ և զի դնէ, զի կամաց նո-
ա ոչ ոք կայ հակառակ :

20 Իսկ արդ՝ դու ո՞վ ես
մարդ՝ որ պատասխանի տաս
այ · միթէ ասիցէ տեղծուածն
ցստեղծիչն՝ թէ ընդէր այդպէս
արարեր զիս :

21 Եթէ ոչ ունիցի իշխա-
նութիւն բրուտն կաւոյն՝ ՚ի
նմին գանգուածոյ առնել ա-
նօթ , զոմն ՚ի պատիւ՝ և զոմն
յանարգանս :

22 Ա՛պաթէ կամէր այ ցու-
ցանել զբարկութիւն, և յայտ-
նի առնել զզօրութիւն իւր,
զոր չամբերն բազում երկայն-
մրտութեամբ անօթոցն բար-
կութեան պատրաստելոցն ՚ի
կորուստ :

13 Որ՝ մնածը պզտիկին ծա-
ռա ըլլա · ինչպէս որ գրված ալ
է , թէ՝ յակոբը սիրեցի, ու ե-
սաւ ատեցի :

14 Հապա ալ ինչ ըսենք . այ
(ասով) անիրաւութիւնմը ը-
րաւ . քա՞ւ լիցի :

15 Պատճառն որ՝ ինքը մով-
սէսին կրսէ · կողորմիմ՝ որուն որ
կուզեմ ողորմիլ , ու կրգթամ ո-
րուն վրա որ կուզեմ գրթալ :

16 Ուրեմն՝ բանը անկէց չէ կախ-
վեր որ մեկը կամենա, ու ոչ ալ ան-
կէց՝ որ ինքը վազելով երթա . հա-
պա՝ աստուածմէն՝ որ իրեն ողորմի :

17 Ան որ՝ գրքնալ փառաւո-
րէն կրսէ, թէ՝ անոր համար քեզ
զրգռեցի՝ որ իմ ուժը քա՞ւ վրաղ
ցրցուեմ, ու իմ անունս ալ լո-
ըր աշխարք գրսւցվի :

18 Անանկ է նէ՝ ինքը որուն
որ կուզէ՝ կողորմի , ու որուն
որ կուզէնէ՝ պինա կրկենա :

19 Հապա ալ ան ըսես , թէ՝
ալ ինքը ինչո՞ւ (մեզ) մեղք կը-
սեպէ , որ մեկը անոր կամացը
դէմ չի (կրնար) կենար :

20 Ա՛լ դուն՝ ո՞վ ես մարդ՝ որ
այ դէմ կուգես վէճ բռնել . շին-
ված մը (իր) շինողին (կրնա) մի ը-
սեր թէ ինչո՞ւ ատանկ ըրիր :

21 Ի բրուտը գեխին վրա տէ-
րութիւն չունի՞ մի, որ մեկ շաղված-
քէն անանկ ամաններ շինէ, որ ա-
նոնց մեկը պատիվ բանի գա , ու
մեկալը՝ ցած բանի (պէտկ ըլլա):

22 Ա՛լ (մեկը ասոր ինչ ըսելիք
ունի), թէ որ այ (իր) բարկութի-
նը ուզելով ցրցունել , ու իր զո-
րութիւնը յայտնել , որ էվէլքէ եր-
կայնամտութիւնով չամբերեր էր
բարկութենի ամանեներուն, որ կոր-
սրվելու համար պատրաստած էին:

23 Ո՛վ ի յայտնի արասցէ ըզ-
գմեծութիւն փառացդ իւրոց ՚ի
վերայ անօթոցն ողորմութեան,
զոր պատրաստեաց ՚ի փառս :
24 Ո՛րս և կոչեաց զմեզ,
ոչ միայն ՚ի հրէից՝ այլ և ՚ի
հեթանոսաց :
25 Որպէս և յովսեէ ասէ. Կոչեցից զոր
ոչ ժողովուրդն իմ, ժողովուրդ ինձ, և զչսի-
րեցեալն՝ սիրեցեալ :
26 Եւ եղիցի ՚ի տեղւոջ յո-
րում ասացաւ նոցա, թէ ոչ
ժողովուրդ իմ դուք, անդ կո-
չեցին նոքա որդիք՝ այ կեն-
դանւոյ :
27 Եսայի աղաղակէ վասն
իսրայէլի. Եթէ իցէ թիւ որդ-
ւոցն իսրայէլի իբրև զաւազ
ծովու, սակաւ ինչ մնացորդք
մնասցեն :
28 Ո՛վ բան մի չակիրճ և
համառօտ արդարութեամբ,
զբանն չակիրճ արասցէ տէր ՚ի
վերայ երկրի :
29 Եւ որպէս ասէ եսայի.
Եթէ ոչ՝ ՚ն զօրութեանց թո-
ղեալ էր մեզ զաւակ, իբրև
զսոդոմ լինեաք՝ և զամօրայ նը-
մանեաք :
30 Ի՛նչ արդ՝ զի՞նչ ասիցեմք, զի թէ հեթանոսք՝ որ
ոչ երթային գՀետ արդարու-
թեան, հասին արդարութեան.
այնմ արդարութեան՝ որ ՚ի հա-
ւատոյ անտի :
31 Ա՛յլ իսրայէլ երթայր ըզ-
հետ օրինացն արդարուե, և յո-
րինս արդարուե ոչ ժամանեաց:
32 Ընդէ՞ր. զի ոչ ՚ի հա-
ւատոյ, այլ իբրև ՚ի գործոյ
օրինացն : քանզի զհեցին նոքա
առ վիմին գայթագղութեան :
23 Որ (ասաց) յայտնի ցրցուն՛ զ
իր փառացն մեծութի՛նը՝ ողորմու-
թե՛նի ամաննե՛րուն վրա՝ որ փա-
ռաւորե՛լու համար պատրաստեց:
24 Որ անանկ մեզ կանչեցա՛լ,
չէ՛ թէ միայն հրեաներէ՛ն՝ հապա
հեթանոսներէ՛ն ալ :
25 Ի՛նչպէս որ յովսէ (մարգա-
րէն)ալ կըսէ. ան որ իմ ժողո-
վուրդս չէ՛, ինծի պիտի ժողովուրդ
կանչե՛մ, ու չի սիրվածը՝ սիրված:
26 Ու ըլլա՛ որ՝ ըսուն ան տեղը
ուր որ իրե՛նց ըսվեցաւ թէ՝ դուք
իմ ժողովուրդս չէ՛ք, հո՛ն անոնք
կենդանի՛ այ՝ որդիք պիտի կանչը-
վի՛ն :
27 Եսայի՛ն իսրայէլի՛ն համար
կանչելո՛վ կըսէ, թէ որ իսրայէլի
որդոց համրանքը ծովի՛ աւազին
պէս ալ (շատ) որ է նէ՝ (անկէց)
քիչմը պիտի մնա խալըսածը :
28 Պատճառն որ՝ մէկ բանմը
կարճ ու համառօտ արդարութի՛-
նով՝ տէրը բանը կարճ պիտի ընէ
երկրի՛ վրա :
29 Ու ինչպէս ալ (ան) եսայի՛ն
կըսէ. թէ որ տէր զօրութեանցը
մեզի (մնացած) զաւակմը թողած
չըլլար, (մենք) սոդոմի՛ պէս կըլ-
լայինք, ու գոմորի՛ն նման :
30 Հապա ալ ի՛նչ պիտոր ը-
սենք, ան՝ որ հեթանոսները ար-
դարութի՛ն վնտուելու հետ չէի՛ն՝
արդարութի՛ն ձեռք ձգեցի՛ն, ան
արդարութի՛նը՝ որ հաւատքէ՛ն
կըլլա՛ :
31 Իսայց իսրայէլը՝ օրէնքի՛ ար-
դարութի՛նին ետևէ էր, ու օրէն-
քի՛ արդարութի՛նին չի՛ հասաւ :
32 Ինչո՞ւ համար. պատճառն
որ՝ ան չէ՛ հաւատքէ՛ն՝ հապա օրէն-
քին գործքերէ՛ն (ուզեց որ ըլլա) :
որ ալ իբրև՛նք գայթաղկութի՛նի
քարի՛ն վրա սրկրդըվեցան :

33 Որպէս և գրեալ է· ա-
հաւասիկ դնեմ ՚ի սիոն քար
գայթագղութեան և վէմ գլոր-
ման· և ամենայն որ հաւա-
տասցէ ՚ի նա՝ մի՛ ամաչեսցէ :

33 Ինչպէս որ գրվածալ է, հա-
նա ես սիոնին մէջը գայթագկուե
քար կըդնեմ, ու գլորըտկվելու
ապառաժ· որ ամէն ովոր անոր
հաւատա՝ ան պիտի չամընկնա :

Գ Լ· Ժ·

1 Ե՛ղբարք, իմ կամք սրտի,
և աղօթք առ Ա՛Ծ՝ վասն
նոցա են ՚ի փրկութիւն :
2 Վկանգն վկայեմ նոցա՝ և
թէ գնախանձ այ ունին, այլ
ո՛չ գիտութեամբ :
3 Զի տգէտ են այ արդա-
րութեանն, և զիւրեանցն խըն-
դրեն կացուցանել· զի արդա-
րութեանն այ ո՛չ հնազանդե-
ցան :
4 Վանգի կատարած օրի-
նացն քո է՝ յարդարութիւն ա-
մենայն հաւատացելոց :
5 Մովսէս գրէ զարդարու-
թիւն որ յօրինաց անտի· եթէ
արասցէ զայն մարդ՝ կեցցէ
նովին :
6 Իսկ զհաւատոցն արդա-
րութենէ այսպէս ասէ· մի՛ ա-
սիցես ՚ի սրտի քումմ, ո՞վ ելա-
նիցէ յերկինս, այս ինքն է՝ զքո
իջուցանել·
7 Կամ՝ ո՞վ իջանիցէ յան-
դունդս, այս ինքն է՝ զքո հա-
նել ՚ի մեռելոց :
8 Այլ զի՞նչ ասէ գրէր·
մերձ է բանն ՚ի բերան քո՝ և
՚ի սրտի քումմ է· այս ինքն է՝
բանն հաւատոյ զոր քարոզեմք:
9 Զի եթէ խոստովանեսցես
բերանով քով՝ տէր գյս, և հա-
ւատասցես ՚ի սրտի քումմ, թէ
Ա՛Ծ յարոյց զնա ՚ի մեռելոց՝
կեցցես :
10 Զի սրտիւ հաւատայք

1 Ե՛ղբարներ՝ իմ սրտիս լաւա-
ծանքը, ու այ ըլած աղօթք՝
անոնց փրկութեանը համար է :
2 Որ՝ ըրենց վրա աս կըվկայեմ
որ՝ այ սաստիկ ջատագով են. բայց
առանց բանը գիտնալու :
3 Պատճառն որ՝ Ա՛Ծմէն եղած
արդարութիւնը չէն գիտեր, ու
քանի իրենցը կուզեն պինա բըս-
նել· որ անանկ՝ այ տրված ար-
դարութենէն գլուխ չեն ձգեցին :
4 Այն որ՝ օրէնքին վախճանը
քո է, որ ինքը բոլոր երէն հա-
ւատացողները արդարացընէ :
5 Մովսէսը՝ ան՝ օրէնքէն և
ղած արդարութենէն համար (ա-
սանկ) կըգրէ, թէ որ մարդմը ան
բանը ընէնէ՝ անով կըփրկըվի :
6 Հայց հաւատքի արդարու-
թենէն համար ասանկ կըսէ· չըլլա
որ քու սրտիդ մէջը ըսես, ո՛վ պի-
տի երկինքը ելլէ, այսինքն՝ որ
քրը (անկէց) վար ինչեցընէ·
7 Կամ՝ թէ՝ ո՛վ վար անդունդը
պիտի ինկնա, այսինքն՝ որ քրը
մեռելներէն (կանչէ) վեր հանէ :
8 Հայց գիրքը ինչ կըսէ· ան
խօսկը քու բերնիդ մօտ է, ու քու
սրտիդ մէջն է, այսինքն՝ հաւատ-
քի խօսկը, որ (մենք) կըքարոզենք:
9 Որ՝ թէ քու բերնովդ՝ յիս-
ու հատանես, ու քով սրտիդ
մէջը հաւատաս՝ որ Ա՛Ծ անիկա
մեռելներէն յարուց, ալ (դուն)
կըփրկըվիս :
10 Ինչու որ՝ սրտովիդ կըհա-

յարդարութիւն, և բերանով խոստովանիք ՚ի փրկութիւն:

11 Քանզի ասէ գիր. ամենայն՝ որ հաւատացէ ՚ի նա, մի ամաչեսցէ:

12 .Օ՚ի ոչ գոյ խտիր հրէի և հեթանոսի. քանզի նոյն տէր է ամենեցուն, բաւական յամենեսին որք կարդան առ նա:

13 .Օ՚ի ամենայն որ կարդասցէ զանուն տեառն՝ կեցցէ:

14 Իսկ արդ՝ զիա՞րդ կարդասցեն, յոր ոչն հաւատացին. կամ զիա՞րդ հաւատասցեն՝ ո՞րում ոչն լուան. կամ զիա՞րդ լուիցեն առանց ուրուք քարոզելոյ.

15 Կամ զիա՞րդ քարոզեսցեն, եթէ ոչ առաքեսցին: որպէս և գրեալ է, իբրև զի գեղեցիկ են ոտք աւետարանչացն խաղաղութեան, և աւետարանչացն բարութեան:

16 Ա՛յլ ոչ ամենեքեան հնազանդեն աւետարանին, եսայի ասէ. տ՛ր՝ ո՞ հաւատաց լոյ մերում:

17 Ա՛պա ուրեմն՝ հաւատք ՚ի լսելոյ են, և լուր ՚ի բանէն քո՛ի:

18 Ա՛յլ ասեմ, միթէ ոչ լուան. մա՛նաւանդ զի ընդ ա՛մենայն իսկ երկիր ել բարբառ նոցա, և ընդ ծագս տիեզերաց խօսք նոցա:

19 Ա՛յլ ասեմ, մի՞թէ իսրայէլ ոչ լուաւ. նախ՝ մովսէս ասէ, ես նախանձեցուցից զձեզ ոչինչ ժողովրդեամբ, և ազգաւ անմտաւ գկծեցուցից զձեզ:

20 Իսայի եսայի համարձակի իսկ՝ և ասէ. գտայ այնոցիկ որ ետաք արդարանալու, ու բերնով կրդաւանիք փրկվելու:

11 Որ՝ գիրքը կըսէ. ամէն ովոր անոր հաւատա, ինքը պիտի ամօթով չի մընա:

12 Պատառն որ՝ հվէից ըլլալը չկա հրեային ու հեթանոսին մէջը. որ՝ ինքն է ամէնուն տէրը, որ առատ կուտա ամէնուն որ իրեն կըդիմեն:

13 Որ՝ ամէն ովոր տնը անունը իրեն կըհանէ՝ անիկա կըփրկվի:

14 Հապա ալ ինտոր կանչեն, անոնք որ իրեն չի հաւատացին. կամ ինտոր հաւատան՝ որ անոր ըսած խօսկը չի լսեցին. կամ ինտոր լսեն՝ թէ որ մէկը չի քարոզէ:

15 Կամ ինտոր քարոզեն՝ թէ որ (իրենք) խրըկըված չըլլան: ինչպէս որ գրված ալ է, թէ ինչպէս ազվոր է անոնց ոտվընեն որ խաղաղութիւն կաւետարանեն, ու բարի բաներու աւետիս կուտան:

16 Հայց (ան որ) ամէնքը աւետարանին հնազանդութիւն չըրին՝ (անոնց վրայով) եսային կըսէ, տ՛ր՝ մեզմէ լսածին ով հաւատաց:

17 Ինանկ է նէ՝ հաւատքը լսելէն կըլլա, ու լսելը՝ քրիստոսի խօսկը (քարոզելէն):

18 Հայց աս կըսեմ, որ չի լսեցին մի, ան որ բոլոր բովանդակ երկիր իրենց ձանը ելաւ, ու իրենց խօսկը ինչվան աշխարքին ծարերը (հասաւ):

19 Աս ալ կըսեմ, որ՝ իսրայէլը չի լսեց մի: ան պիտի առաջ՝ մովսէսը կըսէ. ես ձեր (սիրտը) պիտի նախանձ ձգեմ մէկ փուճ ժողովուրդովմը, ու անխելք ազգով սրտերնիդ կրսկըծցունեմ:

20 Հայց եսային՝ ալ բաց չմարձակ կըսէ. ես անոնց գըտնը-

զնս ոչ խնդրէին · յայտնի եղիր այնոցիկ՝ որ զինէն ոչ հարցա-
նէին :

21 Ասէ առ Իսրայէլ ասէ · զբո ամենայն ձգեցից զձեռն իմ
առ ժողովուրդն անհնազանդ և հակառակող :

վեցա՝ որ իս չէին փընտռէր, ու անանց յայտնըվեցա՝ որ վրաս չէին հարցընէր :

21 Ու Իսրայէլին ղէմը կըսէ · սա ամէն օր է՝ որ իմ ձեռքըս կերկընցուցեմ ղէպի անհնազանդ ու ղիմադարձ ժողովըրդին :

Գ Լ · Ի Ս ·

1 Իսկ արդ՝ ասեմ, մի թէ մերժեաց Աստուած զժողովուրդ իւր · քառ լիցի : քանզի և ես իսրայէլացի եմ, ի զաւակէ աբրահամու, յազգէ բենիամինի մինչ :

2 Ո՛չ մերժեաց Աստ զժողովուրդ իւր, զոր յառաջագոյն ծանեաւ : թէ ոչ գիտէք յեղիա զինչ ասէ գիր · որպէս ամբաստանէ լինի առ Աստուած զիսրայէլ ·

3 Տէր՝ զմարգարէս քո կոտորեցին, և զսեղանս քո կործանեցին · ես մնացի միայն, և խնդրեն զանձն իմ :

4 Ասէ զինէ ասէ նմա պատասխանին · թողի ինձ ասէ՝ եւթն հազար այր, որ ոչ կրկնեցին ծունր բահաղու :

5 Նոյնպէս և յայսմ ժամանակի մնացորդք՝ ըստ ընտրութեան շնորհացն եղեն :

6 Իսկ եթէ շնորհօք, ոչ ևս ի գործոց. ապա թէ ոչ՝ շնորհքն ոչ ևս շնորհք լինին :

7 Իսկ արդ՝ զոր խնդրէր Իսրայէլ, այնմ ոչ եհաս · բայց ընտրութեանն եհաս, և այլքն կուրացան :

8 Որպէս և գրեալ է . Եա նոցա Աստ ի հոգի յիմարութեան · աչս որովք ոչ տեսանիցեն, և

վեցա՝ որ իս չէին փընտռէր, ու անանց յայտնըվեցա՝ որ վրաս չէին հարցընէր :

21 Ու Իսրայէլին ղէմը կըսէ · սա ամէն օր է՝ որ իմ ձեռքըս կերկընցուցեմ ղէպի անհնազանդ ու ղիմադարձ ժողովըրդին :

1 Հապա ալ ըսեմ · Աստ իր ժողովուրդը մէկղէ մի ձրգեց · քառ լիցի : որ՝ բուն ես ալ Իսրայէլացի եմ, աբրահամի զաւակէն, բենիամինի ցեղէն :

2 Աստ իր ժողովուրդը երեսէ չէ ձգեց · ան որ ինքը առաջուցմէ ճանչցաւ : չէք մի գիտեր որ եղիայի բանին վրայով գիրքը ինչ կըսէ · (ան) Իսրայէլացոց համար այ ղիմաց կըզանկտի · թէ՝

3 Տէր՝ քու մարգարէներըդ ջարդեցին, ու քու սեղաններըդ կործանեցին . ես միայն մնացի, ու իմ անձիս ալ եռւէ են :

4 Բայց ինչ անոր պատասխանը կուտա · սխտր հազար հոգի կըսէ (մէկդի) ինծի գատեցի՝ որ բահաղին ծունկ չը ծըռեցին :

5 Անանկ ալ՝ ասանըս (մէկդի) գատածներըդ՝ շնորհքի ընտրութենով եղան :

6 Ու թէ ան՝ շնորհքով (է, ուրեմն) ալ գործքերէն չէ · հապա թէ չէ՝ շնորհքը շնորհք չեր ըլլար :

7 Ասկէ ան՝ որ Իսրայէլը կըփընտռէր՝ անիկա ձեռք չը ձգեց. բայց ընտրվածներուն եղաւ որ ձեռք ձգեն՝ ու մնացեալները կուրցան:

8 Ինչպէս որ գրված ալ է. (թէ) Աստ անանց թըմրութենի հոգի տըվաւ . անանկ աչվքներ ալ՝ որ ա-

ականջս՝ որովք ոչ լսիցեն, մինչև ցայսօր ժամանակի :

9 Եւ դաւիթ ասէ. եղիցին սեղանք նոցա յորոգայթ, և յորս, և ՚ի գայթագղութիւն, և ՚ի հատուցումն նոցին :

10 Խաւարեսցին աչք նոցա զի մի տեսցեն, և զթիկունս նո_ ցա՝ հանապա՛զ կորացո՛ :

11 Իսկ արդ՝ ասեմ. միթէ վասն այնորիկ յանցեան՝ զի կործանեսցե՛ն. քա՛ւ լիցի : այլ նոցա յանցանօքն փրկութիւն հեթանոսաց. զի նախանձ արկ_ ցէ նոցա :

12 Իսկ եթէ յանցանքն նո_ ցա՝ մեծութիւն աշխարհի, և պարտութիւն նոցա՝ մեծու_ թիւն հեթանոսաց, որչափ ևս առաւել լցութիւն նոցա :

13 Այլ ձե՛զ ասեմ՛ հեթա_ նոսաց, ցորքան ժամանակս ի_ ցեմ՛ հեթանոսաց առաքեալ, զպաշտօ՛նն իմ փառաւո՛ր առ_ նեմ՛.

14 Օ՚ի թերևս նախանձ ար_ կից նո՚ա մարմնով իմով, և ա_ պրեցուցից զոմանս ՚ի նոցանէ :

15 Օ՚ի եթէ մերժումն նո_ ցա հաշտութիւն աշխարհի է՛. իսկ ընդունելութիւն զինչ է_ ցէ, եթէ ոչ կենդանութիւն ՚ի մեռելոց :

16 Իսկ եթէ սկիզբն սո՛ւրբ է՝ և զանգուածն՝ և արմատն, ապա և ոստքն :

17 Եթէ յոստոց անտի ո_ մանք փշրեցան, և դու որ ձի_ թենի վայրենի էիր՝ պատուաս_ տեցար ՚ի նոսա, և բաժանորդ նոյ՛ չէ կրնան տեսնալ, ու ան կը՚ն՚եր՝ որ անոյ չէ լսեն՛ (ասանկ ալ՝ ինչվան աս օրվան տանը՛ը :

9 Ու դաւիթն ալ կըսէ՛. ա_ նոնց սեղանները՝ (իրենց) որո_ գայթ պիտի ըլլա՛, ու բռնըվելու ակնատե՛ ու գայթագղութիւն՛. ու ան (ըլլա՛ իրենց) հատուցումը :

10 Աչվընին մթըննա՛ որ չը_ տեսնեն, ու անոնց կռնըվընին ըլլէ՛ որ միշտ վա՛ր ծռըին :

11 Ուստի ալ կըսեմ՛, թէ անոր համա՛ր մի ոտվընին բանի գարկին՝ որ (իսկի) կործանին՛. քա՛ւ լիցի : հապա՝ անոնց ոտկ գարնելը՝ չէ_ թանոսաց փրկութին (եղաւ), որ անոնց սիրտը նախանձ ձգէ :

12 Հապա որ անոնց կ՚ինալը՝ աշխրքքին մեծութին (եղաւ)՛. ու իրենց տակ ըլլալը՝ հեթանոսնե_ րուն բարձրութի՛ն՛. ալ որքան էվելը իրենց բոլորին (դարձը) :

13 Ձեզի՛ հեթանոսներուդ (ձա) կըսեմ՛, որ ես հեթանոսներու առաքեալ ըլլալով՝ ես իմ պաշ_ տօնըս կրնայիմ՛ որ փառաւորա_ պէս ընեմ՛.

14 Որ ըլլա՛ թէ՝ իմ մարմինովըս անոնց սիրտը նախանձ ձգեմ՛, ու անոնցմէ մէկ քանին ապրեցրնեմ՛:

15 Որ՝ թէ անոնց երեսէ ձգվի_ լը՝ աշխրքքին հաշտութին է՛. հա_ պա ալ իրենց ընդունվիլը ինչ է՛. թէ չէ՝ մեռնելէն կենդանի ըլլալ :

16 Ու թէ որ (անոնց) առջի բերքը սո՛ւրբ է, ու թըրվածքին գունդը, ու արմատը, հապա ա_ նանկ ալ ճրղերը :

17 Թէ որ ան ճրղերէն եղան որ փրսորեցան՛. ու դուն որ լեռանի ձիթենի էիր՝ անոնց վրան պատ_ բուսեցար, ու արմատին հաղորդ

եղեր արմատոյն, և պարար-
տութեան ձիթենւոյն,

18 Մի՛ պարծիր առ ոս-
տովքն · ապա թէ պարծիցիս,
ոչ ելեալ դու զարմատն ՚ի վեր
ունիս, այլ արմատն զքեզ :

19 Խօսիլ արդ՝ ասիցես, ոստ-
քըն փշրեցան, զի ես պատու-
աստեցայ :

20 Ճարւոյք է, անհաւա-
տութեամբն փշրեցան, և դու
հաւատովք հաստատեցար · մի՛
հպարտանար, այլ երկիր :

21 .Օ ի եթէ ած ՚ի բուն
ոստն ոչ խնայեաց, զուցէ եր-
բեք և ՚ի քեզ ոչ խնայեսցէ :

22 Ահդ՝ տես զքաղցրու-
թիւն՝ և զասստկութիւնն այ · ՚ի
վերայ կործանելոցն ասստկու-
թիւն, և ՚ի վերայ քո քաղց-
րութիւն այ, եթէ կայցես ՚ի
նմին քաղցրութեան · ապա թէ
ոչ՝ և դու կոհասեսցիս :

23 Եւ նոքա եթէ ոչ ՚ի նը-
մին անհաւատութեանն կայ-
ցեն, պատուաստեսցին · զի կա-
րող է ած միւսանգամ պատու-
աստել զնոսա :

24 .Օ ի եթէ դու՝ ՚ի բուն
վայրենի ձիթենւոյ անտի հա-
տար, և յանբուն քո՝ ՚ի բարի
ձիթենւոյն պատուաստեցար,
որչափ ևս առաւել նոքա որ
բունքն իսկ են՝ պատուաստես-
ցին յիւրեանց ձիթենւոյն :

25 Ո՛չ կամիմ ՚զգալդ և-
թէ տգէտք իցէք խորհրդոյս
այսմիկ, զի մի՛ յանձինս ձեր ի-
ցէք իմաստունք · զի կուրու-
թիւն փոքր ՚ի շառէ եղև իս-
րայէլի · մինչև լրումն հեթանո-
սաց մտցէ :

26 Եւ ապա ամենայն իս-
եղեր, ու ան ձիթենիին պարար-
տութիւնին ·

18 Ա՛լ ան չըղերուն դիմացը
մի՛ պարծենար· հապա թէ որ պար-
ծենկոտիս, (նայէ որ՝) չէ թէ դուն
(անոր) արմատը վեր բըռներես,
հապա՝ արմատը՝ քեզ :

19 Ը՛լլա թէ ըսես . ան չըղերը
(անոր համար) փըսորեցան, որ ես
(անոնց տեղը) պատրաստիմ :

20 Ա՛ն՝ իրաւ է · (անոնք) ան-
հաւատութենով փըսորեցան, ու
դուն հաւատքով հաստատուեցար·
մի՛ հպարտանար, հապա վախցիր :

21 Որ, թէ ած բնական չըղե-
րուն չի խընայեց, նայէ որ քեզի-
ալ խընայում՝ չընչ :

22 Ուրեմն դուն նայէ այ անու-
շութիւնը՝ ու խստութիւնը· ան վար
ինկածներուն վրա՝ խստութիւն,
ու քու վրադ անուշութիւնը, միան
թէ (դուն) անուշութենին մէջն որ
կենաս . հապա թէ չէ՝ դուն ալ
կրկրարդարվիս :

23 Ու թէ որ անոնք ան անհա-
ւատութեան մէջն որ ալ չի կե-
նան, (իրենքալ) կըպատրաստին .
ինչու որ՝ ած կարող անոնք նո-
րէն պատրաստելու :

24 Որ թէ դուն՝ քեզի բնական
լեռանի ձիթենիէն կտրըվեցար,
ու աղէկ ձիթենիի վրա՝ որ քեզի
բնական չէր, պատրաստեցար· ալ
որքան էվէլի անոնք՝ որ բնական
(հուղ) են, իրենց ձիթենիին վրա
կըպատրաստին :

25 Է՛խպարներ՝ կուզեմ որ աս
խորհուրդս չեզիտցող չըլլաք, որ
ինքիրենիդ մէջիդ չիղնէք որ
մենծ բանմըդնէք . ան որ իսրայէ-
լացոց մէկ մասին կուրնալը անոր
համար եղաւ, որ ինչվան հեթա-
նոսները լըման ներս մտնան :

26 Ու անկէ ետև՝ ալ բոլոր

բայել կեցցէ . որպէս և գրեալ է . եկեսցէ ՚ի սիովնէ փրկիչ , և դարձուսցէ գամպարշտու-թիւնս յակովբայ :

27 Եւ այս նոցա որ յինէն ուխտ՝ յորժամ բարձից զմեղս նոցա :

28 Ըստ աւետարանին՝ թըշ-նամիք են վասն ձեր, ըստ ընտ-րութեանն՝ սիրելիք վասն հարցն :

29 Քանզի անպէղծ են շըն-նորհքն՝ և կոչումն այ :

30 .Օ.ի որպէս և դուք եր-բեմն ապստամբք էիք յայ, և արդ ողորմութիւն գտէք առ նոցա ապստամբութեամբն :

31 Կայնպէս և նոքա այժմ ապստամբք եղեն առ ձերով ողորմութեամբդ, զի և նոքա ողորմութիւն գտցեն :

32 Քանզի արգել այ զա-մենեսին յանհաւանութիւն, զի ամենեցուն ողորմեսցի :

33 Ո՛վ խորք մեծութեան և իմաստութեան և գիտութեն այ· ոչ առանց քննելոյ են դա-տաստանք նորա, և առանց գըն-նելոյ են ճանապարհք նորա :

34 .Օ.ի ո՞վ գիտաց զիտս ան, կամ ո՞վ խորհրդակից լե-նիցի նմա :

35 Կամ ո՞վ ետ նմա փոխ, և առնուցու փոխարէն ՚ի նը-մանէ :

36 .Օ.ի ՚ի նմանէ՝ և նովաւ՝ և ՚ի նոյն՝ ամենայն : նմա փառք յաւիտեանս . ամէն :

խորայելը պիտի փրկըվի. ինչպէս որ գրված է, (Ես) սիոնէն պի-տոր փրկիչը գա, ու յակոբի ան-բարշտութիւնները վերկրի ընէ :

27 Ու անոնց չեմ իմ ուխտս՝ դաշինքըս ատ (կըլլա), երբոր ի-րենց մեղքերն որ ջընջեմ :

28 Աւետարանին նայելով (ա-նոնք այ) թշնամի են՝ ձեր պատ-ճառովը. ընտրութիւնին նայելով՝ սիրելի են հարբընոն համար :

29 Պատճառն որ՝ այ շնորհքն ու կոչումը՝ եակին զղջալ չունի:

30 Ինչպէս որ՝ դուք ալ առաջ-նով աստուածմէն ապրստամբած էիք, ու հիմա ողորմութիւն գտաք անոնց ապստամբութիւնին համար:

31 Սանկալ՝ անոնք հիմա ապրստամբ եղան ձեր վրա եղած ողորմութիւնին համար, որ իրենք ալ ողորմութիւն գտնան :

32 Պատճառն որ՝ ամէնքը չի հաւատալու մէջը բռնեց՝ որ ամէնուն ողորմի :

33 Ո՛վ այ խորունկ մեծու-թեանը ու (իր) իմաստութեանը ու գիտութեանը. ինչպէս անքննելի են իրեն դատաստանները, ու չի հասկընալու են իրեն ճամբաները:

34 Պատճառն որ՝ ան ո՛վ ե-ղաւ՝ որ անոր միտքը գիտցաւ, կամ ո՛վ անոր խորհրդ պիտի տա:

35 Կամ ո՛վ իրեն բան փոխ տըվաւ, ու անոր տեղը՝ անկ առնելու ըլլա :

36 Պատճառն որ՝ ամէն բան ան-կէց, ու անով, ու անոր մէջն (են): իրեն փառք յաւիտեանս. ամէն:

ԳԼ. ԺԲ.

1 Աղաչեմ զձեզ եղբարք՝ զթութեամբքն այ՝ պատ-բաստել զմարմինս ձեր պա-

1 Զեզ կապաչեմ եղբարներ՝ այ ողորմութիւնովը, որ ձեր մարմինները իրեն նըվիրեք կեն-

տարագ կենդանի. սուրբ, հաճոյ ՚ի Աստուծոյ, զոր ծառայութիւն ձեր:

2 Եւ մի՛ կերպարանիք կերպարանաբար աշխարհիս այսորիկ. այլ նորոգեցարուք ՚ի նորոգութիւն մտաց ձերոց, առ ՚ի քննել ձեզ զկամն, և եթէ զինչ են կամքն Աստուծոյ, բարին և հաճոյն և կատարեալ:

3 Ասեմ՝ շնորհօքն որ տուեալ են ինձ՝ ամենայնի որ է ՚ի ձեզ, մի առաւել ինչ խորհիլ քան զարժանն խորհիլ, այլ խորհիլ ՚ի զգաստանալ՝ իւրաքանչիւր, որպէս և բաժանեաց Աստուած չափ հաւատոյ:

4 Որպէս ՚ի միում մարմնի անդամս բազումս ունիմք, և անդամքն ամենայն ոչ զնոյն գործ ունին:

5 Նոյնպէս և բազումքս մի մարմին եմք ՚ի քրիստոս, այլ իւրաքանչիւր միմեանց անդամք եմք:

6 Ի սոյ ունիմք մեք շնորհս ըստ շնորհացն, որ տուեալ են մեզ ազգ ազգ. եթէ մարգարէութիւն՝ ըստ չափոյն հաւատոյ,

7 եթէ պաշտօն՝ ըստ պաշտամանն, եթէ որ ուսուցանէն՝ ըստ վարդապետութեանն.

8 եթէ որ մխիթարէն՝ ըստ մխիթարութեանն. որ առատն ՚ի զուարթութեամբ, որ վերակացուն ՚ի փութով, որ ողորմին՝ լջմտութեամբ:

9 Սէր՝ առանց կեղծաւորութեան, ատեալ զչար, ընդհետ երթալ բարւոյ:

10 Յեղբայրսիրութեան առ դանի զոհ ըլլալու, որ, այ հաճո, ան ձեր մտաւոր պաշտամունքն:

2 Ու ձեր կերպարանքը աս աշխրքքիս կերպարանքով չըլլա. հապա՝ նոր եղիք ձեր մտքին նորոգութիւնովը, որ գուք՝ աս ադիկ հասկընաք՝ որ ինչ է այ կամքը. ան որ բարի է, ու (իրեն) հաճելին՝ ու կատարեալը:

3 Այ շնորքովին որ ինծի տրըված է, աս կըսեմ ձեր ամէնն ալ կուգ, որ անկէց էվէլը բան չի մտմտաք ընելու՝ քան թէ ինչ որ պէտք է մտմտալու. հապա մըտմտաք որ ըզգաստ կենաք ան (շնորքը ներուն) վրա՝ որ Աստուած ամէն մէկուն (իր) հաւատքին չափովը բաժնեբէ:

4 Ինչպէս որ մէկ մարմինի վրա շատ անդամներ ունինք, ու ան բոլոր անդամներուն ըրած գործքը միևնոյն բան չէ:

5 Ասանկ ալ մենք շատ ըլլալով՝ մէկ մարմինը կենք քրիստոսով, ու անանկ ամէն մէկը իրարու հետ անդամ ենք:

6 Միանգամայն որ մենք ունեցանք, անով կերպ կերպ շնորքներ մեզի տըրված է. որ թէ մարգարէութիւն (է, ան) հաւատքին չափովը (ըլլա):

7 Թէ ծառայութիւն (է) ան ծառայութիւնին չափով. թէ որ սորվեցընել (իր) վարդապետութիւնին չափովը.

8 Ան որ կրմխիթարէ՝ մխիթարանքին չափովը. ան որ առատաձեռնութիւն է ուրախութիւնով ընէ. ան որ վերակացու է հոգ տանելով. ան որ գործք ողորմութիւն կընէ՝ զոհ սըրտով:

9 Սէրը առանց կեղծաւորութիւնի ըլլա. չարը ատելով, ու բարուն հաւէն երթալով:

10 Եղբայրսիրութիւնով իրա-

միմեանս զիմածք . ՚ի պատիւ զիմեամբք ելանել :

11 ՚Ի փոյթ՝ մի՛ վհեր[ո]տաք . հոգւով եռացէք, ծա[ռա]յեցէք Տեառն :

12 Յուսով խնդացէք, նեղութեան համբերեցէք, աղօթից սէպ կացէք .

13 ՚Ի պէտս սրբոց հաղորդեցէք . զհիւրասիրութեան զհետ երթայք :

14 Օրհնեցէք զանիծիչս ձեր, օրհնեցէք և մի՛ անիծանէք :

15 Խնդալ ընդ խնդացողս, լալ ընդ լացողս :

16 Զնոյն միմեանց խորհիջիք . մի՛ ամբարտաւանիք՝ այլ ընդ խոնարհս զիջանիցիք . մի՛ լինիք իմաստունք յանձինս ձեր :

17 Մի՛ ումեք չարի չար հատուցանիք . խորհեցարո՛ւք բարիս առաջի ամենայն մարդկան :

18 Եթէ հնար ինչ իցէ ձեզ՝ ընդ ամենայն մարդկան զխաղաղութիւն կալջիք :

19 Մի՛ զանձանց վրէժխընդրիք՝ սիրելիք, այլ տա՛ւք տեղի բարկութեան . քանզի գրեալ է, եմ է վրէժխնդրութիւն, և ես հատուցից՝ ասէ Տէր :

20 Այլ եթէ քաղցեալ է թշնամին քո, հաց տուր նմա . և եթէ ծարաւի, ջո՛ւր տուր նմա . զայս արարեալ՝ կայծակունս հրոյ կուտեսցես ՚ի գլուխ նորա :

21 Մի՛ յաղթիր ՚ի չարէ, այլ յաղթեա բարեաւն չարին :

ԺԲ

11 Ջուստ՝ առանց տրնտրնալոյ . հոգիովնիդ պըղպըջացէք, ո՛նը ծառայութիւնին դանըվեցէք:

12 Յոյսով խընատացէք . նեղութինվն համբերեցէք . ամէն խիր աղօթքի հետ եղէք :

13 Սրբերուն պէտկ եղածին՝ մասն ու բաժին ունեցէք . օտարասիրութեան եռեւ եղէք :

14 Չեզ անիծողները օրհնեցէք . (անոնց) օրհնո՛ւնէք կարգացէք՝ ու զուբալ մի՛ անիծէք :

15 Խնատացողներուն հետ՝ խընատալ , ու լացողներուն հետը լալ:

16 Մէ յիկու հետ մէկ կարծիք ունենա՛ք . ամբարտաւանութինով չի վարվիք, հապա՝ ցածերու հետ ցածցիք . ձեր անձերնիդ իմաստունի տեղ չիդնէք :

17 Չըլա՛ որ մէկուն՝ չար չարին՝ հատուցանէք . ամէն մարդոց դիմաց ձեր միտքն ու խոսքերդը բարի՛ ըլլա :

18 Թէ որ կանելի է նէ՝ (ջանացէք որ) ամէն մարդու հետ խաղաղութինով վարվիք :

19 Դուք ձեր անձովը (ուրիշի դէմ՛) վրէժխընդրութին մի՛ ընէք՝ սիրելնե՛ր , հապա՝ բարկութինի տեղը տվիք . ինչու որ՝ գրված է Թէ, վրէժխընդրութին ընելը ինձի կիյնա, ու հատուցումը ես պիտի ընեմ՛. կրսէ Տերը :

20 Հապա Թէ որ քու թշնամիդ անօթի՛ էնէ՝ անոր հաց տուր , ու Թէ ծարված էնէ՝ իրեն ջո՛ւր տուր . աս ընելով , կրակի կածեր անոր գլխուը կըդիզես :

21 Չարէն մի՛ եխտըվիր, հապա՝ բարիքովըդ չարը եխտէ :

ԳԼ· ԼԳ·

1 Ամենայն անձն որ ընդ իշխանութեամբ է, ՚ի նըմ նագանդութեան կացցէ. քանզի ոչ ուստեք է իշխանութիւն՝ եթէ ոչ յայ. և որ են, յայ կարգեալ են :

2 Այսուհետև որ հակառակ կայ իշխանութեանն, այ տրամանին հակառակ կայ · և որք հակառակն կան, անձանց դատաստանս ընդունին :

3 Օ՚ի իշխանքն ոչ են յերկեւղ բարեաց գործոց, այլ չարեաց : կամիս չերկնչի՞լ յիշխանութենէ անտի, զբարիս գործեա, և ընկալցիս գովութիւն ՚ի նմանէ :

4 Օ՚ի այ պաշտօնեայ է՝ քեզ ՚ի բարիս : ապա եթէ չար գործիցես, երկիր · զի ոչ ՚ի վայրապար ածեալ է սուսեր ընդ մէջ . այ սպասաւոր է վրէժխնդիր ՚ի բարկութիւն այնմ՝ որ զչարն գործիցէ :

5 Վասն որոյ հարկ է հնազանդել լինել, ոչ միայն վասն բարկութեանն, այլ և վասն խղճի մտացն :

6 Վասն այնորիկ և հարկս հարկանիք, զի այ սպասաւորք են ՚ի նմին կանխեալք :

7 Արդ՝ հատուցէք ի՛ւրաքանչի՛ւր զպարտս · որում՝ գհարկ՝ գհարկն, որում զմաքս՝ զմաքսն , որում՝ գերկեւղ՝ գերկե՛ւղն , որում՝ գպատիւ՝ գպատի՛ւն :

1 Ինչ մարդ որ իշխանութիւնն՝ ներքև է՝ թող (անոր) հնազանդութիւնով կենա · պատճառն որ՝ իշխանութիւնը ալ ուրիշ ոևէ մը (տրված) չէ՝ որ միան աստուծմէն է · ու անոնք որ կան՝ (իրենք) աստուծմէ զրված են :

2 Ուստի՝ ալ ան որ իշխանութենին դէմ կըկենա, (ինքը) այ չըսմանին դէմ կըկենա . ու անոնք որ դէմ կըկենան, (իրենց) անձերնին դատապարտութենի՛ն կերքև կրզնեն :

3 Ինչու որ՝ իշխանները բարի գործք ընելու վախու համար չեն, հապա՝ վատ գործքի : կուզես մի որ ան իշխանութենէն վախ չունենաս՝ բարի գործք ըրէ, ու անկէց գովասանք ալ կառնես :

4 Որ ինքը այ պաշտօնեան է՝ քու բարիքիդ համար : հապա թէ որ վատ գործես՝ ալ վախծիր . ինչու որ՝ անիկա պարապ տեղը թուրը մէջիկը չէ կապեր . ինքը այ բսպասաւոր է՝ պատիժ տալով վրէժխնդիր ըլլալու՝ անոր որ վատ բան կըզործէ :

5 Անոր համար պէտք է (իրեն) հնազանդ ըլլալ · չէ թէ միան պատիժէն (վախնալու) համար, հապա՝ խղճմտանքէ ալ շարժած :

6 Ան պատճառովը տուրք ալ կըվճարէք . ինչու որ (իրենք) այ բսպասաւորներն են՝ միշտ ան բանին վրա կենալու :

7 Ուստի ամէնուն (իրենց ըլլալու) պարտքնուները ըրէք · որուն որ տուրք (տալ է՝) տուրք, որուն որ մաքս (է՝) մաքս , որուն որ վախ (է՝) վախ , որուն որ պատիվ (է՝) պատիվ :

8 Եւ մի՛ ումեք պարտա-
պան գտանիցիք, բայց զմիմեանս
սիրելոյ : զի որ սիրէ զընկերն՝
օրէնսն կատարէ ,

9 Ո՛չ մի՛ շնայցեսն , և մի՛ ըս-
պանանիցես, և մի՛ գողանայ-
ցես , և մի՛ սուտ վկայիցես , և
մի՛ ցանկանայցես . և եթէ այլ
ինչ պատուիրան է՝ յայն բան
բովանդակին , եթէ սիրեսցես
զընկեր քո իբրև զանձն քո :

10 Սէր՝ ընկերի իւրում՝ չար
ոչ առնէ. լըման օրինացն սէր է:

11 Եւ զայս գիտասջիք
վասն ժամանակիս . զի արդ՝
ժամ իսկ է մեզ ի քնոյ զարթ-
նուլ . զի այժմ մերձ է մեզ
փրկութիւն՝ քան յորժամ հա-
ւատացաքն :

12 Գիշերն մերձեցաւ , և
տիւն մերձեցաւ . ի բաց ա-
բասցուք այսուհետև զգործս
խաւարի , և զգեցցուք զզէնն
լուսոյ :

13 Իբրև ի տունջեան ըզ-
պատուականք շրջեսցուք . մի՛
անառակութեամբք՝ և արբե-
ցութեամբք , և մի՛ խառն ըն-
կոյնօք՝ և պղծութեամբք , և
մի՛ նախանձու՝ և հակառակու-
թեամբք :

14 Այլ զգեցարուք զտէր յի-
սուս . և մարմնոյ խնամ մի՛ տա-
նիք ի ցանկութիւն :

8 Ու ինչի մէկ բանիմը պարտը-
կան չը մնաք՝ մէկ ըրամէկ սիրելէն
իզատ : ինչու որ՝ ան որ ընկերը կը-
սիրէ՝ (ինքը՝) օրէնքը կրկատարէ,

9 Մի՛ շնաբը, ու մի՛ գողնա-
բը, ու մի՛ սուտ վկայերը, ու մի՛
ցանկաբը . ու ուրիշ ինչ պատ-
վիրանք ալ կա նէ՝ ան (մէկ) խոս-
կին մէջը (ժողվըված) կըբոլըրվի,
թէ քու ընկերըդ քու անձիդպէս
սիրէս :

10 Սէրը՝ իր ընկերին վատը
չընէր. օրէնքին բոլըրվիլը սէրնէ:

11 Ու աստինա վըսյով ալ ես
գիտնաք . որ ալ ժամանակը եկաւ՝
որ մենք քընէն արթննանք .
պատճառն որ՝ հիմա մեզի՝ ալ
մօտ է փրկութիւնը՝ քան թէ ան
առեն որ հաւատացինք :

12 Գիշերը անցաւ գնաց , ու
ցորեկը մօտիկցաւ . ուստի ալ
մեկզի դնենք մըթուն գործքերը,
ու լուսուն զէնքը վրանիս հագ-
նինք :

13 Ցորեկվան պատեր կրնայ
կրվայլենէ անառակ ըզպատ վար-
վինք . չըլլա անառակութիւննե-
րով , ու հարբածութիւնով , ու
խառնուք պառկրվածքով , ու
պղծութիւններով . ու չըլլա նա-
խանձով՝ ու ներչակութիւննե-
րով :

14 Հապա՝ ձեր յի քիը վրանիդ
հագէք, ու մարմնու հոգածութիւն
մի ընէք ցանկութեան բաներով :

ԳԼ. Ա.Դ.

1 Զաւառքի մէջ (դես) տրկար
եղողները՝ ընդունեցէք՝ ա-
ւանդ տարակուսանքով խրդճ-
մտանք ընելու :

2 Մէկը կըհաւատա որ՝ ամէն

1 Այլ զակարացեալն ի հա-
ւատս՝ ընկալարուք, մի՛
խղճիւ երկմտութեանց :

2 Ոմն հաւատայ ուտել զա-

մենայն · և որ հիւանդն է՝ բան-
ջար կերիցէ :

3 Որ ուտէն , զայն որ ոչն
ուտէ , մի անդամնեսցէ . և որ
ոչն ուտէ , զայն որ ուտէն , մի
դատեսցի , քանզի Աստ զնա ըն-
կալաւ :

4 Դու ո՞վ ես որ դատիս զայ-
լոյ ծառայ · իւրմո՞ւն կայ
կամ անկանի · բայց կացցէ ,
զի կարող է Տէրն հաստատել
զնա :

5 Որ պահէ օր ըստ օրէ ,
և որ պահէ զօր հանապազ ·
իւրաքանչիւրոք զմիտ
հաստեսցէ :

6 Որ խորհի զօրն , Տէր խոր-
հի · և որ ոչն խորհի զօրն , Տէր
չխորհի . և որ ուտէ , Տէր ուտէ ,
և զոհանայ զԱյ · և որ ոչն ու-
տէ , Տէր չուտէ , և զոհանայ
զԱյ :

7 Օ՛ի ոչ ոք ՚ի մէնջ ան-
ձամբ կեայ , և ոչ անձամբ մե-
ռանի :

8 Եթէ կեամք՝ Տէր կեամք ,
և եթէ մեռանիմք՝ Տէր մեռա-
նիմք · և արդ՝ եթէ կեամք և
եթէ մեռանիմք՝ Տէր եմք :

9 Քանզի ՚ի նոյն իսկ և քա
մեռաւ՝ և եկեաց , զի մեռելոց
և կենդանեաց աւս Տասարակ
տիրեսցէ :

10 Դու զի՞ դատիս զեղբայր
քո , կամ ընդէ՞ր անդամնես
զեղբայր քո . քանզի ամենեքեան
կալցը եմք առաջի աստեանն
քոյ :

11 Օ՛ի գրեալ է , կենդանի՛
եմ ես՝ ասէ Տէր , զի ինձ կրկ-
նեսցի ամենայն ծունր , և ա-
բան (կրկնա) ուտեր · ու ան (ա-
կալը) որ (հատատոքովը) հիվանդ
է՝ թող (ինքը) խոտեղէն ուտէ :

3 Ան որ (ամէն բան) կուտէ՝
թող վար չհզարնէ ան (ականը)
որ չուտեր . ու ան որ չուտեր՝
թող չի դատէ անիկա որ կուտէ,
ինչու որ՝ Աստ անիկա իրեն առաւ :

4 Դուն ո՞վ ես որ ուրիշի ծա-
ռան կըդատես . ինքը իր տիրոջը՝
(Տաստատ) կըկենա , կամ թէ կից-
նա . բայց կըկենա, ինչու որ՝ տըը
կարող է անիկա ամուր բռնել :

5 Մէկը , մէկ օրը քան գմիւս
օրը նէվելի կըսեպէ , ու մէկալը ամ-
էն օր մէկ կըսեպէ . թող ամէնն
մէկը իր մտքին ախորժածը ընէ :

6 Ան՝ որ հոգ կընէ օրվանը վրա,
(ինքը) Տէր (Նայելով) հոգ կը-
նէ . ու ան որ օրվան վրա հոգ չը-
ներ՝ Տէր համար հոգ չըներ : ու
ան որ կուտէ՝ Տէր կուտէ , ու Այ
կըզոհանա . ու ան որ չուտեր՝ Տէր
չուտեր , ու Այ կըզոհանա :

7 Պատճառն որ՝ մեզմէ մէկը
չեկա՝ որ ինքը իրեն համար ապրի,
ու ինքը իրեն համար մեռնի :

8 Ան որ կապրինք՝ Տէր հա-
մար կապրինք , ու թէ մեռնինք՝
Տէր կըմեռնինք : ուստի՝ թէ ա-
պրինք ու թէ մեռնինք՝ Տէր ենք :

9 Որ՝ Տէր համար ալ քա մե-
ռաւ՝ ու յոխէրնցաւ , որ մեռե-
նըներուն ու յոխէրուն՝ բոլորին
վրա տիրապետէ :

10 (Ա.լ) դուն ինչո՞ւ քու ե-
ղբարդ կըդատես , կամ ինչո՞ւ քու
եղբարդ կըհամայրես · ան որ
(մենք)ամէնքըս քա Տէրանին ա-
ջվը պիտի կենանք (դատվելու) :

11 Ինտոր որ գրված է (թէ՝) ես
կենդանի եմ, կըսէ Տէրը, որ ամէնը
ծընկըլընին ինծի պիտոր ծըռէն ,

մենայն լեզու խոստովան լինի
այ :

12 Այսպա ուրեմն իւրաքան-
չիւրոք 'ի մէնջ՝ ընդ անձին
համարս տայցէ այ :

13 Այսուհետև մի զմիմեանս
դատեսցուք . այլ առաւել
զայս դիջ 'ի մտի, չընել գայ-
թագղելիւն եղբօրն :

14 .Օայս գիտեմ և հաս-
տատեալ եմ 'ի քս յս , զի ոչ
ինչ է պիղծ նովաւ . բայց
այնմ՝ որ համարիցի ոք ինչ
պիղծ , նմա է պիղծ :

15 .Օի եթէ վասն կերակ-
րոյ եղբայրն քո տրտմի , ոչ ևս
սիրով գնացեր . մի կերակ-
րովն գնա կորուսաներ ,
վասն որոյ քսն մեռաւ :

16 Մի՛ հայհոյեսցի բարին
ձեր :

17 .Օի ոչ է արքայութիւն
այ՝ կերակուր և ըմպելի , այլ
արդարութիւն , և խաղաղութիւն
և խնդութիւն 'ի հոգին սբ :

18 .Օի որ յայսմ ծառայէ
քսի , հաճոյ է այ՝ և ընտիր
մարդկան :

19 Այսպա այսուհետև գՀետ
երթիցուք խաղաղութեան , և
գշինութեան որ առ միմեանս :

20 Մի՛ վասն կերակրոյ քա-
կեր զործն այ : ամենայն ինչ
սուրբ է . այլ չար այնմ մարդոյ
է, որ խղճիւն ուտիցէ :

21 Լաւ է ոչ ուտել միս ,
և ոչ ըմպել գինի . և ոչ ո-
րով եղբայրն քո գայթագղի,
կամ գինէ, կամ տկարանայ :

22 Դու՝ ապաքէն հաւատս
ունիս, կաց առանձինն առաջի
ու ամմէն լեզուներըն՝ (իս) ած
պիտի դաւանին :

12 Ուրեմն՝ մեր ամմէն մէկըս՝
իր անձին վըսյովը պիտի այ հա-
մար տա :

13 Ինանկ է նէ՝ մէկըզմէկ չը
դատենք. հապա՝ աս էվէլօք մըտ-
վընիդ դրէք՝ որ եխպօրմը գայ-
թաղկութիւն չի տաք :

14 Աս գիտեմ, ու քսով յոյվ
կըհաստատեմ, որ ճնկի բանմը
չեկա որ ինքն իրեն պիղծ ըլլա .
բայց որ մէկը բանմը որ կըսեպէ
թէ պիղծ է, ան՝ իրեն պիղծ կըլլա:

15 Ուր՝ թէ կերակրու պատ-
ճառով քու եխպարդ աւերմունք
առնէ, ալ դուն անոր չես սի-
րով վարուած չես ըլլար . քու կե-
րակուրովդ անիկա մի կորսըն-
ցուներ, որ իրեն համար քս մեռաւ:

16 Չըլլա որ ձեր բարի բան
ընելուն՝ վատ զրուցեն :

17 Ինչու որ՝ այ արքայութիւնը
ուտել ու խմելու բան չէ, հապա՝
արդարութիւն ու խաղաղութիւն՝
ու ուրախութիւն հոգով սրբով :

18 Ուր՝ ան որ աս կերպովըս
քսի կըծառայէ, ինքը այ հաճո
կըլլա, ու մարդոցմէ՝ պատուելի :

19 Ուստի ալ խաղաղութիւնի
(բաներու) եռանք ըլլանք, ու ի-
րարու շինութիւն տալու :

20 Կերակրու պատճառով այ
գործքը մի քակեր : ամմէն բան
մաքուր է . հապա վատ՝ ան մար-
դուն կըլլա՝ որ անիկա խղճմտա-
նք ընելով որ ուտէ :

21 Աղէկ է, ոչ միս ուտել,
ու ոչ գինի խըմել, ու ոչ անանկ
բան (ընել՝) որ անով քու եխպա-
րըդ կրգայթաղկի, կամ կըսկընը-
դի, կամ կըտկարանա :

22 Դուն՝ որ հաւատք ունիս (մի-
միմն բան ուտելու), ան (քու ներսդ)

այ · երանէ որ ոչ գատեսցի
զանձն, որով զընկերն՝ փոր-
ձիցէ :
23 Ի՛այց որ խղճէն, թէպէտ
և ուտիցէ՝ գատապարտեալ է ·
զի ոչ ըստ հաւատոց · զի ա-
մենայն ինչ որ ոչ ՚ի հաւա-
տոց է՝ մեղք են :
24 Ա՛յլ այնմ՛ որ կարող է
հաստատել զձեզ ըստ աւետա-
րանիս իմում, և ըստ քարո-
զութեանն յի՛սուս, ըստ յայտ-
նութեան խորհրդոյն, ժամա-
նակաւք յաւիտենից լուեալոյ,
25 Եւ յայտնելոյ այժմիկ ՚ի
ձեռն գրոց մարգարէականաց,
ըստ հրամանի մշտնջենաւորին
այ, ՚ի հնազանդութի՛ւն հա-
ւատոց, յայ՛տնեցեալոյ ծանու-
ցելոյ : միայնոյ իմաստնոյն այ,
՚ի ձեռն յի՛սուսի քրի՛ստոսի,
փառք յաւիտեանս · ամէն :

ծածուկ բռնէ՝ այ վիմացը · երկիւղ
է անոր՝ որ անոյ որ ընկերը կը-
փորձէ՝ իր անձը չի գատապարտէ :
23 Ի՛այց անիկա որ խրոխտմանք
կընէ (ուտելու,) թէ որ ուտէ նէ՝
կը գատապարտըվի · ինչու որ՝ ան՝
հաւատքով չէ · որ՝ ինչըր հաւատ-
քէ առաջ չի գար՝ ան մեղք է :
24 Ա՛ւ ան՝ որ կարող է ձեզ
հաստատ պահել իմ՛ (խօսած) ա-
ւետարանիս պէս, ու յի՛սուսի քրի՛ստոսի
քարոզութիւնը պէս · ան խորհուրդին
յայտնըվելուն վրա, որ յաւիտե-
նից ատենէն լուռ պահված էր ,
25 Ու հիմա՝ մարգարէից գրքե-
րուն պէս յայտնըվեցաւ՝ յաւիտե-
նական այ հրամանը, հաւատքի
հնազանդութիւնը՝ բոլոր ազգե-
րուն գիտցնելու : այ՝ որ ինքը
միան իմաստուն է, յի՛սուսի ձեռ-
քով, իրեն փառք յաւիտեանս ·
ամէն :

Գ Լ · Ժ Ե ·

1 Պարտ է մեզ որ կարծղ
եմք՝ զտկարութիւն տկա-
րացն բառնալ · և մի՛ անձանց
և՛ եթ հաճոյ լինել :
2 Ա՛յլ իւրաքանչիւրոք ՚ի
մէնջ ընկերին հաճոյ լիցի ՚ի
բարիս՝ վասն շինութեան :
3 Քա՛նզի և քա՛ւ ոչ եթէ ան-
ձին հաճոյ եղև, այլ որպէս և
գրեալ է, նախատինքն նախատ-
չաց քոց անկան ՚ի վերայ իմ՛:

4 Ի՛այց որ ինչ գրեցա՛ւն,
՚ի մեր վարդապետութիւն գրե-
ցա՛ւ · զի համբերութեամբ և
մխիթարութեամբ գրոց՝ զոյն
ընկալցուք :
5 Ա՛յլ ա՛ծ համբերութեան
և աւենայն մխիթարութեան՝

1 Մենք որ ա՛լ ուժեղ ենք՝ պէտք
է որ տկարներուն տկարու-
թիւնը վերցընենք · ու միան մեր
անձին հաճոյքը չընենք :
2 Հապա՝ մեր ամէն մէկըս
ընկերին հաճոյական բաւ-
րիք ընելով անոր շինութե՛ն համար:
3 Ա՛ն որ՝ քա՛ւ ալ չէ թէ իր ան-
ձին հաճոյքը նայեցաւ · հապա՝
ինտոր որ գրված է. (թէ) քեզ
քամահրողներուն քամահրանքը
(եկաւ) իմ՛ վրաս ինկաւ :
4 Որ ա՛լ (բոլոր) ինչ որ
գրված է՝ մեզի սորվեցնելու հա-
մար գրվեցաւ · որ համբերութի-
նով ու (ա՛ր) գրոց միխիթարանքո-
վը յոյսերնիս հաստատ բռնենք :
5 Ասոի ա՛ծ՝ որ համբերութի՛ն
ու ամէն կերպ միխիթարանք կու-

տայէ ձեզ զնոյն խորհել ընդ միմեանս ըստ յոյն քսի :

6 Օ՛ի միաբանութեամբ՝ ի մի բերան՝ փառաւորը աստիցէք զԱ՛ծ և զՀայր նո՛ն մերոյ յոյն քսի :

7 Վասն որոյ ընկալարո՛ւք զմիմեանս, որպէս և քա՛ ընկալա՛ւ զձեզ ի փառս ա՛ յ :

8 Ա՛յլ ասեմ, թէ քո՛ւ ըստպատուր թլփատութեանն լինել՝ վասն ճշմարտութեանն այ էր, առ ի հաստատո՛ւն առնելոյ զաւետիս Քրիստ :

9 Ա՛յլ հեթանոսք վասն ողորմութեան փառաւորը աստիցեն զԱ՛ծ · որպէս և զրեալ է· վասն այսորիկ դոհացայց զքէն ի հեթանոսս, և անուանդ քո՛ւ սաղմոս ասացից :

10 Եւ դարձեալ՝ թէ ուրախ եղերուք հեթանոսք ընդ Ժողովրդեանն Նորա :

11 Եւ դարձեալ՝ թէ օրհնեցէք ամենայն հեթանոսք զտէր, և գովեցէք զնա ամենայն ժողովուրդք :

12 Եւ դարձեալ՝ եսայի ասէ · եղիցի արմատն յեսսեայ, և որ կանգնելոյն է իշխան հեթանոսաց, ի նա հեթանոսք յուսասցին :

13 Ա՛յլ Ա՛ծ յուսոյ՝ լի՛ առասցէ զձեզ ամենայն խնդութեամբ և խաղաղութեամբ, առաւելո՛ւլ ձեզ յուսով՝ զօրութեամբ Հոգւոյն սրբոյ :

14 Հաստատեալ եմ և ես ինքնին եղբարք իմ՝ վասն ձեր, զի դուք լի՛ էք բարութեամբ, լի՛ էք ամենայն գիտութեամբ, կարող էք զմիմեանս խրատել :

տա, անանկ ընէ որ դուք միևնոյն մտածմունք ունենաք ձեր մէջ՝ յոյն քսի (կամացը) պէս :

6 Որ միաբան մէկ բերան փառաւորէք Ա՛ծ՝ ան որ Հայր է մեր Տ՛ն յոյն քսի :

7 Ուստի ալ միմիկալը (սիրով) ընդունեցէք, ինչպէս որ քա՛ ալ ձեզ ընդունեց՝ այ փառաց համար:

8 Որ ըսեմ թէ (ասալ) կըսեմ, որ՝ քա՛ թլփատութենէ ծառայեց՝ որ այ ճշմարտախօսութիւնը (ըրցուցնէ) թէ՝ ան հաբերնուս (եղած) աւետմունքը հաստատ է :

9 Իսկ հեթանոսները Ա՛ծ կըփառաւորեն՝ (իրեն ըրած) ողորմութենին համար, ինչպէս որ գրուած ալ է, (թէ) անոր համար՝ հեթանոսներուն մէջ քեզի դոհութիւն կուտամ, ու քու անունդ նիւ սաղմոս կերգեմ :

10 Ու միւսալ, թէ՝ ուրախ եղէք հեթանոսներ՝ ուրախ եղէք անոր ժողովըրդին հետ :

11 Ու միւս ըրնալ, թէ՝ բոլոր հեթանոսներըդ տերը օրհնեցէք, ու բոլոր ժողովըրդներ՝ ինքը գովեցէք :

12 Ու միւսալ՝ (ան որ) եսային կըսէ. (ան Հուդին) արմատը յեսսէյին պիտի ըլլա · որ անկից հեթանոսներուն իշխան կեցած, հեթանոսները յոյսերնին անոր վրա պիտի ունին:

13 Ա՛յլ ինքը որ յուսու Ա՛ծ էՀ՝ ձեզ ամէն կերպ ուրախութիւնով ու խաղաղութիւնով լեցընէ · որ ձեր յոյսը էվէլնա Հոգուն սրբ զօրութիւնովը :

14 Իմ եղբարներըս՝ ես ալ հաստատ եմ ձեր վրա, որ դուք բարութիւնով լիքն էք · ամէն գիտութիւններով լիքը, (անանկ որ կարող էք միմիկալ խրատել:

15 Ահա համարձակագոյնս գրեցի առ ձեզ եղբարք՝ փոքր ի շատէ, իբրև յիշեցուցանեմ զձեզ վասն շնորհացն՝ որ տուեալ են ինձ յաչ,

16 լինել ինձ սպասաւոր յաի քահի ի հեթանոսս. ըղձամ կերտս առնել զաւետարանն աչ, զի եղիցի պատարագն հեթանոսաց ընդունելի, սրբեալ հոգւովն սրբով :

17 Ունիմ այսուհետև պարծանս՝ ի քահ յաի առ ած :

18 Քանզի ոչ իշխեմ խօսել ինչ՝ զոր ոչ գործեաց քահ ինձ՝ ի հնազանդութիւն հեթանոսաց՝ բանիւք և արդեամբք .

19 .Օրութեամբ նշանաց և արուեստից, զօրութեամբ հոգւոյն սրբ . ոպ ինձ յերուսաղեմ մինչև ի կողմանս լերիւրիկացւոց , ընտրեալ զաւետարանն քահ :

20 Ախտիպս առատայեալ յաւետարանել, ոչ ուր անուանեցաւ քահ, զի մի իբրև յայլոյ հիման վերայ շինիցեմ :

21 Ահա որպէս և գրեալ է, թէ որոց ոչ պատմեցաւ վասն նորա՝ տեսցեն , և որոց ոչ լսեն լուեալ՝ ի միտ առցեն :

22 Վասն որոյ՝ շատ խափանեցայ գալ առ ձեզ :

23 Իսկ ոչ ևս գոյ ինձ տեղի ի կողմանս յայսոսիկ. և անձնակ յոյժ ունիմ ի բազում ամաց գալ առ ձեզ :

24 Յորժամ անցանիցեմ ի սպանիա , ակն ունիմ յանցանել ընդ ձեզ . և ի ձէնջ յուզարկիլ

15 Իսկ (ես ալ) ևխպարներ՝ համարձակեցայ քիչմը բան ձեզի գրելու . իբր թէ մտքերնիդ ձգելովմը, ան շնորքովէն որ՝ աստուծմէ ինծի տրըված է՝

16 Յաի քահի գործքին ծառայելու՝ հեթանոսաց մէջ , բահծալի ընելով այ աւետարանը. որ հեթանոսներէն ըրած զոհով սրբով մաքրըված՝ (իրեն) ընդունելի ըլլա :

17 Ուր ասով՝ այ բանին մէջը՝ յաի քահով պարծենալիք ունինք :

18 Ուր (ես) չեմ իշխեր ալ բանմը ըսելու (անոր համար՝) որ քի խոմով ըրած չըլլա՝ հեթանոսները (հաւատու) հնազանդեցնելու՝ խօսկերով ու գործքերով .

19 Նշաններու ու հրաշքներու ուժով՝ հոգւոն սրբ զօրութիւնով . ինծոր որ ես երուսաղէմէն (սկսած՝) ինչվան լերիկեցոց կողմերը քահի աւետարանը (քարոզելով) լեցուցի :

20 Անանկ առատ խօսկերով աւետարանելի , չէ թէ հոն՝ ուր որ քահի անունը լըսված էր, որ՝ չըլլա որ՝ իբր թէ ուրիշի (գրած) հիմի վրա շինվածք շինեմ :

21 Հապա՝ ան գրված բանին պէս , թէ անոնք՝ որ անոր վրայովը իրենց չէ զրուցված՝ պիտոր (անիկա) տեսնեն , ու անոնք որ չեն լսած՝ պիտի խմանան :

22 Ասոր համար՝ շատ անգամ եղաւ որ՝ արգիլվեցա ձեզի գալու :

23 Իսկ հիմա ես աս կողմերը ալ կենալու պատճառ չունիմ. ու շատ տարիէն հետէ ատոնիկ բախծանք ունիմ ձեզի գալու ,

24 Ա որ տանն դէպի ըսպանիա նիա անցնելու ըլլամ, կըյուսամ որ անոնց երթալու համբովը ձեզ ալ տեսնամ, ու ձեզմով գոնեա

անդր, եթէ նախ իսկ փսքը ՚ի շատէ ձեւք լցայց :

25 Բայց այժմ երթամ յԵրուսաղէմ՝ պաշտել զսուրբսն :

26 Քանզի Հաճոյ թուեցաւ Մակեդոնացւոցն և աքայեցւոցն՝ հաղորդութիւն լինել առնել ընդ աղքատս սրբոցն՝ որ ենն յԵրուսաղէմ :

27 Հաճոյ թուեցաւ, քանզի և պարտապան իսկ են նոցա : զի եթէ հոգևորացն նոցա հաղորդ եղեն հեթանոսք, պարտ ին և մարմնաւորացն կցորդ լինել :

28 Այրդ՝ զայն կատարեալ, և կնքեալ զպտուղն նոցա, անցից առ ձեզ ՚ի սպանիա :

29 Ծայն գիտեմ, զի ՚ի գալն իմում առ ձեզ, լրութեամբ օրհնութեան եկից :

30 Աղաչեմ զձեզ ե՛ղբարք ՚ի Տէրն Յն մերոյ Յն քսի, և սիրով հոգւոյն, պատերազմակից լինել ինձ յաղօթս վասն իմ՝ առ Ած .

31 Ծի ապրեցայց յապրստամբացն որ ՚ի հրէաստանի են . և պաշտօնն իմ որ յերուսաղէմ, ընդունելի լիցի սրբոցն

32 Ծի խնդութեամբ եկեալ առ ձեզ՝ ՚ի կամս Ած , հանգեայց ընդ ձեզ :

33 Իւ Ած խաղաղութ եղիցի ընդ ձեզ ամենեսեան . ամէն :

քրիստոսի կշտանալէն եւս , դուքս ես դէպի հոն Համբա գնէք :

25 Սիան թէ՝ հիմա երուսաղէմ կերթամ՝ սրբերուն համար եղած գործքը հոգալու :

26 Պատճառն որ՝ մակեդոնացոց ու աքայեցոց խիստ լաւ երեցաւ՝ որ (տուքի) հաղորդութիւնը ընեն երուսաղէմ եղած աղքատ սրբերուն հետ :

27 Խիստալաւ երեցաւ (կրեմ). ինչու որ՝ անոնց բուն պարտքին ալ են . որ՝ եթէ անոնց հոգևոր բարուն հեթանոսներն որ մասնակից եղան , մարմնաւորներնալ պէտք է որ հետերնին կից ըլլան :

28 Ուստի՝ աս որ կատարեմ, ու անոնց (տրված՝ սիրու) պտուղը տեղն որ գնեմ, անանկ ձեր քովէն կանցնիմ իսպանիա (կերթամ) :

29 Այ (աղէկ) գիտեմ, որ՝ ես ձեզի գալս որ ըլլամ՝ (քսի աւետարանին) առատ օրհնութիւնովը պիտոր գամ՝

30 Եղբայրներ՝ ձեզի կաղաչեմ ես մերոյ Յն քսի ձեռքով, ու հոգուն (սըղ) սիրովը, որ իմ պատերազմիս ընկերը ըլլաք՝ ինձի համար այ աղօթք ընելով .

31 Որ հրէաստանը եղած (հրեից) ապրստամբներուն ձեռքէն խալսեմ. ու երուսաղէմը իմ (ընելու) ծառայութիւնս՝ սրբերուն ընդունելի ըլլա

32 Որ ալ ուրախ սրտով , այ կամքովը՝ ձեր քովն որ գամ, ձեր հետը հանգիստ կենամ՝

33 Ու խաղաղութեան Ածը՝ ձեր ամէնուդ հետն ըլլա. ամէն:

Գ Լ . Ժ . Օ .

1 Յանձն առնեմ ձեզ զքրիստոս մեր, որ է սպասաւոր եկեղեցւոյն կենքրացւոց :

1 Ձեզի կրյանձնեմ մեր փրկչին քուրը, որ ինքը կենքրացոց կեղեցիին ըսպասաւորն է :

2 Օ՜ի գնա՝ ընկալջիք ՚ի Տր՝ արժանի սրբոց, և վերակացու լինիջիք նմա՝ յոր պէտս իրաց և կոչեսցէ զձեզ · քանզի և նա վերակացու եղև բազմաց, և ինձ իսկ ՚ի պէտս :

3 Ողջոյն տացիք պրիսկիայ և ակիւղեայ՝ գործակցաց իմոց ՚ի քս յս ·

4 Որք ընդ անձին իմոյ գնբեհանց պատրանացս մատուցին : զորոց ոչ ես միայն գոհանամ, այլ և ամենայն եկեղեցիք հեթանոսաց : և առ անին եկեղեցւոյն նոցա :

5 Ողջոյն տացիք եպենետայ սիրելւոյ իմոյ, որ է պտուղ ասիացւոց ՚ի քս :

6 Ողջոյն տացիք մարեայ, որ բազում վաստակ վաստակեաց ՚ի ձեզ :

7 Ողջոյն տացիք անդրոնիկեայ և յունեայ՝ ազգականաց իմոց՝ և գերեկցաց, որք երևելիքն իսկ են յառաքեալս · որք և յառաջ իսկ քան զիս եղեն ՚ի քս :

8 Ողջոյն տացիք ամպղեայ սիրելւոյ իմոյ՝ ՚ի Տր :

9 Ողջոյն տացիք ուրբանեայ գործակցի իմոյ ՚ի Տր, ևստաքեայ սիրելւոյ իմոյ :

10 Ողջոյն տացիք ապելլեայ՝ որ ընտիրն է՝ ՚ի Տր :

11 Ողջոյն տացիք նոցա՝ որ յարիստոբուլեայ ազգականք իցեն: ողջոյն տացիք հերովդիոնեայ ազգականի իմում : ողջոյն տացիք այնոցիկ՝ որ ՚ի նարկիսեայ տանէն իցեն՝ ՚ի Տր:

ջուց բսկսաւ՝ ատ շնորհց (պաշտօ-
նը), անանկ ձեր մէջնալ կատարէ:

7 Հապց ինտոր որ ամմէն բանի
մէջ էվէլնէ եք, չաւտքով՝ ու խօս-

բանիւ, և զիտութեամբ, և ա-
մենայն փութով, և սր՝ ի մէնջ
՝ի ձեզ սէրն է. զի և յայդմ ևս
շնորհի առաւել լինիցիք :

8 Ոչ որպէս հրաման տա-
լոյ ասեմ, այլ վասն այլոց
փութոյ, և վասն ձերոյ սիրոյ՝
զմտերմութիւնդ փորձեմ :

9 Քանզի գիտէք զշնորհսն
ՅՍՈՒ մերոյ Յի՝ քո՛. զի վասն
ձեր աղքատացաւ՝ որ մեծա-
ւունն էր, զի դուք նորա ա-
քատութեամբն մեծասջիք :

10 Եւ խրատ մի յայսմիկ
տամ. զի այն իսկ օգտի է ձեզ.
որք ոչ միայն գառնելն, այլ՝ և
զկամէն յառաջագոյն սկսայք
՝ի հերուն հետէ :

11 Բայց արդ՝ և գառնելն
իսկ կատարեցէք : զի որպէս
յօժարութիւնն ՝ի կամայ է,
նոյնպէս և առնելն ըստ զօրին :

12 .Օ՚ի եթէ յօժարութիւնն
առաջի կայ, ըստ զօրին ընդու-
նելի է, և ոչ եթէ ըստ չզօրին :

13 .Օ՚ի ոչ եթէ այլոց հան-
գիստ կամիցիմ, և ձեզ նեղու-
թիւն :

14 Այլ հաւասարութեամբ՝
յայժմու ժամանակիս, ձեր ա-
ռատելութիւնդ ՝ի նոցա պա-
կասութիւնն. զի և նոցա ա-
ռատելութիւնն եղիցի ՝ի ձե-
րում՝ պակասութեդ. զի եղիցի
հաւասարութիւն, ոպ՚ և գրեալ է.

15 Թէ որ բազումն առ՝ ոչ
առատեցաւ, և որ սակաւն՝ ոչ
նուազեցաւ :

16 Բայց շնորհք ՅՍՈՒ՝ որ արկ
զնոյն փոյթ վասն ձեր ՝ի սիրտ
տիտոսի :

կով՝ ու զիտութենով, ու բո-
լոր ջանքով, ու մեր սիրոյն որ
ձեզի ձեզ է. սա շնորքին մէջ-
ալ էվէլի եղէք :

8 Չէ թէ հրամայելով (սա ձե-
զի) կըսեմ. հապա՝ ուրիշներուն
ջանք տալու համար, ու ձեր՝ ըս
սրտանց սիրելը՝ կուգեմ փորձել:

9 (Ա՚զկ) գիտէք ՅՍՈՒ մերոյ Յի՝
քո՛ ըրած շնորքը, որ ինքը հա-
րուստ ըլլալով՝ ձեզի համար աղ-
կըտցաւ, որ դուք անոր աղքը-
տութենովը հարստանաք :

10 Ու սա բանիս մէջ՝ (սա) մկ
խրատատալ կուտամ. որ ան՝ ձեզի
շահաւոր է : որ չէ թէ միան (չի-
մա) ընելը՝ հապա ան կամենալ-
ալ առաջուց բակըսերէք՝ անցած
տարիէն հետէ :

11 Ուսաի ալ հիմա ընելնալ
կատարեցէք : որ ինչպէս յօժա-
րութիւնը՝ (բարի) կամքէ առաջ
եկաւ, ասանկալ (ձեր) ընելը՝ ու-
նեցածնեներնուդ չափովը :

12 Որ՝ թէ յօժարութիւն որ կա,
ալ ան՝ ունեցածին չափովը՝ (այ)
ընդունելի կըլլա, ու չէ թէ չու-
նեցածին չափով :

13 Որ (ասով՝) չէ թէ ուրիշ-
ներուն հանգստութիւն կըգտնե-
նամ, ու ձեզի նեղութիւն տալ :

14 Հապա՝ որ բանը հաւասար
ըլլա. հիմիկու հիմա ձեր էվէլին
անոնց պակսութենին (երթա), որ
անոնց էվէլինալ (օրմը) ձեր
պակսութենին գա. որ անանկ՝
հաւասարութիւն ըլլա. ինչպէս որ
գրըված է (ան բանը),

15 Թէ՝ ան որ շատ (մանանա)
առա՝ (իրեն) չէվելցաւ, ու ան որ
քիչ՝ (իրեն) չէ պակսեցաւ :

16 Բայց այ շնորհակալ եմ. որ
ան (իմ՝ ունեցած) հոգը ձեր վրա՝
տիտոսին սիրտնալ ձգեց :

17 .Օ,ի զաղաչանսն ընկա_
լաւ, և փութացաւ յօժարա_
գոյնս ղիմաց գալ առ ձեզ :

18 Եւ առաքեցաք ընդ նը_
մա զեղբայրն, որոյ գովութիւնն
յաւետարանի անդ է՝ ընդ ա_
մենայն եկեղեցիս :

19 Եւ ոչ այսչափ միայն,
այլ և ձեռնադրեալ յեկեղե_
ցեաց անտի, նշանակից մեր
եղեալ՝ ի շնորհս յայսոսիկ, որ
պաշտին ի մէնջ ի փառս ն՚ն,
և ի մեր յօժարութիւն :

20 Խայց զայս խոյտեաք իսկ,
թէ գուցէ արատ ինչ ոք գնի_
ցէ ի հաստատութենս յայս_
միկ՝ որ պաշտեցաւս ի մէնջ :

21 Քանզի խորհիմք գբա_
րիս՝ ոչ միայն առաջի ն՚ն,
այլ և առաջի մարդկան :

22 Եւ առաքեցաք ընդ նո_
ա զեղբայրն մեր՝ զոր ընտրե_
ցաք ի բազում իրս, բազում
անգամ պինդ գտեալ. և առա_
ւել ևս այժմ պնդագոյն յու_
սով մեծաւ ի ձեզ :

23 Խայց եթէ վասն տիտոսի
ինչ բանք են, իմ հաւասար
է, և ձեր գործակից. և եթէ
եղբարք մեր՝ առաքեալքն եկե_
ղեցւոյ, և փառք քրի :

24 Եւ արդ՝ զՀանդէս սիրոյ
ձերոյ, և զմերոյ պարծանաց
վասն ձեր, ի դոսա ցուցջիք
յանդիման ամ՚ եկեղեցեաց :

17 Որ (ինքը՝ իմ) աղաչանքըս
սիրով ընդունեց, ու յօժար սրը_
տով արտօրնօք ելաւ ձեր քովը
գալու :

18 Ու անոր հետը ան եղ_
պարն ալ խրկեցինք, որ իր բարի
անունը աւետարանին (քարո_
զութեանը) մէջ՝ բոլոր եկեղեցի_
ները կը գովուցնի :

19 Ու չէ թէ միան աս, հապա՝
(ինքը) ան եկեղեցիներէն ալ
ձեռնադրուեցաւ՝ որ մեզի համ՚
բորդութեան ընկեր ըլլա աս (ո_
ղորմութիւնի) տուրքիս մէջ, որ
մենք կը գործադրենք՝ ն՚ն փառացը
համար, ու մեր յօժար սրտութեամ՚ :

20 Որիան թէ աս ալ մտովնէս
կանոնի, որ չըլլա թէ մեզի ադա_
մը ձգէ սասկի հաստատ յանձնը_
ւած գործս վրայով. որ մենք
ան բանին ծառայեցինք :

21 Պատճառն որ՝ բարի գործ_
քը՝ չէ թէ միան մենք կը մտմըտ_
տանք ատը ղիմացը (ընելու), հա_
պա՝ մարդոց ղիմացն ալ :

22 Ու անոնց հետը մեր եղ_
պարնայ խրկեցինք. որ (ինքը
շատ բանի մէջ ընտրեցինք (գրինք)
որ շատ անգամ ջարուկ գտանք.
ու հիմայ աւելի ջանացող (աս
բանիս) ան մեծ յոյսովն որ վրա_
նիդ ունի :

23 Որիան թէ՝ տիտոսին հա_
մար խօսկ որ ըլլա, (գիտնաք որ)
ան իմ հետս հաւասար է, ու ձեր
վրայովը գործու ընկերս. ու (մե_
կայ) մեր եղբայրներնայ (որ ըսկը,
իրենք) եկեղեցիին առաքեալներն
(են), ու քրի ալ փառք (են) :

24 Ուստի ալ ձեր սիրուն չա_
փը՝ ու մեր պարծենալնիս ձեզի
համար, բոլոր եկեղեցիներուն
դիմացը՝ առանց վրա ցրցուցէք :

ԳԼ. Թ.

1 Ա՛յլ վասն պաշտամանն որ ի սուրբսն է, աւելի՛ է ինձ և գրել առ ձեզ :

2 .Օ՛ի զիտեմ զյաժարու-թիւն ձեր, զոր վասն ձեր պար-ծեցեալ եմ՝ ի մէջ մակեդով-նացւոցն, թէ աքայեցիքն՝ ի հերուն չետէ պատրաստ են. և ձեր նախանձն զբազում յոր-դորեաց :

3 Եւ առաքեցաք զեղբար-սըն, զի մի՛ պարծանքն մեր որ վասն ձեր՝ ընդունայն լինիցի՛ ի մասինդ յայդմիկ : այլ որպէս ասէի՛ իսկ, պատրաստացո՛ւյնք զտանի՛քիք :

4 Գուցէ՛ յորժամ գայցեն ընդ մեզ մակեդոնացիքն, և գտանիցեն զձեզ անպատրաս-տս, և ամաչեսցուք մեք· զի մի՛ ասասցուք՝ թէ դուք, ՚ի մասինդ յայդմիկ պարծանաց :

5 Այրդ՝ կարեւո՛ր համարե-ցայ աղաչե՛լ զեղբարս, զի յա-ւաջադոյն եկեսցեն առ ձեզ, և յառաջագոյն պատրաստեն զը-յառաջագոյն խոստացեալ օրհ-նութիւնն ձեր ՚ի պատրաստի ունել· այնպէս՝ իբրև զօրհնու-թիւն՝ և մի՛ իբրև զպահանջու-թիւն :

6 Քանզի զայդ որ սերմանէ չՀդելով՝ չՀդելով և հնձէս-ցէ· և որ սերմանէ առատու-թեամբ՝ առատութեամբ և հնձեսցէ :

7 Իւրաքանչիւր որպէս և յաժարեսցի ոք սրտիւ, մի՛ առ չարվի և որոմնութեան· քան-զի զտուրս զուարթառա՛տս սի-րէ ՝ած :

8 Այլ կարող է ՝ած զամե-

1 Ալ ասա՝ սրբերուն ըլլալու ծառայութիւնին վրա, ինձի կվելորդ է որ (երկար) ձեզի գրեմ :

2 Ինչու որ՝ (ես) զիտեմ ձեր յաժարութիւնը, որ ան պարծեն-ցերալ եմ մակեդոնացոց ղիմա-ցը, որ աքայեա եղողները՝ անցած տարիէնէ չետէ (ան) պատրաս-տերեն· ու ձեր բարի ջանքը շա-տին յորդորմունք եղաւ :

3 Ու ալ ան եղբարները (ձեզի) խաւրեցինք· որ ատ բանիդ չա-մար մեր պարծենալը ձեր վըայ-ով՝ պարապը չըլլա : ատոի ինչ-պէս որ ալ ըսերեմ, անանկ պատրաստ կենաք :

4 Զըլլա թէ՝ որ ատեն մակե-դոնացիները մեր չետեն որ գան, ու ձեզ՝ ան չի պատրաստած գտնեն, ալ մենք ամօթով մնանք, որ չըսենք թէ՝ դուք· ատ (մեր) պարծանքին նայելով :

5 Ոատի չարկաւոր տեսա՝ ան եղբարները աղաչելու որ իմ առաջ ձեզի գան· ու առաջուց-մէն ըսեն, որ ան ձեր ըսկիսպէն խօսկ տրված օրհնած ընծանիդ պատրաստ ըլնէք· անանկ՝ ին-տոր օրհնած բան, ու չէ՝ ինտոր ագահութիւնով տըրված :

6 Պատճառը, ատ բանը՝ ան որ խնայելով կըցանէ՝ խնայելով-ալ կըհնձէ· ու ան որ առա-տութիւնով կըցանէ՝ առատութի-նովալ կըհնձէ :

7 Այմէն մէկը ինտոր որ իր սիրտը կըյաժարի՝ անանկ թող ընէ, չէ թէ չարկ եղած իպէս՝ ու սրտցաւութիւնով· ինչու որ՝ ած ուրախասատատուքը կսիրէ:

8 Ու ինքը ած ալ՝ որ (ամենա-

նայն ընդհանս առաւելուլ ՚ի ձեզ. զի յամենայնի յամենայն ժամ զամենայն բաւականութիւն ընկալեալ, առաւելուցուք յաւէտ յայմ գործս բարութեան.

9 Որպէս և գրեալ է. սփռեաց և ետ տնանկաց, արդարութիւն նորա մնայ յաւիտեան:

10 Այլ այն՝ որ պարգևէ սերմն սերմանաւհանաց՝ և հաց ՚ի կերակուր, պարգևեսցէ և բազմացուսցէ զսերմանիս ձեր, և աճեցուսցէ զարդիւնս արդարութեան ձերոյ.

11 Յամենայնի մեծացեալք ամենայն առատութեամբ, որ յօրինէն մեզ գոհութիւն այ:

12 Զի պաշտօն հարկիս այսորիկ՝ ոչ միայն առ ՚ի լնուլ զպակասութիւն սրբոցն է, այլ առաւելուլ բազմօք գոհութիւն այ:

13 Զանգիսիս պաշտամանս այսորիկ, փառաւորել զԱ՚ի վերայ հնազանդութեան խոստովանութեան ձերոյ յաւետարանն քրս. և առատութիւն հաղորդութեանն ՚ի նոսա և յամենեսին:

14 Եւ նոցա աղօթիք վասն ձեր. քանզի անձկացեալ են առ ձեզ վասն առատ շնորհացն այ՝ որ ՚ի ձեզ:

15 Այլ շնորհք այ, ՚ի վերայ անպատում պարգևացն նորա:

կարող է, բոլոր շնորհքերը ձեզ էվէլքը կատար. որ ամէն բանով ամէն տեն ամէն պէտք եղածնիդ առած՝ կըրնաք բոլոր բարի գործքերը առատ ընել:

9 Ինչպէս որ գրված է. փռեց ու ախկրանելուն տվաւ, իր արդարութիւնը յաւիտեան կըմնայ:

10 Ան՝ որ սերմ յանողներուն սերմնոյ կըպարգևէ, ու հաց՝ որ կերակուր ըլլայ, (ինքը) պարգևէ ու շատցընէ ձեր (յանած) սերմնոյը, ու ձեր արդարութեան պտուղը էվէլօք աճեցընէ.

11 Որ ամէն բանի մէջ (դուք) էվէլօք հարստանալով ամէն կերպ առատութեամբ՝ ան մեզի ալ այ շնորհակալութեան պատճառ կըլլա:

12 Ինչու որ, այս տուրքիս ծառայութիւնը՝ չէ թէ միայն սրբերուն պակսութիւնը լեցընելու համար է, հապա՝ այ շնորհակալութիւնը տալն ալ էվէլօքը շատցընելու:

13 Որ այս ծառայութիւնս (անոնց) ընելով, (իրենք ալ) այ կըփառաւորեն՝ ձեր՝ քրիստոսի աւետարանին հնազանդ ըլլալնուդ համար. ու առատ հաղորդութիւնով՝ իրենց ու ուրիշ ամէնուն հետ ըլլալնուդ համար:

14 Ու անոնց ալ ձեզի համար (ըրած) աղօթքը. որ սրտերնին մեր վրա է, այ էվէլօք շնորհքներուն համար որ մեր մէջ է:

15 Ասոր՝ ալ այ շնորհակալ (ինք՝) իր բրած պարգևներուն համար՝ որ չեն պատմըվիր:

Գ Լ · ԺԴ

1 Ես, ալ բուն ես պօղոս ձեզի կաղաչեմ՝ քրիստոսին հեզութիւնովը ու անդարտութիւնովը, որ (ես) ձեր դիմացը իբր թէ ինկ

1 Այլ ես իսկ պաւղոս՝ աղաչեմ զձեզ հեզութեամբ և հանդարտութեամբն քրիստոսի, որ յանդիման ձեզ իբրև տապա-

պետ՝ մի եմ ՚ի միջի ձերում. բայց ՚ի չեռուստա համարձա_ կիմ առ ձեզ :

2 Ա՚զաչեմ, զի մի ՚ի մօտոյ և եթէ չամարձակիցիմ վատա_ չութեամբ . կամ չամարիցիմ յանդգնել ՚ի վերայ ոմանց , որ կարծեն զմեզ եթէ ըստ մարմ_ նոյ գնայցեմք :

3 Ո՚ի թէպէտ և մարմնով գնամք . այլ ոչ եթէ ըստ մարմնոյ պինուորիմք :

4 Ո՚ի զէն զինուորութեան մերոյ ոչ է մարմնաւոր , այլ զօրաւոր յԱ՚, առ ՚ի քակելոյ ամուրս . զխորհուրդս քա_ կեմք ,

5 Եւ զամենայն բարձրու_ թիւն չպարտացեալ ՚ի վերայ գիտութեանն Ա՚. և գերեմք զամենայն միտս ՚ի հնազան_ դութիւն քո՚ի :

6 Եւ ՚ի պատրաստի ու_ նիմք խնդրել զվրէժ յամենայն անհնազանդութենէ, յորժամ ձեր ևս հնազանդութիւն կատարեսցի:

7 Ը՚սա իւրաքանչիւր երե_ սաց դիտեսջի. եթէ ոք վստահ յանձն իցէ քո՚ի լինել , զայս խորհեսցի զարձեալ ՚ի միտս իւր՝ թէ որպէս նայն քո՚ի է, նմինպէս և մեք :

8 Ո՚ի թէ առաւել ևս պարծեցայց վասն իշխանութեանս մերոյ՝ զոր ետ մեզ Տ՚ր, ՚ի շի_ նել՝ և ոչ ՚ի քակել զձեզ , ոչինչ ամաչեցից :

9 Ո՚ի մի թուեցայց՝ իբրև ոչ ինչ սրկանել ձեզ թըղ_ թովքս :

10 Ա՚սեցէք , թէզի՞քս ծա_ խրագումբեմ՝ ձեր քովն որ կըլ_ լամ , բայց չեռուէն համարձակ եմ դէպի ձեզ :

2 (Ա՚ս ձեզի) կարաչեմ՝ որ չըլլալէն մօտէն ալ (ան) վատահ համարձակութիւնս ունենամ. կամ թէ ալ անանկ սեպվիմ որ՝ ոմանց դէմ կրյանդգնիմ կարծ. անոնց՝ որ մեր վրա կըկարծեն թէ՝ մարմի_ նէն ուզածնիպէս կըվարվինք :

3 Ա՚ս իրաւ որ՝ մարմնով կը_ վարվինք , բայց չէ թէ մարմնոյն ուզած դէնքը կըբանեցընենք :

4 Պատճառն որ՝ մեր զինվո_ րութիւնին զէնքը մարմնաւոր չէ. հապա՝ աստուածմէ զօրութիւն ա_ ուած, բերդերնալ քակելու , (որ անով) խորտրդներըը կըքակենք ,

5 Ու ան բոլոր բարձրու_թիւն_ ները՝ որ կրզսուոզանան այ գի_ տութեանը դէմ. ու բոլոր մը_ տածմունքներըը գերի կըբռնենք քի՚ներքև հնազանդեցընելու :

6 Ու ապէնիս բայ կեցերնիք՝ բոլոր անհնազանդներըը պատժե_ լու, ինչվան որ ձեր հնազանդու_ թիւնիս կատարեալ ըլլա :

7 Ա՚մէն մէկը (դուք) իր դրսի երեսութով նայեցէք . թէ որ մէկը իր անձին վրան վստահ է՝ որ ին_ քը քովինն է, անկիկա թող իր մտքին մէջը աս ալ մտածա , թէ ինտոր որ ինքը քովինն է՝ անանկ_ ալ՝ մենք ենք :

8 Որ թէ ևվելըքնալ պարծե_ նալու ըլլամ՝ աս մեր իշխանու_ թիւնիս պատճառով , որ տըր՝ ան մեզի տրված շինելու համար՝ ու չէ թէ (ձեզ) աւրելու . ևսկի (ես) չեմ ամրնչնար :

9 Որ անանկ չեսեպէք թէ՝ աս թիսեերովըս ձեր աչքը կուզեմ կոր վախցունել :

10 Ը՚լլա թէ ըսէք . աս թիսե_

նունք են և սաստիկք, բայց սեսիլ մարմոյ տկար, և բանն արհամարհեալ :

11 .Օ այս խորհեցի այս- պիսին, զի որպիսիք եմք բա- նիւք թղթոյդ ՚ի հեռուստ, նմինպիսիք և ՚ի մօտոյ ար- դեամբք :

12 Քանզի ոչ իշխեմք կրճ- տել և հաւասարել զանձինս մեր ոմանց, որ զանձինս իւր- եանց ձեզ ընծայեցուցանեն · այլ անձամբ յանձինս՝ զան- ձինս չափեն՝ և ՚ի կշռել ան- ձամբ յանձինս, ոչ առնուն ՚ի միտ :

13 Այլ մեք ոչ եթէ յան- չափս ինչ պարծեցուք · այլ ըստ չափոյ կանոնին, զոր բա- ժանեաց մեզ ած չափով՝ հա- սանել մինչև առ ձեզ :

14 Իբր ոչ եթէ հասու ինչ լիցեմք ՚ի ձեզ, և ձգտեցուցա- նիցեմք զանձինս · քանզի մին- չև առ ձեզ հասաք աւետա- բանեան քրի :

15 Եւ ոչ յանչափս ինչ պարծիմք օտար վաստակօք : բայց յոյս մի ունիմք զաճմանն հաւատոյ ձերոյ, այդրէն ՚ի ձեզ մեծանալոյ, ըստ կանոնիս մերոյ՝ յառաւելութիւն ·

16 ՚ի վեր ևս քան զձեզ աւետարանել · ոչ օտար կա- նոնաւ ՚ի պատրաստակնս ինչ պարծել :

17 .Օ ի որ պարծիցին՝ ՚ի տր պարծեսցի :

18 .Օ ի ոչ եթէ որ զանձն իւր ընծայեցուցանէ, նա է ընտրեալ· այլ զոր տէրն ըն- ծայեցուցանէ

բրս ծանօթ ու խիստ են · ան որ (գրօքվանց՝ իր) մարմնուն երևու- թիւ՝ տրկար է, ու խօսկնալ մէկ բանիմբ չեկած :

11 Այնանկ (ըսողը) ամ թող մտմտա · որ մենք ինչպէս որ կե- ուրվանդ ենք առ թիսեերուն խօս- կերովը՝ անանկալ մօտանդ (ենք մեր ըրած) գործքերովը :

12 Պատճառն որ՝ մենք չենք համարձակիր մեր անձը կըշռա- քի դնելու ու հաւասարելու ոմանդ հետ, որ իրենդ անձերնին ձեր դիմացը կըգնեն · բայց (անոնք) ինքերնին իրենդ անձերնին կը- չափեն, ու անանկ իրենք զիրենք կշռաքի դնելով չեն հասկընար :

13 Իսայց մենք չէ թէ չափ դուրս կըպարծենանք· հապա՝ ան կանոնին չափովը, որ ած մեզի բաժին տըվաւ՝ ինչվան ձեզի հաս- նելու :

14 (Այնանկ որ) իբր թէ (մենք) ձեզի հասած չըլլանք՝ ու անձեր- նիս (էվէլի անդին) կերկընցու- նենք· ան որ՝ ինչվան ձեզի հասանք քրի աւետարանը (քարոզելու):

15 Ու (մեր) չափէն դուրս ալ չենք պարծենար՝ ուրիշին (ըրած) աշխատանքովը· բայց առ մեզ յոյս ունինք՝ որ ձեր հաւատքը առնելով, (մենքաւ մեզ) էվէլի տարածենք ան բաժանմունքին չափովը որ մեզի սահմանած է·

16 (Էվէլի անդին) ձեզմէ վեր- ալ աւետարանելով· առանց պար- ծենալու ուրիշի չափին պատրաս- տածներուն վրա :

17 Այնանկ որ՝ ան որ կըպար- ծենա՝ Թազ Տրովը՝ պարծենա :

18 Պատճառն որ՝ չէ թէ ան որ իր անձը առաջ կըդնէ՝ անկա է ընտրըվածը· հապա ան՝ որ տէրը՝ ինքը առաջ կըբաշէ :

ԳԼ· ԺԱ·

1 Լաւ էր՝ եթէ ներէիք փոքր
մի և իմում անզգամու-
թեանս. այլ և անսացէք իսկ:

2 Նախանձեցուցանեմ զձեզ
՚ի նախանձն այլ. զի խօսեցայց
զձեզ առն միում, երբեմն ըն-
կոյս մի սուրբ՝ յանդիման կա-
ցուցանել քրի:

3 Եայց երկնչիմ, գուցէ որ-
պէս օձն խաբեաց գեւա՝ խո-
րամանդութեամբ իւրով՝ ա-
պականեսցին միտք ձեր ՚ի
միամտութենէն որ ՚ի քս:

4 .Օ եթէ որ գալոցն իցէ՝
այլ քս քարոզիցէ զոր մեքն
ոչ քարոզեցաք, կամ ոգի օտար
առնուցուք՝ զոր ոչ առէք,
կամ աւետարան օտար՝ զոր
ոչ ընկալարուք, բարւոք ան-
սայիք նոցա:

5 Եայց ես այսպէս համա-
րիմ, թէ ոչընչ իւրք պակաս
եցեմ քան զլաւ առաքեալսն:

6 Թէպէտ և տգէտ եւս իցեմ
բանիւ, այլ ոչ եթէ գիտու-
թեամբ. սակայն յամենայնի
յայտնեցաք զանձինս ամենեւին
առ ձեզ:

7 Եւ եթէ ինձ ինչ գործե-
ցէք՝ զի զանձն խոնարհեցուցի.
և այն՝ զի դուք բարձրասջիք.
զի ձրի զաւետարանն այ աւե-
տարանեցի ձեզ:

8 .Օ այլ եկեղեցիս կողոպ-
տեցի, առեալ թոշակ ՚ի ձեր
սպասաւորութիւն:

9 Եւ յորժամ եկի առ ձեզ,
թէպէտ և պակասեայ ինչ, ոչ
զոք ՚ի ձենջ ձանձրացուցի. զի
զպակասութիւնն իմ լցին եղ-

1 Ո՛ւր էր թէ քիչմը թողութիւն
ընկնիք իմ անխոհեմութի-
նիս ալ, ու (գիտեմ որ) անանկ
կընդիք ալ:

2 Ձեր վրա (սիրու) նախանձա-
ւոր եմ այ նախանձովը. ինչու որ
ձեզ մկ մարդուը կոյսիմը պէս՝ մկ
մարդումը հետ պիտի նշանեմ, որ
ան՝ քրիստոսիզ իր գիմացը հանելով:

3 Մանթէ՝ կրվանեամ որ՝ նըր-
լա թէ՝ ինտոր օձը Եվան խաբեց,
(անանկ) իր խորամանկութիւնո-
վը ձեր միտքնալ աւրբվի ան
միամրատութենէն որ քովը է:

4 Որ թէ մկը գալու րլայ՝
(ու ինքը) ուրիշ քիս քարոզի՝ որ
մենք ան չի քարոզեցինք. կամ
ուրիշ Հոգիմը (ըսկ որ) կառնիք՝
որ չառիք. կամ ուրիշ աւետա-
րան՝ որ ան չիք ընդունած, անան-
կին աղէկ կրլլար մ՚ոիկ ընելնիդ:

5 Եայց ես ասանկ կրկարծեմ
որ՝ ես բանովմընալ պակաս չիղա
ան փառաւոր առաքեալներէն:

6 Իրաւ՝ տրգէտ ալ րլլամ
խօսկովս, բայց չէ թէ (գրսրվանց)
գիտութենի պիկ. միան թէ ամ-
մէն կերպով անձերնիս աղէկ ձե-
զի ճանչցուցինք:

7 Ու (ես ան) քիշ բանմը մի ը-
րի՞ որ իմ անձրը ցածցուցի, ա-
նոր համար որ դուք բարձրնաք-
ան որ՝ այ աւետարանը ձեզի ձը-
րի քարոզեցի:

8 Ուրիշ եկեղեցիները թալ-
լեցի, (անոնցմէն) ապրուստիս
վարձքը առի՝ որ ձեզի ծառայեմ:

9 Ու ձեր քովը եկած ատենս,
իրաւ պակսութենն ալ որ քաշեցի,
ձեզմէ մէկու մընալ նեղութենն չի
տըվի. որ իմ պակասըս ան մա-

բարքն եկեալք ՚ի մակեդով-
նացուց· և յամենայնի առանց
ծանրանալոյ ձեզ՝ գնան իմ
պահեցի՝ և պահեցից :

10 Օ՚ի գոյ յիս ձշմարտու-
թիւնն քոյ : զի պարծանքս
այս ոչ արգելցին յինէն ՚ի կողմ-
մանս աքայեցւոց :

11 Ընդէր· երբու թէ ոչ
սիրեիցեմ գձեզ· գայն ած գիտէ :

12 Օ՚որ առնեմ՝ և արա-
րիցի , զի չառիցի զպատճառս
այնոցիկ՝ որ զպատճառն կա-
միցին· զի որով պարծինն , և
նոքա իբրև զմեզ գտանիցին :

13 Օ՚ի այնպիսիքն սուտ ա-
ռաքեալք , մշակք նենգաւորք ,
կերպարանին ՚ի կերպարանս
առաքելոց քոյ :

14 Եւ չէն ինչ զարմանք·
քանզի և ինքն սատանայ կեր-
պարանի ՚ի հրեշտակ լուսոյ :

15 Եւ ոչինչ է մեծ՝ թէ և
պաշտօնեայք նորա կերպարա-
նին իբրև զպաշտօնեայսն ար-
դարութեան· որոց կատարածն
եղիցի ըստ գործոց իւրեանց :

16 Դարձեալ ասեմ· մի ոք
համարեսցի զիս անզգամ· ա-
պա թէ ոչ , գոնէ՝ իբրև զան-
զգամ ընկալարուք զիս, զի և
ես փոքր մի ինչ պարծեցայց :

17 Եւ զոր խօսիմս , ոչ ելթէ
ըստ ան ինչ խօսիմ, այլ իբ-
րև անզգամութեամբ՝ ըստ
կարգի այդց պարծանաց :

18 Եւ քանզի բազումք պար-
ծին ըստ մարմնոյ, որպէս և ես
պարծեցայց :

կեզծիչն եկած եխպարներըը լե-
ցուցին : ու ամէն բանի մէջ
առանց ձեզի ծանրութիւն տա-
լու՝ ես իս պահեցի՝ ու պիտի պա-
հեմ ալ :

10 Ան որ՝ ըսածս ըզորդ է
քրիստոսի որ իմ մէջս է : որ անով աս
իմ պարծենցածս՝ աքայեցոց կող-
մերը՝ փուճ տեղը չըլլա :

11 Ինչու՞ համար· իբր թէ ձեզ
չեմ մի սիրեր . ան՝ ած գիտէ :

12 Որ ան կընեմ, ու պիտի
ընեմ ալ · որ կըտրեմ անոնց
(պարծենալու) առիթը՝ որ առիթ
կրնկրնտուն մեզիպէս երևնալու,
որ (անով) կարող ըլլան իրենք-
ալ պարծենալ :

13 Որ՝ անանկ սուտ առա-
քեալները, խաբեբա բանվորներ
(են)· որ ջրջվանց քրիստոսի առաքե-
լոց կերպարանքովը կերևնան :

14 Ու ան զարմանալու բանմը
չէ · ինչու որ բուն ինքը սատա-
նանալ լուսաւոր հրեշտակի կեր-
պարանք վրան կառնէ :

15 Ահա՝ եկէլը բանմը չէ՝ որ ի-
րեն պաշտօնեաներնալ՝ արդա-
րութեան պաշտօնեաներու նման
կերպարանք առնեն · որ անոնց
վերջնալ իրենց գործքերուն պէս
պիտի ըլլա :

16 Ան նորէն կրսեմ· չըլլա որ
մեկը իս անխոհեմ սեպէ · գոնա
թէ չէ՝ գոնեա իմ անխոհեմու-
թիւնիս թողուքիմն ըրէք, որ ես-
ալ քիչմը պարծենամ :

17 Ու աս որ կրսեմ՝ չէ թէ
ինը բանին նայելով կըղրուցեմ·
գոնա՝ խոհեմութիւնէ դուրս բան-
մը, ինծոր որ ատ պարծենալուն
տեղը կրըերէ :

18 Ըսամ՝ ան որ շատ մարդիք
մարմնու դիտցէ կըպարծենան ·
անանկ ես ալ կըպարծենամ:

19 Մտաղութիւն անասնիք անմտացան՝ ձերովդ իմաստութեամբ :

20 Ջանզի անասնիք, եթէ ոք խաբէ զձեզ, եթէ ոք ծաւայեցուցանէ, եթէ ոք ուսոյ զձեր, եթէ ոք առնու ինչ, եթէ ոք չպարտանայ, եթէ ոք զձեզ յանդիման չարկանէ :

21 Ըստ անարգանացդ ասեմ, իբրև թէ մեք տկարացաք արգելք : յոր ինչ ոք չամարձակիցի, անզգամաբեամբ ասեմ, չամարձակիմ և ես :

22 Եբրայեցիք իցեն, և ես. իսրայէլացիք իցեն, և ես. զաւակ աբրահամու իցեն, և ես.

23 Պաշտօնեայք քրիստոսի իցեն, յանդգնագոյնս ասացից՝ թէ առաւել ես : եթէ վաստակօք՝ առաւել, եթէ դանիւք՝ առաւել, եթէ բանտիւ՝ առաւել քան զնոսա, եթէ մահու՝ ամբք՝ բազում անգամ :

24 Ի հրէից, հնդից՝ քառասնից միով պակաս արբի :

25 Երիցս ձաղկեցայ· միանգամ քարկոծ եղէ. երիցս նաւակոծ եղէ. գիւռ և գիշեր յանդունդս տառապեցայ :

26 Ի ճանապարհս՝ բազում անգամ, վտիտս ի գետոց, վտիտս ի ծովու, վտիտս յաւազակաց, վտիտս յազգէ, վտիտս ի հեթանոսաց, վտիտս ի քաղաքի, վտիտս յանապատի, վտիտս ի ծովու. վտիտս ի սուտ եղբարց :

27 Ի ջանն և ի վաստակս. ի աքնութիւնս բազում անգամ, ի քաղց և ի ծարաւ.

19 Դուք որ խելացի էք՝ յոժար սրտով անկաձ կրցնէք անխելքներուն .

20 Որ կրմըտէք անոր՝ որ ձեզ կրխաբէ, անոր՝ որ ձեզ կրծառայեցնէ, անոր՝ որ ձեր բանը կուտէ, անոր որ (ձեզմէ) բան կառնէ· անոր որ (վրանիդ) կրդոռոզնայ, անոր՝ որ երեսնիդ զարնէ :

21 Ան (ինձի եղած) քամահրանքիդ նայելով կրսեմ, իբր թէ մենք տկար ալ ենք : որ ինչ բանով մկը կրհամարձակի (պարծենալու,) (ան) անխոհեմութիւնովը կրսեմ, ես ալ կրհամարձակիմ :

22 Թէ որ հրէայկի են՝ ես ալ (եմ)· իսրայէլացի են, ես ալ· աբրահամի զաւակ են՝ ես ալ·

23 Քրիստոսի պաշտօնեան են, ալ ես պատառելով կրսեմ՝ թէ ան էվէլբեր եմ· մէկ որ աշխատանքով էվէլն, մէկ որ ձեռով՝ ալ էվէլն, մէկ որ բանտով՝ անոնցմէ ալ էվէլն, մէկ որ մահու դուռը տասնեւմով (ես) շատ անգամ :

24 Հրեաներէն՝ հինգ հեղ քառասունէն մէկմը պակաս (զարկվածկով՝ ձեզ) կերա :

25 Երեք հեղ ձաղկով ես ծեծեցին. մէկ անգամմը քարկոծվեցա. երեք հեղ նաւակոծութիւն քաշեցի· ցորեկ ու գիշեր ծովուն դունդերը տառապեցա :

26 Շատ անգամ՝ ճամբորդութեանս առնը, գետերէն նեղութիւններ, աւազակներէն նեղութիւն, ազգէս նեղութիւն, հեթանոսներէ նեղութիւն, քաղքի մէջ նեղութիւն, անապատի մէջ նեղութիւն, ծովու մէջ նեղութիւն· սուտ եղբարներէն՝ նեղութիւն :

27 Ջանքի մէջ, ու աշխատանքի մէջ (բլլալով,) շատ անգամ քընհատութիւն, անօթի ու ծարաւ·

’ի պահս բագնէմ անդամ. ’ի ցնծրա և ’ի մերկութեան :

28 Թող զայլ նեղութիւնսն. և զի հանապազ խուժանն ’ի վերայ իմ կուտէը, և հոգ ա_ մենայն եկեղեցեաց :

29 Ո՞ տիւանդանայ, և ոչ ես տիւանդանամ. ո՞ գայթագղի, և ոչ ես տաղտնամ :

30 Եթէ պարծել ինչ պարտ իցէ, զտկարութեանն պար_ ծեցայց :

31 Ա՛ծ և հայր Տն մերոյ յիսի գիտէ, որ է օրհնեալ յաւի_ տեանս, զի ոչ ստեմ :

32 ’Ի դամասկոս ազգապե_ տըն արետայ արքայի պահէր զբաղաքն դամասկացւոց՝ ու_ նել զիս .

33 Եւ ընդ պատուհանն վան_ դակաւ կախեցայ ընդ պարիսպն, և փախեայ ’ի ձեռաց նորա :

շատ անդամ պաքով, ցըտաու ու մերկութեան մէջ :

28 Թո՛ղ ալ ուրիշ նեղութիւն_ ները, որ ամէնն իմիր խըժա_ մուժը վրաս կրդիզվէր, ու ամէնն եկեղեցիներուն ալ հոգը :

29 Ո՞վ տիվընտանայու կըլլա, ու ես ալ (տետը) չեմ տիվընտ_ նար. ով կրդայթագղի, ու իմ սիրտս (վըտն) չէրիր :

30 Թէ որ պարծենալ պէտք ըլլա, (ասոնկ) խղճութիւնի բա_ ներով պարծենամ՝ :

31 Ա՛ծ որ Տնր մերոյ յիսի Հայրն է, ան որ յաւիտեան օրհնեալ է, ինքը գիտէ որ սուտ չեմ ըսեր :

32 Դամասկոսին մէջ՝ արետ թագաւորէն կեցած քաղքին գըէ_ խաւորը դամասկացւոց քաղաքը պահպըռելէր որ իս բռնէ .

33 Ու (տանը) պատուհանէն սաթեամով պարիսպնիվար կախ_ ված, անանկ իր ձեռքէն փախաւ :

Գ Լ· Ժ·Ի·

1 Ա՛րդ պարծել ինչ պարտ իցէ, այլ օգնէ ինչ ոչ. բայց եկից ’ի տեսլիս և յայտ_ նութիւնս Տն :

2 Գիտեմ՝ այր մի ’ի քրիստոս զոր_ ոջէ ետ առաքեալս սա՛. եթէ մարմնով՝ ոչ գիտեմ, և եթէ առանց մարմնոյ՝ ոչ գի_ տեմ, Ա՛ծ գիտէ. յափշտակեալ դայնպիսին մինչև յերրորդ երկինս :

3 Եւ գիտեմ զայնպիսի այր. եթէ մարմնով՝ և եթէ առանց մարմնոյ՝ ոչ գիտեմ, Ա՛ծ գիտէ.

4 Զի յափշտակեցաւ ’ի դր_ բահան, և լուաւ բանս ան_ հաւս, զոր ոչ է պարտ մար_ դոյ խօսել :

1 Սանկ՝ շահմը չընող պար_ ծանքներ որ պէտք ըլլա, ալ Տնը ըրած տեսիլքներուն ու յայտնութիւններուն գա՛ :

2 Տ մանը չորս տարիէն առաջ՝ քրիստոսի մէկ մարդմը կրճանչնամ՛, (վէր) ինչվան երկրքի երրորդը յափշտակվեցաւ գրնաց . (ալ թէ ան) մարմինովն էր մի՝ չեմ գիտեր . ու թէ առանց մարմինի՝ ան չեմ գիտեր , Ա՛ծ գիտէ :

3 Ու գիտեմ որ ան մարդը, մարմինով մի՝ ու թէ առանց մարմինի՝ ան չեմ գիտեր, Ա՛ծ գիտէ .

4 Որ (ինքը) դրախտը յափըշտակվեցաւ (դնաց), ու (հոն) խօս_ կի տակ չկնալու բաներ լսեց, որ մարդու կարելի չէ ան զրուցելը :

5 Վասն այնպիսւոյն պարծեցայց, այլ վասն անձին ինչ ոչ պարծեցայց · բայց եթէ ի տկարութիւնս :

6 Օգի եթէ և կամիցեմ պարծել, ոչ եղէց անզգամ, քանզի զարդարն ասեմ : այլ անխայեմ, զուցէ ոք համարիցի ինձ յիս աւելի, քան զոր տեսանէիցէ յիս՝ կամ լսիցէ յինէն :

7 Եւ զի մի առաւելութեամբ յայտնութեանցն չըպարծուցայց, տուաւ ինձ խայթ մարմնոյ, չրեշտակ սատանայ՝ կռփել զիս · զի մի հպարտացայց :

8 Եւ վասն այսորիկ երիցս անգամ աղաչեցի զտր՝ զի ի բաց արասցէ յինէն :

9 Եւ ասէ ցիս · շնորհ ին քեզ շնորհքդ իմ, զի զօրութիւն իմ ի տկարութեան կատարի : և արդ՝ լաւ ևս լիցի ինձ պարծել ի տկարութիւնս, զի բնակեսցէ յիս զօրութիւնն քրիստոսի :

10 Վասն որոյ հաճեալ եմ ընդ տկարութիւնս, ընդ խըշնամանս, ընդ վիշտս, ընդ հալածանս, և ընդ նեղութիւնս՝ վասն քրիստոսի. զի յորժամ տկարանամ, յայնժամ զօրանամ :

11 Եղէ անզգամ, քանզի դուք ստիպեցէք զի ինձ պարտ էր ի ձէնջ վկայութիւն առնուլ, թէ ոչնչով պակաս դաւոյ քան զլուս առաքեալսն : զի թէպէտ և ես ոչնչ եմ,

12 Սակայն նշանք առաքելոյ պարծեցան ի ձեզ, ամենայն համբերութեամբ, նշանս-

5 Նանկին վրա պարծենամ, ու բան անձիս վրայովը (ուրիշ բանի համար) չի պարծենամ որ միան տկարութիւնըս վրա.

6 Որ թէ պարծենալ ալ ուզեմ՝նէ, (անով) անխոհեմմը չեմ ըլլար. պատճառն որ՝ ըսելիք կըսեմ : բայց ան ետ կըբռնեմ, որ չըլլա թէ մէկը ան իմ վրաս տեսածէն կամ իմնէն լսածէն՝ իս եվելի բանմը սեպէ :

7 Ու չըլլա որ՝ (ասանկ) վառաւար յայտնութիւններով ես չպարտանամ (ամբ՝) ան սատանա չրեշտակը մարմինիս խթան տըվաւ՝ որ իս ծեծկըռտէ, որ չի զսուսպնամ :

8 Ու անոր համար՝ իրենք չեղ ինը աղաչեցի, որ (անիկա) իմնէն ետ քաշէ :

9 Ու ինծի ըսաց · իմ շնորքըս քեզի չերթիք է, որ՝ իմ զօրութիւնըս տկարութեան մէջը կրկատարվի : ուստի ալ ևվելի լաւ կըլլա ինծի տկարութիւններովս պարծենալը, որ քրիստոսին իմ մէջըս բնակի :

10 Անոր համար՝ (ես ալ) զոհ եմ տկարութիւններուն, քամահրանքներուն, տառապանքներուն. հալածանքներուն, ու նեղութիւններուն՝ քրիստոսի համար (եղած), որ երբոր տկար կիյնամ, ան ատենը կուժամնամ :

11 (Ես ասանկ) անխոհեմ եղա, որ՝ դուք էք պատճառը (ըլլալու). ան որ ինծի պէտք եղաւ որ դուք վրաս վկայէք, թէ բանովմ՝ բնալ ետ չի մնացի ան փառաւոր առաքեալներէն : որ իրաւ ես բանմ՝ նալ չեմ,

12 Նայց (խմով) առաքելու նշաններ ձեր մէջ գործըվեցան՝ ան բոլոր (նեղութիւններուն) համբե-

նօք և արուեստիւք՝ և զօրու-
թեամբք :

13 Եւ արդ զինչ ելիցէ, ո-
րովք պակաս գտայք քան զայլ
եկեղեցիս. բայց եթէ այնու,
զի ես զձեզ ոչ ձանձրացուցի.
ներհկեցէք ինձ զիմաստ զայդ :

14 Ահաւասիկ այս երրիցս
անգամ պատրաստեալ եմ գալ
առ ձեզ, և ձեզ բեռն ինչ ոչ
եղեց. զի ոչ խնդրեմ ինչ ըս-
ձեր, այլ զձեզ. քանզի ոչ
պարտին որդիք հարց գանձել,
այլ հարք որդւոց :

15 Բայց ես մատուցու-
թեամբ ծախեցից և ծախեցայց
վասն անձանց ձերոց. զի թէ-
պէտ և յառատել սիրոյն զձեզ
սակաւ սիրիցեմ :

16 Այլ գրե թէ ես ոչինչ
ծանրացայ ձեզ. այլ քանզի
խորամանկ էի, խելօք կալայ
զձեզ :

17 Մի թէ որովք առաքե-
ցին առ ձեզ, նոքօք ինչ ա-
գահեցի՞ ի ձէնջ :

18 Աղաչեցի զտիտոս՝ և ա-
ռաքեցի ընդ նմա զեղբայրն.
մի թէ ագահեաց ինչ զձեր տի-
տոս. ոչ նոյնիւն ոգւով գնա-
ցաք, ոչ նոյնիւն շաւղօք շրջե-
ցաք :

19 Դարձեալ՝ համարիցիք
եթէ յոգնք անկեալ ինչ ձեզ
արդարացեմք : առաջի այ՛ի քս
խօսիմք, զի ամենայն ինչ սիրե-
լեաք՝ վասն ձերոյ շինուածոյ է :

20 Այլ երկնչեմ, զուցէ ե-
կեալ՝ ոչ որպիսիս կամիցիմն
գտանիցեմ զձեզ, և ես՝ գտա-
նիցիմ ձեզ՝ որպէս և դուք ոչ
կամիցիք : զուցէ դարձեալ
բերելով, նշանները ու հրաշքները,
ու զօրութիւնները ընելով :

13 Որո՞ւ ալ ինչ պատճ՝ ին-
չովէ ուրիշ եկեղեցիներէն (դուք)
եաի գանրվեցաք. ասով միայն՝
որ ես ձեզի ծանրութիւն չեմբերի.
ատ ըլյած զինըս ինծի ներեցէք :

14 Ահա ատ իրեք հետքս կըլ-
լա՝ որ պատրաստրվերիմ ձեզի
գալու, ու պիտոր ձեզի բեռ չըլ-
լամ, պատճառն որ՝ (ես) ձեր բա-
նը չեմ ուզեր, հապա՝ ձեզ. ին-
չու որ՝ չէ թէ որդիքը հարերնուն
պիտի բան դիզեն, հապա՝ հարերը
որդոցը :

15 Անանկ որ՝ ես յօժար սրտով
ձեր անձին վրա (բոլոր ունեցածս)
կուտամ, ու բուն ես իսալ ըլլայ-
ալ թէ՝ ատանկ ձեզ էվէլքը սի-
բելուս դուք իս քիչ սիրէք :

16 Անանկ որ՝ սեպվի թէ՝ ես
ձեզի բանովմընալ ծանրութիւն
չեգա. ինչու որ (ես) վարպետու-
թինով աս հնարքս ձեր վրա բա-
նեցուցի :

17 Հապա՝ ան որ անունց ձեռ-
քովը ձեզի խաբեցի՝ անունցմով
ձեզմի բանմը քաշեցի՞ մի :

18 Տիտոսին աղաչեցի (ձեզի
գալու՝) ու իր հետևնալ ան ևս-
պարը խաբեցի. տիտոսը (ձեզ-
մէն) բանմը քաշեց՞ մի. (մենք)
մէկ սրտով չէ գացինք մի, մէկ
համբով չի քալեցինք մի :

19 Նորէն ալ, անանկի կրսե-
պէք՝ որ հաւէ ինկած սրտերնիդ
կառնենք կոր : այ առջև քրիս-
կրխօսինք, որ ամէն բանը սիրե-
լիներ՝ ձեր շինուածին համար է :

20 Միան թէ՝ կրվախնամ՝ որ
չըլլա թէ գամէկ՝ ձեզ անանկ չէ
գտնամ՝ ինծոր որ կուզեմ. ու
եսալ ձեզի անանկ գտնըվիմ, ին-
ծոր որ դուք չէք ուզեր : չըլլա

չիս , նախանձ , սրամտու-
թիւնք , կրպակաւթիւնք , չարա-
խօսութիւնք , քամթիւնք , ին-
պարտաւթիւնք , ամբարտաւա-
նութիւնք , խաւսվաթիւնք :

21 Գուցէ զարձեալ յոր-
ժամ գայցեմ՝ նկուն ինձ առ-
նիցէ զիս ած իմ առ ձեզ . և
սուգ առնուցում վասն բազ-
մաց յառաջագոյն մեղուցելոց ,
և ոչ ապաշխարելոց՝ ի վե-
րայ պղծութեն , և պոռնկութեն ,
և կիջութեան՝ զոր գործեցին :

ԳԼ· Ժ Գ·

1 Ա՛յս երկոցս անգամ գամ
առ ձեզ . զի ի բերանոյ
երկուց և երից վկայից հաս-
տատեսցի ամենայն բան :

2 Յառաջ ասացի , և զար-
ձեալ կանխաւ ասեմ՝ յանդի-
մանի երկրորդ անգամ . և այժմ
ի բացակայութեան գրեմ յառաջագոյն
յանցուցեալսն՝ և այլոցն ամե-
նեցուն· զի եթէ եկից զարձեալ՝
ոչ խնայեցից :

3 եթէ գիտիցէ ինչ խնդրէք
զքն , որ ինձ ընդ ձեզ խօսի .
որ չզօրացեալն է ի ձեզ , և ոչ
տկարացեալ :

4 Զի ի թէպէտ և խաչեցաւ
ի տկարութենէ , այլ
կենդանի է զօրութեամբն ած :
և մեք թէպէտ և տկարանայ-
ցեմք վասն նորա , այլ կենդա-
նի լիցուք ընդ նմա զօրու-
թեամբն ած :

5 փորձեցէք զանձինս ձեր ,
եթէ կայցէք ի նոյն հաւատս ,
քննեցէք զանձինս , եթէ ոչ
գիտէք զանձինս , զի քս յս ի
ձեզ է· բայց եթէ անպիտանք
իցէք :

թէ՝ նորէն (ձեռնիդ) փախուս-
թեն , նախանձ , սրդողութիւնք ,
տըզրմտութիւնք , չարախօսութիւն ,
խօսք խառնելոցս , հպարտութիւն ,
դոռոզութիւն , իրարանցումներ :

21 Զըլլա թէ նորէն երբոր
գամ՝ իմ ածըս իս ձեր դիմացը
ցած բանէ . ու սուգը մըտամ ան
առաջուցմէ շատոնց մեղք գոր-
ծողներուն համար , որ չեն ալ
ապաշխարեր իրենց պղծութեանը
ու պոռնկութեանը ու ամօթ-
բաներուն վրա՝ որ ըրեր են :

ԳԼ· Ժ Գ·

1 Ա՛ս իրեք անգամն է որ ձեզի
կուգամ . որ՝ երկու ու ի-
րեք վկայի բերնէն ամէն բան
կըհաստատվի :

2 Ա՛ռաջուց ըսի , ու նորէն ալ
ըսկիսալը դիմա զէմ երկու հեղ
ըսի . ու հիմայալ հեռուէն կը-
գրեմ՝ ան առջի մեղք գործողնե-
րուն , ու բոլոր ուրիշներուն թէ .
որ նորէն որ գամ , պիտոր (ա-
նոնց) խնայուիմ չըլնիմ :

3 Ան որ փորձել կուզէք թէ
քրիստոս ձեր մէջ կը խօսի ,
(գիտցիք) որ ինքը ուժգնէ չէ՝
ու տկար չէ ձեր վըրայով :

4 Իրաւ որ ան՝ մեր տկարու-
թենը վրան առած խաչվեցաւ ,
բայց ան զօրութենով կենդանի է .
անանկ մենքալ՝ իրաւ կըտկար-
նանք իրեն համար , բայց իր հետ
կենդանի կըլլանք ան զօրութե-
նովը :

5 Ինձնիդիդ փորձեցէք զրէք՝
(տեսէք) որ ան հաւատքին մէջ
կեցեր էք մի· անձերնիդ քննեցէք·
դուք ինքերնիդիդ չէք մի գիտեր
որ քրիստոս ձեր մէջն է· մանրէ
անպիտան որ չըլլաք :

6 Ա՛ՅԼ ահն ունիմ թէ զի-
տիցէք, զի մեք ո՛չ եմք ան-
պիտանք :

7 Ա՛ՅԼ խնդրեմք յԱ՛ստ՝ զի մի՛
ինչ արասցէ ձեզ չար· ո՛չ զի
մեք ընտիրք երեւեսցուք, այլ
զի դուք զբարիս գործիցէք, և
մեք անպիտանք գտանիցիմք :

8 Ա՛յ ի ո՛չ կարեմք ինչ չա-
կառակ կալ ճշմարտութեանն·
այլ վերակացու եմք ճշմար-
տութեան :

9 Խրախ եմք՝ յորժամ մեք
տկարանայցեմք, և դուք զօրա-
ւորք լինիք· զդոյն խնդ և ա-
զօթս առնեմք զձեր չաստա-
տութիւնդ :

10 Վասն այսորիկ գայս ՚ի
հեռուստ գրեմ· զի մի՛ յորժամ
եկից՝ սաստկութեամբ վարե-
ցայց՝ ըստ իշխանութեանս,
զոր ետ ինձ տէր ՚ի շինել և ո՛չ
՚ի քակել :

11 Ա՛յսուհետեւ ևդբարք,
ուրջ լերուք, չաստատուն կա-
ցէք, միաբանութեամբ, միա-
բան լերուք, խաղաղութիւն
պարգեւէք : և Աստուած խաղաղութեան
և սիրոյ՝ եղիցի ընդ ձեզ :

12 Ողջոյն տուք միմեանց ՚ի
համբոյր սրբութեան : ողջոյն
տան ձեզ սուրբք ամենայն :

13 Շնորհք Տեառն մերոյ Յի-
սուսի քրիստոսի, և սէրն Աստուծոյ,
և հաղորդութիւն Հոգւոյն սրբոյ, ընդ ձեզ
ամենեսին . ամէն :

* Ա՛ռ Կորնթացիս երկրորդ՝ գրեցաւ ՚ի փիլիպէից, ՚ի ձեռն
տիտոսի և ղուկայ :

6 Իսայց կըյուսամ որ ան զի-
տէք, որ մենք անպիտան չենք :

7 Արեան թէ՝ աստուծմէ (աս)
կըխնդրենք որ ձեզի վատ բանմը
չընէ· որ չէ թէ (անով) մենք ըն-
տիր երեւնանք, չատա՝ որ դուք
ան որ բարի է ընէք· թող մենք
անպիտան ալ ըլլանք :

8 Ինչու որ՝ (մենք) չենք կրը-
նար ճշմարտութենին դէմ կենար·
ան որ՝ ճշմարտութիւնը կըպաշտ-
պանենք :

9 Ուրախ ենք, որատեն որ
մենք կրտկարնանք, ու դուք որ
կուժանիք· ան որ՝ ատոր չա-
մար աղօթքալ կրնենք որ դուք
(ատոր մէջ) չատատ մնաք :

10 Ինչոր համար աս (բանըս)
հեռուէն կրգրեմ· որ չըլլա թէ
գալու ատենս (չատերնիդ) խիստ
վարվիմ՝ (իմ) իշխանութենիս ո-
ժովը· որ տրը ան ինծի տըվաւ
շինելու համար, ու չէ թէ քա-
կելու :

11 Ա՛լ ասկէ ետև եղբայրնե՛ր՝
ուախ եղէք, չատատ կեցէք, միա-
բանութիւնով վարվեցէք : ու խա-
ղաղութեան ու սիրու ատը ձեր
հետը ըլլա :

12 Իրարու ողջոյն տըվէք սուրբ
համբուրով : բոլոր սրբերնալ
ձեզի ողջոյն կուտան :

13 Տէրը մերոյ յիսու քրիս-
տոսի շնորհը, ու այ սէրը՝ ու հոգուն սրբ չա-
ղորդութիւնը՝ ձեր ամմէնուդ հետը
(ըլլա)· ամէն :

* Կորնթացոց երկրորդ թուխաթ
փիլիպէից գրվեցաւ՝ տիտոսի ու
ղուկասի ձեռքով (խրկած) :

ՍՈՒ ԳՍՂՍՏՍՑԻՍ

Թ Ո Ւ Ղ Թ ·

ԳԼ · Ա ·

1 ՊԱՒԻՂՈՍ առաքեալ՝ ոչ ’ի մարդկանէ և ոչ ’ի ձեռն մարդոյ, այլ ’ի ձեռն յի՛ քրի՛ստոսէ, և այ՛ հո՛ր՝ որ յարոյց զնա ’ի մեռելոց :

12 Եւ որ ընդ իս են եղբարք ամենեքեան, եկեղեցեացդ գալատացւոց :

3 Շնո՛րհք ընդ ձեզ, և խաղաղութի՛ւն յայ ’ի հո՛րէ, և ’ի տե՛ր մերմ յի՛սէ քրի՛ստոսէ ·

4 Որ ետ զանձն իւր վասն մեղաց մերոց, զի զմեզ փրկեսցէ յաշխարհէ ասմի չարէ, ըստ կամացն այ և հո՛ր մերոյ :

5 Որո՛մ փա՛ռք յաւիտեանս. ամէն :

6 Ո՛ւրմանաւա՛ զի այդպէս վաղվաղակի փոփոխիք յայնմանէ որ կոչեացն զձեզ ’ի շնո՛րհսն քրի՛ստոսէ՝ յայլ աւետարան :

7 Որ ո՛չ զոյ այլ · բայց եթէ իցեն ոմանք որ խռովեցուցանիցեն զձեզ, և կամիցին շրջել զաւետարանն քրի՛ստոսի :

8 Ա՛յլ թէ մե՛ք, կամ հրեշտակ յերկնից աւետարանեսցէ ձեզ աւելի՛ քան զոր աւետարանեցաքն ձեզ · նզովեա՛լ լի՛ցի :

9 Որպէս յառաջագոյնն ասացաք՝ և արդ դարձեա՛լ ասեմ

1 ՊՕՂՈՍ առաքեա՛լ չէ(թէ) մարդոցմէ, ու չէ՛ մարդու ձեռքով (եղած). հապա՝ յի՛սի քրի՛ստոսի ձեռքովը, ու հո՛ր այ, որ անիկա մեռելներէն յարուց :

2 Ու ան բոլորը եկեսպարներն որ իմ՛ հետս են, գալատացոց եկեղեցիներուդ :

3 Շնորքը՝ ձեր հետն (ըլլա), ու խաղաղութի՛ւնը հո՛ր աստուծմէն . ու մեր տր յի՛ քրի՛ն .

4 Որ իր անձը մեր մեղքերուն համար տրվաւ, որ աս աշխարքիս (չարէն) մեզ փրկէ՝ ինչպէս որ ած մեր հայրը կամեցաւ :

5 Որ՝ իրեն փա՛ռք յաւիտեանս. ամէ՛ն :

6 Կրզարմանամ որ՝ ան որ ձեզ քրի՛ն շնորքին կանչեց՝ անիկա թողած՝ ատանկ շուտով ուրիշ աւետարանի՛մը կրդառնաք :

7 Որ ալ ուրիշ չկա · միան՝ թէ որ ըլլան ոմանք որ ձեզ պրըտորէն, ու ուզեն մկրդի պատցուցնել քրի՛ն աւետարանը :

8 Հապա թէ որ մենք, կամ թէ երկրնքէն հրեշտակմը (գա՛) ձեզի անկէ էվէլը բանմը աւետարանէ քան ինչ որ մենք ձեզի աւետարանեցինք, (անիկա) նզովեա՛լ ըլլա :

9 Ինչպէս որ առաջ մէ՛մը ըսինք, ան նորէն ալ կըսեմ. թէ

սեմ, եթէ ոք աւետարանեսցէ ձեզ աւելի քան զոր առէքն, նզովեա՛լ լիցի :

10 Այդ՝ մարդկա՞ն հաճոյ լինիցիմ, թէ այ· կամ խրնդրիցեմ մարդկա՞ն հաճոյ լինել : եթէ տակաւին մարդկան հաճոյ լինէի, ապա քա՞ծառայ ո՛չ էի :

11 Ցուցանեմ ձեզ եղբարք զաւետարանն, որ աւետարա_նեցաւ յինէն . զի ո՛չ է ըստ մարդոյ :

12 Քանզի և ո՛չ ես ՚ի մարդոյ առի, և ո՛չ ուսայ յումեքէ, այլ ՚ի յայտնութենէն յի՛ս քա՞ :

13 Քանզի լուեա՛լ իսկ է ձեր զիմ գնացսն որ երբեմն ՚ի հրէութեան անդ, զի անչափ հալածէի զեկեղեցին այ, և աւեր հարկանէի զնա :

14 Եւ յառաջագէմ էի ՚ի հրէութեանն՝ քան զբազումս հասակակիցս իմ որ յազգին իմում էին· առաւել նախանձախնդիր էի իմոյ հայրենի առանդութեանցն :

15 Այլ յորժամ կամեցաւ այ, որոշեաց զիս յորովայնէ մօր իմոյ, և կոչեաց ՚ի ձեռն շնորհսյոց իւրոյ ,

16 Յայտնել զորդին իւր ի՛ նե, զի աւետարանեցից զնա ՚ի հեթանոսս: անդէն վաղվաղակի ոչինչ զգացուցի մարմնոյ և արեան ·

17 Եւ ո՛չ եկի յերուսաղէմ առ որ յառաջագոյն քան զիս առաքեալքն էին · այլ չոգայ յարաբիա, և դարձեա՛լ դարձայ ՚ի դամասկոս :

18 Այսա յետ երից ամաց եկի յերուսաղէմ տեսանել զՊետրոս և մնայ առ նա տասնհինգ աւուրս :

19 Եւ զայլ ոչ ոք ետես յառաքելոցն, բայց զՅակոբոս զեղբայր տեառն :

20 Եւ զոր գրեմ առ ձեզ, ահա առաջի աստուծոյ ստեմ զի ո՛չ սուտ :

21 Ապա եկի յաշխարհս ասորոց և կիլիկեցւոց :

22 Եւ էի անծանօթ երեսօք եկեղեցեաց հրէաստանեայց որ էին ՚ի քրիստոս :

23 Այլ միայն լուեալ էին զի որ հալածէր զմեզ յառաջագոյն, նա այժմ աւետարանէ զհաւատսն զոր յառաջագոյն աւերէր :

24 Եւ փառաւորէին զաստուած ՚ի վերայ իմ :

Բ

1 Ապա յետ տասնչորից ամաց ելի կրկին յերուսաղէմ ընդ Բառնաբայ, առեալ և զտիտոս ընդ իս :

2 Ելի ըստ յայտնութեան, և ետուն ինձ զաւետարանն զոր քարոզեմ ՚ի հեթանոսս, բայց առանձինն ընդ երեսս իշխանացն, զի մի՛ ընդունայն վազեցի կամ վազեմ :

3 Այլ և տիտոս որ ընդ իս էր հելլենացի, ո՛չ ստիպեցաւ թլպատել զնա :

4 Այլ վասն եղբարցն սուտ եղբարցն որ մտին ձեղ աւետարանէ (ուրիշ) անկեց եկին՝ որ զուք ընդունէիք, (անիկա) նզովեա՛լ ըլլա :

10 Հապա ալ մարդո՞ւ մի հաճո ըլլամ, թէ այ· կամ մարդոյ հաճո ըլլալու եաւէ մի իյնամ : թէ որ (ուզէի) մարդոյ հաճո ըլլալ՝ ալ (ես) քա՞ծառա չէի ըլլար :

11 Կ՚ախաբեմ ձեր դիմացը կրկրնեմ՝ որ աւետարանը՝ որ ես քարոզեցի, որ (անիկա) մարդու խելացը բան չէ :

12 Պատճառն որ՝ ես ալ (ան՝) մարդէ չառի, ու (ուրիշ) մէկէմը չիսորվեցա . հապա՝ (միայն) յի՛ս քա՞ (ինձի եղած) յայտնութինէն :

13 Որ արդէն զուք լսա՛ծ կըլլաք՝ ան առեներ իմ հրեայութեան մէջի կացքը . որ չափէ դուրս այ եկեղեցին կըհալածէի՝ ու ան կըթաւըրէի :

14 Ու հրեայութինով (ես) առջինն էի՝ ան շատ իմ հասակիս մարդոցմէն էի՛ էր՝ որ իմ ազգիս մէջ կըզանըվէին, եւ էլ ըսա տագով իմ հայրենական աւանդութիւններուս վրա :

15 Բայց երբոր ա՛ծ կամեցաւ՝ իմ մօրըս փորէն իս (հրնտրեց) զատուց, ու իր շնորք ընելովը իս կանչեց ,

16 Որ իրեն որդին իմ ձեռքովս յայտնէ· որ անիկա հեթանոսներուն մէջ աւետարանեմ : ու ան շուտմը չէ մացուցի մարմինիս ու արուներս (մտաւորներուն) :

17 Ու երուսաղէմ չէ գնացի իսկ առաջ եղած առաքեալներուն քով , հապա՝ արաբիա գացի՝ ու նորէն դամասկոս դարձա :

18 Ետքը՝ իրեք տարիէն ետև (նորէն) երուսաղէմ՛ ելա՝ պետրոսը

պետրոս. և եկէ առ նմա ա-
ւուրբս հինգետասան :

19 Այլ ոք յառաքելոց
այնմ ոչ տեսի, բայց միայն
զյակովբոս, զեղբայրն տն :

20 Այլ զոր գրեմս առ ձեզ,
աչտաւասիկ առաջի այ, զի ոչ
ստեմ :

21 Ապա եկի ի կողմանս
ասորւոց և կիլիկեցւոց :

22 Եւ յանծանօթս էի երե-
սաք եկեղեցեացն՝ որ ի Քրիս-
տոս էին ի քս :

23 Բայց զի լսելով լուեալ
էր, թէ որ հալածէրն զմեզ
յայնժամ, արդ աւետարանէ
զհաւատսն՝ զոր երբեմն խոխ-
տէր :

24 Եւ փառաւոր առնէին
ինև զնծ :

տեսնելոս. ու տասնը չինէկ օր ա-
նոր քով կեցա :

19 Ան (Յակով) առաքեալնե-
րէնալ ուրիշ մէկը չի տեսա՝ որ
միան յակոբոսը՝ տնը եղբարը :

20 Բայց աս որ ձեզի կըգրեմ՝
չանա ան այ առջև (կըտեմ՝) որ
սուտ չեմ զրուցեր :

21 Ետկը ասորոց ու կիլկիկ-
ցոց կողմերը եկա :

22 Ու դէմ ալեմ իս չէի հանդ-
ցուներ ան եկեղեցիներուն՝ որ
Քրիստոսի տնէն էին՝ քսով :

23 Միան թէ՝ ա՝ անկըճնին
հասած լսերէին՝ թէ անիկա որ
ժամանակով մեզ կըհալածէր՝ հի-
մա ինքը ան հաւատքը կըքա-
րոզէ՝ որ առնմէ կաւըղըկէր :

24 Ու իմ պատճառովս՝ ած
կըփառաւորէին :

ԳԼ. Բ.

1 Ապա յետ ամաց չորիք
տասանից՝ միւս անգամ
ելի յերուսաղէմ ընդ բառնա-
բայ, աւեալ ընդ իս և զտիտ-
տոս :

2 Եւ ելի ըստ յայտնու-
թեանն. և զպացուցի նոցա
զաւետարանն՝ զոր քարոզեմ ի
հեթանոսս, առանձինն այնո-
ցիկ՝ որ կարծեալքն էին, գու-
ցէ ընդունայն լինէ ընթացեալ
իցեմ, կամ ընթանայեմ :

3 Այլ և ոչ տիտոս որ ընդ
իս՝ ի հեթանոսաց էր, բառնա-
զատեցաւ թլփատել :

4 Այլ վասն սպրդողաց
սուտ եղբարցն, որք սպրդեցին
մտանել զլուծ՝ զազատու-
թիւնն մեր՝ զոր ունիմք ի

1 Ետկը՝ տասնը չորս տարիէն
ետև՝ չեղմընալ նորէն բառ-
նաբասին հետ ալ յտեղ երուսա-
ղէմ եղա, ու տիտոսնալ իմ հետ
տրա առի :

2 Ու (ինծի) տեսիլքըմը եղաւ՝
որ հոն երթամ. ու անոնց՝ մաս-
նաւորապէս ալ (իրենց) գլխա-
ւորներուն՝ հասկրցուցի ան հե-
թանոսաց մէջ իմ քարոզած ա-
ւետարանս. ցրցունելով՝ որ ես
փուչը չեմ քալեր, կամ թէ կը-
քալեմկոր :

3 Բայց տիտոսը՝ որ իմ հետս
էր՝ ինքը հեթանոսներէն (զար-
ձած) բլլալով, հարկաւոր չէր
որ թլփատվի :

4 Միան թէ՝ ներս սըկրթը-
ված սուտ եղբարներուն պատ-
ճառովը՝ որ սրկրթըվելուան մէ-
ջերնիս մըտան նայելու մեր

քո յո · զի զմեզ ծառայեցուս-
ցեն :

5 Որոց և ոչ առժամանակ մի անսացաք հնազանդութեանն · զի ճշմարտութիւն աւետարա-
նին հաստատեսցի առ ձեզ :

6 Իսկ զկարծելոցն լեալ ի-
նչն ինչ , որպիսիք ոք երբեմն էին, չէ ինչ ինձ փոյթ. քանզի
ած անձն մարդկան ոչ առնու · զի ինձ կարծեալքն այնպիսի
ինչ ոչ զոյացուցին .

7 Այլ հակառակն , երբեմն տեսին եթէ հաւատա-
գեալ է ինձ աւետարանն ան-
թլփատութեան , որպէս պետ-
րոս ՚ի թլփատութեան :

8 Օ՚ի որ յաջողեացն պետ-
րոսի յառաքելութիւն թլփա-
տութեանն , յաջողեաց և ինձ
՚ի հեթանոս :

9 Իբրեւ գիտացին զշնորհն
որ տուեալ էին ինձ , յակով-
բոս՝ և կեփաս՝ և յովհաննէս ,
որ կարծեալ սիւնքն էին , ձեռն
հասուն հաւանութեան ինձ և
բառնաբայ· զի մեք ՚ի հեթա-
նոսս , և նոքա ՚ի թլփատու-
թեանն :

10 Հայց միայն՝ զի զաղ-
քատսն յիշեսցուք · զոր և ես
վաւթագոյ գնայն առնել :

11 Այլ յորժամ եկն կե-
փաս յանտիոք , ընդդէմ դար-
ձայ նորա· քանզի զոչ իբրև
ստգտեալ լիեր էր :

12 Քանզի մինչեւ եկեալ
էին ոմանք առ ՚ի յակովբայ ,
ընդ հեթանոսս ուտէր անխը-
տիր · իսկ իբրև եկին , դատա-
նէր՝ և որոշէր զանձն, երկու-
ցեալ յայնցանէ որ ՚ի թլփա-
տութենէ անտի էին :

ազատութիւնը՝ որ քովս յիով ու-
նինք. որպէս ծառայութիւնի դրնեն:

5 Այսոյց՝ քիչմը առենալ չեզաւ
որ ժամիկ գնենք՝ հնազանդինք· ա-
նոր համար որ՝ աւետարանին ճշ-
մարտութիւնը ձերմէջ հաստատվի:

6 Իւ ան (մենծ) սեպհածներն-
ալ , թէ որ իրենք բանմը ըլլան՝
ինտոր որ առնումըներէն , ան իմակի
իմ հոգը չէ , պատճառն որ՝ ած
մարդոց երես չի նայիր . որ ան
(մենծ) սեպհածները (կըսեմ,) ին-
ձի անանկ բան չիմացուցին .

7 Հապա՝ անոր ներհակը , եր-
բոր տեսան թէ չիթլփատվածնե-
րուն աւետարան (քարոզելը՝)
ինձի հաւատացված է, ինտոր ոք
պետրոսին՝ թլփատվածներուընը :

8 Պատճառը՝ ան որ պետրո-
սին՝ թլփատվածներուն վրա ա-
ռաքեալ ըլլալ յաջողեց , ինձի
ալ հեթանոսներուընը յաջողեց :

9 (Ուստի), յակոբոսը՝ ու կեփա-
սը՝ ու յոհաննէսը՝ որ ասոնք ան
սեպհած սիւներն են , երբոր գիա-
ցան ան շնորհքը որ ինձի տըրված
էր· ալ ինձի ու բառնաբասին
ձեռք տըրին հաւնեցան՝, որ մենք
հեթանոսներուն մէջ (ըլլանք) ,
ու իրենք՝ թլփատվածերուն :

10 Միայն թէ՝ (մեզի յանձնե-
ցին)որ ախկըներըը յիշենք· որ ես
ալ չոգ ունեցա ան բանը ընելու :

11 Հայց երբոր կեփասը ան-
տիոք եկաւ՝ (ես) իրեն երեսը տը-
վի. պատճառն որ՝ իր ըրած պակ-
սութիւնը ալ բըռնըվածիպէս էր:

12 Ինչու որ՝ դեռ յակոբին
քովէն ան մարդիկը չեկած՝ ինքը
հեթանոսաց հետը խառնըված՝
ու յոտէ կուտէր. ու երբոր եկան՝
ալ ինքզինքը ու կրկտոէր ու
կըջաժնըվէր , ան թլփատվածնե-
րէն վախնալով :

13 Եւ կեղծաւորեցան ընդ նմա և այլ հրեայքն . մինչև բառնաբաս անգամ խոնարհեցաւ ի նոցա կեղծաւորութիւնն :

14 Այլ երբև տեսի , թէ ոչ ուղիղ գնան ի ճշմարտութիւն աւետարանին , ասեմ ցկեփաս առաջի ամենեցուն , եթէ դու որ հրեայդ ես՝ հեթանոսաբար և ոչ հրեաբար կեաս , զիարդ ստիպես հեթանոսացս լինել հրեաբէն :

15 Ի մեք բուն հրեայք եմք , և ոչ ի հեթանոսաց մեղաւորք :

16 Այս գիտեմք , եթէ ոչ արդարանայ մարդ ի գործոց օրինացն , եթէ ոչ ի հաւատոյն յիսուս քրիստոս . և մեք ի քրիստոս հաւատացաք , զի արդարասցուք ի հաւատոյն քրիստոսի , և ոչ ի գործոց օրինացն . զի ի գործոց օրինացն ոչ արդարասցի ամենայն մարմին :

17 Իսկ եթէ մինչ խնդրեցեալք արդարանալ ի քրիստոս , և դտանիցեմք մեղաւորք . ապա ուրեմն քրիստոս մեղացն պաշտօնեայ եղեւ . քաւ լիցի :

18 Զի եթէ զոր քակեցին , զնոյն միւսանգամ շինիցեմ . ա՛պա յանցաւոր զանձն իմ ես ինձէն երևեցուցանեմ :

19 Զի ես օրինօք օրինացն մեռայ , զի այլ կեցից , և ընդ քրիստոսի խաչ եղից :

20 Եւ կենդանի եմ այսու՝ չեմ , ոչ ես՝ այլ կենդանի է յիս քրիստոս : այլ որ այժմ կեամ մարմնով , հաւատովք որդւոյն այ կեամ . որ սիրեացն զիս , և մատնեաց զանձն վասն իմ :

13 Ու անոր չհաւանուիլը ըրին . անանկ որ՝ բառնաբասն ալ անոնց կեղծաւորութիւնին եւ տէնն գնաց :

14 Բայց (ես) երբոր տեսա՝ որ աւետարանին ճշմարտութեանը մէջ շիտակ չեն քալեր կոր , ամէնուն դիմաց կեփասին ըսի , թէ՝ դուն որ հրեա ես՝ հեթանոսի պէս՝ ու չէ թէ հրեայիկես կըսարվիս . ալ ինչպէ՞ հարկ կըղնես հեթանոսներուն որ հրեայիկես ըլլան :

15 Ինչու որ՝ մենք բուն հրեա ենք , ու չէ թէ մեղաւոր հեթանոսներէն (գարձած) :

16 Այս գիտենք , որ մարդը օրէնքէն (դրած) գործքերէն չի արդարանար , հապա՝ յիսուս քրիստոսի հաւատքէն . ու մենք քրիստոսի յիսուսի հաւատացինք , որ քրիստոսէն արդարանանք , ու չէ որ օրէնքին գործքերով : պատճառն որ՝ օրէնքին գործքերէն՝ հիկի չըլլար որ մէկ մարդ մարմնաւ արդարանա :

17 Հապա՝ ալ ուզենք որ քրիստոսի ձեռքովը արդարանանք՝ ու մեղաւոր գտնըվինք , անանկ նէ ալ քրիստոս պաշտօնեա՞ մի եղաւ . քաւ լիցի :

18 Որ՝ թէ (ես) իմ քակած բանս՝ դառնամ անիկա նորէն որ շինեմ , ալ ես ինքիրիս իմ անօրէն վատ բան ընող կերևցնեմ :

19 Պատճառն որ՝ ես օրէնքովը օրէնքին մեռա , որ այ ապրիմ , ու քրիստոսի հետ խաչը ելլեմ :

20 Ու ալ ասանկ՝ կենդանի եմ . չէ թէ ես՝ հապա քրիստոս կենդանի է իմ մէջս : ալ որ հիմա մարմինովս որ կապրիմ , որդուն այ հաւատքովը կապրիմ . որ ինքը իս սիրեց , ու իր անձը ինծի համար մատնեց :

21 Եւ ես ոչ անարգեմ ըզշնորհսն այ : զի եթէ յօրինաց անտի էր արդարութիւն, ապա քո զմահ մեռաւ :

21 Ու ես այ շնորհքը մ.կոխ չեմ ձգեր : որ թէ արդարութիւնը օրէնքովին որ ըլլար, քո պարապ տեղը մեռած կըլլար :

Գ Լ. Գ.

1 Ո՛անմիտ գաղատացիք, ո՞վ նախանձ արար զձեզ· ո՞րոց զրեթէ առաջի աչաց յիսուս քրիստոս զրեցաւ ի խաչ ելեալ :

2 Զայս միայն կամիմ ուսանել ի ձէնջ . ի գործոց օրինացն զՀոգին ընկալարուք՝ եթէ ի լուոյ հաւատոյ :

3 Այդպէս անմիտ էք. սկսեալ հոգւով՝ և արդ մարմնով վախճանիք :

4 Եւ այնչափ անցք անցին ընդ ձեզ զուր, եթէ իցէ զուր:

5 Լսէ արդ՝ որ բաշխեաց ի ձեզ զՀոգին , և աւծողեաց ի ձեզ զզօրութիւնս , ի գործոց օրինացն է՞ եթէ ի լուոյ հաւատոյ :

6 Որպէս, աբրահամ հաւատաց յաստուած՝ և համարեցաւ նմա յարդարութիւն :

7 Գիտեցէք արդեաք· զի որք ի հաւատոյ անտի են, նոքա են որդիք աբրահամու :

8 Յառաջագոյն զիտէր գիր, եթէ ի հաւատոյ անտի արդարացուսանէ զհեթանոսս , յառաջագոյն խոստացաւ աբրահամու, թէ ի քեզ օրհնեսցին ամենայն ազգք :

9 Այսուհետև որք ի հաւատոյ անտի են, օրհնին ընդ հաւատացեալսն աբրահամու :

10 Զի որ միանգամ ի

21 Ու ես այ շնորհքը մ.կոխ չեմ ձգեր : որ թէ արդարութիւնը օրէնքովին որ ըլլար, քո պարապ տեղը մեռած կըլլար :

1 Ո՛վ խելքը պակաս գաղատացիներ· ով ձեր (աչխիտ) նախանձալ կապեց , ան որ՝ իբր թէ աչացնիդ առջևը յիսուս քրիստոս խաչ ելած (պատկերը) գրվեցաւ :

2 Միան թէ՝ աս կուզեմ ձեզմէ չսակընալու . օրէնքի գործքերէն մի (գուբ) Հոգին ընդունեցաք՝ թէ հաւատս բանը լսելէն :

3 Այնչափ անխելք եղաք, որ Հոգիով սկսած՝ ու հիմա մարմնով կըվերջացընէք :

4 Ու անքան բաներ ձեր գլխէն՝ ալ պարապ տեղը անցան , թէ որ ան՝ պարապ ըլլա (իրաւ) :

5 Հապա ան որ Հոգին (սբը) ձեզի հաղորդեց · ու ձեր միջ զօրութիւններ ալ Հոգիով՝ անիկա օրէնքին գործքերէն մի եղաւ՝ թէ հաւատս բանը լսելէն :

6 Ինտոր (ան, որ) աբրահամը հաւատաց այ՝ ու անիկա իրեն արդարութիւն սեպվեցաւ :

7 Ա՛ս գիտցէք որ՝ անոնք որ հաւատքով են՝ իրենք են աբրահամի որդիքը :

8 (Այբ) գիրքը առաջուցմէ գիտնալով՝ որ ամէ հեթանոսները հաւատքով պիտոր արդարացունէ, առաջուց աբրահամի խոստմունք ըրաւ, թէ քեզմով բոլոր աս դերը պիտի օրհնըվին :

9 Ուստի անոնք որ ան հաւատքին են՝ (իրենքալ) աբրահամին հետ կօրհնըվին՝ որ հաւատաց :

10 Պատճառը՝ անոնք որ օ

գործոց օրինացն են, ընդ անի-
ծիւք են. քանզի գրեալ է, թէ
անիծեալ ամենայն մարդ որ
ոչ կացցէ յամենայն գրեալսն ի
գիրս օրինացս առնել զամե-
նայն :

11 Օ՛ի օրինաքն ոչ ոք ար-
դարանայ առաջի այ, այն յայտ
խակ է. զի արդարն՝ ասէ՝ի հա-
ւատոյ կեցցէ :

12 Իսայց օրէնքն չէն ի հա-
ւատոյ, այլ որ արասցէ զայն՝
կեցցէ ի նոսին :

13 Քի գնեաց զմեզ յանիծից
օրինացն, եղեալ վասն մեր ա-
նէծք. զի գրեալ է, թէ անի-
ծեալ ամենայն՝ որ կախեալ
կայցէ գիւոյտ :

14 Օ՛ի ի հեթանոսս օրհ-
նութիւն աբրահամու եղիցի ի քի
յի՝. զի մեք զաւետիս հոգւոյն
սէյ ընկալցուք հաւատովք :

15 Ըստ մարդկութեան ա-
սեմ, ե՛ղբարք. ապաքէն ըզ-
մարդկան հաստատեալ կտակ՝
ոչոք կարէ անարգել, և ոչ
այլ հրամանն ի վերայ այնր
տալ :

16 Իսկ աբրահամու խոս-
տացան աւետիքն, և զաւակի՛
նորա. և ոչ ասէ զաւակաց՝
իբրև բազմաց, այլ իբրև ըզ-
միոյ, թէ և զաւակի՛ քումի. որ
է քի :

17 Իայց դայս ասեմ. զկտակն
յառաջագոյն հաստատեալ յայ
ի քի, օրէնքն որ յետ չորեք-
արեւր և երեսուն ամի եղան,
ոչ կարեն խափանել առ ի խա-
փանելոյ զաւետիսն :

18 Եթէ յօրինաց անտի է
ժառանգութիւն, ապա ոչ ևս
ըստ խոստման զորձաքերան (կրպած) ևն՝
անէծքի տակ են. ինչու որ՝ գրված
է թէ՝ անիծած ըլլա ամէն մարդ՝
որ չի բռնէ աս օրէնքի գրքին մէ-
ջի գրվածքները՝ ան բոլոր բա-
ները ընելով :

11 Ան որ՝ օրէնքով մէկնալ
չի արդարանար այ առջև, ան
յայտնի է, որ կըսէ՝ թէ արդարը,
հաւատքէն պիտի ապրի :

12 Ու օրէնքը հաւատքովը
չըլլար. հապա՝ ամեր անոր (բա-
ները) կատարէ նէ՝ անով կապրի :

13 Քի մեզ օրէնքին, անէծքէն
գնեց՝ մեզի համար (բուն ինքը)
անէծք ըլլալով. որ գրված է թէ՝
անիծած ըլլա ան ամէնն որ փա-
տէն իվար կախված ըլլա :

14 Որ՝ աբրահամի եղած օհ-
նութիւնը՝ հեթանոսաց վրա ըլ-
լա՝ քիով յիսուի. որ հոգուն սէյ
առեմանքնալ մենք հաւատ-
քով ընդունինք,

15 Արդու սովորութիւն նայե-
լով (աս) ալ կըսեմ՝ եղբարներ.
որ մարդէմը հաստատ եղած կտա-
կը՝ մէկը չի կրնար ան բանի չի-
սեպեր, ու ոչ ալ անոր վրա նո-
րէն ուրիշ բան չըամեր :

16 Աբրահամի ու իր զաւկի-
նալ խոսկ տրվեցաւ ան աւետ-
մունքը. ու չըսեր՝ զաւկրներուն՝
ինտոր շատերի, հապա՝ ինտոր
մէկ հատիմը, թէ՝ քու զաւկիդ-
ալ. որ ան քին է :

17 Ասած աս կըսեմ. ան զա-
շինքը որ ան առաջուցմէ հաս-
տատ գրեր էր քին վրայով, օրէն-
քը որ չորս հարիւր եւսուն տա-
րիէն ետև գրվեցաւ, չի կրնար
անիկա խափաներ՝ որ ան (խոսկ
տրված) աւետմունքը փըճանա :

18 Որ թէ ժառանգութիւնը օրէն-
քովը (տրված) ըլլար, ալ ան՝

յաւետեացն : բայց աբրահամ աւետեաց շնորհեաց ած :

19 Իսկ զինչ իցեն օրէնք : յանցուածոց վասն յաւելան , մինչև եկեսցէ զաւակն որում խոստացեալն էր , կարգեալ տրեշտակօք ի ձեռն միջնորդի :

20 Իսկ միջնորդ՝ միոյ ոչ բուք ոչ է , բայց ած մի է :

21 Իսկ արդ՝ օրէնքն հակառակի՞ ինչ իցեն աւետեացն այ· քա՞ լիցի : զի՛ եթէ տուեալ էին օրէնքն՝ որ կարող էին կենդանի՛ առնել , ապա չաստատ յօրինաց անտի է արդարութիւն :

22 Փակեցին զիրք գամանասն ընդ մեղօք , զի աւետիքն ի՛ հաւատոյ անտի յի՛ քո՛ տացին հաւատացելոց :

23 Մինչ չէ՛ հաւատքն է՛ կեալ էին , ընդ օրինօք փակէա՛լ պահեալ ի՛ հանդերձեալ հաւատոն՝ որ յայտնելոց էին ի՛ մեզ :

24 Ապա օրէնքն դաստիարակ եղեն մեզ ի՛ քո՛ յո՛ , զի ի՛ հաւատոյն արդարասցուք :

25 Այլ երբեմն եկիւն հաւատքն , ոչ ևս ընդ դաստիարակաւ եմք :

26 Քանզի ամենեքին որդիք ա՛յ էք , հաւատովք ի՛ յո՛ քո՛ :

27 Որք միանգամ՛ ի՛ քո՛ մկրտեցարուք , զքո՛ զգեցեալ էք · չէք խոիր ,

28 Ո՛չ հրեայ , և ո՛չ հեթանոսի · ոչ ծառայի , և ո՛չ ազատ · ո՛չ արու , և ո՛չ էգի · աւետմունքէն չէր ըլլար : ան որ ած՝ աբրահամի աւետմունքով ընորք ըրաւ :

19 Ա՛ւ օրէնքը ինչու համար եղաւ : (ան) մեղքերու պճնամոլը (աւետմունքին) վրա՛ եվ էլլայաւ ինչ վան որ ան իր խօսկ տրված զաւակը գա (ու ան օրէնքը) հրեշտակաց ձեռքով՝ ինտոր միջնորդ մը՝ անանկ տրվեցաւ :

20 Ու միկուամբ (միան նայելով՝ միջնորդութիւնն չըլլար , բայց ան (միան) մի՛կ ած է :

21 Այնանկ է նէ՝ օրէնքը այ աւետմունքին ներհակ մի է · քաւ լիցի : պատճառը՝ որ թէ ան տրված օրէնքը կարող ըլլար ոխերն ցուներու , ալ ըղծրը՝ ան օրէնքէն կըլլար արդարութիւնը :

22 Իայց (օրինաց) դիրքը՝ ամմինքնալ մեղքի ներքև բանբված (ըլաւ), որ աւետմունքը՝ յի՛ քո՛ հաւատքէն տըրվի անոնց որ կըհաւատան :

23 Որ դեռ հաւատքը չեկած՝ օրէնքին ներքև բանբված կըպահվինք՝ (ապառնով) ան գալու հաւատքին՝ որ մեզի պիտոր յայտնըվէր :

24 Ուրեմն՝ ալ ան օրէնքը մեզի՝ (տղի) վարպետ(իմը պէս) եղաւ՝ քո՛ յի՛ (տանելու), որ հաւատքովը արդար ըլլանք :

25 Իայց երբոր հաւատքը եկաւ՝ ալ ան վարպետին տակը չենք :

26 Ինչու որ՝ ամմինքդալ այ որդիք էք՝ յի՛ քո՛ հաւատքովը :

27 Ինչ՝ որ մեկ տեղը քեզի մկրտված էք՝ ալ քեզ հագեր էք . (անանկ) որ՝ որշմանք չկա ,

28 Ո՛չ հրեային մէջ՝ ու ո՛չ հեթանոսին , ո՛չ ծառային՝ ու ո՛չ ազատին , ո՛չ արուն ու ո՛չ էգի ·

զի ամենեքեան զուք մի էք ՚ի քո՛ յո՛ :

29 Ա՛պա եթէ զուք քո՛ի էք, ուրեմն արբրահամա՛ւ զաւակ էք, ըստ աւետեացն՝ ժառանգք :

պատճառն որ՝ քո՛ով յոյո՛վ զուք ամենեքդ հաւասար էք :

29 Ա՛յլ թէ որ զուք քո՛ինն էք՝ ուրեմն արբրահամին զաւակներն էք, (ու) աւետմունքին պէս ալ (իրեն) ժառանգներն էք :

Գ.Լ. Դ.

1 Ա՛յս ասեմ. ցորքան ժամանակ ժառանգն տղայ է, չէ լուր առաւել քան զծառայն · թէպէտ և տէր էցէ ա-մենեցուն :

2 Այլ ընդ հոգաբարձուօք է՛ և ընդ գաւառապետօք՝ մինչև ՚ի ժամանակակէտ հօրն :

3 Նոյնպէս և մեք մինչ տըղայքն էաք, ընդ տարերքըք աշխարհիս ՚ի ծառայութեան կայաք :

4 Այլ երբեւ եկն լըուման ժամանակին, առաքեաց ա՛ծ զորդին իւր՝ որ եղև ՚ի կնոջէ, և եղաւ ընդ օրինօք ·

5 Օ՛ի գնոսա որ ընդ օրինօքն էցեն, գնեսցէ · զի մեք զորդեզրութիւն ընկալցուք :

6 Եւ զի էք զուք որդիք, առաքեաց ա՛ծ գՀոգի որդւոյն իւրոյ ՚ի սիրտս մեր, որ աղաղակէ՝ աբբա, հա՛յր :

7 Այսուհետեւ չես ծառայ, այլ որդի · եթէ որդի, և ժառանգ ա՛յ :

8 Այլ յայնժամ մինչ ո՛չն գիտէիք գա՛ծ, ծառայէիք այնոցիկ՝ որ ո՛չն էին ՚ի բնէ աստուածք :

9 Այլ այժմիկ ծաներ-ուք գա՛ծ, մանաւանդ թէ ծանուցա՛յք իսկ յա՛յ, զիա՛րդ դառնայք միւսանգամ ՚ի տարե՛րս տկարս և յաղքատս, որոց միւս ան-

1 Ա՛ս (ալ) կըսեմ. (թէ՝) քանի՛ ատեն որ ժառանգմը դեռ տղա է՝ անիկա ծառային մէկ էվէլիմը չէ, ըսենք թէ՝ ինքը ամէն բաներուն տէրնալ ըլլա ·

2 Հապա (ան՝) վըսակեցուներու ու տընտեսներու ներքև է, ինչվան (իր) հօրը դրած աաենը :

3 Նմանակալ մենք՝ քանի որ տղաք էինք՝ աշխարքքիս բաներուն հետ ծառայութիւնի ներքև էինք :

4 Բայց երբոր՝ ալ աաենին լը-մընաալը որ եկաւ՝ ա՛ծ իր որդին խաւրեց, որ ան՝ մէկ կնիկէմը ե-ղաւ, ու օրէնքի ներքև մտաւ,

5 Որ օրէնքի ներքև եղածները ղրկէ, որ մենք որդեզրութիւն ըն-դունինք :

6 Ու ալ զուք որ որդիք էք՝ ա՛ծ ալ իր որդուն հոգին մեր սիր-տը խաւրեց · որ աբբա՝ (այսինքն) հա՛յր՝ կըլլանչըռտէ :

7 Ալ ասկէետքը՝ ծառա չէս, հապա՝ որդի · ու թէ որ որ-դի, ալ ա՛յ ժառանգն (ես) :

8 Բայց ան աաենն որ (զուք) ա՛ծ չէիք ճանչնար, ան բաներուն կըծառայէիք՝ որ բուն իրենք աստուածներ չէին :

9 Ալ հիմա ա՛ծ որ ճանչցաք · մանաւանդ որ՝ ա՛ծ ձեզ ճանչ-ցաւ, ալ ինչպէս նորէն ան տկար ու չքաւոր աշխարքի բաներուն կըդառնաք · որ նորէն կուզէք

զամ զանձինս ծառայեցուցա_
նել կամիք :

10 .Օ աւուրս խոբէք, և
զամիսս, և զժամանակս՝ և ըզ_
տարիս :

11 Երկնչի՛մ՝ ի ձէնջ, զուցէ
թէ ՝ի գուր ինչ վաստակեցի
՝ի ձեզ :

12 Եղերո՛ւք իբրև զիս, քան_
զի և ես իբրև զձեզդ էի : Ե՛ղ_
բարք՝ աղաչեմ զձեզ , չէք ինչ
ձեր մեղուցեալ առ իս :

13 Գիտէք զուք՝ զի տկա_
րութեամբ մարմնոյ աւետարա_
նեցի ձեզ զառաջինն . և ըզ_
փորձանսն որ ՝ի մարմնի իմում
էին ,

14 Ո՛չ անարգեցէք՝ և ո՛չ
անգոսանեցէք . այլ իբրև զՔրէշ_
տակ ոյ ընկալարուք զիս՝ իբրև
զքո յո :

15 Իսկ արդ՝ ո՞ւր է երանու_
թիւնն ձեր : վկայ եմ ձեզ , է_
թէ հնար ինչ էր՝ զա՛չս ձեր
հանէիք և տայիք ինձ :

16 Արդ՝ զի՞ թշնամի լիմ ե_
ղէ ձեզ , զի ճշմարիտն խօսեցայ :

17 Ա՛յլ նախանձեցուցանեն
զձեզ ա՛չ ՝ի բարի . և արգելուլ
կամին զձեզ , զի նոցա նախան_
ձաւորք լինիցէք :

18 Հայց լա՛ւ է նախանձաւո՛ր
լինել ՝ի բարիս յամենայն ժամ,
և ա՛չ միայն յորժամ ՝ի ձերում
միջի լիցեմ :

19 Որդեակք իմ, զորս դար_
ձեալ վերստին երկնեմ, մինչև
նկարեացի քո ՝ի ձեզ :

20 Կամի՛ր այժմ գալ առ
ձեզ , և փոխել զբարբառ իմ՛.
զի տարակուսեա՛լ եմ ես վասն
ձեր :

21 Ասո՛ւք ինչ ինձ՝ որ ընդ
անձերնիդ անունդ ծառայութիւնի
տակ խօթե՛լու :

10 Օրերը կըշափըչի՛ք, ու
ամիսները, ու եղանակները, ու
տարիները :

11 Ձեր վրա վախ ունիմ՝ որ
չըլլա թէ պարապ տեղը բլլա իմ
ձեր վրա ըրած աշխատանքս :

12 Ինծի պէս եղի՛ք , ինչու որ՝
ես ալ ձեզի պէս էի : Ե՛ղբայրներ՝
1 Թէ որ քրիստոս հետը յարութիւն առիք, ուրեմն ալ ան վերի բաները փընտռեցէք՝ ուր որ քրիստոս կընստի այր աջ կողն :

2 Ան վերինը մտմտացէք, ոչ թէ ան որ աս երկրիս վրա է :

3 Պատճառն որ՝ (դուք) մեռաք, ու ձեր կեանքը քրիստոս հետ այր քովը պահած կեցեր է :

4 Որ՝ երբոր քրիստոս որ ձեր կեանքն է՝ յայտնըվելու ըլլա, անատեն դուքալ իր հետը փառքով պիտոր յայտնըվիք :

5 Ան նանի է նէ՝ ձեր երկրայինն անդամները բռնանեցէք. մէկդի ձգեցէք պոռնկութինը, պղծութինը, աղտեղութինը, չար բաներու ցանկութինը, ու ագահութինը՝ որ կռապաշտութինմէն է :

6 Որ՝ աս բաներուս համար՝ այր բարկութինը չի հատացընր որդոցը վրա կուգա :

7 Որ դուքալ ատենմը անանկ կերթայիք, երբոր ան միջերնուն մէջ կեցեր կապրէիք :

8 Այլ՝ ’ի բաց թօթափեցէք եւ դուք զայն ամենայն, զբարկութիւն, զբրտմտութիւն, զչարութիւն, զհայհոյութիւն, զխեղկատակութիւն ’ի բերանոց ձերոց :

9 Մի՛ ստէք միմեանց · մերկացարուք զհին մարդն զօրծովքն իւրովք :

10 Եւ զգեցարուք զնորն նորոգեալ ’ի գիտութիւն, ըստ պատկերի արարչին իւրոյ :

11 Ուր ո՛չ է հրեայ, եւ ո՛չ հեթանոս, թլփատութիւն, եւ անթլփատութիւն, խուժ գուժ, սկիւթացի, ծառայ, ազատ · այլ ամենայն եւ յամենայնի քո՛ :

12 .Օ զգեցարուք այսուհետեւ երբեմն ընտրեալք այ՝ սուրբք եւ սիրեցեալք, զգութ, զողորմութիւն, զբաղցրութիւն, զխոնարհութիւն, զհեզութիւն, զերկայնմտութիւն :

13 Կրեալ միմեանց, շնորհել իրերաց՝ եթէ ուրուք զունէքն տրտունջ ինչ իցէ · որպէս ած քաւիւ շնորհեաց ձեզ, նոյնպէս եւ դուք :

14 Եւ ’ի վերայ ամենայնի՝ զսէրն, որ է զօդ կատարմանն :

15 Եւ խաղաղութիւնն քրիստոսի հաստատեսցի ’ի սիրտս ձեր, յոր եւ կոչեցարուքն միով մարմնով : եւ գոհացողք լինիջիք ·

16 .Օ ի բանն քրիստոսի բնակեսցէ ’ի ձեզ առատապէս՝ ամենայն իմաստութեամբ ուսուցանել՝ եւ խրատել զմիմեանս, սաղմոսիւք եւ օրհնութեամբք, եւ երգս

8 Իսայց ալ (հիմա՝) դուք ան բոլորը մէկդի թօթվեցէք՝ բարկութիւնը, սրդողկութիւնը, չարութիւնը, հայհոյութիւնը, անպարկեշտ խօսակերը որ ձեր բերնէն (կելլեր) :

9 Մէյմէկու սուտ մի՛ ըսուցէք, հին մարդը իր գործքերովը վռնտեցէք հանվեցէք ,

10 Ու նոր (մարդը) հագիք, իր նոր գիտութիւնովը՝ իրեն ըստեղծողին պատկերքին պէս (եղած) :

11 Որ հոն հրեա (նայիլ) չի կա՝ ու ո՛չ հեթանոս, (ո՛չ) թլփատված՝ ու չի թլփատված, (ո՛չ) լեռընցի, (ո՛չ) բսկիթացի, (ո՛չ) ծառա՝ (կամ) ազատ · հապա քրիստոս ամէնն է՝ ու ամէնուն մէջը :

12 Ուստի ալ (դուք՝) ինչպէս սուրբ ընտրեալներ, սրբեր ու սիրելիներ՝ վրանիդ հագէք գութ ու նեղնալը, ողորմածութիւնը, անուշութիւնը, խոնարհութիւնը, հեզութիւնը, երկայնամտութիւնը :

13 Իրարու նեղուած տալով, իրարու շնորհք ընելով՝ թէ որ մէկը մէկալին ձրշգոհանքմը որ ունենալու ըլլա · ինսոր որ ած՝ քրիստոս համար մեզի թողութիւն ըրաւ՝ նմանկալ դուք (ըրէք) :

14 Ու աս ամէնն բաներուն վրայէն՝ սէրը (հագիք), որ ան՝ կատարեալ ընելու կապն է :

15 Ու քրիստոսի խաղաղութիւնը ձեր սրտին մէջը հաստատ ըլլա · որ դուք անոր կանչվեցաք (իր հետը) մէկ մարմին ըլլալու : ու (այ) գոհացող եղիք .

16 Որ անանկ՝ քրիստոսի խօսկը առատութիւնով ձեր մէջ բնակվի, որ ամէնն՝ կերպ իմաստութիւնով սորվեցնէք ու մէկդմէկ խրատէք, սաղմոսներով ու օրհնու-

զոմք հոգևորօք՝ և շնորհօք օրհնել ՚ի սիրոս ձեր զՅԺ :

17 Եւ զամենայն զոր և առնիցէք բանիւք և արդեամբք, զամենայն յանուն Տն յի՛ս առնել ՚ի բաց ջնջէք · գոհացողք լինիջէք զՅ և գՀօրէ Նովաւ :

18 Կանայք՝ հնազանդ լերուք արանց ձերոց, որպէս և վայել է՝ ՚ի Տր :

19 Այրք՝ սիրեցէք զկանայս ձեր, և մի՛ դառնացուցանէք զնոսա :

20 Որդիք՝ հնազանդ լերուք ծնողաց ձերոց յամենայնի, զի այն է հաճոյ առաջի Տն :

21 Հարք՝ մի՛ գայրացուցանէք զորդիս ձեր, զի մի՛ տրտմեսցին :

22 Ծառայք՝ հնազանդ լերուք տերանց ձերոց յամենայնի · մի՛ առականէ ծառայութեամբ իբրև մարդահաճոյք, այլ միամտութեամբ սրտի երկնչել ՚ի Տնէ :

23 Ամենայն որ ինչ առնիցէք՝ սրտի մտօք գործեսջիք իբրև Տն, և ոչ իբրև մարդկան :

24 Գիտասջիք զի ՚ի Տնէ առնուցուք զՀատուցումն ժառանգութեան ձերոյ · քանզի Տն քրիստոս ծառայէք :

25 Իսկ ապիրատն ընկալցի ըստ իւրում ապիրատութեանն. զի չիք ակնառութիւն առաջի Յ :

ԳԼ · Դ·

1 Տեարք՝ զերաւունս և զհաւասարութիւն ծառայից

1 Դուք (ալ՝) տիրվըտանք՝ ձեր ծառաներուն իրաւունքը

ձերոց հնորհեցէք · զիտասջիք զի և ձեր որ զոյ յերկինս :

2 Աղօթից սակս կացէք , ոչնել ՚ի նմին զոհութեամբ :
3 Աղօթս արարէք միան_ զամանն և վանն մեր , զի ած բացցէ մեզ զուռն բանին, խո_սել զխորհուրդն քրիստոսի , վանն ո_րոյ և կապեալս կամ ·
4 .Օ՚ի յայտնի արարից զնա՝ որպէս արժան իցէ ինձ խօսել :

5 Իմաստութեամբ գնասջիք առ արտաքինսն , գնոց առեալ զժամանակս .
6 Եւ բանն ձեր յամենայն ժամ լի՛ հնորհօք ան՝ իբրև ա_զնի համեմեալ լիցի · զիտել որպէս արժան իցէ ձեզ իւրա_քանչիւր ումեք՝ տալ պատաս_խանի :

7 Ա՛յլ որ ինչ զինէն իցէ , ցուցցէ ձեզ գամենայն տիւքի_կոս սիրելի եղբայր՝ և հաւա_տարիմ պաշտօնեայ՝ և ծա_ռայակից ՚ի տր :

8 .Օ որ առաքեցի առ ձեզ զմին իրի , զի գիտասջիք վասն մեր , և մխիթարեսցէ զսիրտս ձեր ·

9 Ընեսիմաւ հանդերձ եղ_բարբ հաւատարմաւ և սիրե_լեաւ՝ որ է ՚ի ձէնջ · գամենայն ինչ ցուցցէ ձեզ՝ որ ինչ աստ է :

10 Ող ընդ ին տայ ձեզ արիս_տարքոս գերեկից իմ, և մար_կոս եղբօրորդի բառնաբայ · վասն որոյ առէք պատուէր, ե_թէ կեսցէ առ ձեզ՝ ընկալջիք զնա ·

11 Եւ յիսուս , որ անուա_ռւ հաւատարութիւնիս ճանչցիք. գիտաք որ՝ զուք ալ (մկ) որմր ունիք երկինքը :

2 Աղօթքի չնստա եղիք, զիշեր ցորեկ անով (այ) գոհանալով :

3 Ու մեզի համարալ աղօթք բրէք · որ ած մեզի խօսկի դուռ բանա՝ քրիստոսի խորուրդը խօսելու . ան որ իրեն համար ես կապված կեցերեմ՛ ·

4 Որ ան՝ անանկ յայտնի ցը_ցունեմ՛՝ ինտոր որ ինձի կիյնա խօսիլ :

5 Դրըսի մարդոց հետ խոհե_մութիւնով վարվեցէք · առին_ները գընելով ·

6 Ու ամէն իմիր ձեր խօսկը առատ տնր շնորքովը՝ աղով հա_մովցուցածի պէս ըլլա՛ · գիտ_նալով որ ամէն մէկուն ինտոր պէտք է պատասխանը տալու :

7 Ա՛ր ինչ որ իմ վրայովս է՝ ան բոլորը պիտի ձեզի պատմէ տիւքիկոս սիրելի եղբայրը , ու հաւատարիմ պաշտօնեան , ան որ տրով՝ իմ ծառայութիւնիս ըն_կերն է :

8 Ու ինքը անոր համար ձեզի խաւրեցի՝ որ մեր վրա գիտնաք, ու ձեր սիրտը մըխիթարէ .

9 Ընեսիմոս հաւատարիմ ու սիրելի եղպարտնակ հետը մէկտեղ որ ան ձեր (տեղացին) է . ինքը ամէն բան ձեզի կիմացունէ՝ ինչ որ հոս կըլլա :

10 Ձեզի ողջունէ կուտա արիս_տարքոսը՝ իմ հետ գերութիւնի ընկերըս . ու մարկոսը բառնա_բասի եղպօրորդին , որ անոր հա_մար յանձնարարութիւն առիք , որ ձեզի գա նէ, ինքը ընդունիք

11 Ու յիսուսնակ՝ որ յուստոս

նեալն է յուստոս, որք են ՚ի թլփատութենէ անտի: զի զո՛քա միայն գործակից եղեն ինձ յարքայութեանն այ, որք և եղեն իսկ ինձ մխիթարութիւն:

12 Ողջո՛յն տայ ձեզ եպափրաս՝ որ ՚ի ձէնջ, ծառայ յի՛ք քո՛ի է· յամենայն ժամ պատերազմեալ վասն ձեր յաղօթս, զի կայցէք կատարեալք և լեցեալք յամենայն կամս այ:

13 Վկայեմ՛ նմա, զի բա՛զմ աշխատութիւն ունի վասն ձեր, և վասն լաւոդիկեացոյն, և վասն այնոցիկի՝ որ յերապատլե՛ս եղեն:

14 Ողջո՛յն տայ ձեզ ղուկաս բժիշկ՝ և սիրելի· և դեմաս:

15 Ողջո՛յն տացէք եղբարց՝ որ են ՚ի լաւոդիկեայ· և նիմ՛փայ, և որ առանի՛ն եկեղեցին է նորա:

16 Եւ յորժամ ընթեռնու՛ցու առ ձեզ թուղթ, արա՛ջիք զի և ՚ի լաւոդիկեացոց եկեղեցւո՛ն ընթերցցի, և զառ ՚ի լաւոդիկեացոյն՝ զի և դուք ընթեռնուցուք:

17 Եւ ասացէ՛ք յարքիպպոս· զայո՛ր լեր սպասաւորութեանդ՝ զոր ընկալար ՚ի տէր, զի զայդ կատարեսցես:

18 Ողջո՛յնդ՝ ձեռին իմոյ պաւղոսի է· յուշ լեցէ՛ն ձեզ կապանքս իմ: շնորհ՛ք ընդ ձեզ:

* Ա՛ն Կողոսացիս՝ գրեցաւ ՚ի հռովմ՛՝ ՚ի ձեռն տիւքիկոսի և ոնեսիմայ:

բսված է. որ ասո՛նք թլփատվածներէն են· որ միան ատո՛նք իմ գործուս ընկեր եղան՝ այ արքայութեան բանին մէ՛ջ, որ ինձի՛ալ մխիթարանք եղան:

12 Ձեզի ողջո՛ւն կուտա է պափրասը՝ որ (անո՛ր) ձեզմէն է՝ յի՛ք քո՛ի ծառա· որ սա՛մէն խիթը աղօթքի ջանքի մէ՛ջ է ձեզի համար, որ կատարեա՛լ ըլլաք ու այ կամքը կատարէք:

13 Ա՛նոր վրա սա կըվկայեմ որ՝ շատ ջանք ու հոգ ունի ձեզի համար, ու լաւոդիկեացոց համար, ու անոնց համարա՛ր՝ որ յերապոլե՛ս են:

14 Ձեզի ողջո՛ւն կուտա ղուկաս բժիշկը՝ ան որ (իմ) սիրելի՛ս է· ու դեմասն ալ:

15 Ողջո՛ւն տըվի՛ք ան եղբարներուն որ լաւոդիկէ՛ն են: ու նիմ՛փայն ալ (ողջո՛ւն), ու եկեղեցիին ալ որ անոր տունն է:

16 Ու սա թուխտը ձեր մէ՛ջը կարդալէն ետև՝ նայեցէ՛ք որ լաւոդիկեացոց եկեղեցիին մէ՛ջնալ ան կարդացվի· ու որ՝ լաւոդիկեացոց (գրված թուխտը) դո՛ւքալ կարդաք:

17 Ու արքիպպոսի ըսէ՛ք· աչքդ բաց քու ըսպասաւորութի՛նիդ վրա՝ ան որ տըր քեզի տըվաւ, որ ատիկա (աղէկ) կատարես:

18 Ես պօղոսս՝ իմ ձեռքովս սա ողջո՛ւնըս կուտամ· իմ կապերըս մըտիքնիդ Թող ըլլա՛: շնորհքը ձեր ՚ի՛ն (ըլլա՛):

* Կողոսացոց՝ հռոմայեն գրվեցաւ, տիւքիկոսին ու ոնեսիմոսին ձեռքով (խրկած):

Ա.Ո ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՍ

ԱՌԱՋԻՆ ԹՈՒՂԹ.

ԳԼ. Ա.

1 ՊԱՒԼՈՍ, և սիղուա_նոս, և տիմոթէոս · եկե_ղեցւոյդ թեսաղոնիկեցւոց՝ յԱծ հայր մեր, և ՚ի տր յս քս ։

2 Շնորհք ընդ ձեզ և խա_ղաղութիւն ։ գոհանամք զայ յամենայն ժամ՝ վասն ձեր ա_մենեցուն՝ յիշատակ առնել յա_ղօթս մեր անդադար ·

3 Յիշել զձեր գ՚ործն հա_ւատոց, և վաստակ սիրոյ և զհամբերութեան՝ յուսոյ ՚ն մե_րոյ յն քս՝ առաջի այ և հր մերոյ ։

4 Գիտէք եղբարք սիրե_ցեալք յայ՝ զընտրութիւնն ձեր ։

5 ՚Օ՚ի աւետարանն մեր՝ ո՛չ եղև առ ձեզ միայն բանիւ, այլ և զօրութեամբ՝ և հոգ_ւով սրբով, և լրութեամբ բազ_մաւ · որպէս և գիտէք իսկ, թէ որպիսիք եղեաք ՚ի մէջ ձե_րում՝ վասն ձեր ։

6 Եւ դուք նմանեալք մեզ՝ և ն, ընկալեալք զբանն ՚ի բա_զում՝ նեղութեան՝ խնդու_թեամբ հոգւոյն սրբ ·

7 Մինչ ձեզ օրինակ ամե_նայն հաւատացելոց՝ որ են ՚ի մակեդոնիա՝ և յաքայիա ։

8 ՚Օ՚ի ՚ի ձէնջ հնչեալ

ԳԼ. Ա.

1 ՊՕՂՈՍ, ու սիղվանոս՝ ու տիմոթէոս · թեսաղոնիկե_ցոց եկեղեցիդ, մեր հայր աս_տուծով՝ ու տր յն քսով ։

2 Շնորքն ու խաղաղութիւնը ձեր հետն (ըլլա) ։ ամէն ատեն այ գոհութիւն կուտանք ձեր բոլորիդ համար, մեր աղօթքին մէջը ան_դադար (ձեզ) յիշելով ·

3 Ձեր հաւատուն գործքը այ ու մեր հօրը դիմացը դրնելով, ու (ձեր) սիրու ու համբերութիւնի աշխատանքը՝ ոնը մերոյ յն քսի վրա յոյսերնիդ դրած ։

4 Ա՛յ սիրելի եղբայրներ՝ դուք գիտէք (որ ինծոր եղաւ) ձեր ընտ_րութիւնը ։

5 Որ մեր՝ ձեզի աւետարանելը խօսկով միան չեղաւ, հապա՝ զո_րութիւնով, ու հոգով սրբով, ու (ան) էվէլօք առատութիւնով· ինչպէս որ ալէկ գիտէք՝ որ ին_ծոր ձեր մէջ վարվեցանք՝ ձեր բարուն համար ։

6 Ու դուքալ մեզի ու ոնը նման եղած, (այ) խօսկը ընդու_նեցաք, շատ նեղութիւններու մէջ՝ հոգով սրբով ուրախ ըլլալով ·

7 Անանկ որ՝ դուք օրինակ ե_ղաք ան բոլոր հաւատացեալնե_րուն՝ որ մակեդոնիան ու աքայիան կրգտնըվին ։

8 Որ ալ այ խօսկը չէ թէ միան

բանն այ՝ ուր միայն ի մակե-
դոնիա և յաքայիա, այլ յա-
մենայն տեղիս հաւատքն ձեր որ
առ ած են՝ սփռեցան · զի այ-
սուհետև ոչինչ է պիտոյ մեզ
և խօսել ինչ :

9 .Օ.ի նոքին իսկ պատմեն
վասն մեր՝ թէ որպէս եղև մեզ
մուտ առ ձեզ , և որպէս դար-
ձայք առ ած ի կուռց անտի ,
ծառայել այ կենդանւոյ և
ճշմարտի :

10 Եւ սպասել որդւոյ
նորա յերկնից , զոր յարոյցն ի
մեռելոց՝ զյն , որ փրկեալ է
զմեզ ի բարկութենէն անտի որ
գալոցն է :

ձեզմէ մակեդոնիա ու աքայիա
ձանձրէվեցաւ՝ հապա՝ ձեր դէպի
ած ունեցած հաւատքնիդ ալ ամ-
մէն տեղ տարածվեցաւ · անոնկ
որ՝ ալ ասկէ ետև մեզի բանմը-
նալ չեմրնար խօսիլ :

9 Որ բուն իրենք մեր վրա կը-
պատմեն՝ թէ ինչ կերպով մենք
ձեր քովը մտանք· ու ինչպէս ան
կուռքերէն այ դին դարձաք, կեն-
դանի ու ճշմարիտ այ ծառայե-
լու :

10 Ու երկրընքէն անոր յն որ-
դուն ըսպասելու · որ ան՝ մեռե-
նեռէն յարուց, որ անիկա մեր
վրա գալու (այ) բարկութենէն
մեզ պիտի խալսէ :

ԳԼ· Բ·

1 Զուք ինքնին գիտէք եղ-
բարք՝ զմուտն մեր առ
ձեզ , զի ոչ ընդունայն ինչ
եղև ·

2 Այլ յառաջագոյն չար-
չարեալք և թշնամանեալք ,
որպէս և դուք իսկ գիտէք՝ ի
մէջ փիլիպեցւոց, համարձակե-
ցաք այլ մերով՝ պատմել ձեզ
զաւետարանն այ մեծաւ պա-
տերազմաւ :

3 .Օ.ի մխիթարութիւնն մեր
ոչ ի մոլորութենէ է, և ոչ ի
պղծութենէ , և ոչ նենգու-
թեամբ :

4 Այլ որպէս ընտրեցաք
յայ հաւատարիմ լինել աւե-
տարանին, նոյնպէս և խօսիմք·
ոչ իբրև մարդկան հաճոյ լի-
նել , այլ այ որ քննէ զսիրտս
մեր :

5 .Օ.ի ոչ երբէք բանիւք
ողջախնաց եղեաք առ ձեզ , որ-
պէս և դուք իսկ գիտէք· և ոչ

1 Ան զուք ալ ինքիրնիդ գի-
տէք եղբայրներ՝ որ մեր
ձեր քովը գալը պարապ տեղը
չեղաւ ·

2 Հապա՝ առաջ՝ փիլիպեցոց
մէջ չարչըրկվելէն ու թուքս-
մուր առնելէն ետև , ինչպէս որ
ան զուքալ աղէկ գիտէք՝(անոնկ)
սաստիկ պատերազմունքով մեր
աստուծմով սիրտ ըրինք այ աւե-
տարանը ձեզի պատմելու :

3 Ինչու որ՝ մեր տրված մխի-
թարանքը մոլորութենէ առաջ
չեղաւ , ու ոչ պղծութենէն, ու ոչ
ալ խաբեբայութենով :

4 Հապա՝ ինսոր որ մենք աս-
տուծմէ ընտրըվեցանք աւետա-
րանին հաւատարիմ ըլլալու , ա-
նանկալ կըխօսինք· չէ որ մար-
դոց հաճո ըլլանք, հապա այ՝ որ
մեր սիրտը կըքննէ :

5 Որ՝ մենք իսկի շողոքորթելու
խօսկերով չեեղինիդ չէ վարվե-
ցանք, ինչպէս զուքալ աղէկ գի-

’ի պատճառս ազատութեան, որպէս և ասաց վկայէ :

6 Եւ ոչ խնդրեցաք զփառս ’ի մարդկանէ, ոչ ’ի ձէնջ՝ և ոչ յայլոց :

7 Կարող էաք որպէս քրիստոսաբեաք՝ ծանրանալ, այլ եղաք չեզք ’ի միջի ձերում. որպէս դայեակ մի որ սնուցանիցէ մանկունս,

8 Կ՚ընդպէս և մեք զթայաք ’ի ձեզ : Հաճոյ թուէը մեզ տալ ձեզ ոչ միայն զաւետարանն այլ, այլ և զանձինս մեր. քանզի սիրելիք մեր եղերուք :

9 Յիշեցէք եղբարք՝ զվաստակն մեր և զչան. զի գոյզ և գչերեկ գործեաք վասն չծանրանալոյ ումէք ’ի ձէնջ. և քարոզեաք ձեզ զաւետարանն այ :

10 Դուք ինքնին վկայէք՝ և ած, որպէս սրբութեամբ և արդարութեամբ և անբծութեամբ՝ ձեզ հաւատացելոցդ եղեաք :

11 Որպէս և գիտէք իսկ. զի կիւրաքանչիւրոք ’ի ձէնջ՝ իբրև հայր զորդիս,

12 Մխիթարեաք և սփոփեաք, և գնեաք վկայութիւն գնալ ձեզ արժանապէս այ, որ կոչեացն զձեզ յիւր արքայութիւնն և ’ի փառս :

13 Վասն այսորիկ և մեք գոհանամք զայ անպակաս, զի առեալ զլուր բանին այ առ ’ի մէնջ՝ ընկալարուք, ոչ իբրև զբան մարդկան, այլ որպէս ճշմարտիւ զբան այ. որ և յաստէք. ու ոչ ապահութիւնի պատճառով ինչպէս որ ած ալ կըվըկայէ :

6 Ու մարդոցմէ եղած փառքի եռանդ չենկանք, ոչ ձեզմէ՝ ու ոչ ուրիշներէն :

7 Կրնայինք՝ քրիստոսաբեալ ենք ըսելով, (ձեզի) ծանրութիւն տալ. բայց ձեր մէջ չեզուկ եղանք. մեկ ծրծմօրիմբպէս որ ըրեխաները կերկրնէ մենծցընէ,

8 Այնպէս ալ մենք ձեր վրա զութ կապրէինք : մեզի ալ տարբ կերնար չէ թէ միայն այ աւետարանը ձեզի տալու, հապա՝ բուն մեր անձերնիս ալ. պատճառն որ՝ մեր սրտին սիրած ներըը եղաք :

9 Մտիքնիդ բերէք եղբայրներ՝ մեր աշխատանքն ու մեր չանքը. որ գիշեր ու ցորեկ կըբանէինք որ ձեր մէկուն ալ ծանրութիւն չըտանք. ու (անանկ) այ աւետարանը ձեզի կըքարոզէինք :

10 Դուն դուք կըվկայէք՝ ու ած ալ, որ ինտոր սրբութինով ու արդարութինով ու անարատութինով վարվեցանք ձեր չեմ՝ երբոր հաւատաք եկաք :

11 Ինչպէս ան գիտէք ալ. որ ձեր ամմէն մէկըդ՝ ինտոր մէկ չարմը իր որդիքներըը,

12 (Անանկ) կրմխիթարէինք, ու սրտերնիդ կառնէինք. ու վկայուելին առջինիդ կրընէինք, որ դուք այ վայլած համբովը երթաք. ան որ ինքը ձեզ իր արքայութինին ու փառքին կանչեց :

13 Այնոր համար մենքալ միշտ այ գոհանալին կուտանք, որ (դուք) այ խօսկին ձանը մեզմէ լսեած՝ ընդունեցիք. չէ թէ մարդոց խօսկիմբ պէս, հապա՝ ինչպէս բուն այ ճշմարիտ խօսկ : որ ան՝

ջողեալ իսկ է ՚ի ձեզ հաւա-
տացեալդ :

14 Օ՛ի դուք նմանողք ե-
ղերուք եղբարք՝ եկեղեցեացն
այ՝ որ են ՚ի հրեաստանի ՚ի քս
յս . զի զնոյն չարչարանս չար-
չարեցայք և դուք ՚ի ձերոյ
ազգականաց , որպէս և նոքայն
՚ի հրէից .

15 Որք և զտէրն յս սպանին՝
և զմարգարէսն , և զմեզ հա-
լածեցին ,՚և այ յաչս ելլեն .
և ամենայն մարդկան հակառակ
եղեն :

16 Եւ արգելոյին զմեզ խօ-
սել հեթանոսաց զի ապրես-
ցին . զի կատարեսցեն զմեղս
իւրեանց յամենայն ժամ. քան-
զի հասեալ է ՚ի վերայ նոցա
բարկութիւն մինչև ՚ի սպառ :

17 Այլ մեք եղբարք՝ թէ-
պէտ և որբ մնացաք ՚ի ձէնջ
առ ժամանակ մի , երեսօք՝ և
ոչ սրտիւ . առաւել ևս փու-
թացաք տեսանել զերեսս ձեր
մեծաւ ցանկութեամբ :

18 Վասն այսորիկ կամեցայ
զալ առ ձեզ ես պաւղոս՝
միանգամ և երկիցս , և խա-
փանեաց զմեզ սատանայ :

19 Քանզի ո՞վ է մեր յոյս ,
կամ խնդութիւն , կամ պսակ
պարծանաց մերոց , եթէ ոչ
դուք ՚ի տր՝ առաջի նն մերոյ
յսի քսի ՚ի նորա գալստեանն :

20 Օ՛ի դուք էք փառք մեր՝
և խնդութիւն :

անանկ ալ ձեզի ըլաւ՝ որ դուք
հաւատաք :

14 Ինչու որ՝ եխպարներ՝ դուք
նման եղաք ան այ եկեղեցիներ-
ուն որ հրէաստանն են՝՝ քսի
յսի (հաւատքով) . որ դուքալ
ան չարչարանքները քաշեցիք
ըուն ձեր ասգէն՝ ինչպէս որ ա-
նոնքալ հրեաներէն .

15 Որ՝ տր յսնալ ըսպաննե-
ցին , ու մարգարէներն ալ ու
մեզ ալ հալածեցին , ու այ աչ-
կէն ելան . ու ամմէն մարդոց
թշնամի եղան :

16 Ու մեզ ալ կարգիլէին որ
հեթանոսաց բան չը խօսինք՝ որ
(անով) փրկվին : որ (անանկ)
ամմէն ատենովը մեղքերնին կա-
տարեալ ընեն . պատճառն որ՝
այ բարկութիւնը իրենց վրա ինչ-
վան հակի կ՚երթ հասերէ :

17 Իսայց մենք եխպարներ՝ ի-
րաւ քիչմը ատեն ձեզմէ որբ մա-
ցինք երեսով , ու չէ թէ սրտով.
ալ էվելը սաստիկ կարօտով ար-
տօրացինք ձեր երեսը տեսնելու :

18 Այնոր համար ես պօղոս՝
մէկ երկու հեղմը եղաւ որ ուզե-
ցի ձեզի գալու , ու սատանան մեզ
խափանեց :

19 Ինչու որ՝ ո՞վ է մեր յոյսը ,
կամ ուրախութիւնը , կամ մեր
պարծանքին թաղը , թէ չէ դուք ,
տրովը , տնը մերոյ յսի քսի ատ-
ջև՝ ան իր գալուն առնը :

20 Որ՝ դուք էք մեր փառքը
ու ուրախութիւնը :

Գ Լ. Գ.

1 Վասն որոյ ոչ ևս ունիմք
ժոյժ , զի բարւոք թո-

1 Ա՛ս պատճառէս՝ ալ չի կրնա-
լով էվելը համբերել , մ-

եցաւ մեզ միայն մնալ յա-
թէնս :

2 Եւ առաքեցաք զտիմո-
թէոս զեղբայր մեր և զգործա-
կից աւետարանին Այ՝ և Հօրն
քոյ, հաստատել զձեզ՝ և մխի-
թարել վասն հաւատոցն ձերոց.

3 .Օ ի մի՛ տաղտկայցէք ՚ի
նեղութիւնս յայսոսիկ . քան-
զի դուք ինքնին իսկ գիտէք,
զի ՚ի սոյն կամք :

4 Քանզի մինչ առ ձե՛զն իսկ
էաք՝ յառաջագոյն ասեաք ձեզ,
թէ նեղութիւնք հասանելոց են
՚ի վերայ մեր . որպէս և եղե՛
իսկ՝ և գիտացէք :

5 Վասն այնորիկ և ես զի
ո՛չ ունէի՝ ժոյժ՝ առաքեցի զի-
տե՛լ զհաւատսն ձեր . դուցէ՛
արդեւք փորձեաց և զձեզ փոր-
ձիչն, և ընդունայն լինիցի ջանն
մեր :

6 Իսայց արդ՝ իբրև եկն տի-
մոթէոս ՚ի ձէնջ առ մեզ, և
ետ մեզ զաւետիս հաւատոցն
ձերոյ, և զսիրոյ՝ զի ունիք ՚ի
մտի զյիշատակս մեր բարեաց
յամենայն ժամ . և ցանկա-
ցեալ էք տեսանել զմե՛զ՝ որ-
պէս և մեք զձե՛զ .

7 Վասն այսորիկ մխիթարե-
ցա՛ք ՚ի ձեզ եղբարք՝ ՚ի վերայ
ամենայն վշտից և նեղութեանց
ձերոց, ՚ի ձեռն հաւատոցն ձե-
րոց :

8 .Օ ի այժմ՝ կենդանի եմք՝
եթէ դուք հաստատուն կայցէք
՚ի Տ՚ր :

9 .Օ ինչ կարեմք գոհու-
թիւն մատուցանել Այ վասն
ձեր, ՚ի վերայ ամենայն խընդ-
դութեանն զոր խնդամք վասն
ձեր առաջի Այ մերոյ :

10 .Օ ցայգ և զյերկիւղ առա-
ջի աղէկ երևցաւ որ (ես) մինա-
ւոր աթէնքը կենամ՝ :

2 Ու տիմոթէոս մեր եխպարը,
որ Այ ու քրի՛ Հօրը աւետարանին
գործու ընկերս է, ան խաւրեցինք,
որ ձեզ հաստատէ՝ ու մխիթարէ ձեր
(բանած) հաւատքին վրայովը .

3 Որ աս նեղութիւններուս մէ-
ջը չի թուխնաք իյնաք . որ ան
դուքալ աղէկ գիտէք՝ որ (մենք)
աս բանիս վրա կեցերնիք :

4 Որ երբոր բուն ձեր քովնալ
էինք՝ առաջուցմէ (աս) ձեզի կը-
սէինք, թէ մեր վրա նեղութին-
ներ պիտի հասնին . ինչպէս որ է-
ղաւ, ու (դուքալ) գիտցաք :

5 Անոր համար ես՝ ալ չի-
համբերեցի . (անիկա) խաւրեցի
որ ձեր հաւատքին չափը գիտ-
նամ . որ չըլլա թէ ան փորձողը
ձեզ ալ փորձած ըլլա, ու մեր
աշխատանքը պարապը երթա :

6 Իսայց հիմա տիմոթէոս որ
ձեզմէ մեզի եկաւ, ալ ձեր հա-
ւատուն աւետիսը մեզի տրվաւ,
ու (ձեր) սիրուն՝ որ ամէն խիր
մեր բարի յիշատակը մտիքնիդ
ունիք, ու կրքախծաք եղեր մեզ
տեսնելու, ինծոր մենքալ ձեզ :

7 Անոր համար՝ եխպարներ՝
ալ ձեր վրայով մխիթարվեցանք,
ան ձեր հաւատքին պատճառով
բոլոր ձեր քաշած տառապանքն
ու նեղութիւնները :

8 Որ ալ աս առեն՝ (մենք)
կենդանի ենք, քանի որ դուք
հաստատ կենաք Տրով :

9 Ա՛ր (մենք) ի՛նչ շնորհակա-
լութին կրնանք մատուցանել Այ
ձեր վրայով, ան (մեր) ասատիկ
խընտութին համար որ ձեր վրա
կուրախանանք մեր Այ առջևը :

10 Գիշեր ու ցորեկ՝ եվել եվե-

ւել և ապաչեմ՝ տեսանել զերկնս ձեր, և հաստատել զպակասուն հաւատոցն ձերոց:

11 Այլ ինքն ած և Տէր մեր՝ և Որ մեր յաջ քո՝ ուղղեսցէ զճանապարհս մեր առ ձեզ:

12 Եւ զձեզ՝ ինքն Որ բազմապատիկս և առաւելս արասցէ սիրով ընդ միմեանս՝ և առ ամենեսեան, ոպ և մեք ի ձեզ:

13 Հաստատել զսիրտս ձեր անարատս ի սրբութիւն առաջի Աստուծոյ և Հօր մերոյ՝ ի գալստեան Տեառն մերոյ յիսուս քրիստոսի՝ ընդ ամենայն սրբովք իւրովք:

լոք (այո ամէն) կազաչեմ որ ձեր երեսք տեսնեմ, ու ձեր հաւատքին եղած պակասը լեցընեմ:

11 Իսկ ինքը ած որ մեր Հայրն է, ու յիսուս Քրիստոս մեր Տէրը, մեր ճամբան յաջողէ դէպի ձեզ գալու:

12 Ու ինքը Տէրը աճեցընէ ու կատարելագործէ ձեր սէրը միմեանց հետ՝ ու ամենուն հետը. ինչպէս որ մենք ալ ձեր վրա ունինք:

13 Որ ձեր սիրտը հաստատ մընա անարատ մաքրութեամբ՝ մեր Հօրը դիմացը՝ երբ որ մեր Տէր յիսուս Քրիստոս իր բոլոր սրբերուն հետ գալուն ատենը:

ԳԼ· Դ·

1 Այսուհետև եղբարք՝ աղաչեմ զձեզ, և մխիթարեմ՝ ի քրիստոս. զի որպէս ընկալարուք՝ ի մէնջ, թէ որպէս պարտ իցէ ձեզ գնալ՝ և հաճոյ լինել ած. որպէս և գնայք իսկ, զի աւս քան զաւս յաւելցուք՝ ի նոյն:

2 Եւ գիտէք՝ թէ որպիսի պատուիրանս տուաք ձեզ՝ ի Տէր յիսուս:

3 Զի այս են կամք ած, սրբութիւն ձեր. ի բաց լինել ձեզ՝ ի պոռնկութենէ.

4 Գիտել իւրաքանչիւր ումեք՝ ի ձէնջ զիւր աման ըստանալ սրբութիւն և պատուով.

5 Մի՝ ի ցասս ցանկութեան՝ որպէս և այլ հեթանոսք որ ոչ գիտեն զած:

6 Մի՛ զանցանել և զրկել յիւրիդ յայտիւիկ կեղբայր իւր. քանզի վրէժխնդիր է Տէր՝ ի վերայ ամենայնի այզորիկ. որպէս

1 Այսկէ ետև ալ ևխպարներ՝ ձեզի կաղաչեմ, ու քովյիսով կրյորդորեմ, որ ինչպէս մեզմէ սորվեցաք՝ թէ ինտոր պէտք է ձեզի երթալ, ու այս չափ ըլլալ, ինչպէս որ կերթաքկոր ալ. որ էվէլ էվէլքը անոր մէջը առաջանաք:

2 Ու գիտէք ալ՝ որ ան ինչ պատվիրանք էր որ ձեզի տըվինք Տէր յիսուս կողմանէ:

3 Այն թէ՝ այ կամքը աս է, որ դուք սուրբ ըլլաք, ու պոռնկութենէն ձեզ հետ քաշէք.

4 Ձեզմէ ամէն մէկըզ գիտնա՝ իր ամանը մաքուր ու պարկեշտ պահելու.

5 Ձէ որ ցանկութենի ախտուկիրքով, ինտոր ան հեթանոսները (կըսեն՝) որ ած չեն գիտեր:

6 (Այդ) առ բանիդ մէջը չըլլա որ չափը անցունէք, ու ձեր եղբօրը անիրաւութեան ընէք, որ Տէրը՝ ամէն ատանկ բաներուն

յառաջագոյն առացաք ձեզ , և եղաք վկայութիւն :

7 Քանզի ոչ կոչեաց զմեզ Աստուած ի պղծութիւն՝ այլ ի սրբութիւն :

8 Ապա հետեւ որ անարգէ , ոչ զմարդ անարգէ , այլ զԱստուած որ և ետ զհոգին սուրբ ի ձեզ :

9 Այլ վասն եղբայրսիրութեան՝ չէ ինչ պիտոյ գրել առ ձեզ . զի դուք ինքներն իսկ Աստուածմէ ուսեալ էք՝ առ ի փոխանակս սիրելոյ :

10 Քանզի և առնէք իսկ զդոյն յամենայն եղբարս , որ են յամենայն մակեդոնիա աշխարհս : աղաչեմ զձեզ եղբարք՝ առաւել առաւելուլ և առաւել :

11 Հանդարտել , և գործել զիւրաքանչիւր . և գործել ձեռօք ձերովք , որպէս և պատուիրեցաք ձեզ .

12 Զի զնայցէք պարկեշտութեամբ առ արտաքինսն , և մի իւիք կարօտեսջիք իցէք :

13 Ոչ կամիմ եղբարք եթէ տգէտք իցէք վասն ննջեցելոցն , զի մի տրտմիցիք որպէս և այլքն որոց ոչ գոյ յոյս :

14 Եթէ հաւատամք՝ եթէ յիս մեռաւ և յարեաւ , նոյնպէս և Աստուած զննջեցեալսն ի ձեռն յիսուսի ածցէ ընդ նմա :

15 Զայդ զայս առեմք ձեզ բանիւ , եթէ մեք որ կենդանիքս եմք մինչեւ զգալութիւն՝ ի գալուստն Տեառն ոչ ժամանեմք ննջեցեալոցն :

16 Զի ինքն Տէր՝ հրամանաւ ի ձայն հրեշտակապետի , և ի փող Աստուծոյ իջանէ յերկնից . և մեռեալքն որ ի Քրիստոս են՝ յառնեն նախ :

17 Ապա մեք կենդանիքս որ մնամք՝ միանգամ ընդ նոսա առաքեալ լինիմք ի ամպս ընդ առաջ Տեառն յօդ . և ընդ այնպէս միշտ ընդ Տեառն եղեալ լինիմք :

18 Վասն որոյ մխիթարեցէք զմիմեանս բանիւ զայդոսիկ :

Գլուխ Ե

1 Վասն ժամանակաց և ամանակաց՝ եղբարք , ոչ պիտոյ է գրել առ ձեզ :

2 Զի դուք ինքներդ ստուգիւ գիտէք զի որպէս գողն ի գիշերի՝ այնպէս եկեսցէ աւուրն Տեառն :

3 Զի յորժամ ասիցեն թէ խաղաղութիւն և ապահովութիւն է , յայնժամ յանկարծակի հասցէ նոցա կորուստ , որպէս ցանկութիւն յղեաց ի վերայ , և ոչ կարասցեն ապրել :

4 Այլ դուք եղբարք՝ ոչ էք ի խաւարի , զի զաւուրն զայն որպէս գող զձեզ գտցէ :

5 Զի ամենեքեան որդիք լուսոյ էք և որդիք աւուր . ոչ էք ի գիշերի և ոչ ի խաւարի :

6 Ապա մի քնասցուք որպէս և այլքն , այլ արթնասցուք և պահեսցուք :

7 Զի որ քնանան՝ գիշերի քնանան , և որ արբենան՝ գիշերի արբենան :

8 Այլ մեք որ ի տուընջենի եմք՝ պահեսցուք , զգեցեալ զրահ հաւատոյ և սիրոյ , և սաղաւարտ յուսոյ փրկութեան :

9 Զի ոչ եդ զմեզ Աստուած ի բարկութիւն , այլ ի շահ փրկութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի :

10 Որ վասն մեր մեռաւ , զի եթէ արթնասցուք և եթէ քնասցուք՝ միանգամ ընդ նմա կեցցուք :

11 Վասն որոյ մխիթարեցէք զմիմեանս և շինեցէք զմիմեանս , որպէս և առնէք :

12 Աղաչեմք զձեզ եղբարք՝ ճանաչել զայնոսիկ որ վաստակեն ի ձեզ , և կան առաջի ձեր ի Տէր , և յորդորեն զձեզ :

13 Պատուական առնել զնոսա յոյժ ի սէր գործոյ նոցա : Խաղաղութիւն ունիցիք ընդ միմեանս :

14 Յորդորեմք զձեզ եղբարք , յանդիմանեցէք զանկարգսն , մխիթարեցէք զհոգեվարսն , հանդուրժեցէք զհիւանդսն , համբերեցէք առ ամենեսին :

15 Տեսէք զի ոք չար փոխանակ չարի ումեք մի հատուսցէ , այլ միշտ զբարին հետամտեցէք ընդ միմեանս և առ ամենեսին :

16 Միշտ ուրախ լերուք :

17 Յամենայնի աղաչեցէք :

18 Ի ամենայնի գոհանայք . զի այս է կամք Աստուծոյ ի Քրիստոս Յիսուս ի ձեզ :

19 Զհոգին մի՛ մարէք :

20 Զմարգարէութիւնս մի՛ արհամարհէք :

21 Ամենայնի փորձեցէք , զբարին պահեցէք :

22 Յամենայն չարէ հեռացարուք :

23 Ինքն Աստուած խաղաղութեան սրբեսցէ զձեզ ամենայն կատարեալ , և ամենայն հոգի ձեր և անձն և մարմին անարատ ի գալուստն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի պահեսցի :

24 Հաւատարիմ է որ կոչեաց զձեզ , որ և առնէ :

25 Աղաչեմք զձեզ եղբարք՝ աղաչեցէք և զմեզ :

26 Ողջունեցէք զամենայն եղբարս սուրբ համբոյրով :

27 Երդուեալ դնեմ զձեզ առ Տէր՝ ընթերցանել զթուղթս զայս առ ամենայն սուրբ եղբարս :

28 Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ ձեզ :

ւեալք՝ ի քո՝ յարիցեն յառաջագոյն :

17 Այս և մեք որ կենդանւոյն մնացեալ եցեմք՝ նոքօք հանդերձ յափշտակեսցուք ամպովք ընդ առաջ ՚ի յօդս . և այնպէս յաւենայն ժամ ընդ ՚ի Լինիցիմք :

18 Այսուհետև մխիթարեցէք զմիմեանս բանիւքս այսոքիւք :

կենչնա , ու քոյով մեռածներըմ՝ առաջ յարութիւն կառնեն :

17 Նաև մենքալ որ (երկրի վրա դիա) ոխտ որ մնացած ենք· անոնց հետը միասին ամպերով օդուն մէջ կըվերնանք՝ ՚ի նոր ջևը· ու ալ անանկ ամէն ի միշը նոր հետը կըլնանք :

18 Ալ սակէ եակը՝ աս բաներովը մէկ ըզմէկ մխիթարեցէք:

Գ Լ· Ե·

1 Այլ վասն ժամուց և ժամանակաց եղբարք՝ չէ ինչ պիտոյ գրել առ ձեզ :

2 .Օ ի դուք ինքներն իսկ ըստոյգ գիտէք, թէ օր ՚ն երբեւ զողզիշերի՝ այնպէս հասանէ :

3 Յորժամ ասիցեն թէ խաղաղութիւն և շինութիւն է, յայնժամ յանկարծակի հասցէ նոցա սատակումն՝ որպէս և երկն յղոյ, և մի ապրեսցեն :

4 Այլ դուք եղբարք՝ ոչ էք ՚ի խաւարի, թէ օրն ձեր իբրեւ զգող ՚ի վը հասանիցէ :

5 .Օ ի ամենեքին դուք որդիք լուսոյ էք, և որդիք տուրջեան : չեմք գիշերոյ , չեմք խաւարի ·

6 Այսպա մի գընդմ անկանիցիմք՝ որպէս և այլքն . այլ արթնանք և զուարթանք եղիցուք :

7 .Օ ի որ ննջեն՝ գիշերի ննջեն , և որ արբենանն՝ գիշերի արբենան :

8 Այլ մեք գի տուրնջեան

1 Ու ալ՝ ե֊խպարներ, ժամանուն (առենին՝) ու ժամանակներուն վրայովը, պէտկը չէ որ ձեզի (բան) գրեմ՝ :

2 Որ դուք ինքիրենիզ ան աղեկ գիտէք, որ տէրը օրը՝ գիշերը եկող գողու պէս՝ անանկ վրա կըհասնի :

3 Երբոր ըսեն թէ՝ (ալ հիմա) խաղաղութին ու ապահովութին է, ան ատենը յանկարծակի իրենց վրա կըհասնի պատուհասը, ինաոր ծոսվորիմը ցաւը բռնածի պէս , որ անկէ ազատում չկիա :

4 Բայց դուք ե֊խպարներ՝ խաւարի մէջ չէք, որ ձեր օրը դողմրպէս վրա հասնի :

5 Ինչու որ՝ ամմինքըդ լուսոս որդիք էք՝ ու ցորեկի որդիքներ: գիշերին (որդիքը) չենք, խաւարինը չենք ·

6 Անանկ էնէ՝ քնանալու հետ չըլլանք՝ ուրիշներուն պէս · հապա՝ արթուն ըզգաստ ըլլանք :

7 Պատճառը , անոնք որ քնանալու կըլլան՝ գիշերը կըքնանան , ու անոնք որ կըհարբին՝ գիշեր ատեն կըհարբենան :

8 Ու մենք որ ցորեկինն ենք՝

եմք, արթունք եղեցուք, և զգեցցուք զզրահն հաւատոյ և զսիրոյ, և զիցուք զսաղաւարտ յուսոյն փրկութեան :

9 .Օ.Ի մէ ետ զմեզ Ա'Ծ Ի բարկութիւն, այլ Ի փրկութիւն կենդանութեան Ի ձեռն Ն'Ո'Ր մերոյ Յ'Ի'Ս'Ի'Ս Ք'Ի'Ս'Ի'Ս :

10 Որ մեռաւն վասն մեր . զի եթէ արթունք լեմք՝ և եթէ ննջեցեմք , նովաւ կեցցուք :

11 Վասն որոյ մխիթարեցէք զմիմեանս , և շինեցէք զիրեարս՝ որպէս և առնէքդ իսկ:

12 Աղաչեմ զձեզ եղբարք՝ ճանաչել զվաստակաւորս և և զվերակացուս ձեր Ի ՏԷՐ, և զխրատիչս ձեր :

13 Եւ համարեցարուք ըզնոսա արժանիս առաւել սիրոյ՝ վասն գործոյ նոցա : խաղաղութիւն արարէք ընդ միմեանս :

14 Աղաչեմ զձեզ եղբարք՝ խրատեցէք զստահակս , մխիթարեցէք զվարձամիտս , պատրսպարան լերուք տկարաց , երկայնամիտ լերուք առ ամենեսին:

15 .Օ.գոյր լերուք՝ գուցէ ոք չարի չար հատուցանիցէ . այլ յամենայն ժամ զբարեաց գՀետ երթայք՝ առ միմեանս և առ ամենեսին :

16 Յամենայն ժամ ուրախ լերուք :

17 Անդադար աղօթս արարէք :

18 Յամենայնի գոհացարուք. զի այս են կամք Ա'Յ' քրիս Յ'Ի'Ս' Ի ձեզ :

19 .Օ.հոգին մի շիջուցանէք :

արթուն ըլլանք . ու չաւտքի ու սիրու զբռայը վրանիս հագնինք. ու փրկութեան յոյսին սաղաւարտը (գլխնիս) դնենք :

9 Ինչու որ՝ Ա'Ծ մեզ (իբ) բարկութենին համար չը դրաւ. հապա որ փրկութեամբ կենդանի ըլլանք՝ Ն'Ո'Ր մերոյ Յ'Ի'Ս' Ք'Ի'Ս'Ի'Ս' ձեռքով :

10 Ան որ մեզի համար մեռաւ. որ թէ արթուն եղած՝ ու թէ քնացած՝ միշտ իրեն հետ օխտ մըլնանք :

11 Ասոր ալ միմիկու սիրտ տրվէք , ու իրարու շինուելին երկիք , ինչպէս որ ան կ'ընէք ալ :

12 Ան կաղաչեմ ձեզի եղբայրներ , որ ձեր վրա աշխատողներն ու վերակեցուները ու ձեզ խրատողները ազիկ ճանչնաք տրով :

13 Ու անոնք էվելի սիրելու արժանի սեպեցէք՝ իրենց գործքին համար որ կընեն : իրարու հետ (միշտ) խաղաղութենով կեցէք :

14 Եղբայրներ՝ ձեզի կաղաչեմ, քաւոտները խրատեցէք , անհամբերները միխիթարեցէք , տըկարներուն թև թիկունք եղէք . ամենուն երկայնմտութին ըրէք :

15 Ը գգուշ եղէք՝ չըլլա որ միը՝ չարին՝ չար հատուցում ընէ. հապա՝ ամէնատեն բարիք ընելու հետ եղէք միմիկու՝ ու ամենուն հետ ալ :

16 Ամէն ժիթը ուրախութին ունենանք :

17 Մի դադրիք աղօթք ընէլէն :

18 Ամէն բանի համար (այ) գոհութին տրվէք . որ Ա'Ծ ասանկ կրկամենա՝ (որ ան դուք ընէք) քրիստոսով Յ'Ի'Ս'Ո'Վ :

19 Հոգիին (վառմունքը) մի մարէք :

20 ՟Ո՛մարգարէութիւնս մի՛ արհամարհէք :
21 ՟Ո՛ամէնայն ինչ փորձեցէք, զբարին ընկալարուք :
22 Յամէնայն իրաց չարաց ՚ի բա՛ց կացէք :
23 Ե՛ւ ինքն ՟Ա՛ծ խաղաղութեան՝ սո՛ւրբս արասցէ զձեզ համօրէնս. և բովանդակ ձե՛ր ոգի, և շունչ, և մարմի՛ն՝ անարա՛տ ՚ի գալուստ Տեառն մերոյ Յի՛սուսի քրիստոսի :
24 Հաւատարի՛մ է՝ որ կո՛չեացն զձեզ, որ և արասցէ զնոյն :
25 Ե՛ղբարք՝ աղո՛թս արարէք և ՚ի մե՛ր վերայ :
26 Ողջո՛ւն տացէք եղբարց ամենեցուն ՚ի համբոյր սրբութեան:
27 Երդմնեցուցանեմ՛ զձեզ ՚ի Տէր, ընթերցանե՛լ զթուղթդ առաջի՛ամ եղբարց սրբոց :
28 Շնորհ՟ք Տեառն մերոյ Յի՛սուսի քրիստոսի ընդ ձեզ :

* Ա՛ռ Թեսաղոնիկեցիս առաջին թուղթ՝ գրեցաւ յաթենայ:

20 Մարգարէութի՛ւն որ ընեն, ան մի՛ քամահրէք :
21 Ա՛մէն բան փորձեցէք (նայեցէ՛ք, ու) ան որ բարի է՝ ընդունեցէք :
22 Ա՛մէն կերպ չար բանէ՛ւ հեռու կեցէ՛ք :
23 Ու ա՛լ ինքը խաղաղութի՛ւն տվող ա՛ծը՝ ձեզ ամէն բանով սո՛ւրբ ընէ. ու ձեր հոգին ու սունչը ու մարմինը՝ բոլորովին առանց պատի պահվի՛լ ինչվան որ գա՛յ մեր Յի՛սուս Քրիստոս:
24 Ինքը որ ձեզ կանչեց՝ հաւատարի՛մ է, ու ան է որ ասի՛ բանը (ձեզի) պիտի ընէ :
25 Ե՛ղբայրներ՝ մեզի համա՛ր աղո՛թք ըրէ՛ք :
26 Ողջո՛ւն տըվէ՛ք բոլոր եղբայրներուն՝ սո՛ւրբ համբո՛ւրով :
27 Տ՛իրոջ ձեզ կերդվեցնե՛մ, որ ասի թուխտը բոլոր սո՛ւրբ եղբայրներուն առնե՛լը կարդա՛ք :
28 Մեր տէ՛ր Յի՛սուս Քրիստոսի շնորհքը ձեր հետն (ըլլա՛) :

* Թեսաղոնիկեցոց առաջի թուխտը՝ աթենէն գրվեցաւ :

ԱՌ ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՍ

ԵՐԿՐՈՐԴ ԹՈՒՂԹ.

ԳԼ. Ա.

1 ՊԱՒՂՈՍ, և սիղուանոս և տիմոթէոս. եկեղեցւոյդ Թեսաղոնիկեցւոց՝ յԱ՛ծ Հա՛յր մեր, և ՚ի տէր Յի՛սուս :
2 Շնորհ՟ք ընդ ձեզ և խա-

1 ՊՕՂՈՍ, ու սիղվանոս, ու տիմոթէոս. Թեսաղոնիկեցոց եկեղեցիին՝ մեր Հօր աստուածմով՝ ու տէր Յի՛սուսով :
2 Շնորքը ձեր հետն (ըլլա՛) ու

զաղուէիւն յայ հօրէ մերմէ, և ՚ի մեղ քէն :

3 Գոհանալ պարտիմք զայ յամենայն ժամ վասն ձեր եղբարք՝ որպէս և արժան իսկ է. զի և աս քան զևս առնէն հաւատք ձեր, և յառաջէ սէր իւրաքանչիւրք ձեր ամենեցուն առ միմեանս :

4 Որպէս և մեք ձեզ պարծել յեկեղեցիսն այ՝ վասն համբերութեան ձերոյ և հաւատոց՝ յամենայն հալածանս ձեր և ՚ի նեղութիւնս, որս դուք համբերէք .

5 Ցօրինակ արդար դատաստանին այ, արժանի լինել ձեզ արքայութեանն այ, վասն որոյ և զհնութիւնդ կրէք :

6 Եթէ ղարտ է առաջի այ՝ հատուցանել նեղչացն ձերոց նեղութիւն .

7 Եւ ձեզ նեղելոցդ հանգիստ ընդ մեզ՝ ՚ի յայտնութեանն տն մերոյ յիւ, յերկնից հրեշտակօք զօրութեան իւրոյ .

8 ՚ի բոց հրոյ առնուլ զվրէժս յայնցանէ՝ ոյք ոչ ճանաչէն զայ, և որ ոչ հնազանդին աւետարանին տն մերոյ յիսի :

9 Որք տայցեն վրէժս ՚ի սատակումն յաւիտենից՝ յերեսաց տն՝ և ՚ի փառաց զօրութեան նորա .

10 Ցօրժամ գայցէ փառաւոր լինել ՚ի մէջ սրբոց իւրոց, և սքանչելի ՚ի մէջ ամենայն հաւատացելոց . զի հաստատիմ եղև վկայուին մեր ՚ի վերայ ձեր յաւուր յայնմիկ :

11 Ցոր և աղօթս առնեմք վասն ձեր յամենայն ժամ . զի խափաղութիւնը՝ սատուածմ մեր հօրմէն՝ ու տր յս քէնէն :

3 Ի՚խափաներ՝ պէտք է որ (մենք) միշտ այ գոհութիւն տանք ձեզի համար՝ ինտոր որ ան կրվայլէ ալ, որ ձեր հաւատքը՝ առաջ երթալով կաճի, ու ձեր ամենմիկուդ սէրը իրարու վրա եվէր նալու կետ է :

4 Այնպէս որ՝ մենքալ ձեզմով կրպարծենանք այ եկեղեցիներուն դիմացը՝ ձեր համբերութիւնին ու (հաստատ) հաւատուն համար, ան ձեր բոլոր հալածանքներուն ու նեղութիւններուն մէջ, որ դուք կրքաշէք .

5 (Որ ատ՝) այ արդար դատաստանին նշանն է, որ դուք արժանի էք այ արքայութեր, որ անոր համար ատանկ կրչարչարվիքկոր :

6 Որ այ առջև արդար իրաւունքէ՝ որ ատ ձեզ տանջողներնեբուն՝ տանջանք հատուցում ըլլա.

7 Ու ձեզի որ կրտանջվիք՝ մեր հետը միտեզ՝ հանգիստ, որ մերոյ յիսի՝ իր զօրք հրեշտակներով երկինքէն յայտնվելու ատենը .

8 Խորբոքած կրակով իր ոխը հանելու անոնցմէ՝ որ այ չեն ճանչնար, ու անոնք որ որ մերոյ յիսի աւետարանին հնազանդ չեն :

9 Որ ատոնք՝ որ երեսէն (քշուած), ու անոր փառաւոր զօրութենէն պատժվելով ապիտի (երթան) յաւիտեան սատկին .

10 Այն ատենները լինքնը կուգա իր սրբերուն մէջը փառաւորված, ու բոլոր երեն հաւատացողներով՝ մէջերնին հիանալի եղած . որ ան օրը մեր ձեր դիմացը ըրած վկայութենինաւ ըղրդ կելլա :

11 Այս պատճառովս ալ՝ ձեզի համար ամէն իւիր աղօթք կը-

զձեզ արժանիս արասցէ կոչմանն ձերում՝ ամէն, մինչև լցցէ զամենայն հաճութիւն բարութեան, և զգործս հաւատոյն զօրութեամբ :

12 Զի փառաւորեսցի անուն Տեառն մերոյ յիսուսի ի ձեզ, և դուք ի նմա, ըստ շնորհացն Աստուծոյ մերոյ՝ և Տեառն յիսուսի քրիստոսի :

ԳԼ. Բ.

1 Աղաչեմ զձեզ եղբարք, վասն գալստեան Տեառն մերոյ յիսուսի քրիստոսի՝ և մերոյ ժողովելոյն առ նա,

2 Զի վաղվաղակի խռովել ձեզ ի մտաց՝ և ի զարհուրել, ի հոգւով, և ի բանիւ, և ի թղթովք՝ իբրև թէ ի մէնջ. որպէս թէ եկեալ հասեալ իցէ օր տէն :

3 Զի ոք զձեզ խաբեսցէ՝ և ի ոչ իւիք իրօք. զի եթէ ոչ նախ եկեսցէ ապստամբութիւնն, և յայտնեսցի մարդն անօրէնութեան՝ որդին կորստեան,

4 Հակառակորդն՝ հպարտացեալ ի վերայ ամենայնի՝ որ անուանեալ իցէ Աստուած՝ կամ պաշտօն. մինչև նստել նմա ի տաճարին Աստուծոյ, և ցուցանել զանձն՝ թէ Աստուած իցէ :

5 Ոչ յիշեցէք զի մինչ առ ձեզն իսկ էի՝ ասէի զայս :

6 Եւ արդ զի՞ք ինքնին գիտէք զայն, որ ունին յայտնել նմա յիւրում ժամանակի :

7 Զի խորհուրդն անօրէնութեան արդէն իսկ զօրանայ. բայց յայժմ, մինչ ի միջոյ բարձցի որ այժմ ունի :

1 Աղաչեմ ձեզի եղբարըներ, (որ) անը մերոյ յիսուսի քրիստոսի վերայվը, ու մեր ալ անորքովը միասեղ ժողվըվելուն համար՝

2 Չըլլա թէ անանկ մէկէն մտքերնիդ պղտորվի, ու չը ահ՝ ըլլի, ան՝ ոչ հոգեշնչուը (եղած), ու ոչ խօսկով, ու ոչ թըղտերով, իբր թէ մեմէ (գրած). անանկ թէ՝ անը օրը ալ եկեր հասեր է :

3 Չըլլա որ (առանկ) բանեբով մէկը ձեզ խաբէ. պատճառն որ՝ (ան օրը չեզար՝) ինչվան որ առաջ ան ապըստամբութիւնը չի գա, ու ան անօրէն մարդը չի յայտնըվի՝ ան կորսըվելու որդին,

4 Ան (այ) հակառակը, որամէնուն վրա որ ած կըսվի՝ կամ կըպաշտըվի, ինքը գոռոզցած՝ (կերթա բուն) այ տաճարը կընստի, ու իր անձը անանկ կըցուցնէ թէ ինքը ած է :

5 Ան չէք մի յիշեր՝ որ (ես) բուն ձեր քով եղածատենս ասս բանըս կըսէի :

6 Ուստի դուքայ ան ինքիրենիդ զիտէք, որ անիկա իր ատենովը պիտոր յայտնըվի :

7 Ինչու որ՝ անօրէնութիւնի խորուրդը ալ աւժուիւալու վրաէ. միան թէ ան ատենն որ՝ ան որ հիմա բռներէ՝ միջէն վերցրվի:

8 Եւ ապա յայտնեսցի ան-
օրէնն · զոր ոճր յն սատակեսցէ
Հոգւով բերանոյ իւրոյ, և խա-
փանեսցէ յայտնութեամբ գա-
լըստեանն իւրոյ :

9 Որոյ գալուստն ըստ ազ-
դեցութեան սատանայի է, ա-
մենայն զօրութեամբ և նշա-
նօք և արուեստիւք սուտք,

10 Եւ ամենայն պատրանօք
անիրաւութեան՝ ի վերայ կո-
րուսելոցն · փոխանակ զի ըզ-
սէրն ճշմարտութեան ոչ ըն-
կալան՝ զի ապրեսցին :

11 Եւ վասն այնորիկ առա-
քեսցէ նոցա ած ազդեցութիւն
մոլորութեան՝ հաւատալ նոցա
սուտին :

12 Զի դատապարտեսցին
ամենեքեան որ ոչ հաւատա-
ցին ճշմարտութեանն, այլ հա-
ճեցան ընդ անօրէնութիւնն :

13 Այլ մեք պարտիմք գո-
հանալ զձեզ յամենայն ժամ՝
վասն ձեր եղբարք սիրեցեալք
ի Տեառնէ · զի ընտրեաց զձեզ
ած խոկզբանէ ի փրկութիւն՝
սրբութեամբ Հոգւոյն, և հա-
ւատովքն ճշմարտութեան :

14 Յոր և կոչեաց զձեզ ա-
ւետարանաւն մերով՝ ի փրը-
կութիւն փառացն Տեառն մերոյ
յն քրիստ :

15 Ապա ուրեմն եղբարք՝
հաստատուն կացէք՝ և պինդ
կալարուք զաւանդութիւնն՝
զոր ուսարուք, եթէ բանիւ՝ և
եթէ թղթով մերով :

16 Այլ ինքն տէր մեր յն
քս, և ած հայր մեր, որ սի-
րեացն զմեզ՝ և ետ մեզ միւ-
թարութիւն յաւիտենից և յոյս
բարեաց շնորհօք,

17 Մխիթարեսցէ զսիրտս

8 Եւ ոտիք՝ ալ ան անօրէնը կը-
յայտնըվի . որ անիկա՝ տր յսը
իր բերնէն (ելած) հոգիովը պիտի
սատկեցընէ, ու իր գալով յայտ-
նըվելովը ան փճացունէ :

9 Որ ան (անօրէնին) գալն ալ
սատանային ուժէն է, (իր) բոլոր
զօրութիւններովն ու նշաններովը, ու
ըրած սուտ հրաշքներովը .

10 Ու բոլոր խաբեբայութիւն-
ներով՝ կորուսեալները անիրաւ
ընելու . անոր համար որ՝ իրենք
ճշմարտութիւնը սիրով չընդունե-
ցան՝ որ փրկըվին :

11 Ու ալ ան պատճառէն է՝
որ ած իրենց մոլորութիւնի ուժը
կըխրկէ՝ որ իրենք սուտին
բաներու հաւատան :

12 Որ ան ամէնքը՝ որ ճշմար-
տութիւնի չէ հաւատացին՝ հապա
անօրէնութիւն ախորժեցան, եր-
թան դատապարտըվին :

13 Ուստի ՚ներ սիրելի եղ-
պարներ՝ պէտք է որ մենք ամէն
իւիր այ գոհանանք ձեզի համար .
որ ըսկիսպէն հետ ած մեզ ընտ-
րեց, որ հոգին (մեզ) մաքրելով՝
ու ճշմարտութիւնի հաւատք բե-
րելով՝ փրկէ :

14 Որ՝ որ մեր աւետարան
քարոզելովը ձեզ կանչեց ՚ներ մե-
րոյ յսի քրիստ փառաւոր փրկու-
նին :

15 Ուրանակ հինէ եղպարներ՝
ալ հաստատ կեցէք, ու ամուր
բռնեցէք ան ընելու բաներն որ
սորվեցաք՝ թէ խօսկով, ու թէ՝
մեր թխտովը :

16 Այլ ինքը տրն մեր յս քս,
ու մեր ած հայրը՝ որ մեզ սիրեց,
ու մեզի յաւիտենական մխիթա-
րութիւն տրվաւ, ու շնորհքով (ե-
ղած՝) բարիքներու յոյս,

17 (Ինքը) ձեր սիրտը մխի-

ձեր, և հաստատեսցէ յամենայն բանս և ՚ի գործս բարու-
թեան :

թարէ, ու ամէն բարի ուսմունքի ու գործքերու մէջ հաստատ պահէ :

Գ Լ· Դ·

1 Ապա եւս եղբարք՝ աղօթս արարէք ՚ի վերայ մեր, զի բանն Տն ընթանայցէ· և փառաւոր լինիցի յամենայն տեղիս՝ որպէս և առ ձեզ :

2 Ու ապերախտ ու անօրէն մարդոց . զի ոչ ամենեցուն են հաւատք :

3 Այլ հաւատարիմ է Տէր, որ և հաստատեսցէ զձեզ , և պահեսցէ ՚ի չարէն անտի :

4 Վստահ եմք ՚ի ձեզ տէրամբ , թէ զոր պատուիրեցաքն ձեզ , և առնէք՝ և առնիցէք :

5 Այլ Տէր ուղղեսցէ զսիրտս ձեր ՚ի սէրն Յ՝ և ՚ի համբերութիւնն Քի :

6 Պատուիրեմ ձեզ ես եղբարք՝ յանուն Տն մերոյ Յի Քի , խորշել ձեզ յամենայն եղբօրէ՝ որ առանդուեսցի զոր ընկալարուք ՚ի մէնջ :

7 Ու ինքնին գիտէք՝ թէ որպէս պարտ է ձեզ նմանել մեզ· զի ոչ երբէք ստահակեցաք առ ձեզ ·

8 Եւ ոչ ձրի զուրուք հաց կերաք · այլ ջանիւ և վաստակով գիշերգ և գիտերեկ գործեաք՝ վասն չծանրանալոյ ումէք ՚ի ձէնջ :

9 Ոչ եթէ չունեաք իշխանութիւն . այլ զի զանձինս օ-

1 Ամէն եակը՝ ինչպարներ՝ մեր վրա աղօթք ըրէք, որ այ խօսքը առաջ երթա · ու ամէն տեղ փառաւոր ըլլա , ա-նանկ՝ ինչպէս որ ձեր մէջն է :

2 Որ անօրէն ու անբոգամ մարդոց ձեռքէն խալըսինք· ինչու որ՝ ամէնքը հաւատք չունին :

3 Բայց տէրը (իր խօսկին) հաւատարիմ է՝ որ ինքը ձեզի հաստատ բռնէ՝ ու ան չարէն պահէ :

4 Ձեր վրա՝ տէրով ապահով ենք , որ՝ ան (բաներն) որ ձեզի ապրսպրեցինք՝ անանկ կընէք , ու պիտի ընէք ալ :

5 Ան տէրը՝ ձեր սիրտը շրջակ ղէպի այ սէրը, ու քրիս (չամար) համբերութիւնը :

6 Ինչպարներ՝ ձեզի կրպատուիրեմ յի քրիս անունովը ձեզի կրպատուիրեմ , որ ետ քաշվիք ան բոլոր ինչպարներէն , որ խեռութիւնով կերթան, ու չեն նայիր ան խրատը որ մեզմէն սուիք

7 Որ ան՝ դուքալ ինքիրենիզ գիտէք՝ թէ ձեզի ինտոր պէտք է մեզի նման ըլլալը. որ ձեզի չետ ինկի խեռութիւնովմը չվարվեցանք ·

8 Ու ոչ ալ մկուն հացը ձրի կերանք · հապա՝ ջանքով ու աշխատանքով գիշեր ու ցորեկ կրգործէինք՝ որ ձեր մէկերնուզ ծանտրութիւն չիտանք :

9 Ձէ թէ՝ որ (ան ընելու) իրաւունք չունէինք , հապա որ ան-

ընկակ արասցուք ձեզ նմա- նաղ լինել մեզ :

10 Ֆանզի մինչ առ ձեզն իսկ էաք՝ զայս պատուիրեաք ձեզ, թէ որ ոչն կամիցի գոր- ծել՝ և կերիցէ մի :

11 Այդ՝ լսեմք զոմանց ՚ի ձէնջ՝ թէ ատահակութեամբ գնան. գործ ինչ ոչ գործեն, այլ յուլացեալք հետաքրքիրք շրջին :

12 Այնպիսեացն պատուէր տամք՝ և աղաչեմք ՚ի տէր յն քս, զի հանդարտութեամբ գործեսցեն՝ և զիւրեանց հաց կերիցեն :

13 Այլ դուք եղբարք՝ մի ձանձրանայք զբարիս գործել :

14 Այպա եթէ ոչ ոք հնա- զանդեսցի բանիս մերում թղթ- թովղ այդուիկ, դուք նշանա- կեսջիք զնա. և մի խառնա- կեսջիք ընդ նմա, զի պատակա- ռեսցէ :

15 Բայց մի իբրև զթշնամի համարեսջիք, այլ խրատես- ջիք իբրև եղբայր :

16 Եւ ինքն տէր խաղաղու- թեան, տացէ ձեզ խաղաղու- թիւն յամենայն ժամ յամենայն իրս : տէր ընդ ամենեսին ընդ ձեզ :

17 Ողջոյնս՝ իմոյ ձեռն պաւղոսի է, որ է նշանակ յա- մենայն թուղթս այսպէս գրեմ :

18 Շնորհք տեառն մերոյ յն քի՝ ընդ ամենեսին ձեզ :

* Այս Թեսաղոնիկեցիս երկ- րորդ՝ գրեցաւ յաթենայ :

ձերնիս ձեզի օրինակ տանք, որ մեզի նման ըլլաք :

10 Որ՝ ձեր քովն ալ եղած ատեննիս աս ձեզի կըզըւացեկինք, թէ ան որ բանիլ չուզեր· (ա- նիկա պէտկ է որ բան) չուտէ ալ :

11 Բայց ձեզմէ մէկ քանիին վրա կըլսեմ որ խեռւթինով կերթան· բանմը չեն բանիր, հապա՝ ծուռ հետաքրքիր եղած կըպտրտին :

12 Անանկներուն կըպատուի- րենք՝ ու կաղաչենք տէր յն քովով, որ հանդարտ նստին՝ բանին, ու իրենց (վաստրկած) հացը ուտեն:

13 Այլ դուք ելխպարներ՝ չէ թուլնաք բարեգործութիւն ը- նելէն :

14 Հապա թէ որ մէկը չհնա- զանդի աս մեր թխտովը գրած բանիս, դուք անիկա նշանեցէք, ու իր հետը հաղորդակցութիւն մի ընէք, որ երթա ամչնայ :

15 Մրիան թէ (ինքը) թշնամու պէս ալ մի սեպէք, հապա՝ ել- պօրպէս անոր խրատ տըվէք :

16 Ու ալ ինքը խաղաղու- թեան տէրը՝ ձեզի խաղաղութիւն տա ամէն ատեն, ամէն բանի մէջ : Տէրը ձեր բոլորիդ հետը (ըլլա) :

17 Այս սխտունըս իմ պօղոսիս ձեռքինն է· որ (իմ) ամէն թխտերուս նշանն է՝ (որ) ասանկ կըգրեմ :

18 Տէրը մերոյ յն քի շնորքը՝ ձեր ամէնուդ հետը (ըլլա) :

* Թեսաղոնիկեցոց երկրորդ թու- խտը՝ աթենքէն գրվեցաւ :

ՍՈՒ ԵՒՍՏՅԵՑԻՍ

Թ Ո Ւ Ղ Թ.

ԳԼ. Ա.

1 ԲԱՑՕՒՒՄ մասամբք, և բաղում օրինակօք կանխաւ խօսեցաւ ՅԾ ընդ Հարսն մեր մարգարէիւք :

2 Ի վախճան աւուրցս այսոցիկ՝ խօսեցաւ ընդ մեզ որդւովն, զոր եդ ժառանգ ամենայնի . որով և զյաւիտեանսն արար :

3 Որ է լոյս փառաց՝ և նըկարագիր էութեան նորա . որ կրէ զամենայն բանիւ զօրութեան իւրոյ . սրբութիւն մեզ մերոց արարեալ , նստաւ ընդ աջմէ մեծութեանն ի բարձունս ,

4 Այնչափ առաւել եղեալ քան զԱրեշտակս , որչափ լաւ ևս քան զնոսա անուն ժառանգեաց :

5 Զանգի ո՞ երբէք ասաց ի Հրեշտակաց . որդի իմ ես դու , ես այսօր ծնայ զքեզ : և դարձեալ՝ Թէ ես եղէց նմա ի Հայր , և Նա եղիցի ինձ յորդի :

6 Այլ յորժամ միւսանգամ մուծցէ զանդրանիկն յաշխարհ, ասէ . երկիր պագցեն նմա ամենայն հրեշտակք ՅՀ :

7 Այլ առ հրեշտակսն ասէ .

1 Ազաջուցմէ ՅԾ շատ կերպերով ու շատ օրինակներով մարգարէից բերնովը մեր հարերնուս հետ խօսեցաւ :

2 Այս վերջի օրերսալ իր որդուն բերնովը մեր հետը խօսեցաւ . որ անիկա՝ ամմէն բանի ժառանգ դրաւ . որ անոր ձեռքով (աշխարքի) դարերնալ ըրաւ :

3 Որ ինքը փառաց Հառատայթ ըլլալով , ու ՅՀ էութինէն գծագրութինը , որ իր զօրեղ խօսկովը ամմէն բան կըդառնայ . անիկա մեր մեղքերնալ սրբըելէն մաքրելէն ետև , (գնաց) հոն վերը (ՅՀ) մեծութինէն աջդին նստաւ :

4 (Ինքը) հրեշտակներէն ալ առնանկ էվէլն վեր եղաւ՝ որ անոնց ամէն ալ էվէլօք փառաւոր անուն իրեն առաւ :

5 Ինչու որ , հրեշտակներէն՝ ո՞րուն եղաւ որ (ՅԾ) ըսէ . դուն իմ որդիս ես , ես քեզ ասօր ծնա : ու միյմալ՝ Թէ ես անոր Հայր պիտի ըլլամ , ու ան ինձի որդի ըլ լա :

6 Ու միյմալ , երբոր (ՅԾ՝ իր) առջինեկորդին աշխարք մըտցունելու կըլլա կըսէ . բոլոր ՅՀ հրեշտակները թող անոր երկրըպագութին ընեն :

7 Իսկ հրեշտակներու վըսյա-

ւ արար զՀրեշտակս իւր հո_ղիս, և զպաշտօնեայս իւր բոց հրոյ :

8 Իսկ ցորդին ասէ. աթո՛ռ քո ած յաւիտեանս յաւիտե_նից . գաւազան ուղղութեան գաւազան արքայութեան քոյ :

9 Սիրեցեր զարդարութիւն, ևատեցեր զանօրէնութիւն . վասն այսորիկ օծ զքեզ Ած՝ Ած քո իւղով ուրախութեան՝ ա_ռաւել քան զընկերս քո :

10 Եւ դու տէր՝ իսկզբանէ զերկիր հաստատեցեր, և գործք ձեռաց քոց երկինք են :

11 Նոքա կորնչին՝ և դու կաս և ամենեքեան իբ_րև զհանդաս մաշեսցին ,

12 Իբրև զվերակու . զա_լարեսցես զնոսա իբրև զՀան_ղերձ, և զալարեսցին . բայց դու նոյն իսկ ես՝ և ամք քո ոչ պակասեսցեն :

13 Ցո՞ երբէք ասաց ՚ի հրեշ_տակաց . նիստ բնդ աջմէ իմմէ, մինչև եղից զթշամիս քո պա_տառանդան ոտից քոց :

14 Ո՞չ ապաքէն ամենեքեան հոգիք են հարկաւորք, որ ա_ռաքին ՚ի սպասաւորութիւն վասն այնոցիկ՝ որ ժառանգե_լոցն են զփրկութիւն :

վը՝ կըսէ (գիրքը՝) որ ինքը՝ հրեշ_տակներր հոգիէն ըրաւ, ու պաշ_տօնեաներր՝ կրակի բոց :

8 Ու որդուն վրայով կըսէ . ա՛ծ՝ քու աթոռդ յաւիտեանս յաւիտենից (կը դիմանա) . քու թագաւորութեանդ գաւազանը՝ արդար գաւազան (է) :

9 Արդարութինը սիրեցիր՝ ու անիրաւութինըատեցիր , անոր համար ալ ած՝ քու ածդդ ու_րախութինի եղով քեզ օծեց՝ քու (նման) ընկերներէդդ քեզ վեր դընելով :

10 Ու, դուն ած՝ որ՝ բակիսդր երկիրը ստեղծեցիր, ու երկինքն_ալ քու ձեռացդ գործքն է :

11 Անոնք կրնորսըվին՝ ու դուն կրնինաս ու կրմնաս . ամմինքը լաթիպէս (հինցած) կրմաշին ,

12 Վերարկուիմր պէս . իրենք հաղնելու լաթիմր պէս պիտի պըդըրես՝ ու պղորվին. ու դուն միշտ ան ես , ու քու (միալու) տարի_ներդդ պիտի չի պակսին :

13 Հրեշտակներէն իսկի ո՞ր մէ_կին եղաւ որ ըսէ . իմ աջ դին նստէ, մինչև որ քու թշնամինե_րըդ քու ոտացդդ կոխելիք դընեմ:

14 Անոնք ամմինքը ծառայող հոգիներ չեն մի՞ որ կրխրկրկրվին անոնց ծառայութեան համար՝ որ պիտի փրկութին ժառանգեն :

Գ.Լ. Ֆ.

1 Վասն այսորիկ պարտ է մեզ առաւել ևս ունկ_կընդիր լինել բանիցն ասացե_ղոց, զի մի երբէք նուազես_ցուք :

2 .Օ լի եթէ որ ՚ի ձեռն հրե_շտակաց խօսեցաւ բանն ,

1 Անոր համար՝ պէտք է որ մենք ալ էվէյլն անկած դնենք ան բսած բաներուն, որ չըլլա թէ (ջրթիպէս) թափած պակ_սինք :

2 Պատճառ՝ թէ որ կատար_վեցաւ ան բանն որ հրեշտակաց

հաստատուն եղև, և ամենայն յանդգնաւորութիւն և անհնազանդութիւն ընկալաւ զպատիժ պատուհասի .

3 Մեք՝ զի՞րդ ապրեսցուք հեղգացեալք յայսպիսի փրկութենէ, որ սկիզբն առ խօսել ի՝ն՛ից, և ի՝ձեռն այնոցիկ որ լուա՛ն՝ ի՛մզ հաստատեցաւ .

4 Վկայեալ յա՛յ նշանօք և արուեստիւք, և պէսպէս զօրութեամ՛բք, և մասամ՛բք հոգւոյն սո՛ր՝ ըստ իւրո՛ց կամաց :

5 .Օ՛ի ո՛չ ետի՛ հրեշտակաց հնազանդեցոյց զՀանդերձեալ աշխարհն, վասն որոյ և մե՛ք խօսիմ՛ք :

6 Վկայեա՛ց ոք ուրե՛ք՝ և ա՛սէ. զի՞նչ է մարդ՝ եթէ յիշեսցես զնա, կամ որդի մարդոյ՝ թէ այց արասցես նմա՛ :

7 Փո՛քր մի խնդի՛րչ արարեր զնա քան զՀրեշտակս . փառա՛ք և պատուո՛վ պսակեցեր զնա, և կացուցեր զնա ի՝ վերայ ձեռակերտաց քոց .

8 .Օ՛ամենայն ի՛նչ հնազանդ արարեր ի՝ ներքոյ ոտից նորա : արդ՝ ի՝ հնազանդեցուցանելն զամենայն, ո՛չինչ եթող անհնազանդ ի՝ նմանէ . բայց այժմ ո՛չ ևս տեսանեմ՛ք հնազանդեալ նմա զամենայն :

9 Այլ զկնի՛ք մի խոնարհեալ քան զՀրեշտակս՝ տեսանեմ՛ք զյի՝ վասն չարչարանաց մահուն, փառա՛ք և պատուո՛վ պսակեալ . զի շնորհո՛քն ա՛յ վասն ամենեցուն զմահ ճաշակեցի՛ :

10 .Օ՛ի վայել ե՛ր իսկ նմա, վասն որոյ ամենայն՝ և որով բերնո՛վք խօսվեցաւ . անանկ որ՝ ալ բոլոր մեղաւորութիւնները ու անհնազանդութիւնները (իրենց) պատի՛ժ պատուհասնին առի՛ն :

3 (Հապա) մենք ի՞նտոր ալիտի խալըսինք, թէ որ անհոգ ըլլանք անանկ (մեծ) փրկութենէն . որ ան՝ բակիսպը՝ սրբը քարոզեց, ու անկէ լսողներուն ձեռքովը (բանը) մեր մէջ հաստատվեցաւ :

4 (Ան որ՝) ա՛ծ ալ վկայեց նշաններով ու հրաշքներով, ու կերպ կերպ զօրութիւններով, ու հոգուն սըրց բաժնած (պարգևներո՛վ ը՛) ինտոր որ ինքը կամեցաւ :

5 Պատճառն որ՝ չէ թէ հրեշտակներո՛ւ ներքև ձգեց ան գալու աշխարքն՝ որ մենք անոր վրա կը խօսինք՛կոր :

6 Մեկը մէկ տեղմը վկայեց՝ ու ըսաց . մարդը ի՞նչ է՝ որ դուն անկա յիշես, կամ մարդու որդին՝ որ (դուն) անոր տես երթաս :

7 Անկա՝ հրեշտակներէն քիչ մը ալ վար ըրիր, փառքով ու պատիվով անոր թագ դրիր, ու ինքը՝ քու ձեռքովդ շինվածներուն վրա կեցուցիր .

8 Ամէն բան անոր ստաց ներքև՛ը հնազանդ ըրիր : ուստի (ա՛ծ) ամէնքն որ հնազանդեցուց՝ ալ անոր չէ հնազանդած բանմը դուրս չէ թողուց . միանգա՛մ տեսնե՛նք հնազանդած չենք տեսներ կոր ամէնքը անոր հնազանդած :

9 Որ միան՝ յի՛ր կրտեսնենք հրեշտակներէն քիչվա՛ր եղած՝ (իր) չարչարանքո՛վ մեռնելուն պատճառովը, ինքը՝ փառքո՛վ ու պատիվով թագ դրած . որ այ հնորքովը՝ ամէնուն համար մեռնելուն համը առնէ :

10 Պատճառը, (այ՝) ան որ ամէնքը իրեն համար (են՝) ու ամ-

ամենայն, բազում որդիս ՚ի փառս ածել, և զառաջնորդ փրկութեան նոցա՝ չարչարանօք կատարել :

11 .Օ.ի որ սրբէն և որ սրբեալքն, ՚ի միոջէ էին ամենեքեան, վասն որոյ ոչ ամաչէ նոսա, և ասել :

12 Պատմեցից զանուն քո եղբարց իմոց, և ՚ի միջ եկեղեցւոյ օրհնեցից զքեզ :

13 Եւ դարձեալ՝ թէ ես եւ զեղ յուսացեալ ՚ի նա : և դարձեալ՝ ահաւասիկ ես եւ մանկունք իմ զոր ետ ինձ Աստ :

14 Այլ՝ որովհետեւ մանկունք հաղորդեցին արեան և մարմնոյ, և ինքն իսկ մերձաւորութեամբ կցորդ եղև նոցունց · զի մահուն իւրով խափանեսցէ զայն որ զիշխանութիւն մահուն ունէր, այս ինքն է՝ զսատանայ .

15 Եւ ապրեցուսցէ զայնոսիկ որ մահուն երկիւղիւ համանապազ կէին վտարանդեալք՝ ՚ի ծառայութիւն :

16 Քանզի ոչ երբէք զՏրեշ տակաց բռնն հարկանէ, այլ զզաւակին աբրահամու բռնն հարկանէ :

17 Ուստի պարտ իսկ էր նմա ամենայնիւ եղբարց նմանել · զի ողորմած լինիցի, և հաւատարիմ քահանայապետ յԱծականց կողմանէ անտի, առ ՚ի քաւել զմեղս ժողովրդեանն :

18 .Օ.ի որով ինքն չարչարեցաւ՝ պիտոյ առաքել, կարող է և փորձանաւորացն օգնական լինել :

մինքը անով (եղած), կրվայլը որ շատ որդիք փառաւորէ, ուստի նոցա փրկութիւն ընդունել չարչարանքներով կատարէ :

11 Ինչու որ՝ ան որ կրսրբացընէ, ու անոնք որ կրսրբանան՝ բոլորնին ան միկէն էին · անոր համար ամօթ չիսեպեր՝ անոնց եղբայր անուն տալու, ու ըսելու.

12 Քու անունըդ իմ եղբայրներուս պիտի զրուցեմ, ու ժողովքի մէջ քեզ գովեմ :

13 Ու միւսմալ, թէ՝ իմ յոյս իր վրա պիտի դնեմ : ու միւսմալ. թէ՝ Հոսա ես՝ ու իմ տղաքը՝ անոնք որ Աստ ինծի տըվաւ :

14 Ուստի ալ տղաքն որ արուներն ու մարմնուն հաղորդ որ եղան, ինքնալ մօտաւոր եղած անոնց հետ կըցվեցաւ · որ անանկ իր մեռնելովը փճացընէ անիկա՝ որ մահու վրա իշխան կեցեր է, որ ան՝ սատանան է :

15 Ու խալըսէ անոնք՝ որ մահէն վախնալով՝ միշտ ծառայութիւնի մէջ բռնըված կեցեր էին :

16 Պատճառն որ՝ (ինքը) խոկի հրեշտակներուն ձեռքը չերկընցուներ, հապա՝ աբրահամի զաւկին ձեռքը կերկընցուներ (իրեն առնելու) :

17 Ուստի ալ ասկէ էր որ ինքը բոլորովին եղբայրներուն նման ըլլա · որ ողորմած՝ ու հաւատարիմ քահանայապետ ըլլա ան այ համար բաներուն, որ ժողովրդին մեղքերը քաւէ :

18 Անանկ, իր չարչարվելովը՝ ան բանին փորձը առած, կարող է փորձանքի մէջ եղողներուն ալ օգնութիւն հասնիլ :

ԳԼ· Գ·

1 Ուստի եղբարք սուրբք՝ երկնաւոր կոչմանն բաժանորդք, նայեցարուք ընդ առաքեալն և ընդ քահանայապետ խոստովանութեան մերոյ ընդ յԻ քՒ:

2 Որ հաւատարիմ է արարչին իւրոյ, որպէս և Մովսէս յամենայն տան նորա:

3 Զի առաւել ևս փառաց քան զմովսէս արժանի եղեւ. որչափ առաւել պատիւ ունի քան զտունն՝ տանն առնէլն:

4 Զի ամենայն տուն կազմի յումէ կազմի. իսկ որ զամենայնն արար, ՅԱ է:

5 Մովսէս՝ հաւատարիմ է յամենայն տան նորա՝ իբրև զծառայ, առ ի վկայութենէ բանից ասացելոց:

6 ԱյլՀ քՒ իբրև որդի ի վերայ տան իւրոյ. որոյ տունն՝ մեք իսկ եմք. միայն թէ զհամարձակութիւն և զպարծանս յուսոյն՝ մինչև ի վախճան հաստատուն ունիցիմք:

7 Վասն որոյ այսպէս ասէ հոգին ՍՒ. այսօր եթէ ձայնի նորա լուիցէք,

8 Մի խստացուցանէք զսիրտս ձեր, իբրև ի դառնութեան՝ յաւուրն փորձութեան յանապատի:

9 Ուր փորձեցին զիս հարքն ձեր. քննեցին զիս՝ և տեսին զգործս իմ քառասուն ամ:

10 Վասն որոյ տաղտկացայ

1 Սնանկէնէ սուրբ եղբարքն՝ որ երկնային կոչմանն մասն ու բաժին ունիք, նայեցէք յիւ քՒ, որ մեր գառնացած հաւատուն առաքեալն ու քահանայապետն է:

2 Որ ան բանին վրա ինքը ղՏնողին հաւատարիմ է, ինչպէս որ Մովսէսը՝ անոր բոլոր տանը (էր):

3 Որ (ասիկա) մովսէսէն աւ էվէլի փառքի արժանի եղաւ. ինչպէս որ մէկ տունմը շինողը աւ էվէլի պատուաւոր է՝ քան թէ ան (շինած) տունը:

4 Ինչու որ՝ բոլոր ինչ տուն որ կըշինվի՝ մէկէմը շինված կըլա. ու ան որ ամէն բաները ըրեր շիներ է՝ ՅԱ է:

5 Մովսէսը հաւատարիմ եղաւ անոր բոլոր տանը՝ մէկ ծառայի պէս, վկա կենալով (այ) ըսաց խօսկերուն:

6 Ինայց քՒ՝ որդիմը պէս իրեն տանը վրան (կեցաւ). որ անոր տունը բուն մենք ենք. միան թէ՝ ան վստահութինը՝ ու յոյսը որ անով կրպարծենանք՝ ինչվան վերջը հաստատ բռնենք:

7 Անոր համար հոգին ՍՐԲ ասանկ կըսէ. աս օրս թէ որ անոր ձանը լսելու ըլլաք,

8 Սրտերնիդ մի պնտացընէք, ինչպէս որ անանկի (առենով) անապատին մէջ փորձութինին օրը ինք սրբզողցուցին:

9 Որ հոն ձեր հարերնիդ ինք փորձել (ուզեցին). ինք քննեցին, ու քառասուն տարի (առեն) իմ ըրած բաներըս տեսան:

10 Անոր համար՝ աւ ան ատ-

ազգ՚ն այնուիկ , և ասացի · միշտ մոլորեա՛լ են սրտիւք , և նոքա ո՛չ ծանեան զճանապարհս իմ :

11 Որպէս երդուայ ՚ի բարկութեան իմում՝ թէ մտցեն ՚ի հանգիստ իմ:

12 Տեսէք եղբարք՝ գուցէ երբէք լինիցի յումեք ՚ի ձէնջ սիրտ չար անհաւատութեան՝ ապստամբ լինել յոյ կենդանւոյ :

13 Այլ մխիթարիցէք զմիմեանս զօրհնանապաղ՝ մինչդեռ այսօրդ առաջի կայ · զի մի ոք խստասցի ՚ի ձէնջ՝ խաբէութեամբ մեղաց :

14 Քանզի բաժանորդք ե՛ղեաք քո՛ի . միայն թէ՝ զսկիզբն հաստատութեանն մինչև ՚ի վախճան պինդ կալցուք ,

15 Ցասելն , այսօր եթէ ձայնի նորա լուիցէք՝ մի խստացուցանէք զսիրտս ձեր իբրև ՚ի դառնութեանն :

16 Քանզի ոմանք լուան՝ և դառնացուցին , այլ ո՛չ ամենեքեան որ եկեալ էին յեգիպտոսէ ՚ի ձեռն Մովսիսի :

17 Յումէ՞ տաղտկացաւ բարկացաւն ամն . ո՞չ ապաքէն յանցուցելոցն , որոց ոսկերքն անկան յանապատի անդ :

18 Ո՞ւմ երդուաւ չմտանել ՚ի հանգիստն իւր , եթէ ոչ անհաւատիցն :

19 Եւ տեսանեմք , զի ո՛չ կարացին մտանել՝ վասն անհաւատութեան :

զէն զբզվեցա՝ ու ըսի · (ասոնք) ամէնն իւիր սրտովին մոլորած են , ու իմ (ըրցուցած) ճամբաս իրենք չեն ճանչցան :

11 Ինչպէս որ երդում ըրի իմ սրդողելուս առեն . թէ (սպասեն որ իրենք ալ) մտնան իմ տրված հանգըստանալու (տեղս):

12 Կ՚այեցէ՛ք եխպարներ, չըլլա որ ձեզմէ մէկը իր նեբսիովին չար անհաւատ սիրտ ունենա՝ որ կ՚ելլա քաշե կենդանի աստուծմէն:

13 Հապա ամէն իւիր մէկըմէկ յորդորեցէ՛ք՝ քանիոր աս (բսած) օրըս առ՚ջևնիդ կեցեր է · որ չըլլա թէ ձեզմէ մէկը՝ մեղքով խաբված՝ (սիրտը) պնտացընէ :

14 Պատճառն որ՝ քո՛ի հետ մասնակից եղանք · միան թէ մանակից (ադիկ) հաստատ բանն որ բռնկըսանք , ինչվան եակը ամուր բռնենք ,

15 Քանի որ կըսէ թէ՝ աս օրըս անոր ձանը լսելու որ բլլաք՝ սրբտերնիդ մի պրնտացընէ՛ք՝ ինչպէս որ եղաւ ան իր սրբդողելուն առեն :

16 Որ՝ (անոնցմէն) ոմանք լսեցին՝ ու սրբդողցուցին · բայց չէ որ ամէնքը որ մովսէսին ձեռքովը եգիպտոսէն ելեր էին :

17 Ասկից (աե) զբզվեցաւ անքառասուն տարիին մէջ : ան մեղք գործողներէն չէ՞ մի , որ (մեռած) իրենց ոսկրըտանքը ան անապատին մէջ ինկաւ :

18 Որուն դէմ երդվընցաւ որ իրեն չանդրտանալու տեղը չի մտնա. ան անհաւատներուն չէ՞ մի:

19 Ու ալ կրտեսնենք որ՝ ան իրենց անհաւատութինին պատճառովը չէ կրցան (հոն) մտնել :

ԳԼ· Դ·

1 Երկիցուք այսուհետեւ, զուցէ ’ի մոռանալոյ ’ի հանգիստ նորա, գտանիցի ոք ’ի ձէնջ նուաղեալ :

2 Քանզի եմք աւետարարեալքն՝ որպէս եւ նոքայն . այլ նոցա ոչ էինչ օգնեաց լուր բանին՝ չհամաբերելոցն ’ի հնազանդութիւն հաւատոյ :

3 Այլ մեք մտանեմք ’ի հանգիստ, որք հաւատացաքս՝ որպէս եւ ասացն , թէ որպէս երդուայ ’ի բարկութեան իմում, թէ մտցեն ’ի հանգիստ իմ. թէպէտ եւ արդիւնքն իսկզբանէ աշխարհի լեալ էին :

4 Քանզի ասէ ուրեք վասն աւուրն եւթներորդի այսպէս . եւ հանգեաւ ած յաւուրն եւթներորդի յամենայն գործոց իւրոց :

5 Եւ աստ՝ դարձեալ ասէ՝ թէ մտցեն ’ի հանգիստ իմ՝ :

6 Եւ արդ՝ քանզի արգելեալ ոմանք մտանել ’ի նա, եւ որք յառաջագոյն աւետարանեալքն էին՝ չմտին վասն անհաւանութեան :

7 Դարձեալ՝ այլ օր սահմանէ՝ գայսօրն ’ի դաւիթ, եւ ասէ՝ յետ այնչափ ժամանակաց՝ որպէս յառաջագոյն ասացաւ . այսօր եթէ ձայնի նորա լուիցէք՝ մի խստացուցանէք զսիրտս ձեր :

8 .Օ ի եթէ զնոսա յետովայ հանգուցեալ էր, ապա վասն այլոյ աւուր ոչ խօսէր յետ այնորիկ :

1 Սնանկ է նէ՝ ալ վախնանք, որ չըլլայ թէ ձեզմէ մէկը բանի չի սեպելով ան (այ) աւետմունքը՝ իր հանգստանալու տեղը մտնելու, անկեց զրկըվի :

2 Պատճառն որ՝ մեզմէ ա_նանկ աւետիս տըրվեցաւ՝ ինծոր որ անոնց . բայց իրենց շահմը չըրաւ ան բանը լսելը՝ որ հաւատքի հնազանդելու չկակուղցան :

3 Բայց մենք որ հաւատացինք՝ ան հանգիստը կըմտնենք, ինծոր որ ըսաց՝ թէ ինչպէս որ իմ սրդողելուս ատենը երդում ըրի թէ որ իմ հանգիստս մտնեն : աս՝ իրաւ է որ՝ բուն անանկ (ան բանը՝) աշխըրքին ստեղծումին ատենը եղաւ :

4 Ինչու որ՝ (գիրքը) մէկ տեղմը՝ ոխտներորդ օրվան համար աանկ կըսէ . ու ոխտներորդ օրը ած իր ամմէն ըրած գործքերէն հանգիստ առաւ :

5 Ու հոս նորէն կըսէ որ՝ թէ որ իմ հանգիստս մտնեն :

6 Ուսոի ալ՝ որ ոմանք ուշացան հոն մտնելը, ու անոնք որ առաջուց աւետմունք առերէն՝ անհաւատութեան համար չըմտան :

7 Նորէն՝ ան ասօրը (ըսածը, ած) ուրիշ օրվան կրկարգաւորէ, ու շատ ատենները ետեւ՝ դաւիթի բերնով կըսէ՝ ինծոր որ աառաջ ըսաց . աս օրս որ անոր ձայնը լսելու ըլլաք՝ սըրտերնիդ մի պընծացրնէք :

8 Որ՝ թէ յեսուն ան հանգիստը անոնց տրված ըլլար, ալ անկէ ետկը ուրիշ օրվան համար (ած) չէր գըուցէր :

9 Այդ ուրեմն նուագեալ է շաբաթուն Որդին մարդոյ եւ տէր :

10 Որ եմաւ ի տան զիւտան նորա , և նա հանգեաւ յիւրմէ գործոց անտի . որպէս և ած յիւրոցն :

11 Փութասցուք այսուհետև մտանել յայն հանգիստ . զի մի ոք ընդ նովին օրինակաւ անհաւանութեանն անկանիցի :

12 Որ կենդանի է բանն ած՝ և ազդու՝ և չատուկ քան զամենայն սուր երկսայրի , և անցանէ մինչև ցորոշումն շընչոյ՝ և ոգւոյ՝ և յօդից՝ և ուղղոց , և քննիչ է մտաց՝ և խորհրդոց սրտից :

13 Եւ չէք արարած անեբևոյթ յերեսաց նորա . այլ ամենայն բաց՝ և մերկացեալ աչաց նորա , զորմէ մեր բանքս են :

14 Ունիմք այսուհետև քահանայապետ մեծ՝ անցեալ ընդ երկինս , զյն որդի ած . պինդ կալցուք զխոստովանութիւնն :

15 Քանզի ոչ ունիմք քահանայապետ , որ չկարող չարչարակից լինել տկարութեանց մերոց . այլ փորձեալ է ամենայնիւ՝ ըստնմանութեան , առանց մեղաց :

16 Մատիցուք այսուհետև համարձակութեա՛ առաջի աթոռոյ շնորհացն նո՛ . զի ընկալցուք զողորմութիւն , և գտցուք շնորհս ի դէպ ժամանակի՝ օգնականութեա՛ :

9 Հանգիստ է նէ՝ այ ժողովրդին դեռ պահաս կրմընա ան շաբաթ (Հանգիստը) :

10 Պատճառը՝ ան որ անոր հանգիստը կրմտնա , ալ ինքը հանգչած կըլլա իր գործք ընե՛ լէն . ինտոր որ ած ալ (Հանգչե՛ ցաւ) իրեն գործքերէն :

11 Ալ ասկէ եաև արտորանք ան հանգիստը մտնելու , որ չըլլա թէ մկոր անոնց ըրած անհաւատութենինպէս իյնա :

12 Ինչու որ՝ այ խօսկը կենդանի է՝ ու գործէ՝ ու բոլոր երկու բերնէ թերէն էվէլի կարուկ , որ կանցնի կրմտնէ ինչվան սունչին ու հոգիէն ու խաղերուն ու ծուձին բաժնըվածքները , ու (բարակ) կրքննէ մտքերն ու սրտերուն խորութիւնները :

13 Ու բտեղծվածմը չկիա որ անոր դիմացը չերևցած բլլա . հապա՝ ամէն բան իր աչաց առջևը բաց յայտնի կեցած է , որ մեր բանը անոր չեան է :

14 Այսանկ որ ան մենծ քահանայապետը ունինք՝ յիսո այ որդին , որ ինքը երկինքը անցաւ (գնաց) , ալ ամէն բանինք ան (մեր չաւատուն) դաւանութիւնը :

15 Պատճառն որ՝ մեր ունեցած քահանայապետը անանկը չէ՝ որ կարող չըլլա մեր տկարութիւնին հետ մէյտեղ չարչարվիլ . հապա՝ ինքը մեզմէն ի պատ ամէն բան փորձերէ՝ մեզի նման բլլալով :

16 Ասոր ալ համարձակ իրեն շնորհացը աթոռուն գիմացը երթանք , որ ողորմութիւն ընդունինք , ու շնորը գտնենք օգնութիւն պէտք եղած ատենը :

Գ Լ· Ե·

1 Օ՛ի ամենայն քահանայապետ ՚ի մարդկանէ առեալ, վասն մարդկան կայ յածախոյս կողմն անդր· զի մատուսցէ պատարագս, և զձոն վասն մեղաց:

2 Չափով չարչարակից կարող է լինել՝ տգիտաց և մոլորելոցն· քանզի և ինքն իսկ տկարութեամբ զգածեալ է:

3 Վասն այնորիկ հարկ է՝ որպէս՝ վասն ժողովրդեանն, նոյնպէս և ընդ անձին մատուցանել պատարագս վասն մեղաց:

4 Եւ ո՛չ եթէ անձամբ ոք առնու պատիւ. այլ կոչեցեալն յա՝՝ որպէս և Ահարոն:

5 Ն՚այնպէս և քո՛, ո՛չ եթէ անձին ինչ շուք եդ լինել քահանայապետ. այլ որ խօսեցաւն առ նա, թէ որդի իմ ես դու, ես այսօր ծնայ զքեզ:

6 Որպէս և ՚ի միւսում ասէ· դու ես քահանայ յաւիտեան ըստ կարգին Մելքիսեդեկի:

7 Որ յաւուրս մարմնոյ իւրոյ՝ աղօթս և պաղատանս առ այն որ կարող էր ապրեցուցանել զնա, ուժգին գոչմամբ և արտասուօք մատուցանէր. և լսելի լինէր առ լաւութեն:

8 Թէպէտ և որդի է, ուսաւ ՚ի չարչարանացն անտի զՀնազանդութիւն:

9 Եւ իբրև կատարեցաւ, եղև ամենայն հնազանդելոցդ

1 Պատճառն որ՝ ուրիշ ամէն քահանայապետ որ մարդոց միջէն կառնըվի, մարդոց համար ածային բաներուն վրա կրկնա, որ պատարագներ ու զոհեր մատուցանէ մեղքերու համար:

2 (Որ) քիչ կրնա չարչարվիլ անոնց հետ՝ որ չեզգիտնալով ու մոլորութենով (մեղանչերեն). ինչու որ՝ ինքնալ տկարութենով լեռնըված է:

3 Ան պատճառէն՝ հարկաւոր է որ՝ ինտար Ժողովըրդին համար, անանկալ իր անձին մեղքերուն համար պատարագ մատուցանէ:

4 Ու չըլլար որ մէկը ինքիր անձովը (ան) պատիվը առնէ. հապա՝ որ ինքը աստուածմէ կանչըվի, ինչպէս Ահարոնը (եղաւ):

5 Ա՚նանկ ալ՝ քո չէ թէ ինք իր անձը մեծարեց քահանայապետ ըլլալու. հապա՝ անիկա որ իրեն (ան բանը) զըուցեց թէ՝ դուն իմ որդիս ես, ես ասօր քեզ ծնայ:

6 Ինչպէս որ ուրիշ տեղ մրնալ կըսէ. դուն միշտ և յաւիտեան քահանա ես մելքիսեդեկին կարգին պէս:

7 Ա՚ն որ՝ (յիս) իր մարմնուն օրերը՝ ամուր ձանը ձգած ու արցունքներ թափելով աղերսք ու պաղատանք կրմատուցանէը անոր՝ որ կարող էր ինքը խալսելու. ու իր աղեկութենին համար խօսկը մրիկ կըլլար:

8 Որ իբաւ (ինքը) որդի է, (բայց) ան չարչարանք քաշելովը հնազանդութին (ընել) սորվեցաւ.

9 Որ երբոր (բանը) լըմընցաւ, ալ (անկէ ետև) բոլոր իրեն հնա-

իւրոց պատճառք փրկութեանն յաւիտենից ։

10 Եւ անուանեցաւ յայ՝ քահանայապետ յաւիտենից՝ ըստ կարգին Մելքիսեդեկի ։

11 Վասն որոյ՝ բազում են մեզ բանք , և դժուարապատում՝ ի մեկնել ։ քանզի խոթամիտք եղերուք լսելոք ։

12 Փոխանակ զի պարտ էր ձեզ լինել վարդապետս՝ վասն ժամանակին, դարձեալ պիտոյ է ձեզ ուսանել՝ թէ զի՞նչ են նշանագիրք սկզբան բանիցն այ . և եղերուք կարօտք կաթին , և ոչ հաստատուն կերակրոյ ։

13 Զի ամենայն որ կաթընկեր է՝ տգէտ է բանին արդարութեան , քանզի աղոյ է ։

14 Այլ կատարելոցն է հաստատուն կերակուր . որոց՝ վասն ի չափն հասանելոյ, ձաշակելիքն կիրթ են ընտրութեան բարւոյ և չարի ։

զանդողներուն յաւիտենական փրկութեան պատճառ եղաւ ։

10 Ու ձԹ ալ անիկա քահանայապետ (ղրաւ) կանչըվեց՝ Մելքիսեդեկի կարգին պէս ։

11 Ասոր վրա մենք ալ շատ բան ունէինք բսելու , որ ան՝ դժար կըլլա մեկնելը . ինչու որ դուք անդոզ եղաք անկատ դնելու ։

12 Որ՝ (շատ) ատենէ ի վեր պէտք էր որ դուք վարդապետ ըլլայիք . ան որ հիմա՝ պէտք է որ դուք նորէն այ խօսկերուն առջի նշանագիրները սորվիք . ու ա նանկ որ՝ կաթ ուտելու կարօտ եղաք , ու չէ թէ հաստատ կերակուր ։

13 Ուստի ամէն ով որ կաթ կերդող է՝ արդարութէ խօսքը չէ հասկընար, ինչու որ՝ ինքը տղա է ։

14 Իսյց հաստատ կերակուրը կատարեալ (մարդոց) է, որ չափահաս ըլլալով՝ ուսելու զորձարաններնալ վարժած են բարին ու չարը (մէյմէկ) զատելու ։

ԳԼ. ՕՐ.

1 Վասն որոյ թողեալ զբան սկզբանն քրիստոսի, ի կատարումն եկեսցուք . մի միւսանգամ հիմն արկանել ապաշխարութեան ի մեռելսոտի գործոց անտի , և հաւատոյն որ յԱծ,

2 Եւ մկրտութեանցն վարդապետութեան , և ձեռնադրութեան ձեռաց , և յարութեան մեռելոց , և դատաստանին յաւիտենից ։

3 Եւ արդ՝ արասցուք զայն՝ եթէ Ած հրամայեսցէ ։

4 Քանզի անհնար է միան-

1 Ուստի՝ քրիստոսի վրայովը՝ պիտի առջի (սորվելու) բաները մէկդի թողած՝ կատարելը գանք ըսելու . առանց նորէն հիմ ձգելու , ան թէ՝ մեռած գործքերուն վրա պէտք է ապաշխարել , ու այ հաւատք ունենալ ,

2 Ու մկրտութիւններու ուսմունքին վրա , ու ձեռքի ձեռնադրութեան , ու մեռելներուն յարութեան առնելուն , ու յաւիտենական դատաստանին ։

3 Ու ան ալ (եսկը) կընենք՝ թէ որ Ած հրաման տա ։

4 Պատճառը՝ անկարելի է որ՝

գամ մկրտելոցն, որ Հաշակեցին յերկինսն պարզևացն, և հաղորդք եղեն հոգւոյն սրբոյ,

5 Եւ զգեղեցիկ բանին այ Հաշական Հաշակեցին, և զզօրութիւնս հանդերձելոյ աշխարհին,

6 Եւ կործանեսցին. միւսանգամ նորոգել յապաշխարութիւն. և վերստին ի խաչ հանել անձանց զրկողին այ, և զարձեալ խայտառակել:

7 Քանզի երկիր՝ որ ըմպիցէ զանձրև բազում՝ անգամ ե՛կեալ ի վերայ նորա, և ծնանիցէ արդիւնս շահեկանս նոցա՝ վասն որոյ գործեցին, ընդունի զօրհնութիւն յայ:

8 Իսկ որ բերէ փուշ և տատասկ, անպիտան է՝ և մերձ յանէծս. և վախճան նորա յայրուածն:

9 Նայց հաստատեալ եմ վասն ձեր սիրելիք՝ ի լաւ անդր, և որ լինի ի փրկութիւն՝ զի թէպէտ և այսպէս խօսիմք:

10 Ո՞չ եթէ անիրաւ լինի է ած, մոռանալ գործոց ձեր՝ և գսէրն զոր ցուցէք յանուն նորա, զի պաշտեիք զսուրբսն՝ և պաշտէք:

11 Եւ մեք ըղձանամք, զի իւրաքանչիւրք ի ձէնջ զնոյն փոյթ ցուցանիցէ ի հաստատուն յուսոյն մինչև ցվախճան:

12 Ո՛չ ի հիւանդամիտք լինիցիք: նմանողք եղերուք այնոցիկ որ հաւատովքն և երկայնմտութեամբ ժառանգեցին զաւետիսն:

13 Ո՛չ աբբրահամու խոստացեալ զաւետիսն այ՝ քանզի անունք որ մեկ հեղմը մկրտելեցան, որ իրենք երկնային պարգևացն համը առին, ու հոգուն սրբ հաղորդ եղան.

5 Ու այ ան աղեկ խօսկին համը առին, ու եւս գալու աշխրքքին (յաւսու) զօրութիւնները,

6 Ու (անկէ եւս) կործանին, (անկարելի է) մեյմալ ապաշխարութիւնով նորնալու. ան որ՝ որ զին այ իրենց կուզմանէ մեյմալ խաչ հանեցին, ու ան նորէն խայտառակ ըրին:

7 Պատճառը՝ մեկ գետինմը որ շատ անգամ իր վրա եկած անձրևն սր կըխըմէ, ու շահաւոր բերքեր կուտա անոնց՝ որ իրեն վրան բանեցան, անիկա այ օրհնութինը կընդունի:

8 Ու ան գետինն որ փուշ ու տատասկ կըբերէ՝ անիկա անշահ կըլլոզվի, ու անիծվելու կըլլա. ու իր վերջը էրելու կերթա:

9 Նայց ձեր վրա սիրելիներ՝ հաստատ եմ որ աղեկին դին էք, որ փրկութինի համրոմն է: որ թէև մենք ասանկ խօսած ըլլանք:

10 Աւծ անիրաւ չէ՝ որ ձեր (բարի) գործքը մոռնա, ու ան սէրը որ իր անունովը ցըցուցիք՝ որ սրբըբերուն ծառայեցիք՝ ու (հիմա) կըծառայէք:

11 Ու մենքալ կըբախծանք որ ձեր ամմէն մեկըզ ինչվան վերջը ան ջանքը ցըցունէք (ձեր) հաստատ յուսովը:

12 Որ սրտերնիդ կոտրած չենիա. (հապա) անոնց նման եղիք որ (իրենց) հաւատքովը՝ ու երկան համբերութինով ան աւետմունքները ժառանգեցին:

13 Պատճառը՝ երբոր ած աւետմունքով ան խոստմունքը ա-

յայլ ոք ՚ի մեծ ուշ զոյր երդնուլ,

14 Յանձն իւր երդուաւ, և ասէ. այո՝ օրհնելով օրհնեցից զքեզ, և բազմացուցանելով բազմացուցից:

15 Եւ այնպէս երկայնամիտ եղեալ՝ եհան աւետեացն:

16 Ապաքէն մարդիկ որ ինչ ՚ի վեր է քան զինքեանս՝ յայն երդնուն, և ամենայն հակառակութեան նոցա վճիռ ՚ի հաստատութիւն՝ երդումն է:

17 Որով առաւել ևս կամեցեալ՝ ցուցանել ժառանգաւորաց աւետեացն զոչհաստատութիւն խորհրդոյն իւրոյ, միջնորդեաց երդմամբ:

18 Օ՚ի երկու անփոփոխելի իրօքն՝ որովք անկնար լինել սուտ՝ յայտնի՝ հաստատուն մխիթարութիւն ունիցիմք. որք ապաստան եղեալ բռնեալ հարկանել զհանդերձեալ յուսոյն:

19 Որ իբրև զխարիսխ հաստատուն և անշարժ՝ ունիցիմք անձանց մերոց. որ և մտանիցէ ՚ի ներքինն կողմն վարագուրին:

20 Ուր կարապետն մեր յիւրմէնէ վասն մեր, ըստ կարգին մելքիսեդեկի՝ եղեալ քահանայապետ յաւիտենից:

իբրահամին ընծաս, ալ ուրիշ (իրմէն) մեծիմը վրա չէ դանելով երդում ընել,

14 Ասուն իր անձին վրայովը երդվելնցաւ, ու բաց. Ճշմարիտ՝ քեզ օրհնելով կօրհնեմ, ու շատցունելով կըշատցընեմ:

15 Ու (աբրահամ նալ) անանկ երկայնամիտ եղած՝ ան աւետումնքին բանը ափ ձգեց:

16 Ինչպէս որ մարդիք՝ ան բանն որ իրենցմէն վեր է՝ անոր վրա երդում կընեն, ու իրենց բոլոր նեղչուխրինները (մէկ կողմը) հաստատելու վէճաբ՝ երդումը կըլլա:

17 Այդ ալ ուզելով էվէլքբը ցըցունել իր կամացը հաստատ ըլլալը՝ դէպի ան աւետումնքը ժառանգաւորները, երդումը խօսկի մէջ առաւ:

18 Որ ան երկու բանովն որ չէն շարժիր. որ անոնք ընելով, ալ անկարելի է որ ան սուտ գըսցէ, մենք հաստատ մխիթարութիւն ունենանք. ան որ հաս ըլլալիքներուն վրա ապաւինելով յոյսերնիս դրինք:

19 Որ՝ ան (յոյսը) հաստատ ու անշարժ (կեցած) նաւու երկրիքի մը պէս մեր անձերնիս կըբռնէ. որ ան՝ (սրբութիւնին) վարագուրին ինչվան ներսի դինաւ կըմտնա:

20 Ուր որ յի մեր առաջնորդը մեզի համար մտաւ, մելքիսեդեկին կարգինպէս՝ ինքը յաւիտենական քահանայապետ եղած:

Գ Լ· Է·

1 Քանզի այս մելքիսեդեկ՝ թագաւոր էր սաղէմայ, քահանայ այ բարձրելոյ· որ ել ընդառաջ աբրահամու,

1 Ան որ՝ աս մելքիսեդեկը սաղէմի թագաւոր էր, բարձրելուն այ քահանա մը· որ ինքը աբրահամի դիմացը ելաւ, երբոր

յորժամ դարձեալ գայր ՚ի կո-
տորածէ թագաւորացն՝ և օրհ-
նեաց զնա :

2 Որում և տասանորդս յա-
մենայնէ ետ աբրահամ : նախ՝
թարգմանի թագաւոր արդա-
րութեան, ապա թագաւոր սա-
ղեմայ՝ որ է թագաւոր խաղա-
ղութեան :

3 Անհայր՝ անմայր՝ չունի
մարեալ յազգս, որոյ ոչ սկիզբն
աւուրց, և ոչ կատարած կե-
նաց, նմանեալ որդւոյն այ՝
կայ մնայ քահանայ մշտնջե-
նաւոր :

4 Այր՝ տեսէք որպիսի ոք
էր սա, որում և աբրահամ
տասանորդս ետ յաւարէ անտի՝
նահապետն :

5 Եւ որք յորդւոցն ղեւեայ
զքահանայութիւնն առնուն,
պատուէր ունին տասանորդել
ժողովրդին՝ ըստ օրինացն,
այսինքն է՝ զեղբարս իւրեանց.
թէպէտ և ելեալ իցեն յերա-
նացն աբրահամու :

6 Իսկ չհամարեալն յազգս
՚ինոցանէ՝ տասանորդեաց զաբ-
րահամ, և զնա՝ որոյ պաւետիան
ընկալեալ էր՝ օրհնեաց :

7 .Օ.ի առանց ամենայն նա-
կառակութեան, նուաղն ՚ի լա-
ւէ անտի օրհնեսցի :

8 Եւ աստ մարդք մահկա-
նացուք տասանորդս առնուն .
բայց անդ վկայեցաւ թէ կեն-
դանի է :

9 Եւ որպէս բանիւ կարդ է
ասել . թէ աբրահամ՝ և
զԼեւի իսկ որ զտասանորդսն առ-
նայր , տասանորդեցաւ :

10 .Օ.ի զհայրն յերանս չոր
անիկա ան թագաւորներըք կոտ-
րելէն ետև դարձեր կուգար կոր ,
ու աբրահամ օրհնեց :

2 Աբրահամիանալ (իր) բոլոր
(ըրած թալանէն) անոր տասա-
նորդ տրվաւ : (Մելքիսեդեկ անու-
նը) առաջ՝ արդարութենի թա-
գաւոր կըթարգմանվի , ետև՝
սաղեմի թագաւոր ալ (էր), որ բ-
սել է՝ խաղաղութենի թագաւոր :

3 (Ինքը) առանց հօր՝ առանց
մօր, ինչ ազգիմը մէջ չի տեսվիր .
որ ոչալ օրերու բակըվածք ունի,
ու ոչ ալ իր կենաց վերջը . ա-
նանկ՝ այ որդուն նման եղաւ՝ որ
միշտ քահանա կըկենա կրնայ :

4 Ուստի ալ նայեցէք՝ որ աս
ինտոր (մեծ) մարդ էր՝ որ ան
աբրահամ նահապետն ալ (իր
առած) կողոպուտին անոր տա-
սանորդ հանեց տրվաւ :

5 Ու ղեւիին որդիքներէն՝ անոնք
որ քահանա կըլլան, օրէնքը՝ կր-
հրամայ որ իրենք ժողովըրդէն
տասանորդ առնեն, որ իրենց ե-
ղբարներէն են . ան որ (անոնք) ա-
բրահամին երանքէն առաջ եկած
են :

6 Բայց ան՝ որ անոնց տոհմի մէջ
չէր սեպված՝ աբրահամէն տա-
սանորդ առաւ, ու (ինքը) անիկա
օրհնեց՝ որ աւետումնք առներէր :

7 Ան որ՝ աս բանիս ներչկռիլ
չըլլար, որ վարի է ան՝ որ վերի-
նէն օրհնութենին կառնէ :

8 Ու հոս մահկանացու մարդ-
կիք են տասանորդ առնողները .
բայց հոն՝ (գիրքը) կըվկայէ թէ
(ան առնողը միշտ) ոխ է :

9 Ու ինտոր որ խօսակին կարգը
կըբերէ՝ ըսելու . թէ ղեւիամ՝ որ
տասանորդ կառնէր՝ աբրահամի
ձեռքով տասանորդ տրվաւ :

10 Պատճառն որ՝ դեռ ինքը

իւրոյ էր՝ յորժամ ընդառաջ եղև նմա Մելքիսեդեկ :

11 Իսկ արդ՝ եթէ կատարումն ի ձեռն ղևտացւոց քահանայութեանն էր, քանզի ժողովուրդն յայն օրէնս դրեցաւ, զի՞նչ պիտոյ էր ըստ կարգին Մելքիսեդեկի այլում քահանայի յառնել, և ոչ ասել՝ ըստ կարգին ահարոնի :

12 Այլ ի փոխելոյ քահանայութեանն, չարկ էր և օրինացն փոփոխումն լինել :

13 Զի զորմէ այսպէսն ասի, յայլմէ ազգէ կալաւ հաղորդութիւն · յորմէ ոչ ոք եբեթէ եղև չաղօրդ սեղանոյն :

14 Այրդ՝ յայտ իսկ է, թէ յազգէ յուդայ ծագեաց տէր մեր· յորմէ ազգէ վասն քահանայից մովսէս ինչ ոչ խառեաց :

15 Եւ ևս առաւել յայտ է՝ թէ ըստ նմանութեան Մելքիսեդեկի՝ յառնելոց է այլ քահանայ :

16 Որ ոչ ըստ մարմնաւոր պատուիրանին եղև, այլ ըստ զօրութեան կենացն անվախճանից :

17 Քանզի վկայեցաւ, թէ դու ես քահանայ յաւիտեան ըստ կարգին Մելքիսեդեկի :

18 Այրհամարհութիւն լինէր առաջնի պատուիրանին, վասն նորին տկարութեանն և անշահութեան :

19 Քանզի ոչինչ կատարումն գործեցին օրէնքն, և մուտ ապնուականն յուսոյն՝ որով մերձենամք առ Աստ :

20 Եւ այնչափ, զի ոչ առանց երդման եղև քահանայ :

21 Նոքա՝ առանց երդման քահանայ եղեն, այլ սա երդմամբ՝ որ ասաց ցնա Տէր՝ երդուաւ Տէր և ոչ զղջասցի, դու ես քահանայ յաւիտեան ըստ կարգին Մելքիսեդեկի :

22 Ըստ այսմ և Յիսուս երաշխաւոր եղև ուխտին աւետեաց :

23 Եւ նոքա՝ բազումք եղեն քահանայք, վասն զի մահ արգելոյր նոցա մնալ յաւիտեան :

24 Իսկ սա վասն զի յաւիտեան կայ, ունի զքահանայութիւնն անանցանելի :

25 Ուստի և կարող է յաւիտեան կատարել զամենեսեան որ մերձենան առ Աստուած նովաւ, որ միշտ կենդանի է յաղաչել վասն մեր :

26 Զի այսպիսի էր մեզ հարկ ունել քահանայապետ մի սուրբ, անարատ, անպղծելի, զատեալ ի մեղաւորաց, և բարձրացեալ քան զերկինս :

27 Որ ոչ պիտոյ է ամենայն աւուր, որպէս քահանայապետքն, նախ զանձանց մեղացն զոհս մատուցանել, ապա զժողովրդեանն, զի զայս արար մի անգամ՝ զանձն իւր ընծայեալ :

28 Զի օրէնքն զմարդիկ քահանայապետս կացուցանեն տկարութիւն ունելոյ, այլ բանն երդմանն որ յետ օրինացն՝ զՈրդի կատարեալ յաւիտեան :

առանց երդման . զի են ոմանք՝ որ առանց երդման են կացեալ քահանայք :

21 Բայց սա՝ երդմամբ, ՚ի ձեռն այնորիկ որ ասացն ՚ի նմա. երդուաւ տէր՝ և ոչ ևս զղջաց, դու ես քահանայ յաւիտեան :

22 Եւ այնչափ լաւագոյն ուխտի եղև երաշխաւոր յի :

23 Եւ բազում են կացեալ քահանայք, վասն մահու արգել լինելոյ ՚ի մշտնջենաւորել :

24 Իսկ սա՝ վասն յաւիտեան կալոյ՝ առանց անցանելոյ ունի զքահանայութիւնն :

25 Ուստի և կենդանի առնել համօրէն կարող է՝ զմատուցեալսն նովաւ առ Ած. քանզի միշտ կենդանի է՝ լինել բարեխօս վասն նոցա :

26 Օ՛ի այսպիսի իսկ և վայել էր մեզ քահանայապետ, սբ, անմեղ, անարատ, զատեալ ՚ի մեղաւորաց, և բարձրացեալ քան զերկինս .

27 Որում՛ ոչ հանապազ ՚նրկ է՝ որպէս այլոց քահանայապետին, նախ՝ վասն իւրեանց մեղացն պատարագս մատուցանել, և ապա վասն ժողովրդեանն . իսկ սա՝ զայն միանգամայն կատարեաց, զի զանձն իւր մատոյց պատարագ:

28 Օրէնքն զմարդիկ կացուցանեն քահանայապետս ըզդաժեամբ տկարութեամբ . իսկ բանն երդման յետ օրէնսայն՝ զորդի որ յաւիտեան կատարեալ է :

առանց երդումի՛ ալ չեղաւ . որ անոնցմէն եղածները՝ առանց երդումի քահանա կեցան :

21 Բայց ասիկա՝ երդումով, անոր բերնոյն որ իրեն ըսաց . Տէրը երդուեցաւ, ու (անոր վրա) պիտի չը զղջայ ալ, (որ) դուն միշտ և յաւիտեան քահանայ ես :

22 Ու ալ անանկ՝ յի՛սը Կվկէի ապնիվ ուխտադաշինքի բանի վրա կեցող եղաւ :

23 Ու շատերը են եղեր ան (մէյմէկու ետև) քահանա կեցողները. ինչու որ՝ մահը անոնց արգելք կըլլար՝ (մէկին) միշտ և հանապազ մնալուն :

24 Բայց ասիկա յաւիտեան կենալով՝ ինքը քահանայութին ունի, ան առանց (ուրիշի վրա) անցնելու:

25 Ուստի իր ձեռքով դէպի Ած եկողները՝ կարող է միշտ կեդանի պահե՛լ. ան որ ինքը միշտ կենդանի է, որ անոնց համար բարեխօսութին կընէ :

26 Մեզի կըվայլէր որ բուն ա սանկ քահանայապետ՝ մենք ունենանք . (որ ըլլա՝) սբ, անմեղ, առանց աղտի, մեղաւորներէ զատ ված, ու երկընքէն աւ վեր բարձրըլլած .

27 Որ իրեն պէտք չըլլա ամէն իւրիւր քահանաներուպէս՝ ամէն իւրիւր, առաջ իրենց մեղացը համար պատարագներ մատուցանել, ու ետև ժողովրդին համար ալ . որ ասիկա ան բանը մէկ ղեղմը ըրաւ, իր անձը պատարագ մատուցանելով :

28 Օրէնքը՝ տըկարութին ունեցող մարդիկը քահանայապետ կընկեցունէ : բայց ան երդումին խօսքը որ օրէնքէն ետև (եղաւ), որդին (կընկեցունէ), որ միշտ և հանապազ կատարեալ (ոխձ) է :

Գ.Ը.

1 Եւ բանից գլուխ խօսէցս, այնպիսի ունիմք քահանայապետ, որ նստաւ ընդ ձախմէ մեծութեանն աթոռոյն յերկինս·

2 սրբութեանցն պաշտօնեայ, և խորանին ճշմարտութեան՝ զոր արն կանգնեաց՝ և ոչ մարդ :

3 Զի ամենայն քահանայապետ վասն մատուցանելոյ ընծայս և պատարագս կայ· ուստի հարկ է և նմա ունել ինչ զոր մատուցանիցէ :

4 Զի թէ էր յերկրէ, թերևս չէր իսկ քահանայ· զի գոյին որ մատուցանէին ըստ օրինացն պատարագ :

5 Որք առակաւ և օրինակաւ պաշտեին երկնաւորացն· որպէս և հրամայեցաւ Մովսէս յորժամ զործելոյ էր զվրան ժամուն· տեսջիր՝ ասէ, առնիցես զամենայն ըստ օրինակին որ ցուցաւ քեզ 'ի լերինն :

6 Բայց արդ՝ առատագոյն եւս պաշտաման եհաս յն, որչափ լաւագոյն եւս ուխտի է միջնորդ՝ որ 'ի յառաւել աւետիսն օրինադրեցաւ :

7 Զի եթէ առաջինն անբիծ էր, ապա երկրորդին տեղի ոչ խնդրէր :

8 Նա՝ աւասիկ բամբասէ զնոսա՝ և ասէ· ահաւասիկ աւուրք եկեսցեն՝ ասէ Տէր, և կատարեցից 'ի վերայ տանն՝

1 Ո՛ւ բուն ըսածըս ան սիտոր ըլլա, որ՝ (մենք) անանկ քահանայապետմը ունինք, որ ինքը երկինքը (այ) մեծութիւնի աթոռին աջ կին (գնաց) նստաւ·

2 Սրբոց սրբոյն պաշտօնեա (ըլլալով,) ու ան ճշմարիտ խորանին՝ որ Տէրը շինեց կայնեցուց՝ ու չէ թէ մարդ :

3 Պատճառն որ՝ ամէն մէկ քահանայապետը՝ գոհեր ու պատարագներ մատուցանելու համար կեցած, ուստի պէտք է որ իր ձեռքը բանմը ունենա՝ որ անիկա մատուցանէ :

4 Որ թէ (ան՝) երկիրքս եղած ըլլար, ալ ինքը քահանայ չէր ըլլար· ինչու որ՝ (հոս) անոնք կային՝ որ օրէնքին պէս պատարագ կըմատուցանէին :

5 Որ երեսնք երկնայինը բաներուն առակովը ու օրինակովը (այ) կըծառայէին, ինչպէս որ Մովսէսին չրամայվեցաւ, երբոր ան ժամին (բաված) խորանն որ պիտի շինէր· նայէ՝ կըսէ, որ ամէն բանը՝ ան քեզի լեռը ցըցուցած օրինակին պէս ընես :

6 Անանկ է նէ՝ յն ալ էվելի ազնիվ պաշտամունքի հասաւ· որ (ինքը) էվելի լաւ ուխտուդաշինքի միջնորդը եղաւ, ան զեպազանց խոստմունքովը սահմանված :

7 Որ թէ առջինը առանց պակասութիւնի ըլլար՝ ալ ան երկրորդին տեղ չէր փրնտրվէր :

8 Ան որ (ած) իրենց երեսներին կուտա, ու կըսէ, չանա օրերը պիտոր գան՝ կըսէ Տէրը, որ խօսայելի տանը հետ ու յուդայի տանը

իսրայէլէ և ՚ի վերայ տանն յուդայ՝ ուխտ նոր ։

9 Ո՛չ ըստ ուխտին զոր եղի ընդ հարս նոցա՝ յաւուրն յորում առի ՚ի ձեռն՝ հանել զնոսա յերկրէն եգիպտացւոց · և զի նոքա ոչ կացին յուխտին իմում, և ես անփոյթ արարի զնոցանէ՝ ասէ տէր ամենակալ ։

10 Այլ այս է ուխտն զոր եղից տանն իսրայէլի յետ աւուրցն այնոցիկ՝ ասէ տէր · տացց զօրէնս իմ ՚ի միտս նոցա, և ՚ի սիրտս նոցա զրեցից զնոսա · և եղիցի նոցա Ած, և նոքա եղիցին ինձ ՚ի ժողովուրդ ։

11 Եւ ոչ ևս ուսուցանիցեն իւրաքանչիւր զքաղաքակից իւր , և իւրաքանչիւր զեղբայր իւր, և ասիցեն թէ ծանիջիք զՏէր. զի ամենեքեան ծանիցեն զիս ՚ի փոքրկանց մինչև ցմեծամեծս նոցա ։

12 Ողորմելի եղիցի անօրէնութեանց նոցա · և զմեղս նոցա՝ և զանօրէնութիւնս այլ ոչ ևս յիշեցից ։

13 Այլ՝ ասելովն նոր, հնացոյց զառաջինն · և որ հնանայն և ծերանայ՝ մերձ է յապականութիւն ։

հետ նոր ուխտադաշինքմբ պիտի ընեմ ։

9 Ձէ թէ ան դաշինքին՝ որ իրենց հարերնուն հետը զրի՝ ան օրն որ ձեռվընիրնէն բռնեցի զանոնք եգիպտացոց երկրէն հանելու · ու որ իրենք իմ զրած դաշինքիս մէջ չեկեցան, ես ալ անոնք երեսէ թողուցի · կըսէ ամենակալ տէրը ։

10 Հայց ան օրերէն ետև՝ ան դաշինքն որ իսրայէլի տանը հետ պիտոր զնեմ, աս է կըսէ տէրը · իմ օրէնքըս անոնց մտքին մէջ պիտոր զընեմ, ու ան՝ իրենց սրտին մէջը զրեմ · ու ես իրենց Ած պիտի ըլլամ, ու անոնք ալ իմ ժողովուրդս ըլլան ։

11 Ու ալ անոնց ամմէն մէկը պիտի չիկենա իր քաղքեցին սորվեցունէ, ու (ոչալ) ամմէն մէկը իր եղբարը , ըսելով թէ տէրը ճանչցիր· ընչու որ՝ իրենց պզտիկէն ինչվան մեծերնին ամմէն մէկը՝ իս պիտոր ճանչնան ։

12 Անոր համար որ՝ իրենց անօրէնութիւններուն պիտի քաւութիւն տամ , ու իրենց մեղքերնին ու անօրէնութիւնին ալ միյմալ պիտոր չի յիշեմ ։

13 Ուստի ալ (աս դաշինքը) նոր ըսելովը՝ ան առջինը հինցուց· ու ան որ կըհինցնա ու կծերնա՝ ալ ապականութիւնի մօտ է ։

ԳԼ · Թ ·

1 Ունել ունէր և առաջինն՝ իրաւունս պաշտաման, յայնժամ դաշտարշական սրբութիւնն ։

2 Որ խորանն առաջին հանդերձեցաւ այսպէս · յորում աշտանակն , և սեղանն , և հացն

1 Ընդրդ որ՝ ան առջինն ալ (ած) պաշտաութիւնի իրաւունքը ունէր . (ինքը) ան աստնը աշխարքի մէջ սրբաստեղ ըլլալով ։

2 Ընչու որ՝ ան առջի խորանը, որ սրբութիւն կըսվէր , ասանկ կարգի դրվեցաւ, որ անոր մէջը

յընն նուիրաց, որ սրբութիւնն կոչէր :

3 Եւ յետ երկրորդ վարագուրին՝ խորանն որ կոչէր սրբութիւն սրբութեանց ·

4 Ոսկեայ կայր բուրվառն ոսկի, և արկղն կտակարանաց պատեալ ներքոյ և արտաքոյ ոսկւով· յորում սափորն ոսկի՝ մանանայիւ, և գաւազանն ահարոնի որ ծաղկեցաւ, և տախտակք կտակարանացն :

5 Եւ՝ի վերայ նորա քրովբէքն փառաց՝ որ հովանի ունէին՝ի վերայ քաւութեանն : վասն որոյ՝ ոչ է այժմ ասել մի ըստ միոջէ :

6 Եւ այն ամենայն իբրեւ այնպէս հանդերձեալ կայր, յառաջին խորանն յամենայն ժամ մտանէին քահանայքն զպաշտամունսն կատարել :

7 Իսկ երկրորդն՝ միայն զամ՝ի տարւոջն քահանայապետն մի · և զայն ոչ առանց արեան, զոր մատուցանէր վասն իւր, և վասն ժողովրդեանն անգիտութեան :

8 Այս ցուցեալ Հոգւոյն սրբոյ՝ միոչհի յայտնեալ էր ճանապարհն սրբութեանցն· քանզի դեռ առաջին խորանն ունէր զհաստատութիւն :

9 Որ է առակ ժամանակին որ առաջի կայր . յորում պատարագքն և զոհք մատչէին, որք ոչ կարէին ըստ միտս կատարել զպաշտօնեայսն .

10 Իսկ միայն կերակրովք և ըմպելեօք, և պէսպէս մկրտութեամբք՝ մարմնոյ արդարութիւն կոչեցեալ մինչև՝ի ժամ աշտանակը (կար), ու սեղանը, ու նըվէրքի հացը :

3 Ու երկրորդ վարագուրէն ետև՝ ան խորանն (էր), որ սրբութիւն սրբութեանց կըսվէր,

4 Որ անոր ունէր ոսկիէ բուրվառը, ու կտակարաններուն սընտուկը՝ ան ներսէն ու դրսէն ոսկիով պատած · անոր մէջնակ ոսկի բըղտուկը մանանայով լիք, ու ահարոնին գաւազանը որ ծաղկի տըվաւ, ու ուխտաւ դաշինքը (վրան գրած) տախտակներըը :

5 Ու անոր վրան ալ՝ փառաւոր քերոբէներըը՝ որ քաւութիւնին վրա շուք բռներէին : ան՝ որ հիմա (հոս՝ տեղը) չէ ասոր վրա մէկիկ մէկիկ գըրուցելու :

6 Ու ան բոլոր բաներն որ ատանկ կարգի դրված էր · (միան) առջի խորանը ամէն ատեն քահանաներըը կըմտնային պաշտմունքերը կատարելու :

7 Իսկ երկրորդը՝ տարին մէկ հեղմը՝ քահանայապետը (կըմտնար) · ու ան՝ առանց չէրը առուն տանելու չէր ըլլար, որ իրեն՝ ու ժողովրդին ըրած պակասութիւնները համար կըմատուցանէր :

8 Հոգին սըրը անով աս կըցուցնէր՝ որ (Աշմարիթ) սրբութիւններուն ճամբան դեռ բացված չէ . քանի որ ան առջի խորանը հաստատված կեցեր էր

9 Որ ան՝ մէկ պատկերըն էր հիմակու ատենիս, որ իր մէջ պատարագները ու զոհեր կըմատուցվէին, որ ան ընծաներուն խղճմտանքը չէին կընար կատարեալ մաքրեր :

10 Հապա միան ուտելիքներով ու խըմելիքներով, ու կերպ կերպ մարմնավըլայմանքներով՝ արդարութին կըսեպվէր · որ ա-

մանակս ուղղութեանն ՚ի վե_
բայ կային :

11 Ա՛յլ քո՝ եկեալ քահա_
նայապետ հանդերձելոցն բա_
րեաց, մեծաւն և կատարելո՛
և անձեռագործ խորանաւն,
այս ինքն ի՝ որ ոչ յայսց ա_
րարածոց .

12 և ոչ արեամբ նոխա_
զաց և գուարակաց . այլ ի_
րով արեամբն եմուտ միան_
գամ ՚ի սրբութիւնսն՝ յաւիտե_
նական գտեալ փրկութիւն :

13 .Օ՛ի եթէ արիւն ցլոցն
և նոխազաց՝ և մոխիր երինջոյն
ցանեալ՝ պղծեալսն սրբէր
առ ՚ի մարմնոյ սրբութենէ .

14 Ո՞րչափ ևս առաւել ա_
րիւնն քո՛ր , որ ՚ի ձեռն հոգ_
ւոյն յաւիտենականի մատոյց
զանձն անարատ պատարագ ՚ա՛յ,
սրբեսցէ զխիղճ մտաց ձերոց ՚ի
մեռելոտի գործոց անտի՝ պաշ_
տել զած կենդանի :

15 և վասն այնորիկ նորոյ
ուխտիս է միջնորդ · զի յոր_
ժամ մա՛հ լինիցի՝ ՚ի փրկու_
թիւն՝ վասն առաջնի ուխտին
յանցանաց, զաւետիս առցեն
հրաւիրեալքն ՚ի ժառանգու_
թիւնն յաւիտենից :

16 Ք՛անզի ուր կտակ է ,
հարկ է գմա՛հ ՚ի մէջ բերել
զկտակապրին .

17 .Օ՛ի կտակ՝ յետ մա՛հու
հաստատուն է . ապա թէ ոչ՝
զիա՞րդ իցէ հաստատուն, մինչ
կտակապրին կենդանի է :

18 Ո՛ստի և ոչ առաջինն
առանց արեան նորոգեը :

սնաք կըլլայինՙ ինչվան որ բա_
նին շըտկըվելուն ատենը գա :

11 Բայց քո՝ եակէ ըլլալիք
բարիքներուն քահանայապետ ե_
կած . ան մեծ ու կատարեալ
ու ձեռքով չը շինած խորանը մը_
տաւ, ան որ աս ըստեղծվածնե_
րէն չէ :

12 Ու ոչ ալ նոխազներու ու
զըվարակներու արունով, հապա՝
իր արունովը մէկ անգամմը ան
սրբութիւն սրբոցը մտաւ՝ որ յա_
ւիտենական փրկութիւնը շահեց :

13 Որ թէ ցուլերուն ու նո_
խազներուն արունը, ու երինջ_
ներուն մոխիրը ցանվելով պղծ_
ծեալները կըսրբէին մարմնու
մաքրութիւնով .

14 Ա՛լ որքան էվէրի քո՛ի ա_
րունը, որ յաւիտենական Հոգուն
ձեռքով՝ իր առանց արատի անձը_
ն՛ պատարագ մատուց · պիտոր
ձեր խղճմտանքը մաքրէ ան մեռ_
ցընող գործքերէն՝ որ կենդանի
ածը պաշտէք :

15 Ու անոր համարալ ինքը
միջնորդ է աս նոր գաշինքիս · որ
երբոր (իր) մահը ըլաւ փրկու_
թիւնի համարՙ ան առջի գաշինքը
չը պահելուն պատճառով , յաւի_
տենական ժառանգութիւնին ձեն_
վածները ան ուտեմունք առնեն :

16 Պատճառը՝ ուր որ մէկ կը_
տակմը կըլլա , հարկաւորէ որ ան
կտակը զրողին մեռած ըլլալը
ցուցվի .

17 Ինչու որՙ կըտակը (անոր)
մեռնելէն ետև հաստատ է. հապա
թէ չէՙ ճշտոր հաստատ կըլլա՝
քանի որ ան կտակը զրողը ոխտ
է :

18 Ա՛նոր համար է որՙ առջի
(գաշինքն)ալ առանց արուն
(թափվելու) չէը նորնաը :

19 Քանզի իբրև պատմեցան ամենայն պատուիրանք օրինացն ՚ի մովսիսէ՝ ժողովրդոյն, առեալ զարիւն ցլուցն և նոխազացն, ջրով՝ և բրդով կարմրով և զոպայիւ, գիտա- կարանօքն իսկ և զամենայն ժողովրդեամբն սրսկեաց,

20 Եւ ասէ. այս է արիւն կտակին՝ զոր պատուիրեաց ձեզ Աստ:

21 Եւ զխորանսն, և զամենայն կահիս սպասուն նոյնպէս սրսկեաց զարիւնն:

22 Եւ զրեթէ ամենայն ինչ արեամբն սրբէր ըստ օրինացն. և առանց հեղման արեան չըլինէր թողութիւն:

23 Ապա հարկ էր օրինաւորացն՝ այսպիսեօքն սրբել. և բուն իսկ երկնաւորացն՝ աւելի ևս պատարագօք քան զնոսա:

24 Ոչ ի ձեռագործ սրբութիւնսն եմուտ քա՝ յօրինակս ճշմարտութեանն. այլ ՚ի բուն իսկ յերկինս, յանդիման լինել երեսաց այ վասն մեր:

25 Ո՛չ զի բազում անգամ մատուցանիցէ զանձն պատարագ, որպէս քահանայապետն՝ որ մտանէր ՚ի սրբութիւնս սրբութեանցն ամի ամի արեամբ օտարաւ.

26 Ապա թէ ոչ՝ պարտ էր նմա բազում անգամ չարչարել իւրովք սկսանել աշխարհի. բայց արդ՝ աւասիկ, միանգամ ՚ի կատարած յաւուրց՝ յանարգութիւն մեղաց իւրում պատարագն յայտնեալ է:

19 Պատճառն որ՝ երբոր մովսէս օրէնքէն եղած բոլոր պատուիրանքները ժողովրդին դիմացն որ դրաւ, (ալ եառ) ցուլերուն ու նոխազներուն արիւնը առաւ, անոնք ջրով ու կարմիր բրդով ու զոպայով՝ ան բուն կտակի գրուածքին ու բոլոր ժողովրդին վրայովը ցրըցրեց,

20 Ու ըսաց. ասիկա՝ (եղած) կտակին արիւնն է, ան՝ որ Աստ ձեզի պատուիրեց:

21 Ու խորանին ու բոլոր կահկարասիքին վրայոնալ ան կերպով ան արիւնը ցրըցրեց:

22 Ու անանկ սեպէ թէ՝ օրէնքին ըսածին պէս ամէն բան արիւնով կրմաքրըվէր, ու առանց արուն թափելու՝ (մեղաց) թողութիւն չէր ըլլար:

23 Ուստի՝ թէ որ հարկաւոր էր՝ որ օրինակով եղողները անանկ բաներով մաքրըվին, ալ բուն երկնայիններուն պէտք էր անկէ էվէղլի ապնիվ պատարագներով:

24 Պատճառը՝ քրիստոս չէ թէ (մարդոց) ձեռքով շինված սրբատեղիները մտաւ, որ ճշմարտութիւնին օրինակն էին. հապա՝ բուն երկինքը՝ մեզի համար դիմադէմ այ առջև ելաւ:

25 Չէ որ (հոն) շատ հեղ իր անձը պատարագ մատուցանէ. ինտոր որ քահանայապետը՝ որ տարվէտարի սրբութիւն սրբոցը կըմտնէր՝ ուրիշի արունովը:

26 Հապա թէ չէ՝ աշխարքի բսկիսկէն հետէ պէտք էր որ ինքը շատ անգամ չարչարվէր. ան որ հիմա դարերու վերջը մեղքը միկրի ձգելու համար մէկ անգամ՝ ինքը ինքզինքը պատարագ ընելով՝ յայտնըվեցաւ:

27 Եւ զոր օրինակ կայ ծնայ մարդկան միանգամ մեռանել, և յետ այնորիկ դատաստան ·

28 Նոյնպէս և քրիստոս միանգամ մատուցեալ պատարագ՝ առ ի բառնալոյ զմեղս բազմաց · իսկ յերկրորդումն առանց մեղաց յայտնեսցի այնոցիկ՝ որ ակն ունիցին նմա հաւատովք ի փրկութիւն :

27 Ու ինտոր որ մարդուս սահմանված է՝ որ մէկ հեղմը մեռնի, ու անկէ ետև (անոր) դատաստանը (կուգա) :

28 Այնպէս քրիստոս մէկ անգամ մը պատարագ մատուցված շատվորի մեղքեր վերցընելու համար· ալ երկրորդ հեղուն առանց մեղքիմը պիտի յայտնըվի անոնց՝ որ հաւատքով անոր կըսպասեն որ փրկըվին :

ԳԼ · Ժ ·

1 Քանզի զսուտեր հանդերձելոց բարեացն ունէին օրէնքն, և ոչ զնոյն կերպարանս իրացն· ամի ամիպնոյն պատարագս մատուցանեն ցանգ՝ որք ոչ են կարող զմատուցեալսն կատարել :

2 Ապա թէ ոչ՝ դադարէին ի մատուցանելոյ, վասն և ոչ մի ինչ այնուհետև խիղճ մտաց ունելոյ՝ պաշտօնէիցն միանգամ սրբեցելոց ·

3 Այլ անդէն ի նմին ի յիշատակս մեղացն կային ամի ամի :

4 Քանզի ոչ կարէր արիւն նոխազացն և ցլոցն՝ բառնալ զմեղս :

5 Վասն որոյ ի մտանել իւրում՝ յաշխարհ՝ ասէ· զոհս և զպատարագս ոչ կամեցար, բայց մարմին հատատեցեր ինձ :

6 Ընդ ողջակէզս և ընդ վասն մեղացն ոչ հաճեցար :

7 Յայնժամ ասացի՝ թէ ահա հասի, ի հատս գրոց

1 Ուստի (հին) օրէնքը՝ որ եւէ գալու բարիքներուն շուքը ունէր, ու չէ թէ (բուն) ան բաներուն կերպարանքը · տարին տարի միշտ ան պատարագները մատուցանելով, չէին կրնար մատուցողները կատարեալ (արդար) ընել :

2 Որ թէ անանկ չըլլար՝ ալ ան մատուցանելէն կըդադրէին · ինչու որ՝ (ան մատուցող) պաշտօնեաները մէկ հեղմը սրբըված ըլլալով, ալ անկէ ետև (մեղքի) խըղճմըտանքմը չէին ունենար :

3 Հապա որ՝ տարին տարի ան (պատարագներուն) մէջը նորէն ան մեղքերը կըյիշէին :

4 Ինչու որ, ան նոխազներուն ու ցուլերուն արուներ չէր կրնար մեղքերը մէկիդ վերցընել :

5 Այնոր համար՝ ինքը աշխարհք որ պիտի գար մտնար՝ ըսաց· զոհեր ու պատարագներ (դուն) չկամացար, հապա՝ ինծի մարմին հատատեցիր (տըվիր) :

6 Ողջակէզները ու մեղայ համար զոհերը՝ քեզի հաճոյ չեղաւ :

7 Այնտեղը ըսի որ՝ հիմա եկա, (ինչպէս) գրքերուն խօսված-

զրեա՛լ է վասն իմ, առնել ըզ-
կամս քո՝ ա՛ծ :

8 Վերադոյնն ասէ, թէ ընդ
գոՀս, և ընդ պատարագս, և
ընդ ողջակէզս, և ընդ վասն
մեղացն ո՛չ հաճեցար, և ո՛չ
կամեցար. որք ըստ օրինացն
մատչէին :

9 Ա՛պա ասէ՝ ահա՛ասկի
գամ առնել զկամս քո ա՛ծ :
մերժէ զառաջինն, զի զերկ-
րորդն հաստատեսցէ :

10 Որով կամաք և մե՛ք սրբ-
բեցաք՝ ՚ի ձեռն պատարագի
մարմնոյն յի՛սքն միանգամ :

11 Եւ ամենայն քահանայա-
պետ՝ կայ հանապազորդ ՚ի
պաշտաման, և զնո՛յն պատա-
րագս մատուցանէ բազո՛ւմ ան-
գամ, որք ո՛չ երբէ՛ք կարող են
բառնալ զմեղս :

12 Իսկ աս՝ զմի՛ն վասն մե-
ղաց մատոյց պատարագ, և
մ՚շտնջենաւո՛ր նստաւ ընդ աջ-
մ՚ կո՛յ :

13 Եւ այսուհետև ակն ու-
նի՝ մինչև զիցի թշնամիք իւր
՚ի ներքոյ ոտից իւրոց :

14 Քանզի միով պատարա-
գաւ կատարեաց զսրբեալսն ՚ի
մ՚շտնջենաւորս :

15 Ա՛յլ վկայէ մեզ և հո-
գին սո՛ւրբ՝ յետ ասելոյ յառաջա-
գոյն,

16 Եթէ այս է ուխտն՝ զոր
եղիցի ընդ տարս նոցա, յետ
աւուրցն այնոցիկի՝ ասէ տր.
տա՛յց զօրէնս իմ ՚ի միտս նո-
ցա, և ՚ի խորհուրդս նոցա
զրեցից զնոսա :

17 Ա՛յս ասէ՝ թէ զմեղս
նոցա և զանօրէնութիւնս նո-
ցա՝ այլ ո՛չ ևս յիշեցից :

18 Իսկ ուր թողութի՛ւն է,
քի՛ն մե՛ջը մ՚նա՛ծ չէ համար զրվա՛ծ է,
որ քու կամքդ ընեմ՝ ա՛ծ :

8 Առաջ վերը կըսէ թէ՝ զո-
հերն ու պատարագները ու ոխ-
ձակէզները ու մեղաց համար ե-
ղածները չէ՛ հաճեցար ու չեկամ-
ցար. ան՝ որ (աս բաները) օրէնքին
(ըսածին) պէս կըմատուցվէին :

9 Յետը կըսէ, տ՚նա՛ կուգամ
որ քու կամքդ ընեմ՝ ա՛ծ : առ-
ջի բաները մէկդի կըձգէ՝ որ երկ-
րորդը հաստատէ :

10 Ան (այ) կամքովը՝ յի՛ր քի՛ր
մարմնուն մէկ անգամ պատարագ-
վելովը մենքալ սրբըվեցանք :

11 Ա՛յնպէս, ամէն քահանայա-
պետ ամէն իւրիր պաշտմունքի
հետ ըլլալով, ու ան պատարագ-
ները շատ անգամ մատուցանե-
լով՝ էսկի կարող չէն մեղքերը
մէկդի ջնջել :

12 Հայց ասիկա՝ մեղքերու հա-
մա՛ր միան մէկ պատարագմը մա-
տուցանելով, ալ միշտ հ՚նա-
պազ (գնաց) այ աջ դին նստաւ :

13 Ու ասկէ ետև ալ անոր կըս-
պասէ՝ որ իր թշնամիները իր ո-
տաց ներքև կոխելիք զրվին :

14 Ինչու որ՝ ան մէկ պատարա-
գովը, միշտև՚նապազ կատարե-
ալ ըրաւ անով մաքրըվածները :

15 Ու ան բանը՝ հոգին սո՛ւրբ
մեզի կըվկայէ, որ ան՝ առաջ ը-
սելէն ետև,

16 Թէ աս է դաշինքըս՝ որ ան
օրերէն ետև անոնց տարերնուն
հետ պիտի դնեմ. (ար՝) իմ օրինք-
ները անոնց մտքին մէջ պիտոյ
դնեմ, ու իրենց (սրտին) խորուր-
դին մէջը անոնք պիտի գրեմ :

17 Յետը կըսէ. թէ անոնց
մեղքերն ու իրենց անօրէնութի՛ն-
ները էլ յիշեմ՝ :

18 Ասոնի ուր որ (մեղաց) թո-

ոչ ևս պիտոյ է վասն ղ ա ։ պատարագ ։

19 Վասնիմ այսուհետև ե՛ր բարք՝ համարձակութիւն ի մուտս սրբութեանցն արեամբն յի ։

20 Օ՛ր նորոգեաց մեզ ճա նապարհ նորոգ և կենդանի՝ ի ձեռն վարագուրին, այսինքն ՝ մարմնոյն իւրոյ ։

21 Եւ քահանայ մեծ՝ ի վե րայ տանն այ ։

22 Մատիցուք ճշմարիտ սրտիւք, լցուխթամբ հաւատոց, լուացեալ գսիրտս ի խղճէ չարեաց՝ և մերեալ զմարմին ի ջուրն սրբութեան։

23 Պինդ կալցուք զխոստո վանութիւն անշարժ յուսոյն. զի հաւատարիմ է որ խոստա ցաւն ։

24 Եւ զգուշասցուք մի մեանց յորդորմամբք սիրոյ՝ և գործոց բարեաց ։

25 Եւ մի թողցուք ժողովս միմեանց, որպէս սովոր են ա մանք. այլ մխիթարեսցուք, և այնչափ ևս առաւել՝ որ չափ տեսանիցէք գօրն մեր ձեալ ։

26 Օ՛ի կամակար մոաք ե՛ք յանցանիցեմք յետ ընդու նելութեան գիտութեան ճշմարտութեանն՝ այնուհետև ոչ ևս պիտոյ է վասն մեղաց պատարագ ,

27 Այլ ակնկալու թիւն գատաստանին, և նա խանձ հրոյն՝ որ ուտիցէ զհա կառակորդսն ։

28 Անչամարհեալ ուրուք զօրէնսն մովսիսի , առանց ո ղորմին է, (հոն՝ ալ) մեղքի հա մար պատարագ պիտիը չէ ։

19 Ուստի ալ ե՛ղբարներ՝ յի արուեստիը մենք ազատ ենք՝ հա մարձակ ան սրբութին սրբոցը մտնալու ·

20 Այն նոր՝ ու կեանք տրվոյ ճամբուին որ նորէն մեզի (ցրցուց բացված) վարագուրովը · այս ինքն՝ իր մարմնովը ։

21 Ու (ասանկ) մենծ քահա նամբ (ունենալով) այ տանը վրա (կեցած) ,

22 (Ալ իրեն) դիմենք պարզ սրտով, լեցուն հաւատքով· սրբ տերնիս չար գործքերու խղճմ տանքէ վըլանալով , ու մար միննիս սուրբ ջրովը միրտելով ։

23 Անմուր բռնենք ան (մեզի) յոյս տրվոյ դաւանութիւնը՝ ա ւանց անկէց շարժելու · ինչու որ՝ ան (մեզի) խօսք տրվողը՝ իր խօսքը կրբառնէ ։

24 Ու հոգ ունենանք յորդո րելու որ մէկ զմէկ սիրենք՝ ու բարի գործքերու հետ ըլլանք ։

25 Ու մեր մէյտեղ ժողովքի (գալը) չի թողունք, ինսոր որ ո մանք սովոր են ընել . հապա (մէկմէկու) սիրտ տանք . ու աս անչափ ալ էվէլլի, քանի որ (դուք ան) օրը մօտիկցած կրտեսնէք ։

26 Պատճառը, թէ որ (մենք) բուն մեր կամքով ճշմարտութի նին գիտութիւնը ընդունելէն ետև՝ մեզք գործելու որ ըլլանք, ալ անկէ ետև մեզքերու համար պա տարագ պիտիը չըլլար ։

27 Հապա՝ ալ (կըմընա) ա հաւոր դատաստանին ըսպասել . ու ան կրսկսած կրակին, որ (այ) ներչակ կեցողները պիտոր լարէ ։

28 Մէկը որ՝ մովսէսին օրէն քը բանի չէր սեպէր, առանց

ղըմռւթեանց՝ առ երկուք կամ երիւք վկայիւք յառնէը :

29 Իսկ որչափ սաստիկ պատժոց արժանի համարիցիք զայն, որ զորդին Այ առ ոտն եկար, և զարիւն նորայ ուխտին խառնակ համարեցաւ՝ որով սրբեցաւն, և զՀոգին շնորհացդ թշնամանեաց :

30 Այլ զիտեմք զայն որ ասացն . իմ են վրէժխնդրուիթիւնք՝ և ես հատուցից, ասէ Տէր . և դարձեալ՝ թէ, դատիր Տէր զժողովուրդ իւր :

31 Այ՛հ մեծ է անկանիլ ՚ի ձեռս Այ կենդանւոյ :

32 Այլ՝ յիշեցէք զաւուրսն զառաջինս , յորս լուսաւորեալք բազում ճգանց և չարչարանաց համբերէք .

33 Մերթ՝ ՚ի նախատինս և ՚ի նեղութիւնս խայտառակեալք, մերթ կցորդք այնպիսեաց վաստակաւորացն լինել :

34 Քանզի և ընդ կապեալս չարչարեցարուք, և զափրշտակութիւն ընչից ձերոց խընդութեամբ ընկալարուք . քանզի գիտէիք թէ լաւագոյն ևս ոտացուածս ունիք անձանց յերկինս, ուր կանն և մնան :

35 Այլ՝ մի մերժէք ՚ի ձենջ զհամարձակութիւնն ձեր, յորում կայ մեծաց վարձուց հատուցումն :

36 Պէտ ի ձեզ համբերութիւն . զի զիտեմս այ արարեալ՝ հաճիք առեսցին :

37 .Ո ի փոքր մեւս ևս քան որչափ, որ գալոյն գայ՝ եկեսցէ, և ո՛չ յապեսցէ :

վրան մեղքննալու՝ երկու կամ իրէք հոգւով վըայութիւնով անկա կըմեռցընէին :

29 Այլ որքան սաստիկ պատժու արժանի կըսեպէք ան՝ որ այ որդին ոտաց տակ առնէ, ու անոր ուխտ ու դաշինքի արունը ցած բանմը սեպէ, որ ինքը անով սրբըվեցաւ, ու շնորք տըվող հոգւոյ որ քամահրէ :

30 Այն որ՝ (մենք) անիկա՝ գիտինք որ ըսաց . ոխ առնելը ինծի կիյնա, ու հատուցումը ես պիտի ընեմ, կրսէ Տէրը : ու միւս՝ ան՝ թէ Տէր է որ իր ժողովուրդը կըդատէ :

31 Սաստիկ սչաւոր բան է կենդանի այուն ձեռքը իյնալը :

32 Ուստի մտիկդիր բերէք ան առջի առեններըն՝ որ (դուք) լուսաւորուած՝ շատ վիշտերու ու չարչարանքներու համբերեցիք .

33 Երբեմն նախատանքներով ու նեղութիւններով ամօթը ձեզ առած, երբեմն ալ անանկ բան քաշողներուն հաղորդ եղած :

34 Ինչու որ՝ կապվածներուն հետ՝ (դուքալ) միյտեղ չարչըրկեցաք, ու ձեր բաներն որ յափըշտակեցկն՝ ուրախ սրտով համբերեցիք. գիտնալով որ դուք (անով) ձեզի էվէլի լաւ հարստութիւն ունիք երկինքը, որ չեն կեցէր կրմնան :

35 Ուրեմն ձեզմէ մի թողուք ձեր յուսոյն վըստահութիւնը· որ ան շատ մեծ վարձքի հատուցում ունի :

36 Պէտկէ որ դուք համբերէք· որ այ կամքը ընելով՝ (անոր) խոստմունքը ձեռք ձգէք :

37 Ինչու որ՝ այ ասկէց քըչէկմը առենէն ետև՝ ան որ գալու էր՝ կուգա, ու չհուշանար :

38 Օ՛ի արդարն իմ՝ի հաւատոյ կեցցէ. և եթէ յետկմիտ եղէ, ոչ հաճեսցի ընդ նա անձն իմ:

39 Իսկ մեք ոչ եմք երկմտութեամբ եմք՝ի կորուստ, այլ հաւատովք՝ի փրկութիւն հոգւոյ:

38 Որ, իմ արդարը (կըսէ), հաւատքէն պիտոր ապրի. ու թէ որ մէկը երկու մտքով է՝ ան իմ անձիս հաճոյ պիտի չըլլա:

39 Իսկ մենք չէ թէ երկու մտքի վրա ենք՝ որ կորսըվինք. հապա՝ հաւատք ունինք որ ան հոգիներս կըփրկէ:

Գ Լ · Ժ Ա ·

1 Օ՛ր՞ն է հաւատք, եթէ ոչ՝ յուսացելոյ իրաց հաստատութիւն, և յանդիմանութիւն որոց ոչն երևին:

2 Օ՛ի նովաւ վկայեցան առաջինքն:

3 Հաւատովք իմանամք հաստատեալ զյաւիտեանն բանիւ այ, յաներևութից զերևեալս եղեալ:

4 Հաւատովք լաւ պատարագ առաւ Հաբէլ քան զկայէն մատուցանէր այ, որով վկայեցաւ իսկ արդար լինել · զի՝ի վրայ պատարագացն եղև վկայութիւն նմա յայ. զի թէպէտ և մեռաւ՝ի նմին, սակայն տակաւին խօսի:

5 Հաւատովք Ենովք փոխեցաւ, զի մի զմահ ճաշակեսցէ. և ոչ ուրեք գտանէր, քանզի փոխեաց զնա ած. և յառաջ քան զփոխելն նորա՝ վկայեցաւ հաճոյ լինել այ:

6 Իսկ առանց հաւատոյ՝ անհնար է հաճոյ լինել. այլ հաւատալ արժան է այնմ որ մերձենայ առ ած՝ թէ է ած. և որ խնդրէն զնա՝ լինի պարգևատու:

1 Հաւատքը ի՞նչ է, թէ չէ՝ որ յուսացած բաներուն հաստատ ըլլալը. ու զմայզմ ցուցվածքը ան բաներուն որ չեն երևնար:

2 Որ անով առջի մարդիքը՝ (բարի) վկայութիւն ունեցան:

3 Հաւատքով (մենք) կըմանանք որ ան յաւիտեանք (գարերը) այ խօսկովը հաստատուած կեցան, (որ) չերևցածներէն աս երևցածները եղան:

4 Հաւատքով՝ աբէլը կայէնէն էվէլի լաւ պատարագ մատուց, որ բուն անով վկայեցաւ (իր) արդար ըլլալը. որ իրեն պատարագներուն համար ածայ բարի վկայութիւն տըվաւ. որ ին քը իրա՛ մեռաւ, բայց ան ըրած բանովը (դեռ) կըխօսի:

5 Հաւատքով Ենովքը (աշխըրքէ) վերցաւ, որ մեռնելու համր չտեսնէ. ու (ան իսկի) մէկ տեղմըն չէր գտնըվէր, ինչու որ՝ ած ինքը (տեղէն) վերուց. ու իր վերցըվելէն առաջ՝ վկայվեցաւ որ այ հաճոյ է:

6 Անանկ որ՝ առանց հաւատքի անկարելի է (այ) հաճո ըլլալ. հապա՝ ան որ այ կըմօտիկնա, պէտք է որ հաւատա թէ ած կա. ու ան որ անոր ետևէ կըլլա՝ իրեն պարգև կըհատուցանէ:

7 Հաւատովք առեալ Նոյ՝ զբանն Աստուծոյ վասն այնոցիկ՝ զորս ոչ տեսանէր դեռ, եւ երկիւղած եղեալ՝ պատրաստեաց տապան ի փրկութիւն տանն իւրոյ, որով դատեցաւ զաշխարհ. եւ հաւատոյն արդարութեան եղեւ ժառանգաւոր:

8 Հաւատովք՝ որ կոչեցաւ Աբրահամ՝ հնազանդեցաւ ելանել ի տեղին զոր առնուլոց էր ի ժառանգութիւն. եւ ելանէր՝ եւ ոչ գիտէր յո՞վ երթիցէ:

9 Հաւատովք պանդխտեցաւ յերկիրն աւետեաց՝ իբրեւ յօտարութեան, խորանօք բնակեալ սահակաւ եւ յակովբաւ հանդերձ՝ ժառանգակցօք նոյնի աւետեաց:

10 Քանզի ակն ունէր ի քաղաքին, որոյ հարտարապետ եւ արարիչ Աստուած է:

11 Հաւատովք եւ ինքն Սառա՝ որ ամուլն էր, զօրութիւն առնոյ զսերմն որդեծնութեան՝ ընդունէր, եւ ի տարիս ժամու ծնանէր. քանզի հաւատարիմ համարեցաւ զայն որ խոստացաւն:

12 Վասն որոյ եւ ի միոջէն ծնանէին, եւ այն՝ ի յանցեալ ժամանակի, իբրեւ զաստեղս երկնից բազմութեամբ եւ իբրեւ զաւազ առ ափն ծովուս առանց թուոյ:

13 Ըստ հաւատոց մեռան ամենեքին սոքա, եւ չեհաս ընկալեալ զաւետիսն. այլ ի հեռուստ տեսին զնոսա՝ եւ ցնծացան, եւ խոստովան եղեն՝ եթէ

7 Հաւատքով Նոյը՝ դեռ չերեւցածներուն վրայովը՝ (այ) հրամանը լսելով որ աշխարքս պիտի պատժէր՝ աշուղդողով ինքզինքը ան տապանը շինեց՝ իր տունը տեղը խալըսելու. ու Աստուածմէ ան արդարութիւնը որ հաւատքով կըլլա:

8 Հաւատքով՝ երբոր Աբրահամը կանչըվեցաւ, ինքզինքը խօսկ մըռեց ան տեղը երթալու, որ (եաև) անիկա պիտի Աստուծմէր. ու ելաւ գնաց, առանց գիտնալու որ ուր կերթայիր:

9 Հաւատքով՝ պանդխտի պէս կեցաւ ան աւետմունքի երկիրը, մկի օտարականիմի պէս վրաններու նէրքև բնակված, իսահակին ու յակոբը մէյտեղ որ անոնքալ հետը աւետմունք ժառանգեցին:

10 Պատճառն որ՝ աչկը ղրեր էր որ՝ հիմը հաստատ քաղաք պիտոր շինվի. որ Աստ անոր հարտապետը ու շինողը պիտի ըլլա:

11 Հաւատքով՝ սառանալ՝ որ ամուլ էր, կարողութիւն ունեցաւ տղաբերքի համար սերմ առնելու. ու իր հասակին չափին դուրս՝ տըղա կրբերբը. ինչու որ՝ հաւատարիմ սեպեց ան (իրեն) խօսկ տրվողը:

12 Ասոր ալ՝ ան մկ հոգիէն միայն՝ որ (ծերացած) իր ժամանակին անցուցած էր, երկրքի աստղերունպէս շատոր կրծնէին, ու ծովեզերքի աւազի պէս առանց համրանքի:

13 Այսոնք ամէնքը հաւատքի մէջ մեռան, դեռ ալ ան աւետմունքը ափ չեձգած. հապա՝ ան հեռուէն տեսան՝ ու զոհ եղան. ու ան ադէկ ձանչցան ըսին որ ի-

օտարք և պանդուխտք են յեր-
կրի :

14 .Օ.ի որք զայնպիսիսն խօսին, յայտ առնեն՝ եթէ զա-
տութ իւն ինդրեն :

15 .Օ.ի եթէ զայն յիշէին ուստի ելեն, գոյր ժամանակ դառնալոյ անդրէն :

16 Կա՛ւ՝ աւանիկ ազնուա-
կանի իւն ցանկացեալ են, այս
ինքն է՝ երկնաւորին . վասն
որոյ ոչ ամօթ համարի Ած՝ կո-
չել Նոցա Ած . քանզի պատ-
րաստեաց Նոցա քաղաք :

17 Հաւատովք մատոյց աբ-
րահամ՝ ի փորձութեան իւ-
րում զիսահակ պատարագ . և
զմիամօրն մատուցանէր, որոյ
զաւետիսն ընկալեալ էր ·

18 Որում ասացաւն, թէ
սահակաւ կոչեսցի քեզ զաւակ:
19 Նդ ի մտի իւրում, թէ
և ի մեռելոց կարող է յարու-
ցանել Ած . ուստի և յառակս
իսկ ընկալաւ զնա :

20 Հաւատովք վասն ՀՆՆ-
դերձելոց իրաց՝ օրհնեաց իսա-
հակ՝ գյակովբ և զեսաւ :
21 Հաւատովք յակովբ ի
մեռանելն իւրում, զիւրաքան-
չիւրսք յորդւոցն յոսեփու
օրհնեաց, և երկիր եպազ ի
ծագ գաւազանի իւրոյ :
22 Հաւատովք յոսկէփ ի
վախճանել իւրում ՝ յիշեաց
զելս որդւոցն իսրայէլի, և վասն
ոսկերաց իւրոց պատուիրեաց :

23 Հաւատովք ՝ զմովսէս
իբրև ծնան, թաքուցաւ ամիս
երիս ի հարց իւրոց · քանզի
բինք երկրիս վրա օտարական ու
պանդուխտ են :

14 Պատահաւը, անոնք որ ա-
նանկ բաներ խօսեցան՝ (անով)
յայտնի կրցրցուներն որ մկ (ուրիշ
երթալու) տեղ մը կրփրնտռեն :

15 Հապա թէ որ (իրենց) յիշա-
ծը ան էր ուսկից որ ելան, ատեն
ունէին նորէն (Հոն) դառնալու :

16 Իսյց (էվէլի) ազնիվ բա-
նիմ ընէր իրենց բանտանքը, այս
ինքն՝ երկնային (տեղուն) · ուստի
Ած ալ իրեն ամօթ չի սեպեր ա-
նոնց Ածը ըսվելու · որ՝ իրենց
քաղաքալ պատրաստեց :

17 Հաւատքով աբրահամ՝
իր՝ (աստուծմէ) փորձըվելու ա-
տենը՝ իսահակը պատարագ մա-
տուց · ու ան՝ մօրը մկհյաւիկն
էր որ կրմատուցանէր, որ անոր
վրայով աւետմունքը առեր էր·

18 Որ իրեն ըսված էր թէ՝ ի-
սահակով քու սպրդ կանչվի :

19 (Որ ալ ինքնաբ) ասանկ
կրմտածար որ՝ Ած կրընա (անի-
կա) մեռելներէն նալ յարուցնել
առնել տալ : ուստի անիկա նմա-
նութենովմբ (ինքը) ընդունեց :

20 Հաւատքով իսահակ՝ ետ-
կէն ըլլալիք բաներու վրայով՝
օրհնեց յակոբն ու եսաւը :

21 Հաւատքով յակոբը մե-
նելու որ եղաւ՝ յոսեփի որդիքը
մկիկ մկիկ օրհնեց, ու իր գա-
ւազանին ծարը (կրոթրնած՝)
երկրպագութեն ըրաւ :

22 Հաւատքով յոսեփը իր
վախճանելու ատենը, յիշից իս-
րայէլի որդոց (եղիպտասէն) ելլե-
լը, ու իր ոսկրտանցը վրայով
(ընելիքը՝ անոնց) ապրսպրնեց :

23 Հաւատքով՝ երբոր մովսէ-
սը ծնաւ, իր ծնողքը իրեք ամիս
(անիկա) գաղտուկ պահեցին ·

տեսին կայտառ զմանուկն , և ոչ զանգիտեցին ի հրամանէ թագաւորին :

24 Հաւատովք մովսէս իբրև աճեաց՝ ուրացաւ կոչել որդի դստերն փարաւոնի .

25 Լաւ ցամարեցաւ չարչարել ընդ ժողովրդեանն այ, քան առ ժամանակ մի վայելել ի մեղս :

26 Կարևւր համարեցաւ ըզնախատինսն քրիստոսի , քան զմեծութիւն գանձուցն եգիպտացւոց · զի հայեցեալ ակն ունէր վարձուցն հատուցման :

27 Հաւատովք թողայր զերկիրն եգիպտացւոց , և ոչ երկնչէր ի ցասմանէ թագաւորին · զի զաներևոյթն իբրև զտեսեալ համբերութեամբ համարեցաւ :

28 Հաւատովք արար զպատիկն և զհեղումն արեանն . զի մի սատակիչն անդրանկաց մերձենայցէ ի նոսա :

29 Հաւատովք անցին ընդ ծովն կարմիր՝ իբրև ընդ ցամաք երկիր . զորոյ զփորձ առեալ եգիպտացւոցն՝ ընկղմեցան :

30 Հաւատովք պարիսպքն երիքովի անկան , շուրջ եկեալ զնոքօք գետին օր :

31 Հաւատովք բախաբ պոռնիկ ոչ կորեաւ ընդ անհաւատսն , որոյ ընկալեալ էր զլրտեսնն՝ խաղաղութեամբ :

32 Եւ արդ՝ զինչ եւս ասացից · զի չէ բաւական ժամանակ պատմել , վասն զեդեոնի, բարակայ, սամփսոնի, յեփթայեայ, դաւթի, և սամուելի , և այլոց մարգարէիցն :

պատճառաբ. տեսան որ մեկ կայտառուկ (աղվոր) տղեկ՝ընէր· ու թագաւորին հրամանքէն չվախծան:

24 Հաւատքով՝ մովսէսը որ մենծցաւ՝ ալ չուզեց փարաւոնի սխէրկանը որդի ըսվիլ.

25 Ավ աղեկ սեպեց որ այ ժողովրդին հետը չարչարվի , քան թէ քիչմը ատեն մեղքի վայելմունք ընէ :

26 Էվելի մենծ սեպեց քրիստոսի նախատինքները՝ քան թէ եգիպտացոց հարստ գանձերը · որ վարձքերուն հատուցմունքին աչքը դրած կըսպասէր :

27 Հաւատքով՝ (ինքը՝) եգիպտացոց երկիրը թողուց, ու թագաւորին բարկանալէն չվախծաւ. ինչու որ՝ համբերութենով կեցած՝ չերևցած բաները տեսածի պէս կըսեպէր :

28 Հաւատքով զատիկը ըրաւ, ու (զաւրն) արուն ցըցրըվելը , որ ան առջինեկներու սատկեցըողը՝ իրենց չվնասիներ :

29 Հաւատքով կարմիր ծովէն անցան ինչպէս մեկ ցամաք գետնիմը վըսյով · որ եգիպտացիներն՝ ալ ան (ուզելով) փորձել՝ ջրին տակը ինկան :

30 Հաւատքով երիքովին պարիսպները վար եկան , շրջան օր անոր քովերէն պտըտելով :

31 Հաւատքով ախաբ պոռնիկը՝ անհաւատ (իր քաղքցինեըրուն) հետ չկորսըվեցաւ . ինքը ան լրտեսները խաղաղ քովը պահելով :

32 Ասսի՝ ալ ինչ էվելի ըսեմ, որ աատները հերիք չէ պատմելու , գեդեոնին վըսյովիալ՝ բարակին, սամփսոնին , յեփթայէին, դաւիթին , ու սամուէլին, ու ուրիշ մարգարէներուն .

33 Որք հաւատովք պար-
տեցին զթագաւորութիւնս ·
գործեցին զարդարութիւն· հա-
սին առեալ. խցին զբերանս
առիւծուց :

34 Շիջուցին զզօրութիւն
հրոյ · սպրեցան ՚ի բերանոյ
սրոյ · զօրացան ՚ի տկարութէ.
եղեն զօրաւորք ՚ի պատերազմի,
առին զբանակս օտարաց :

35 Ընկալան կանայք ՚ի յա-
րութենէ զմեռեալս իւրեանց :
Իսկ ոմանք կոչնձեցան՝ և չէին ըն-
կալեալ զիրկութէն, զի լաւա-
գոյն յարութեն հասանիցեն :

36 Եւ ոմանք զտանջանաց
և զանից գիտուրս առին, զկա-
պանս և զբանտից :

37 Քարկոծեցան, սղոցեցան,
փորձեցան · սպանմամբ սրոյ
մեռան · շրջեցան լաչխամաշ-
կօք՝ և մորթովք այծենեօք,
կարօտեալք, նեղեալք, չար-
չարեալք :

38 .Օ որս ոչ արժէ աշ-
խարհս · յանապատի մոլո-
րեալք, և ՚ի լերինս, և յայրս,
և ՚ի փոսաբս երկրի :

39 Եւ սոքա ամենեքին վը-
կայեալք ՚ի հաւատոցն, չէին
ընկալան գաւեհան .

40 Այ վասն մեր լաւագոյն
տեսանելոյ, զի մի առանց մեր
կատարեսցին :

33 Որ իրենք հաւատքով թա-
գաւորութիւններ եխտեցին, ար-
դարութիւն գործեցին, աւետ-
մունքով խօսք տրված բաները
ձեռք ձգեցին. առիւծներուն բե-
րանը խըթկեցին :

34 Կրակին ուժը մարեցին .
թրբի բերնէն խալըսեցան. իրենց
տըկարութիւնէն ուժովցան. պա-
տերազմի մէջ զօրեղ եղան, օ-
տար ասպրեու բանակները առին :

35 Կնքթիքը իրենց մեռելները
ոսկ դարձած առին. կէսմը մար-
միոնիներն կոչկըռվեցան՝ ու չու-
զեցին ազատվել, որ՝ ան լաւ յա-
րութիւն առնելուն հասնին :

36 Ու կէսմընալ տանջանք-
ներով ու ծեծերով փորձվե-
ցան, կապերով ու բանտերով :

37 Քարկոծվեցան, սըղոցվե-
ցան · փորձութիւններու լըծվե-
ցան · թրով բսպանված մեռան.
ոչխարի կաշիէ (չգված), ու ածու
մորթիներ վըրանին՝ անանկ պտը-
տեցան՝ կարօտութիւնի մէջ, նե-
ղը ինկած, չարչըրկված :

38 Որ աշխարքը անոնց ար-
ժանի չէ· (իրենք) անապատի մէջ
մոլըրած, ու լեռներու ու քարա-
ժեռներու, ու երկրի ծակերու :

39 Ու սոսնք ամմինքը (բարի)
հաւատքովնին վկայված, դեռ ան
աւետմունքը ափ չենգցին .

40 (Որ անանկը՝) ած ալ աղէկ
սեպեց մեզի համար, որ առանց
մեզի՝ կատարեալին չի հասնին :

Գ·Լ· Ժ·Ի·

1 Ասուտ՝ ալ մենք որ ասքան
շատվոր վըկաներ ունինք
մեր քովերը պատած, բոլոր գո-
ռոզութիւնները մէկդի ձգենք՝ ու
ախտուկիրքէն եղած մեղքերը·

1 Աչս՝ մեզ որ այս-
չափ շուրջ գաւեք մա-
ծալ ունիմք զգացմութիւն
վկայից, զնպարտութիւն զա-
մենայն ՚ի բաց ընկեցուք՝ և

գործս կարևորս . համբերու-
թեամբ ընթանալ ՚ի պատե-
րազմ որ առաջի կայ մեզ :

2 Հայեցարուք ՚ի զօրագը-
լուխն հաւատոց՝ և ՚ի կատա-
րիչն յի . որ փոխանակ ուրա-
խութեանն որ նմա առաջի
կայր . յանձն առ գխաչն, ար-
համարհեաց ամօթն . նստաւ
ընդ աջմէ աթոռոյն ովյ :

3 Մտէք ածէք գմտաւ , որ
զայսպիսի համբերութիւն՝ ՚ի
մեղաւորաց հակառակութենէ
անտի կրեաց՝ զի մի աշխատք
լինիցիք անձամբք ձերովք՝ և
լքանիցիք :

4 Ոչ ՚ի նէին արեամբ չափ
պատերազմեալք՝ հակառակ
կացէք մեղացն :

5 Եւ մոռացարուք զվսե-
թարութիւնն՝ որ ընդ ձեզ խը-
րէ ընդ որդեակս խօսի . որ-
դեակ իմ՝ մի լքանիր ՚ի խրա-
տուս ն, և մի վհատիցիս յան-
ղիմանալ ՚ի նմանէ :

6 Զի զոր սիրէ Տ՝ խրա-
տէ , տանջէ զամենայն որդի
զոր ընդունի :

7 Ի խրատու համբերու-
թեան կայք, իբրև յորդիս մա-
տուցեալ է ՚ի ձեզ Ած . որ
որդի է՝ զոր ոչ խրատիցէ հայր :

8 Ոչ ՚ի նէին առանց խրատու
լինիցիք, որով ամենեքին բա-
ժանորդք եղեն , ապա խորթք
իցէք՝ և ոչ որդիք :

9 Զի նէին ՚ի մարմնաւոր
հարցն մերոց զոր ունիմք խրա-
տիչս՝ պատկառեմք , որչափ
ևս առաւել հնազանդեսցուք
հօրն հոգւոց՝ և կեցցուք :

համբերութենով վազինք ան
պատերազմն (ընդդէմ՝) որ մեր
առջեւ կեցեալ է :

2 Յի՝ որ հաւատոյն զօրագը-
լուխը ու կատարողն է, անոր վրայ
նայինք . որ ինքը ուրախ կեանք
անցունելու տեղը՝ որ իր առջեւը
դրած էր, խաչը անձը առաւ, ա-
մօթը բանի չի սեպեց . (ու ա-
նանկ) ովյ աթոռին աջ դին նստաւ:

3 Միտ ածէք մտածեցէք որ
ասանկ համբերութենի բան ան
մեղաւորներուն (իրեն) դէմ կե-
նալուն պատճառովը կրեց . որ
դուք ինքերնիդ մինակ չշլա-
տիք , ու թուլցած խմայք :

4 Ան որ դուք դեռ ինչվան ա-
րուն թափելու չափ պատերազմ-
լով՝ մեղքին դէմ չէք կեցած :

5 Ու մոռցերէք ան մխիթա-
րանքը՝ որ ձեր հետ (իր) որդի-
կիներուն պես՝ անանկ կըխօսի .
իմ որդեկիկս (կրսէ՝) ան (պատ-
ժոյ) խրատին մի թուլնար խմար-
ու անկէ երեսդ վար տրված՝ թող
սիրարդ չի կոտրի :

6 Պատճառը՝ ան որը մէկն որ
կըսիրէ՝ անիկա կըպատժէ, ամ-
մէն ինչ որդի որ իրեն կընդունի՝
անոր ձեռ կուտա :

7 Պատժուն մէջն որ համբե-
րութենով կենաք, Աստուած իր որ-
դոցը պես ձեր հետը կըվարվի : ան
որ որդին է՝ ան հարը որ չի պատժէ:

8 Որ թէ (դուք) առանց պա-
տիժի ըլլաք՝ ան որ ամմէնքը ա-
նով (իրեն) հաղորդ եղան , ալ
խորթ (դաւակ) կըլլայիք՝ ու չէ
թէ (հարազատ) որդիք :

9 Երբոր (մենք) մեր մարմնա-
ւոր հօրերնէս որ կրպատժըվինք՝
անոնց դլխս կըձըռնինք, ալ որ-
քան էվելի հոգիներուն հօրը պի-
տի հնազանդինք՝ որ փրկըվինք:

10 .Օ.լ սոքա առ սակաւ ժամանակս ըստ կամաց իւրեանց խրատեն· իսկ նա՝ վասն օգտի, առ՚ի ընդունելոյ զըսրբութիւն նորա :

11 Վասնայն խրատ՝ առ ժամանակն ունէ ուրախութեան թուի՝ այլ տրտմութեան· բայց յետոյ պտուղ խաղաղութեան՝ նոսա կրթեցելոցն հատուցանէ յարդարութիւն :

12 Վասն որոյ զեռս լըքեալս՝ և զծունկս կիթատ՝ հաստատեցէք :

13 Եւ գշաւիղս ուղիղս արարէք ոտից ձերոց, զի մի՛ որ կաղն իցէ՝ գլըրիցէ, այլ մանաւանդ բժշկեսցի :

14 .Օ.խաղաղութեան գհետ երթայք ընդ ամենեսին՝ և զըսրբութեան· առանց որոյ ոչ ոք տեսանիցէ գՏր :

15 .Օ գոյշ լերուք, գուցէ ոք յետնեալ գտանիցի՚ի շնորհացն այլ : մի՛ ոք արմատ դառնութե՚ի վեր երևեալ նեղեցէ, և նոսա բազումք պղծիցին :

16 Մի՛ ոք պոռնիկ և պիղծ՝ իբրև զեսաւ· որ ընդ միոյ կերակրոյ զանդրանկութիւնն վաճառեաց :

17 Գիտէք՝ զի թէպէտ և յետոյ կամեցաւ ժառանգել զօրհնութիւնն, խոտան գըտաւ· զի և ապաշխարութեան տեղի ոչ եգիտ, թէպէտ և արտասուօք խնդրեաց զնա :

18 .Օ.լ ոչ էք մատուցեալ առ լեառն շօշափելի, որ չրոիվ վառեալ էր, և միգով, և մառախղով, և խաւարաւ, և մրրիկով .

19 Ձուր փողն հնչէր և բար-

10 Ինչու որ՝ աս (չարերը՝ միան) քիչմը առեն իրենց կամքին ուզածին համար կըզատժեն· բայց անիկա՝ (մեր) շահուն համար, որ իր սրբութենին չաղաըլ ըլլանք :

11 Տեսէք որ՝ համբերողներուն երանի կսւտանք . յոբի համբերութենը լսեցիք , ու վերջը տնը (անոր ըրած հատուցումը) տեսաք . ինչու որ՝ տրը էվէլքէր գթած ու ողորմած է :

12 Իմ եխպարտներըս՝ ամէնէն առաջ՝ նայեցէք որ երդում չընէք . ոչ երկընքին վրայով , ոչ երկրիս , ոչ ալ ուրիշ

ձեր այոյն՝ այո՛, և ոչն՝ ոչ. զի
ամի՛ ի կեղծաւորութիւն ինչ
անկանիցիք:

13 Վ շտանայցէ ոք ի ձէնջ,
յաղօթս կայցէ. բերկրեցի ոք,
սաղմոս ասասցէ:

14 Հիւանդանայցէ ոք ի
ձէնջ՝ կոչեսցեն զերիցունս ե-
կեղեցւոյն, և արասցեն ի վե-
րայ նորա աղօթս. օծցեն ի-
ղով յանունն տն:

15 Եւ աղօթքն հաւատով՝
փրկեսցէ զաշխատեալն, և յա-
րուսցէ զնա տր. և եթէ մեղս
ինչ իցէ գործեալ՝ թողցին
նմա:

16 Խոստովան եղերուք մի-
մեանց զմեղս, և աղօթս արա-
բէք ի վերայ միմեանց՝ որպէս
զի բժշկեսջիք. քանզի յոյժ զո-
բաւոր են աղօթք արդարոյ
յօգնականութիւն:

17 Եղեայ մարդ էր իբրև
զմեզ չարչարելի. և յաղօթս
եկաց, և ոչ տեղեաց յերկիր
զերս ամս և զվեց ամիս:

18 Եւ զարձեալ եկաց յա-
ղօթս՝ և տուն երկինք զանձրև՝
և բուսոյց երկիր զպտուղ իւր:

19 Եղբարք իմ, եթէ ոք ի
ձէնջ մոլորեսցի ի ճանապարհէ
ճշմարտութեան, և դարձուսցէ
ոք զնա,

20 Գիտասցէ զի որ դար-
ձուսցէ զմեղաւորն ի մոլորու-
թենէ ճանապարհէն իւրմէ,
փրկեսցէ զոգի իւր ի մահու-
անէ, և ծածկեսցէ զբազմու-
թիւն մեղաց:

բանի վրա չերդվընաք. չապա՝
ձեր չան՝ չա բլլա, ու չէն՝ չէ.
որ (անով՝ սուտ) կեղծաւորութի-
նիմը մէջ չիյնաք:

13 Չեզմէ մէկը որ նեղութիւնիմը
ունենա, անիկա թող աղօթք ը-
նէ. մէկն որ ուրախութիւնի մէջ
է՝ ան թող սաղմոս երգէ:

14 Չեզմէն մէկն որ հիվընա-
նալու բլլա, եկեղեցիին երէց-
ները թող կանչեն, ու անոր
վրան աղօթք ընեն. թող (ինքը)
եղով օծնեն անոր անունով:

15 Անանկ՝ հաւատքով ըրած
աղօթքը՝ ան ցաւով բանըվածը
կրնայ ըլլալ, ու Տէրը անիկա ոտկ
կրնանչ. ու թէ մեղքեր գործեր-
էնչ՝ իրեն թողութիւն կըլլա:

16 Իրարընիդ մէյմէկու խոս-
տովանեցէք, ու մէյմէկու վրա ա-
ղօթք ըրէք որ բժշկըվիք. պատ-
չառն որ՝ արդարներուն աղօթքը
խիստ զօրաւոր են օգնութիւն հաս-
նելու:

17 Եղիան մեզի պէս թըշվա-
ռութիւններու ներքև կնկած՝ մէկ
մարդմընչեր. ու անոր աղօթքովը
իրեք տարի ու վեց ամիս ատեն՝
երկրի վրա անձրև չինչաւ:

18 Ու մէյմալ նորէն որ ա-
ղօթք ըրաւ, երկինքը անձրև տը-
վաւ, ու երկիրսալ իր բերքը
բուսցուց:

19 Իմ եղբայրներս՝ թէ որ
ձեզմէ մէկը ճշմարտութենի չամ-
բէն դուրս մոլորի, ու ուրիշմը
որ անիկա նորէն դարձունէ,

20 Ան գիտնա որ՝ մէկը որ
մեղաւորմը իր մոլորութենէն
չամբէն ետ դարձունէ, անիկա
իր հոգին ալ մեռնելէն կրնայ
ըլլալ, ու (իր) շատ (գործած)
մեղքերը կրծածակէ:

ԹՈՒՂԹ
ՊԵՏՐՈՍԻ ԱՌԱՋԻՆ

ԳԼ. Ա.

1 ՊԵՏՐՈՍ առաքեալ Յի-
սուսի Քրիստոսի՝ ընտրեալ-
ոց նոցա որ ի ցրուման են
ի Պոնտոսէ, ի Գաղատիա,
ի Կապադովկիա, ի Ասիա
եւ ի Բիւթանիա,

2 ըստ կանխագիտութեան
Աստուծոյ Հօրն՝ սրբութեամբ
Հոգւոյն, ի հնազանդութիւն
եւ ի ցողումն արեանն Յի-
սուսի Քրիստոսի: Շնորհք
ընդ ձեզ եւ խաղաղութիւն
բազմասցի:

3 Օրհնեալ է Աստուած եւ
Հայրն Տեառն մերոյ Յիսուսի
Քրիստոսի, որ ըստ բազում
ողորմութեան իւրում
ծնաւ զմեզ վերստին ի յոյս
կենդանի՝ ի յարու-
թիւն Յիսուսի Քրիստոսի
ի մեռելոց,

4 ի ժառանգութիւն
անթառամ, ժառանգութիւնն՝
որ պահեալ է յերկինս ի ձեզ:

5 Որ զօրութեամբն Աստ-
ուծոյ պահեալ էք հաւատով
ի պատրաստեալ փրկութիւն՝ յայտ-
նեալ ի յետին ժամանակս:

6 Որով ուրախ լինիջիք,
որք այժմ սակաւիկ ինչ՝ ըստ
պատշաճի երացղ՝ տրտմեալ էք
ի պէսպէս փորձութիւնս:

7 Զի հանդէս ձերոյ հա-
ւատոցն առաւել քան զոսկի

1 ՊԵՏՐՈՍ՝ յիսուսի քրիս-
տոսեան առաքեալ. զուարթ, որ ծառայ տեղ-
վանք ցիրուցան եղեալք՝ պոնտա-
ցոց (ազգ), գաղատացոց, ու կա-
պադովկացոց, ու ասիացոց, ու
բիւթանացոց. որ ընտրեալքդ,

2 Հօր այ նախագիտութե-
նովը, հոգուն սրբացուցելովը,
յիսուսի քրիստոսեան՝ որ (ձեր
վրա իր) արունը թափեց: շնորհքն
ու խաղաղութիւնը ձեր հետը է-
վելքդը բլլա:

3 Աստ՝ ան որ մեր տէր յիսուսի քրիստոսեան
հայրն է, ինքը օրհնեալ բլլա.
որ իր առատ ողորմութենովը ը-
րաւ որ՝ յիսուսի մեռելներէն յա-
րութիւն առնելովը, մենք նորէն
ծընինք կենդանի յուսով.

4 Աստ ժառանգութիւնը (առնե-
լու՝) որ չաւրրվիր, ու չի ապա-
կանիր, ու չի թոռամիր. ան որ եր-
կինքը ձեզի համար պահած կեցնէ:

5 Որ այ զօրութենովը կըպահ-
վիք հաւատքով (ձեզ ձգելու)
ան փրկութիւնը՝ որ պատրաս-
տած էր եսկի ժամանակները
յայտնվելու:

6 Որ անով (պիտի) ուրախ բլ-
լաք, ան որ հիմա՝ ինչպէս բանը
կրբերէ, քիչ մը տրտմած էք
կերպ կերպ փորձութիւններու մէջ
ինկած:

7 Ան որ՝ ձեր հաւատուն փոր-
ձառութիւնը (աշխրքքիս) կորչը-

կորստական պատուակին է. որ հրով փորձեալ՝ գտաւ ՚ի զուարթութիւն և ՚ի փառս և ՚ի պատիւ՝ ՚ի յայտնութեանն յիւր քրիստոսէ :

8 Որ ոչն տեսէք՝ և սիրեցէք. ընդ որ այժմ ոչ հայեցեալք, բայց հաւատացէք. և ուրախ էք անճառ և փառաւորեալ խնդութեամբն.

9 Ընկալեալ գկատարումն հաւատոցն ձերոց՝ զոգւոցն փրկութիւն :

10 Վասն որոյ փրկութեան խնդրեցին և քննեցին մարգարէքն, որք վասն որոյ ՚ի ձեզ լինելոցդ էին շնորհքն՝ մարգարէանային :

11 Քննէին յորմէ՞ և յորպիսի ժամանակի զուշակէր ՚ի նոսա հոգին քրիստոսի. որ նախ՝ չարչարանացն քրիստոսի վկայէր, և յետ այնորիկ՝ գփառացն :

12 Որոց և յայտնեցաւ իսկ. զի ոչ ինքեանց, այլ մեզ մատակարարէք լինէին, նոցին՝ որք այժմ պատմեցան, այնոքիւք որք աւետարանեցինն ձեզ՝ հոգւովն որըմէ՝ որ առաքէրն յերկինից. զոր ցանկային տեսանել գնեայ ընդ աղօտ հրեշտակք :

13 Որով պնդեալ զմիջս մտաց ձերոց՝ զուարթացեալք, բովանդակ սպասեցէք հասելոց ձեզ շնորհացն ՚ի յայտնութեանն յիւր քրիստոսէ :

14 Իբրև զորդիս հնազանդութեան, մի կերպարանեալք առաջին ձերովք անգիտութեանն ցանկութեամբք :

15 Այլ ըստ սրբին որ կոչեաց ասկիէն էվէլի պնիւմ է, որ կրթակով (ալ) փորձված՝ (ձեզի) գոլութենի ու փառքի ու պատուոյ պատճառ կըլլա՝ յիւր քրիստոսէ յայտնըվելուն առնելը :

8 Որ ինքը չէ տեսած՝ ու սիրեցիք. հիմայալ որ ինքը չէք տեսնար, բայց կըհաւատար. ու ուրախ էք՝ անանկ փառաւոր խընաւմով որ չէ պատմվելը.

9 Ձեր հաւատուն վերջին վարձկը ձեռք ձգելով, (որ) հոգիներնուդ փրկութինն (է) :

10 Որ ան փրկութինին վրայովը մարգարէները եաւէ կկրնային ու կըմտմտային, երբոր ան ձեզի ըլլալիք շնորքին համար որ կըմարգարէանային :

11 Անանկ քննելով՝ քրիստոսի հոգին իրենց մարգարէանալ կուտար՝ թէ ինտոր ու որ տաեն պիտի ըլլար՝ առաջ քրիստոսի չարչարվելը, ու անկէ ետև իր փառաւորվելը :

12 Ու անոնց ատալ յայտնըվեցաւ, որ ան իրենց համար չէր, հապա մեզի համար որ ան բաները մեզի մատակարարեն, ան՝ որ հիմա պատմվեցան անոնց ձեռքով որ ձեզի աւետարանեցին, ան հոգուն սըչ ուժովը՝ որ երկինքէն խըրկըվեցաւ : ան որ (աս բաները) գոնե շուքովմը տեսնելու՝ հրեշտակները կըքաիծային :

13 Ասոր ալ ձեր մտացը (հոգուն) ժիջը պինտ կապած, զարթնուն ըսգաստ՝ կատարեալ յուսով ըսպասեցիք ան ձեր վրա գալու հասնելու շնորացը՝ յիւր քրիստոսէ յայտնըվելուն առնելը :

14 Հնազանդ որդոց պէս՝ (ըզգուշ եղէք) որ՝ վարմունքնիդ ան ձեր առջի տգիտութինին առնի ցանկութիններովը չըլլա :

15 Հապա՝ ան որ ձեզ կանչեց՝

չեաց զձեզ, և դուք սուրբք յամենայն գնացս ձեր լինիջիք:

16 Վասն որոյ գրեալ է, եթէ եղերուք սուրբ՝ զի ես սուրբ եմ:

17 Եւ եթէ հայր կոչեցէք զայն, որ առանց ակնառուբեանն դատի ըստ իւրաքանչիւր գործոց, ապա երկիւղիւ դեբրոյն պանդխտութեան ժամանակի գնասջիք:

18 Գիտասջիք, զի ոչ ապականացու արծաթիեղինօք՝ և ոսկիեղինօքն փրկեցարուք ի ձերոց ունայնութեան հայրենատուր գնացիցն·

19 Այլ պատուականն արեամբն քրիստոսի, իբրև անբիծ և անարատ գառին:

20 Որ յառաջծանօթի էր նախ քան զհիմնադիր աշխարհի· և երևեցաւ ի վախճան ժամանակաց վասն ձեր:

21 Որք նովաւ հաւատացեք յԱստուած, որ յարոյց զնա ի մեռելոց, և ետ նմա փառս· զի հաւատքն ձեր և յոյս՝ լցեն յԱստուած:

22 Ողանձինս ձեր սրբել հնազանդութեամբն ճշմարտութեան հոգւոյն, յերկրայսրութեան առանց կեղծաւորութեան, ի սուրբ սրտէ սիրել սերտիւ զմիմեանս:

23 Ծնեալք ի վերուստին՝ ոչ յապականութեան սերմանէն· այլ յանապականացուէն, կենդանի և մշտնջենական բանէն ասի:

24 Քանզի ամենայն մարմին իբրև զխոտ է, և ամենայն փառք մարդոյ իբրև զծաղիկ խոտոր ինքը սը է, դուք ալ ըստ ձեր վարմունքին մէջ սուրբ ըլլաք:

16 Ինչպէս որ գրված է թէ՝ սուրբ եղիք՝ ինչու որ՝ ես սուրբ եմ:

17 Ու թէ որ ձեզի Հայր կը կանչէք անկիա, որ ինքը առանց երես նայելու դատաստանը կընէ՝ ամէնին ալկուն իր գործքին պես, ալ (նայեցէք որ երկրիս վրա) ձեր օտարականութեանը առնը աչուդողով անցունէք:

18 Գիտնաք որ՝ (դուք) չէ թէ արծրիով ու ոսկիով որ կապականի՝ անով ապաուիցաք ձեր փուչ հարերնուդ բռնած ձամբովն որ կերթայիք·

19 Հապա՝ քրիստոսի պրուն ովը, ինչպէս մկ անբիծ ու անարատ գառիմը (պրունը կըլլա):

20 Ան որ առաջուցմէ սահմանված էր աշխարքիս ըլլալէն առաջ. ու եակի առեններէր՝ ձեզի համար յայտնըվեցաւ:

21 Որ դուք անոր ձեռքով այ հաւատացիք· որ ինքը անկիա մեռելներէն յարուց, ու անոր փառք պատիվ տըվաւ· որ ձեր հաւատքը ու յոյսը այ վրա ըլլա:

22 Ա՛ձեր անձերնիդ մաքրելով՝ հոգիվը ճշմարտութենին հնազանդելով· առանց կեղծաւորութենի եղբայրական սիրով, զուտ սրտանց բոլորովին միկըմիկ պիտի սիրէք:

23 (Ան որ) նորէն ծնած էք, չէ թէ (ասա) ապականած սերմէ· հապա՝ ան որ չի ապականիր, (այսինքն) այ խօսկովը՝ որ կենդանի ու յաւիտենական է:

24 Պատճառն որ՝ բոլոր մարմինները խոտիմը պէս են· ու մարդու բոլոր փառաւորութիւնները

խոտոյ · խոտն ցամաքեցաւ՝ և ծաղկն թօթափեցաւ :
25 Եւ բան ան մնայ յաւիտեան · այսինքն է, բանն որ ՚ի ձեզ աւետարանեցաւ :

խոտի ծաղկի պէս · որ խոտը կը-ւորնա, ու իր ծաղկինալ կը թափի:
25 Իայց այ խօսքը յաւիտեան կը մնա · աս՝ ան խօսքն է՝ որ ձեզ աւետիս տըրվեցաւ :

Գ Լ · Ե ·

1 ՚Ի բաց թօթափել այսու-հետեւ զամենայն չարու-թիւն՝ և զամենայն նենգու-թիւն, և զկեղծաւորութիւնս, և զնախանձ, և զամենայն չա-բախօսութիւն,
2 Իբրև զարդի ծնեալ ման-կունս խօսունս, և անխարդախ կաթինն փափաքիցէք · զի նո-վաւ աճիցէք ՚ի փրկութիւն :

3 Եթէ ճաշակեցէք՝ զի քաղցր է տէր :
4 Առ որ մատուցեալ էք ՚ի վէմն կենդանի, որ թէպէտ ՚ի մարդկանէ անարգեալ, այլ առ ՚ի յոյ ընտրեալ և պատու-ական է :
5 Եւ դուք իբրև զվէմս կեն-դանիս շինիք տաճար հոգևոր՝ յանարատ քահանայութիւն, մատուցանել զհոգևորն պա-տարագս՝ հաճոյ այ, ՚ի ձեռն յի քրի :
6 Պարունակ կայ իսկ ՚ի գրի · եթէ՝ ահաւասիկ դնեմ ՚ի սիոն վէմ ընտիր, գլուխ անկեան պատուական, և որ ՚ի նա հա-ւատացեալ՝ մի ամաչեսցէ :

7 Ձեզ այսուհետեւ հաւա-տացելոցդ՝ է վէմ պատուական. իսկ անհաւատիցն, վէմն զոր անարգեցին շինողքն · նա եղև գլուխ անկեան :

խոտի ծաղկի պէս · որ խոտը կը-ւորնա, ու իր ծաղկինալ կը թափի:
25 Իայց այ խօսկը յաւիտեան կը մնա · աս՝ ան խօսկն է՝ որ ձե-զի աւետիս տըրվեցաւ :

1 Ա նանկ է նէ՝ ալ բոլոր չա-րութիւնները, ու բոլոր խա-բեբայութիւնները, ու կեղծաւո-րութիւնները, ու նախանձոտու-թիւնը, ու բոլոր վատ խօսկերը մէկզի ձգեէք եաս,
2 Կ՚որ ծնած երեխաներու պէս, ալ ան կաթին փափաք ունեցիք՝ որ (բանաւոր) խօսող է՝ ու առանց խաբեբայութիւնի · որ անով ա-ռաջանաք փրկութեան համար:
3 Ա՚ն որ (իր) համը տուեր զի-տէք՝ որ տէրը (ինչպէս) անուշ է :
4 Որ իրեն գացեր մօտիկցէք-էք՝ ան կենդանի քարին · որ ի-րաւ ինքը մարդոց մէջն քամահր-վեցաւ, բայց աստուծմէ՝ հրնտ-րըվեցաւ ու մեծարվեցաւ :
5 (Ա՚նանկ) դուք ալ կենդանի քարերու պէս՝ առած՝ հոգևոր տաճարմը կըշինվիք · անարատ քահանա ըլլալու, որ յի քրի ձեռքովը այ հաճոյ հոգևոր պա-տարագներ մատուցանէք :
6 Ա՚ն որ՝ (սրբ) գրքին մէջնալ դրած է թէ, հրանա (ես) սիոնին մէջը անկիւնին գլուխը ընտիր ու պատուական քարմը կըդնեմ, որ ովոր անոր հաւատա՝ ինքը պիտի ամօթով չի մնա :
7 Ուրեմն դուք որ հաւատա-ցեալ էք՝ անոնց ձեզի պատուական քար է · բայց անհաւատներուն նայելով՝ ան քարն է՝ որ շինողնե-րը քամահրեցին. որ ինքը անկիւ-նին գլուխը դնելու քարը եղաւ :

8 Եւ վէմ գայթագղութեան, որ գայթագ-
ղին ապստամբեալք՝ ի բանէն՝
յոր և եղան :

9 Այլ դուք ազգ ընտրեալ, թագաւորութիւն, քա-
հանայապետութիւն. ազգ սուրբ, ժո-
ղովուրդ սեպհական. որպէս
զի զձեր առաքինութիւնսն
նուիրիցէք այնմ, որ զձեզ ՚ի
խաւարէն կոչեաց յիւր սքան-
չելի լոյս :

10 Որք երբեմն չժողովուրդ,
բայց արդ ժողովուրդ այ. որք
չողորմեալք, այժմ ողորմու-
թիւն գտէք :

11 Սիրելիք՝ աղաչեմ, իբ-
րև պանդուխտս և ընդժզէս՝
՚ի բաց մերժել ՚ի մարմնաւոր
ցանկութեանցն, որ պնդնուորին
ընդդէմ ոգւոց :

12 .Ո վարս ձեր ՚ի մէջ հե-
թանոսաց պարկեշտս ցուցա-
նել. զի որով բամբասիցեն
զձեզ իբրև զչարագործս, ՚ի
բարւոք գործոցն ձերոց զի-
տեալ՝ փառաւոր առնիցեն
զաձ յաւուրն այցելութեան :

13 Հնազանդ լերուք ամե-
նայն մարդկեղէն ստեղծուա-
ծոյ՝ վասն տն. եթէ թագա-
ւորի՝ իբրև առաւել ումեք.

14 եթէ դատաւորաց՝ իբ-
րև ՚ի նմանէ առաքելոց ՚ի
վրէժխնդրութիւն չարագոր-
ծացն, և ՚ի գովութիւն բա-
րեգործացն :

15 .Ո ՚ի այսպէս են կամք
այ. բարեգործացն պապանձե-
ցուցանել զանգգամ մարդոց
զանգիտութիւն :

16 Իբրև զազատս լինել, և

8 Ու (ան՝ իրենց) գլուխները
լալ քար՝ ու վրան սրկրըզրվելու
քար (եղաւ). որ (այ) խօսկէն գլուխ
քաշածները կըսկըզրվին կէյտան,
որ ան բանէն զըզված ալ էին :

9 Ինայց դուք ընտրված ցեղ
էք. որ թագաւոր (էք), քահա-
նայ (էք), սուրբ ազգ, իրեն չա-
բաղատ ժողովուրդը. որ ձեր բա-
րեզործութիւնները իրեն ընծա
կատաք, ան որ ինքը՝ ձեզ խա-
ւարէն (չանած՝) իր զարմանալի
լուսը (գալու) կանչեց :

10 Որ առենով իր ժողովուրդը
չէիք, բայց հիմա այ ժողովուրդ
(եղաք). որ ողորմված չէիք, (ու)
հիմա ողորմութիւն գտաք :

11 Սիրելիներ՝ կաղաչեմ որ՝
դուք ինչպէս պրսեցիներ ու աշ-
խրքէ օտար մարդիք, ետ քաշվիք
մարմնու չար ցանկութիւններէն,
որ հոգու զէմ պատերազմ կելլան :

12 Ղայեցէք որ՝ հեթանոսնե-
րու մէջ վարքերնիդ պարկեշտ ըլ-
լա, որ՝ ան որ՝ ձեզ չարագործ
ըսելով կրբանեպասեն, ձեր բարի
գործքերը տեսնելով՝ ած փառա-
ւորեն՝ ան օրն որ (ինքը անոնց-
ալ) տես գալու ըլլա :

13 Հնազանդ կեցէք ամէն
(չափի մէջ եղած) մարդկային բա-
տեղծվածներու՝ ինչ (սիրուն)
համար. թէ որ ան թագաւոր է՝
իբր թէ էվէլքը մէկումը.

14 թէ որ դատաւորներ են, իբր
թէ անոր դիացէն խաբած՝ որ
չարագործները պատժէ, ու բա-
րեգործները պատիվով բանէ :

15 Ինչու որ՝ ասանկ է այ կամ-
քը. որ (դուք) բարիք գործելով
պապենձեցունէք անխելք մար-
դոց տգիտութիւնը :

16 Ինոսր ազատի կըվայլէ՝ ա-

մի՛ իբրև պատրուակ չարու-
թեան ունել պատուիրանն.
այլ իբրև ծառայք :

17 Ամենեսեան պատուե-
ցէք. զեղբայրսիրութիւն սիրե-
ցէք . յոյ երկերկիւղ . զթագա-
ւորս պատուեցէք :

18 Ծառայք հնազանդ լի-
նել յամենայնի երկիւղիւ տե-
րանց . ոչ միայն բարեբարոյն
և հեզոցն , այլ և կամակո-
րոյն :

19 Ի և այս ձշմարիտ
շնորհք յոյ են , եթէ բարւոք
ինչ մտօք տանիցի ոք վշտաց
յանիրաւի :

20 Քանզի զիո՞նչ երախտիք
իցէն , եթէ յորժամ մեղան-
չեցէք՝ տանջիցիք և համբե-
րիցէք . այլ եթէ զբարիս գոր-
ծիցէք՝ չարչարիցիք՝ և համ-
բերիցէք, այն շնորհք յոյ են :

21 Քանզի ՚ի դոյս իսկ կո-
չեցարուք : զի և քրիստոս ձեր
մեռաւ , և ձեզ եթող օրինակ՝
զի զհետ երթայցէք հետոց
նորա :

22 Որ ոչն արար մեղս , և
ոչ գտաւ նենգութիւն ՚ի բե-
րան նորա :

23 Որ բամբասեալ՝ և ոչ
փոխարէն բամբասէր . չարչա-
րեալ՝ և ոչ պատէր սպառնա-
լիս . բայց իրաւամբք մատնէր
զատաւորին :

24 Որ զմեր մեղսն իւրով
մարմնովն վերացոյց ՚ի խաչ-
փայտն . զի լիցուք զերծեալք
՚ի մեղաց անտի , և իցեմք ար-
դարութեանն կենակիցք . որոյ
վիրօքն բժշկեցաք :

նանկ ըլլաք , ու չէ թէ պա-
տուիրանը (ձեր) չարաշահու-
նին ծածկոց ունենաք . հապա՝ ի-
ծառաներուպէս :

17 Ամէնուն պատիվը տըվէք.
եղբայրասէր եղէք . աստուածմ
վախ ունեցէք . թագաւորներուն
պատիվ տըվէք :

18 Ծառաները ահով դողով՝
ամէն բանի մէջ տիրվըտանցը
հնազանդ ըլլան . չէ որ միան ա-
նոնց՝ որ բարեբարո են ու հեզա-
հոգի, հապա անոնց ալ որ խիստ
դաժան են :

19 Որ ասոր ալ՝ իբրաւըշնէ ի
ըզած շնորհքն է, որ մէկուն միտքը
բարի ըլլա՝ ու անիրաւ տեղը նե-
ղութիւններ կըքաշէ :

20 Հապա թէ չէ՝ ան ինչ
բարիքմ՚նէ , որ մեղք գործել-
նուդ համար տանջըվիք՝ ու համ-
բերէք. հապա թէ որ բարիք գոր-
ծելու համար տանջըվիք՝ ու համ-
բերէք , ան՝ ի՛ տըված շնորհքն է:

21 Որ՝ դուք ալ ասոր բանին
համար կանչըվեցաք : ան որ քա-
ալ ձեզի համար համար մեռաւ ,
ու ձեզի օրինակ թողուց , որ իր
ոտքը գրած տեղուն տեւէք երթալ:

22 Ան որ՝ ինքը մեղքմը չէ
գործեց , ու իր բերանը խաբեբա
խօսկմ՚ը չի գտնըվեցաւ :

23 Որ երբոր կըբամպասվէր՝
(ինքնալ) անոր դէմը չէը բամ-
պասէր . կըչարչարվէր՝ ու վըս-
նին ոխ չէը պահէր , հապա՝ ա-
նանկ իրաւունքով (կրիթողուը) որ
դատաւորին ձեռքը մատնըվի :

24 Որ մեր մեղքերը իր մար-
մինովը խաչափայտին վրա վեր-
ցուց , որ (մենք) ան մեղքերին
խալըսինք, ու անոր արդար կե-
նացը ընկեր ըլլանք . անանկ ալ
իր խոցերովը բըժշկըվեցանք :

25 Քանզի էիք իբրև զչխարս մոլորեալս · այլ այժմ դարձարարք առ հովիւն և տեսուչ ոգւոց ձերոց :

25 Ինչու որ՝ դուք մոլորած ոչխարներու պէս էիք · բայց հիմա դարձերէք ձեր հոգուն հովիւին ու հոգ տանողին քովը :

Գ Լ · Գ ·

1 Այնպէս և կանայք՝ հնազանդ լինել արանց իւրեանց · զի եթէ իցեն ոմքա ապստամբք՝ ի բանէ անտի , յաղագս կանանց գնացից , և առանց բանին իսկ շահեսցին ,

2 Դիտէլ երկիւղիւ զձեր պարկեշտ գնացս :

3 Որոց լինիցի ոչ արտաքուստ հիւսիլք և ոսկեհիւսութ ծամակալեօք՝ կամ պատուհասել զգեստուք զարդ ·

4 Այլ ծածուկ սրտին մարդն · անեղծութեամբ հնազանդութեան և չանդարտութեան հոգւոյն , որ է առաջի այ բազմապատիկ :

5 Քանզի այսպէս երբեմն և կանայք որ յուսացեալ էին յայ , զարդարէին զանձինս՝ հնազանդել իւրեանց արանց :

6 Որպէս և սարբայ՝ զի հնազանդեր աբրահամու , և տէր իւր կոչէր զնա , որոյ եղեր դուք զաւակք · բարերգործք էիք , և ոչ կասկածէիք և ոչ ի միոջէ ինչ երկիւղէ :

7 Այնպէս և արք իմաստութեամբ բնակեսցին ընդ նսա · իբրև տկար անօթոյ առնիցին պատիւ կանանց՝ իբրև ժառանգակից շնորհացն կենաց · զի մի խափան լինիցին աղօթիցն ձերոց :

8 Եւ զլուխ ամենայնի , զի համամիտք իցէք , համակա-

1 Ան ըսածիսպէս՝ հնազանդ ըլլան իրենց երիտասարդնուն . որ՝ անոնք որ (այ) խօսքին դէմ չեն ծրտեր, իրենք՝ հնգտաց (ոգիէ) վարմունքովը՝ ալ առանց խօսքի շահվին ,

2 Ան ձեր երկիւղած պարկեշտ վարքը՝ տեսնելով :

3 Որ իրենց գարդարանքը՝ չըլլայ դրսբլանց մազերու հիւսուածքներովը ուոսկեջրած մազեամներով՝ կամ փառաւոր հագուստներով ·

4 Հապա՝ որ ներսիդին եղած սրտին մարդը՝ (գարդարվի) մաքրութիւնով , հնազանդ ու հանդարտ հոգովը · ան՝ որ այ դիմացը էվէլքը ազնիւ բան է :

5 Որ՝ առնմէ ան հնգտիքն որ յոյսերնին այ վրա դրեբէին , իրենց անձերնին ասանկ կըզարդարէին՝ իրենց երկրներուն հնազանդ ըլլալով :

6 Ինծոր որ սառան ալ աբրահամի հնազանդ էր, ու անիկա իրեն տէր կըսէր · որ դուք անոր որդիքը եղաք՝ որ իրենք անանկ բարիք կրգործէին՝ առանց մէկ բանէ մը իսկի վախ ունենալու :

7 Ասանկալ երիկները թող խոհեմութիւնով անոնց հետ կենան · մէկ տկար (փափուկ) բանիմը պէս՝ անանկ հնգտացնին հետ պատիւով վարվին . ինչպէս կենաց շնորհքին ժառանգընկերներու · որ ձեր աղօթքին խափանում չըլլան :

8 Ու ամմինէն էվէլը , ան՝ որ (դուք) մէկ մաքի վրա ըլլաք , ու

բիք, եղբայրասիրք, ազնուա-
զուարք, խոնարհք:

9 Մի՛ չար փոխանակ չարի
հատուցանել, կամ բամբա-
սանս ընդ բամբասանաց. այլ
զնորին հակառակն՝ օրհնել,
զի յայս իսկ կոչեցարուք՝ զի
զօրհնութիւնն ժառանգիցէք:

10 Որ կամի զկեանս
սիրել, և զաւուրս լաւ տես-
նել՝ ի բարութեան, լեզուս-
դէ զչեզոտ լաւ՝ ի չարութենէ,
և զշրթունս լաւ՝ ի չխօսել
զենգութիւն:

11 Խոտորեսցի՛ ի չարէ, և
արասցէ զբարի. խնդրեսցէ
զհաշտութիւն, և երթիցէ
զետ նորա:

12 Որ՝ի աչս ան՝ի վերայ
արդարոց, և ականջք նորա
յաղօթս նոցա. երեսք ան՝ի
վերայ չարագործաց:

13 Եւ ո՞ իցէ որ չարչարիցէ
զձեզ, եթէ զոյք բարւոյն նա-
խանձաւորք լինիցիք:

14 Այլ թէ և չարչարիք-
ցիք ևս վասն արդարութեան,
երանելի էք. բայց յերկիւղէ
նոցա մի՛ երկնչիցիք, և մի՛
խռովեսջիք:

15 Այլ զտէր զնոյն և զքո՝
սուրբ ունիցիք՝ի սիրտս ձեր:
պատրաստք իցէք տալ պա-
տասխանի ամենայնի որ խընդ-
րիցէ զձանն՝ որ է վասն յու-
սոյն ձերոյ:

16 Այլ հեզութեամբ և եր-
կիւղիւ ունիցիք բարս քաղ-
ցուն. զի որով չարախօսիցին
զձեզնէ՝ յամօթն լինիցին, որք
բամբասեն զձեր բարւոյ գը-
նացս՝ի քո:

17 Որ լաւ է բարեգոր-
ծել, եթէ յոժարութիւնով, եւ
քան չարագործել:

9 Չըլլա՛ չարին դէմ՝ չար
հատուցում ընել, կամ բանսա-
սանքի դէմ՝ բանսասանք. հապա՝
անոր ներհակը՝ օրհնելը (տալ).
որ բանն ասոր համար կանչուիր-
եք, որ (այ) օրհնութիւր ժառանգէք:

10 Պատճառը՝ ան որ իր կեան-
քը կուզէ սիրել ու իր օրերը ա-
ղէկութենի մէջ տեսնել, անիկա
իր լեզուն թող բռնէ որ չար չը-
զրուցէ, ու իր պրկուածները խօսք՝
որ խաբեբայութիւն չըլլան խօսի:

11 Չարէն ետ քաշուի, ու ան
որ բարի է՝ ընէ. խաղաղութիւնը
փընտռէ, ու անոր ետևէն ըլլա:

12 Ինչու որ՝ Տէրոջ աչքը ար-
դարներուն վրայ (է), ու իր ան-
կաձը անոնց աղօթքին (կրընկ).
(բայց) Տէրոջ երեսը դէպի չարա-
գործներըն (Ժուռ կրնայի):

13 Այ ան ո՞վ պիտի ըլլա՝ որ
ձեզի դէն չհատցունէ, թէ որ զուք
բարի ընելու ջանացող ըլլաք:

14 Հապա թէ որ արդար բան
ընելու համար ալ չարչարանք
քաշէք, (զուք) երանելի կըլլաք.
ուստի ալ անոնց ահ տալէն չը
վախնաք, ու չը շըփոթիք:

15 Հապա՝ Տէր ան որն ու քուր ձեր
սրտին մէջը սրբութենով պահե-
ցէք: պատրաստ եղէք անոնց ամ-
մէնուն պատասխանը տալու՝ որ
ձեր ունեցած յուսուն վրայովը որ
բան հարցընէ:

16 Այնպէս՝ հեզութենով ու
երկիւղածութենով անուշ վար-
մունք ունենաք. որ անոնք որ
ձեր վրա վատ կըխօսին՝ ամօթով
ըլլան, ան որ ձեր՝ քրիստոսի
վարմունքը կրբանպասեն:

17 Պատճառն որ՝ աւ լաւ է

ծաց, եթէ կամիցին ըստ այ կամացն չարչարել՝ քան չարագործացն :

18 Օ՛ի և քո մի անգամ՝ վասն մեղաց՝ ի վերայ ձեր մեռաւ, արդարն՝ ի վերայ անարդարոց. զի զձեզ մերձեցուսցէ առ ած : զի թէպէտ և մեռաւ մարմնով, այլ կենդանի է հոգւով :

19 Որով և ոգւոցն որ էին՝ ի բանտին, երթեալ քարոզեաց .

20 Երբեմն ապստամբելոցն, յորժամ՝ ներէր նոցա այ երկայնմտութիւնն յաւուրս Նոյի՝ յորս տապանն կազմէր . յորս նուագուընք՝ այսինքն, ոգիք իբրև ութ ապրեցան՝ ի ջրոյն :

21 Որ և զձեզ ըստ նմին օրինակի՝ կեցուցանէ մկրտութիւնն . ոչ զմարմնոյ աղան՝ ի բաց ընկենուլով, այլ զբարւոք մտաց հանդէս առ ած, ի ձեռն յարուցեալոյն յիսուսի .

22 Որ է ընդ աջմէ այ երթեալ՝ յերկինս, հնազանդեալ նմա հրեշտակաց և իշխանութեանց և զօրութեանց :

բարի գործոք ընելոյ համար չարչարելը, եթէ որ ած անօրէն կամեցեալքն, քան թէ չար գործոքն համար:

18 Ինչու որ՝ քո ալ մեղաւորու համար մէկ անգամմը ձեր վրա մեռաւ, ան որ արդար էր՝ անոնց վրա որ արդար չէին, որ ձեզ այ մօտեցնէ՝ անօրէն՝ ինքը իրա՝ մարմինովը մեռաւ, բայց հոգիովը կենդանի է :

19 Որ անօրէն հնաց քարոզեց ան հոգիներուն՝ որ բանտին մէջը (բանբված) էին .

20 Անոնք որ առեն ապրութեամբ էին, երբոր ած երկայնամտութիւնով իրենց (զարձին) կրնպասէր՝ նոյին օրերն որ տապանը կըշինվէր . որ անոր մէջը քիչվոր, այսինքը՝ ութը հոգիի չափ մարդիք ջրէն խալըսեցան :

21 Որ ան՝ օրինակ եղաւ մկրտութիւնին՝ որ ձեզ պիտոր խալըսէ, չէ թէ մարմնու աղտեղութիւնը մաքրելով, հապա՝ որ բարի խղճմտանքով այ դիմացը կրհանի՝ քրիստոսի յարութիւն առնելովը:

22 Որ ինքը՝ երկինքը այ աջ դին գնաց, հրեշտակներն ու իշխանութիւնները ու զօրութիւնները իր ներքևը հնազանդած :

ԳԼ · Դ ·

1 Քանի չարչարեցաւ մարմնով վասն մեր, և դուք՝ ի նմին միտս վառեցարուք . զի որ չարչարի մարմնով՝ դադրեց՝ ի մեղաց :

2 Օ՛ի մի ևս ըստ մարդկան ցանկութեանց՝ այլ ըստ կամացն այ կեցցէ զայլ ևս ժամանակն :

3 Քանզի բաւական է անցեալ ժամանակն լինելոյ կամ-

1 Քանի որ մարմինով մեղի չարարվեցաւ՝ դուքալ ան մարքի վրայով դէնք առէք. որ՝ ան որ մարմինով կըչարչարվի՝ (ինքը) մեղք ընելէն կրդադրի .

2 Որ ան տաճնն որ կրմնա (դեռ ապրելու՝) չէ թէ մարդոց ցանկութիւններուն պէս՝ հապա այ կամացը պէս կենա :

3 Ինչու որ՝ ալ ան հերիք պիտի բլլա անցած տաճնիներուն ձեր

մայն հեթանոսաց, որք գնացին գիջութեամբք, ցանկութեամբք, զինեհարութեամբք, անառակութեամբք, արբեցութեամբք, անօրէն կռապաշտութեամբք :

4 Որով օտարացեալք՝ ոչ ընդ ձեզ վարին՝ ի նոյն անկարգութեան զեղխութիւն, և հայհոյեն :

5 Որ տացեն պատասխանի այնմ՝ որ ի պատրաստին ունի դատել զկենդանիս և զմեռեալս:

6 Օ՛ի ի սոյն իսկ և մեռեալց խոստացեալ է, զի դատեսցին ըստ մարդկան մարմնով, և կենդանի լիցին ըստ այ հոգւով :

7 Ա՛մենեցուն վախճան մերձեալ է. զգաստացարուք այսուհետև՝ և լերուք զուարթունք յաղօթս :

8 Նախ քան զամենայն՝ սէր սէրտ ունիլ ընդ միմեանս. զի սէր՝ ծածկէ զբազմութիւն մեղաց :

9 Օտարասէրք լինիլ ընդ միմեանս՝ առանց տրտնջելոյ :

10 Իւրաքանչիւրոք որպէս և ընկալաւ շնորհս ինչ՝ ի միմեանս զնոյն մատակարարել, իբրև զբարւոք հազարապատում պէսպէս շնորհացն այ :

11 Եթէ ոք խօսիցի՝ իբրև զայ պատգամս. եթէ ոք մատակարարիցէ՝ իբրև ի զօրութենէ զոր շնորհէ ած. զի յաղթեսցի փառաւորեսցի ած ի ձեռն յիսի քրի. որում փառք և զօրութիւն յաւիտեանս. ամէն:

12 Սիրելիք՝ մի օտարանայ համարիլ զեռանդն ինչ՝ որ ի վարմունքդ՝ հեթանոսաց ուղածին պէս ըլլալով, ամօթ բաներու տրուած, չար ցանկութիւններու, զինեխում՝ ըլլալու, անառակութիւններու, չարքաշութիւններու, անօրէն կռապաշտութիւններու :

4 Որ ալ անանկ անկարգ ապեղծութիւնին ձեզմէ գատ կեցած՝ չեռերնիդ չեն վարվիր, ու վրանիդ պատալ կըսեն :

5 Որ պիտի հաշար տան անոր՝ որ կեդեր է՝ կենդանիներուն ու մեռելներուն դատաստանը ընելու :

6 Որ ասոր համարալ ան մեռածներուն խոստմունք եղած է, որ մարդու կողմանէ մարմինով դատվին, ու այ կողմանէ՝ հոգիով կենդանի ըլլան :

7 Ա՛մէն (բանին) վերջը մոտեցեր է. ալ ասկէ ետև ըզգաստ կեցիք, ու զարթունն եղէք՝ աղօթքի չեռ ըլլալով :

8 Պ՛ետ առաջ՝ ամէնէն կիվել՝ միմիկու չեռ կիսկ սէր ունենաք. պատճառն որ՝ սէրը շատ (բրած) մեղքեր կըծածկէ :

9 Իրարու սիրով հիւրընկալութիւն ըրէք՝ առանց ձրշկացելու:

10 Ա՛մէն մէկերնիդ ինչ կերպ շնորք որ առեր նէ՝ անիկա մեջերնիդ իրարու հազորդերէք, ինչպէս մէկ բարի տրնտեսը այ կերպ կերպ շնորքներուն :

11 Ա՛նանկ որ՝ թէ մէկը խօսինէ, ան երեւա որ բուն այ չրամանքն է. թէ որ մէկը իր ծառայութիւնի զործքը ընէ՝ ան (ըլլա՝) ինչպէս թէ ան զօրութիւնին որ ած կըպարգեւէ. որ ամէնն բանի մէջ ած փառաւորվի՝ յիսի քրի ձեռքով. որ իրենն է փառքը ու զօրութիւնը յաւիտեանս. ամէն :

12 Սիրելիներ, ան՝ մէկ նոր բանմը չի սեպէք՝ երբոր մէկ (նե-

փորձութիւն ձեզ լինիցի, որ-
պէս թէ օտար ինչ իրք ձեզ
պատահեցին :

13 Այլ իրրև հաղորդեալք
քոյ չարչարանացն՝ ուրախ լի-
նիջիք, զի և ի յայտնութեան
փառացն նորա ցնծացեալ բերիք-
բեսջիք :

14 Եթէ նախատիցիք
ի վասն անուանն քոյ, երա-
նելի էք . զի փառացն և զո-
րութեան անուն, և այ հոգին՝
ի վերայ ձեր հանգուցեալ է :

15 Մի՛ ոք ի ձէնջ չարչա-
րեսցի իբրև զսպանող , կամ
իբրև զգող , կամ իբրև զչա-
րագործ, կամ իբրև զօտարա-
տեսուչ .

16 Այլ թէ իբրև զքրիս-
տոնեայ, մի՛ ամաչեսցէ · այլ
փառաւոր առնիցէ զԱստ
ամբա այսուիկ :

17 Օ՛ի ժամանակ է սկիզբն
լինելոյ դատաստանին ի տա-
նէն այ · զի եթէ նախ ի մէնջ,
իսկ զի՞նչ կատարած լիցէ այ-
նոցիկ, որ ոչ չհաւանեցան այ
աւետարանին :

18 Եւ եթէ արդարն հազի՛ւ
կեցցէ, իսկ ամպարիշտն և մե-
ղաւորն ո՞ւր գտանիցի :

19 Ո՛րպէս զի՝ որ չարչարի-
ցին բոլո այ կամացն, հաւա-
տարիմ հաստիչին աւանդեսցեն
զիւրեանց ոգիս բարերարու-
թեամբք :

զութիւնի)վաստնքդմբ ձեզ փոր-
ձելու համար որ կըլլա · ինչ-
պէս թէ ան՝ կարգէ դուրս բանմբ
ձեզի հանտիպած :

13 Հապա՝ ուրախացէք՝ ին-
տոր թէ (անոյ զուք ալ) քոյ
չարչարանացը հաղորդ ըլլայիք,
որ իր փառացը յայտնըվելու ա-
տեննալ ցընծալմով մայլիք :

14 Ու թէ որ նախատանք ալ
առնէք քոյ անունին պատճառ-
վը, (զուք) երանելի էք . որ այ
հոգին ձեր վրա եկած հանդչած,
ան փառաւոր ու զօրաւոր անունը
(առ)ք) :

15 Չըլլա՛ որ ձեզմ մին ան-
ջանքի տըրվի՝ ինտոր (մարդ)
սպանօղ , կամ ինտոր գող ,
կամ ինտոր չարագործ , կամ ին-
տոր ուրիշի բանին խառնըվօղ ·

16 Հապա թէ որ (առանջվի)
ինչպէս քրիստոնեա՝ ան թող ա-
մօթ չի սեպէ· հապա՝ աս անունըս
ունենալուն՝ թող այ փառք տա :

17 Որ (հիմա՝) ալ առէնն է՝
որ դատաստանը այ տըսկը ըս-
կըսվի · թէ որ ան առաջ մեզմէն
(կըսկըսի), ալ անոնց վերջերնին
ինչ պիտոր ըլլա, որ այ աւետա-
բանին հաւատք չեն բերվին :

18 Ու թէ որ (բուն) արդարը
դըժար կըլլա որ փրկըվի, հապա
անբարեպաշտն ու մեղաւորը ո՞ւր
տեղ պիտի գտնըվի :

19 Ուստի՝ անոնք որ այ կամքը
ընելուն համար կըտանջվին, ի-
րենց հոգիները՝ հաւատարիմ
ըստեղծողին ձեռքը պահ կուտան՝
բարիք գործելով :

ԳԼ· Ե·

1 Զ՛երիցանս այսուհետեւ ա-
ղաչեմ՝ իբրև զերիցա-

1 Ա՛նանկ ալ երէցներուն կա-
ղաչեմ՝ եսալ անոնց պէս

կից՝ և վկայ չարչարանացն քրիստոսի, որ և հանդերձեալ փառացն յայտնելոյ հաղորդ :

2 Ա.ռաձեցէք որ ի ձեզ հօտէ են այլ . վերակացու լինել՝ ոչ իբրև ակամայ՝ այլ կամաւ ըստ այլ . ոչ զաշաքաղու-թեամբ, այլ յօժարութեամբ :

3 Մի իբրև տիրելով վիճակացն, այլ լինել օրինակ հօտին :

4 .Ո.և յերևել հովուապետին՝ ընդունիջիք զանթառամ փառաց պսակն :

5 Ա.յոպէս և երիտասարդք՝ հնազանդ լերուք ծերոց : ամենեքին ընդ միմեանս՝ զխոնարհութիւն ունելոյն . զի Ած ամբարտաւանից հակառակ կայ , տայ շնորհս խոնարհոց :

6 Խ.ոնարհեցարուք ընդ հզօր ձեռամբն Ած , զի զձեզ բարձրացուսցէ ի ժամանակի :

7 .Ո.ամենայն հոգս ձեր ընկեցէք ի նա , զի նա է որ հոգայ ձեզ :

8 Ա.րթուն լերուք՝ հակեցէք , զի սատան ձեր սատանայ իբրև զառիւծ գոչէ, շրջի և խնդրէ՝ թէ զոմ կլանիցէ :

9 Ո.րում ի դիմի հարկանիջիք հաստատուք հաւատովք: գիտացէք զնոյն անդս չարչարանաց եղբայրութեան ձերոյ յաշխարհի յանձին կատարել :

10 Եւ Ած ամենայն շնորհայ, որ կոչեաց զձեզ յիւր ի յաւիտենական ի փառն՝ քրիստոս յիսուս, սորում փոքր մի եղերուք երկեայ ըլլալվս. ու քրի չարչարանացը վկա, ու գալու յայտնըվելոց փառքինալ հաղորդ :

2 Հեղի յանձնըված այ ոչխըրներըդ արածեցէք . (անոնց) վերակեցութիւն ըրէք, չէ թէ չի կամնալովմը , հապա՝ (յօժար) կամքով՝ այ համար եղած . չէ թէ բան քաշելու պատճառով, հապա՝ սրտէ բրխած :

3 Չէ որ ինչպէս՝ թէմի վրա տիրապետելով, հապա՝ ան ոչխըրներուն (բարի) օրինակ ըլլալով :

4 Որ հովիւներուն գլխաւորն որ (գա) երևնա, (դուք անկէ) ան փառաւոր թագը ընդունիք, որ չի թոռմիր :

5 Ա.սանկալ կորիւ մարդիքը՝ ծերերուն թոյլ հնազանդ ըլլան : (ու) ամմէնքնալ իրարու հետ խոնարհութիւնով վարվին , ինչու որ՝ Ած ամբարտաւաններուն դէմ է, խոնարհներուն կուտա (իր) շնորհը:

6 Հի զօրեղ ձեռացը տակը խոնարհ կեցէք, որ՝ ատենն որ գա՝ ձեզ բարձրըցնէ :

7 Ձեր բոլոր հոգալիքը իրեն վրա ձրդեցէ . որ ինքը ձեր համար բաները կըհոգա :

8 Ա.չքերնիդ բաց արթուն կեցէք. ինչու որ՝ ձեր ներսէկ թշնամին սատանան՝ մէկ պռոշացող առիւծի պէս՝ (քովերնիդ) կըպտրտի՝ ու կրնայի որ ով կըլնա կըլլլը:

9 Որ դուք հաւատքի մէջ հաստատ կեցած՝ անոր դէմ դարձվիք : գիտնաք որ ձեր մէկալ եղբայրներն ալ որ (լոկը) աշխրքի մէջ են՝ անանկ տառապանքներով կեանքերնին կանցունեն :

10 Ո և ալ ինքը Ած՝ ամմէն շնորհներուն տրվողը . որ ձեզ իր յաւիտենական փառացը կանչեց՝ քրիստոսի յիսուսի ձեռքով, որ անոր չի-

չարչարակից ք, նա կազդուրե-
ցուսցէ, կարողացուսցէ, հաս-
տատիցի արասցէ :

11 Ն մա իշխանութիւն և
փառք՝ յաւիտեանս :

12 Ի ձեռն սեղուիանոսի
հաւատարիմ եղբօր՝ որպէս
կարծեմ, փոքր ի շատէ գրեցի
ձեզ՝ մխիթարել, և ի վերայ
սորին վկայել. զի և այս ճշմա-
րիտ շնորհք յայ են՝ յոր հաս-
տատեալ կայցէք :

13 Ողջոյն տայ ձեզ որ ի
բաբելոն ընտրելակիցն եկեղե-
ցի է, և մարկոս որդի իմ :

14 Ողջոյն տացիք միմեանց
ի համբոյր սրբութեան : խա-
ղաղութիւն ընդ ձեզ ամենե-
սեան, որ էք ի քս յս. ամէն :

որ քիչմ կըշարշարվիք կոր. ին-
քը (ձեզի) ուժ տա, կարդուքիւն
տա, հիմնրնիդ հաստատ ընէ :

11 Իրեն իշխանութիւնն ու
փառքը՝ յաւիտեան (ըլլա) :

12 Սիղվեանոս եղբօր ձեռքո-
վը՝ ինծոր որ ինքը հաւատարիմ
կըկարծեմ, շատէն քիչմը ձեզի
գրեցի՝ սիրտ տալով, ու աս բա-
նը վկայելով. որ ան՝ այ Ճշմա-
րիտ շնորքն է՝ որ (դուք) անոր
մէջը հաստատ կեցեր իք :

13 Ձեզի սխտուն կուտա բա-
բիլոնը եղած եկեղեցին, որ ձեզ-
պէս անալ ընտրըլած է. ու իմ
մարկոս որդիսալ :

14 Իրարու սխտուն տըվիք
սուրբ համբուրով : խաղաղու-
թինը ձեր ամէնուդ հետը (ըլլա)
քրիստոսի մէջ ձեռքով. ամէն :

ԹՈՒՂԹ.

ՊԵՏՐՈՍԻ ԵՐԿՐՈՐԴ.

ԳԼ. Ա.

1 ՀՄԱՒՈՆ պետրոս ծա-
ռայ և առաքեալ յիսուսի քրիստոսի, որոց հանգիստացաւ մեզ հաւասարապատիւ մեզ հաւատով յարդարութիւն՝ այ մերոյ և փրկչին յիսուսի քրիստոսի :

2 Շնորհք ընդ ձեզ՝ և խաղաղութիւն բազմացի, գիտութեամբ՝ աստուծոյ և յիսուսի քրիստոսի տեառն մերոյ :

3 Որպէս ամենայն ինչ մեզ՝ իւրոյ աստուածութեանն առ ի կենաց և աստուածութիւն շնորհեալ. ի ձեռն գիտու-

1 ՍԻՄԱՒՈՆ պետրոս՝ ծա-
ռա ու առաքեալ յիսուս քրիս-
տոսէ. զուք որ մեր հետը միտկ հա-
ւատքի հաստաք, մեր աստ՝ ու փրկիչ
յիսուս քրիստոսի (ձեզի) արդարութիւն տա-
լով :

2 Շնորքն ու խաղաղութիւնը
ձեր հետը շատնա, աստ՝ ու մեր տը
յիսուս քրիստոսը ճանչնալով :

3 Ինչպէս որ իր աստուածային կա-
րողութիւնովը մեզի շնորք բրաւ-
տրվալ՝ բոլոր կենաց ու աստուած-
տուութիւնի (պաշտաման) բաները·

թեան այնորիկ որ կոչեացն զը-
մեզ յիւր ՚ի փառսն՝ և ՚ի
վայելչութիւն :

4 Զորովք մեծամեծքն և պա-
տուականն առեալք սպարգևեալ
են մեզ. զի նոքիմբք ՚ածեզին
բնութեանն հաւատոյն լինի-
ցիմք հաղորդակիցք, փախու-
ցեալք ՚ի ցանկութեանց աշ-
խարհիս և յապականութեանց:

5 Եւ սմին այսմիկ զամե-
նայն փոյթ ՚ի մէջ առեալ՝ ձե-
ռնվքն հաւատովք մատակա-
րարիջիք զառաքինութիւնն,
և առաքինութեցն զգիտութի՝ .

6 Եւ գիտութեամբն զը-
ժուժկալութի՝, և ժուժկալու-
թեամբն զհամբերութի՝, և համ-
բերութեամբն զածպաշտութի՝.

7 Եւ ածպաշտութեամբն
զեղբայրսիրութիւն, և եղբայր-
սիրութեամբն զսէր :

8 .Օ այսոսիկ ձեր յանձին
կալեալ՝ և ՚ի սմին յաճախեալ,
սէ զատարկս և անպտուղս
հաստատիցին զձեզ ՚ի ճա մե-
ծոյ յիւր քրիստիանն :

9 Իսկ յոր սէն լցեն սոքա
մերձ, կոյր է և զաչացն. ՚ի
մոռացօնս զարձուցեալ զսրբը-
բութիւն առաջնոց իւրոյն
յանցանաց :

10 Վասն որոյ եղբարք՝ ա-
ւաւել փութասջիք՝ զի բա-
րեացն գործովք հաստատուն
զձեր կոչումն և զընտրութիւն
պահիցէք. զայս ապարեալ՝
սէ երբէք յանցանիցէք :

11 .Օ ՚ի այսպէս առատա-
պէս ընծրհեսցի ձեզ մուտ ՚ի
յաւիտենական արքայութիւն
ճա մերոյ և փրկչին յիւր քրի :

12 Զորովք պատրաստիցեմ

որ ինքը Ճանչնանք, ան որ մեզ
իր փառացը ու (իրեն) վայելուած-
քին կանչեց :

4 Որ անանկ՝ մենծ ու անլը-
ման աւետումնքեր մեզի տրուած
ըլլալով, ալ անով ՚ածային
բնութեանը՝ հաւատքոնիս հա-
ղորդ ըլլանք, աշխարքի ցանկու-
թիններէն ու ապականութիննե-
րէն ետ փախչելով :

5 Ասոր բուն ատոր համար բո-
լոր ջանքերնիդ դրած՝ ձեր հա-
ւատքովը առնր վրան առաքի-
նութին էվէլցուցէք, ու առա-
քինութինին վրա գիտութին .

6 Ու գիտութինին վրա՝ ժուժ-
կալութին, ու ժուժկալութինին
վրա՝ համբերութին, ու համբե-
րութինին վրա՝ ՚ածպաշտութին .

7 Ու ՚ածպաշտութինովը՝ ևս-
պարսիրութին, ու եղպարսիրու-
թինովը՝ (՚ածային) սէր :

8 Վա բաներըս որ դուք ունե-
նաք, ու միշտ ատոնց չետ ըլլաք,
ատոնք անանկ կընան որ՝ ձեր ու-
նեցած Ճանաչմունքը մեր տէր յի-
սու քրիստոսին պարապ ու անպը-
տուղ չըլլար :

9 Ասոնց ատ բաած բաներըս ով-
որ չունի՝ անիկա կուր է ու կար-
Ճատես, որ մոռցեր է թէ ատ-
ջի (իր ըրած) մեղքերէն լինսոր ինքը
մաքրըվելէ :

10 Ասոր համար եղպարներ՝
էվէլրը ջանք ըրէք՝ որ ձեր բարի
գործքերովը ձեր կոչումն ու ընտ-
րութինիր հաստատ պահէք. որ
թէ ատանկ ընէք՝ ալ երբէք մեղայ
մէջ չէք իյնար :

11 Որ ատ կերպովս՝ ձեզի կա-
տարեալ շնորք կըլլայ՝ որ ատը
մեռյ ու փրկչին յիսու քրիս-
տոնեական արքայութինը մտնաք:

12 Ասոր համար (ես ալ) միշտ

միշտ ձեզ յիշեցուցանել վասն սոցին, առաւել ևս գիտակացն և հաստատելոցն՝ եկեալ ցսեալ ՀՀմարտութեանն :

13 Քանզի իրաւունս համարիմ՝ մինչդեռ եմ ՚ի մարմնի սոսա՝ գարթուցանել զձեզ յիշատակաբք :

14 Գիտեմ՝ թէ վաղվաղակի է լինելոց մերկանալ յինէն մարմնոյս· որպէս և տէր մեր յս քս եղոյց ինձ :

15 Եւ փութամ՝ ձեպիմ միշտ զձեզ յորդորել· զի և յետ իմոյ ելանելոյ յաշխարհէս՝ առնիցէք զիշատակս այսոցիկ :

16 Քանզի ոչ եթէ պատմուճանեալ հեաւ ինչ առասպելական զհետ երթեալ՝ ցուցաք ձեզ զոն մեր յոյ յս քս զզօրութիւն և ըզգալուստն· այլ մեզին եղեալ ականատեսք նորա մեծութեանն :

17 Քանզի առեալ յայ և ՚ի հօրէ զիւաս և զպատիւ, յիկեալ յայնպիսի բարբառոյ՝ մեծավայելչութեան փառացն ան՝ տի, եթէ զա է որդի իմ սիրե՝ լի՛ ընդ որ հաճեցայ,

18 Եւ զայս բարբառ՝ մեք իսկ լուաք եկեալ յերկնից, որ ընդ նմա իսկ էաք ՚ի սուրբ լե՝ բինն :

19 Եւ ունիմք հաստատագոյն զբանն մարգարէականս· որում՝ եթէ անսայցէք՝ բար՝ ւոք առնէք· իբրև ՀՀրագի որ տայցէ լոյս ՚ի խաւարչուին տեղւոջ, մինչև տիւն լուսաւորեսցէ, և արուսեակն ծագեսցէ ՚ի սիրտս ձեր :

20 Ի սկզբան նախ՝ այսմ գիտակ լինիջիք· զի ամենայն մարգա՝ պատարագատեմ աս բաներուս վրայ՝ մովընդիր ձգելու, (ըսենք որ՝ դուք) երկերքը գիտցած ու հաստատ ալ ըլլաք՝ աս ըսածիս վրա որ ՀՀմարիտ է :

13 Պատճառն որ՝ ես ինծի պարտք կըսեպեմ, որ՝ քանի որ իմ մարմնուս մէջն եմ՝ ան մովընդիր ձգելով ձեզ արթընցուներմ :

14 Գիտեմ որ՝ շուտով պիտի աս իմ մարմինէս հանվիմ· ինչպէս որ մեր տէր յս քրս ինծի ի՝ մացուց :

15 Ասոր՝ արտորնօք եւս եմ՝ միշտ ձեզ յորդորելու· որ իմ աշխրքէն ելլելէս ետև (ալ) աս բաները մովընդիր ըլլա :

16 Ինչու որ՝ չէ թէ մենք սուտ ու մուտ հնարած բաներու ետևէ երթալով՝ (անանկ) մեր տէր յսի քսի կարողութիւնը՝ ու (իր) գալու ըլլալը ձեզի իմացուցինք· հապա բուն մեր աչովը տեսնելով անոր մեծութիւնը :

17 Որ տէր հօրմէն աս փառքս ու պատիւս առաւ, ան որ մենծ վայելչութեանը փառքէն (իր վրա) ասանկ ձան եկաւ՝ թէ տակի իմ սիրական որդիս է, որ իրեն հաւանեցայ :

18 Ու աս՝ երկընքէն եկած ձանը՝ բուն մենք լսեցինք, երբոր ան սուրբ լեռանը վրա իր հետ էինք :

19 Ու մարգարէից բսած խօսքերնալ ունինք, որ երկրքը աս կրհաստատեն· որ շատ ալէկ կըլ՝ լար որ անոր խելք տայիք· ան ինտոր մէկ հրագիմը պէս՝ որ մութ տեղը լուս տա՝ ինչպէս որ ցորեկը գա լուսաւորէ, ու արուսեակ (առաջը) ձեր սիրտը ցայտէ :

20 Մէան թէ՝ առաջ աս պիտոր գիտնաք՝ որ ինչ գրված մար՝

բէութիւն իւրոց զրոց լուծումն ոչ ունի :

21 Քանզի ոչ երեք ըստ կամս մարգկան տուաւ մարգարէութիւն երբէք, այլ ի Տոգոյն սրբոյ կրեալք՝ խօսեցան մարդիկ յայ :

գարէութին որ կայ նմ՝ իր (բուած բանին) մեկնութինը՝ ոչ չէ :

21 Պատճառն որ՝ իսկի մարգարէութիմը չեղաւ՝ որ մարդոց կամացը ուզածինպէս տըրուած ըլլար. հապա՝ Տոգուն սրբէն շարժած՝ այդ պէսն մարդիկը ան խօսեցան :

ԳԼ. Բ.

1 Լինէին և սուտ մարգարէք ի ժողովրդեանն, որպէս և այժմ՝ ի ձեզ լինիցին սուտ վարդապետք. որք սպրդեալք մուծանեն հերձուածս կորստեան, և զեր տէրն զնեալ զնոսա՝ ուրացան. ածեն ի վերայ անձանց զարագահասն կորուստ :

2 Եւ բազումք անկեալ երթիցեն զհետ նոցա անառակութեանցն. վասն որոյ ճշմարտութեանն Ճանապարհ կայ հոյիցի :

3 Եւ ազահութեամբ մուտ ցածին բանի՛ք առնիցեն զձեզ վաճառանիս : որոյ դատաստանն ի բնէ ոչ դատարկանայ, և կորուստ նոցա ոչ նիրհես ցէ :

4 Օ՛ի երեք ի հրեշտակսն յանցուցեալս ած ոչ խնայեաց, այլ խաւարին կապանօք արկեալ ի տարտարոսն՝ ետ պահել ի դատաստան :

5 Ե՛ւ ոչ խնդրեաց աշխարհիս խնայեաց. բայց զութ թերսրդն զնոյ՝ զարդարութեան քարոզ պահեաց ի ջրհեղեղ՝ աշխարհի ամպարշտից ածեալ :

6 Եւ զքաղաքս սոդոմայ_ւոյն և գոմորացւոց զարձու_

1 (Ինչպէս որ) սուտ մարգարէներ եղան ան (առջի) ժողովրդին մէջը, անանկալ հիմա ձեր մէջը սուտ վարդապետներ պիտի ըլլան. որ (մէջերնիդ) սըկըսըմըլով՝ կորըստական աղանդներ խօսիին. որ իրենք գնող տրը՝ ուրանալով, իրենց վրա գալու կորուստը շուտով կրըերին :

2 Ու շատոնց ան անառակներուն ետևէ լինկած պիտոր երթան. որ անոր համար ճշմարտութինի Ճամբան ալ պիտի քամահրանքի տակ իյնա :

3 Ու (իրենց) ագահութինէն շարժած՝ մտքէ հնարած բաներո՛ւզին ձեզմով շահ բնել. որ ալ իրենց դատապարտութինը պարապը չերթար, ու իրենց կորուստը (վրանին կեցը) չի քնանար :

4 Որ թէ՝ ան մեզը գործող հրեշտակներուն ած խնայում չըբաւ, հապա՝ անոնք տարտարոսը ձգած՝ խաւար կապերովը՝ տրվու որ դատաստանին ատենին պահվին

5 Ու աշխրըքի առջի ատենները նալ չխնայեց. որ միան նոյը՝ որ (սխտին չետ) ինքը ուրին էր, արդարութին քարոզելու պահեց, երբոր անբարշտաց աշխրքին վրա ջրհեղեղը բերաւ :

6 Ու սոդոմայեցոց ու գոմորացոց քաղքներուն դատաստանն_

ցեալ յայհիւն՝ զաւետեցաւ, օրի-
նակ աւ յապայ ամպարշտելոցն
կացուցանէը :

7 Եւ զարդարն զղջմա ձան-
ձրբացեալ յանկարգ զիջու-
թեան վնասից՝ փրկեաց :

8 Քանզի սկանաւոնս և ա-
կանջալուր արդարն բնակեալ
՚ի միջ նոցա, օր ըստ օրէ զեր
սուրբ ոգիսն՝նոցա անօրէն զբ-
նագիւքն տանջէը :

9 Գիտէ տր զածապաշտս
փրկել՝ ՚ի փորձութենէ, և զա-
նօրէնս պահել ՚ի տանջանս ա-
ւուրն դատաստանի :

10 Մանաւանդ՝ որ զհետ
մարմնոյ պղծալից ցանկու-
թեանց իցեն երթեալ · արհ-
մարհողք տէրութեանն , ժր-
պիրջք, յանդգնանք, չգանգլ-
տեն զփառս ոչ հայհոյել :

11 Որ հրեշտակք զօրու-
թեամբ և կարողութեամբ քան
զնոսա մեծամեծք՝ չածեն զնո-
քօք ՚ի ՚ոնէ զհայհոյութեանն
դատաստան :

12 Այլ սոքա իբրև զան-
խօս անասունս՝ ըստ բնածին
բարուցն յեղծումն և յապա-
կանութիւն , որոց չենն գի-
տակ՝ հայհոյին, յապականու-
թեան իւրեանց՝ և ապակա-
նեսցին , տանջեալք ՚ի վար-
ձուցն անիրաւութեան :

13 Որ ցանկութիւն զա-
ւուրն փափկութիւն համարին·
բծկանք, արատաւորք, փափ-
կացեալք ՚ի պատիրս իւրեանց,
լեեալ ձեզ խրախճանակիցք :

14 Այլ ունին հանգոյնս
պոռնկաց՝ անդադարս ՚ի մե-
ալ իրենք մոխիր զարձուներով
ըզաւ.(որ ան՝)եակէնեկած անբա-
րիշտներուն դիմաց օրինակ մընա:

7 Ու արդար ղովոբ, որ կը-
տառապէր (ան մարդոց) ամօթա-
լի բաներըը կարգէ դուրս ըզած-
ներնէն , (անիկա) խալըսեց :

8 Որ՝ ան արդարը անոնց միջը
բնակուած, ամէն օր՝ անոնց ան-
օրէն վարմունքը աչքովը տեսնե-
լով ու անկէձովը լսելով, իր
սուրբ հոգովը կըտանջէը :

9 Տէրը գիտէ՝ աստապաշտներըը
փորձութենէն խալըսելը, ու ան-
օրէններըը պահել՝որ դատաստանին
օրը տանջանքներով պատժըվին:

10 Այ՛լ էվելն անոնք՝ որ մար-
մնու պղծութիւններով լիք՝ ցան-
կութենի բաներու եաւէ են . որ
տէրութիւններըը կըբամարհեն , ե-
բնութեն պատած , յանդուգ՛ որ
չեն վախնար փառաւորներուն
դէմ հայհոյրանք ընել .

11 Այ՛ն որ՝ հրեշտակներըը՝ ի-
րենցմէն շատ էվելի զօրաւոր ու
կարող , անոնց ըզած հայհոյրան-
քին պատիժը տալէն առած վըս-
նեն չեն բերեր :

12 Իսայց սոսոնք՝ անբան ան-
սուններուպէս՝ իրենց բնութենէն
կըշարժին աւրելու ու պականե-
լու . չը գիտցած բաներնուն դէմ
հայհոյրանք կընեն . որ իրենց ա-
պականութենովը պիտի ապա-
կանվին, իրենց անիրաւութենով
առած վարձքերէն տանջըվելով :

13 Որ օրերնէն ցանկութենով
անցուներըը՝ երջանկութին կըսե-
պեն . ապտեղով արատներով ի-
րենց խաբեբայութենովը փափ-
կըցած, ձեր հետ կերուխումի ը-
նկեր կըլլան:

14 Պոռնիկներու նման է աչվը-
նին , որ միշտ զործելէն դադրիլ

զայ, պատրէն զանձինս յոչ-ղողոյ· որ ունին սիրտ հա-բեալ զաղտնութեան, մանաւանդ անիծիլ:

15 Թողեալ զուղղորդ ճա-նապարհն՝ մոլորեցան, գնե-ցին երթեալ ճանապարհին բաղա-մայ բեաւրեայ, զվարձս անի-րաւութեան սիրեցին:

16 Այլ կշտամբանս իւրմ ա-նօրէնութեանն ստացաւ. գնչ-ման խօսուն, մարգկիկն բար-բառելն բարբառեալ՝ արգել զմարդարէին զանօրէնութիւնն:

17 Այսպիսիքն են աղբիւրք անջրդիք՝ և մէգք վարեալք ի մրրկէ· որոց աղջամուղջք խաւարին յաւիտեան պահեալ կան:

18 Մեծաբանս մեռուեայ բարբառեալ՝ պատրեն զիջու-թեամբք անառակ ցանկու-թեամբք մարմնոյ, զայնոսիկ որ ստոյգն փախչողին յայնա-նէ որ ի մոլորութեանն շրջե-ցին:

19 Կոչեն ազատութիւն խոս-տանան, և ինքեանք ապակա-նութեանն ծառայք են· զի որով իւիք և յաղթիցի ոք, նորին և ծառայ է:

20 Զի եթէ փախուցեալք ի պղծութեանց աշխարհի՝ գիտութեամբ նն մերոյ և փրկչին յսի քրի, և դարձեալ բնդ նմին շաղեալք պատիցին, եղեցի նոցա վախճանն չար քան զառաջինն:

21 Զի լաւ էր նոցա՝ թէ չնաւ չէր իսկ ծանուցեալ զար-զարութեանն ճանապարհ, քան՝ զի ծանեան՝ և յետս կացին ի սուրբ պատուիրանէն որ նոցա աւանդեցաւ:

չունին· որ անչաստատներուն մաղձին կրնաբերեն· ան անիծից որդիքն՝ որ սրբտերնին ագահու-թենի կրցած է:

15 Որ շիտակ ճամբան ձկղի թողած՝ մոլորած, բաղաամի բէ-ոյրայի (որդուն) ճամբան բռնե-ցին երթալու, անիրաւութենի վարձք սիրելով.

16 Որ՝ իր անիրաւութենը ե-րեսը զարնողը՝ ձկ էշը եղաւ, ան որ խօսիլ չունի, որ մարդ-կային ձանով խօսելովը՝ ան մար-գարէին անօրէնութիւնը արգիլեց:

17 Անոնք՝ ջուր չունեցող ակ-պուր են, ու մրրիկ քամիե քըշ-ված մշուշ ամպեր (են). որ յա-ւիտենական թանձրը մութը՝ ի-րենց համար պահված է:

18 Խոշոր խոշոր փուչ բաներ զրուցելով, անպարկեշտ բաներ-ով, մարմնու անառակ ցանկու-թիւններով՝ կրնաբերեն ա-նոնք՝ որ ըղդրմընկէն կրփախչէ-ին անանկներուն՝ որ մոլորութենի մէջ կրպարտին:

19 Անոնց ազատ ըլլալու խօսք կուտան, ու իրենք ապականու-թենի ծառայ են. պատճառն որ՝ ինչ բանի որ մէկը տակ կինայ՝ ինքը անոր ծառան կրլլայ:

20 Որ թէ (անոնք) որ չեղմը աշխարքքի պղծութիւններէն քաշ-վեցան՝ մեր տը ու փրկիչ յս քրը ճանչնալով, ու նորէն որ դառ-նան անոր մէջը շաղվին փախտը-վին, անոնց վերջը ալ չար կըլ-լա՝ քան թէ առաջը:

21 Ինչու որ՝ ալ լաւ էր որ իրենք արդարութենի ճամբան իսկի ճանչցած չըլլային, քան թէ որ ճանչցան՝ ու ետ դարձան ան սուրբ պատուիրանքէն որ անոնց տրըվեցաւ որ պահեն:

22 Եկեալ ՚ի զէպ նոցա ՚ն՚համբիտ առակն զգօնութեան, եթէ շուն դառնայ անդրէն ՚ի փսխած իւր, և խոզ լուացեալ՝ ընդ տիղմն թաւալեալ:

22 Որ իրենց վրայովը լաւ՚յար՚ մար կուգա ան խմաստուն առակը, թէ՝ շունը նորէն իր փսխունքին կդառնա, ու վրլացված խոզը՝ ցեխի մէջ կրթաւրլտրվի:

Գ.Ի· Գ·

1 Ոայս ձեզ սիրելիք՝ երկրորդ թուղթ գրեմ. ո՚րով զարթուցից ՚ի յիշատակ զհաստատուն միտս ձեր·

2 Յիշել դառաջագոյն ասացեալ պատգամս ՚ի սրբոց մարգարէից, և յառաքելոցն ձերոց՝ զպատուէրս տեառն և փրկչին:

3 Գայց գայս նախ գիտաս՚ջիք, զի յաւուրս յետինս ե՚կեսցեն արհամարհո՚ղք՝ այպանո՚ղք, որ ըստ իւրեանց ցան՚կութեանցն գնայցեն.

4 Եւ ասիցեն. ո՚ւր են աւետիք գալստեան նորա. զի յորմէ հետէ հարքն նո՚ւաղեցին՝ ամենայն ինչ նոյնպէս կայ մնոյ ի՚ս՚կզբանէ արարածոց:

5 Եւ գայն մոռացեալ լինի նոցա՝ որք գայն կամին. եթէ երկինք՝ եղեն իսկզբանէ, և երկիր՝ ՚ի ջրոց, և ջրովք՝ հաստատեալ կան բանիւն այ:

6 Վասն որոյ երբեմն աշխարհ՝ ջրհեղեղմա՚ ապակա՚նեալ կորեաւ:

7 Եւ այժմ երկինք և երկիր նովին բանիւ զանձեալ են. հրոյ պահեալք յօրն դատաստանի, և կորստեան ամ՚պարիշտ մարդկան:

8 Եւ այս և մի լեցի ՚ի ձէնջ ծածկեալ՝ սիրելիք, զի

1 Սիրելնե՚ր՝ աս երկրորդ հ՚ղու թուխան է՚ որ ձեզի կը՚գրեմ. որ անով ձեր չաստատ ե՚ղած մտքերնիդ արթընցունեմ՚ յիշելու.

2 Որ մովընիդ բերիք՝ ան որ սուրբ մարգարէները առաջուցմէ ըսին (այ) խօսկերը, ու ձեր ա՚ռաքեալներն ալ՚ ան՚ տնը ու փրկչին ապրպրած բաները:

3 Մխան թէ՚ առաջ աս գիտնաք, որ եակի ատենները պիտի քա՚մահրանքով ծիծաղ ընող (մարդիք) գան, որ իրենց ցանկութի՚ներու ուզածնիպէս վարվին.

4 Ու ըսեն. ո՚ւր է ան որ ին՚քը գալու խոստմունք ըրերէր. որ՝ քանի որ (մեր) հարերնիս նընջեցին (մեռան), ամմէն բան անանկ կեցած՝ կըլլա ինչ որ աշխրքի ըստեղծումէն չեակ:

5 Անոնք որ ասանկ կուգեն (ըսել), իրենք ան մոռցերնեն՝ որ ըսկիսպը՝ երկինքը եղաւ, որ երկերը՝ ջուրէն, ու ջուրը այ խօսկովը չաստատ կեցերեն:

6 Անոր չամար մէկ ատենմը աշխարքը ջրհեղեղովը ապակա՚նած կորսրվեցաւ:

7 Ու հիմայալ երկինքն ու երկիրս ան խօսկովը կեցերեն, դատաստանին օրվանը կրակին (էրելուն) պահված, ու անբարիշտ մարդոցը կորսրվելուն:

8 Ու սակայ սիրելնե՚ր՝ ձեզմէ ծածուկ չըմընա գիտնալու, որ

մի օր ՚ի՝ իբրև գՀաղար ամ է, և Հազար ամ իբրև զմի օր :

9 Ո՛չ յամեցուսցէ Տէր զա-
ւետիսն՝ որպէս ոմանք յամին
Համարին, այլ երկայնամիտ
լինի առ ձեզ. քանզի ոչ կամի՝
եթէ ոք կորնչել, այլ զամ-
նեցսն Հասանել յապաշխա-
րութիւն :

10 Այլ եկեսցէ օր Տեառն իբ-
րև գողոյ. յորում՝ երկինք
տագնապաւ անցցեն, և բնու-
թիւնք տրոմ կիզեալ լուծցին,
և երկիր՝ և որ միանգամ՚ի նմա
գործք գտանիցին :

11 Եւ ՚ի լուծանել այսպէս
այսր ամենայնի, որպիսի՞ ինչ
պարտ իցէ ձեզ գտանել. այլ
սուրբ և ածապաշտ կարգա-
ակն ունել :

12 Եւ փութալ Հասանել
զայտեան աւուրն Տեառն. յորում՝
երկինք տրայրեացք լուծանի-
ցին, և բնութիւնք տրդեհեալ
Հալեցին :

13 ՀՆորոյ երկնից՝ և նորոյ
երկրի՝ ըստ աւետեացն Հայե-
ցեալ սպասեմք, յորս արդա-
րութիւնն բնակէ :

14 Վասն որոյ սիրելիք՝ այ-
սոցիկ սպասեալ, փոյթ յանձին
ունիջիք՝ անբիծք և անարատք
գտանել նմա՚ի խաղաղութիւն:

15 Եւ զՏէր երկայնմտու-
թիւնն՝ փրկութիւն Համա-
րեսջիք : զոր օրինակ և սիրելի
եղբայրն մեր պաւղոս, ըստ շը-
նորհսն իմաստութեանն նմա
յՀՏ՝ գրեաց ձեզ :

16 Որպէս և յամենայն իսկ
թուղթսն խօսի վասն այսոցիկ.
ՈՐՆ (զիմացը՝) մէկ օրը՝ Հազար
տարիքի պէս է, ու Հազար տարին՝
մէկ օրվան պէս :

9 (Աստի) տէրը (իր) խոստացա-
ծը պիտուր չուշացընէ, ինչուր որ
ամանք կըսեպին որ ան՝ ուշ կըլլա:
Նապա՝ որ ձեզի կըՀամբերի, ա-
նոր Համար որ կուզէ մէկինալ
չի կորսըվի, Հապա որ՝ ամէնքը
ապաշխարութեան գան Հանին :

10 Մրեան թէ՝ ան ՈՐՆ օրը՝
գողալու (անկարծ) պիտի գա.
որ անտեն երկինքը՝ ահագին
կերպով պիտուր անցնի երթա, ու
տարերքը կրակով էրած քայքայ-
վին, անանկ երկիրս ալ՝ իր մէջի
եղած բոլոր բաներովը :

11 Ու աս ամէնն բաները ա-
սանկ որ պիտի քայքայվին, ալ
ինչ կերպով պէտք է որ դուք
ըլլաք, որ սուրբ վարքով ու ածա-
պաշտութեամբ անոր ըսպասէք :

12 Ու անանկ ջանքով ՈՐՆ գա-
լու օրվանը պատրաստ կենաք.
որ տեսն երկինքը կրակով է-
րած կըքայքայվի, ու երկրիս
տարերքը բոլը առած կըՀալին:

13 Մրալ ան իր խոստմունքին
պէս՝ նոր երկինքի ու նոր երկիրի՝
աչվընիս դրեր կըսպասենք, որ
արդարներուն բնակարանն է :

14 Ասոր սիրելիներ՝ (դուք)
աս բաներուս ըսպասելով՝ բոլո-
րովին ջանացէք որ առանց արատի
ու արատիմը (ՏԸրը) ձեզ իր խա-
ղաղութեանին մէջը գտնա:

15 Ու անոր երկայնմտութիւնը՝
(ձեզի) փրկութեան ըլլալու (Հա-
մար) սեպեցէք : ինչպէս որ մեր
պօղոս սիրելի եղբայրն ալ, աս-
տուածմէ իրեն շնորը եղած իմաս-
տութենովը՝ ձեզի գրեց :

16 Ինոսոր որ (իր) բոլոր թուղ-
տերուն մէջը աս բաներուս Հա-

յոս զանի ինչ ինչ գժուար-
իմաց , զոր անուսմունքն և
յաղագս կամակորն · որ-
պէս և զամենայն իսկ գիրս՝ առ
ի բանից անձանց կորուստ :

17 Դուք այսուհետև սիրե-
լիք՝ իբրև գիանախազէտս զգու-
շասջիք , զի մի անառակ մո-
ղորդութեամբն զգայծեալք՝ ան-
կանիջիք յաստեաց հաստա-
տութենն :

18 Աճեցէք շնորհօք և գի-
տութիւն ան մերոյ և փրկչին յի-
սուի քրիստոսի : Նմա փառք՝ և այժմ և
յօրն յաւիտենից . ամէն .

մար կրնասցի · որ անոնց մէջը
քանիմը բաներ ալ կրգանըվին
գըժար հասկընալու . որ անիկա՝
տրգէանները ու անհաստատ խել-
քոմներըը կրծռըմռկին · ինչպէս
ուրիշ բոլոր գրվածներնալ , ի-
րենց անձերնին կրսըընցունելով :

17 Ալ անոնկ՝ (դուք) սիրելի-
ներ՝ բանը առաջ գիտցողն պէս՝
ըզգուշ կեցիք՝ որ չըլլա թէ անոնց
անառակ մոլորութինովը պըլըշ-
տրկված՝ ինքնաք ան ձեր բռնած
հաստատ կացքէն :

18 Տըն մերոյ ու փրկչին յիսի քրի
ստոսի շնորհովը ու գիտութինովը աճե
ցէք : իրեն փառք՝ հիմա ու ինչվան
ան յաւիտենական օրը · ամէն :

ԹՈՒՂԹ
ՅՈՎՀԱՆՆՈՒ Ա.ՅԻՆ .

ԳԼ · Ա ·

1 ՈՐ էրն իսկզբանէ · զոր-
մէ լուաքն , որում ակա-
նատեսն իսկ եղեաք . ընդ որ
հայեցաքն , և ձեռք մեր շօշա-
փեցին ի վերայ բանին կենաց :

2 Եւ կեանքն յայտնեցաւ ,
և տեսաք , և վկայեմք , և
պատմեմք ձեզ զյաւիտենա-
կան կենացն , որ էրն առ հօր՝
և երևեցաւ մեզ :

3 Զոր տեսաքն և լուաք՝
պատմեմք և ձեզ , զի և դուք
հաղորդութիւն ունիցիք ընդ
մեզ . և մեր հաղորդութիւնն
իցէ ընդ հօր՝ և ընդ որդւոյ Ի-
բում յի քրիստոսի :

1 Ան՝ որ ինքը սկիսպէն էր ·
որ իր վրան լսերէինք , ա-
նիկա բուն աչքոիս տեսանք · ան
նայեցանք , ու մեր ձեռվընս իրեն
դըպուցինք , որ կենաց բանն էր :

2 Ու ան կեանքը յայտնըվեցաւ ,
ու (ինքը) տեսանք , ու կրվկայենք ,
ու ան յաւիտենական կեանքին
վրա ձեզի կրպատմենք , որ հօրը
քովն էր՝ ու մեզի երևցաւ :

3 Ան որ տեսանք ու լսեցինք՝
ձեզի ալ կրպատմենք , որ դուք
ալ մեր հետը հաղորդութին ու-
նենաք · ու մեր հաղորդութինը
հօր (այ) հետը ըլլա , ու իր որդուն
յիսի քրիստոսի հետ :

4 Եւ զայս գրեմք ձեզ, զի
ձեր ուրախութիւնն կատա-
րեալ իցէ :

5 Եւ այս են աւետիք զոր
լուաք առ ՚ի նմանէ՝ և պատ-
մեմք ձեզ . զի ած լոյս է, և
խաւար ՚ի նմա չէք՝ և ոչ մի :

6 Եթէ ասիցեմք՝ եթէ հա-
ղորդութիւն ունիմք ընդ նմա,
և ՚ի խաւարի շրջիցեմք, սը-
տեմք՝ և ոչ առնեմք զճշմար-
տութիւնն :

7 Իսկ եթէ ընդ լոյս գնայ-
ցեմք՝ որպէս նա ՚ի լոյս է, հա-
ղորդութիւն ունիմք ընդ մի-
մեանս . և արիւնն յիսուի
Նորա սրբեսցէ զմեզ յամենայն
մեղաց :

8 Եթէ ասիցեմք՝ եթէ մեղս
ինչ մեք ոչ ունիմք, զանձինս
խաբեմք, և ճշմարտութիւն
՚ի մեզ ոչ գոյ :

9 Այլ եթէ խոստովան
լինիցիմք զմեղս մեր, հաւա-
տարիմ է նա՝ և արդար՝ առ ՚ի
թողուլ մեզ զմեղս մեր, և սրբ-
բել զմեզ յամենայն անիրաւութէ :

10 Եթէ ասիցեմք՝ եթէ
ոչ ինչ մեղաք, սուտ առնեմք
զնա, և բանն Նորա ոչ է ՚ի
մեզ :

4 Ու աս ձեզի կը գրբենք՝ որ
ձեր ուրախութիւնը կատարեալ
ըլլա :

5 Ու ան աւետմունքին բանը
որ իրմէն լսեցինք ու ձեզի կը պատ-
մենք՝ աս է . որ՝ ած լոյս է, ու ա-
նոր մէջը խոկի խաւար մը չկայ :

6 Թէ որ ըսենք՝ որ անոր հետ
հաղորդութիւն ունինք, ու (մենք)
խաւարին մէջը պտրտինք, սուտ
կ՚ըսենք, ու ճշմարտութիւնի բան
չէ ըրածնիս :

7 Հապա թէ լուսովը եր-
թանք, ինչպէս որ ինքը լուսոյն
մէջն է, ալ հետը մեզ հաղոր-
դութիւն ունինք, ու իր յի որ-
դուն արիւնը մեզ ամէն մեղքե-
րէն կը մաքրէ :

8 Թէ որ ըսենք՝ որ մենք մեղ-
մը չունինք, ինքիր անձերնիս կը-
խաբենք, ու մեր ներսը ճշմար-
տութիւն չկայ :

9 Հապա թէ որ ըսենք՝ թէ իրաւ
որ մենք մեղք ունինք. ինքը հաւա-
տարիմ ու արդար է՝ որ մեր մեղա-
ցը թողութիւն կուտայ, ու մեզ բո-
լոր անիրաւութիւններէն կը մաքրէ:

10 Թէ որ ըսենք՝ որ խոկի մեղք
մը չենք գործեր, անիկա սուտ
զրուց կ՚ընենք, ու ալ անոր խօս-
քը մեր ներսերնիս չէ :

Գ Լ . Բ .

1 Որդեակք իմ, զայս գրեմ
ձեզ՝ զի մի մեղցէք . և
եթէ մեղցէ ոք, ունիմք բա-
րեխօս առ ած զյի քն՝ զար-
դարն և զանարատ :

2 Եւ նա է քաւութիւն մե-
ղաց մերոց . և ոչ եթէ մերոցն
միայն՝ այլ ամենայն աշխարհի :

3 Եւ յայսմիկ գիտեմք՝ եթէ

1 Իմ՛ որդեկիկներըս՝ աս ձեզի
կը գրեմ՝ որ չէ մեղանչէք .
ու թէ որ մէկը մեղանչելու ըլլա,
այ քով բարեխօս ունինք յի քը,
ան՝ արդարն ու անարատը :

2 Այն՝ որ ինքը մեր մեղացը
քաւութիւն ընողն է . ու չէ թէ
միայն մերինները, հապա բոլոր
աշխարհքինն ալ :

3 Ու ասով գիտենք որ ինքը

ծանեաք զնա, եթէ զպատուիրանս նորա պահիցեմք :

4 Որ ասիցէ՝ եթէ ծանեայ զնա, և զպատուիրանս նորա ոչ պահիցէ՝ սուտ է, և ճշմարտութիւն ի նմա ոչ գոյ :

5 Իսկ որ պահէ զբան նորա, արդարև ի նմա է կատարեալ սէրն աստ : այսուիկ ծանանեմք՝ եթէ ի նմա եմք :

6 Որ ասիցէ ի նմա բնակել, այնպէս պարտի զնալ՝ որպէս և նայն գնաց :

7 Սիրելիք՝ ոչ եթէ նոր պատուիրան ինչ գրեմ ձեզ, այլ զհին պատուիրանն՝ զոր իսկզբանէ ունէիք. և հին պատուիրան՝ բանն է զոր լսեաք :

8 Դարձեալ նոր պատուիրան գրեմ ձեզ՝ որ է ճշմարիտ ի նմա և ի ձեզ. զի խաւարն անցանէ, և լոյսն ճշմարիտ արդէն իսկ երևի :

9 Որ ասէ եթէ ի լոյս իցէ՝ և զեղբայր իւր ատիցէ, սուտ է՝ և ի խաւարի է տակաւին :

10 Որ սիրէ զեղբայր իւր, ի լոյս բնակէ՝ և գայթագղութիւն ի նմա չիք :

11 Իսկ որ ատեայ զեղբայր իւր՝ ի խաւարի է, և ընդ խաւար շրջի. և ոչ գիտէ յո երթայ, զի խաւարն կուրացոյց զաչս նորա :

12 Գրեմ ձեզ որդեակք, զի թողեալ են ձեզ մեղքն ձեր՝ վասն անուան նորա :

Ճանչցեր ենք՝ թէ որ իրեն պատուիրանքները պահենք :

4 Մեկը որ ըսէ թէ՝ (ես) ինքը Ճանչցեր եմ, ու անոր պատուիրանքները չի պահէ, անիկա սուտցող է, ու իր ներսի դին Ճշմարտութիւն չկայ :

5 Բայց անիկա՝ որ անոր խօսքը կը պահէ, ըզդրմ՛ընչ այ կատարեալ սէրը անոր ներսի դին է: ասով կը գիտնանք որ (մենք) իրեն մէջն ենք :

6 Ան որ կըսէ թէ՝ (ես) անոր մէջը կը բնակիմ, (ինքնալ) ա նանկ պիտոր երթա՝ ինտոր որ անիկա գնաց :

7 Սիրելիներ՝ ան որ ձեզի կը գրեմ՝ չէ թէ մէկ նոր պատուիրան մ՛ընէ, հապա՝ ան հին պատուիրանքն է որ առաջուցմէ կայ ունէիք. ու հին պատուիրանքը ան խօսքն է՝ որ (դուք) լսեցիք :

8 Անանկ մէյմալ՝ նոր պատուիրանքմ՛ը ձեզի կըգրեմ, ան որ ըզդրդ անոր մէջը ու ձեր մէջն է. ինչու որ՝ խաւարը (մութը) անցաւ, ու Ճշմարիտ լոյսը ալ բան հիմա կերևնակոր :

9 Մեկը որ ըսէ թէ՝ (ինքը) լոյսու մէջ է, ու իր եղբայրըատէ. անիկա սուտ կըսէ, որ (ինքը (դեռ խաւարին մէջն է :

10 Ան որ իր եղբայրը կըսիրէ, (ինքը) լոյսուն մէջը կըբնակի, ու իր ներսի դին ծըռութիւն չկայ :

11 Բայց ան՝ որ իր եղբայրը կատէ՝ անիկա խաւարի մէջ է, ու մըթու մէջ կըպտրտի, ու չի գիտեր ուր կերթա, ինչու որ՝ խաւարը անոր աչքը կուրցուցեր է :

12 Ձեզ կըգրեմ որդիկներ, որ ձեր մեղքերնիդ թողված են, անոր անունին համար :

13 Գրեմ ձեզ չարք, զի ծա-
նեայք դուք գայն՝ որ խոզքա-
նէնէ: գրեմ ձեզ երիտասարդք,
զի յաղթեցէք դուք չարին:
14 Գրեցի ձեզ մանկունք,
զի ծանեայք դուք զՀայրն:
գրեցի ձեզ հարք, զի ծանեայք
դուք գայն որ խոզքանէնէ: գրե-
ցի ձեզ երիտասարդք, զի կք
դուք հզօրացեալք, և բանն
այ՝ ի ձեզ բնակէ, և յաղթե-
ցէք դուք չարին:
15 Մի սիրէք զաշխարհս,
և մի որ ինչ յաշխարհի է:
16 Եթէ ոք սիրէ զաշխարհ,
ոչ է՝ ի նմա սէր հօր: զի ա-
մենայն որ ինչ յաշխարհի է՝
ցանկութիւն է մարմնոյ, և
ցանկութիւն է աչաց, և ամ-
բարտաւանութիւնն աստի կէ-
նացս. որ չէ աւ՝ ի հօրէ՝ այլ
յաշխարհէ աստի է:
17 Եւ աշխարհս անցանէ՝
և ցանկութիւնն. իսկ որ առնէ
զկամս այ՝ մնայ՝ ի յաւիտեան:
18 Մ՚րդեակք՝ յետին ժամա-
նակ է, և որպէս լուարուք՝ ե-
թէ նեռն գալոց է, և արդէն
իսկ նեռինք բազումք եկեալ
են, որով մարթեմք իմանալ՝
եթէ յետին ժամանակ է:
19 Ա՛ւ՝ ի մէնջ ելին, այլ
ոչ էին՝ ի մէնջ. զի եթէ՝ ի մէնջ
էին՝ ապա աւ մեզ մնային.
այլ զի յայտնի լինիցին՝ եթէ
ոչ էին ամենեան նոքա՝ ի մէնջ:
20 Եւ դուք օծութիւն ու-
նիք աւ՝ ի սրբոյն, և գիտէք
ամենեքին:
21 Ոչ գրեցի ձեզ՝ եթէ ոչ
գիտէք զճշմարտութիւնն, այլ
եթէ գիտէք գնա, և եթէ՝ զի
ամենայն ստութիւն՝ ոչ է՝ ի
ճշմարտութենէ անտի:
13 Ձեզի կըգրեմ՝ հարեր, որ
դուք ճանչցաք անիկա՝ որ ինքը
ըսկիսպէն է: ձեզ կըգրեմ կարէճ-
ներ, որ դուք չարը եխտեցիք:
14 Ձեզի գրեցի տղաքներ՝ որ
դուք Հայրը ճանչցաք: ձեզի գրե-
ցի հարեր, որ դուք ան ճանչցաք՝
որ ինքը ըսկիսպէն (է): ձեզի գրեցի
կարէճներ՝ որ դուք ուժովցած
էք, ու այ խօսկը ձեր ներսը
կըբնակի, ու դուք ան չարը եխ-
տեցիք:
15 Աշխարքը մի սիրէք, ու
ո՛չալ ինչ որ աշխարքին մէջը կա:
16 Ի՝ որ մեկը աշխարքը սիրէ,
անոր ներսը Հօրը սէրը չկիա:
պատճառը, ան ամէն բանն որ
աշխարքի մէջ է՝ անիկա մարմնու
ցանկութիւն է, ու աչից ցանկու-
թիւն է, ու աս կեանքիս ամբար-
տաւանութիւնը. որ ալ ան՝ Հօր-
մէն չէ, հապա աս աշխարքէս է:
17 Ու աշխարքը կանցնի, ու (իր)
ցանկութիւնալ. բայց ան՝ որ այ
կամքը կընէ՝ յաւիտեան կըմնա:
18 Մ՚րդեկիկներ՝ ալ ատենին
եակերն է. ու ինտոր որ լսեցիք-
նէ՝ նեռը պիտոր գա, ու հիմըկուց
ալ շատ նեռեր եկեր են, որ ա-
նով կըընանք իմանալ որ եակի
ատենն է:
19 (Անոնք) մեր մէջէն ելան,
բայց մեզմէն չէին. որ ի՝ մեզմէն
ըլլային՝ ալ մեր քովը կըմնային:
հապա ելան որ յայտնի ըլլան՝ ի՝
անոնք ամէնքը մեզմէն չէին:
20 Ու դուք (ան) սուրբէն օ-
ծում որ առիք, ալ ամէն (բան)
գիտէք:
21 Չեզի գրեցի՝ չէ՝ անոր չա-
մար որ՝ ճշմարտութիւնը չէք գի-
տեր, հապա որ ան գիտէք, ու ան
ալ՝ որ ինկի սըտութենէմը՝ ան
ճշմարտութենէն առաջ չելար:

22 Իսկ ո՞ իցէ սուտ, եթէ ոչ՝ որ ուրանայ եթէ յի՛սուսէ քան · նա իսկ է նեռն, որ ուրանայ զՀայրն և զորդի :

23 Ամենայն որ ուրանայ զորդի, և ոչ զՀայրն ընդունի· որ խոստովանի զորդի, նա և զՀայրն ընդունի :

24 Դուք՝ զոր լուարուքն իսկզբանէ՝ իձեզ բնակեսցէ · զի եթէ ի ձեզ բնակեսցէ զոր իսկզբանէն լուարուք, և դուք յորդին և ի Հայր բնակեսջիք :

25 Եւ այս են աւետիքն՝ զոր աւետարանեաց նա մեզ՝ զկեանսն յաւիտենականս :

26 .Օայս գրեցի ձեզ, զի մի ոք զձեզ մոլորեցուցանիցէ :

27 Եւ դուք օծութիւնն՝ զոր ընկալարուք ի նմանէ, բնակեսցէ ի ձեզ : և չէ ինչ պիտոյ՝ եթէ ոք զձեզ ուսուսցէ, այլ որպէս զի նորա օծութիւնն ուսուցանիցէ զձեզ վասն ամենայնի · և ճշմարիտ է՝ և չէ սուտ . և որպէս ուսոյցն զձեզ, կայք ի նմա :

28 Եւ այժմ որդեակք՝ կացէք ի նմին . զի եթէ յայտնեսցի , ունիցիմք համարձակութիւն , և մի ամաչեսցուք ի նմանէ ի գալստեան նորա :

29 .Օի եթէ գիտիցէք՝ ե՛թէ արդար է նա, իմասջիք ե՛թէ ամենայն որ առնէ զարդարութի՛ւն՝ առ ի նմանէ է ծնեալ:

22 Հապա ալ ո՞վ է սուտ զրուցը, թէ չէ ան՝ որ կուրանա թէ յի՛սուսը՝ քա՛ւ չէ· ան՝ բուն ինքը նեռն է՝ որ կուրանա Հայրը՝ ու որդինալ:

23 Ամէն ով որ որդին կուրանա, ինքը Հայրնալ չի ընդունիր · ան որ որդին կընդունի՝ անիկա Հայրնալ կընդունի :

24 Ան որ դուք՝ ըսկիսզը լսեցիք՝ (անիկա) ձեր մէջը կրնակի · որ թէ ան ըսկիսէն լսած նիւ ձեր մէջ կրնակի , ալ դուք որդուն ու Հօրը մէջը կրընակիք :

25 Ու ան խոստմունքը որ ինքը մեզի խօսկ տրվաւ, սա յաւիտենական կեանքն է :

26 Ա՛ս բանը ձեզի գրեցի՝ որ չըլլա թէ մէկը ձեզ մոլըրցուսնէ :

27 Ու ան օծումը որ դուք իր մէ ընդունեցաք՝ ձեր ներսերնիդ կրմնա . ու ալ պէտիը չըլլար որ մէկը ձեզի սորվըցունէ · Հապա ինտոր որ անոր օծումը ամէն բանի վըայով ձեզի կրսորվըցունէ : ու ան Հրշմարտութի՛ւն է, ու սուտ թի՛ւն չէ : ու ալ ան ինչպէս որ ձեզի սորվըցուց՝ անոր մէջը կեցէք :

28 Ու հիմա որդեկիկներ՝ անոր (օծումին) մէջը կեցէք · որ երբ (ինքը) յայտնըվի՝ (իր գիմացը) վստահութի՛ւն ունենանք , ու իրմէն չամրնչնանք իր գալուստեներ:

29 Ու երբ թէ (դուք) գիտէք՝ որ ինքը արդար է, գիտցէք ալ՝ թէ ամէն ով որ արդարութի՛ւն կընէ՝ անիկա անկից է ծներ :

ԳԼ · Գ ·

1 Տեսէք՝ որպիսի սէր շնորհեաց մեզ Հայր, զի որդիք այ կոչեսցուք մեք : վասն այսորիկ աշխարհ ոչ ճանաչէ զմեզ , քանզի ոչ ծանեաւ զնա :

1 Գայեցէ՛ք որ ինտոր սէր Հայրը մեզի շնորք ըրաւ , որ մենք այ որդիք ըսվընք : անոր Համար աշխարքը մեզ չի Հանչնար , ինչու որ՝ ինքը ան չի Հանչցաւ :

2 Այրեալնե՛ր՝ չիմա (մնա՛ք) այ
որդիք ենք, ու ինչ որ պիտի բե-
լանք՝ դեռ ան յայտնի չէ. զի-
տենք որ երբոր անիկա յայտնվի՝
իրեն նման պիտոյ բլլանք. պատ-
ճառն որ՝ ինքը անանկ պիտի
տեսնանք ինատոր որ է նէ:

3 Ու ամեն ով որ աս յոյսս
իր անձին մէջը ունի, անիկա իր
անձը կըմաքրէ, ինչպէս որ ան
ալ մաքուր է:

4 Ամեն ովոր մեղք կըգործէ՝
անիկա ալ օրինաց դէմ կընէ. որ
բուն մեղքը օրինաց դէմ ընել է:

5 Ու գիտեք որ՝ ինքը անոր
համար յայտնվեցաւ՝ որ (մեր)
մեղքերը վերցընէ. ու իր մէջը
մեղք չկա:

6 Ամեն ովոր անոր հաստատ-
ված է՝ ան չի մեղանչեր. ու ամ-
են ովոր կըմեղանչէ՝ անիկա ան
տեսած չէ, ու ան չէ ճանչցած:

7 Տըղաք՝ չըլլա՛ որ մեզ ձեզ
խաբէ. ան որ արդարութիւն կը-
նէ՝ (ինքը) արդար կըլլա՝ ինատոր
որ ան ալ արդար է:

8 Ու ան՝ որ մեղք կընէ, (ին-
քը) սատանայէն է. ինչու որ՝
սատանան բակիսպէն չեռ կը-
մեղանչէ. անոր համար ալ՝ որ-
դին այ յայտնըվեցաւ, որ սատա-
նային ըրած գործքերը ուրկէ:

9 Ամեն ովոր աստուծմէ է
ծնած՝ անիկա մեղք չընէր. պատ-
ճառն որ՝ անոր սերմը իրեն մէջ
կըմնա, ու ան որ աստուծմէն
ծնած է՝ չի կրնար մեղանչել:

10 Սոսկ մեզմեզկ (գաւաճ)
յայտնի կըլլան՝ այ որդիքը ու
սատանայէն որդիքը: ամեն ովոր
արդարութիւն չի գործեր՝ անիկա
աստուծմէն չէ, ու ան ալ՝ որ իր
եղբայրը չի սիրեր:

2 Սիրելինե՛ր՝ հիմա (մենք) այ
որդիք ենք, ու ինչ որ պիտի բը-
լանք՝ դեռ ան յայտնի չէ. զի-
տենք որ երբոր անիկա յայտնըվի՝
իրեն նման պիտոյ բլլանք. պատ-
ճառն որ՝ ինքը անանկ պիտի
տեսնանք ինատոր որ է նէ:

3 Ու ամեն ով որ աս յոյսը
իր անձին մէջը ունի, անիկա իր
անձը կըմաքրէ, ինչպէս որ ան
ալ մաքուր է:

4 Ամեն ովոր մեղք կըգործէ՝
անիկա ալ օրինաց դէմ կընէ. որ
բուն մեղքը օրինաց դէմ ընել է:

5 Ու գիտեք որ՝ ինքը անոր
համար յայտնըվեցաւ՝ որ (մեր)
մեղքերը վերցընէ. ու իր մէջը
մեղք չկա:

6 Ամեն ովոր անոր հաստատ-
ված է՝ ան չի մեղանչեր. ու ամ-
են ովոր կըմեղանչէ՝ անիկա ան
տեսած չէ, ու ան չէ ճանչցած:

7 Տըղաք՝ չըլլա՛ որ մեզ ձեզ
խաբէ. ան որ արդարութիւն կը-
նէ՝ (ինքը) արդար կըլլա՝ ինատոր
որ ան ալ արդար է:

8 Ու ան՝ որ մեղք կընէ, (ին-
քը) սատանայէն է. ինչու որ՝
սատանան բակիսպէն չեռ կը-
մեղանչէ. անոր համար ալ՝ որ-
դին այ յայտնըվեցաւ, որ սատա-
նային ըրած գործքերը ուրկէ:

9 Ամեն ովոր աստուծմէ է
ծնած՝ անիկա մեղք չընէր. պատ-
ճառն որ՝ անոր սերմը իրեն մէ-
ջը կըմնա, ու ան որ աստուծմէն
ծնած է՝ չի կրնար մեղանչել:

10 Սոսկ մեզմեզկ (գաւաճ)
յայտնի կըլլան՝ այ որդիքը ու
սատանայէն որդիքը: ամեն ովոր
արդարութիւն չի գործեր՝ անիկա
աստուծմէն չէ, ու ան ալ՝ որ իր
եղբայրը չի սիրեր:

2 Այժմ որդիք այ
եմք, և չէ ևս էյայտ՝ եթէ
ինչ լինելոց եմք. գիտեմք՝
զի յորժամ նա յայտնեսցի՝ նը-
մանն նմա լինելոց եմք, զի տե-
սանելոց եմք զնա՝ որպէս և էն:

3 Եւ ամենայն որ ունի զայս
յոյս յանձին, սրբէ զանձն իւր՝
որպէս և նայն սուրբ է:

4 Ամենայն որ գործէ զօրէն,
նա՝ և զանօրէնութիւն առնէ,
և ինքն իսկ մեղքն անօրէնու-
թիւն է:

5 Եւ գիտեմք՝ զի նա յայն
սակս յայտնեցաւ՝ զի զմեղս
բարձցէ. և ՚ի նմա մեղք ոչ
են:

6 Ամենայն որ ՚ի նա է հաս-
տատեալ, ոչ մեղանչէ. և ա-
մենայն որ մեղանչէ, ոչ տեսս
զնա՝ և ոչ ծանեաւ զնա:

7 Մանկունք՝ մի ոք զձեզ
խաբեսցէ. որ առնէ զարդա-
րութիւն, արդար է՝ որպէս և
նայն արդար է:

8 Եւ որ առնէ զմեղս՝ ՚ի
սատանայէ է, զի իսկզբանէ
սատանայ մեղանչէ. վասն այ-
սորիկ յայտնեցաւ որդին այ՝
զի լուծցէ զգործս սատանայի:

9 Ամենայն որ յայ է ծնեալ՝
մեղս ոչ առնէ, զի սերմն նո-
ա ՚ի նմա մնայ. և ոչ կարէ
մեղանչել, զի յայ է ծնեալ:

10 Այսուիկ յայտնի են ՚ի
միմեանց որդիք այ՝ և որդիք
սատանայի: ամենայն որ ոչ
առնէ զարդարութիւն՝ չէ նա
յայ, և որ ոչ սիրէ զեղբայր
իւր:

11 .Օ ի այս է պատուիրանն զոր լուարուք իսկզբանէ, զի սիրեսցուք զմիմեանս :

12 Ո՛չ որպէս կայենն՝ ի չարէ՛ն անտի էր՝ և սպան զեղբայրն իւր. և յո՞ր սակս սպան զնա, զի իւր գործքն չար էին, և եղբօրն բարի :

13 Եւ մի՛ ինչ զարմանայք եղբարք, եթէ աշխարհ զձեզ ատեայ :

14 Մեք գիտեմք՝ զի փոխեցաք ՚ի մահուանէ ՚ի կեանս, քանզի սիրեմք զեղբարս · իսկ որ ոչն սիրէ, անդէն ՚ի մահուն մնայ :

15 Ամենայն որ ատեայ զեղբայր իւր՝ մարդասպան է. և գիտէք՝ զի ամենայն մարդասպան՝ ոչ ունի զկեանս յաւիտենական յանձին հաստատեալ :

16 Այսու՛իկ գիտացաք զսէրն, զի նա՝ զանձն իւր եդ ՚ի վերայ մեր. և մեք ևս պարտիմք զանձինս դնել զաղբեր մերոց պարտիմք զնել զանձինս :

17 Որ ունի՛ցի զկեանս լինչ զաշխարհիս, և տեսանի՛ցէ զեղբայր իւր կարօտեալ իւիք, և փակի՛ցէ զդուռն իւր առ ՚ի նմանէ, զիա՞րդ սէրն այ ՚ի նմա եցէ բնակեալ :

18 Որդեակիկնե՛ր՝ չըլլա՛ս որ (մի՛ ոք) խօսկով ու լեզուիւրնիս սիրենք, հապա՝ գործքով ու ճշմարտութիւնով :

19 Որ ասով կը՛ճանչցուինք՝ որ (մենք) ան ճշմարտութենէն ենք, ու (ասով) մեր սրտին ինչ ըլլալը կրցըցանենք իրեն զիմացը .

20 Թէ որ մեր սիրտը պակսութիւննիս ըլնէ : ալ այ (ինչ

11 Ինչու որ՝ աս ան պատգամը՝ որ զուք լսեցիք, ան որ ակզբնէ սիրենք :

12 Չէ որ կայենին պէս՝ (որ) ինքը չարէն էր, ու իր եղբայրը ըսպաննեց : ու ինչու համար ա՛նիկա ըսպաննեց . պատճառն որ՝ իր գործքերը չար էր, ու եղբօրը՝ բարի :

13 Այլ անոր վրայով մի զարմանաք եղբարնե՛ր, թէ որ աշխարհը ձեզ ատէ :

14 Անով մենք կը գիտնանք՝ որ մահէն դէպի կեանքը կրպոխըրինք, ինչու որ՝ եղբարնիս կը սիրենք . բայց ան որ չի սիրեր, ինքը չեն մահուն մէջը կրմընա :

15 Ամէն ոք որ իր եղբայրը կատի՝ անիկա մարդասպան է. ու ան գիտէք՝ որ ամէն մարդասպան՝ իր ներսը յաւիտենական կեանք չատատած չունի :

16 Ասով գիտցանք (որ ինչ է) սէրը, ան որ ինքը իր անձը մեր վրա դրաւ . ուստի պէտք է որ մենք ալ մեր եղբարներուն համար անձերնիս դնենք :

17 Ան որ աս աշխարքիս կեանայ բարիքը ունի, ու իր եղբայրը բանովը կարօտութեան մէջ կրտեսնա, ու իր գութը անկէց կրդոցէ, ալ այ սէրը ինծոր անոր սիրտը բնակված կրլլա :

18 Որդեկիներ՝ չըլլա սր (մէնք) խօսկով ու լեզուներնիս սիրենք, հապա՝ գործքով ու ճշմարտութենով :

19 Որ ասով կրճանչցուինք՝ որ (մենք) ան ճշմարտութենէն ենք, ու (ասով) մեր սրտին ինչ ըլլալը կրցրցանենք իրեն զիմացը .

20 Թէ որ մեր սիրտը պակսութիւնիս ըրնէ : ալ այ (ինչ

Ի քան զսիրտս մեր՝ և զիտէ զամենայն :

21 Սիրելիք՝ եթէ սիրտք մեր զմեզ ոչ դատապարտիցեն, համարձակութիւն ունիմք առ Աստուած :

22 Եւ զոր ինչ խնդրեմք՝ առնումք ի նմանէ. զի զպատուիրանս նորա պահեմք, և զհաճոյս առաջի նորա առնեմք :

23 Եւ այս է պատուիրան նորա, զի հաւատասցուք յանուն որդւոյ նորա յիսուս քրիստոս, և սիրեսցուք զմիմեանս, որպէս և ետ մեզ պատուէր :

24 Եւ որ պահէ զպատուիրանս նորա, ի նմա է հաստատեալ՝ և նա ի նմա . և յայսմանէ զիտեմք եթէ բնակէ ի մեզ՝ ի հոգւոյ անտի զոր ետ մեզ :

չընեը, որ ինքը) մեր սրտէն աղէկնայ է, ու ամէն բան գիտէ :

21 Սիրելինե՛ր թէ որ մեր սիրտը մեր պահատն որ չի բանէ, այ այդ գիմացը համարձակութիւն կունենանք .

22 Ու ինչ որ խնդրենք՝ անկից կառնենք. ինչու որ՝ իր պատուիրանքը կըպահենք , ու իրեն առջեւ իր հաճոյ եղած բաները կընենք :

23 Ու անոր պատուիրանքը այս է, որ իր որդուն յիսի քրիստոսի անունին հաւատանք, ու միկրնիկ սիրինք, ինտոր որ ինքը մեզի պատուիրանք տըվաւ :

24 Ու ան՝ որ իրեն պատուիրանքը կըպահէ, (ինքը) անոր միջը հաստատուած կըլլայ , ու ան՝ իր միջը : ու անոր մեր միջը բընակիլը՝ ան (սուրբ) հոգիէն գիտենք՝ որ մեզի տըվաւ :

Գ Լ . Դ .

1 Սիրելիք՝ մի ամենայն հոգւոյ հաւատայք, այլ ընդբեցէք զհոգիսն եթէ յԱստուծոյ են. զի բազում սուտ մարգարէք ելեալ են յաշխարհ :

2 Եւ ամենայն հոգի որ խոստովանի զյիսուս քրիստոս եկեալ ի մարմնով՝ յԱստուծոյ է նա :

3 Եւ ամենայն հոգի որ ոչ խոստովանի զյիսուս քրիստոս եկեալ ի մարմնով՝ չէ նա յԱստուծոյ . և այս նեռինն է, զորմէ լուարուք եթէ գալոց է, և արդէն ի կայ աշխարհի է :

4 Դուք յԱստուծոյ էք որդեակք, և յաղթեցէք նոցա . զի մեծ է

1 Սիրելինե՛ր՝ ամէն հոգու մի հաւատաք . հապա՝ փորձեցէք նայեցէք որ ան հոգիները աստուածմէն են մի : ինչու որ՝ աշխարքի միջ շատ սուտ մարգարէներ ելած են :

2 Ու ամէնը աստի կըճանչնանք ան հոգին՝ որ այ է . ան ամէն հոգի որ յիսու քրիստոս մարմինով եկած կը դաւանի, ան աստուածմէ է :

3 Ու ան ամէն հոգի որ յիսու քրիստոս մարմինով եկած չի դաւանիր , անիկա աստուածմէն չէ : ու աս նեռին (հոգին) է, որ վրան լսերէք թէ ան պիտի գա . ու հիմա աշխարքիս միջնայ է :

4 Որդեկիներ՝ դուք աստուածմէ էք, ու անոնք եխտեցիք. պատ-

որ ՚ի ձեզդ է, քան զայն որ յաշխարհին է:

5 Կ՚սքա յաշխարհէ են, վասն այնորիկ յաշխարհէ խօսին, և աշխարհ լսէ նոցա:
6 Մեք յ՚էմ եմք. որ զԱստուած ճանաչէ լսէ մեզ, և որ չէ յ՚էմ՝ ոչ լսէ մեզ: այսուհետև ճանաչեմք զՀոգին ճշմարտութեան, և զՀոգին խաբէութեան:

7 Սիրելիք՝ սիրեսցուք զմիմեանս, զի սէր յ՚էմ է. և ամենայն որ սիրէ՝ յ՚էմէ ծնեալ, և ճանաչէ զԱստուած:

8 Ոչ որ ոչն սիրէ՝ ոչ ճանաչէ զԱստուած, զի Աստուած սէր է:

9 Ոչ զի յայսմ երևեցաւ սէրն Աստուծոյ ՚ի մեզ, զի զորդին իւր միածին առաքեաց Աստուած յաշխարհ, զի եղիցուք նովաւ կեցդանիք:
10 Ոչ՚այսմ է սէրն. ոչ զի մեք սիրեցաք զԱստուած, այլ զի նա սիրեաց զմեզ, և առաքեաց զորդին իւր ՚ի քաւութիւն մերոց:
11 Սիրելիք՝ եթէ Աստուած այսպէս սիրեաց մեզ, ապա և մեք պարտիմք միմեանս սիրել:
12 ԶԱստուած երբեք չէք տեսեալ. եթէ սիրեսցուք միմեանս՝ Աստուած ՚ի մեզ բնակէ, և սէր նորա ՚ի մեզ կատարեալ է:
13 Այսուհետիկ գիտեմք եթէ մեք ՚ի նմա բնակեալ եմք՝ և նա ՚ի մեզ, զի ՚ի հոգւոյն իւրմէ եհաս մեզ:
14 Ոչ մեք տեսաք և վկայեմք, զի Հայր առաքեաց զորդին իւր փրկիչ աշխարհի:

Ճառք՝ ձեր ներսերնիզ եղածը է՝ վէրի մէնծ է, քան թէ ան՝ որ աշխրըքին մէջն է:
5 Անոնք աշխրըքէ են, անոր համար աշխրըքի (հոգիէն) կրխօսինու աշխարքնայ անոնց մտիկ կընէ:
6 Մենք աստուածմէն ենք. ան որ Աստուած կրճանչնայ՝ մեզի մտիկ կընէ, ու ան որ աստուածմէ չէ՝ մեզի մտիկ չընիեր: ասով կրճանչնանք Ճշմարտութիւնի հոգին, ու խաբեբայութիւնի հոգին:
7 Սիրելիներ՝ (մենք) միկրզմիկ սիրենք, անոր համար որ՝ սէրը աստուածմէն է. ու ամմէն ով որ (ընկերը) կրսիրէ՝ ան աստուածմէ ծնած է, ու (ինքը) Աստուած կրճանչնայ:
8 Ու ան որ չի սիրեր՝ (անիկա) Աստուած չի ճանչնար, պատճառն որ՝ Աստուած սէր է:
9 Ու ասով՝ այ մեր վրա (ունեցած) սէրը երևցաւ, որ իր միկ չատիկ ծնած որդին՝ Աստուած աշխարք խրկեց, որ (մենք) անով կեանք ունենանք:
10 (Բուն անոր) սէրը աս բանովրա կերևինա՝ որ չէ թէ (առաջ) մենք Աստուած սիրեցինք, հապա՝ ան մեզ սիրեց, ու իր որդին խրկեց որ մեր մեղքերը քաւէ:
11 Սիրելիներ՝ թէ որ Աստուած մեզ ասանկ սիրեց, մենքալ պէտք է որ միկրզմիկ սիրենք:
12 Չ՚սկի միկը Աստուած տեսած չէ. թէ որ (մենք) միկրզմիկ սիրենք՝ Աստուած մեր մէջը կրբնակի, ու ալ անոր սէրը մեր մէջը կատարեալ է:
13 Ասով գիտենք որ մենք անոր մէջն ենք բնակեալ՝ ու ան ալ մեր մէջը, որ իր Հոգիէն մեզի (Հաղորդեց) տրված:
14 Ու մենքալ տեսանք, ու կրվկայենք, որ Հայրը իր որդին խաւրեց՝ որ աշխարքը փրկէ:

15 Որ ոք խոստովանեսցի՝ եթէ յի՛ն է որդի այ, այծ՝ ի նմա բնակէ՝ և նա յայծ :

16 Եւ մեք գիտացաք, և ծանեաք զսէրն այ՝ զոր ունի առ մեզ : այծ սէր է, և որ կայ՝ ի սէրն՝ բնակեալ է յայծ, և այծ՝ ի նմա բնակէ :

17 Յայսմիկ է կատարեալ սէրն նորա ընդ մեզ· զի համարձակութիւն ունիմք յաւուրն դատաստանի : զի որպէս և նայն է, նոյնպէս և մեք եմք յաշխարհիս յայսմիկ :

18 Եւ երկեւղ ոչ գոյ՝ ի սէր, այլ սէրն կատարեալ՝ ի բաց մերժէ զերկեւղն· զի երկեւղ ընդ տանջանօք է. իսկ որ երկնչէն, չէ կատարեալ՝ ի սէրն :

19 Մեք սիրեսցո՛ւք զայծ, վասն զի նա նախ սիրեաց զմեզ :

20 Եթէ ոք ասիցէ՝ եթէ սիրեմ զայծ, և զեղբայր իւր ատիցէ, սուտ է. որ ոչ սիրէ զեղբայր իւր զոր տեսանէ, զայծ զոր ոչն ետես՝ զնդրդ կարիցէ սիրել :

21 Եւ զայս պատուէր ունիմք առ՝ ի նմանէ, զի որ սիրէ զայծ՝ սիրէ՝ նա և զեղբայր իւր :

15 Ով որ դաւանի՝ որ յիսո՛ւս որդի այ է՝ այծ անոր միջը կը բնակի, ու ինքնալ այ միջը :

16 Ու մենք գիտցանք (իրեն) հաւատացինք, ու ճանչցանք այ սէրն որ մեր վրա ունի : այծ սէր է, ու ան որ սիրուն միջը կը կենայ՝ անիկա այ միջը բնակած է, ու այծ ալ անոր միջը կը բնակի :

17 Այս բանովը իրեն սէրը կատարեալ կըլլա մեր հետը· որ դատաստանին օրը համարձակութիւն ունինք. որ ինտոր ինքը եղաւ աս աշխարքիս միջը, անանկ ալ մենք ըլլանք :

18 Ու սիրուն միջը վախնալ չկայ, հապա՝ կատարեալ սէրը վախը դուրս կը նետէ· ինչու որ՝ վախը պատիժի համար կըլլա, ուստի ան որ կը վախնա՝ ալ (ինքը) սիրուն միջ կատարեալ չէ :

19 (Աստի) մենք այծ սիրենք, անոր համար որ՝ առաջ ինքը մեզ սիրեց :

20 Թէ որ մէկը ըսէ՝ որ (ես) այծ կը սիրեմ՝ ու իր եղբայրը ատէ, անիկա սուտզրուց է· որ՝ ան որ իր եղբայրը կը տեսնէ՝ ու ան չի սիրեր, ալ ինտոր կրնայ սիրեր այծ՝ որ չի տեսներ՝ :

21 Որ իրմէն աս պատուիրանքս առինք, որ՝ ան որ այծ կը սիրէ՝ անիկա իր եղբայրնալ կը սիրէ :

Գ Լ· Ե·

1 Ամենայն որ հաւատայ՝ եթէ յի՛ն է քրիստոս, յայ է ծնեալ· և ամենայն որ սիրէ զծնողն, սիրէ և զծնեալն՝ ի նմանէ :

2 Այսուհետև՝ եթէ սիրեմք զորդիսն այ, յորժամ

1 Ամէն ով որ կը հաւատա՝ որ յիսո՛ւս քրիստոս է՝ անիկա աստուածմէն է ծնած. ու ամէն ով որ (մեկին) ծնողը կը սիրէ՝ անիկա անկէց ծնած նալ կը սիրէ :

2 Այս բանովը կը ճանչնանք որ (մենք) այ որդիները կը սիրենք,

զաձ սիրեացուք՝ և զպատուիր
բանս նորա արասցուք :
3 Քանզի այս է սէրն այ , ե
թէ զպատուիրանս նորա պա
հեացուք · և պատուիրանքն
նորա չէն ինչ ծանրունք :
4 Զի ամենայն որ յայ ծը
նեալ է , յաղթէ աշխարհի :
և այս է յաղթութիւնն՝ որ
յաղթէ աշխարհի , հաւատքն
մեր :
5 Եւ ո՞ իցէ որ յաղթիցէ
աշխարհի , եթէ ոչ որ հաւա
տայցէ եթէ յի՛ է որդի այ :

6 Այ՛ն է որ ելն ջրով և
հոգւով և արեամբ , յի քս · ոչ
ջրով միայն , այլ և արեամբ
և ջրով · և հոգին է որ վկայէ ,
զի հոգին իսկ է ճշմարտու
թիւն :
7 Զի երիքեան են որ վը
կայեն , հոգին , և ջուրն , և ա
րիւնն · և երիքեան միւ են :
8 Եթէ զմարդկան ինչ վը
կայութիւն ունիցիմք , ապա
քէն այ վկայութիւն մեծ իցէ :
այս է վկայութիւն այ , որ վը
կայեաց ՚ի վր որդւոյն իւրոյ :
9 Որ հաւատայ յորդին այ ,
ունի յանձին զվկայութիւնս
զայս · որ ոչ հաւատայ որդ
ւոյ այ , սուտ առնէ զնա · քան
զի չհաւատայ վկայութեանն
զոր վկայեաց այ ՚ի վերայ որդ
ւոյն իւրոյ :
10 Եւ այս իսկ է վկայու
թիւնն , զի կեանս յաւիտենա
կանս ետ մեզ այ · և այս են
կեանքն , որ յորդին նորա են :
11 Որ ընդունի զորդին , ըն
դունի և զկեանսն · և որ ոչ
ընդունի զորդին այ , և ոչ ըզ
կեանսն ընդունի :

երբոր այ սիրենք՝ ու անոր պատ
վիրանքները ընենք :
3 Ինչու որ՝ այ սէրը այս է՝ որ
անոր պատուիրանքները պահենք .
ու իր պատուիրանքներնալ մեզ
ծանրը բանմը չեն :
4 Պատճառը՝ ամէն ով որ
աստուծմէն է ծնած՝ ինքը աշխարը
քին յաղթողն է · ու աս յաղթու
թիւնը որ անով աշխարքը կեխ
տըվլի՝ ան մեր հաւատքն է :
5 Ու ան ով պիտի ըլլա որ
աշխարքը եխտ, թէ չէ անիկա՝
որ կըհաւատա թէ՝ յիսը որդի
այ է :
6 Այս յիքն է , որ եկաւ ջրով
ու հոգիով ու արունով . չէ որ
միայն ջրով , հապա՝ արունով ու
ջրով · ու հոգին է՝ ան որ կըվկայէ ,
ինչու որ՝ բուն հոգին է ճշմար
տութիւնը :
7 Այս երիքս են որ կըվկայեն ,
հոգին՝ ու ջուրը՝ ու արունը . ու
երիքը մէկ են :
8 Թէ որ (մենք) մարդոց վկայ
ութիւնն որ կընդունինք , աւ այ
վկայութիւնը էվելի մեծ է , ու
աս այ վկայութիւնն է՝ որ իր որ
դուն վրա վկայեց :
9 Այն որ այ որդուն կըհաւա
տա , ինքը աս (այ) վկայութիւնը
իր սրտին մէջը ունի . ան որ այ
որդուն չի հաւատար՝ ինքը անի
կա սուտզրուց կընէ , ինչու որ՝
չի հաւատար ան վկայութիւնին՝
որ այ իր որդուն վրա վկայեց :
10 Ու ան վկայութիւնը աս է,
որ՝ այ մեզի յաւիտենական
կեանք տըվաւ . ու աս կեանքս ան
է՝ որ իր որդուն մէջն է :
11 Այն որ որդին կընդունի ,
անիկա կեանք աւ կընդունի . ու
ան որ որդին այ չէ ընդունիր՝
անիկա կեանք աւ չէ ընդունիր :

12 .Օայս գրեցի ձեզ, զի գիտասջիք եթէ կեանս յաւիտենական ունիցիք, և զի հաւատայցէք յանուն որդւոյն ՚ի :

13 Եւ այս է համարձակութիւնն զոր ունիմք մեք առ նա, զի զոր ինչ հայցեսցուք ըստ կամաց նորա, լսէ մեզ :

14 .Օի եթէ զիտիցեմք՝ և թէ լսէ հայցուածոյն մերոց, ապա գիտեմք՝ եթէ առնումք զհայցուածսն՝ զոր հայցեմք առ ՚ի նմանէ :

15 Եթէ ոք տեսցէ զեղբայր իւր մեղուցեալ՝ մեղս՝ որ ոչ առ ՚ի մահ, խնդրեսցէ՝ և տացէ նմա կեանս մեղուցելոյն ոչ առ ՚ի մահ: են մեղք՝ որ մահու են, ոչ վասն այնորիկ ասեմ եթէ խնդրեսցես :

16 Ամենայն անիրաւութիւն մեղք են. և են մեղք՝ որ մահու չափ են :

17 Գիտեմք եթէ ամենայն որ յայ է ծնեալ՝ ոչ մեղանչէ. այլ որ յայն է ծնեալ՝ պահէ զանձն, և չարն առ նա ոչ մերձենայ :

18 Գիտեմք եթէ յայ եմք, և աշխարհ ամենայն ՚ի չարի կայ :

19 Եւ զիտեմք եթէ որդին այ եկն, և ետ մեզ միտս, զի ծանիցուք զճշմարիտն. և եմք ՚ի ճշմարտին որդւոյ նորա յիսի քում. զի նա է ճշմարիտ աստ՝ և կեանք յաւիտենականք :

20 Որդեակք՝ պահեցէք զանձինս ՚ի կուապաշտութենէ :

12 Այս (բանըս) ձեզն գրեցի, որ գիտնաք թէ յաւիտենական կեանք պիտի ունենաք, թէ որ հաւատաք այ որդուն անուանին :

13 Ու ան համարձակութիւնոր մենք իր առջեւը ունինք՝ աս է, որ՝ ինչ որ իր կամացը պէս խընդրենք ըլլանք, ան մեզի մտիկ կընէ :

14 Ու թէ գիտնանք թէ մեր խնդրածքին մտիկ կընէ, ալ կրգիտնանք որ խնդիրքնիս կատնենք՝ ան որ իրմէն կրխնդրենք :

15 Թէ որ մէկը իր եղբարը տեսնէ՝ որ մեղանչեր է (անանկ) մեղքով՝ որ մահի չէ, թող (այ) խնդրէ, ու իրեն կեանք կուտա՝ ան մահի չեղած մեղքը գործողին: մեղք կա՝ որ մահի կերթայ, անոր համար չեմ ըսեր՝ որ խնդրես :

16 Բոլոր անիրաւութիւնները մեղք են, ու մեղք ալ կա՝ որ մահի կրտանի :

17 Գիտենք որ ամէն ով որ աստուածմէ է ծնած՝ ան մեղք չըներ. հապա ան որ աստուածմէն է ծնած՝ իր անձը կրպահէ, ու չարը անոր չի մօտիկնար :

18 Գիտենք որ (մենք) աստուածմէն ենք, ու բոլոր աշխարք չարութեան մէջը կեցած է :

19 Ու գիտենք ալ՝ որ որդին այ եկաւ, ու մեզի խելք ու միտք տրվաւ՝ որ ան ճշմարիտը ճանչնանք. ու իր որդուն յիսի քովճշմարտութենին մէջն ենք. որ ինքն ճշմարիտ աստ է, ու յաւիտենական կեանք :

20 Որդեկիկներ՝ անձերնիդ կուապաշտութենէն ետպահեցէք :

ԹՈՒՂԹ
ՅՈՎՀԱՆՆՈՒ ԵՐԿՐՈՐԴ.

1 Յերիցուի առ ընտրեալ կիւրեայ, և առ որդեակս իւր՝ զոր ես սիրեմ ճշմարտութեամբ. և ոչ եթէ ես միայն, այլ և ամենեքեան որք գիտակ են ճշմարտութեն:

2 Վասն որոյ ճշմարտութեանն՝ որ ’ի մեզ հաստատեալ է, զի և ընդ ձեզ լիցէ. և զուք յաւիտենից ընդ մեզ լիցէք:

3 Շնորհք, ողորմութիւն, խաղաղութիւն յայ ’ի տօրէ, և ’ի որդւոյն տօր, ճշմարտութեամբ և սիրով ընդ ձեզ:

4 Ուրախ եղէ յոյժ, զի գտի յորդեկացդ քոց՝ որ գնան ճշմարտութեամբ, ըստ պատուիրանին զոր առաք ’ի տօրէ:

5 Եւ այժմ աղաչեմ զքեզ կիւրեա. ըրբև ոչ եթէ նոր ինչ պատուիրան գրեմ քեզ, այլ զոր իսկզբանէն ունէաք, զի սիրեսցուք զմիմեանս:

6 Եւ այս է սէրն, զի գնասցուք ըստ պատուիրանաց նորա: և այս է պատուիրանն, զի որպէս լուարուք իսկզբանէ՝ ըստ նմին գնասջիք:

7 Զի բազում մոլորեցուցիչք եղեն յաշխարհս. որ ոչ խոստովանի զյս քս եկեալ մարմնով, նա մոլորեցուցիչ է՝ և նենգ:

1 Երիցիս զկնի՝ ընտրեալ կիւրեային, ու իրեն որդեկիներուն՝ որ ես անոնք ճշմարտութենով կըսիրեմ. ու չէ թէ միայն ես՝ հապա ամէնքնալ որ ճշմարտութիւնը ճանչցեր են:

2 Ան ճշմարտութենին համար՝ որ մեր մէջը հաստատուած է. որ ան ձեր չ’ըլլար է, ու (անոնալ) զուրս ալ միշտ յաւիտեան մեր հետը կըլլար:

3 Շնորքը, ողորմութիւնը, խաղաղութիւնը՝ աստուածմէ հօրէն, ու հօրը որդիէն ճը յս քովն, ճշմարտութենով ու սիրով ձեր հետն ըլլա:

4 Ինկնըքը ուրախացա, ան՝ որ քու որդեկիներէդ գտա՝ որ իրենք ճշմարտութենի համբով կերթան, ան պատուիրանքին պէս՝ որ հօր (աստուծ)մէն առինք:

5 Ու ալ հիմա՝ քեզի կաղաչեմ կիւրեա՝ ու չէ թէ մէկ նոր պատուիրանքմը քեզի կրգրեմ, հապա՝ ան որ առաջուընէն ունէինք, որ մէկզմէկ սիրենք:

6 Ու սէրը աս է, որ իրեն պատուիրանքին պէս երթանք. ու պատուիրանքը աս է, որ ինտոր առաջուընմէ հետ լսեցիք՝ անոր պէս երթալ:

7 Պատճառն որ՝ աշխրքի մէջ շատ մոլրդոցնողներ ելան. որ ան չեն դաւանիր յս քրը մարմինով եկած, որ անանկը՝ մոլրդոցնող ու նենգ է:

8 .Օ զոյշ լինիջիք անձանց, զի մի կորուսանիցէք զոր վաստակեցէք, այլ զի առնուցուք բովանդակ վարձն :

9 Ամենայն որ յանցանիցէ՝ և ոչ կայցէ ՚ի վարդապետութեանն քրիստոսի, զԱստուած ոչ ունիցի : որ կայ ՚ի վարդապետութեանն, նա՝ և զհօրն և զորդին ունի :

10 Եթէ ոք գայցէ առ ձեզ՝ և զվարդապետութիւնս զայս ոչ ունիցի, մի ընդունիցիջիք զնա ՚ի տուն, և մի ողջոյն տայցէք նմա :

11 Որ ասացէ նմա ողջոյն, կցորդ լիցի չարաց գործոց նորա :

12 Բազում ինչ ունէի գրել առ ձեզ, այլ ոչ կամեցայ քարտիսիւ և դեղով · զի ակն ունիմ ինձէն իսկ գալ առ ձեզ, և բերան ՚ի բերան խօսել . զի ուրախութիւնն մեր լցի կատարեալ :

13 Ողջոյն տան քեզ որդիք քեռ քո ընտրելոյ : Ընդ ձեզ :

8 Զգուշացարուք զձեզ՝ որ չընկլուն մեք զոր գործեցաք, այլ զլիակատար վարձս առցուք :

9 Ամենայն որ յառաջանայ՝ և ոչ կայ ՚ի վարդապետութեան քրիստոսի, Աստուած ոչ ունի : որ կայ ՚ի վարդապետութեանն, նա՝ և զհայրն և զորդին ունի :

10 Եթէ ոք գայ առ ձեզ՝ և զվարդապետութիւնս զայս ոչ բերէ, մի ընդունիջիք զնա, և մի ողջոյն տայցէք նմա :

11 Որ ասէ նմա ողջոյն, հաղորդ լինի գործոց նորա :

12 Բազում ինչ ունէի գրել առ ձեզ, այլ ոչ կամեցայ քարտիսիւ և գրչագրով · զի ակն ունիմ ինձէն իսկ գալ առ ձեզ, և բերան ՚ի բերան խօսել . զի ուրախութիւնն մեր լցի կատարեալ :

13 Ողջոյն տան քեզ որդիք քեռ քո ընտրելոյ : Ընդ ձեզ :

8 Նայեցարուք ինքեանց՝ որ չկորուսանիցէք զոր վաստակեցաք, այլ զլիակատար վարձս առցուք :

9 Ամենայն որ յառաջանայ՝ և ոչ կայ ՚ի վարդապետութեան քրիստոսի, Աստուած ոչ ունի : որ կայ ՚ի վարդապետութեանն, նա՝ և զհայրն և զորդին ունի :

10 Եթէ որ գայ առ ձեզ՝ և զվարդապետութիւնս զայս ոչ բերէ, մի ընդունիջիք զնա, և մի ողջոյն տայցէք նմա :

11 Որ ասէ նմա ողջոյն, հաղորդ լինի գործոց նորա :

12 Բազում ինչ ունէի գրել առ ձեզ, այլ ոչ կամեցայ թղթով և թանաքով (ընել), որ՝ կրկուսամ որ բերան ես քովը ընդ դամ, և բերանէ բերան խօսիմ . որ մեր ուրախութիւնը կատարեալ ըլլա :

13 Քեզի սիրուն կուտան քոյր ընտեալ քրոջդ որդիքը : Ընդ քեզ ձեր չեան (ըլլա) :

ԹՈՒՂԹ ՅՈՎՀԱՆՆՈՒ ԵՐՐՈՐԴ.

1 Յերիցումն առ գայոս սիրելի . զոր ես սիրեմ ճշմարտութեամբ :

2 Սիրելի՝ վասն ամենայն իրաց քոց աջողութեան և առողջութեան՝ աղօթս առնեմ . որպէս է իսկ յաջողութիւն անձինդ քո :

1 Երիցիս դիէն՝ գայոս սիրելին, որ ես ինքը ճշմարտութիւնով կսիրեմ :

2 Սիրելի՝ քու ամէն բանեդ աջողութեանը, ու սիրտիդ աջողութեանը համար աղօթք կընեմ, ինչպէս որ քու անձդալ աջողութիւնդ մէջ է :

3 Ցոյժ ուրախ եղէ ՚ի զալ եղբարց, և լինել վկայ քոյոյ ճշմարտութեանդ, որպէս գը-նասդ դու ճշմարտութեամբ :

4 Մեծ ևս ինչ ուրախու-թիւն քան զայս ոչ ունիմ, զի լսեմ եթէ իմ որդեակքն ճըշ-մարտութեամբ գնան :

5 Սիրելի՝ հաւատարիմ գործես զայդ, զոր եթէ առնի-ցես առ եղբարս՝ զդոյն և առ օտարս :

6 Որք վկայեցին վասն քո սիրոյդ առաջի եկեղեցւոյ· որոց բարիս արարեալ յուղարկես՝ արժանիս ՚այ :

7 .Ո ՚ի վասն անուանն ելին, և ոչինչ յուսիքէ առնուն գՀե-թանոսականացն :

8 Արք այսուհետև պար-տիմք ընդունել զայնպիսիսն, զի գործակից լեցուք ճշմար-տութեանն :

9 Գրեցի ինչ եկեղեցւոյն· այլ որ յառաջադէմն ՚ի նոցա-նէ դիոտրեփէս, ոչ ընդունի զմեզ :

10 Վասն այսորիկ՝ եթէ ե-կեմ՝ յիշեցուցից գգործս նորա զոր առնէ, բանիւք չարօք շատ-խօսս լութեան առնէ զմեզ· աշ-խատ· և ոչ այսքանիւք շատա-ցեալ, ոչ ինքն ընդունի զեղ-բարս, և զայնոսիկ որ ընդու-նիսն՝ արգելու· նա՝ և յեկե-ղեցւոյ ևս չանէ :

11 Սիրելի՝ մի՛ լեցիս նմա-նով չարի՝ այլ բարւոյ· զի որ զբարին առնէ՝ յայ է, և որ գչարիս գործէ՝ նա ոչ ետես երբեք զՅԱ :

3 Շատ ուրախացա՝ երբոր եկաքներն եկան, ու քու ուն-ցած ճշմարտութիւնիդ համար վկայեցին, որ դուն ինչպէս ճշմար-տութիւնով որ կերթասկոր :

4 Ա՛լ ասկէ էվէլը մեծ ու-րախութիւնմը չունիմ, ան որ լսեմ թէ՝ իմ որդեկիկներըս ճըշ-մարտութիւնի մէջ կըքալեն :

5 Սիրելի՝ քու ըրածդ հաւա-տարմութիւնով է, որ կընես (մեր) եկաքներուն՝ ու ըրբսի մար-դոց ալ :

6 Որ իրենք եկեղեցիին առջևը վկայեցին քու (ցըցուցած) սէրդ. որ՝ այ ինտոր որ կրվայլէնէ՝ ա-նանկ անոնց բարիք ընելով ճամ-բա կըդնես :

7 Որ (այ) անունին համար (դուրս) ելան, ու չեթանոսնե-րէն՝ մէկէն՝ բանմը չառին :

8 Ուստի ալ պէտք է որ մենք անանկներուն հոգ ունենանք, որ ասանկ ճշմարտութիւնի գործուն օգնենք :

9 Եկեղեցիին ալ գրերեմ· բայց դիոտրեփէսը՝ որ մէջերնին առջև կուզէ ըլլալ, անիկա մեզ չէ ընդունիր եղեր :

10 Անոր համար՝ թէ որ (ձեզի) գալու ըլլամ՝ իր ըրածները միտ-կը կրբերեմ. որ ափեղջըմեղ վատ խօսկերովը մեզի աշխատանք կու-տա· ու ասանկովալ հերիք չեղած, (չէ թէ միան) ինքը չէ ընդունիր եկաքները, հապա անոնք ալ որ կընդունին՝ կար-գիլէ· ու եկեղեցիէնալ (դուրս) կընէ :

11 Սիրելի՝ չարին մի՛ ըլլար նման, հապա՝ բարիին· որ՝ ան որ բարիք կընէ՝ ինքը աստուածմէն է, ու ան որ չար կրգործէ՝ անի-կա Քրիստոսէն տակի չէ տեսեր :

12 Օ՜ դեմատրեայ՝ վկայեալ է յամենեցունց, և յեկեղեցւոյն՝ և՛ ի հշմարտութենէն, և մեք վկայեմք. և դու գիտես զի հշմարիտ է մեր վկայութիւնն:

13 Խազուամ ինչ ունէի գրել քեզ. այլ ոչ կամիմ քարտիսիւ և գեղով գրել:

14 Օ՜ ակն ունիմ՛ ի մօտոյ իսկ տեսանել զքեզ, և բերան՛ ի բերան խօսել ընդ քեզ:

15 Խաղաղութիւն ընդ քեզ: ողջոյն տան քեզ սիրելիք: ողջոյն տանջիր սերելեաց մերոց եւրաքանչիւր յանուանէ:

12 Դեմատրին վկայած, որ ինքը ամենեքին (բարի) վկայված է, ու եկեղեցիներէն՝ ու հշմարտութենէն ալ, մենք ալ անանկ կը վկայենք. ու դուն գիտես որ մեր վկայութիւնը ըղձրդ է:

13 Ա՛լ շատ բաներ ունէի քեզի գրելու. բայց ան չեմ ուզեր թրխտով ու թանաքով գրել:

14 Բո՛ւ կը յուսամ ատ մօտերքս քեզ տեսնել, ու բերնէ բերան քու հետդ խօսիլ:

15 Խաղաղութիւնը քու հետդ (ըլլա): քեզի սիրելիները: սիրելիները տուր մեր սիրելիներուն ամէնն ալ իր անունովը:

Թ Ո Ւ Ղ Թ
ՅՈՒԴԱՅԻ ԱՌԱՔԵԼՈՅ

1 ՅՈՒԴԱ՝ յիսուսի քրիստոսի, և եղբայր յակոբայ. հեթանոսաց որ յայն չօրէ կէք սիրեցեալք, և յիսուսի քրիստոսէ պահեալք և ընտրեալք:

2 Ողորմութիւն ձեզ՝ խաղաղութիւն՝ և սէր բազմասցի:

3 Սիրելիք՝ զամենայն փոյթ յանձին կալեալ գրել ձեզ՝ վասն մերոյ հասարակաց փրկութեանն. չարի յանձին կալայ գրել ձեզ, և աղաչել զի ճգնիցիք՛ ի վերայ հաւատոցն՝ որ միանգամ աւանդեցաւն սրբոց:

4 Քանզի սպրդեցին մարդիկ ոմանք, որ յառաջագոյն իսկ

1 ՅՈՒԴԱ՝ յիսուսի քրիստոսի ծառա, ու յակոբա եղբայր. հեթանոսներուդ՝ որ հայր սիրեց ձեզ սիրեց, ու յիսուսի քրիստոսի պահեց ու ընտրեց:

2 Ողորմութիւնը՝ ու խաղաղութիւնը՝ ու սէրը ձեր վրա շատնա:

3 Սիրելիներ՝ իմ անձիս միշտ ջանքը ան էր՝ որ մեր հասարակաց փրկութենէն վերայովը ձեզի (հետքամբ) գրվի, ալ ես ան՝ հարկաւորութիւնը իմ վրաս տուի որ ձեզի գրեմ. ու աղաչեմ, որ ջանք դրած կայնիք ան հաւատուն վրա՝ որ հեղմը սրբերուն տրվեցաւ պահելու:

4 Ինչու որ՝ եղան ոմանք որ սկզբնդրվեցան (ջնջնվիլ) մեռան.

կատարեալ էին ՚ի սմին գա-
տաստան · ամպարիշտք , որ
գայ մերոյ հնորհն դարձուցին
յանկարգութիւն · և զմի միայն
պնշխանն ՝ և զնր մեր յս քս
ուրացեալք :

5 Յիշեցուցանել ձեզ այ-
սուհետև կամ է ինձ՝ որ զի-
տէքդ գամենայն · զի ամ միան-
գամ գժողովուրդն փրկեաց յե-
գիպտոսէ , երկրորդ անգամ
զանհաւատսն կորոյս :

6 Եւ զհրեշտակս որ ոչ պա-
հեցին զնւբեանց իշխանու-
թիւնն , այլ թողին զնւբեանց
բնակութիւնն , ՚ի դատաս-
տանս մեծի աւուրն՝ մշտնջե-
նաւոր կապանօք պահեաց ՚ի
խաւարի :

7 Որպէս սոդոմն և գոմոր ,
և որ շուրջ զնոքօք քաղաքքն ,
որ ըստ նմին օրինակի պոռնկե-
ցան զհետ բնկերացն մարմնոց ,
կան առաջի օրինակ՝ գտե-
տնեական հրոյն բնկալեալ ըզ-
դատաստան :

8 Ը սա նմին օրինակի և սո-
քա իբրև քնով զանդաստեալք՝
գմարմինն պղծեն , զտէրու-
թիւնս քամահեն , զփառս հոյ-
հոյին :

9 Ուր միքայէլ հրեշտակա-
պետն յորժամ բանսարկուն
սատանայի վիճեաւ , ասյր պա-
տասխանի վասն մովսիսեանն
մարմնոյ , ոչ ժպրծնցաւ հոյ-
հոյութեանն դատաստանի հան
դուրժել · այլ ասէ՝ սատեսցէ
՚ի քեզ ՝որ :

10 Իսկ սքա զոր ինչ ոչ
իմանան՝ հայհոյեն · և զայլսն
եւս զոր բնութեամբ իբրև զան
որ առոր համար՝ իբրնց դատա-
պարտութիւնը շատնցմէ եղած
լսմընցած էր · ան անբարիշտնե-
րը , որ մեր այ շնորքը անկարգու-
թիւնի զարձուցին , ու ան մէկ միան
իշխան (ածը՝) ու մեր ՝որ յս քնը
ուրացան :

5 Ուստի իմ կամքս ա՛ն է՝ որ
նորէն ձեր միտքը ձգեմ , ան որ
դուք ամմէն բանը գիտէք . մէյմը
որ՝ ած ժողովուրդը եգիպտոսէն
խալսեց , մէյմալ որ՝ անոնք որ
չէ հաւատացին՝ իրենք կորսըն-
ցուց :

6 Ու հրեշտակներն ալ՝ որ ի-
րենց մնծութիւննին չէ պահե-
ցին , հապա իրենց բուն կենալու
տեղերնին թողուցին , (անոնքալ)
միշտ և յաւիտեան կապած՝
խաւարին մէջը պահեց՝ ան մնծ
դատաստանին օրը (դատելու) :

7 Նոյոր ալ սոդոմն ու գոմորը ,
ու անոնց քովի եղած քաղքները՝
որ ան կերպով պղծութիւն գործե-
ցին՝ (իրենց) մարմնուն ընկեր-
ներուն հետ · առջևնիս օրինակ
կեցեր են , յաւիտենական կրակին
դատաստանը վրանին առած :

8 Այն օրինակին պէս՝ ասոնքալ՝
քնու թըմրութիւնով բանըվածի-
պէս՝ մարմինին կըպղծեն , տէրու-
թիւնները կըքամահրեն , իշխա-
նաւորներուն վատ կըզրուցեն :

9 Այն որ՝ միքայէլ հրեշտա-
կապետը երբոր բանսարկու սա-
տանային հետ՝ մովսէսի մարմնուն
համար վէճ ընելով դէմը որ կու-
տար , սիրտ չըբաւ (անոր) հայ-
հոյութեան դատապարտութիւնը
ինքը տալու , հապա (միան ատ)
ըսաց · ՝որը քեզ սրատեցրնէ :

10 Այնանկ ասոնք ալ՝ չէ հաս-
կըցած բաներնին կըքամահրեն ,
ու ան բոլոր բաներալ՝ որ ան-

խօս անասուն գիտեն, ՚ի նոսին ապականեսցին :

11 Վա՛յ ի նոցա, զի ըստ ճանապարհին կայենի գնացին, և ըստ մոլորութեանն բաղաամայ զեղեսցան գհետ վարձուց, և ըստ հակառակութեանն կորեայ կորեան :

12 Սոքա են առեգեամբք՝ շոգմունք, երթեալ գհետ ցանկութեանց իւրեանց, ՚ի սէրս իւրեանց՝ խարդախութեամբ, լինին ընդ ձեզ ուրախակիցք, անվրկեալ զանձինս ձաբակեն : ամպք անջրդիք՝ հողմակոծեալք, ծառք պաղակորոյսք՝ անպտուղք, կրկնամեռք, խըլեալք արմատաքի :

13 Նսեմաստ ալիք ծովու՝ որ միշտ փրփրեն զիւրեանց ամձանցն զամօթ . աստեղք մոլորք, որոց վէմ խաւարին յաւիտենից պահեալ է :

14 Մարգարէացաւ վասն նոցա և եւթներորդն յադամայ ենովք՝ և ասէ, ահաւասիկ եկն Տէր բիւրովք սրբովք Տեառն

15 Անել դատաստան ըստ ամենայնի, և յանդիմանել զամենայն ամպարիշտս վասն գործոց իւրեանց՝ զոր ամպարշտեցին . և վասն ամենայն խիստ բանից, զոր խօսեցան գնմանէ մեղաւորք և ամպարիշտք :

16 Սոքա են տրտնջոգք և շոգմունք, երթեալ ըստ իւրեանց անձանց ցանկութեանց . և բերանք նոցա զամբարտաւանս բարբառեն, առնուն անկն երեսաց վասն օգտի :

բան անասունիպէս բնականաբար որ Ճանչցերեն, անոնց մէջ իրենք զիրենք կապականեն :

11 Վա՛յ ի վրանին, որ իրենք կայենին ճամբովը գացին, ու բաղաամիպէս մոլորած՝ չար վարձք առնելու եաւէլ եղան, ու կորխնպէս գրոխ քաշած՝ իրենք ալ կրկորսըվին :

12 Անոնք՝ ան առեղի երեսպաշտներն են, որ իրենց ցանկութիննին կատարելու համար, խաբեայութիննով ձեզի սէր ցոյց նելով՝ հետերնիդ (կերուխումով) կրխնտան, որ առանց վախու փորերնին կերակրեն : չոր ամպեր են՝ հովերով ծածկըտած . պտուղնին կորսըցուցած ծառեր՝ բերք չնեցող . երկու հեղ մեռած, արմըտէն խրված :

13 Ծովու՝ կատաղած ալիքներուպէս (են), որ իրենց անձերնուն ամօթալիքը միշտ կրփրփուցընեն . մոլորած աստղեր (են), որ յաւիտենական խաւարին անդունդը իրենց համար պահված է :

14 Անոնց վրա մարգարէացաւ ենովքն՝ (որ ինքը) ադամա եաւ. սխաներորդն էր, ու ըսաց, Տէրն ահա իրը հազարաւոր սուրբ չրեշտակներով եկաւ,

15 Որ ամէնուն դատաստանը բնէ, ու բոլոր անբարիշտներուն երեսնին գարնէ իրենց ըրած անբարըշտական գործքերը, ու բոլոր ծանտրը խօսքերը՝ որ մեղաւորներն ու անբարիշտները իրեն դէմ դբրուցեցին :

16 Անոնք են՝ որ կրտրտան ու կրխեղմըրնկին՝ իրենց անձերնուն ցանկութիննովը վարվելով, ու իրենց բերանը խոշոր բաներ դուրս կուտա, որ շահերնուն համար մարդիք վաստկին :

17 Բայց դուք սիրելիք՝ յիշեցէք զխոսեսացդ բանս զառաքելոցն Տեառն մերոյ յիսուսի քրիստոսի ։

18 Զի ասէին ձեզ, եթէ ի յետին ժամանակս՝ եղիցին մարդք արհամարհողք, երթեալք ըստ իւրեանց ամպարշտութեանցն ցանկութեանց ։

19 Սոքա են նշանակեալքն զանջատողքն, որ զոգին ոչ ունիցին ։

20 Ապա մեք սիրելիք՝ եղիցուք շինեալ զանձինս սրբութեամբն հաւատոց՝ ի հոգին սուրբ ։ կացցուք յաղօթս,

21 Պահել զանձինս սիրովն Աստուծոյ. սպասելով զողորմութեանն Տեառն մերոյ յիսուսի քրիստոսի ի կեանս յաւիտենականս ։

22 Եւ ոմանց դատապարտելոց լինիջիք կշտամբիչք,

23 Եւ զոմանս ապրեցուցանիջիք՝ յափշտակեալ ի հրոյ. և ոմանց ողորմեսջիք՝ երկիւղիւ դատել՝ և զպատմուճանն որ ի մարմնոյն իցէ աղտեղեալ ։

24 Եւ այնմ որ կարողն իցէ պահել զձեզ անարատս և անբիծս, հաստատեալ առաջի իւրոյ փառաց աներևելիութեանն ցընծութեամբ.

25 Միոյն Աստուծոյ և փրկչին մերոյ յիսուսի քրիստոսի՝ փառք, մեծութիւն, զօրութիւն, և իշխանութիւն՝ յառաջ քան զամենայն յաւիտեանս, և այժմ և յամենայն աւիտեանս. ամէն։

17 Բայց դուք սիրելիներ՝ յիշեցէք ան բաներն որ՝ մեր տէր յիսուս քրիստոս առաքեալներէն առաջուցմէն զըսուցեցին ։

18 Այն որ ձեզի կըսէին թէ՝ ետկի առեներէն մարդիք պիտի գան՝ որ բանի քամահրող ըլլան, իրենց անբարիշտ ցանկութիւններուն պէս երթալով ։

19 Որ ասոնք՝ ինքիրենին զատվածք՝ (միան անբանին) սունչ ունին, անանկ որ՝ (ներսէրնին բանական) հոգի չունենան ։

20 Ասոր՝ ալ մենք սիրելիներ՝ անձերնիս շինելու հետ ըլլանք սուրբ հաւատքի վրա՝ հոգով սրբով ։ աղօթք ընենք,

21 Որ անձերնիս այ սիրուն մէջը պահվի. ըսպասելով մեր տէր յիսուս քրիստոսի՝ որ մեզի յաւիտենական կեանք տա ։

22 Ու (անոնցմէն) ոմանց՝ որ դատապարտըվելու (կերթան, իրենց) խրատ տրվող ըլլաք ·

23 Ու ոմանքայ խայտնէք՝ (ինչպէս թէ) կրակէն դուրս քաշելով. ու ոմանց վրըսայալ գութ ունենաք, (բայց) ահով՝ դատապարտելով ան իր վայրի լափնալ որ մարմնուն աղտը անոր զրպած ըլլա ։

24 Ու անոր, որ ինքը կարող է ձեզ ամբոխճ ու անարատ պահել՝ իր փառաց առջևը, առանց վախիմը՝ ուրախութիւնով հաստատ եղած ·

25 Ան մէկ այ՝ ու մեզ փրկող մեր տէր յիսուս քրիստոս (ըլլա) փառք, մեծութիւն, զօրութիւն, ու իշխանութիւն, բոլոր դարերէն առաջ, ու հիմա, ու բոլոր գալու դարերը. ամէն ։

ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ

ՈՐ ԻՆՁ

ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՌԱՔԵԼՈՅ

ԵՒ ԱՍՏՈՒԾԱԲԱՆ ԱՅԵՏԱՐԱՆԻՆ։

ԳԼ. Ա.

1 ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ յիւր քրիստոսի. ՚ի ձեռն որոյ ետ Աստուած ցուցանել ծառայից իւրոց՝ որ ինչ լինելոց է վաղվաղակի. և նշանակեաց առաքելով ՚ի ձեռն հրեշտակի իւրոյ առ ծառայ իւր յովհաննէս։

2 Որ վկայեաց զվկայութիւն բանին Աստուծոյ, և զվկայութիւն յիսուսի քրիստոսի՝ զոր եսես. որ էր, և որ լինելոյն էր յեռ այնորիկ։

3 Երանի՛ որ կարդասցէ՝ կամ լսելցէ զբանս մարգարէութեանս, և պահեսցէ զոր ՚ի նմա գրեալ է. զի ժամանակս մերձեալ է։

4 ՚Ի յովհաննէս առ եւթն եկեղեցիս՝ որ են յասիա, շնորհք ընդ ձեզ և խաղաղութիւն յայ՝ յկէն՝ և որ էն՝ և որ գալոցն է, և յեւթն հոգւոցն՝ որ է առաջի աթոռոյն իւրոյ։

5 Եւ յիսուսէ քրիստոսէ վկայէն, որ է անդրանիկ ՚ի մեռելս, և իշխան թագաւորութեանց երկրի. որ սիրեաց

1 ՅԻՍՈՒՍԻ քրիստոսի յայտնութիւնը. որ Աստուած ասաց իւր ծառաներուն ցրցուներ տրվաւ՝ ան բաներն որ շուտով պիտի բլլան. ու իր հրեշտակին ձեռքով իւր յովհաննէս ծառային խաւրեց՝ ան իմացուց։

2 Որ ինքը՝ այ խօսկին վկայութիւնը քարոզեց, ու յիսուս քրիստոսի՝ ան տեսած բաներուն, որ եղաւ՝ ու որ անկէ ետև պիտոր բլլար։

3 Երանի՛ անոր՝ որ կրկարդայ՝ ու անկաձ կրգնէ աս մարգարէական բաներուս, ու կրպահէ ան որ ասոր մէջը գրըված է. ինչու որ՝ ատենը մօտեցեր է։

4 Յովհաննէսէն՝ ասիոյ եկեղեցիներուն որ ասիան են. շնորհք ձեր ձեր՝ ու խաղաղութիւն աստուծմէ՝ է էն, ու ան որ ինքն է, ու ան որ գալու է, ու հոգիին ասիոյ գործութիւններէն՝ որ իր աթոռին առջեւն են։

5 Ու յիսուս քրիստոսէն՝ ան որ հաւատարիմ վկայ է. որ մեռելներուն մէջ առջինեն է, ու երկրի թագաւորութիւններուն իշխանը. որ ին-

զմեզ, և ելոյծ զկապանս մե_
զաց մերոց արեամբն իւրով

6 Եւ արար զմեզ թագաւորս
և քահանայս Աստ և Հօր իւրոյ ·
որում փառք և զօրութիւն՝
այժմ և միշտ և յաւիտեանս
յաւիտենից · ամէն :

7 Ահաւասիկ գալոց է ընդ
ամպս · և տեսցեն զնա ամե_
նայն ազգք , և տեսցեն զնա
ծագք երկրի , և որք խոցեցին
զնա՝ ամենեքեան լիցին , և
կոծեսցին ՚ի վերայ նորա : այո՛
ամէն :

8 Ես եմ սկիզբ , և ես եմ
քէ՛, ասէ տէր Աստ , որ էն՝ և որ
է՝ և որ գալոցն է՝ ամենակալ :

9 Ես յովհաննէս՝ եղբայր
ձեր և հաւասարակից նեղու_
թեան՝ և արքայութեան՝ և
համբերութեան որ ՚ի քրիս ·
եղէ ես ՚ի կղզւոջն որ անուա_
նեալ կոչի պատմոս՝ վասն բա_
նին և վասն վկայութեանն յի
քրիս :

10 Եւ եղև յիս Հոգի ՚ի
կիւրակէի աւուր , և լսեայ
զձայն գՏեառ իմ զմեծ իբրև
զձայն փողոյ՝ որ ասէր ցիս· Ես
եմ սկիզբ և սկ , առաջինն և
վերջին :

11 Զոր տեսանես՝ գրեա ՚ի
գիրս , և տուր տանել յեւթն
եկեղեցիս , որ յեփեսոս , և ՚ի
զմիւռնիա , և ՚ի պերգամոն ,
և ՚ի թիւատիրա , և ի սար_
դիկէ , և ՚ի փիլադելփեա , և ՚ի
լաւոդիկեա :

12 Եւ դարձայ տեսանել
զձայնն՝ որ խօսէր ցիս · և ՚ի
դառնալն իմում՝ տեսի եւթն
Հրագարան ոսկի :

քը մեզ սիրեց , ու իր արուեստը
մեր մեղաց կապերը արձակեց

6 Ու մեզ՝ թագաւոր ու քահա_
նայ ըրաւ՝ այ՝ ան որ իր Հայրն է ·
իրեն փառք ու զօրութիւն (ըլլա՛)
հիմա ու միշտ , ու յաւիտեանս
յաւիտենից · ամմէն :

7 Հանա (ինքը) ամպերով պի_
տոր գա · ու բոլոր ազգ ու ա_
զինք ինքը պիտի տեսնեն · ու
(ինչվան) երկրիս ծարերն ալ (և_
զղջմները) ինքը տեսնան · ու ա_
նոնք ամմէնքեանալ՝ որ երկրի վրա
հպած առնեը ինքը խոցեցին · ու
ան (տեսնելով՝) լացուկոծ ընեն :
անշնկ է · ամէն :

8 Ես սկիզբ եմ, ու ես քէ՛ եմ, կրսէ
տէր ածը · որ (ինքը) էնն է, ու ան որ՝
է, ու ան որ գալու է՝ ամմէնակալը:

9 Ես յոհաննէսս՝ որ ձեր եղ_
պարն (եմ) , ու չեռերնիդ ըն_
կերը (ձեր) նեղութիւնին , ու տր_
քայութիւնի՝ ու համբերութիւնի
քրիս յի համար · ես ան կղզին
էի՝ որ անունը պատմոս կրսվի ,
(հոն բանը քարոզելու) համար ,
ու յի քրիս վրա վկայելու :

10 Ու կիրակի օրը ես հո_
գովս յափրշտակվեցա , ու իմ ե_
տէս մկ փողիվրպէս ամուր
ձանմը լսեցի՝ որ ինծի կրսէր ·
ես եմ սկիզբ ու սկ , առջին ու
վերջի :

11 Ան որ կըտեսնաս՝ գրքիմը
մէջ գրէ , ու տուր որ սխտր եկե_
ղեցիներուն տանին · այսինքն՝ է_
փեսոսը , ու զմիւռնիան , ու
պերգամոնը , ու թիւատիրան , ու
սարդիկէն , ու փիլադելփիան , ու
լաւոդիկէն :

12 Ու դարձա որ՝ ան ձանը
նայիմ որ ինծի կրխոսէր , ու
դառնալու առենս՝ սխտր ոսկիէ
Հրագկաղներ տեսա :

13 Եւ ՚ի մէջ եւթին ՀՈՐԱՔԱՐԱՆԱՑԻՆ՝ նման որդւոյ մարդոյ՝ զգեցեալ պատմուճանի ոտնաւորի, և գօտեւորեալ առ ստեամբքն գօտի ոսկեղէն :

14 Եւ գլուխ նորա և հերքն՝ իբրև զասր սպիտակ՝ և որպէս զձիւն, և աչք նորա որպէս բոց հրոյ :

15 Եւ ոտք նորա՝ նմանեալ պղնձոյ ծխելոյ ՚ի մէջ հնոցի հրաշէկ· և ձայն նորա իբրև զձայն ջուրց բազմաց :

16 Եւ ունէր յաջոյ ձեռինն իւրում աստեղս եւթն, և ՚ի բերանոյ նորա ելանէր սուր երկբերանեան, և երեսք նորա իբրև զարեգական Հառագայթել երևէին :

17 Եւ իբրև տեսի զնա՝ անկայ առ ոտս նորա իբրև զմեռեալ . և եդ ՚ի վերայ իմ զձեռ իւր՝ և ասէ ցիս· Մի երկնչեր, ես եմ առաջինն, և ես եմ յետինն

18 Եւ ես եմ կեանքն՝ և ես նոյն որ մեռայ, և ես եմ կենդանի՝ նի, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից· ամէն : և ունիմ զբանալիսն մահու և դժոխոց :

19 Գրեա զոր տեսանես՝ որ էն, և որ յապա՝ և որ հանդերձ ձեալ է լինել այս ·

20 Խորհուրդ եւթին աստեղացն՝ զոր տեսերդ յաջ իմ, և զեւթին Հրաշտարանս ոսկիս . եւթին աստեղքն՝ հրեշտակք եւթին եկեղեցեացն են, և Հրաշտարանքն եւթին՝ եւթին եկեղեցիք են :

13 Ու ան ոխտը Հրաշտակներուն մէջը՝ (մէկը կեցած՝) որդոյ մարդոյ նման . երկան կապամբ վրան հագած՝ որ ինչվան ոտաց պըՀղունքը կըՀասնէր· ու իր ծոծերուն վրայովը ոսկի գոտիմբ կապած :

14 Ու իր գլուխն ու մազերը Հերմակ՝ բուրդի պէս ու ձունի պէս, ու իր աչվընները՝ կրակի բոցի պէս :

15 Ու իր ոտվընները՝ գուտ պղինձի նման՝ (ինտոր ան) որ փըռան մէջ կրակ կըգառնա . ու իր ձանը՝ առատ վազուկ ջրերու պէս :

16 Ու իրեն աջ ձեռքը ոխտը աստղ ունէր, ու իր բերնէն՝ մկ թուրմբ կելլէր երկու գլխոց կտրուկ, ու իր երեսնալ արևի պէս Հառագայթած կերևար :

17 Ու երբոր անիկա տեսա՝ մեռելիմբ պէս իր ոտկը ինկա · ու իր աջ ձեռքը իմ վրաս դրաւ, ու ինծի ըսաց . Մի վախնար, ես առջինն եմ, ու ես ետկինն եմ .

18 Ու ես կեանք եմ, ու ես ան եմ որ մեռա, ու կենդանի եմ՝ հիմա, ու միշտ ու յաւիտեանս յաւիտենից· ամէն : ու (ես) մահկին ու դժոխքին փալլիքները ունիմ :

19 Ան բաները որ կրտեսնես կոր՝ անոնք զրէ, ան որ (հիմա) է, ու ան որ ետև, ու ան ալ՝ որ պիտոր ըլլա :

20 Ո խոտ աստղերուն խորուբղը՝ որ իմ աջ ձեռքը տեսար, ու ոխտը ոսկեկ Հրաշկալներնալ· ոխտը աստղերը՝ (ան ըսած) ոխտը եկեղեցիներուն հրեշտակներն են, ու ոխտը Հրաշկալները՝ ոխտը եկեղեցիներն են :

ԳԼ· Բ·

1 Ա՛ռ չրեշտակ եփեսացւոց եկեղեցւոյն գրեա· այսպէս ասէ կարողն՝ որ ունի զաստեղսն եւթն յաջու ձեռին իւրում, և շրջի ՚ի միջ եւթն աշտանակի ոսկւոյ :

2 Գիտեմ զգործս քո, և զվաստակ քո՝ և զհամբերութիւն քո· և զի ոչ բառնաս զչարս, և փորձեցեր՝ որ ասեն զինքեանս առաքեալս՝ և ոչ են, և հերքեայեցիս՝ և ստեն :

3 Եւ համբերեցեր, և վըշտացար վասն անուան իմոյ՝ և ոչ ածաստեցար :

4 Այլ ասեմ առ քեզ, զի զսէրն քո զառաջինն թողեր :

5 Յիշեա այժմ ուստի անկարն՝ և ապաշաւեա, և զառաջինն գործան քո արա· ապա թէ ոչ՝ գամ ես վաղվաղակի, և շարժեցից զաստանակս քո ՚ի տեղւոջէ իւրմէ՝ եթէ ոչ ապաշխարեսցես :

6 Այլ զայս արա՝ զի ատեսցես գործսն նիկոլայոսի, զոր ես ատեմ :

7 Որ ունի ականջս լսելոյ՝ լուիցէ զինչ ասէ հոգին սբ առ եկեղեցիս· որ յաղթէն՝ տաց նմա ուտել ՚ի փայտէն կենացն՝ որ է ՚ի միջ դրախտին ծոյ :

8 Եւ առ չրեշտակ զմիւսոյ եկեղեցւոյն գրեա· այսպէս ասէ անբասկիզբնն և անվախճանն, որ եղև մեռեալ՝ և կենդանացաւ :

9 Տեսի զգործս քո՝ և զնեղութիւն և զաղքատութիւն· այլ ազքատութիւն քո՝ մի

1 Եփեսացոց եկեղեցւոյն չրեշտակն՝ գրէ· ասէնկ կրսէ ան կարողը՝ որ սխտը աստղը իր ձեռքը բռներէ, ու սխտը ոսկի աշտանակներուն միջերովը կըպտրտի :

2 Քու գործքդ գիտեմ, ու քու աշխատանքներդ, ու քու համբերութիւնդ· ու ան՝ որ չարերուն աչք չես գոցեր, ու փորձեցիր անոնք՝ որ իրենք գիրենք առաքեալ կրսեն՝ ու չեն, ու երբ գայեցի (կրսեն՝) ու սուտ են :

3 Որ իմ անունիս համբերալ համբերեցիր, ու վըշտ քաշեցիր, ու աշխատեցար :

4 Հայց քեզի (ասս) կրսեմ, որ ան քու առջի սէրդ թողուցիր :

5 Հիմա ալ յիշէ որ՝ ուսկից վար ինկար, ու գրեաձայիր, ու քու առջի գործքերդ ըրէ, հապա թէ չէ՝ շուտով կուգամ, ու քու աշտանակդ տեղէն կըշարժեմ. թէ որ (դուն) չիապաշխարես :

6 Ուստի ասս ըրէ, որ նիկոլայսեին գործքերը ատես՝ ան որ ես կատեմ՝ :

7 Ան որ լսելու անկաճ ունի՝ նէ՝ թող լսէ, ինչ որ հոգին սիրը եկեղեցիներուն կրսէ· ով որ կեխտէ՝ երեն կենաց փատեն ուտել կուտամ՝ որ այ դրախտին մէջն է :

8 Ու ըզմիւսոյ եկեղեցիին չրեշտակին՝ գրէ· ասենկ կրսէ՝ ան որ ան ըսկիսզ ունի՝ ու ան ալ վերջ ունի, ան որ ինքը մեռաւ՝ ու սխէրնցաւ :

9 Քու գործքերդ տեսայ, ու նեղութիւնդ ու ախկըտութիւնդ· բայց քու ախկըտութիւնդ հա-

ծուխին եղեցի · և գՀայհոյութիւնն՝ որ ասէին զինքեանս հրեայս գոլ՝ և չէին ինչ, այլ ժողով սատանայի :

10 Մի երկնչիր՝ վասն որոյ կամիս չարչարել. ահա հանդերձ է ձենջ ՚ի բանտ, զի փորձիջիք, և ունիք նեղութիւն աւուրս տասն. լեր հաւատարիմ մինչև ՚ի մահ, և տայց քեզ զպսակն կենաց :

11 Որ ունի ականջս լսելոյ՝ լսիցէ զինչ Հոգին ասէ առ եկեղեցիս· որ յաղթէ, ոչ անիրաւի յերկրորդ մահուանէն :

12 Եւ առ հրեշտակն՝ որ ՚ի պերգամոյ եկեղեցին, գրեա. այսպէս ասէ՝ որ ունի զսուրն երկսայրի սրեալ ·

13 Տեսի զգործս քո · և զի բնակեալ ես ուր աթոռն է սատանայի, և ունիս զանուն իմ՝ և ոչ ուրացար զհաւատս իմ՝ յաւուր յորում անմեղապես վըճռեցաւ իմ հաւատարիմ եղեւ· զի վկայ է իմ հաւատարիմ սակնայն հաւատացեալ· որ սպանաւ ՚ի ձենջ որ կայք՝ ուր սատանայ է բնակեալ :

14 Այլ ունիմ առքեզ սակաւ· զի կայ առ քեզ վարդապետութիւնն բաղաամայ, որ ուսոյց զբաղակ դնել դայթագղութիւն առաջի որդւոցն իսրայէլի, ուտել նոցա զոհեալ՝ և պոռնկել :

15 Այսպէս և դու՝ ունիս զվարդապետութիւնն նիկոլայեացց՝ զոր ես ատեմ՝ :

16 Ապրի՝ ապաշխարեա, ապա թէ ոչ՝ գամ վաղվաղակի, ընդառաջի կըլլա · ու ան հայհոյութիւնը որ՝ իրենք զիրենք չրեա կըսէին՝ ու անանկ չէին, հապա՝ սատանայի ժողովք (էին) :

10 (Դուն) մի վախնար ան բաներէն՝ որ կուգես չարչարվիլ : Հանա բանսարկուն պատրաստ արվիրէ ձեզմէ (մարդիք) բանտը ձգելու, որ փորձվիք, ու տասը օր նեղութիւն ունենաք. ինչվան մեռնիլդ հաւատարիմ եղիր, ու քեզի կենաց պսակը կուտամ :

11 Ան որ լսելու անկամ ունինի՝ թող լսէ, ինչ որ Հոգին ուրը եկեղեցիներուն կըսէ. ով որ կհաղթէ՝ անիկա չէն չի քաշեր երկրորդ մահէն :

12 Ու պերգամոյի եկեղեցիին հրեշտակին գրէ, (թէ) ան որ երկու բերնէ թուրը սրըած ունի՝ (ինքը) սանոնկ կըսէ :

13 Գիտեմ գործքերդ տեսա, ու դուն ուր որ սատանային աթոռն է հոն բնակերես · ու իմ անունըս ունիս, ու իմ հաւատքըս չուրացար՝ ան օրն որ իմ անիծեալս վկաս հաւատարիմ գտնվեցաւ. որ ամէն հաւատացեալ իմ հաւատարիմ վկաս է. որ անիկա ձեր մէջէն բսպանըվեցաւ՝ ուր որ դուք կեցերէք, ու հոնալ սատանան կբընակի :

14 Բայց քեզի քիչմը բան ունիմ (բսելու), որ քու քովըդ բազաամի վարդապետութիւնը (ունեցողը) կա, որ բաղակին սորվեցուց՝ որ գայթագղութիւն դնէ իսրայէլի որդոց առջեւը՝ որ (կուգքերու) զոհված ուտեն, ու պոռնկութիւն բնեն:

15 Անանկ դուն ալ նիկոլայեցոց վարդապետութիւնը ունիս, ան որ ես կատեմ՝ :

16 Ուստի ապաշխարէ, հապա թէ չէ՝ շուտով կուգամ, ու իմ

և պատերազմեցայց ընդ նոսա սրով բերանոյ իմով :

17 Որ ունիցի ականջս լսել՝ լսիցէ զինչ հոգին ասէ առ եկեղեցիս . որ յաղթէ՝ տացց նմա ուտել ՚ի մանանայէն թա֊ քուցեալ, և տայց նմա զվիրն սրբութեան . և զրեալ անուն նոր ՚ի վիրն, զոր ոչ ոք գիտէ, բայց միայն որ առնուն :

18 Եւ առ հրեշտակն որ ՚ի Թիւատիրոյ եկեղեցին՝ գրեա . այսպէս ասէ որդին աւյ, որոյ՝ աչք իւր են իբրև զբոց հրոյ, և ոտք նր նման պղնձի ծխելոյ :

19 Տեսի զգործս քո, և բա֊ սէր, և գՏառատ, և զպաշտօն քո Համբերութեամբ . զի բա֊ զում է վաստակ քո վերջինն քան զառաջինն :

20 Այլ ասեմ առ քեզ բա֊ զում . զի թողեր զկինն գյեզա֊ բէլ , որ ասէր զինքն մարգա֊ րէ, և ուսուցանէր մոլորու֊ թիւն՝ գծառայս իմ՝ պոռնկել և ուտել զզոհեալ :

21 Եւ ետու նոցա ժամա֊ նակ ապաշխարել զպոռնկու֊ թիւնն իւրեանց, և ոչ ապաշ֊ խարեցին :

22 Ա֊հաւասիկ ես արկանեմ գնա ՚ի հիւանդ, և զգործակիցս իւր ընդ որս շնացաւ՝ ՚ի նե֊ ղութիւնս մեծամեծս . եթէ ոչ ապաշխարեսցեն ՚ի գործոց իւրեանց :

23 Եւ գորդիս նոցա սպա֊ նից մահուամբ . և ծանիցեն ամենայն եկեղեցիք՝ թէ ես եմ որ յանդիմանեմ գերիկամունս և զսիրտս . և տամ ձեզ ի֊ բրևիս թրջովք անոնց չետ կը֊ պատերազմիմ :

17 Ան որ լսելու անկամ ու֊ նիմ՝ թող լսէ, ինչ որ հոգին ե֊ կեղեցիներուն կըսէ . ամ որ կեղ֊ տէ՝ իրեն ան պահած մանանայեն կուտամ որ ուտէ, ու իրեն՝ սըր֊ բութեան գիր կուտամ . որ ան գրին վրա նոր անուն գրած է, որ մէկը չի գիտեր, բայց միան թէ՝ ան որ անիկա կառնէ :

18 Ու թիւատիրի եկեղեցիին հրեշտակին գրէ . ասանկ կըսէ որ֊ դին այ, ան՝ որ իրեն աչքերը կրակի բոցու պէս են, ու իր ոտ֊ վընները գուտ պղնձի պէս :

19 Քու գործքերդ տեսայ, ու սէրդ՝ ու հաւատքդ, ու քու֊ համբերութիւնդ ծառայութի֊ նդ . որ քու վերջի աշխատանք֊ դդ առջինէն շատ է :

20 Միան թէ՝ քեզի սղ եմ է բսածս . որ ան եզաբէլ կրն֊ կանը թող տըվիր, որ ինքզինքը մարգարէ կըսէր, ու իմ ծառանե֊ րուս մոլորութիին կըսորվըցնէր, որ պոռնկութիւն ընեն, ու (կուա֊ քերու) զոհված ուտեն :

21 Ու անոնց տեղ մը՝ որ իրենց ըրած պոռնկութիինին վրա ապաշխարեն, ու չի ապաշ֊ խարեցին :

22 Ահա ես՝ ինքը ու իր զոր֊ ծու ընկերներնալ՝ որ անոնց չետ հանութին ըրաւ, փըռան կրակը կըձգիմ՝ սաստիկ չարչարանքնե֊ րու մէջ, թէ որ իրենց գործքե֊ րուն վրա չի ապաշխարին :

23 Ու անոնց որդիքը մեռ֊ ցընելով կըսպանեմ : անոնկ ամէն եկեղեցիները թող իմա֊ նան՝ որ ես (ներսի) երիկամունքն ու սըրտերը կըբանամ կըքննեմ .

րաքանչիւր՝ ըստ գործոց իւր- եանց :

24 Ա՛յլ ձեզ ասեմ որք ՚ի Թիւատիր էք, և ոչ ունիք զվարդապետութիւնս գայթ· որ ոչ ծանեայք զխորս սատա- նայի՝ զոր խօսին · ոչ արկից ձեզ այլ ծանրութիւն :

25 Ա՛յլ զոր ունիք պահե- ցէք մինչև ես գամ :

26 Եւ որ յաղթէ՝ և պահէ զգործս իմ մինչև յվախճան, տաց նմա իշխանութիւն ՚ի վե- րայ ազգաց ·

27 Եւ հովուեսցէ զնոսա գաւազանաւ երկաթեաւ, և իբրև զանօթ բրտի փշրեսցէ ընդնոսա,

28 Որպէս և ես ընկալայ ՚ի Հօրէ իմմէ · և տաց նոցա զաստղն առաւօտուն :

29 Որ ունի ականջս՝ լուիցէ զինչ Հոգին ասէ առ եկեղեցիս :

ու ձեզի ամմէն մէկուդ իր գործ- քին զէմը կըհատուցանեմ :

24 Իսայց ձեզի՝ որ Թիւատիրն էք, ու աս վարդապետութիւնը չունիք, որ ան սատանային խո- րունկ բաներըն՝ որ իրենք կըսեն, դուք չէք իմացեր. (աս) կըսեմ՝ որ ձեր վրա ծանրութիւն չեմ ձգեր :

25 Հապա՝ ան որ ունիք՝ պա- հեցէք մինչև որ ես գամ :

26 Ու ան որ կեխաէ՝ ու մին- չև եակը իմ բաներըս կը- պահէ, իրեն իշխանութիւն կու- տամ ազգերուն վրա ·

27 Որ երկրէթէ գաւազանով ա- նոնց հովիւութիւն ընէ, ու բրու- տի (հոզէ շինած) ամանիմը պէս՝ անոնք փըսորէ ,

28 Ինծմէ որ եսալ իմ հօրմէս (աս) առի : ու իրենցալ կուտամ ան առաւըան աստղը :

29 Ան որ անկաշ ունինէ՝ թող լսէ, մին որ հոգին եկեղ- ցիներուն կըսէ :

Գ Լ· Գ·

1 Եւ առ հրեշտակ սարդիայ- ւոց եկեղեցւոյն գրէ՛ · այսպէս ասէ՝ որ ունի զեւթն հոգին այ՝ և զեւթն աստեղս · տեսի զգործս քո, զի անուն կենդանւոյ ունիս՝ և մեռեալ ես:

2 Լեր արթուն, և հաստա- տեա այսուհետև՝ զի կանդեր- ձեալ ես մեռանել · քանզի ոչ գտի զգործս քո կատարեալ ա- ւաջի այ :

3 Արդեւք յիշեա թէ որպէս լուար, և պահեա, և ապաշ- խարեա · ապա թէ ոչ զուար- թանաս՝ գամ որպէս գող, և ոչ ոք իմանայ զգալստեա իմ առ քեզ :

1 Ու սարդիացոց եկեղեցիին հրեշտակինաւ գրէ · ասանկ կըսէ ան որ ոխտը այ հոգին ունի, ու ոխտը աստղերը · Թէ՝ քու գործքերըդ տեսա, որ կենդանիի անուն ունիս՝ ու մեռած ես :

2 Արթնուն կեցիը, ու ալ ա- նանկ հաստատ գիտցիր՝ որ մեռ- նելու վրայես · պատճառն որ՝ քու գործքերըդ այ առջևը կա- տարեալ չի գտա :

3 Ադեկ միտքըդ բեր՝ Թէ ինչ կերպով որ (բանը) լսեցիր, ալ ան պահէ, ու ապաշխարէ · հապա Թէ որ չի ըզգաստանաս՝ (ես) գո- զողտիս կուգամ, անանկ որ՝ մէկը չիմանար իմ քեզի գալըս :

4 Ունիս սակաւ մի զանուն սարդիսացւոյն, որք ոչ աղտեցուցին զհանդերձս իւրեանց, և շրջին ՚ի սպիտակս՝ որովհետև արժանի եղեն :

5 Որ յաղթէ՝ այսպէս զգեցցի սպիտակս . և ոչ ջնջեսցի անուն նորա ՚ի գրուխենէն կենացդ . և խոստովանեցայց զանուն նորա առաջի հօր իմոյ՝ և առաջի հրեշտակաց :

6 Որ ունի ականջս լսելոյ՝ լուիցէ զինչ ասէ հոգին առ եկեղեցիս :

7 Եւ առ հրեշտակն փիլադելփեացւոց եկեղեցւոյն գրեա . այսպէս ասէ սրբն, ճշմարիտն , որ ունի զբանալին դաւթի . բանայ՝ և ոչ ոք է որ փակէ, և փակէ՝ և ոչ ոք է որ բանայ :

8 Ես գործս քո . ահա ետու առաջի քո դուռն բացեալ , զոր ոչ ոք կարէ փակել . զի սակաւիկ ունիս զօրութիւն, և պահեցեր զբանս իմ, և ոչ ուրացար զանուն իմ:

9 Ահաւասիկ ես տամ քեզ ժողովոյն սատանայի , որք ասեն զինքեանս հրեայս գոլ՝ և ոչ են, այլ ստեն . արարից զնոսա՝ զի եկեսցեն և երկիր պագցեն առաջի ոտից քոց , և ծանիցեն զի ես սիրեցի զքեզ :

10 .Ո՛ի պահեցեր զբան համբերութեան իմոյ, և ես պահեցից զքեզ ՚ի ժամ փորձութեան քոյ . որ հանդերձեալ է գալ յամենայն տիեզերս՝ փորձել զամենայն բնակեալս յերեսս երկրի :

11 Ահա գամ վաղվաղակի, կալ զոր ունիսդ՝ զի մի ոք առցէ զպսակ քո :

4 (Դուն) քիչմալ սարդիացի լսած մարդիք ունիս, որ իրենց լաթերնին չեն աղտոտած , ու (դեռ) ձերմակ հագուստով կրպըտռիին՝ որ անոր արժանի եղան:

5 Ան որ կեխտէ՝ ասանկ ձերմըկներ պիտի հագնի . ու կենաց գրքէն իր անունը չէ պիտի ջընձըվի . ու անոր անունը (ես) պիտոր դաւանիմ իմ հօրըս առջեւ՝ ու հրեշտաներուն առջեւը :

6 Ան որ լսելու անկաձ ունի՝ թող լսէ, ինչ որ հոգին եկեղեցիներուն կրսէ :

7 Ու փիլադելփի եկեղեցիին հրեշտակին գրէ . ասանկ կրսէ ան սուրբը՝ ճշմարիտը. որ դաւիթին բալլէքներըը ունի . կրբանայ՝ ու մէկմը չեկա որ (ան) գոցէ, ու կրգոցէ՝ ու մէկմը չեկա որ բանայ ,

8 Քու գործքերըդ տեսա . Նայնա քու առջեւդ դուռը բաց դրիր, որ ան՝ մէկը չի կրնար գոցել : ինչու որ՝ քըչկմը կարողութիւն ունիս, ու իմ խօսկըս պահեցիր , ու իմ անունըս չի ուրացար :

9 Ընայնա ես՝ ան սատանայինն ժողովըը քու ձեռքդ կուտամ. անոնք որ իրենք զիրենք հրեայ ենք կրսեն, ու չեն, որ սուտ կրսեն . անանկ ընեմ որ անոնք գան, ու քու ոտացդ առջեւը երկրպագուիին ընեն , ու իմանան ՝ որ ես քեզ սիրեցի :

10 Ինչու որ՝ դուն իմ խօսկըս պահեցիր համբերութիւն ընելու, ու ես ալ քեզ պիտի պահեմ քու փորձութեանդ ատենը , որ անոր՝ բոլոր աշխարքքի վրա պիտոր գա՝ բոլոր երկրի երեսը բնակողները փորձելու :

11 Ընայնա (ես) շուտով կուգամ. ան որ ունիս՝ աղէկ բռնէ , չըլլա որ քու թագըդ ուրիշմը առնէ :

12 Որ յաղթէ՝ արարից զնա սիւն տաճարի այ իմոյ, և ար_տաքս այլ ևս ելցէ. և գրեցից ՚ի վերայ նորա զանուն այ իմոյ, և զանուն քաղաքի այ իմոյ՝ զնորին երուսաղէմի. որ իջանելոց է յերկնից այ իմոյ, և անուն նորա նոր:

13 Որ ունի ականջս՝ լսէ_ցէ զինչ ասէ հոգին առ եկե_ղեցիս:

14 Եւ առ հրեշտակն լաւո_դիկեայ եկեղեցւոյն գրեա. այս_պէս ասէ Ամէնն՝ վկայն հաւա_տարիմ և ճշմարիտ, սկիզբն սկզբան արարածոց այ:

15 Գիտեմ զգործս քո՝ զի ոչ ցուրտ ես՝ և ոչ ջերմ. պարտ էր քեզ ցուրտ լինել՝ և կամ ջերմ:

16 Այլ զու գաղջ ես՝ և ոչ ջերմ և ոչ ցուրտ, հան_դերձեալ ես փսխել ՚ի բերա_նոյ իմմէ:

17 Զի ասես. մեծացայ, և մեծացայ, և ոչ խիք կարօտ եմ. և ոչ գիտես եթէ զու ես ողորմելի և հեղգ, աղ_քատ, մերկ, և կոյր:

18 Ասեմ՝ ես խորհրդակից եղէց քեզ, առ գնեա յինէն ոսկի փորձեալ ՚ի հրոյ՝ զի մե_ծասցիս, և հանդերձս սպի_տակս՝ զի զգեցցիս, զի մի ե_րեւեսցի անվայելչութիւն մեր_կութեան քոյ. և զիր դեղ յաչս քո՝ զի տեսցիս:

19 Ես՝ զոր սիրեմ, յանդի_մանեմ և խրատեմ. նախան_ձեա այժմ, և ապաշխարեա:

20 Ահաւասիկ կամ ես առ դուրս և բախեմ. եթէ ոք լս_

12 Ան որ կեխտէ՝ ինքը իմ այուս տաճարին սիւն պիտի ը_նեմ, ու անիկա ալ՚ևս դուրս չելլար. ու անոր վրա իմ այուս անունը պիտի գրեմ, ու իմ այ_ուս քաղքին անունը՝ որ նոր ե_րուսաղէմն է. ան որ իմ այուս երկընքէն պիտոր ինջնա. ու իր անունը՝ նոր (կրավ):

13 Ան որ անկաճ ունինէ՝ թող լսէ, ինչ որ հոգին եկեղեցինե_րուն կրսէ:

14 Ու լաւոդիկէ եկեղեցիին հրեշտակին գրէ. ասանկ կրսէ ան՝ Ամէնը, հաւատարիմ ու ճշմա_րիտ վկան, այ ըստեղծածներուն ըսկիսպին ըսկիսպը:

15 Քու գործքերըդ գիտեմ, որ (դուն) ոչ պաղ ես՝ ու ոչ տաք. պէտք էր որ դուն՝ կամ պաղ ըլ_լայիր, կամ ալ՝ տաք:

16 Ճայց դուն ե՛ղկ ես, որ տաք չէ՛ ու պաղ չէ. (որ ալ անանկ) իմ բերնէս պիտոր դուրս փըս_խըվիս:

17 Որ կրսես (թէ՝) հարուստ եմ՝ ու մեծցայ, ու բանիմ՛ինալ կարօտութիւն չունիմ. ու չես գի_տեր որ՝ դուն աղօրմելի ես, խեղճ ու ախկատ, մերկիկ ու կուր:

18 Ուսոի քեզի աս խորուրդս կուտամ. իմնէն գնէ առ՝ կրակով (ապէկ) փորձըված, որ ա_նով հարուստանաս, ու հերմակ լաթեր ալ՝ որ հագնիս՝ որ քու անշնորք մերկութիւնըդ չերեւնա. ու աչվընէրդ ալ դեղ դիր՝ որ (լաւ) տեսնաս:

19 Ես ան որ կըսիրեմ՝ իր ե_րեսը վար կուտամ ու կըպաս_ժեմ: ուսոի ալ ջանք ըրէ՝ ու ապաշխարէ:

20 Հիմա ես դուռը կեցերեմ, ու կըշալեմ. թէ որ մէկը իմ ձա_

իցէ ձայնի իմոյ՝ և բանայցէ դրունսն, մտից առ նա՝ և ընթրիս արարից առ նա, և նա ընդ իս :

21 Որ յաղթէ՝ տայց նմա նստել ընդ իս յաթոռ իմ, որպէս և ես յաղթեցի՝ և նստայ յաթոռ հօր իմոյ :

22 Որ ունիցի ականջս՝ լուիցէ զինչ ասէ հոգին առ եկեղեցիսն :

նրա լըսէ ու դուռը բանա՝ անոր քով կըմտնամ, ու անոր հետ ընթրիք կընեմ, ինձ հետ ալ :

21 Ան որ կեխտէ՝ իրեն կուտամ որ իմ հետս իմ աթոռս նստի. ինծի որ ես ալ եխտեցի՝ ու իմ հօրս աթոռը նստա :

22 Ան որ անկաշ ունինի՝ թող լսէ, ինչ որ հոգին եկեղեցիներուն կըսէ :

Գ Լ· Դ·

1 Եւ յետ այսր ամենայնի տեսի՝ և ահա դրունք երկնից բացեալ էին, և ձայն փողոյն առաջնոյ զոր լուայ՝ խօսեր ընդ իս՝ և ասէր· Ել այսր՝ և ցուցից քեզ զինչ լինելոց է յապա ժամանակս :

2 Եւ ժամանեալ յիս հոգի, և տեսի աթոռ մի՝ զի կայր յերկինս :

3 Եւ ՚ի վերայ աթոռոյն նստէր՝ նման տեսլեան ականց՝ յասպեւոյ և սարդիոնի :

4 Եւ քահանայք շուրջ զաթոռովն՝ նմանք տեսլեան զմբրբլաի· և շուրջ զաթոռովն՝ աթոռք քսան և չորք, և ՚ի վերայ աթոռոյն նստէին քսան և չորք երիցունք՝ զգեցեալ հանդերձս սպիտակս, և ՚ի գլուխս իւրեանց պսակս ոսկիս :

5 Եւ յաթոռոյ անտի ելանէին փայլատակմունք և ձայնք և որոտմունք· և եւթն լամբարք հրոյ բորբոքեալ առաջի աթոռոյն, որ են եւթն հոգիքն այ :

6 Եւ էր առաջի աթոռոյն ծով ապակեղէն՝ նման սպիտա-

1 Ու աս ամէնն բաներէն ետև՝ ահա տեսա որ երկինքին դրաններըը բացվեր էին. ու ան առջի փողիպէս ձանն որ լսերէի, ան իմ հետս կըխօսէր ու կըսէր· Ինա ելիր՝ որ քեզի ցըցունեմ ինչ որ ետկի աաեններըը պիտի ըլլա :

2 Ու հոգիովս յափըշկիվեցա, ու ահա աթոռ մը տեսա՝ որ երկինքը կեցեր էր.

3 Ու անիկա որ ան աթոռին վրա նստեր էր՝ ինքը յասպիս ու սարդիոն ակուռներու նման եր ևուռի ունէր :

4 Ու աթոռին բովրտիքը՝ քահանաներ՝ զմբուխտի երեսու թի նման· ու ան աթոռին քովը քսանըչորս աթոռ, ու ան աթոռներուն վրա քսանըչորս երէցներ նստեր էին՝ հերմակ լաթեր հագած, ու իրենց գլխըներնին՝ ոսկիէ թագեր (դրած) :

5 Ու ան աթոռէն կածկըղտուքներ ու ձաներ ու որոտմունքներ կելլային· ու սխտան ալ կրակի լամբարներ (կային) բոցով վառած աթոռին առջևը, որ անոնք՝ այ սխտր հոգիքներն են :

6 Ու աթոռին առջևը ապակիիպէս ծովմբ՝ սառի նման հեր-

կուբիտան սաւին, և ՚ի միջ աթոռոյն չորք կենդանիքն՝ և լի էին աչօք առաջոյ և յետոյ :

7 Եւ էր կենդանին առաջին նման առիւծու, և երկրորդ կենդանին նման զուարակի, և երրորդ կենդանին երես մարդոյ, և չորրորդ կենդանին նման արծուոյ թռուցելոյ :

8 Եւ չորից կենդանեացն էին մին մին ՚ի նոցանէ վեց թեւք շուրջանակի, և ՚ի ներքոյ լի էին աչօք· ոչ հանգչէին՝ ոչ զտիւ և ոչ զգիշեր՝ ասելով· սուրբ սուրբ սուրբ, սուրբ սուրբ սուրբ, տէր ամենակալ՝ որ էր և է և գալոց ես :

9 Եւ յորժամ տային կենդանիքն փառս և պատիւ և գոհութիւն նստելոյն ՚ի վերայ աթոռոյն՝ կենդանւոյն յաւիտեանս յաւիտենից·

10 Եւ գնէին զպսակս իւրեանց առաջի աթոռոյն՝ ասելով,

11 Արժանի ես տէր ամենայնի, և ՚ի կամէն քո ստեղծան՝ և կան հաստատուն :

մակ· ու աթոռին միջովը՝ չորս կենդանիները, որ (ասոնք) առջևէ ետևէ՝ աչվրներով լիք էին :

7 Ու առ՝ կենդանիներուն առջինը՝ առուծի նման էր, ու երկրորդ կենդանին՝ մոզի նման, ու երրորդ կենդանին՝ մարդու դէմքով, ու չորրորդ կենդանին՝ թըռչուղ արծիվի նման :

8 Ու ան չորս կենդանիները ամէն մէկը վրայովնին՝ վեց վեց (թևչելու) թևեր ունէին, ու տակէն ալ աչվրներով լիք էին· ու ցորեկ ու գիշեր՝ չէին հանգստառներ (աս) ըսէին· սուրբ սուրբ սուրբ· սուրբ սուրբ սուրբ· սուրբ սուրբ սուրբ՝ տէր ամենակալ, որ էն, ու ես, ու որ գալու ես :

9 Ու երբոր աս կենդանիները փառք ու պատիվ ու գոհութիւն կուտային աթոռին վրա նստողին, ան որ կենդանի է յաւիտեանս յաւիտենից·

10 (Անոնքալ) իրենց թագերնին (չանած՝) աթոռին առջևը կըդընէին՝ (աս բանը) ըսելով,

11 (Դուն՝) սուրբ մեր տէր՝ արժանի ես փառք ու պատիվ ու զօրութիւն առնելու, որ ամէնը դուն ըստեղծերես, ու քու կամենալովդ ըստեղծըվեցան ու հաստատ կեցերնն :

ԳԼ· Ե·

1 Եւ տեսի ՚ի ձեռս աջոյ՝ որ նստէր ՚ի վերայ աթոռոյն՝ գիրք՝ գրեալ ներքոյ և արտաքոյ, և կնքեալ եւթն կնքով :

2 Եւ տեսի հրեշտակ մի զօրաւոր՝ զի քարոզէր ՚ի ձայն մեծ. ո՞ է արժանի բանալ գր-

1 Ու ան աթոռին վրա նըստողին աջ ձեռքը մէկ գիրքմը տեսա՝ անոր ներսըվանցը ու դրսըվանցը գրված, ու ան՝ սիտը կնիքով կնքըված :

2 Ու մէկ զօրեղ հրեշտակմը տեսա, որ բարձրը ձանով կըկանչէր կըսէը· ան ով է՝ որ ար-

զերքս՝ և լուծանել զկնիք նորա :

3 Եւ սկսաք կարդալ՝ ոչ ի յերկինս և ոչ յերկիր, և ոչ ի ներքոյ երկրի՝ բանալ զերքն, զի ոչ տեսին զնա :

4 Եւ ես լայի ուժգին՝ զի ոչք գտաւ արժանի բանալ զերքն՝ և տալ ի նա :

5 Եւ մի յերիցանցն ասէ ցիս· Մի լար, ահաւասիկ յաղթեաց առիւծն յազգէն յուդայ յարմատոյն դաւթի՝ բանալ զգերքն՝ և լուծանել զեւթն կնիքսն նորա :

6 Եւ տեսի ի մէջ աթոռոյն՝ և ի մէջ չորից կենդանեացն, և ի մէջ երիցանցն՝ գառն կայր զնեալ, որ ունէր եւթն եղջերս, և աչս եւթն՝ որ են եւթն հոգիք այ· որ են առաքեալ ընդ ամենայն երկիր :

7 Եւ եկն ընկալաւ յաջոյ ձեռանէ նորա՝ որ նստէր ի վերայ աթոռոյն :

8 Եւ յորժամ առ զգերն, չորք կենդանիքն և քսան և չորք երիցունքն անկանէին առաջի գառնին· և ունէին իւրաքանչիւր քնար՝ և բաւրվառս ոսկի լի խնկով, որ է աղօթք սրբոցն .

9 Եւ օրհնէին երգս նորս և ասէին . արժանի ես առնուլ զգիրդ՝ և բանալ զկնիք դորա, զի զնեալ՝ և գնեցեր զմեզ այ արեամբդ քով՝ յամենայն ազգաց և ի լեզուաց և ի ժողովոց հեթանոսաց :

10 Եւ արարեր զմեսա այ ժանի ըլլա առ գերքս բանալու, ու անոր կնիքները քակելու :

3 Ու մէկը ան չէր կրնար, ոչ երկինքը (եղողներէն), ու ոչ երկիրս, ու ոչ երկրի ներքեւ՝ ու ան գերքը բանա, որ՝ ան չէին (կրնար) նայիլ ալ :

4 Ու ես ալ՝ սաստիկ կուլայի, որ մէկմը չի գտնըվեցաւ արժանի որ ան գերքը բանա՝ ու ան նայի :

5 Ու ան երէցներէն մէկը ինծի ըսաց . Մի լար, Ցանա ան առուծը որ յուդային ցեղէն է՝ դաւիթի արմատէն եղած, որ ինքը եփաթլով՝ գերքը կրբանա, ու անոր ոխտը կնիքները կրբակէ :

6 Ու տեսա որ ան աթոռին մէջ տեղը՝ ու չորս կենդանիներուն մէջը ու երէցներուն մէջ՝ մէկ մորթած գառմը կեցած կար· որ (գլուխը) ոխտը եօթուը ունէր, ու ոխտը աչք, որ ան՝ այ ոխտը հոգիներն են՝ որ բոլոր երկիրը խըրկըված են :

7 Ու (անիկա) եկաւ, ան աթոռին վրա նստողին աջ ձեռքէն (գերքը) առաւ :

8 Ու երբոր գերքը առաւ՝ չորս կենդանիները ու քսանը չորս երէցները գառին առջեւը կիյնային· ու ամէն մէկերնին որ (չալըլու) քնար ունէին, ու ոսկիէ բուրվառ խառնիով լեցուն, որ ան՝ սրբոց աղօթքն է .

9 Անոնք նոր երգերով կօրհնէին ու կըսէին . (դուն) արժանի ես առ գերքը (ափրդ) առնելու, ու անոր կնիքները բանալու· որ մորթըվեցար՝ ու քու անուռնովդ մեզ այ ցամար գնեցիր՝ ան բոլոր ասգերէն, ու լեզուներէն, ու ՝ն_ թանոս ժողովըրդներէն :

10 Ու սա մեզ՝ մեր աստուծուն

մերոյ՝ թագաւորս և քահա-
նայս՝ թագաւորել ՚ի վերայ
երկրի :

11 Եւ տեսի և լուայ զձայն
հրեշտակաց բազմաց՝որք կային
շուրջ զաթոռովն և զշրջբուք
կենդանեօքն և զքահանայիւքն.
և էր թիւն նոցա՝ բիւրք բիւ-
րուց՝ և հազարք հազարաց .

12 Ասէին ձայնիւ մեծաւ .
արժան է գառնդ զեհեալ՝ առ-
նուլ զմեծութիւն և զիմաս-
տութիւն և զզօրութիւն և զըն-
պատիւ և զփառս և զօրհնու-
թիւն :

13 Եւ ամենայն արարածք՝
որ են յերկինս և յերկրի , և ՚ի
ծովս և որ ՚ի նոսա , լուայ զի
ասէին . որ նստի յաթոռն՝ և
գառնն՝ օրհնեալ բարձրացեալ
և փառաւորեալ յաւիտեանս
յաւիտենից :

14 Եւ չորք կենդանիքն ա-
սէին , ամէն . և երիցունքն
անկանէին առաջի նորա և եր-
կիր պագանէին :

թագաւորներ ու քահանաներ ը-
րիր , երկիրի վրա թագաւորու-
թին ընելու :

11 Ու նայեցա՝ ու շատ հրեշ-
տակներու ձան ալ լսեցի , որ ա-
թոռին ու չորս կենդանիներուն
քովերովը կեցեր էին . որ անոնց
համրանքին բիւր բիւրոց էին՝
ու հազար հազարաց .

12 (Որ) բարձրը ձանով կը-
սէին . աւտ մորթըված գառը ար-
ժանի է մեծութին առնելու , ու
իմաստութին , ու զօրութին , ու
պատիւ , ու փառք , ու օրհնու-
թին :

13 Ու բոլոր ըստեղծվածներ-
նալ՝ անոնք որ երկինքն են՝ ու
երկրի վրա՝ ու ծովը , ու անոնց
մէջ եղողներնալ , լսեցի որ
կըսէին . ան՝ որ աթոռը նստած
է՝ ու գառնալ՝ օրհնեալ բարձ-
րացեալ ու փառաւորեալ (ըլ-
լա) յաւիտեանս յաւիտենից :

14 Ու ան չորս կենդանինե-
նալ կըսէին , ամմէն . ու երեց-
ները անոր առջևը կիյնային ու
երկրպագութին կընէին :

Գ.Լ. .Օ.

1 Եւ տեսի զի երբայ գմին ՚ի
կնքացն, և լուայ ՚ի միոյ
՚ի չորից կենդանեացն իբրև
զձայն որոտման՝ զի ասէր՝ Թէ
գամ :

2 Եւ տեսի՝ և ահա ձի ըս-
պիտակ, և որ հեծեալն էր ՚ի
նմա՝ ունէր աղեղն . և տուաւ
նմա պսակ, և ելն յաղթող զի
յաղթեսցէ :

3 Եւ յորժամ երբայ զկնիքն
երկրորդ, լուայ յերկրորդ կեն-
դանւոյն՝ զի ասէր՝ գամ՝ :

4 Եւ ել այլ ձի կամիր, և

1 Ու տեսա՝ որ(գառը) ան կնիք-
ներուն մէկը բացաւ . ու
չորս կենդանիներուն մէկէն լսեցի
որոտումի ձանիմըպէս որ կըսէր՝
Թէ կուգամ :

2 Ու (նայեցա՝) ու մէյմալ տե-
սա մէկ ձերմակ ձիմը , ու վրան
հեծնողը՝ մէկ աղեղմը ունէր . ու
իրեն թաղմը տրըվեցաւ , ու ան
յախտողն էր՝ եկաւ որ յախտէ :

3 Ու երբոր երկրորդ կնիքը
բացաւ , երկրորդ կենդանիէն լսե-
ցի որ կըսէր՝ (Թէ) կուգամ :

4 Ու ուրիշ կարմիր ձիմը ե-

որ չեծեալն էր ՚ի վերայ նորա՝ առաւ նմա առնուլ զխաղաղութիւն յերկրէ, զի զմիմեանս զենցեն. և առաւ նմա սուր մի մեծ:

5 Եւ յորժամ եբաց զկնիքն երրորդ, լուայ յերրորդ կենդանւոյն՝ զի ասէր՝ Եկ՝ գամ. և տեսի՝ և ահա ձի սեաւ, և որ նստեալն էր ՚ի վերայ նորա՝ ունէր կշիռս ՚ի ձեռին իւրում:

6 Եւ լուայ ձայն ՚ի միջոյ չորից կենդանեացն, կապիճ մի ցորեան զենարի միոջ, և երեք կապիճ գարի զենարի միոջ. և ձէթ և զինի մի՛ ապականեցես:

7 Եւ յորժամ եբաց զկնիքն չորրորդ, լուայ ձայն ՚ի չորրորդ կենդանւոյն՝ զի ասէր՝ Եկ՝ գամ:

8 Եւ տեսի՝ և ահա ձի շլառնոս. և որ նստէրն ՚ի վերայ նորա՝ ունէր զմահ, և դժոխք երթային ընդ նորա. և տրեաւ նմա իշխանութիւն չորրորդ մասին աշխարհի՝ սատակել սրով և սովով և մահիւամբ՝ և գազանօք երկրի:

9 Եւ յորժամ եբաց զկնիքն հինգերորդ՝ տեսի ՚ի ներքոյ սեղանոյն զհոգիս ամենայն մարդկան կնքեալ վասն բանին այ՝ և վասն վկայութեան նորա զոր ունէին:

10 Որք աւաչին ձայնիւ մեծաւ. մինչև յո՞ր՝ ած և ճշմարիտ՝ ոչ դատիս և խընդրես զվրէժ արեան մերոյ ՚ի բնակչաց երկրի:

11 Եւ տրեաւ նոցա արկանել սպիտակ, և ասացաւ նոցա զի հանգիցեն փոքր մի եւս. ուստի անոր վրայի հեծնողին (ուժմը) տրըվեցաւ՝ որ երկիրէս խաղաղութիւնը վերցընէ, որ մէկ ըզմէկ մորթեն. ու իրեն մէկ մեծ թուրմընալ տրըվեցաւ:

5 Ու երբոր երրորդ կնիքը բացաւ՝ երրորդ կենդանիէն լսեցի որ կըսէր՝ Եկ կուգամ. ու տեսա՝ ու ահա սև ձիմը, ու անոր վրան նստողը իր ձեռքը մէկ կըշռաքմը ունէր:

6 Ու ան չորս կենդանիներուն մէջէն ձանմը լսեցի (Եկ՝) մէկ կապիճ չափ ցորենը մէկ դենարը (ծախվի), ու իրեք կապիճ գարին՝ մէկ դենարմը. ու ձէթին ու գինիին դ՚ընդմը չկտաս:

7 Ու երբոր չորրորդ կնիքը բացաւ՝ չորրորդ կենդանիէնալ մէկ ձանմը լսեցի որ կըսէր Եկ՝ կուգամ:

8 Ու տեսա՝ ու մէյմալ դեղնաշարթի գունով ձիմը. ու ան՝ որ անոր վրա նստէրէր՝ մահի (անունն) ունէր, ու գերեզմինները իր եաւէն կերթային. ու իրեն իշխանութիւն տրըվեցաւ աշխրքքի չորրորդ մասին վրա, որ թրովմ ու սովով ու մահ ձղելմ՚ ու երկրի գազաններովմ (անոնք) սատկեցնէ:

9 Ու երբոր հինգերորդ կնիքը բացաւ, սեղանին ներքևը ան բոլոր մարդոց հոգիները տեսա՝ որ կնքըված (մեռեր)էին այ խօսկին պատճառով, ու իրեն վկայութինին համար որ ըրեր էին:

10 Ու մեծ ձայնով բարձրը ձանով կըսէին. ար՝ սրբ ու ճշմարիտ, ինչվան երբ պիտի դատաստան չընես՝ ու մեր արունին սևը չհանես երկրի բնակողներէն:

11 Ու անոնց ձերմակ վերարկուներ տրըվեցաւ (հագնելու), ու իրենց ըսվեցաւ որ՝ քիչմը առն-

ժամանակ, մինչև լցցին ծա-
ւայակիցք նոցա և եղբարք
նոցա, որք չհանդերձեալ են
կատարել երբև զնոսա :

12 Եւ տեսի յորժամ եբաց
զկնիքն վեցերորդ՝ եղև շար-
ժումն մեծ, և արեգակն եղև
սեամբ երբև զկապերտ այծեայ,
և լուսինն բոլորովին եղև եր-
բև արիւն :

13 Եւ աստեղք երկնից թա-
փեցան ՚ի յերկիր, որպէս
տերև թզենւոյ զի ուժգին շար-
ժիցի ՚ի հողմոյ :

14 Եւ երկին երբև զմագա-
զաթեայ գիրս գալարէր . և ա-
մենայն լերինք և կղզիք ՚ի
տեղւոյ իւրեանց շարժեցան :

15 Եւ թագաւորք երկրի և
իշխանք՝ հարստահարք և մե-
ծամեծք և զօրաւորք՝ և ամե-
նայն ծառայք , և ամենայն ա-
զատք՝ թաքուցին զինքեանս
յայրս և ՚ի ժայռս վիմաց .

16 Եւ ասէին լերանց՝ թէ
անկերուք ՚ի վերայ մեր, և
ցըլուրս՝ թէ ծածկեցէք զմեզ .
17 .Օ,ի եկն օր մեծ բար-
կութեան նորա , և ո՛վ կարէ
կալ առաջի նորա :

ալ հանդիստ կենան , ինչուան որ
անոնց ընկերծառաններուն ու ի-
րենց հետարներուն լըման (չամ-
բանքը) գա , որ անոնքալ իրենց-
պէս պիտի կատարվին :

12 Ու տեսա որ՝ երբոր վեց-
երորդ կնիքը բացաւ՝ մեծ երկ-
րաժաժ եղաւ , ու արեւը սեւցաւ՝
մկ ածու մազէ լաթիմբակս ե-
ղաւ , ու լուսընկան բոլոր արուն
դարձաւ եղաւ :

13 Ու երկրնքի աստղերը երկ-
րի վրա թափթըփեցան , ինտոր
թուզի տերևը երբոր քամիէն
սաստիկ որ կըշարժըվի :

14 Ու երկինքը մաղազաթէ
գրքակէս կոլըվէր · ու բոլոր
լեռներն ու կղզիները իրենց տե-
ղէն շարժարկեցան :

15 Ու երկրի (վրա եղած) թա-
գաւորներն ու իշխանները , հա-
զարապետները ու մեծամարդիք ,
ու զինվորները , ու բոլոր ծառա-
նե՛ր՝ ու բոլոր ազատներ , այրերու
ու քարերու քրձերու մէջ վա-
խան պահվըտցան ·

16 Ու լեռներուն կըսէին՝ որ
եկէք մեր վրա ինկիք , ու բլուր-
ներուն՝ թէ մեզ ծածկեցէք ·

17 Ինչու որ՝ անոր բարկու-
թինին մեծ օրը եկաւ (հասաւ) ,
ալ ո՛վ կրընա իր դիմացը կենար :

ԳԼ. Ի.

1 Եւ յետ այնորիկ տեսի՝
չորս հրեշտակս զի կային
՚ի չորս անկիւնս երկրի . և ու-
նէին զչորս հողմս երկրի՝ զի մի՛
ընչհասցէ հողմ ՚ի վերայ երկրի ,
և մի՛ ՚ի ծովս՝ և մի՛ ՚ի ծառս :

2 Եւ տեսի այլ հրեշտակ զի
ել յարևելից , և ունէր զկնիք
այ կենդանւոյ , և աղաղակեաց

1 Ու անկէ ետև տեսա որ չորս
հրեշտակ երկրի չորս ան-
կիւնը կեցերէին . ու երկրին չորս
հովերը բռներ էին՝ որ երկրի վրա
հով չի փըչէ , ու ո՛չ ալ ծովի
վրա , ու ո՛չ ծառերուն վրա :

2 Ու մէկ ուրիշ հրեշտակմը-
նալ տեսա՝ որ արևելքի վրայէն
ելաւ , ու կենդանի այ կնիքը ու-

ձայնիւ մեծաւ առ չորս հրեշտակսն, որոց տրուեցաւ երիր ազգաց եւ լեզուաց եւ ժողովրդոց, որք կային առաջի աթոռոյն եւ առաջի գառինն՝ արկեալ զգեստեամբք ճերմակաւք եւ ձեռն ի ձեռին նոցա, ու սաստիկ ձայնով կանչէին չորս հրեշտակներուն, որ երկիրն ու ծովը ապականելու իշխանութիւն էին տրուած,

3 Եւ ասէր. մի՛ վնասէք երկրի՝ մի՛ ծովու՝ մի՛ ծառոց, զաղաբեցէք մինչեւ կնքեցից զծառայս Աստուծոյ մերոյ:

4 Եւ լուայ զթիւ կնքելոցն՝ հարեւր քառասուն և չորք հազար՝ կնքեալք յազգէ որդւոց իսրայէլի:

5 Յազգէն յուդայ՝ երկոտասան հազար կնքեալ: յազգէն ռուբենի՝ երկոտասան հազար կնքեալ: յազգէն գադայ՝ երկոտասան հազար կնքեալ:

6 Յազգէն ասերայ՝ երկոտասան հազար կնքեալ: յազգէն նեփթաղիմայ՝ երկոտասան հազար կնքեալ: յազգէն մանասէի՝ երկոտասան հազար կնքեալ:

7 Յազգէն շմաւոնի՝ երկոտասան հազար կնքեալ: յազգէն ղեւեայ՝ երկոտասան հազար կնքեալ: յազգէն իսաքարայ՝ երկոտասան հազար կնքեալ:

8 Յազգէն զաբուղոնի՝ երկոտասան հազար կնքեալ: յազգէն յովսեփու՝ երկոտասան հազար կնքեալ: յազգէն բենիամինի՝ երկոտասան հազար կնքեալ:

9 Եւ յետ այսորիկ տեսի՝ և ահա ժողովուրդ բազում՝ որոց ոչ գոյր թիւ, յամենայն ՚ի ցեղս եւ ազգս եւ ժողովուրդս եւ լեզուս՝ կային առաջի աթոռոյն եւ առաջի գառինն՝ զգեցեալ զգեստս սպիտակս, եւ ձեռինս իւրեանց՝ ունելով զաղաւնիս արմաւենեաց,

նէր, ու սաստիկ ձայնով կանչէին չորս հրեշտակներուն, որ երկիրն ու ծովը ապականելու իշխանութիւն էին տրուած,

3 Ու (անոնց) կըսէր. երկիրի դէն մի՛ ընէք, ո՛չ ալ ծովէ, ո՛չ ալ ծառերուն. դադար կեցէք մինչեւ որ ես կնիք դնեմ իմ աստուածուս ծառաներուն (վրան):

4 Ու լսեցի որ՝ ան՝ վրանին կնիք դրածներուն համրանքը հարիւր քառասունը չորս հազար (էին՝) իսրայէլի որդոցը ցեղերէն կընքըրուածներ:

5 Յուդայի ցեղէն՝ տասներկու հազար կընքըրուած. ռուբենի ցեղէն՝ տասներկու հազար կընքըրուած. գադի ցեղէն՝ տասներկու հազար կընքըրուած:

6 Ասերի ցեղէն՝ տասներկու հազար կընքըրուած. նեփթաղեմի ցեղէն՝ տասներկու հազար կընքըրուած. մանասէի ցեղէն՝ տասներկու հազար կընքըրուած:

7 Շմաւոնի ցեղէն՝ տասներկու հազար կընքըրուած. ղեւիի ցեղէն՝ տասներկու հազար կընքըրուած. իսաքարի ցեղէն՝ տասներկու հազար կընքըրուած:

8 Զաբուղոնի ցեղէն՝ տասներկու հազար կընքըրուած. յովսեփի ցեղէն՝ տասներկու հազար կընքըրուած. բենիամինի ցեղէն՝ տասներկու հազար կընքըրուած:

9 Ու ասկէ ետեւ՝ ահաւասիկ տեսայ՝ շատ ժողովուրդներ տեսա՝ որ համրանք չունէին՝ բոլոր ցեղերէն ու թագաւորներէն ու բոլոր ազգերէն, ու բոլոր լեզուներէն, ու բոլոր ժողովուրդներէն. որ իրենք առթին առջեւ ու գառնուր առջեւը կեցեր էին՝ վրանին հերմակ լա-

սպիտակս, և արմատնիս ՚ի ձեռս իւրեանց :

10 Ա.զաղակէին ՚ի ձայն մեծ՝ և ասէին . փրկութիւն այ մե_ րոյ՝ որ նստի ՚ի վերայ աթո_ ռոյն, և գառինն :

11 Եւ ամենայն հրեշտակք կային շուրջ զաթոռովն և զե_ րիցամբքն , և զչորիւք կեն_ դանեօքն , և անկանէին յերեսս առաջի աթոռոյն՝ և երկիր պագանէին այ ,

12 Ա.սելով , ամէն . օրհ_ նութիւն և փառք և իմաստու_ թիւն և գոհութիւն և պատիւ և զօրութիւն և շնորհք ան այ մերոյ՝ յաւիտեանս յաւիտենից. ամէն :

13 Եւ ասէ ցիս մի յերի_ ցանց անտի . սոքա որ զգե_ ցեալս են զհանդերձս սպիտակս՝ ո՞ք են , և կամ ուստի՞ գան :

14 Եւ ասացի ցնա . տէր՝ դո՛ւ գիտես : և ասէ ցիս . սոքա են որ գան ՚ի վշտաց մեծաց , և լուացին զարկանելիս իւր_ եանց՝ և սպիտակացուցին ար_ եամբ գառինն :

15 Վասն այնորիկ են ա_ ռաջի աթոռոյն այ՝ և պաշտեն գնա զտիւ և զգիշեր ՚ի տաճա_ րի նորա . և որ նստի ՚ի վերայ աթոռոյն՝ բնակեալ է ՚ի նո_ սա :

16 Ո՛չ քաղցեցեն , և ո՛չ ծարաւեցեն . և ո՛չ որ մեզցէ նոցա՝ ո՛չ արեգակն և ո՛չ ոևէ :

17 Եւ գառնն ՚ի միջոյ ա_ թոռոյն իւրոյ հովուեսցէ գնո_ սա , և առաջնորդեսցէ նոցա ՚ի կենդ աղբեւրս ջրոյ կեն_ դանւոյ . քանզի եհ՛ասա ած գա_ մենայն արտասր յերեսաց նոցա :

10 Որ սաստիկ ձանով կրկան_ չէին ու կրակին . փրկութիւնը մեր աստուածմէն (է՛) որ աթոռին վրա նստեր, ու գառէնուկ :

11 Ու բոլոր հրեշտակներնալ՝ ան աթոռին ու երէցներուն ու չորս կենդանիներուն քովերովը կեցեր էին , ու աթոռին առջև երեսնին վրա կիյնային՝ ու այ եր_ կրըպագութիւն կուտային ,

12 Ըսելով , ամմէն . օրհնու_ թիւն՝ ու փառք՝ ու իմաստութիւն՝ ու գոհութիւն՝ ու պատիւ՝ ու զո_ րութիւն՝ ու շնորհակալութիւն մեր անը այ՝ յաւիտեանս յաւիտենից . ամմէն :

13 Ու ան երէցներէն մէկը ին_ ծի ըսաց . ասոնք որ ձերմակ լա_ թեր են հագած , ովքեր են , ու կամ ուսկից (չոս) երկերեր :

14 Ես ալ իրեն ըսի . տէր՝ (ան) դուն գիտես : ու ինծի ըսաւ . ա_ սոնք (անոնք) են՝ որ մեծ նե_ ղութիւններէն եկան . որ իրենց վերարկուները վրըացին՝ ու գա_ ռան արուհովը ձերմըկցուցին :

15 Ա.նոր համար այ աթոռին առջևն են , ու ցորեկ ու գիշեր ա_ նոր տաճարին մէջը իրեն կրծա_ ռայեն . ու ան որ աթոռին վրա նստերէ՝ (ինքնալ) անոնց մէջեր_ նին կրբնակի :

16 (Որ իրենք՝ սուլ) ո՛չ կանո_ թենան ու ո՛չ կրծարվեն , ու մէկ բանմըրնալ անոնց գէն պիտի չը_ նէ , ո՛չ արևը ու ո՛չ տաքը :

17 Ու ան գառն ալ՝ իր կեցած աթոռին մէջէն անոնց հովիսու_ թիւն պիտի ընէ, ու իրենց առաջ_ նորդէ կենաց ախպուրի կենդանի ջրուն . ան որ՝ ած բոլոր ար_ ցունքներն իրենց իրեսէն սրբեց :

ԳԼ· Ը·

1 Եւ յորժամ երաց զննիքն եւ[1] ներորդ՝ եղև լռութիւն յերկինս՝ որպէս կէս ժամու :
2 Եւ տեսի հրեշտակս եւթն, որ առաջի այ կային· և տուաւ նոցա եւթն փող :
3 Եւ այլ հրեշտակ եկն և կաց առ սեղանն, և ունէր խնկանոց ոսկի . և տուաւ նմա խունկ բազում, զի մատուսցէ զաղօթս ամենայն սրբոց ՚ի վերայ ոսկեղէն սեղանոյ առաջի աթոռոյն :
4 Եւ ել ծուխ խնկոցն՝ աղօթք սրբոցն՝ ՚ի ձեռաց հրեշտակացն առաջի այ :
5 Եւ ետուն հրեշտակն զկըրկանոցն ՚ի հրոյ սեղանոյն, և արկ զնա յերկիր· և եղև որո[2]տումն և ձայնք և փայլատակումն և շարժումն մեծ :
6 Եւ եւթն հրեշտակքն որ ունէին եւթն փող՝ պատրաստեցին զինքեանս առ ՚ի հարկանել :
7 Եւ առաջին հրեշտակն եհար զփողն, և եղև կարկուտ և հուր՝ և արիւն խառնեալ՝ և անկաւ յերկիր, և զերրորդ մասն երկրի այրեաց, և զերրորդ մասն ծառոց այրեաց, և զամենայն դալար խոտոյ այրեաց :
8 Եւ երկրորդ հրեշտակն փողեաց, և իբրև զլեառն մի մեծ հրդեհեալ անկաւ ՚ի ծով, և եղև երրորդ մասն ծովու ա[3]րիւն :
9 Եւ սատակեցաւ երրորդ մասն լուղակաց, և որ ունէր

1 Ա[1]երրորդ ոխտներորդ կրնի[2]քը բացաւ՝ կէս ժամի տեւ[3]նի չափ երկինքը լռութիւն եղաւ:
2 Ու ոխտը հրեշտակալ տեսա՝ որ այ առջևը եկեցերէին· ու անոնց ոխտը փող տրըվեցաւ :
3 Ու մէկ ուրիշ հրեշտակ[1]ըն եկաւ սեղանին դիմացը կեցաւ, որ ան՝ ոսկիէ խընկամանով ունէր· ու իրեն շատ խունկ տրըվեցաւ, որ (անով) բոլոր սրբերուն աղօթքը ան ոսկիէ սեղանին վրա մատուցանէ՝ որ աթոռին առջևն էր :
4 Ու ան խընկերուն մխրը՝ սրբերուն աղօթքով՝ հրեշտակին ձեռքով այ առջևը ելաւ :
5 Ետև ան հրեշտակը սեղանին կրակէն խընկամանին մէջը լեցուց, ու անիկա երկրի վրա թափեց . ու որոտում՝ ու ձաներ՝ ու կածկըլտուք՝ ու մեծ ժաժ եղաւ:
6 (Ան տեսը) ան ոխտը հրեշտակները որ ոխտը փող ունէին՝ իրենք ալ պատրաստըվեցան որ չալեն :
7 Ու առջի հրեշտակը փողը չալեց, ու կարկուտ եղաւ՝ ու կրակ՝ հետը արուն խառնած, ու ան երկրի վրա ինկաւ, ու երկրին երրորդ բաժինը էրեց, ու ծառերուն երրորդ բաժինը էրեց, ու բոլոր կանանչ խոտերը էրեց :
8 Ու երկրորդ հրեշտակը փողը չալեց, ու մէկ մեծ լեռ[1]ի չափ բոր[2]բոքած կրակի պէս՝ ծովը ինկաւ, ու ծովին երրորդ բաժինը արուն դարձաւ :
9 Ու (հոն) ըղձող կենդանի[1]ներուն երրորդ բաժինը սատկե[2]

շունչ կենդանի՝ ապականե-
ցաւ :

10 Եւ երրորդ հրեշտակն
փողեաց, և անկաւ յերկինց
աստղ մի մեծ՝ բորբոքեալ իբ-
րև ջահ մեծ՝ և անկաւ յեր-
րորդ մասն գետոց և աղբե-
րաց :

11 Եւ էր անուն աստեղն՝
դառնութիւն. և բազումք մե-
ռան ի դառնութենէ ջուրցն :

12 Եւ չորրորդ հրեշտակն
փողեաց, և վիրաւորեր երրորդ
մասն արեգական՝ և երրորդ
մասն լուսնի՝ և երրորդ մասն
աստեղաց. և խաւարեր երրորդ
մասն նոցա՝ և երրորդ մասն
գիշերոյ նոյնպէս :

13 Եւ տեսի՝ և լուայ ձայն
հրեշտակի թռուցելոյ ի մէջ
երկնից՝ գի ասէր ի ձայն մեծ,
վայ վայ վայ՝ որ բնակեալ են
յերկրի, յորժամ լինիցի ձայն
եռից այլ փողոց, զոր կամիցին
հրեշտակքն հարկանել :

ցաւ, ու ան ալ որ կեանքի սունչ
ունէր՝ պականած կորաւ :

10 Ու երրորդ հրեշտակը փո-
ղը չալեց, ու երկընքէն մէկ մեծ
աստղ մը ինկաւ՝ լամբարի մը պէս
բորբոքած. ու ան՝ գետերուն ու
ակռաղբիւրներուն երրորդ բաժինին
վրան ինկաւ :

11 Ու ան աստղին անունը՝
լեղվութիւն էր. ու ան ջուրերուն
լեղվութենէն շատ մարդ մեռան :

12 Ու չորրորդ հրեշտակը փո-
ղը չալեց, ու արեւին երրորդ բա-
ժինը՝ ու լուսնկային երրորդ
բաժինը գարնըվեցաւ, ու աստղե-
րուն ալ երրորդ բաժինը. ու ա-
նոնց երրորդ բաժինը որ խաւա-
րեցաւ, ալ անանկ՝ գիշերին եր-
րորդ բաժինն ալ :

13 Ու տեսա ու ձանը լսեցի՝ որ
մէկ հրեշտակմը երկընքին մէջտվը
կըթռչէր, ու բարձրը ձանով կը-
սէր. վայ վայ վայ՝ երկիրը բնա-
կողներուն՝ երբոր ան մէկալ իրեք
փողերուն ձանն որ ըլլա, որ հրեշ-
տակները ան ուզեն չալել :

Գ Լ. Թ.

1 Եւ հինգերորդ հրեշտակն
փողեաց. և տեսի գի աստղ
մի անկաւ յերկինց, և տուաւ
նմա բանալի զբոյն անդընդոց:

2 Եւ եբանէր ծուխ ի գբոյն-
որպէս գծուխ հնոցի մեծի, և
խաւարեցաւ արեգակն և օդք :

3 Եւ ի գբոյն ելանէր մա-
րախ ի յերկիր, և տուաւ նո-
ցա իշխանութիւն իբրև զկայ-
թռոցս կարձի :

4 Եւ ասացաւ նոցա գի մի
ոչնչացնեն խոտոյ երկրի, և մի ա-

1 Ու հինգերորդ հրեշտակալ
փողը չալեց. ու տեսա որ
երկընքէն մէկ աստղմը ինկաւ,
ու անդունդին գուբին բանալը
ան (հրեշտակին) արըվեցաւ :

2 (Ու երբոր բացաւ), ան գու-
բէն ինսոր մէկ մեծ փըռնէմը ա-
նանկ մուխը գուբս կուգար՝ որ
արեւն ու օդը խաւարեցաւ :

3 Ու ան գուբէն մարախ ալ
գուբս ելաւ երկրի վրա, ու անոնց
իշխանութիւն արըվեցաւ՝ կարիճի
կիճնպէս (խածելու) :

4 Ու իրենց բսվեցաւ որ երկրի
խոտերուն ղէնմը չքնեն, ու ոչ ալ

մենայն ծառոց, բայց միայն մարդոյ երկրայնոյ, որ ոչ ունիցին զնշանն ի վերայ ճակատու իւրեանց :

5 Եւ տուաւ նոցա հրաման՝ զի մի սպանանիցեն զնոսա, այլ չարչարեսցեն զնոսա ամիսս հինգ. և չարչարանք նոցա իբրև զխայթոցս կարձի՝ որ չարքանիցէ զմարդ :

6 Եւ յաւուրսն յայնոսիկ խնդրեսցեն մարդիկ զմահ՝ և մի գտցեն, և ցանկասցեն մեռանել՝ և փախիցէ ի նոցունէ մահ :

7 Եւ նմանութիւն մարախոյն՝ նմանութիւն ձիոյ պատրաստելոյ ի պատերազմ. և ի վերայ գլխոց նոցա իբրև ըստ պըսակ՝ նմանեալ ոսկւոյ. և երեսք նոցա իբրև երեսք մարդոյ:

8 Եւ հերք նոցա իբրև հերս կնոջ. և ատամունք նոցա իբրև առիւծու :

9 Եւ ունէին զրահս՝ իբրև զդրահս երկաթիկ. և ձայն թևոց նոցա՝ իբրև զձայն կառաւարաց ձիոց բազմաց՝ որ արշաւեն ի պատերազմ :

10 Եւ ունէին ապիս ըստ նըմանութեան կարձի, և խայթ ի յապին նոցա. և ունէին իշխանութիւն չարչարել զմարդիկ ամիսս հինգ :

11 Եւ ունին թագաւոր ի վերայ իւրեանց զհրեշտակն զբնոխոյց. և անուն նորա եբրայերեն՝ աբադդոն, որ կոչի ի հայ բարբառ՝ կորուստ :

12 Վայ մի ասէ, վայ մի էանց, և վայ երկու գալոց են :

13 Եւ վեցերորդ հրեշտակն հարկանէր զփողն. և լսեայ ձայն ի չորից կենդանեացն՝ որ էին առաջի սեղանոյն ոսկի,

ծառիմբ· հապա միան երկիրը և ղողանը մարդոցը՝ որ իրենց ճակատին վրա (այ) կնիքը չունին :

5 Ու իրենց հրաման եղաւ որ՝ անոնք չսպանուննին, հապա՝ հինգ ամիս տանին իրենք չարչարին. ու անոնց տրված չարչարանքը կարիճի կիճի նման (էր), որ երբոր մարդ կըկըճէ :

6 Ու անոր օրերը մարդիկ մահ պիտի խնդրին, ու (անոնք) չի գտնան. ու պիտի ուզեն բայց մահը իրենցմէ պիտի փախչի :

7 Ու անոր մարախը՝ ձիու նման էր՝ պատրաստուած ի պատերազմ եղած. ու իրենց գլխուներուն վրա թագերու պէս՝ ոսկիի նման, ու իրենց երեսները՝ մարդու երեսի պէս (էր) :

8 Ու իրենց մազերը՝ կնկան մազերու պէս, ու ակռանին՝ առիւծի պէս :

9 Ու (անոնք) զրահ ունէին՝ երկաթի զրահի պէս, ու իրենց թևերուն (շարժումին) ձայնը՝ ան շատերը կառք քաշող ձիերու ձայնին պէս՝ որ պատերազմի կրվապին:

10 Ու պոչերնին կարիճի նման էր, ու կիճայ իրենց պոչը : ու ասոնք իշխանութիւն ունէին հինգ ամիս տանին մարդոց չարչարանք տան :

11 Ու իրենց վրա թագաւոր ունէին՝ ժողովրդին հրեշտակը. որ անոր անունը՝ եբրայեցիերէն ապըլանին (կրավէր.) որ հայու խօսքով՝ կորուստ կըսի է :

12 Հանա մէկ վայը անցաւ, ու երկու վայերալ պիտի գան :

13 Ու վեցերորդ հրեշտակը փողը չալեց. ու ան չորս կենդանիներէն՝ որ այ սեղանին առջևն էին՝ լսեցի ,

14 .Օ ի ասէր ցչրեչտակն վէցերորդ՝ որ ունէր զփողն. լոյծ զչորս հրեշտակսն զկապեալս ի վերայ գետոյն եփրատայ :

15 Եւ լուծան չորս հրեշտակքն պատրաստեալք ի ժամ և յօր և յամիս և ի տարի, զի սպանցեն զերրորդ մասն մարդկան :

16 Եւ համարք հեծելոց զօրաց նոցա՝ բիւրք բիւրուց՝ և չաղարք հազարաց՝ լուայ զթիւ նոցա :

17 Եւ տեսի ձիս ի տեսլեանն, և հեծեալս ի նոսա՝ որք ունէին զրահս հրեղէնս, և յակինթս հրդեհեալս ծրծմբով. և գլուխք ձիոցն իբրև գլուխս առիւծուց, և ի բերանոյ նոցա հուր ելանէր՝ և ծուխ և ծրծումբ :

18 Եւ ի հարուածոցս յայցանէ մեռաւ երրորդ մասն մարդկան՝ ի հրոյն և ի ծխոյն և ի ծծրմբոյն, որ ելանէր ի բերանոյ նոցա .

19 .Օ ի իշխանութիւն ի բերանս է նոցա և յապիս նոցա, և ազիք նոցա նմանութիւն օձի, և ունէին գլուխք՝ որով սատակէին զանիրաւս :

20 Եւ այլք ի մարդկանէ որ ոչ մեռան ի հարուածոցս յայսցանէ, ոչ ապաշխարեցին՝ և ոչ դարձան ի գործոց ձեռաց իւրեանց, յերկրպագութենէ դիւաց և կուռց՝ յոսկեղէն և յարծաթեղէնից՝ և ի պղնձոյ և ի քարէ և ի փայտէ, որք ոչ տեսանել կարեն՝ և ոչ լսել և ոչ դնալ .

21 Եւ ոչ ապաշխարեցին ի

14 Որ ան վեցերորդ հրեշտակն՝ որ փողը ունէր, (աս) կըսէր. ան չորս հրեշտակներն որ եփրատ գետին վրա կապված են՝ իրենք արձկէ :

15 Ու ան չորս հրեշտակները՝ նալ արձկվեցան, որ կեցեր կըսպասէին՝ ան ժամին, ու օրին, ու ամսուն, ու տարիին՝ որ մարդոց երրորդ բաժինը մեռցունեն :

16 Ու անոնց (հետ եղած) հեծելոց զօրքին համրանքը՝ բիւր բիւրոց ու հազար հազարաց (ըսանանկ) լսեցի իրենց համրանքը :

17 Ու ան տեսիլքի մէջ ձիերու տեսա, ու անոնք որ վրանին հեծեր էին կրակէ զրահներ ունէին՝ ու յակինթի (նման) ծրծումբով վառվռած. ու ան ձիերուն գլուխները առիւծի գլխու պէս, ու անոնց բերնէն կրակ կելլէր, ու մուխ ու ծրծումբ :

18 Ու աս պատուհասէս մարդոց երրորդ մասը մեռաւ, ան կրակէն ու մուխէն ու ծրծումբէն՝ որ անոնց բերնէն կելլէր :

19 Ինչու որ՝ ան (ձիերուն) ուժը իրենց բերանն ու իրենց պոչերնուն վրա էր. որ անոնց պոչերնին օձու նման՝ գլխով ունէին, որ անով անիրաւները կըսատակեցընէին :

20 Ու ան մնացած (մեռցած) մարդիկն որ աս ձարկէս չմեռան՝ (անանկով) չապաշխարեցին, ու իրենց գործքերէն դեռ վերնին եղչի քաշեցին. դևերու երկրպագութիւնէ, ու ոսկիէ ու արծաթէ ու պղինձէ ու քարէ ու փայտէ շինած կուռքերէն, որ ոչ կրըսնան տեսներ՝ ու ոչ լսեր՝ ու ոչ քալեր :

21 Ու չի ապաշխարեցինալ ի-

մարդասպանութենէն՝ և ’ի պատուհասութենէ, և ’ի պատնկուածք, և ’ի գողութիւն իւրեանց :

բենց մարդասպանութիւնէն՝ ու (մեղ) դէզ տալէն՝ ու պատնկութենէ՝ ու գողութենէ :

ԳԼ· Ժ·

1 Եւ տեսի այլ հրեշտակ զօրաւոր՝ զի իջանէր յերկնից՝ և զգեցեալ էր ամպ, և ծիածան ’ի գլուխ նորա · և երեսք նորա իբրև զարեգական, և ոտք նորա որպէս սիւն հրոյ :

2 Եւ ունէր ’ի ձեռին իւրամ գրկոյգ մի բացեալ · և եդ զոտն իւր զախ ’ի վերայ ծովու, և զաջին ’ի վերայ երկրի:

3 Եւ աղաղակեաց ’ի ձայն մեծ՝ գոչեաց իբրև զառիւծ · և յորժամ աղաղակեաց՝ խօսեցան եւթն որոտմունք յիւրեանց ձայնս :

4 Եւ յորժամ խօսեցան եւթն որոտմունքն՝ կամէի գրել · և լսայ ձայն յերկինից՝ զի ասէր, կնքեա զոր խօսեցան եւթն որոտմունքն՝ և մի գրեր :

5 Եւ հրեշտակն զոր տեսի՝ որ եզ զոտն իւր ’ի վերայ ծովու՝ և զմեւսն ’ի ցամաքի, համբարձ զձեռն իւր զաջ յերկինս,

6 Եւ երդուաւ ’ի կենդանին յաւիտենից, որ հաստատեաց զերկինս՝ և որ ’ի նմա, և զերկիր և որ ’ի նմա · զի ոչ ևս կայ այլ ժամանակ :

7 Այլ յաւուրս ձայնի եւթներորդ հրեշտակին՝ յորժամ հարցէ զփողն, կատարեսցի խորհուրդն այ՝ որ աւետարանեցաւ ’ի ծառայից իւրոց մարգարէիցն :

8 Եւ ձայնն զոր լսայ յերկրենց մարգասպանութենէն՝ ու (մեղ) դէզ տալէն՝ ու պատնկութենէն՝ ու գողութենէն :

ԳԼ· Ժ·

1 Ու մէկ ուրիշ զօրեղ հրեշտակ մը տեսայ՝ որ երկնքէն կ’իջնէր, ու վրան ամպով էր պատած, ու իր գլխուն վրա ծիրանի գօտիմը ունէր, ու իրեն երեսը արեւի պէս, ու իր ոտվրաները կրակի սիւներ էին :

2 Ու իր ձեռքը մէկ բաց գրքուկ մը բռներ էր . ու իրեն աջ ոտը ծովին վրա դրաւ, ու ձախը երկրի վրա :

3 Ու սաստիկ ձայնով կանչ վրատուեց, մէկ առիւծի պէս որ կրպռոա : ու երբոր անանկ կանչ վրատուեց՝ ան ոխտը որոտմունքով իրենց ձայնովը (բան) խօսեցան :

4 Ու երբոր ոխտը որոտմունքն որ խօսեցան, ան կուգէի գրել · ու երկինքէն ձայն լսեցի որ կըսէր · գաղտուկ պահէ ան որ ոխտը որոտմունքը խօսեցան, ու մի գրեր:

5 Ու ան հրեշտակն որ տեսա · որ իր (մէկ) ոտը ծովին վրա դրաւ ու մէկալը ցամաքին վրա , անիկա իր աջ ձեռքը երկինքը վերաւ,

6 Ու երդուաւ բրաւ անոր վրա՝ որ յաւիտեան կենդանի է, ան որ երկինքը հաստատեց ու անոր մէջինները նե , ու երկիրը՝ ու անոր մէջինները նե · (բաւ՝) որ՝ ալ ուրիշ ատեն չըկա :

7 Մէյան թէ՝ ոխտներորդ հրեշտակին ձայնը հնանա օրերը՝ երբոր անիկա փողը չուէ՝ այ խորհուրդը պիտոր կատարվի , ան որ իրեն ծառա մարգարէներէն աւետիս տըրվեցաւ բլլալու :

8 Ու ան ձայն որ (ես) երկինքէն

նէից՝ զարձեալ խօսեցաւ ընդ նա՝ և ասէ. երթ առ զդրկոյն՝ զոր ունի հրեշտակն բացեալ ի ձեռին նորա՝ և կայ ի վերայ ծովու և ցամաքի:

9 Եւ ես երթեալ առ հրեշտակն՝ խնդրեցի ի նմանէ. և ասէ ցիս, առ զայս՝ և կեր զնա՝ զոյն, և դառնացցէ յորովայն քո. այլ ի բերան քո՝ քաղցր իբրև զմեղր:

10 Եւ առի զդրկոյն բացեալ ի հրեշտակէն՝ և կլայ զնա. և էր ի բերան իմ՝ որպէս մեղր. և յորժամ կերայ, դառնացաւ յորովայն իմ:

11 Եւ ասէ ցիս. Տասանիզ քեզ զարձեալ մարգարէանալ ի ժողովուրդս՝ և ի լեզուս և ի թագաւորս երկրի:

լսեցի, նորէն ինձ խօսեցաւ ու ըսաց, գնա՝ առ զրրբուկը առ, որ հրեշտակը իր ձեռքը՝ բաց բռնած ունի, ու ծովին ու ցամաքին վրա կեցիրէ:

9 Ես ալ հրեշտակին գացի առ իրմէն ուզեցի: անոնալ ինծի բսաց. առ ասիկա՝ ու առ կեր. որ ան՝ քու փորուդ մէջ պիտի լեղվընա, բայց բերնիդ մէջը մեղրի պէս անուշ կըլլա:

10 Ու ան բաց զրբուկը հրեշտակէն առի, ու ան կուլ տըվի. ու իմ բերնիս մէջ մեղրպէս էր, ու երբոր կերա՝ իմ փորուս մէջը լեղվըցաւ:

11 Ու ինծի ըսաց. պէտք է որ դուն նորէնալ մարգարէութիւն ընես ուրիշ ժողովրդոց՝ ու լեզու, ներուն՝ ու երկրի թագաւորնե_ րուն:

ԳԼ. ԺԱ.

1 Եւ տուաւ ինձ եղէգն նման գաւազանի. և կայր հրեշտակն՝ և ասէր ցիս. արի և չափեա զտաճարն այ և զսեղանն և զերկրպագուսն որ ի նմա:

2 Եւ զդաւիթն որ արտաքոյ տաճարին՝ թո՛ղ զնա՝ և մի՛ չափեր, զի տուեալ է զնա հեթանոսաց. և զքաղաքն սո՛ւրբ կոխեսցին ամիսս քառասուն և երկուս:

3 Եւ տա՛ց երկուց վկայից իմոց՝ և մարգարէասցին ա_ ւուրս հազար երկերիւր և վաթ_ սուն՝ զգեցեալ քուրձ:

4 Սոքա՛ են երկու ձիթե_ նիքն՝ և երկու՛ հրաւք, որ կան առաջի այ յերկրի:

1 Ու մէկ եղեգմը ինծի տըրվե_ ցաւ գաւազանիմը նման, ու հրեշտակը կեցեր՝ ու ինծի կը_ սէր. ելիր ու այ տաճարը ու սե_ ղանը չափէ, ու անոր մէջը եր_ կրպագուները ընդունէ:

2 Ու գաւիթը որ տաճարէն դուրս է՝ անիկա թո՛ղ տուր՝ ու մի՛ չափեր. ինչու որ անիկա հեթա_ նոսներուն է տըրված. որ (անոնք՝) սուրբ քաղաքը քառասուն վերկու ամիս ոտացկոխան պիտոր ընեն:

3 Ու իմ երկու վկաներուս պի_ տի (հրաման) տամ՝ որ՝ հազար երկու հարիւր ու վաթսուն օր՝ (իրենց) վրանին քուրձ հագած ա_ նանկ մարգարէութիւն ընեն:

4 Անոնք երկու ձիթենիներն են, ու երկու հրըաշտերը, որ երկրի վրա՝ այ առջևը կրկնան:

5 Եւ որք կամիցին ինձանել նոցա, չուր ելցէ ի բերանոյ նոցա՝ և կերիցէ զթշնամիս նոցա. և որք կամիցին մեզանչել նոցա՝ այսպէս սպանեալ ցին:

6 Ունին իշխանութիւն փակել զերկինս՝ զի մի տեղայցէ գաւառս մարգարէութեան նոցա. և ունին իշխանութիւն ի վերայ ջուրց՝ դարձուցանել զնա յարիւն, և հարկանել զերկիր յամ՝ չարաւածս՝ քանիցս անգամ և կամիցին:

7 Եւ յորժամ կատարեսցեն զամենայն աւուրս վկայութեան իւրեանց, յայնժամ գազանն որ ելանէ յանդնդոց՝ տացէ ընդ նոսա պատերազմ, և յաղթեսցէ նոցա և սպանցէ զնա:

8 Եւ գիւ նոցա անկեալ կայցէ ի մէջ հրապարակաց քաղաքին նոցա մեծի, որ անուանեալ կոչի ըստ հոգւոյն սոդոմ և եգիպտոս. ուր և տէրն նոցա խաչեցաւ:

9 Եւ տեսցեն զնա ամենայն ցեղք և ժողովուրդք՝ և ամենայն լեզուք և հեթանոսք. զի զի՛նոցա անկեալ կայցէ զերիս աւուրս, և ոչ տացեն թաղել ի գերեզմանս գոսկերս նոցա:

10 Եւ որ բնակեալ են յերկրի՝ ուրախ լինին և խընդան ի վերայ նոցա, մինչև ընծայս և պատարագս տան տանել միմեանց. վասն զի սոքա երկոքին մարգարէքս չարչարեսցին զբնակիչս երկրի:

11 Եւ յետ երից աւուրց և կիսոյ՝ հոգի կենդանի յայ մտցէ ի նոսա, և յարիցեն կացցեն

5 Որ անոնք որ ուզեն ասոնց գէնմը չասպրնել, անոնց բերնէն կրակ պիտի ելլայ՝ ու ան իրենց թշնամիները ուտէ. ու անոնք որ ուզեն իրենց վատմբ ընել՝ սանկ պիտի սպանուին:

6 Ասոնք իշխանութիւն ունին երկինքը գոցելու, որ իրենց մարգարէութիւնին օրերը անձրեւ չգա. ու ջրերու վրայ իշխանութիւն ունին՝ անոնք արուն դարձնելու. ու ամէն կերպ պատուհասներով երկիրը գարնելու՝ քանի կեղալ որ ուզեն:

7 Որ երբոր իրենց վկայութինին բոլոր օրերն որ ալ կրնային սին, անասունը գազանը որ անդունդէն դուրս կելլայ, անոնց հետ պատերազմ պիտի ընէ, ու անոնք եխտէ՝ ու իրենք մեռցընէ:

8 Ու անոնց մեռելնին պիտի ինկած կենան իրենց մեծ քաղքին բաց փողոցին մէջը, որ անոր անունը՝ հոգևորի պէսն՝ սոդոմ ու եգիպտոս կըսուի. ան որ հոն անոնց տէրնալ խաչվեցաւ:

9 Ու ան պիտոր տեսնին բոլոր ազգ ու ազնք ու ժողովըրդներ, ու բոլոր լեզուներն ու հեթանոսները. ինչու որ՝ անոնց մեռելը երեք օր հինկած կրկենա, ու թող չին տան որ իրենց ոսկրը մանքը գերեզմանը թաղին:

10 Ու անոնք որ երկրի վրա կըբնակին՝ ուրախութիւն ու խընդութիւն կընեն անոնց վրա. անանկ որ՝ ընծաներ ու պարգևներ միմիկու կրխաւրեն. անոր համար որ՝ աս երկու մարգարէներըս (շատ տառապանք պիտի տան երկրի վրա բնակողներուն:

11 Ու երեք ու կէս օրէն ետև՝ աստուծմէն կենդանի հոգի պիտի գա անոնց մէջը մտնա, ու ելլեն

’ի վերայ սոխց իւրեանց : և այ և երկեաղ մեծ անկաւ ’ի վը
ամենեցուն՝ որ սպանին զնո :

12 Եւ լուայ գձայն մեծ՝ որ
ասէր ցնոսա . վերացիք ելէք
աստ. և վերացան ելին յերկինս
ամպովք . և տեսին զնոսա թըշ
նամիք իւրեանց :

13 Եւ ’ի ժամուն յայնմիկ
շարժումն մեծ եղև , և տասնե
րորդ մասն քաղաքին ընկղմե
ցաւ , և մեռան ’ի շարժմանէն
արք եւթն հազար. և յետ այնո
րիկ այ մեծ եղև յամենեսեան ,
և փառս տային այ երկնաւորի :

14 Այ հաւասիկ վայն երկրորդ
էանց , և վայն երրորդ գալոց
է վաղվաղակի :

15 Եւ յորժամ եւթներորդ
հրեշտակն հարկանէր զփող,
եղև ձայն յերկինս՝ և ասէ . ե
ղեւ թագաւորութիւն ամենայն
տիեզերաց՝ ած մերոյ և յի
քոյ իւրոյ , և թագաւորեսցէ ’ի
վերայ ամենայնի յաւիտեանս
յաւիտենից :

16 Եւ քսան և չորս երի
ցունքն որ նստէին յաթոռս
իւրեանց առաջի այ , անկա
նէին ’ի վերայ երեսաց իւր
եանց՝ և երկիր պագանէին ած
այ , և ասէին :

17 Գոհանամք զքէն տէր ած
ամենակալ՝ որ էն և ես , և ա
ռեր զզօրութիւն քո մեծ , և
թագաւորեցեր :

18 Եւ հեթանոսք բարկա
ցան , և եկն բարկութիւն քո ,
և ժամանակ մեռելոց՝ զի դա
տեցին , և տաս վարձս ծա
ռայից քոց մարգարէից , և
սրբ երկիւղածաց անուան քոյ՝

ոտացնէն վրա կայնին : ու ալ այ
ու մեծ վախ էնկաւ ան ամէնուն
վրան որ ասոնք մեռցուցերէին :

12 Ու ասոնիկ ձանմը լսեցի՝
որ անոնց կըսէր . վեր վերցիք՝
ասկէց ելէք : ու վերցան ամ
պերով երկինքը ելան . ու ի
րենց թշնամիներնալ անոնք տե
սան :

13 Ու ան կէտը մեծ ժաժմը
եղաւ , ու քաղքին տասներորդ
բաժինը վար անցաւ , ու ան ժա
ժէն ոխտը հազար մարդ մեռաւ .
ու անկէ եռէ՝ ալ ամէնուն սիր
տը մեծ վախ էնկաւ , ու դէպի
երկինքը այ փառք կուտային :

14 Երանա երկրորդ վայը ան
ցաւ , ու երրորդ վայնալ պիտի
շուտով գա :

15 Ու երբոր ոխտներորդ հրե
շտակը փողը կըչալէր՝ երկինքը
ձանմը եղաւ՝ որ կըսէր . մեր տէր
ու իր յի քրի թագաւորութինը
լոլոր աշխրքքի վրա հաստատվե
ցաւ , ու ալ (ինքը) ամէնուն վրա
պիտի թագաւորէ յաւիտեանս յա
ւիտենից :

16 Ան տասնը ան քսանը չորս
երէցներրը որ իրենց աթոռը
նստերէին այ առջև , երեսներ
նուն վրա կիյնային՝ ու ած
երկրպագութին կընէին , ու կը
սէին .

17 Քեզի գոհութին կուտանք
տէր ած ամենակալ , որ (դուն) էն
(ես) , ու էս (ես) . որ ալ քու մեծ
զօրութինդ (ձեռք) առիր , ու
թագաւորեցիր :

18 Ու հեթանոսները տակնու
վրա եղան , ու քու բարկութինդ
ալ եկաւ , ու մեռելներուն տեռ
նալ (հասաւ՝) որ դատվին . որ ալ
վարձք տաս քու մարգարէ ծա
ռաներուդ , ու քու անունիդ եր

փաքունց և մեծամեծաց, և ա_
պականես զապականիչս երկրի:

19 Եւ բացաւ տաճարն այ
որ յերկինս, և երևեցաւ տա_
պանակն այ ՚ի տաճարն իւր.
և եղեն փայլատակմունք և
ձայնք և որոտմունք և շար_
ժումն, և կարկուտ մեծամեծ:

կիւղածներուն՝ զզտիկին ու մե_
ծին՝ ու որ երկիրը ապականողնե_
րը ապականես:

19 Ա՛նատենը՝ երկինքը այ տա_
ճարը բացվեցաւ, ու այ տապա_
նակը իր տաճարին մէջ երևցաւ.
ու կայծկըլտուքներ եղաւ, ու ձա_
ներ, ու որոտում, ու ժաժ, ու
խոշոր խոշոր կարկուտներ:

ԳԼ. Ժ.Ե.

1 Եւ նշան մեծ երևեցաւ
յերկինս. կին մի արկեալ
զհարեւ զարեգական, և լուսին ՚ի
ներքոյ ոտից նորա. և ՚ի վե_
րայ գլխոյ նորա պսակ աստե_
ղեայ յերկոտասանից:

2 Եւ էր յղի. և ձչէր յերկ_
նէին, և բազում՝ վշտօք մերձ
էր ՚ի ծնանել:

3 Եւ երևեցաւ այլ նշան
յերկինս՝ և աչառասիկ վիշապ
մի մեծ հրեղէն. որոյ էին գը_
լուխք եւթն՝ և եղջիւրք տասն,
և ՚ի վերայ գլխոյ նորա եւթն
խոյրք:

4 Եւ տուան նորա քարշէր
զերրորդ մասն աստեղաց յերկ_
նից, և արկ զնոսա յերկիր. և
վիշապն կայր առաջի կնոջն՝
որ չանդերձեալ էր ծնանել,
զի յորժամ ծնցի կինն զորդի
իւր՝ կլցէ զնա վիշապն:

5 Եւ ծնաւ կինն արու՝ որ
չանդերձեալ է հովուել զա_
մենայն հեթանոսս գաւազանաւ
երկաթեաւ. և յափշտակեցաւ
որդի նորա առ ած՝ և առ ա_
թոռ նորա:

6 Եւ կինն փախեաւ յանա_
պատ՝ ուր էր տեղի նմա պատ_
բաստեալ յայ, զի կերակրեսցի

1 Ու մեծ նշանաւոր բանմը
երկինքը երևցաւ, (որ) մէկ
կնիկմը արևը իր վրքայովը ա_
ւած, ու լուսընկան իր ոտացը
տակ, ու իր գլխուն վրայալ տաս_
վերկու աստղերով մէկ թագմը:

2 Ու ինքը ծոցովը էր. ու տը_
ղաբերքով կրծրշվըռատաբ, ու
շատ նեղութինով ծնելու վրայ էր:

3 Ու երկինքը մէկ ուրիշ ցու_
ցանքաւոր բանմըն ալ երևցաւ,
որ մէկ մեծ վիշապմը կրակ
կտրած, որ ոխտը գլուխ ունէը ու
տասը եխտուր, ու գլխըներուն
վրա ոխտը սաղաւարտ:

4 Ու իրեն պոչը երկրինքի
աստղերուն երրորդ բաժինը (հե_
տը) կըքաշէր, ու անոնք երկրի
վրա ձգեց: ու աս վիշապը ան
կնկանն որ ծնելու վրա էր՝ առ_
ջևը կեցեր էր, որ երբոր կընիկը
իր որդին ծընի՝ վիշապը անիկա
կուլ տա:

5 Ու կնիկնալ արու (զաւակ_
մը) ծնեցաւ, որ անիկա՝ երկրիս
գաւազանով բոլոր հեթանոսնե_
րուն հովվելուին պիտի ընէր:
ու ան իր որդին՝ այ քով ու իր
աթոռին քովը յափշտակվեցաւ:

6 Ու կնիկը մէկ անապատմը
փախաւ, որ ած ան տեղը անոր
պատրաստեր էր, որ հոն՝ հա_

անդ աւուրս հազար երկերիւր և վեցասուն :

7 Եւ եղև պատերազմ յերկինս , Միքայէլ և հրեշտակք իւր կռուէին ընդ վիշապին . և վիշապն պատերազմէր զօրօք իւրովք :

8 Եւ ոչ կարացին կալ ընդդէմ, և տեղի ոչ գտաւ նոցա յերկինս :

9 Եւ անկաւ վիշապն մեծ՝ օձն առաջին , որ անուանեալ կոչի բժեզգեբուղ և սատանայ, որ մոլորեցուցանէ զամենայն տիեզերս երկրի . և հրեշտակք նորա ընդ նմա անկան :

10 Եւ լուայ ձայն մեծ յերկնից՝ որ ասէր . արդ եղև զօրութիւն և փրկութիւն և արքայութիւն այ մերոյ, և իշխանութիւն օծելոյ նորա . զի անկաւ չարախօսն եղբարց մերոց , որ չարախօսէր զնոցանէ առաջի այ՝ գիւր և գիշեր :

11 Եւ նոքա յաղթեցին նմա արեամբ գառինն , և բանիւ վկայութեան նորա . և ոչ յաձեցան ընդ վիշապն մինչև ի մահ :

12 Վասն այսորիկ ուրախ լիցին երկինք՝ և ամենայն որ բնակեալ են ի նմա : վայ երկրի և ծովու , զի անկաւ բանսարկուն առ ձեզ , որ ունի պսատումն բազում՝ և կացցէ առ սակաւ ժամանակս :

13 Եւ յորժամ ետես վիշապն թէ անկաւ յերկիր , զՆետ եղև կնոջն որ ծնաւ զմանուկն արու :

14 Եւ տուաւ կնոջն երկու թեւք արծուոյ մեծի՝ զի թռիցէ յանապատ ի տեղի իւր . ուր սնանի աւուրս և ժամս և կէս , յերեսաց օձին :

15 Եւ արձակեաց օձն յետ կնոջն զջուր իբրև զգետ , զի զնա ջրհեղեղաւ արասցէ :

16 Եւ օգնական եղև երկրին կնոջն , և բացաւ երկիր զբերան իւր , և կլանեաց զգետն զոր արձակեաց վիշապն յերանաց իւրոց :

17 Եւ բարկացաւ վիշապն ընդ կնոջն , և գնաց պատերազմել ընդ մնացեալսն ի սերունդ նորա , որ պահեն զպատուիրանս աստուծոյ և ունին զվկայութիւն Յիսուսի :

18 Եւ կայր ի վերայ աւազոյ ծովուն :

ՀԱՏՈՒԱԾ ԺԳ

1 Եւ տեսի զգազանն ելանել յերկնից , որ ունէր զեօթն գլուխս և տասն եղջիւրս , և ի վերայ եղջերացն տասն պսակք , և ի վերայ գլխոցն անուն հայհոյութեան :

2 Եւ գազանն զոր տեսի նման էր ընձառիւծի , և ոտք նորա իբրև զոտս արջոյ , և բերան նորա իբրև զբերան առիւծու . և տուաւ նմա վիշապն զզօրութիւն իւր և զաթոռ իւր և զիշխանութիւն մեծ :

3 Եւ մի ի գլխոցն նորա իբրև սրով մահացու վիրաւորեալ , և վէրք մահու նորա բժշկեցան . և զարմացաւ ամենայն երկիր զկնի գազանին :

4 Եւ երկրպագեցին վիշապին զի ետ զիշխանութիւն գազանին , և երկրպագեցին գազանին՝ և ասեն . Ո՞վ նման է գազանիս , և ո՞վ կարէ պատերազմել ընդ նմա :

5 Եւ ետուն նմա բերան խօսելոյ զհպարտութիւն և զհայհոյութիւն , և ետուն նմա զիշխանութիւն առնել զամիս քառասուն և երկու :

6 Եւ բացաւ զբերան իւր ի հայհոյութիւն առ Աստուած , հայհոյել զանուն նորա և զխորանն նորա , և զամենեսեան որ բնակեալ են յերկինս :

7 Եւ ետուն նմա զիշխանութիւն ընդ սուրբսն պատերազմել և յաղթել նոցա , և ետուն նմա զիշխանութիւն ի վերայ ամենայն ազգի և ժողովրդոց և լեզուաց և հեթանոսաց :

8 Եւ երկրպագեսցեն նմա ամենեքին որ բնակեալ են ի վերայ երկրի , որոց ոչ գրեալ է անուն նոցա յգիրս կենդանութեան գառինն որ սպանեալ է յաշխարհի :

9 Եթէ ոք ունի ականջս լուանել , լուիցէ :

10 Եթէ ոք ի գերութիւն , ի գերութիւն երթիցէ . եթէ ոք սրով սպանանիցէ , սրով սպանցի . ասդ է համբերութիւն և հաւատք սրբոցն :

11 Եւ տեսի զայլ գազան ելանել յերկրէ , և էին նմա եղջիւրք երկու իբրև զեղջիւրս գառինն , և խօսէր իբրև զվիշապն :

12 Եւ զամենայն զիշխանութիւն առաջնոյ գազանին առնէր առաջի նորա , և արկանէր զերկիր և զբնակիչս նորա երկրպագել առաջնոյ գազանին , որոյ բժշկեցաւ վէրքն մահու :

13 Եւ առնէր նշանս մեծամեծս , մինչև զհուր իջուցանել յերկնից յերկիր առաջի մարդկան :

14 Եւ մոլորեցուցանէր զբնակիչս երկրի վասն նշանացն զոր տուեալ էր նմա առնել առաջի գազանին , ասելով ընդ բնակիչս երկրի՝ որ արասցեն պատկեր գազանին , որ ունի զվէրսն սրոյ և կեցաւ :

15 Եւ տուաւ նմա հոգի տալ պատկերին գազանին , և խօսեսցի պատկերն գազանին , և արասցէ զի որ ոչ երկրպագեսցեն պատկերին գազանին՝ սպանցին :

16 Եւ արասցէ զամենեսեան զփոքունս և զմեծամեծս , զհարուստս և զաղքատս , զազատս և զծառայս , զի տացեն նոցա դրոշմ ի ձեռն իւրեանց կամ ի ճակատս իւրեանց :

17 Եւ զի մի ոք կարասցէ գնել կամ ծախել , եթէ ոչ ունիցի զդրոշմն , զանուն գազանին կամ զթիւ անուանն նորա :

18 Ասդ է իմաստութիւն . որ ունի միտս , հաշուեսցէ զթիւ գազանին . զի թիւ մարդոյ է , և թիւ նորա վեց հարիւր վաթսուն և վեց :

ՀԱՏՈՒԱԾ ԺԴ

1 Եւ տեսի , և ահա գառինն կայր ի վերայ լերինն Սիովնի , և ընդ նմա հարիւր քառասուն և չորք հազարք , որ ունէին զանուն հաւր նորա գրեալ ի ճակատս իւրեանց :

2 Եւ լուայ ձայն յերկնից իբրև զձայն ջուրց բազմաց , և իբրև զձայն որոտման մեծի . և ձայն զոր լուայ իբրև զձայն քնարահարաց քնարս իւրեանց հարանելոց :

3 Եւ երգէին իբրև զերգ նոր առաջի աթոռոյն և առաջի չորից կենդանեացն և երից ծերոցն . և ոչ ոք կարէր ուսանել զերգն , բայց հարիւր քառասուն և չորք հազարքն , որ գնեալ էին յերկրէ :

4 Սոքա են որ ընդ կանայս ոչ պղծեցան , զի կուսանք են . սոքա են որ հետևին գառնոյն ուր և երթայ . սոքա գնեալ են յերկրէ իբրև անդրանիկք Աստուծոյ և գառնոյ :

5 Եւ ի բերանս նոցա ոչ գտաւ նենգութիւն , զի անարատք են առաջի աթոռոյն Աստուծոյ :

6 Եւ տեսի զայլ հրեշտակ թռչեալ ի միջնորդս երկնից , որ ունէր զաւետարանն յաւիտենից աւետարանել ընդ բնակիչս երկրի և ընդ ամենայն ազգի և ցեղի և լեզուի և ժողովրդոց :

7 Եւ ասէր մեծաձայն . Երկնչեցարուք զԱստուծոյ և տուք նմա փառս , զի եկն ժամ դատաստանի նորա . և երկրպագեցարուք նմա որ արար զերկինս և զերկիր և զծով և զաղբերս ջուրց :

8 Եւ զայլ հրեշտակ երկրորդ հետևեցաւ՝ ասելով . Անկաւ անկաւ Բաբելոն քաղաքն մեծ , որ ի գինւոյ բարկութեան պոռնկութեան իւրոյ ըմպեցոյց ամենայն ազգս :

9 Եւ զայլ հրեշտակ երրորդ հետևեցաւ նոցա՝ ասելով մեծաձայն . Եթէ ոք երկրպագեսցէ գազանին և պատկերին նորա , և առցէ դրոշմ ի ճակատ իւր կամ ի ձեռն իւր ,

10 Եւ նա արբցէ ի գինւոյ բարկութեան Աստուծոյ , որ խառնեալ է անպատուական ի բաժակի բարկութեան նորա , և տանջեսցի հրով և ծծումբով առաջի հրեշտակացն սրբոց և առաջի գառնոյն :

11 Եւ ծուխ տանջանաց նոցա ելանէ յաւիտեանս յաւիտենից . և ոչ հանգիստ ունին ցերեկ և գիշեր երկրպագուք գազանին և պատկերին նորա , և որ առցէ զդրոշմն անուան նորա :

12 Ասդ է համբերութիւն սրբոցն , որ պահեն զպատուիրանս Աստուծոյ և զհաւատս Յիսուսի :

13 Եւ լուայ ձայն յերկնից ասելոյ ինձ . Գրեա . երանի մեռելոց որ ի Տէր մեռանին յայսմհետէ . այո ասէ հոգին , զի հանգիցին ի վաստակոց իւրեանց , և գործք նոցա հետևեսցին նոցա :

14 Եւ տեսի , և ահա ամպ սպիտակ , և ի վերայ ամպոյն նստեալ էր որ նման էր որդւոյ մարդոյ , որ ունէր ի գլուխ իւր պսակ ոսկի , և ի ձեռին իւրում մանգաղ սուր :

15 Եւ զայլ հրեշտակ ելանէր յաւազանէ , որ ունէր զիշխանութիւն ի վերայ հրոյ , և կոչեաց մեծաձայն զոր ունէր մանգաղն սուր՝ ասելով . Արձակ զմանգաղդ քո և հնձեա , զի եկն ժամ հնձելոյ քոյ , զի հասին հունձք երկրի :

16 Եւ արձակեաց որ նստէր ի վերայ ամպոյն զմանգաղն իւր ի վերայ երկրի , և հնձեցաւ երկիր :

17 Եւ զայլ հրեշտակ ելանէր յաւազանէ որ ի տանն Աստուծոյ , որ ունէր և նա մանգաղ սուր :

18 Եւ զայլ հրեշտակ ելանէր յաւազանէ , որ ունէր զիշխանութիւն ի վերայ հրոյ , և կոչեաց մեծաձայն զոր ունէր մանգաղն սուր՝ ասելով . Արձակ զմանգաղդ քո սուր , և հաւաքեա զողկոյզս որթոյ երկրի , զի հասին խաղողք նորա :

19 Եւ արձակեաց հրեշտակն զմանգաղն իւր ի վերայ երկրի , և հաւաքեաց զողկոյզս որթոյ երկրի , և ձգեաց ի հոսանս բարկութեան Աստուծոյ մեծի :

20 Եւ կոխեցաւ հոսանքն արտաքոյ քաղաքին , և ելանէր արիւն ի հոսանացն մինչև ի սանձս ձիոց , ի հազար և վեց հարիւր ասպարէզս :

ՀԱՏՈՒԱԾ ԺԵ

1 Եւ տեսի զայլ նշան յերկինս մեծ և հրաշալի , զեօթն հրեշտակս որ ունէին զեօթն պատուհասս վերջինս , զի նոքա վերջացուցանեն զբարկութիւն Աստուծոյ :

2 Եւ տեսի իբրև զծով ապակի խառնեալ հրով , և զյաղթողսն գազանին և զպատկերին նորա և զթիւ անուանն նորա կայեալ ի ծովեզերս ապակեայ , որ ունէին զսաղմոսս Աստուծոյ :

3 Եւ երգէին զերգ Մովսիսի ծառայի Աստուծոյ և զերգ գառնոյն՝ ասելով . Մեծ և հրաշալի են գործք քո Տէր Աստուած ամենակալ , արդար և ճշմարիտ են ճանապարհք քո թագաւոր ազգաց :

4 Ո՞վ ոչ երկնչիցի զքէն Տէր , և փառաւորիցէ զանուն քո , զի միայն դու սուրբ ես . զի ամենայն ազգք եկեսցեն և երկրպագեսցեն առաջի քո , զի յայտնեցան դատաստանք քո :

5 Եւ յետ այսորիկ տեսի , և ահա բացաւ տաճարն խորանին վկայութեան յերկինս :

6 Եւ ելին յտաճարէն զեօթն հրեշտակքն որ ունէին զեօթն պատուհասսն , հագեալ սպիտակ և պայծառ , և պատեալ ի վերայ կրծից ոսկի :

7 Եւ մի ի չորից կենդանեացն ետ զեօթն հրեշտակսն զեօթն ոսկի բաժակս լի բարկութեամբ Աստուծոյ որ կենդանի է յաւիտենից յաւիտեանս :

8 Եւ լցաւ տաճարն ծխով յփառաց Աստուծոյ և յզօրութենէ նորա , և ոչ ոք կարէր մտանել ի տաճարն մինչև կատարեսցին զեօթն պատուհասքն զեօթն հրեշտակացն :

ՀԱՏՈՒԱԾ ԺԶ

1 Եւ լուայ ձայն մեծ յտաճարէն ասելոյ զեօթն հրեշտակացն . Երթայք և արկէք զեօթն բաժակս բարկութեան Աստուծոյ յերկիր :

2 Եւ գնաց առաջին և արկ զբաժակ իւր յերկիր , և եղև խոց չար և ցաւագին ի մարդիկն որ ունէին զդրոշմն գազանին և որ երկրպագանէին պատկերի նորա :

3 Եւ երկրորդ հրեշտակ արկ զբաժակ իւր ի ծով , և եղև արիւն իբրև ի մեռելոյ , և ամենայն հոգի կենդանի մեռաւ յամենայնի որ էին ի ծովուն :

4 Եւ երրորդ հրեշտակ արկ զբաժակ իւր յաղբերս ջուրց և յաղբիւրս , և եղև արիւն :

5 Եւ լուայ հրեշտակին ասելոյ . Արդար ես դու Տէր որ ես և որ էիր , սուրբ , զի այսպէս դատեցեր :

6 Զի զարիւն սրբոց և մարգարէից թափեցին , և արիւն տուեր նոցա ըմպել . արժանի են :

7 Եւ լուայ զայլոցն ասելոյ . Այո Տէր Աստուած ամենակալ , ճշմարիտ և արդար են դատաստանք քո :

8 Եւ չորրորդ հրեշտակ արկ զբաժակ իւր ի վերայ արեգական , և ետ նմա տանջել զմարդիկ հրով :

9 Եւ տանջեցան մարդիկ տանջանաւք մեծաւք , և հայհոյեցին զանուն Աստուծոյ որ ունի զիշխանութիւն ի վերայ պատուհասացս այսոցիկ , և ոչ ապաշխարեցին տալ նմա զփառս :

10 Եւ հինգերորդ հրեշտակ արկ զբաժակ իւր ի վերայ աթոռոյ գազանին , և եղև խաւար ի թագաւորութեան նորա , և կրծէին զլեզուս իւրեանց ի տանջանաց :

11 Եւ հայհոյեցին զԱստուած երկնից ի տանջանաց իւրեանց և ի խոցոց իւրեանց , և ոչ ապաշխարեցին ի գործոց իւրեանց :

12 Եւ վեցերորդ հրեշտակ արկ զբաժակ իւր ի գետն մեծ Եփրատ , և ցամաքեցաւ ջուր նորա , զի պատրաստեսցի ճանապարհ թագաւորացն արեւելից :

13 Եւ տեսի յերանաց վիշապին և յերանաց գազանին և յերանաց սուտ մարգարէին երիս հոգիս պիղծս իբրև զդատարկս գորտանց :

14 Զի են հոգիք դիւաց առնելոց նշանս , որ երթան առ թագաւորս երկրի և ամենայն տիեզերաց , ժողովել զնոսա ի պատերազմ յաւուր մեծի Աստուծոյ ամենակալի :

15 Ահա գամ իբրև զգող . երանի որ արթուն կայցէ և պահեսցէ զհանդերձս իւր , զի մերկ ոչ գնասցէ , և ոչ տեսցեն զամօթ նորա :

16 Եւ ժողովեաց զնոսա ի տեղի որ կոչի եբրայերէն Մեգեդոն :

17 Եւ եօթներորդ հրեշտակ արկ զբաժակ իւր ի վերայ օդոյն , և ելանէր ձայն մեծ յտաճարէն յերկնից յաթոռոյ , որ ասէր . Եղև :

18 Եւ եղեն հանդիսք և որոտմունք և կայծակունք , և եղև երկրաշարժ մեծ , որպիսի ոչ եղև յորմէ ժամանակէ ի մարդ եղև յերկրի , այնպիսի երկրաշարժ այնքան մեծ :

19 Եւ եղև քաղաքն մեծ ի երիս մասունս , և քաղաքք հեթանոսաց անկան . և Բաբելոն մեծ յիշեցաւ առաջի Աստուծոյ , տալ նմա զբաժակ գինւոյ բարկութեան սրտմտութեան նորա :

20 Եւ ամենայն կղզի փախեան , և լերինք ոչ գտան :

21 Եւ կարկուտ մեծ իբրև զտաղանդ ի վերայ մարդկան իջանէր յերկնից , և հայհոյեցին մարդիկ զԱստուած ի պատուհասէ կարկտին , զի մեծ է պատուհասն նորա յոյժ :

ՀԱՏՈՒԱԾ ԺԷ

1 Եւ եկն մի ի զեօթն հրեշտակացն որ ունէին զեօթն բաժակսն , և խօսեցաւ ընդ իս՝ ասելով . Եկ , ցուցից քեզ զդատաստան պոռնկին մեծի որ նստի ի վերայ ջուրց բազմաց :

2 Որում պոռնկացան թագաւորք երկրի , և արբուցին ի գինւոյ պոռնկութեան նորա բնակիչք երկրի :

3 Եւ տարաւ զիս ի հոգի յանապատ . և տեսի կին մի նստեալ ի վերայ գազանի կարմրի , լի անուամբ հայհոյութեան , որ ունէր զեօթն գլուխս և տասն եղջիւրս :

4 Եւ կինն զգեցեալ էր ծիրանի և կարմրի , և ոսկով և պատուականաւ քարամբ և մարգարտիւք , ունելով ի ձեռին իւրում բաժակ ոսկի լի պղծութեամբ և անմաքրութեամբ պոռնկութեան իւրոյ :

5 Եւ ի ճակատ նորա անուն գրեալ , խորհուրդ . Բաբելոն մեծ մայր պոռնկաց և պղծութեանց երկրի :

6 Եւ տեսի զկինն արբեալ յարենէ սրբոց և յարենէ վկայիցն Յիսուսի . և զարմացայ տեսեալ զնա զարմացմամբ մեծաւ :

7 Եւ ասէ ցիս հրեշտակն . Զի՞ զարմանաս . ես ասացից քեզ զխորհուրդ կնոջն և գազանին որ տանի զնա , որ ունի զեօթն գլուխս և տասն եղջիւրս :

8 Գազանն զոր տեսեր էր , էր և ոչ է , և ելանել է յանդնդոց , և յկորուստ երթալ է . և զարհուրեսցին բնակիչք երկրի , որոց ոչ գրեալ է անուն նոցա յգիրս կենդանութեան յաշխարհի , տեսեալ զգազանն զի էր և ոչ է , և գայ :

9 Ասդ է միտք որ ունի զիմաստութիւն . զեօթն գլուխքն զեօթն լերինք են , ուր նստի կինն ի վերայ նոցա , և զեօթն թագաւորք են :

10 Հինգ անկան , և մին է , և միւսն ոչ եկն , և յորժամ եկեսցէ սակաւ ժամանակս պարտ է կալ նմա :

11 Եւ գազանն զոր էր և ոչ է , նա և ինքն ութերորդ է , և յեօթներորդացն է , և յկորուստ երթայ :

12 Եւ տասն եղջիւրքն զոր տեսեր էր , տասն թագաւորք են , որ զթագաւորութիւն ոչ առին , այլ զիշխանութիւն իբրև զթագաւորս մի ժամ առնուն գազանին հետ :

13 Սոքա մի միտս ունին , և զզօրութիւն և զիշխանութիւն իւրեանց տան գազանին :

14 Սոքա ընդ գառնոյն պատերազմեսցին , և գառինն յաղթեսցէ նոցա , զի տէր տերանց է և թագաւոր թագաւորաց , և որ ընդ նմա են կոչեալք և ընտրեալք և հաւատարիմք :

15 Եւ ասէ ցիս . Զջուրսն զոր տեսեր , ուր նստի պոռնիկն , ազգք են և ժողովուրդք և հեթանոսք և լեզուք :

16 Եւ տասն եղջիւրքն զոր տեսեր ի գազանին , սոքա ատեսցեն զպոռնիկն , և ապականեալ արասցեն զնա և մերկ , և զմարմինս նորա կերիցեն , և զնա հրով այրեսցեն :

17 Զի Աստուած ետ ի սիրտս նոցա առնել զկամս նորա , և առնել միտս մի , և տալ զթագաւորութիւն իւրեանց գազանին , մինչև կատարեսցին բանք Աստուծոյ :

18 Եւ կինն զոր տեսեր , է քաղաքն մեծ որ ունի զթագաւորութիւն ի վերայ թագաւորաց երկրի :

ՀԱՏՈՒԱԾ ԺԸ

1 Եւ յետ այսորիկ տեսի զայլ հրեշտակ իջանէր յերկնից , որ ունէր զիշխանութիւն մեծ , և երկիր լուսաւորեցաւ ի փառաց նորա :

2 Եւ աղաղակեաց զօրութեամբ ասելով . Անկաւ անկաւ Բաբելոն մեծ , և եղև բնակարան դիւաց և բանտ ամենայն ոգւոց պղծութեան և բանտ ամենայն թռչնոց պղծութեան և ատելեաց :

3 Զի յգինւոյ բարկութեան պոռնկութեան նորա ըմպեցին ամենայն ազգք , և թագաւորք երկրի պոռնկացան ընդ նմա , և վաճառականք երկրի զօրացան ի զօրութենէ հեշտութեան նորա :

4 Եւ լուայ զայլ ձայն յերկնից ասելոյ . Ելէք ժողովուրդ իմ ի նմանէ , զի մի՛ հաղորդիցիք մեղաց նորա , և զի մի՛ ի պատուհասացն նորա ընկալցիք :

5 Զի հասին մեղք նորա մինչև յերկինս , և յիշեաց Աստուած զանիրաւութիւնս նորա :

6 Հատուցէք նմա որպէս և նա հատոյց ձեզ , և կրկնակի կրկնակի հատուցէք ըստ գործոց նորա . յորում բաժակի խառնեաց խառնեցէք նմա կրկնակի :

7 Որչափ փառաւորեաց զանձն իւր և հեշտացաւ , այնչափ տուք նմա տանջանս և սուգ . զի ասէ ի սրտի իւրում . Նստիմ թագուհի , և այրի ոչ եմ , և սուգ ոչ տեսից :

8 Վասն այսորիկ մի՛ օրում եկեսցեն պատուհասք նորա , մահ և սուգ և սով , և հրով այրեսցի , զի զօրաւոր է Տէր Աստուած որ դատեաց զնա :

9 Եւ լացեն և սգասցեն վասն նորա թագաւորք երկրի , որ ընդ նմա պոռնկացան և զհեշտութեան կեցին , յորժամ տեսցեն զծուխ հրոյ այրման նորա :

10 Կայցեն յհեռաստանէ վասն երկիւղի տանջանաց նորա , և ասասցեն . Վա՛յ վա՛յ քաղաք մեծ Բաբելոն , քաղաք հզօր , զի մի՛ ժամու եկն դատաստան քո :

11 Եւ վաճառականք երկրի լային և սգային վասն նորա , զի զապրանս նոցա ոչ ոք գնէ յայսմհետէ :

12 Զապրանս ոսկւոյ և արծաթոյ և պատուական քարանց և մարգարտաց և բիսոսի և ծիրանեաց և մետաքսի և կարմրի , և ամենայն փայտ սեդրենի և ամենայն կահ ոսկեղէն և պղնձեղէն և երկաթեղէն և մարմարիոնեղէն ,

13 Եւ դարչին և համեմ և խունկ և միւռոն և կնդրուկ և գինի և իւղ և սեւխուր և ցորեն և անասունք և ոչխարք և ձիք և կառք և մարմինք և հոգիք մարդկան :

14 Եւ պտուղ ցանկութեանց հոգւոյ քո հեռացաւ ի քէն , և ամենայն քաղցր և պայծառ կորեան ի քէն , և ոչ գտանիցեն զնոսա յայսմհետէ :

15 Վաճառականք այսոցիկ որ հարստացան ի նմանէ , կայցեն յհեռաստանէ վասն երկիւղի տանջանաց նորա , լային և սգային ,

16 Եւ ասասցեն . Վա՛յ վա՛յ քաղաք մեծ որ զգեցեալ էր ծիրանի և կարմրի , և ոսկով և պատուականաւ քարամբ և մարգարտիւք ,

17 Զի մի՛ ժամու աւերեցաւ այսչափ հարստութիւն . և ամենայն կառավար և ամենայն որ ի նաւս գնայ , և նաւավարք և որ զծովու գործ գործեն , յհեռաստանէ կացին ,

18 Եւ աղաղակեցին տեսեալ զծուխ հրոյ այրման նորա , և ասեն . Որ նման է քաղաքիս մեծի :

19 Եւ հողս արկին ի գլուխս իւրեանց , և աղաղակեցին լալով և սգալով , և ասեն . Վա՛յ վա՛յ քաղաք մեծ , որում հարստացան ամենեքին որ ունէին զնաւս ի ծովու յմեծութենէ նորա , զի մի՛ ժամու աւերեցաւ :

20 Ուրախ լերուք վասն նորա երկինք և սուրբք և առաքեալք և մարգարէք , զի դատեաց Աստուած զդատաստան ձեր ի նմանէ :

21 Եւ հրեշտակ մի զօրաւոր վերացոյց զքար իբրև զաղացաքար մեծ , և ձգեաց ի ծովն և ասէ . Այսպէս մեծաւ ուժգնութեամբ տապալեսցի Բաբելոն քաղաք մեծ , և ոչ գտցի այլ ևս :

22 Եւ ձայն քնարահարաց և երգեցողաց և փողահարաց և շեփորահարաց ոչ լուիցի ի քէն այլ ևս , և ամենայն արհեստաւոր ամենայն արհեստի ոչ գտցի այլ ևս ի քէն , և ձայն աղաց ոչ լուիցի ի քէն այլ ևս ,

23 Եւ լոյս մոմեղինի ոչ երևեսցի ի քէն այլ ևս , և ձայն փեսայի և հարսնեաց ոչ լուիցի ի քէն այլ ևս . զի վաճառականք քո էին մեծամեծք երկրի , զի ի գինւոյ քոյ կախարդութեան մոլորեցան ամենայն ազգք :

24 Եւ ի նմա գտաւ արիւն մարգարէից և սրբոց և ամենայնի որ սպանեալ է յերկրի :

ՀԱՏՈՒԱԾ ԺԹ

1 Եւ յետ այսորիկ լուայ ձայն մեծ ամբոխի բազմութեան յերկինս ասելոյ . Ալէլուիա . փրկութիւն և փառք և զօրութիւն Աստուծոյ մերոյ է :

2 Զի ճշմարիտ և արդար են դատաստանք նորա , զի դատեաց զպոռնիկն մեծ որ ապականեաց զերկիր ի պոռնկութենէ իւրմէ , և վրէժ հատոյց նմա ի ձեռն ծառայից իւրոց :

3 Եւ երկրորդ անգամ ասացին . Ալէլուիա . և ծուխ նորա ելանէ յաւիտեանս յաւիտենից :

4 Եւ անկան քսան և չորք երէցքն և չորք կենդանիքն , և երկրպագեցին Աստուծոյ որ նստի ի վերայ աթոռոյն , ասելով . Ամէն . Ալէլուիա :

5 Եւ ձայն ելանէր յաթոռոյն ասելոյ . Օրհնեցէք զԱստուած մեր ամենայն ծառայք նորա , և որ երկնչիք ի նմանէ , փոքունք և մեծամեծք :

6 Եւ լուայ ձայն ամբոխի բազմութեան իբրև զձայն ջուրց բազմաց , և իբրև զձայն որոտման մեծի , ասելոյ . Ալէլուիա . զի թագաւորեաց Տէր Աստուած ամենակալ :

7 Ցնծասցուք և ուրախ լիցուք , և տացուք նմա փառս . զի եկն հարսնիքն գառնոյ , և կինն նորա պատրաստեաց զանձն իւր :

8 Եւ տուաւ նմա զգենուլ զծիրանի մաքուր և պայծառ . զի ծիրանին արդարութիւնք են սրբոցն :

9 Եւ ասէ ցիս . Գրեա . երանի որ ի հարսնիս գառնոյն կոչեալք են : Եւ ասէ ցիս . Սոքա ճշմարիտ բանք Աստուծոյ են :

10 Եւ անկայ առաջի ոտից նորա երկրպագել նմա . և ասէ ցիս . Տես մի՛ արասցես . ծառայ ես ընդ քեզ և ընդ եղբարս քո որ ունին զվկայութիւն Յիսուսի . զԱստուած երկրպագեա . զի վկայութիւն Յիսուսի է հոգի մարգարէութեան :

11 Եւ տեսի զերկինս բացեալ , և ահա ձի սպիտակ , և որ նստէր ի վերայ նորա կոչեցեալ հաւատարիմ և ճշմարիտ , և արդարութեամբ դատէ և պատերազմի :

12 Եւ աչք նորա իբրև զբոց հրոյ , և ի գլուխ նորա պսակք բազումք , և անուն գրեալ որ ոչ ոք գիտէ բայց ինքն :

13 Եւ զգեցեալ էր հանդերձս արեամբ շաղախեալս , և կոչեցաւ անուն նորա Բան Աստուծոյ :

14 Եւ զօրքն որ յերկինս էին հետևեցան նմա ի ձիս սպիտակս , հագեալ կտաւ մաքուր և սպիտակ և պայծառ :

15 Եւ ի բերանոյ նորա ելանէր սուր երկսայրի , զի նովաւ հարկանիցէ զհեթանոսս , և նա հովուեսցէ զնոսա գաւազանաւ երկաթի , և նա կոխեսցէ զհնձան գինւոյ բարկութեան և սրտմտութեան Աստուծոյ ամենակալի :

16 Եւ ունի ի հանդերձի և ի բազկի իւրում անուն գրեալ , Թագաւոր թագաւորաց և Տէր տերանց :

17 Եւ տեսի զհրեշտակ մի կայեալ ի վերայ արեգական , և աղաղակեաց մեծաձայն ասելով առ ամենայն թռչունս որ թռչին ի միջնորդս երկնից . Եկայք ժողովեցարուք ի ճաշ մեծի Աստուծոյ ,

18 Զի կերիցէք զմարմինս թագաւորաց և զմարմինս հազարապետաց և զմարմինս հզօրաց և զմարմինս ձիոց և հեծելազորաց , և զմարմինս ամենայն ազատաց և ծառայից , և փոքունս և մեծամեծս :

19 Եւ տեսի զգազանն և զթագաւորս երկրի և զզօրս նոցա ժողովեալ ի պատերազմ ընդ նստողին ի ձիոն և ընդ զօրին նորա :

20 Եւ բռնեցաւ գազանն և ընդ նմա սուտ մարգարէն որ արար զնշանսն առաջի նորա , որով մոլորեցոյց զամենեսեան որ ընկալան զդրոշմն գազանին և որ երկրպագեցին պատկերի նորա . կենդանի ընկղմեցան երկոքին ի հուր որ այրի ծծումբ :

21 Եւ զայլսն սպանին սրով նստողին ի ձիոն , որ ելանէր յբերանոյ նորա , և ամենայն թռչունք կշտացան ի մարմնոց նոցա :

ՀԱՏՈՒԱԾ Ի

1 Եւ տեսի հրեշտակ մի իջանէր յերկնից , որ ունէր զբանալի անդնդոյ և շղթայ մեծ ի ձեռին իւրում :

2 Եւ բռնեաց զվիշապն զօձն առաջին , որ անուանեալ կոչի բժեզգեբուղ և սատանայ , և կապեաց զնա հազար ամ :

3 Եւ ձգեաց զնա ի հոսանս անդնդոյ , և գոցեաց և կնքեաց զնա վերայ նորա , մինչև կատարեսցին հազար ամքն . և յետ այսորիկ արձակեալ լիցի սակաւ ժամանակս :

4 Եւ տեսի զաթոռս , և նստեալք ի վերայ նոցա , և դատաստան տրեալ նոցա . և զհոգիս նոցա որ սպանեալ էին վասն վկայութեան Յիսուսի և վասն բանի Աստուծոյ , և որ ոչ երկրպագեցին գազանին և պատկերի նորա , և ոչ առին դրոշմն ի ճակատս իւրեանց և ի ձեռս իւրեանց , և կեցին և թագաւորեցին ընդ Քրիստոսի հազար ամ :

5 Եւ մնացեալ մեռելոցն ոչ կեցին մինչև կատարեսցին հազար ամքն . և յետ այսորիկ յարութիւն առնուցուն :

6 Երանի և սուրբ որ ունի զբաժին ի յարութեան առաջնում . ի սոսա երկրորդ մահ ոչ գտանէ զիշխանութիւն , այլ եղիցին քահանայք Աստուծոյ և Քրիստոսի , և թագաւորեսցեն ընդ նմա հազար ամ :

7 Եւ յորժամ կատարեսցին հազար ամքն , արձակեալ լիցի սատանայ ի բանտէ իւրմէ :

8 Եւ ելցէ մոլորեցուցանել զհեթանոսսն որ ի չորս կողմանս երկրի , զԳոգ և զՄագոգ , ժողովել զնոսա ի պատերազմ , որոց թիւ իբրև զաւազ ծովու :

9 Եւ ելին ի լայնութիւն երկրի , և պատեցին զբանակ սրբոցն և զքաղաքն սիրելի . և իջին հուր յերկնից յաստուծոյ և կերաց զնոսա :

10 Եւ սատանայ որ մոլորեցուցանէր զնոսա , արկցի ի ծովակ հրոյ և ծծմբոյ , ուր և գազանն և սուտ մարգարէն , և տանջեսցին ցերեկ և գիշեր յաւիտեանս յաւիտենից :

11 Եւ տեսի զաթոռ մեծ սպիտակ , և զնստողն ի վերայ նորա , յորմէ փախեան երկիր և երկինք , և տեղի ոչ գտաւ նոցա :

12 Եւ տեսի զմեռեալսն մեծս և զփոքունս կայեալ առաջի աթոռոյն , և գրքեր բացեալք , և գիրք այլ բացեալ որ է կենդանութեան , և դատեցան մեռեալքն ի գրոց ըստ գործոց իւրեանց :

13 Եւ ետ ծովն զմեռեալսն որ ի նմա էին , և մահ և դժոխք ետուն զմեռեալսն որ ի նոսա էին , և դատեցան ամենեքին ըստ գործոց իւրեանց :

14 Եւ մահ և դժոխք արկանին ի ծովակ հրոյ . սա է մահ երկրորդ :

15 Եւ որ ոչ գտանիցի գրեալ յգիրս կենդանութեան , արկցի ի ծովակ հրոյ :

ՀԱՏՈՒԱԾ ԻԱ

1 Եւ տեսի զերկինս նոր և զերկիր նոր . զի առաջին երկինքն և առաջին երկիրն անցին , և ծովն ոչ է այլ ևս :

2 Եւ զքաղաքն սուրբ զերուսաղէմ նոր տեսի իջանէր յերկնից յԱստուծոյ , պատրաստեալ իբրև զհարս զարդարեալ առ արանս իւր :

3 Եւ լուայ ձայն մեծ յաթոռոյն ասելոյ . Ահա խորան Աստուծոյ ընդ մարդկան , և բնակեսցէ ընդ նոսա , և նոքա ժողովուրդք նորա լիցին , և ինքն Աստուած ընդ նոսա եղիցի նոցա Աստուած :

4 Եւ սրբեսցէ Աստուած զամենայն արտասուս յաչաց նոցա , և մահ ոչ եղիցի այլ ևս , և ոչ սուգ և ոչ աղաղակ և ոչ ցաւ եղիցի այլ ևս , զի առաջինքն անցին :

5 Եւ ասէ նստողն ի վերայ աթոռոյն . Ահա նոր ստեղծանեմ զամենայն . և ասէ ցիս . Գրեա . զի ճշմարիտ և հաւատարիմ են բանք սոքա :

6 Եւ ասէ ցիս . Եղև . ես եմ Ա և Օ , սկիզբն և վախճան . ես ծարաւեցելոյն տացեմ աղբերէ ջուր կենդանի ընդ ձրի :

7 Որ յաղթէ ժառանգեսցէ զամենայն , և ես եղէց նմա Աստուած , և նա եղիցի ինձ որդի :

8 Բայց երկչոտաց և անհաւատից և պղծելոց և մարդասպանաց և պոռնկաց և գաղտնագործաց և կռապաշտաց և ամենայն սուտ երկրպագողաց , բաժին նոցա լիցի ի լճի հրոյ և ծծմբոյ , որ է մահ երկրորդ :

9 Եւ եկն մի ի զեօթն հրեշտակացն որ ունէին զեօթն բաժակսն լի զեօթն պատուհասօքն վերջինսն , և խօսեցաւ ընդ իս՝ ասելով . Եկ , ցուցից քեզ զկինն զկին Գառնոյն :

10 Եւ տարաւ զիս ի հոգի յանապատ . և տեսի զքաղաքն սուրբ զերուսաղէմ իջանէր յերկնից յԱստուծոյ ,

11 Ունելով զփառս Աստուծոյ . և լոյս նորա նման քարոյ թանկագնի , իբրև զքար յասպեայ բիւրեղանման ,

12 Եւ պարիսպ մեծ և բարձր , ունելով դ

կերակրէր անդ՝ ժամանակ և ժամանակս և կէս ժամանակի՝ յերեսաց օձին :

15 Եւ եհեղ օձն ՚ի բերանոյ իւրմէ զհետ կնոջն ջուր՝ զի ընկղմեսցէ զնա :

16 Եւ օգնեաց երկիր կնոջն, և եբաց երկիր զբերան իւր և եկուլ զջուրն՝ զոր եհեղ վիշապն ՚ի բերանոյ իւրմէ :

17 Եւ ցասեաւ վիշապն ընդ կնոջն, և գնաց պատերազմել ընդ այլ զաւակս նորա՝ որք պահէին զպատուիրանս այ, և ունէին զվկայութիւնն յի :

18 Եւ կայ ՚ի վերոյ աւազոյ ծովու .

անապատն իր տեղը երթայ· որ ալ հոն կրկերակրըվէր՝ տասնմը, ու տասներեք, ու տասնի կէսը :

15 Ու օձնալ իր բերնէն ջուր դուրս տրվաւ կնկանը հետևէն՝ որ անիկա ջրով խըլխակ :

16 Երկիրնալ ան կնակը օգնութիւն չտասւ, որ ինքը երկիրը իր բերանը բացաւ՝ ու կըլլեց ան ջուրն որ վիշապը իր բերնէն դուրս վաղցուց :

17 Ան տասնը վիշապնալ կնկանը զէմ կատղեցաւ՝ ու գնաց պատերազմ ընելու անոր ուրիշ զաւակներուն հետը՝ որ այ պատվիրանքները կըպահէին, ու յի վկայութիւնը ունէին :

18 Ու ծովին (եզերքը) աւազին վրան կեցաւ :

ԳԼ· ԺԴ·

1 Եւ տեսի զի ելանէր ՚ի ծովէն գազան, և ունէր զբ- լուխս եւթն՝ և եղջիւրս տասն, և ՚ի վերոյ եղջերաց նորա տասն խայր, և ՚ի վերոյ գլխոյ նորա անուն հայհոյութեան :

2 Եւ գազանն զոր տեսի՝ նման ընծու, և ոտք նորա իբ- րև զարջու, և բերան նորա որպէս գաւիւծու. և ետ նմա վիշապն զզօրութիւն իւր՝ և զաթոռ իւր՝ և զիշխանութիւն մեծ :

3 Եւ մի ՚ի գլխոց նորա վիրաւորեալ էր ՚ի մահ· և վէրք մահուան նորա ողջացայր : և զարմացաւ ամենայն երկիրը ընդ գազանն, զի ետ նմա վիշապն զթագաւորութիւն իւր :

4 Եւ երկիր պագին վիշապին՝ որ ետ զիշխանութիւնն

1 Ու տեսա որ՝ ծովէն մէկ գազանմը կելլեր, ու (ան՚) ութը գլուխ ունէր, ու տասը եղջիւր· ու իրեն եղջիւրներուն վրայ ալ տասը սաղաւարտ· ու անոր գլուխն վրա հայհոյութեան անուն (գրված էր) :

2 Ու ան գազանն որ տեսա՝ ընծու կըլլմանէր, ու իր ոտները արջու պէս, ու իրեն բերանը առիւծի պէս· ու վիշապը իր ուժը անոր տրվաւ, ու իրեն աթոռը՝ ու մեծ իշխանութիւնը :

3 Ու անոր գլխներուն մէկը մեռնելու մօտ խոցված էր, ու իր մեռնելու մօտ խոցը բռընտնալու վրայ էր· ու բոլոր երկիրը՝ գազանին (եղածին) վրա կարմրընայինՙ որ վիշապը իր թագաւորութիւնը անոր տրվաւ :

4 Ու վիշապին երկրպագութիւն

զապտնին, և ասէին. ով իցէ նման գազանիս, կամ ով կա- րիցէ պատերազմել ընդ դա :

5 Եւ տուաւ նմա բերան խօսել զիծամիծս, և զհայ- հոյութիւն. և տուաւ նմա իշ- խանութիւն զամիսս քառա- սուն և երկու :

6 Եւ եբաց զբերան իւր հայհոյութեամբ առ Ած, և հայհոյեաց զանուն նորա՝ և զխորանն նորա, և զերկնային խորանն.

7 Եւ տուաւ նմա իշխանու- թիւն ՚ի վերայ ամենայն ազ- գաց և լեզուաց և ժողովրդոց.

8 Ո՛ւ երկրպագեսցեն նմա ամենայն որ բնակեալ են ընդ երեսս երկրի. որոց ոչ են գր- եալ անուանք նոցա ՚ի գրա- րութիւն կենաց գառինն զեն- ցյ՝ իսկզբանէ աշխարհի :

9 Ո՛յք ունին ականջս լե- ցյ՝ լուիցեն :

10 Ո՛վ ի են ումանք՝ որք ՚ի գերութեան վարեսցին, և են ումանք՝ որ որով մեռցին, և են ումանք՝ որ անձամբ զանձինս սպանանեն : ասա է համբե- րութիւն և հաւատ սրբոց :

11 Եւ տեսի այլ գազան զի ելանէր յերկրէ, և ունէր եղ- ջիւրս երկու՝ նման գառինն, և խօսէր իբրև զվիշապն :

12 Եւ զիշխանութիւն գա- զանին առաջնոյ գործէր առաջի նորա. և առ- նէր զերկիրը և զամենայն բնա- կիչս նորա՝ զերկիր պագանի- ցեն գազանին առաջնոյ՝ մինչև ողջասցի վէր մահու նորա :

13 Եւ առնէր նշանս բա- զանին տրվաւ, ու կրսէին. ով բլյա նման աս գազանիս, կամ թէ՝ ալ ով աստր զէմը կրընա պա- տերազմ ելլել :

5 Ու իրեն անանկ բերանմը տրըվեցաւ՝ որ խոշոր խոշոր խօսի՝ ու հայհոյանք ընէ. ու քառասուն վերկու ամիս ատեն իրեն իշխա- նութիւն տրըվեցաւ :

6 Ու իր բերանը բացաւ ոյ զէմ հայհոյանք ընելու, ու ա- նոր անունը հայհոյրեց՝ ու անոր խորանը, ու երկինքը եղած խո- րանին (ժէ՛ննեներնալ) :

7 Ու իրեն իշխանութիւն տրը- վեցաւ բոլոր ազգերուն ու լեզու- ներուն ու ժողովըրդներուն վրա.

8 Ո՛ր ամէնքն որ երկրի երե- սը կըբնակին՝ իրեն երկրպագու- թիւն ընեն. անոնք որ իրենց ա- նուններն աշխըրքի ըսկիսբէն չե- ւէ՝ մորթըված գառանը կենաց դրքին մէջը գրըված չէ :

9 Ո՛նոնք որ լսելու անկաճ ու- նին նէ՝ թող լսեն :

10 Ո՛ր (անոնցմէ) ումանք կըը- լան որ գերութիւնի կըբըշվին, ո- ւմանքալ կըլլան՝ որ թրբի տակ կըմեռնին, ու ումանք ալ կըլլան՝ որ ինքիր անձերնին կըսպաննեն: աս բանիս մէջն է սրբերուն համ- բերութիւնը ու հաւատքը :

11 Ու ես ուրիշ գազանմը- նալ տեսա՝ որ երկիրէն կելլեր, ու գառան նման երկու եղջեր ունէր, ու վիշապին պէս կրըսօսէր:

12 Ու առջի գազանին բոլոր իշխանութիւնները՝ անոր զէմացը կրըտանեցընէր. ու անանկ կրընէր որ՝ երկիրը ու անոր բոլոր բնա- կողները առջի գազանին երկրը- պագութիւն ընեն, ինչվան որ ա- նոր մեռնելու խոցը բըժնաւա :

13 Ու շատալ նշանաւոր բա-

զումս, և տայր հրոյ լիջանել յերկինից յերկիր՝ առաջի մարդկան :

14 Եւ մոլորեցուցանէր զորս բնակեալ են յերկիր՝ նշանօքն, որ տուեալ են ի ձեռս նորա՝ առնել առաջի գազանին : ասէն ցնա բնակիչսն երկրի · առ նա զպատկեր գազանին, որ ի վերայ սրոյն եկեաց :

15 Եւ տուաւ նմա իշխանութիւն, զի տացէ հոգի պատկերի գազանին, և զի խօսեսցի պատկերն, և երկիր պագցեն նմա ամենայն բնակիչք երկրի· և որ ոչ պագցէ երկիր պատկերի գազանին, սպանցէ զնա :

16 Եւ արասցէ՝ զամենայն փոքունս և զմեծամեծս և զղքաւորս և զմեծատունս և զազատս և զաղքատս և զծառայս, զի տացէ նոցա դրոշմ յաջու ձեռին՝ և ի վերայ ճակատու նոցա :

17 Եւ ոչ ոք կարասցէ գնել և վաճառել՝ եթէ ոչ ունիցի զդրոշմ զրոյն՝ և զանուն գազանին և զթիւ անուան նորա :

18 Այստ է իմաստութիւն· որ ունի միտս՝ համարեսցի զթիւ գազանին · թիւ եղեալն մարդոյ, և թիւ անուան նորա՝ է այս. վեց հարիւր վաթսուն և վեց :

ներ կընէը · անանկ ալ որ՝ մարդոց դիմաց՝ երկընքէն կրակ կիջեցնէը երկրի վրա :

14 Ու անոնցմով որ իր ձեռքը տրըվածէը գազանին առջեւը ընելու, կըմոլըրցունէը անոնք որ երկրի վրա կրընակին : երկրի բնակողներնալ իրեն ըսին՝ որ գազանին պատկերըներնալ ընէ՝ որ անոր թուրին խոցէն ողջ մնաց :

15 Ու իրեն աս ուժս ալ տրըվեցաւ՝ որ անոր գազանին պատկերքին հոգի՛ալ տա՝ որ պատկերքը խօսի· ու բոլոր երկրի բնակողներնը անոր երկրպագութիւն ընեն · ու անոր՝ որ գազանին պատկերքին երկրպագութիւն չընէնէ՝ անիկա մեռցընէ :

16 Ու որ բոլոր պզտիկ ու մեծ, ու հարուստ՝ ու աղատ՝ ու ախկատ՝ ու ծառա, անանկ ընէ որ անոնց աջ ձեռքներնուն ու իրենց ճակատներնուն վրա դրոշմ (նըշանմը դնել տա) :

17 Ու որ մէկը (բան) չի կրնա գներ ու ծախեր՝ թէ որ անի(իր) դրած դրոշմը չունենա, ու գազանին անունն՝ ու անոր անունին համրանքնալ :

18 Հոս է իմաստութիւնը · ան որ խելք ունի նէ՝ թող գազանին համրանքը համրէ · որ ան՝ մարդու (անունի) համրանք է, ու անոր անունին համրանքը հա՛ս է · վեց հարիւր վաթսունը վեց :

ԳԼ· Ժ·Դ·

1 Եւ տեսի՝ և ահա գառն կայր ի վերայ լերինն սիոնի· և ընդ նմա հարիւր քառասուն և չորս հազարք, որ ունէին զանուն նորա, և ա-

1 Ու մէյմալ տեսա որ՝ գառը սիոն լեռանը վրան կեցեր էը· ու իր հետը հարիւր քառասունը չորս հազար (հոգի), որ իրեն անունը ունէին ու իր հօրը անու-

նուն չօր նորա գրեալ ՚ի վե-
բայ ձակատուց նոցա :

2 Եւ լուայ ձայն յերկնից՝ որպէս գձայն ջուրց բազմաց՝ և ձայն որոտման մեծի, և լու-
այ իբրև գձայն քնարահա-
րաց, զի հարկանէին գքնարս իւրեանց ·

3 Եւ երգէին գերգս նորս առաջի աթոռոյն՝ և առաջի չորից կենդանեացն՝ և առաջի երիցանցն · և ոչոք կարէ գի-
տել գերգս նոցա , բայց միայն չարեւք քառասուն և չորս հա-
զարքն , որք ազատեալ են յերկրէ :

4 Այոքա են՝ որք ընդ կա-
նայս ոչ խառնակեցան , և են կուսանք · սոքա գկնի երթիան գառնին ուր և երթիցէ · սո-
քա ընտրեցան ՚ի մարդկանէ առաջի այ և գառնին :

5 Եւ ՚ի բերան նոցա ոչ գտաւ սուտ , զի անբիծք են :

6 Եւ տեսի այլ հրեշտակ թռուցեալ ՚ի մէջ երկնից , և ունէր աւետիս յաւիտենական՝ աւետարանել ամենայն ազգաց և լեզուաց՝ որ բնակեալ են յերկրի :

7 Եւ ասէր ՚ի ձայն մեծ · երկերիւղ յայ՝ և տուք փառս նմա, զի եկն ժամ դատաստա-
նի նորա · և երկիր պագէք ա-
րարչին երկնի և երկրի և ծո-
վու և աղբերաց ջուրց :

8 Եւ այլ հրեշտակ երկրորդ գայր գհետ նորա և ասէր. ան-
կաւ անկաւ բաբելոն մեծն՝ ՚ի գինւոյ արբեցութենէ՝ ՚ի ցաս-
մանէ՝ ՚ի պոռնկութենէ իւրմէ,

նը՝ իբրեւց ձակտեբերնուն վրա գրված էր :

2 Ու երկընքէն ձանմը լսեցի՝ շատ (վազուկ) ջրերու ձանի պէս, ու սաստիկ որոտումի ձանիկալ, ու քնար չալողներու ձանի պէս ալ լսեցի՝ որ իրենց քնարներին կը-
զարնէին :

3 Ու նոր կերով երգեր կեր-
գէին աթոռին առջեւը՝ ու չորս կենդանիներուն առջեւ, ու երէց-
ներուն առջեւը · ու մկը չկրա որ անոնց երգը գիտնա (երգել ,) որ միայն ան չարուր քառասունը չորս հազարը, որ երկիրէն ազատվե-
ցան :

4 Այսոնք՝ անոնք են՝ որ կընք-
ոտց չեմ չխառնվեցան , ու կուս են . ասոնք գառանը ետևէն կերթան՝ ան ուր որ երթա · ա-
սոնք մարդոց միջէն ընտրվե-
ցան՝ այ ու գառանը առջեւը (կե-
նալու) :

5 Ու իրենց բերանը սուտ (խօսկմը ըսել) չէ գտնվեցաւ, որ վրանէն արատը չունին :

6 Ու ուրիշ հրեշտակ մը տե-
սա որ երկընքին միջէն կըթռա-
չէր · ու յաւիտենական (բանի) աւետումնը ունէր՝ աւետիս տա-
լու բոլոր ասգերուն ու լեզուներ-
ուն՝ որ երկրի վրա կըբնակին :

7 Ու բարձրը ձանով կըսէր · այ վախցէք, ու իրեն փառք տըվէք · ինչու որ՝ անոր դատաս-
տանին ժամնակը եկաւ · ու երկրպագութին ըրէք անոր՝ որ ըս-
տեղծերէ երկինքն ու երկիրը, ու ծովը՝ ու ջերու ախտուրները :

8 Ու ուրիշ երկրորդ մկ հրեշ-
տակ մը ետևէն կաւ՝ ու կըսէր · ինկաւ ինկաւ ան մեծ բաբելոնը, որ հարբեցուց բոլոր հեթանոսները իր հարբեցնող

որ արբեցոյց զամենայն հեթանոսս :

9 Եւ այլ հրեշտակ երրորդ գայր զհետ նոցա՝ և ՚ի ձայն մեծ ասէր · ով որ երկրպագանէ և պատկերի գեաց գազանին և պատկերի նորա , և կամ գրոշմ՝ նշանի նորա առ ՚ի ձակատ իւր, և կամ ՚ի վերայ աջու ձեռին իւրոյ,

10 Ինքեսին արբցէ ՚ի բաժակէ ցասմանն այ՝ արկելոյ յանապակէ բարկութեան բաժակին · և տանջեսցի հրով և ծծմբով առաջի այ և առաքելոցն :

11 Եւ ծուխ նոցա ելցէ յաւիտեանս յաւիտենից · և ոչ ունին հանգիստ՝ որք երկիր պագին գազանին ՚ի տուէ և ՚ի գիշերի , և որք երկիր պագին պատկերին , և առնն գրոշմ և զանուն նորա :

12 Եւ համբերութիւն սրբոցն աստ է · այս որք պահեն զպատուիրանս այ , և զհաւատս յիս :

13 Եւ լուայ ձայն յերկնից՝ որ ասէր ցիս · գրեա , երանի մեռելոցն որք ՚ի տէր ննջեցին այժմիկ վաղվաղակի · զայս ասէ հոգին , քանզի հանգիստ յաշխատութիւնէ իւրեանց , բայց միայն գործք իւրեանց շուան զհետ նոցա :

14 Եւ տեսի՝ և ահա ամպ սպիտակ, և ՚ի վերայ ամպոյն նստէր նման որդւոյ մարդոյ , և ՚ի գլուխ իւր պսակ ոսկի , և ՚ի ձեռին իւրում՝ մանգր զերանդի սրեալ :

15 Եւ այլ հրեշտակ ելանէր յերկնից , աղաղակէր ՚ի կատարած պատերազմին զի՝ նիէն :

9 Եւ ուրիշ երրորդ հրեշտակ մընաց անոնց եւեւէն կուգար , ու ամուր ձանով կըսէր · ով որ գազանին ու անոր պատկերըին երկրպագութին ըրաւ , ու կամ թէ՝ անոր նշանին գրոշմը իր ճակատը առաւ , կամ իր աջ ձեռքին վրա ,

10 Անոնկը՝ այ բարկութինի բաժակէն պիտի խըմէ , ան զուտ պինէն որ բարկութինի բաժակի մէջ կըլեցուի (խըմելու) · ու կրակով ու ծըծումբով պիտոր տանջըվի՝ այ ու գառանը առջեր :

11 Ու անոնց (տանջանքին) մուխը պիտի ելլէ յաւիտեանս յաւիտենից · որ ալ ցորեկ ու գիշեր հանգիստ չունենան , անոնք որ գազանին երկրըպագութին ըրին , ու անոնք որ անոր պատկերըին երկրըպագութին ըրին , ու անոր գրոշմը ու անունը առին :

12 Ահա սրբերուն համբերութինը հոս է · որ ասանոնք են՝ որ այ պատուիրանքը ու յիսի հաւատքը կըպահեն :

13 Ու երկընքէն ձանմը լսեցի որ ինծի կըսէր · (աս բանս) գրէ , երանի՝ հիմայէն սկսեալ մեռելներուն՝ որ տէրոմը հիմա մրռվը ննջեցին , հոգին ասանկ կըսէ , ինչու որ՝ իրենց աշխատանքէն հանգչեցան · որ միան իրենց գործքերնին իրենց եւեւէն գացին :

14 Ու նայեցայ՝ ահմալ մի ճերմակ ամպը տեսայ , ու ամպին վրա օրդոյ մարդոյ նման (մի կը) նստեր էր · ու իր գըլուխը ոսկիէ թագը , ու իր ձեռքը մի սուր գերըշտիմը ունէր :

15 Ու ուրիշ հրեշտակմընալ երկընքէն ելած , ամուր ձանով

ձայն մեծ՝ և ասէը· որ նստիսդ ՚ի վերայ ամպոյդ՝ առաքեա զգերանդիդ քո՝ և հնձեա, զի եկն ժամանակ հնձոց, և հասեալ են հունձք երկրի :

16 Եւ արկ որ նստէր ՚ի վերա ամպոյն՝ զգերանդին իւր յերկիրը, և հնձէը զամենայն բնակիչս երկրի :

17 Եւ այլ հրեշտակ ելաւ նէը ՚ի տաճարէն որ յերկինս, և ունէը և սա զերանդի սրբ_ եալ :

18 Եւ այլ հրեշտակ ելաւ նէը ՚ի սեղանոյն, որ ունէը իշխանութիւն ՚ի վերայ հրոյ, և աղաղակեաց ՚ի ձայն մեծ առ հրեշտակն՝ որ ունէը զգերան_ զին սրեալ՝ և ասէը . կիթեա զողկոյզս յայգւոյ երկրէ, զի հասեալ է խաղողդ ՚ի դմա :

19 Եւ արկ հրեշտակն զգե_ րանդի իւր յերկիրը· և կիթէը զխաղող նորա, և արկանէը ՚ի հնձանն այ ՚ի մեծ :

20 Եւ կոխեցաւ հնձանն արտաքոյ քաղաքին, և ելանէը ՚ի հնձանէն արիւն մինչև ՚ի սանձս ձիոյն· և երկայնութիւն նորա հազար և վեց հարիւր ասպարէս :

(անոր) կրկանէը՝ ու կըսէը· դուն որ ամպին վրա նստեր եա՝ քու զրընտիդ խըրկէ ու հընձէ, որ հունձքին ատենը եկաւ, ալ երկ_ րի հունձքերը հասունցեր են :

16 Ու ան ամպին վրա նս_ տողը՝ իր գերընտին (վար) եր_ կիրը ձգեց· ու ալ բոլոր երկրի բնակողները կրհնձըվէին :

17 Ու ուրիշ հրեշտակմ՚ընալ՝ երկինքը եղած տաճարէն դուրս կելլէը . որ ինքնալ մէկ սուր գերընտիմը ունէը :

18 Ու ուրիշ հրեշտակմ՚ընալ սեղանին (առջևէն) կելլէը , ու ասիկա կրակի վրա իշխանութին ունէը· ու ամուր ձանռվմը կան_ չեց ան հրեշտակին՝ որ սուր գե_ րընտին ունէը, ու բսաց· երկրի ե_ զիներէն կուզերը կրթէ, որ ատոր մէջէ խաւողը ալ հասունցնէ :

19 Ու ան հրեշտակը իր գերըն_ տին երկիրը ձգեց· ու անոր խա_ ւողը կրկրթէը, ու այ (բարկու_ թեր) մեծ հընձանը կրլեցընէը :

20 Ու հընձանը քաղքէն դուրս կոխվեցաւ· ու հընձանէն (անբան) արուն կելլար, որ ինչվան ձիե_ րուն սանձքը (կըհասնէր)· ու հա_ զար վեցհարուր ասպարէզի չափ անոր երկանութիւնը՝ կերթար :

ԳԼ· Ժ Ե·

1 Եւ տեսի այլ նշան մեծ և սքանչելի· հրեշտակս եւ_ թըն՝ որք ունէին եւթն վէրս վէնի· զի նոքօք կատարէը բար_ կութիւն այ :

2 Եւ տեսի որպէս ծով ա_ պակեղէն խառնեալ հրով· և որք յաղթեցին գազանին՝ և թուոյ անուան նորա՝ և պատ_ կերի նորա՝ և զրաշի նորա,

1 Ու ուրիշ մեծ ու գարմանա_ լի նշանմ՚ընալ տեսա· որ ոխտը հրեշտակ ոխտը եակի պա_ տուհասները ունէին, որ անով՝ այ բարկութինը կրլըմ՚ընար :

2 Ու ապակիէ ծովմ՚ը պես բանմ՚ընալ տեսա , ան՝ կրակով խառնած· ու անոնք որ գազանը եխտերէին, ու անոր անունին նամ_ բանը , ու անոր պատկերը ու

նոքա կային ՚ի վերայ ծովուն ապակեղինի, և ունէին զբերնաբա այ.

3 Եւ երգէին զերգս մովսէսի առաջի այ, և զերգս գառինն՝ ասելով· Մեծամեծ և սքանչելի են գործք քո՝ տէր ամենակալ, արդար՝ և ճշմարիտ են ճանապարհք քո, թագաւոր ամ հեթանոսաց:

4 Եւ ո՞վ ոչ երկիցէ՝ և փառաւորեսցէ զանուն քո· զի դու միայն սբ, և արժանի երկրպագելոյ. զի ամենայն հեթանոսք եկեսցեն և երկիր պագցեն առաջի քո տէր, յորժամ արգարութիւնք քո յայտնեսցին:

5 Եւ յետ այսորիկ տեսի՝ և բացաւ տաճարն խորանին վկայութեան՝ որ էր ՚ի յերկինս:

6 Եւ ելանէին եւթն հրեշտակք՝ որ ունէին եւթն հարուածս, և զգեցեալ էին ՚ի տաճարին կտաւս մաքուրս՝ և պայծառս, և գօտեւորեալք էին առ ստեամբք խուրանց ոսկեղինս:

7 Եւ ՚ի չորից կենդանեացն տուաւ եւթն հրեշտակացն՝ եւթն սկաւառակս լի ցասմամբն այ կենդանւոյն յաւիտեանս յաւիտենից:

8 Եւ լցաւ տաճարն ծխով փառացն այ՝ և զօրութեան նորա: և ոչ ոք կարէ մտանել ՚ի տաճարն՝ մինչև կատարեսցին եւթն հարուածքն յեւթն հրեշտակացն:

ԳԼ· Ժ.Օ.

1 Եւ լուայ ձայն մեծ ՚ի տաճարէն՝ զի ասէր յեւթն անոր զրոշմը, երենք ան ապակիէ ծովին վրա կեցերէին, ու այ (չլելու) քնարը ունէին.

3 Ու այ առջև՝ մովսէսին երգը կերգէին, ու գառանը երգնալ ըսելով՝ որ մեծ ու մեծ ու գարմանալի են քու գործքերդ՝ տէր ամենակալ. արդար ու ճշմարիտ են քու համբաներդդ, (դուն) բոլոր ազգաց թագաւոր:

4 Ա՛լ ան ո՞վ է որ չի վախնա, ու չի փառաւորէ քու տէր անունդդ, որ դուն միան սբ՝ ու արժանի ես երկրպագուիին առնելու· որ բոլոր հեթանոսները պիտի գան ու քու առջևդ երկրպագութիւն ընեն, քու արդարութիւնդ որ յայտնի ըլլա:

5 Ու ասկէ ետև տեսա՝ որ վկայութեան խորանին տաճարը բացվեցաւ, ան որ երկինքն էր:

6 Ու (անկէ) ան ոխտը հրեշտակները կելլէին՝ որ ան ոխտը պատուհասը ունէին. ու (ասոնք) տաճարին միջը մաքուր ու պայծառ կտաւներով էին չռվված, ու ծրծերնուն վրայովը ոսկիէ գոտի կապած:

7 Ու ան չորս կենդանիները՝ ասոնց ոխտը հրեշտակներուն ան ոխտը պրնակը տըվին՝ այ բարկութիւնովը լեր, ան որ ինքը կենդանի է յաւիտեանս յաւիտենից:

8 Ու տաճարը լըցվեցաւ այ փառաց ու անոր զօրութենէն մխովը· ալ ոանոնկ որ մէկը չի կրնար տաճարը մտնել՝ մինչև ան որ ոխտը հրեշտակաց ձեռքով ան ոխտը պատուհասները կատարվին:

հրեշտակն, երթայք հեղէք զեւթն սկաւառակսդ ցասմանբն աւ յերկիր :

2 Եւ գնաց առաջին հրեշտակն, և եհեղ զսկաւառակ իւր յերկիր, և եղև հարուած չարաչար ի վերայ մարդկան, որ ունէին զդրոշմ գազանին, և երկիր պագին պատկերի նորա :

3 Եւ երկրորդ հրեշտակն եհեղ զսկաւառակ իւր ի ծով, և դարձան ջուրքն յարիւն մեռեալ. և ամ՛ շունչ կենդանի որ էր ի ծովս՝ սատակեցաւ :

4 Եւ երրորդ հրեշտակն եհեղ զսկաւառակ իւր ի գետս՝ և յաղբեւրս ջուրց, և եղև արիւն :

5 Եւ լուայ ի հրեշտակէն՝ զի ասէր. արդար ես՝ որ էիս և ես, և սուրբ ի զործս իւր՝ զի այսպէս դատեցար :

6 Վասն զի զարիւն սրբոց՝ և զարիւն մարգարէիցն հեղին ամպարիշտք. վասն այնորիկ արիւն ետ ըմպել նոցա ըստ արժանւոյն :

7 Եւ լուայ ի սեղանոյ ասել զի ասէր. այո՛ տէր ամ՛ ճշմարիտ և զատաստանք քո :

8 Եւ չորրորդ հրեշտակն եհեղ ի սկաւառակէ իւրմէ ի վերայ արեգական.

9 Եւ տուաւ նմա խորշակահարել զմարդիկ չրով. և տապացան մարդիկ ի տապ մեծ, և հայհոյեցին զանձ՝ որ ունի իշխանութիւն ի վերայ չարութեացդ այսոցիկ. և ոչ ապաշխարեցին ի փառս այ :

10 Եւ հինգերորդ հրեշտակն եհեղ ի սկաւառակէ իւրմէ ի

տաճկերուն կըսէր. գացէք՝ առ ոխտը պրնակներով այ բարկութինը՝ երկրին վրա թափեցէք :

2 Ու առջի հրեշտակը գնաց, ու իր պրնակը երկրին վրա թափեց, ու չարաչար պատուհաս եղաւ անմարդոցը վրա՝ որ գազանին դրոշմը ունէին՝ ու անոր պատկերքին երկրպագութիւն ըրին :

3 Ու երկրորդ հրեշտակը իր պրնակը ծովը թափեց. ու ան ջուրը՝ մեռած (մարդու) արուն դարձան. ու ծովին մէջի բոլոր սունչաւոր կենդանիները սատկեցան :

4 Ու երրորդ հրեշտակը իր պրնակը գետերու ու ջրի աղբիւրներու վրա թափեց, ու անոնք արուն կորեցան :

5 Ու ան հրեշտակին լսեցի որ կըսէր. արդար ե՛ն՝ որ էիր՝ ու էն, ու սո՛ւրբ՝ իր գործ քերովը, որ ասանկ դատաստան ըրաւ :

6 Ինչու որ՝ անբարիշտները սրբոց եւ մարգարէից արունը ու մարգարէներուն արունը թափեցին, անոր համար արժան է՝ որ իրենց արուն խըմել տաս :

7 Ու ան սեղանէնալ լսեցի որ (ձկը) կըսէր. անանկ է տէր ամենակալ, արդար ու ճշմարիտ է քու բրած դատաստանդ :

8 Ու չորրորդ հրեշտակը իր՝ պրնակէն արեւուն վրա թափեց.

9 Ու անոր (ուժմը) տըրվեցաւ որ՝ կրակովը մարդիկը խաշե. ու մարդիկ սաստիկ տաքով լափեցան, ու այ ղէմ կըհայհոյըէին, որ աս պատուհասները կուտա. ու անանկալ չիապաշխարեցին՝ այ փառքը նայելով :

10 Ու հինկերորդ հրեշտակը իր պրնակէն գազանին աթոռին վրա

վերայ աթոռոյ զգաստին, և եղև թագաւորութիւն նորա խաւարեալ· և ծամիչն զնզուս իւրեանց յախտէ ցաւոցն:

11 Եւ չայհոյեցին զած երկնից ՚ի ցաւոց իւրեանց՝ և յախտէ գառնութեան, և ոչ ապաշխարեցին ՚ի գործոց իւրեանց:

12 Եւ վեցերորդ հրեշտակն եհել ՚ի սկաւառակէ իւրմէ ՚ի վերայ գետոյն մեծի եփրատայ, և ցամաքեցան ջուրք նորա, զի պատրաստասցի ճանապարհ թագաւորի ելից արևու:

13 Եւ տեսի՝ զի ելանէր ՚ի բերանոյ վիշապին՝ և ՚ի բերանոյ գազանին՝ և ՚ի բերանոյ սուտ մարգարէին՝ ոգիք երիք անսուրբք իբրև զդորս:

14 Քանզի նորա էին ոգիք դիւականք՝ որք առնէին զնշանս, և երթային առ թագաւորս ամենայն երկրի՝ ժողովել զնոսա ՚ի պատերազմ, յօրն մեծ ՚ի նմանակալի:

15 Քանզի այսպէս ասաց ՚ինձ. ահա՝ գամ իբրև գող, երանի՛ որ կայնի արթնանք, և պահեսցէն զհանդերձս իւրեանց, զի մի մերկ շրջեսցին, և երևեսցին ամօթանք իւրեանց:

16 Եւ ժողովեցից զնոսա ՚ի տեղի մի, որ կոչի երբայեցերէն՝ արմաքեդոն:

17 Եւ եւթներորդ հրեշտակն եհել ՚ի սկաւառակէ իւրմէ ՚ի վերայ օդոյ. և էլ ձայն մեծ յերկնից՝ և յաթոռոյն՝ ասելով, եղև:

18 Եւ եղեն փայլատակմունք և ձայնք և որոտմունք. և եղև շարժումն մեծ՝ որպիսի ՚ի թափեց, ու անոր թագաւորութիւնը խաւարեցաւ. ու (մարդիկ) սաստիկ) հիվընտութենէ ցաւերէն՝ լեզուները կը ծամէին:

11 Ու իրենց ցաւերուն ու դառնը հիվընտութենէն պատճառով երկընքի ածը կը հայհոյէին. ու իրենց գործքերուն համար չապաշխարեցին:

12 Ու վեցերորդ հրեշտակը իր պրնակէն մեծ եփրատ գետին վրա թափեց, ու անոր ջուրը ցամքեցան. որ արեւելքի թագաւորին (զիմացը՝ գալու) համար պատրաստութիւն:

13 Ու տեսա՝ որ վիշապին բերնէն, ու գազանին բերնէն, ու սուտ մարգարէին բերնէն՝ իրիք պիղծ դորտիկներ ելան:

14 Որ անոնք դիւական ոգիներն էին՝ որ ան նշաններըը կընէին, ու բոլոր երկրի թագաւորներուն կերթային՝ անոնք պատերազմի ժողվելու՝ ամենակալ Աստուծոյ մեծ օրվանը տանին:

15 Պատահան որ՝ տըր ասանկ ըսաց. Ահա (ես) գողի պէս կուգամ. երանի՛ անոնց որ արթուն կըլան, ու իրենց հանդերձները պահին՝ որ մերկիկ չի պըտրտին, ու իրենց ամօթալիքը երևնա:

16 Ու անոնք (բոլորը) մի տեղ ժողվեց, որ անոնք եբրայերէն ցիներէն՝ արմակեդոն կըսվի:

17 Ու եօթներորդ հրեշտակը իր պրնակէն օդուն վրա թափեց. ու երկընքէն ու աթոռէն մի մեծ ձայն եկաւ, ըսելու (թէ) եղաւ:

18 Ու կայծկըլտուքներ ու ձայներ ու որոտմունքներ եղան. ու անանկ սաստիկ ժամ մը եղաւ՝ որ

չէք եղեալ խսկզբանէ՝ յորմէ հետէ եղև մարդ ի վերայ երկրի՝ այնպիսի շարժումն մեծ :

19 Եւ եղև քաղաքն մեծ յերիս մասն, և քաղաքք ազգացն անկան. և բաբելոն մեծ յիշեցաւ առաջի ՚ի, տալ նմա զբաժակն գինւոյ ցասման բարկութեան նորա :

20 Եւ ամենայն կղզիք փախան, և լերինք ՚ի միջոյ բարձան :

21 Եւ կարկուտ մեծ իբրև կշիռ տաղանդայ ՚ի վերայ մարդկան. և հայհոյեցին մարդիկ զած յերկինս՝ վասն հարուածոյ կարկտին, զի մեծ էր հարուածն և սաստիկ :

աշխարքի ըսկիսպէն հետէ քանի որ մարդը երկրի վրա եղեր՝ անանկ մենծ ժամ չէր եղած :

19 Ու մենծ քաղաքը երեք կտոր ՚ըլկեցաւ, ու ազգերուն քաղքները վար ինկան. ու ած մենծ բաբիլոնին յիշվեց, որ իր սրդողելուն բարկութեանը գինիին բաժակը անոր տա (խմելու) :

20 Ու բոլոր կղզիները փախան, ու լեռներու վերցվեցան (անոյա եղան) :

21 Ու խոշոր կարկուտ (որ հատը) տաղանդմը կըկշռուէր՝ մարդոց վրան կիննէտ. ու մարդիկը զկպի երկինքը ած կըհայհոյերէին՝ ան կարկուտի պատուհասին համար, որ մենծ ու սաստիկ էր ան պատուհասը :

ԳԼ. ԺԷ.

1 Եւ ելն մի ոմն յեւթն հրեշտակացն՝ որք ունէին զեւթն պարկսն՝ եւ խօսեցաւ ընդ իս և ասէ. Եկ այսր՝ և ցուցից քեզ զդատաստան մեծ պոռնկին՝ որ նստի ՚ի վերայ ջուրց բազմաց :

2 Ընդ որում պոռնկեցան թագաւորք երկրի, և արբեցան բնակիչք երկրի ՚ի գինւոյ արբեցութեան պոռնկութեան նորա :

3 Եւ առ տարաւ զիս յանապատ՝ հոգւովն. և տեսի կին մի՝ զի նստէր ՚ի վերայ կարմիր գազանի, և լի էր անուամբ հայհոյութեան. և գազանն գոր տեսի՝ ունէր գլուխս եւթն և եղջերս տասն :

4 Եւ կինն զգեցեալ էր ծիրանիս և կարմիրս, և զարդա-

1 Ու ան ոխտը տրեշտակներէն՝ որ ոխտը պրնակները ունէին՝ անոնցմէ մէկը իմ հետս խօսեցաւ ու ըսաց. Գնա եկօ՝ որ քեզի ցըցունեմ ան մենծ պոռնիկին (վրա եղած) դատաստանը, որ ինքը շատ ջրերու վրա նստերէ :

2 Որ երկրի թագաւորները անոր հետը պոռնըկեցան, ու երկրի բնակողները անոր պոռնիկութիւնին հարբեցընող գինիէն հարբեցան :

3 Ու հոգիովը իս առաւ՝ անապատ տեղմը տարաւ. ու մէկ կնիկմը տեսա որ կարմիր գազանի վրա նստեր էր, ու ան՝ հայհոյութիւնքի անուններով լիք էր. ու ան գազանն որ տեսա՝ ոխտը գլուխ ունէր ու տասը եղջիւր :

4 Ու ան կնիկը ծերանիներով ու կարմիրներով հագված էր, ու

բեալ ոսկւով և մարգարտով և ակամբք պատուականօք, ունելով բաժակ ոսկի ՚ի ձեռին իւրում, և լի էր գարշելի և անմաքուր պոռնկութեամբ :

5 Եւ ՚ի ճակատն նորա գրեալ անուն՝ խորհրդով. Մեծն Բաբելոն՝ մայր պոռնկաց և գարշելեաց երկրի :

6 Եւ տեսի զկինն արբեցեալ յարենէ սրբոց՝ և յարենէ ամենայն վկայիցն . և զարմացայ զայն տեսեալ զնա՝ զարմացումն մեծ :

7 Եւ ասէ ցիս հրեշտակն . ընդէր զարմացար, ես ասացից քեզ զխորհուրդս կնոջն, և գազանին որ բարձեալ ունի զնա . որ ունի գլուխն՝ և տասն եղջիւր :

8 Եւ գազանդ զոր տեսեր՝ որ էր, և չէր, և հանդերձեալ է ելանել ՚ի ժժոխոց՝ և ՚ի կորուստ երթալ : և զարմացան ամենեքեան որ բնակեալ են ՚ի վերայ երկրի . որոց ոչ էր գրեալ անուանք նոցա ՚ի գիր կենաց իսկզբանէ աշխարհի . զոր տեսանէիր զգազանն , զի էր՝ և չէ, և մերձ է :

9 Այստ է իմաստութիւն՝ որ ունի միտս : և եւթն գլուխն՝ եւթն լերինք են, ուր կինն նըստեալ էր ՚ի վերայ նոցա . և նոքին թագաւորք են եւթն :

10 Եւ թագաւորք եւթն գոլով . հինգն անկան , և միւն եկաց, և միւնն ոչ է եկեալ . և յորժամ գայ՝ սակաւիկ մի ժամանակ ունի :

11 Եւ գազանն՝ որ էր՝ և չէ և նա ութերորդ է . և է յեւթանց անտի , և ՚ի կորուստ երթալոց է :

ոսկւով ու մարգրիտով, ու սուգ քարերով սազուած . ու ոսկի բաժակ մը ձեռքը բռներ էր, որ ան՝ լեր էր գարշելի ու պիղծ պոռնկութիւնով :

5 Ու իրեն ճակտին վրա (աս) խորհրդաւոր անունը գրուած էր. Մենծ բաբիլոն՝ պոռնիկներու ու երկրի գարշելիներու մայր :

6 Ու տեսա որ ան կինիկը՝ հարբած էր սրբերուն արիւնովը ու Յիսուսի վկաներուն արիւնով. ու անիկա որ տեսա՝ սաստիկ զարմացա մը նայեցի :

7 Հրեշտակնալ ինծի ըսաց . ինչու՞ զարմացար . ան կնկանը խորհուրդը ես քեզի ըսեմ, ու գազանինն, որ անիկա վրան բռներ վերուցեր է . ան որ ոխտը գրըխ ու տասը եղջիւր ունի :

8 Ու ատ գազանն որ տեսար, ինքը՝ էր, ու չէր, ու ալ դժոխքէն պիտոր ելլէ, ու երթա կորսըվի : ու բոլոր երկրի վրա բնակողները, որ անոնց անունը աշխըրքի ըսկիսպէն չեռ կենաց գրքին մէջ գրուած չէր , անոնք զարմացան ան գազանին վրա՝ որ (դուն) կըտեսնէիր . որ անիկա՝ էր ու չէ, ու մատ է :

9 Հոս է իմաստութիւնը, ան որ խելք ունի : ու ոխտը գլուխ՝ ան ոխտը լեռներն են՝ ուր որ կինիկը անոնց վրա նըստեր էր, ու անոնք ոխտը թագաւորներն են :

10 Ու ան թագաւորները որ ոխտան էին, հինկը ինկաւ . ու մէկը մընաց. ու մէկնալ (դեռ) եկած չէ . ու երբոր գա՝ (անիկա) քիչ մը ատեն ունի կենալու :

11 Ու գազանը՝ որ էր՝ ու չէր՝ ինալ ութներորդն է . ու (ինքնալ) ան ոխտներէն է , որ պիտի երթա կորսըվի:

12 Եւ տասն եղջիւրն զոր տեսեր՝ տասն թագաւորք են. որոց չէ՛ եւս է առեալ զթագաւորութիւն, այլ առնուն՝ եւ կան իշխանք՝ ի մի ժամ. եւ առնուն նոքա զիշխանութիւն ընդ գազանին:

13 Այսք՝ մի կամս ունին, եւ զզօրութիւն եւ զիշխանութիւն գազանին տան:

14 Եւ ընդ գառինն պատերազմին. եւ գառն յաղթէ նոցա, զի՝ տէր է նոցա, եւ թագաւոր թագաւորաց. եւ որք ընդ նմա՝ կոչեցեալք են, ընտրեալք եւ հաւատացեալք:

15 Եւ ասաց ցիս. եւ զջուրն զոր տեսեր՝ ուր նստէր պոռնիկն, ժողովուրդք են, եւ բազմութիւնք եւ ազգք եւ լեզուք:

16 Եւ տասն եղջերքն՝ զոր տեսեր գազանին, նոքա տեսցեն զպոռնիկն՝ եւ առեսցեն զնա, եւ զմարմին նորա կերիցեն՝ եւ այրեսցեն զնա հրով:

17 Քանզի՝ ած եղ՝ ի սիրտս նոցա՝ առ՝ ի լինել նոցա մի կամս, եւ առ՝ զթագաւորութիւն գազանին՝ մինչեւ կատարեսցի բանն այ:

18 Եւ կինն զոր տեսեր՝ է քաղաքն մեծ, որ ունի զթագաւորութիւն՝ ի վերայ թագաւորութեանց երկրի:

12 Իսկ տասը եղջիւրն որ տեսար, տասը թագաւորներ են. որ իրենք դեռ թագաւորութիւնին չեն առած. բայց կառնեն, ու մէկ ատենի մէջ իշխանութին կրնանեցընեն, ու իրենք գազանին հետը մէկ եղած՝ անանկ կառնեն իշխանութիւնը:

13 Անոնց կամքերնին մէկ է, ու (իրենց) ուժը ու իշխանութիւնը գազանին ձեռքը կուտան:

14 Ու գառանը դէմ՝ պատերազմ կընեն, ու գառը անոնք կենթաէ. ինչու որ՝ (Ինքը) անոնց վրա տէր է, ու թագաւորներուն թագաւորը. ու իր հետ եղած՝ ներըն՝ կանչըված են՝ ընտրեալ՝ ներն ու հաւատացեալները:

15 Նաեւ ինծի ըսաց. ան ջուրերուն որ տեսար, որ ան պոռնիկը վրան նստեր էր. անոնք ժողովուրդներն են, ու շատերը ազգաւորներ, ու լեզուներ:

16 Ու գազանին տասը եղջիւրներն որ տեսար, անոնք պոռնիկին կըգային, որ անիկա կատն, ու անոր միսը պիտոր ուտեն, ու ինքը կրակով էրեն:

17 Որովհետեւ որ՝ Աստուած ած անոնց սրտին մէջը գրաւ՝ որ իրենց կամքերնին մէկ ըլլա, ու թագաւորութիւնը գազանին տան, ինչուան որ այ լսած բաներ կատարվի:

18 Ու ան կինին որ տեսար՝ անիկա մեծ քաղաքն է, որ երկրի թագաւորութիւններուն վրա ինքը կըթագաւորէ:

ԳԼ. ԺԸ.

1 Եւ յետ այսորիկ տեսի այլ հրեշտակ իջեալ յերկնից՝ որ ունէր իշխանութիւն մեծ,

1 Ու ասկէ ետև ուրիշ հրեշտակմը տեսա երկընքէն ինջած, որ ինքը մեծ իշ-

և երկիր լուսաւորեցաւ ի փա-
ռաց նորա :

2 Եւ աղաղակեաց ի ձայն
մեծ՝ ասելով· անկաւ բաբելոն
մեծն , որ եղեւ էր բնակու-
թիւն դիւաց , և արգել ամե-
նայն այսոց պղծոց , և բանտ
պահպանութեան ամենայն ոգ-
ւոց անսրբից և ատելոց :

3 Վասն զի ի բարկութենէ
գինւոյ՝ պոռնկութեան նորա
արբին ամենայն ազգք և թա-
գաւորք երկրի՝ որ ընդ նմա
պոռնկեցան . և վաճառականք
երկրի՝ ի նորա զօրութենէն
յօրանալոյ մեծացան :

4 Եւ լուայ ձայն յերկնից
զի ասէր . ելէք ի միջոյ դորա՝
ժողովուրդ իմ, զի մի հաղորդ
լիցիք մեղաց դորա , և մի ըն-
չարասցես դորա ընդունիցիք :

5 .Օ ի հասին կցեցան մեղք
դոցա մինչև յերկինս , և յիշեաց
Աստ զամսլարշաւութիւնս դորա :

6 Եւ հատուցանէ դմա՝ որ-
պէս և հատոյցն մեզ , և տուէք
դա երկպատիկ ըստ գործոց
իւրոց · և զբաժակն՝ որով
խառնեացն՝ խառնեցէք դմա
կրկին :

7 Եւ որչափ փառաւորեաց
զինքն և խայտաց , այնչափ
չհատուցէք սմա տուգ· զի ի
սրտի իւրում ասէր՝ թէ յամե-
նայն ժամ նստայց ես թագու-
հի՝ և այրի ոչ ևս եղէց :

8 Վասն այնորիկ ի միում
աւուր՝ եկեսցեն ի վերայ դորա
հարուածք՝ մահ, և սուգ, և
խանութին ունէր· ու երկիրը ա-
նոր փառքէն լուսաւորվեցաւ :

2 Ու սաստիկ ձանով կանչեց՝
ըսաւ· ինկաւ ան մեծ բաբիլը-
նը, որ ինքը դեւերուն բնակա-
բան էր եղեր, ու բոլոր պիղծ
սունչերուն կենալու տեղ· ու բո-
լոր ապտեղի ու ջանելու ոգինե-
րուն պահվըտելու բանտը :

3 Ինչու որ՝ անոր կատաղած
պոռնիկութենին գինին խմե-
ցին՝ ան բոլոր ազգերն ու երկրի
թագաւորները՝ որ անոր հետ
պոռնիկութին ըրին· ու երկրի
վաճառականներն՝ որ իրեն է-
վէյքը փափկութենէն հարստա-
ցան :

4 Ու երկընքէն ձանմրնալ
լսեցի որ կըսէր . իմ ժողովըրդ-
նե՛ր, ելէք անոր միջէն, որ ա-
նոր մեղքերուն չհաղորդ չըլլաք ,
ու որ՝ անոր պատուհասները ձեր
վրայալ չիգա :

5 Որ անոնց մեղքերը ալ մին-
չան երկինքը հասան զըլան , ու
Աստ ալ անոր անբարիշտութին-
ները յիշեց :

6 Ուսաի ալ իր հատուցուէք
կընէ՝ ինտոր որ մեզի հատուցում
ըրաւ : ու աութիկա իր (ըրած)
գործքերուն երկու չափ թող
աուէք . ու ան բաժակն որ ինքը
(ուրիշի) լեցուց, ան երկու չա-
փով իրեն լեցուցէք :

7 Ու որչափ որ ինքը զինքը
փառաւորեց ու խնամունք ըրաւ ,
անչափ իրեն սուգ հատուցում
ըրէք : ան որ իր սրտին մէջը կը-
սէր որ՝ ամէն իմիր ես թագու-
հիի պէտոր նստիմ, ու խնկի
որբևարի պիտի չըլլամ :

8 Այնոր համար մէկ օրվան մէջ
առոր վրա (աս) պատուհասները
պիտի գան՝ մահը, ու սուգը, ու

սով , և ՚ի հնձ այբեսցի · զի հզօր է տէր ած՝ որ դատեցաւն զդա :

9 Եւ լսայեն՝ և կոծեսցին ՚ի վերայ դորա թագաւորք երկրի՝ որք ընդ դմա պոռնկեցան և խաղացին· և հեծեսցեն յօրժամ տեսցեն զծուխ կիզման տանջանաց դորա :

10 ՚Ի հեռաստանէ կայցեն վասն երկիւղի տանջանաց դո֊ բա՝ և ասասցեն . վայ քաղաքիդ մեծի բաբելոնի . քաղաք հզօր՝ զի ՚ի միում ժամու եկիր հասին դատաստանք քո :

11 Եւ վաճառականք երկրի ողբասցեն և սգասցեն ՚ի վերայ քո , զի զբեհեզ նոցա ոչ ոք գնէ :

12 Եւ շահք որ ՚ի քէն՝ ոչ եւս իցէ, ոսկւոյ և արծաթոյ և ականց պատուականաց՝ և մար֊ գարտոյ և բեհեզոյ և ծիրանւոյ և ոսկեթելոյ և որդան, և ամե֊ նայն փայտ խնկոյ՝ և ամենայն անօթ փղոսկրեայ, և ամենայն անօթ ՚ի փայտէ պատուականէ՝ և ՚ի պղնձոյ և յերկաթոյ և ՚ի կաւոյ :

13 Եւ կինամոմոն , և ամե֊ նայն խունկ , և եւղ և կնդ֊ րուկ , և գինի և ձէթ , և նա֊ շէշ, և ցորեան, և ստացուածք սմ, արջառ և ոչխար, և երի֊ վարաց և կառաց՝ որ վայել է մարմնոց և ոգւոց մարդկան :

14 Եւ ամենայն ցանկու֊ թիւն անձին քոյ՝ գնաց ՚ի քէն, և ամենայն լուսափայլ վայել֊ չութիւնն, պարարան և զէրն և սպիտակն գնաց ՚ի քէն , և ոչ եւս գոյես գայդ :

15 Եւ ամենայն շահավա֊ սովը , ու կրակի մէջ երթ· պատ֊ ճառն որ՝ զօրել է տէր ածը որ առաջ դատաստան ըրաւ :

9 Ու երկրի թագաւորները՝ պիտի լան՝ ու առաջ վրդովն կոծ ընեն, որ առաջ հետ պոռնկիու֊ թիւնի բաներ կրնչէն ու կրնա֊ զային . ու պիտի ահռելեն ընեն՝ երբոր ինքը տանջված՝ իր երե֊ լուն մուխն որ տեսնան :

10 Առաջ տանջանքներուն վա֊ խէն՝ (իրենք) հեռվանց պիտի կենան՝ ու ըսեն· վա՛խ քեզի մեծ բաբիլոն քաղաք՝ առանկ զօրեղ քաղաքդ, որ մէկ ժամիմը առին՝ քու դատաստանդ վրադ հասաւ :

11 Ու երկրի վաճառական֊ ներնալ քու վրադ լայ ու սուգ պիտի ընեն՝ որ իրենց (ապրանքի) բեռները ալ մէկը չեկա որ գընէ :

12 Ու որ քեզմէն՝ ալ շահմը պիտի չըլլա՝ ոսկիի ու արծաթի ու ազնիվ քարերու , ու մար֊ գրիտի ու բեհեզի ու ծիրանիի ու ոսկեթելէն ու կարմիր որդի , ու բոլոր անուշահոտ փայտերու , ու բոլոր փղէն ոսկորէ շինած բան֊ րու , ու բոլոր՝ ազնիվ փայտէ ու պղինձէ ու երկրթէ ու կիտէ շին֊ ված կահկարասիներու :

13 Ու կինամոն , ու բոլոր խընկեղէններ, ու եղ , ու կնդրուկ ու գինի , ու ձէթ · ու շարմազուն ալիւր , ու ցորեն · ու բոլոր բա֊ րիքներ՝ կով ու ոչխար ու ձիանք ու կառքեր , որ մարդոց մարմնուն ու հոգուն վայելմանք կուտան :

14 Որ քու անձիդ բոլոր ցան֊ կութենի բաները քեզմէ (մկրի) գնաց , ու փայլելութեն ազնուու֊ թիւնները· պարարտն ու զերը ու ճերմակը քեզմէ գնաց , ու ա֊ ռանք մէյմալ պիտի չի գտնաս :

15 Ու բոլոր առուտուր ընող֊

Ձառք այսոքիւք մեծացեալք՝ ՚ի քէն ՚ի բաց կացցեն՝ վասն երկիւղի տանջանաց քոց լալ՝ և սուգ առնելով,

16 Ասացեն· վայ վայ քաղաք մեծ, որ զգեցեալ էիր բէհեզս և ծիրանիս և որդան, ոսկեզօծս՝ և քարինս պատուականս՝ և մարգարիտս· զի ՚ի միում ժամու պակասեցաւ այսչափ մեծութիւն քո :

17 Եւ ամենայն նաւավար՝ և ամենայն որ ՚ի տեղիս տեղիս նաւէն, և նաւազք, և որք միանգամ ուռկանաւ գործեն՝ ՚ի հեռաստանէ կայցեն լալով,

18 Եւ աղաղակեսցեն՝ տեսանելով զծուխ կիզմանն նորա, ասելով· ո՞ նմանէ քաղաքիս այսմիկ մեծի :

19 Եւ արկցեն հող ՚ի վերայ գլխոց իւրեանց, և զուժալով ձայնիւ մեծաւ՝ լալով և սգալով ասասցեն· վայ վայ քաղաք մեծ, որով ամենեքեան մեծանային՝ որք ունէաք գնաւս ՚ի ծովս՝ վասն պատուականութեան քոյ· զի ՚ի միում ժամու ապականեալ կործանեցար :

20 Ուրախ լերուք ՚ի վերայ նորա երկինք՝ և սուրբ առաքեալք և մարգարէք, զի դատեցաւ ած զդատաստան ձեր ՚ի դմանէ :

21 Եւ մի հրեշտակն հզօր՝ քար մի իբրև գերկան մեծ, և ընկէց ՚ի ծով՝ ասելով· այսպէս յարձակմամբ անկցի քաղաքն մեծ Բաբիլոն, և այլ ոչ ևս գտցի :

22 Եւ ձայն քնարերգաց և երգողաց՝ որ սասնցմով հարուածոցն՝ քեզմէ չեռնչ պիտի կենան· քոյ տանջանքներուդ վախէն՝ լաց ու սուգ մտած,

16 Պիտոր ըսեն, վախ վախ (քեզի) մենծ քաղաք, որ բէհեզներ ու ծերանիներ ու կարմիր որդ, որ ոսկեջուածներով հագուած կապած էիր, ու ակնիվ քարերով ու մարգրիտներով· որ մէկ ժամիմը աւեր քու անանկ մենծութիւնդ պակսեցաւ :

17 Ու բոլորալ նաւի բանի հետ եղողներ, ու որ աստիս անդին նաւ կըբանեցրնեն՝ անոնց բանվորները, ու (ձուկ բռնելու) ուռկան բանեցնողները, հեռուէն պիտի կենան լալով·

18 Ու տեսնելով անոր էրելուն մուխը՝ ձանէրնին վերուցած ըսեն· ան որ (քաղաքն) եղաւ աս մենծ քաղքիս նման :

19 Ու իրենց գլխերնուն վրա հող ձգեն, ամուր ձանով ղեկլընկալով՝ լան ու սրգան, ըսեն· վախ վախ մենծ քաղաք, որ ամէնքը որ ծովերու վրա նաւեր ունէինք՝ քու փառաւորութիւնիդ պատճառովը կըհարբատնայինք· (դուն) իշնոր մէկ ժամմը աւերի մէջ ապականած կործանեցար :

20 (Ալէ) ուրախ եղիք՝ երկինք ու սուրբ առաքեալներ ու մարգարէներ· որ ած՝ ձեզի համար առոր վրայով ընելու դատաստանը դատեց :

21 Ու զօրեղ հրեշտակմընալ մէկ ալագքի մենծ քարիմը պէս՝ առաւ, ու ծովը ձգեց՝ ըսաւ· ան մենծ բաբիլոն քաղաքը ասանկ սաստիկ վար պիտոր իյնա, ու էլ մէյմընալ պիտի չերևնա :

22 Ու քնարով երգողներու ձա-

երաժշտականաց՝ արուեստա-
կանաց՝ և փողաչափաց՝ և
թմբկի, այլ ոչ ևս լուիցի՛ ի
քեզ։

23 Եւ լոյս ճրագի և ձայն
երկանի՝ այլ ոչ ևս երևեսցի
